



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

A

985,084

ՆԵՐԱՆՈՒԹԻՒՆ



Ankes

Neratsutium Surb G 540
Grots...

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՈՒՍՄԱՆԸ

ՅՕՐԻՆԵԱԼ ԱՆԳՂԻԵՐԷ Ն

Ի ՏՈՒԹՈՐ ԱՆԿԸՍԷ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ

ՍՐՐԱԳՐՈՒԹՅԱՐԲԵ ԵՒ ՅԱԻՆԼՈՒԱԾՈՎԷ

ԳՐԱՂԱՆՆ

ՄԱՍ ԲԱԺՆՈՒԱԾ

ԿՊՍՏԱՆԴՆՈՒԴՈՂԻՍ

31/9/14

318 + 200 P.

Ի ՅՏԱՐԱՆԻ Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

1869

Grad
EREN
279
VII-2
BUHR

Երան
EREN
279
1.11 99

ՅԵՆԿ ԳԻՒԽՈՑ

ՄԱՍՆ Ա

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԵՒ ԱՆՈՆՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐԵԱԸ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՑԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԳԼ. Ա. Սուրբ Գրոց բաժանուցներն ու՛ այս բաժան-
մանց յատկացեալ անունները. 1
- ԳԼ. Բ. Սուրբ Գրոց բնագիր լեզուները. Հին պատկա-
րան 4. Նոր պատկարան. 9
- ԳԼ. Գ. Սուրբ Գրոց գիրքերուն պահպանութիւնը,
հաւաքումը և թարգմանութիւնները 11. կա-
նոնին կազմութիւնը 15. հին ձեռագիրները
18 և տպագրութիւնները 23
- ԳԼ. Դ. Սուրբ Գրոց հարազատութիւնը 25
- ԳԼ. Ե. Սուրբ Գրոց վաւերականութիւնը. Նոր պատ-
կարան 37. Հին պատկարան 47
- ԳԼ. Ջ. Սուրբ Գրոց աստուածային հեղինակութիւնը
51. Նոր պատկարան 52. Հին պատկարան 56
- ԳԼ. Ե. Սուրբ Գրոց աստուածային ներշնչութիւնը 83.
Նոր պատկարան 84. Հին պատկարան 86
- ԳԼ. Ը. Սուրբ Գրոց սեպհական յատկութիւնները 89
- ԳԼ. Թ. Անկանոն գիրքերը 117
- ԳԼ. Ժ. Սուրբ Գիրքն ուսանելու վրայ ընդհանուր դի-
տողութիւններ 128
- ԳԼ. ԺԱ. Սուրբ Գիրքը մեկնելու կանոններ 139
- ԳԼ. ԺԲ. Սուրբ Գրոց առականները և ուրիշ այլբանա-
կան մասերը մեկնելու մասնաւոր կանոններ 170
- ԳԼ. ԺԳ. Մարգարէութիւնները մեկնելու կանոններ 181

ԳԼ. ԺԴ. Սուրբ Գիրք մեկնելու համար արտաքին ազ-
 բերներու օժանդակութիւնը 207. Հրէից և
 ուրիշ հին ազգաց բնակարանները 212, հա-
 գուստը 217, կերակուրը 219, հրէից կշիռ-
 ները 224, այլևայլ չափերը 226, ժամանակա-
 բաժինները 242, Սուրբ Գրոց մէջ յիշուած
 անասունները 250, բոյսերը 255, հանքային
 նիւթերը և հողերը 267, քարերը 269, պատ-
 ուական քարերը 270, մետաղները 272, այլև
 այլ երկիրները 274, Պաղեստինու նկարագիրը
 276

ԳԼ. ԺԵ. Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած վկա-
 յութիւնները 299

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ

ԱՌԻՔԻ ԳՐԱՅ ԱՒԱԿԱՆԷ

ՄԱՍՆ Ա

ՍՈՒՐԻ ԳՐԱՅ ԵՒ ԱՆՈՆՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱ-
ՐԵՐԵԱԼ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼ. Ա

ԱՌԻՔ ԳՐՈՅ ԲՈՒՆՈՒԹԵՐՆ ՈՒ ԱՅՈ ԲՈՒՆՈՒԹԵՅ ԵՄԱՐ-
ՀԱՅԻՍՏ ԱՆՈՒՆԵՐԸ :

ՍՈՒՐԻ ԳՐՐԸԸ կամ Աստուածաշուքն էրկու մասերէ կը բաղկանայ, որ են Հին և Նոր Կտակարանները: Կտակարան բառը՝ Յունարէն *պատիստի* բառին թարգմանութիւնն է: Այս Յունարէն բառը կը նշանակէ կարգադրութիւն. և Յունարէն Նոր Կտակարանին մէջ գործածուած է, Նախ՝ այն կարգադրութիւնը կամ պայմանը նշանակելու՝ զոր Աստուած մարդոց հետ ընել հաճեցաւ. և այս առումմբ նոյն բառը Հայերէն *պատիստի* բառով թարգմանուած է: Տես Գործ. Գ. 25. և Է. 8: ԵՔր. Թ. 4. 15: Գործածուած է Երկրորդ՝ այն կարգադրութիւնը նշանակելու՝ զոր մարդ իր ստացուածոցը նկատմամբ կ'ընէ, և կ'ուզէ որ իր մահուանէն ետքը կատարուի. այս նշանակութեամբ ալ յիշեալ բառը Հայերէն *պատիստի* թարգմանուած է: Տես ԵՔր. Թ. 16: Դարձեալ նոյն բառը գործածուած է նոյն իսկ այն զրութեանց համար՝ որոնք կը պարունակեն յիշեալ կար-

գաղութիւնները կամ պայմանները . այսինքն՝ Աստուծոյ և իւր ծառաներուն մէջտեղ եղած ուխտը , կամ մահուան մօտ եղող մարդու մը իւր ստացուածոցը նկատմամբ ըրած տրամադրութիւնները : Այս վերջին նշանակութեամբ ալ նոյն բառը Հայերէն Կրօնարանի թարգմանուած է : Յ. Բ. Կրօն. Գ. 14 :

Ուստի Հին Կտակարան բառն ալ կը նշանակէ այն գրուածները՝ որոնք քրիստոսի գալստենէն առաջ Աստուծոյ իւր խորհուրդին հետ ըրած պայմանները , պատուէրներն ու խոստումները կը պարունակեն :

Նոր Կտակարանը կը պարունակէ այն գրուածները՝ որոնց մէջ քրիստոսի և անոր Առաքելոց վարդապետութիւնները բովանդակուած կը գտնուին :

Իսկ Աստուածաշունչը կոչուին ամբողջ Սուրբ Գիրքերը՝ ըստ որում ասոնց իւրաքանչիւր մասը՝ նոյն իսկ Աստուծոյ առաջնորդութեամբը և հեղինակութեամբը գրուած կը համարուի :

Հրէից մէջ Հին Կտակարանը երեք մաս կը բաժնուէր . (1) Օրէնք , (2) ՄԱՐԳԱՐԷՔ , (3) ԳԻՐՔԵՐ : Այս վերջինները երբեմն նաև Սբօղոսի գիրք կը կոչուէին . երբեմն ալ ասոնց Սաղմոսք , անունը կը տրուէր , քանզի այս բաժնին մէջ առաջին գիրքը Սաղմոսներն էին : Հին Կտակարանին այս երբեակ բաժանումը կը տեսնուի Ղ. 1 . ԻԳ . 44 :

Յովսեփոս անուանի Հրեայ մատենագիրը՝ որ Առաքելոց ժամանակը ծաղկեցաւ , Հին Կտակարանին գիրքերուն թիւը 22 կը հաշուէ , որոնք հետևեալ կարգով կը շարուին :

Ա . Օրէնք (Եբրայեցերէն Դօրա) որ կը պարունակեն Մովսիսի հնգամատենը , այսինքն՝ (1) Ծննդոց , (2) Ելնց , (3) Ղեկտացոց , (4) Թուոց եւ (5) Երկրորդ օրինաց գիրքերը :

Բ . Մարգարէք (Եբրայեցերէն՝ Նեփֆի) . եւ այս բաժանումը դարձեալ երկուքի կը բաժնուի .

ա . Պատմական գիրքերը որ են (1) Յեսու , (2) Դատաւորք և Հռութի՝ որոնք իբրև մէկ գիրք կը համարուին . (3) Ա և Բ . Թագաւորաց գիրքերը . ասոնց ալ երկուքը մէկ գիրք կը հաշուի . (4) Գ . եւ Դ . Թագաւորաց գիրքերը , որ նոյնպէս իբր մէկ գիրք համարուած են . (5) Ա եւ Բ . Մնացոր-

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ 3

դաց գիրքերը, իբր երկուքը մէկ գիրք . (6) Դանիէլ . (7) Եզրաս եւ Նէեմիա . (8) Եսթեր . (9) Յօբ :

բ . Բուն Մարգարէք . (10) Եսայի, (11) Երեմիա եւ Ողբերը, (12) Եզէկիէլ, (13) ԺԲ փոքր Մարգարէք, ամէնը իբրեւ մէկ գիրք :

Գ . Գիրքեր (Երբայեցերէն՝ քըթու-լէթ) . (1) Սաղմոսք . (2) Առակք . (3) Երգք Սողոմոնի եւ (4) Ժողովողք :

Երբայեցերէն Սուրբ Գրոց այժմու օրինակներուն մէջ Յօբ, Հռութ, Ողբերը, Եսթեր, Դանիէլ, Եզրաս, Նէեմիա եւ Մնացորդները վերջին բաժանման, այսինքն Գիրքեր կոչուածներուն մէջ դրուած են :

Հրեաներուն այսպէս Աստուածաշունչին գիրքերէն ումանք իբր մէկ գիրք հաշուելով անոնց թիւը 22 ընելուն պատճառն ան է՝ որ յիշեալ գիրքերուն թիւն իրենց այբուբենական գիրերուն թուոյն հաւասար ընել կուզէին :

Արգի Հրեայք Սուրբ Գրոց գլուխներուն եւ տուններուն հիմակուան բաժանումը կը գործածեն : Բայց հին ձեռագիրներն ուրիշ կերպով բաժնուած էին : Սրէնքը Բարուլի կոչուած յիսուն եւ չորս մեծամեծ բաժանումներ ունէր . Մարգարէներն ալ նոյնպէս բաժանումներ ունէին որոնք Հոփ-Գորթի կամ արձակմունք կը կոչուէին, քանզի պաշտօնը աւարտելէն քիչ մը առաջ կը կարդացուէին : Ամեն շաբաթ օր յիշեալ բաժանումներէն մէյմէկ հաա կը կարդացուէր :

Երբ Հրեայք Հին Կտակարանէն վկայութիւն կը բերէին, սովորութիւն ունէին բաժանման նիւթը յիշեցնել, ինչպէս որ Արարացիք մինչեւ հիմա Ղուրանէն վկայութիւն բերած ատեն կ'ընեն :

Նոր Կտակարանը խիստ կանուխ 3 մաս բաժնուած էր . (1) Աւետարանք . (2) Գործք եւ Թուղթք Առաքելոց . (3) Յայտնութիւն :

Սուրբ Գրոց գլուխներու բաժանումը՝ ԺԳ . դարուն Հուկոյ Գարտինալին ձեռօքը եղաւ, որ Հռովմէական Կաթոլիկ Գարտինալ մ'էր : Իսկ Հին Կտակարանին գլուխներուն համարներու բաժանումը՝ ԺԵ դարուն Մուրթքէ Նաթան անուն Հրէի մը, և Նոր Կտակարանինը՝ յետոյ ԺԶ

դարուն Բոպէրդ Սդիվէնսի ձեռագր կատարուեցաւ : Միանգամայն այս Հեղինակները յօրինեցին Համաբարբառներ, եւ Սուրբ Գրքին մէջ այնպիսի բաժանումներ ըրին որոնց օգնութեամբը Համաբարբառները գործածողները Սուրբ Գիրքերէն կոչուած վկայութիւններ դիւրաւ կրնան գտնել :

ԳԼ. Բ

Սուրբ Գրոց Բնագիր Լեզուները :

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Հին Կտակարանը գրեթէ ամբողջ, Եբրայեցերէն լեզուով գրուած է : Աս լեզուն և անոր կից եղող Արամերէն և Արաբերէն լեզուները Սեմական լեզուներ կը կոչուին, քանզի զանոնք գործածող ազգերուն շատերը Նոյի երէց որդւոյն Սեմին սերունդէն են : Աս լեզուներուն յատուկ նշանը սա է որ՝ արմատական բառերուն գրեթէ բոլորն ալ երէք բաղաձայնէ բաղկացած են : Լեզուին գրեթէ բոլոր մնացեալ բառերն աս արմատականներէն շինուած են՝ կամ արմատին մէջ ձայնաւոր մը փոխելով, և կամ վանկ մը աւելցնելով. զոր օրինակ՝ Արաբերէնի մէջ Բէ (բէթէպ) բառէն կը կազմուին Բէթապ, Բէթեպ, Բէթեպ և բառերը :

Եբրայեցերէն լեզուն Քանանացւոց երկրին, նաև անոր մերձակայ Փիւնիկէի տէրութեան և աս երկրին Յիւրոս եւ Սիդոն հռչակաւոր քաղաքներուն մէջ խօսուած լեզուն էր : Կը կարծուի թէ նոյն լեզուն կամ անոր շատ նման լեզու մը կը խօսուէր նաև Կարթեգոնի մէջ, որ շատ հին ատեններ Վփրիկէի Հիւսիսային կողմը Փիւնիկեցիներէն հաստատուած Գաղթականութիւն մ'էր : Այս կարծիքները հետևեալ եղելութեանց վրայ հաստատուած են :

(1) Սուրբ Գրքին մէջ անձանց և տեղերու համար Քանանացւոց գործածած անունները՝ բուն Եբրայեցերէն բառեր են. զոր օրինակ՝ Աբիմէլէք, Մելքիսեդեկ, Սաղեմ և այլք : որ կը նշանակեն Հայրս թագաւոր, Արդարութեան թագաւոր, Խաղաղութիւն :

(2) Փիւնիկէի և Կարթեգոնի լեզուներուն մնացորդներ

ուած դեռ կը կենան, Երբայերէն են : Ասկէ զաւ՝ Օգոստինոս և Հերոնիմոս միանգամայն կը վկայեն թէ իրենց ժամանակը խօսուած Վարդեգոնի լեզուն՝ ըստ մեծի մասին Երբայերէն բառերով շինուած էր :

(3) Քանանացւոց ու Երբայեցւոց լեզուներուն մէջ որ և իցէ տարբերութիւն մը ըլլալուն վրայ՝ Սուրբ Գրքին բան մը չըսելն ալ նշանաւոր ապացոյց է : Աս տարբեր ազգերը մի և նոյն երկիրը կը բնակէին, բայց և այնպէս լեզուի տարբերութիւն մը նշանակուած չէ. թէպէտև Երբայերէնին ու Եգիպտացւոց լեզուին մէջտեղի տարբերութիւնը (Սաւմ. 2Ա. 5. ճԺԴ. 1) և մինչև Երբայերէնին ու անոր կից լեզուին Քաղդէարէնին մէջտեղի տարբերութիւնն անգամ նշանակուած են : ՏԻ՝ Ե. ԼԶ. 11. և Եբեմ. Ե. 15 :

Կրնայ ըսուիլ նաև թէ Երբայերէնը, եթէ սկզբնական լեզուին հետ միևնոյն չէր, հաւանականաբար անոր հետ խիստ մօտ խնամութիւն մը ունէր : Այս եզրակացութիւնը գըլխաւորապէս Ծննդոց Գրքին առջի գլուխներուն մէջ յիշուած անձանց և տեղերու յատուկ անուններուն վրայ հիմնուած է : Աս անուններուն բոլորն ալ Եբբայերէն բառեր են, և այս լեզուին մէջ անոնց ունեցած նշանակութիւնը՝ այն անուններուն ինչու համար գրուած ըլլալը կը բացատրէ :

Երբայերէն լեզուին պատմութիւնը երեք ժամանակներու կրնայ բաժնուիլ, որոնց ամեն մէկուն մէջ լեզուն և անոր ոճը մասնաւոր յատկութիւններ ունեցած են :

(1) Առաջինը կը պարունակէ Մովսէսի օրերը խօսուած և անոր Հնգամատեանին մէջ գործածուած լեզուն : Այս գրքերուն մէջ շարագրութեան և առացուածոյ այնպիսի կերպեր կան՝ որ յաջորդ ժամանակներուն գրութեանցը մէջ չեն գտնուիր : Անանկ բառեր գործածուած են որ, կերևի թէ, անկէ ետքը չէին գործածուէր, և կամ առջինէն տարբեր մտքով կը գործածուէին : Բառերուն այս մասնաւոր գործածութեանը վրայ գիտութիւն ունենալը՝ երբեմն միայն այն գիրքերուն հնութեանն ապացոյց յառաջբերելուն համար կարևոր է. երբեմն ալ մասնաւոր տեղերու կամ

կտորներու նշանակութիւնը հասկընալու կօգնէ :

(2) Մոփոստին ժամանակէն ետքը եղող գիրքերուն մէջ լեզուն յայտնի փոփոխութիւն մը կրած է : Նոր բառեր մտած և հիները մոռցուածի պէս են : Նոր կերպ բացատրութիւններ հասարակ եղած են , և Հնգամատեանին մէջ գտնուած քանի մը ասացուածներ կամաց կամաց վերցուած են : Փոփոխութեան այս ընթացքը մինչև Դաւթի օրերը կը շարունակէ : Դաւիթ խիստ մաքուր և գեղեցիկ կերպով գրած է : Այս ժամանակին կը վերաբերին Սողոմոնի գրուածները , Դատաւորաց , Ա և Բ Թագաւորաց և Հռութայ գիրքերը : Առաջին մարգարէները , Յովնան , Ամիս , Ովսէէ , կը գրեն այնպիսի պարզ և խիստ ոճով մը՝ որ անոնց յաջորդողներուն գրութեանցը մէջ չգտնուիր . բայց տակաւին անոնց լեզուն մաքուր է : Եսայի , Միքիա , Նաւուամ , Ամբակում և Աբդիու , իրենց ոճին գեղեցկութեանը համար նշանաւոր են : Ասոնց Եբրայերէնն ալ ընդհանրապէս մաքուր է . թէև անոնցմէ ոմանց , ինչպէս Միքիայի և Եսայեայ մէկ մասին մէջ , կան անանկ խօքի կերպեր՝ որոնց օտար լեզուի խառնուրդ ըլլալը յայտնի է : Այսու ամենայնիւ բոլոր այս մատենագիրները Եբրայերէն լեզուին Ոսկեդարուն կը վերաբերին :

(3) Սոփոնիա (Յովսիա Թագաւորին ժամանակիցը) , Երեմիա , Դանիէլ և Եզեկիէլ , երրորդ ժամանակին կը վերաբերին . և ասոնց ամենն ալ օտարականներու հետ հաղորդակցութեան ազդեցութիւնը յայտնի կը ցուցնեն . այսպէս են նաև գերութեան ժամանակին կամ անկէ անմիջապէս ետքի գրութիւնները որ են՝ Եղրաս , Եսթեր և Նէեմիա . այս մատենագիրներուն ամենն ալ կը գործածեն այնպիսի բառեր և ասացուածներ՝ որոնք Եբրայերէնին առջի մաքուր վիճակին մէջ ծանօթ չէին : Ասոնցմէ ետքի մարգարէները , Անգէ , Չաբարիա և Մաղաբիա , գարձեալ մաքուր լեզուով կը գրեն . գլխաւորապէս ոս պատճառաւ՝ որ Եբրայերէնը գերութեան միջոցին գրական լեզու եղած էր մանաւանդ քան թէ խօսակցութեան : Եւ սրովհետեւ ասոնք իրենց մարգարէութիւնները գրի կառնէին , յատկապէս խօսակցութեան մէջ ընտանի եղած՝ բացատրութեան կերպերը գործածել հարկ չէր :

Աս իրողութիւնները Սուրբ Գրոց հնութեանն ու անոր
զանազան մասերուն յաջորդաբար շարադրուած ըլլալուն
ապացոյց են : Նաեւ ամեն մէկ մատենագրին բառերուն
գործածուած ատենը ի՛նչ նշանակութիւն ունենալը ստու-
գելու կարեւորութիւնը կը ցուցնեն :

Բաբելոնի գերութենէն ետքը Հրեայք Եբրայերէնը
գրեթէ չէին հասկընար և չէին գործածեր . քանզի Բա-
բելոնի մէջ ֆաղդէարէնը , կամ Արևելեան Արամերէ-
նը , այսինքն՝ իրենց տիրոջ ազգին ֆաղդէացոց լե-
զուն սորված էին : Գերութենէն ետքն ալ , երբ իրենց
Հայրենիքը դարձան , տակաւին թէ խօսակցութեան և թէ
գիրքերու մէջ նոյն լեզուն գործածելու շարունակեցին :
Եզրասի գիրքը ԳԼ . Դ . 8 էն մինչև ԳԼ . Զ . 18՝ և ԳԼ . Ե . 12
— 26 . նոյնպէս Դանիէլ ԳԼ . Բ . 4 էն մինչև ԳԼ . Ե . 28՝ նոյն
լեզուով գրուած են : Ժամանակ անցնելով՝ Հրէից գործածած
այս լեզուն կամաց կամաց փոխուելով Արևմտեան Արամերէն
կամ Ասորոց լեզու կոչուեցաւ :

Քրիստոսի ժամանակը Հրէից լեզուն աս էր : Այն բա-
ւերը որոնք Նոր Կտակարանին մէջ յիշուած են , իբր թէ
Քրիստոս զանոնք իր բուն լեզուովը խօսած է , զոր օրինակ
Տա՛լիթա կուժի , (Մարկ . Ե . 41) և , Էլօի էլօի՛ լամա սաբաբ-
թանի , (Մարկ . ԺԵ . 34 ,) Ասորոց բառեր են և ոչ Եբրայե-
ցերէն : Արգարեւ այս լեզուն Հրէից մէջ գործածական ըլ-
լալով երբեմն Եբրայական կոչուած է (Կո՛ Գործ . ԻԱ . 40) ,
ըստ որում այն ատեն Եբրայերէն լեզուն ան էր , բայց հին
Եբրայեցերէնէն բաւական տարբեր էր :

Հին Արամերէնէն մնացորդ չունինք , միայն . Բալմիրա-
յի մատերն , որ հին քաղաք էր Եփրատ գետին մերձակայ ա-
նապատին մէջ , աս լեզուով Քրիստոսնութեան սկզբնառ-
րութեան ատենները գրուած քանի մը արձանագրութիւն-
ներ գտնուած են : Այս լեզուն Աեմական կոչուած լեզու-
ներուն մէկն է , ինչպէս որ վերը յիշուած է . եւ Միջագե-
տաց մէջ (Տո՛ Ծանոթ . ԼԱ . 47 .) խօսուած ըլլալուն համար՝
անկէ կլած են՝ ֆաղդէարէնը կամ Արևելեան Արամերէնը որ
ֆաղդէայի եւ Բաբելոնի մէջ կը խօսուէր . եւ Ասորերէ-
նը կամ Արևմտեան Արամերէնը որ Միջագետաց Հիւսիսա-

յին կողմը եւ Ասորոց մէջ կը խօսուէր: Քաղաքաբնին ինչպէս լեզու ըլլալը Հրեական Թարգումներէն եւ Սուրբ Գրոց վերոյիշեալ մասերէն ծանօթ է: Թարգումներն Հին Կտակարանին այլ եւ այլ գիրքերուն վրայ մեկնաբանութիւն են, որոնք Հրեից համար կը գրուէին, երբ ասոնք Եբրայերէնին գիտութիւնը կորսնցուցին: Ամենէն հին Թարգումին հեղինակն է Օնքէլոս՝ որուն խիստ մաքուր ոճը՝ Բարիլոնի գաւառական լեզու կը կոչուի, որպէս զի որոշուի անկէ ետքի Թարգումներուն լեզուէն՝ որ Երուսաղեմի կամ Պաղեստինու գաւառական լեզու կը կոչուէր, եւ իրօք Եբրայեցեալէնի եւ Արամերէնի խառնուրդ է:

Նոր ատեններս հին Նինուէի աւերակներուն մէջ բազմաթիւ արձանագիրներ գտնուեցան, որոնց լեզուն գրեթէ Քաղաքաբնի հետ նոյն է: Աս արձանագիրները գրուած են սլաքածեւ կամ սեպածեւ կոչուած նշանագիրներով՝ որոնք սլաքի մը գլխու կամ սեպի նմանութիւն ունենալուն համար այսպէս կը կոչուին: Ասոնք քարէ տախտակներու եւ կաւէ աղւաններու եւ գլաններու վրայ գրուած կը գտնուին: Այս վերջիններուն վրայ՝ դեռ կաւը թաց եղած ատենը կ'ըլլար արձանագրութիւնը (Տե՛ս Եզեկ. Գ. 1.) . ետքը կաւը փռան մէջ եփելով կը կարծրացնէին: Գրութիւններն այլ եւ այլ տեսակ նիւթերու վրայ են. աստեղագիտութեան, ժամանակագրութեան եւ պատմութեան. եւ իրաւամբ կրնայ կարծուիլ թէ, երբ այս նշանագիրները լիովին կարդացուին, հին Ասորեստանեայց տէրութեան՝ լեզուին եւ պատմութեանը վրայ շատ աւելի լոյս պիտի ծագեն: Արդէն քանի մը բաներ ճանչցուած են որոնք Հին Կտակարանին յիշեալ տէրութեան նկատմամբ ըրած պատմութիւնները, եւ Ասորեստանցոց Հրեից հետ ունեցած յարաբերութիւնները կը լուսաւորեն ու կը հաստատեն:

Արդէն յիշատակեցինք թէ ինչպէս Հրեայք Բարիլոնի մէջ Քաղաքաբնի լեզուն սորվեցան, եւ իրենց երկիրը դառնալէն ետքն ալ ան լեզուին գործածութիւնը շարունակուելուն համար՝ Սուրբ Գրոց քանի մը մասերն աս լեզուով գրուած են. ըսինք նաեւ թէ այս լեզուն ժամանակ անցնելով քիչ քիչ փոփոխութիւն կրեց, եւ Արեւմտեան Արամերէն կամ Ասորերէն կոչուեցաւ:

Հիմակուան Ատորերէն կոչուած լեզուն՝ Եմեսսայի եւ անոր շրջակայ տեղերուն քրիստոնէից շինած կամխօսածն է : Այս լեզուն հին ատենը եկեղեցական պատմութեան եւ Աստուածաբանութեան մէջ հարուստ գրականութիւն մը յառաջ բերաւ, եւ տակաւին Ատորի քրիստոնեաներուն եկեղեցական լեզուն է : Պարսկաստանի մէջ Նեստորական քրիստոնէից խօսած արդի լեզուն՝ Ատորերէնի մէկ նոր կերպն է :

Սեմական լեզուներուն միւս ճիւղը, Արաբերէնը՝ տակաւին Ասիոյ եւ Ափրիկէի շատ կողմերը կը խօսուի : Այլ լեզուն ալ երկու գլխաւոր ճիւղերու բաժնուած է . Եմիերէնը՝ որ առաջուց Եմէնի մէջ կը խօսուէր ու հիմա կորսուած է, եւ Գորէարէն կոչուածը՝ որ Արաբիոյ հիւսիսային արեւմտեան կողմը, մանաւանդ Մէքքէի մէջ կը խօսուէր : Ասիկա Մուհամմէտին ժամանակէն շատ առաջ խօսուած լեզուն էր, եւ տակաւին այն կողմերուն հասարակ լեզուն է : Հին Արաբերէնը իւր բազմաթիւ կերպերովն ու ճովս բառերովն այս լեզուէն կը ասրբերի :

Եմիերէն խօսող Արաբացի գաղթականութիւն մը հին ատենը Կարմիր Ծովուն դիմացի եզերքը Եթովպիոյ մէջ բնակութիւն հաստատելով՝ իր լեզուն այն երկիրը մտցուց : Այս լեզուն ժամանակով փոփոխութիւն կրելով, Եթովպացիներէն կամ Գէէզ կոչուեցաւ, եւ Արաբերէնի հետ խիստ մօտ յարաբերութիւն ունի : Այն տեղն ուր այս լեզուն կը խօսուէր՝ հիմակուան Հապէշիստանն է . բայց այն տեղի ժողովրդեան արդի լեզուն՝ Ամհարերէնն է :

Աս լեզուները Հին Կտակարանն ուսանողին համար մեծ արժէք ունին, վասն զի անոր բնագիր լեզուին վրայ ուղիղ դիտութիւն մը ստանալու կ'առաջնորդեն, եւ ասոնց ուսումը վերջին ատեններս շատերուն Հին Կտակարանն ուղիղ մեկնելու օգնեց :

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Նոր Կտակարանին գիրքերը Յունարէն գրուած են : Մեծին Աղեքսանդրի աշխարհակալութենէն, եւ Յոյն գաղթականութեանց Ասիոյ եւ Ափրիկէի այլ եւ այլ կողմերը հաս-

տատուելէն ետքը՝ Յունարէն լեզուն Միջերկրական ծովուն բոլոր ծովեզերեայ երկիրներուն մէջ առհասարակ գործածական ըլլալու սկսաւ, եւ արդարեւ գրեթէ տիեզերական լեզու եղաւ : Հրէից մէջ ոմանք, մանաւանդ Եգիպտոսի մէջ Աղեքսանդրիա եւ ուրիշ երկիրներու գլխաւոր քաղաքները բնակողներն, այս լեզուն սորվեցան : Հրէաստանի մէջ ալ կը խօսուէր ու կը գործածուէր : Ղ. - 1 . 19 . 38 : Գ. - 7 . 15 . 38 : Յունարէն լեզուն Հրէից մէջ այն ատիճան տարածուած էր եւ կը գործածուէր՝ որ Հին Կտակարանը «Բրիստոսի գալստենէն աւելի քան 200 տարի յառաջ Յունարէն թարգմանուեցաւ : Ասոր վրայ ետքը տեղեկութիւն պիտի տրուի :

Առաքելոց ժամանակակից անուանի Հրէայ մատենագիրները Յովսէպոս եւ Փիլոն, իրենց գիրքերը Յունարէն գրեցին : Բայց այս հեղինակներուն եւ Նոր Կտակարանին մատենագիրներուն գործածած լեզուն տարբեր է Դասական կոչուած Յունարէնէն . այսինքն՝ այն Յունարէնէն որ բուն Յունաստանի մէջ կը խօսուէր եւ Պղատոնի, Քսենոփոնի ու Դեմոսթենէսի գրութեանցը մէջ կը տեսնուի : Իսկ Յովսէպոսի, Փիլոնի եւ Նոր Կտակարանի Յունարէնը այնպիսի Յունարէն մըն է՝ զոր Հրէայք կրնային գործածել . շատ մը Երբայական զրուցուածներ, Երբայական եւ Արամէական բառեր եւ բացատրութեան կերպեր կը պարունակէ : Յունարէն բառերէն ալ ոմանք բուն հին Յունարէնին մէջ գործածուած նշանակութենէն տարբեր նշանակութեամբ առնուած են : Ուստի պէտք է որ Յունարէն Նոր Կտակարանն ուսանողը՝ միշտ անոր մէջ գործածուած լեզուին աս յատկութիւնները յիշէ, որպէս զի անոր իմաստն ուղիղ հասկընալու կարող ըլլայ :

Յունարէն լեզուն գործածող Հրեաները, որոնք մեծաւ մասամբ օտար երկիրներու բնակիչներ էին, Նոր Կտակարանին մէջ ՀԻԼԵՆՅԵՄԵՄԼ կոչուելով (Գ. - 7 . 2 . 1 : Թ . 29 ,) կորոշուին Յունագգիներէն՝ որոնք Յ. - 5 կը կոչուին : Յ. - 15 . ԺԲ . 20 : Գ. - 7 . ԺԴ . 1 : ԺԸ . 4 :

ԳԼ. Գ

Առաջ Գրոց գիրքերուն պահպանութիւնը , հաստատմը
և խորհմանութիւնները . կանոնին կաշտութիւնը . հին յե-
ռագիրներն ու սրբագրութիւնները :

Նոյն իսկ Հին Ատակարանին պատմութենէն կը սոր-
վինք թէ Մովսէսի գրութիւններն , այսինքն՝ Օրէնքին գիր-
քերը , թէ՛ անապատին ճամբորդութեան տտենը և թէ անկէ
ետքը , խորանին մէջ ուխտի տապանակին քովը գրուած
կը պահուէին : Տ՝ Բ Օրէն . ԼԱ . 9 . 24 . 26 : Յ՝ . ԻԴ .
26 : Սամուէլի ժամանակն ազգին վերաբերեալ գր-
ուածներն հոն կը պահուէին : Ա թագ . Ժ . 25 : Ուստի հա-
ւանական է թէ Յեոուէն մինչև Դաւթի ժամանակը զա-
նազան պատմական գիրքեր ալ նոյն խորանին մէջ գրուեցան ,
եւ թէ Սողոմոն Յաճարը շինած ատենը բոլոր այն գիրքերը
տապանակին հետ մէկտեղ հոն դնելով (Տ՝ Գ թագ . 2 .
19 : Դ թագ . ԻԲ . 8 : Ե՝ . ԼԴ . 16 .) , իւր ներշնչեալ գր-
ութիւններովն ալ անոնց գումարն աւելցուց : Անոր օրե-
րէն ետքը մարգարէներ իրարու ետևէ ելան . Յովսէփ , Ա-
մովս , Եսայի , Ովսէէ , Յովէլ , Միքիա , Նաուու , Սոփոնիա ,
Երեմիա , Աբդիու և Ամբակում : Աոնք ամենը Յաճարին կոր-
ծանուակն առաջ ծաղկեցան , և Աստուածային գիրքերն ան-
գին յաւելուածներով ընդարձակեցին : Նաբուգոդոնոսոր
Յաճարն այրեց՝ անոր շինութենէն 420 տարի ետքը : Յայտ-
նի չէ թէ այն ժամանակ այս սուրբ ձեռագիրներն ի՛նչ եղան :
Բայց Դանիէլ Բաբելոնի մէջ Օրինաց գրքին , նաև Երեմիայի
և ուրիշ մարգարէից գիրքերուն վրայ՝ իրեն քովը գտնուած և
ընտանի եղած գիրքերու պէս կը խօսի : Դ՝ . Թ . 2 . 11 :
Մարաց եւ Պարսից Բաբելոնն առնելէն քիչ մը ետքը Հրեայք
Կիւրոսի հրամանովը գերութենէ արձակուեցան . և Անգէի
ու Ջաքարիայի քաջալերութեամբը խրատուտուելով՝ Յաճա-
րը նորէն կանգնեցին և Աստուածային պաշտօնը կրկին հաս-
տատեցին : Կրսուի թէ , Յաճարին երկրորդ շինութենէն
50 տարի ետքը , Եզրաս օրբազան գրութիւնները հաւա-
քեց . ինչպէս որ ստուգիւ Հին օրէնքը մեկնելու և ազգու-

12 ԵՕԹԱՆԱՍՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

կերպով զանոնք պահել տալու շատ հոգ տարաւ : (Տե՛ս նիւթ. Ը. 1. 3. 9.) Նեեմիայի և Մաղաքիայի գիրքերուն հետ՝ նոյն իսկ Եղրասայ գրութիւններն այս հաւաքման վրայ աւելցան, և այնպէս Հին Կտակարանին գիրքերն ամբողջացան . քանզի Մաղաքիայի օրերէն ետքը՝ ալ ուրիշ մարգարէ չելաւ, ինչպէս նաև Յովսէպոս Հրեայ պատմիչը կը վճկայէ : «Ճշմարիտ է», կըսէ, «որ մեր պատմութիւնն Արտաշէսէն ետքն ալ մանրամասն գրի առնուեցաւ . բայց մեր նախնիքն ասիկայ առջիկներուն հաւասար և համապատիւ չհամարեցան, քանզի այն ժամանակէն ետքը մարգարէներու անընդհատ յաջորդութիւն մը չեղաւ : Բայց թէ մեր այն ազգային գիրքերուն (այսինքն Սուրբ Գրոց) որչափ ստոյգ յարգ կ'ընծայենք, նոյն իսկ մեր ըրածներէն յայտնի է . այնչափ անցած դացած դարերուն մէջ անանկ յանգուգն մէկը չգտնուեցաւ որ անոնց վրայ բան մը աւելցնէր, անոնցմէ պակսեցնէր, կամ անոնց մէջ փոփոխութիւն մը ընէր» :

Գերութենէն ետքը՝ Հրէաստանի մէջ և ուրիշ երկիրներ ալ ժողովարաններ հաստատուեցան, և Աստուածաշունչ Սուրբ Գիրքերուն օրինակները շատնալով՝ բոլոր այն ժողովարաններուն մէջ կը գտնուէին : Մարի. Ա. 21 : Ղուկ. Գ. 16, 17 : Գործ. Թ. 2 : ԺԳ. 14, 15 : ԺԳ. 1 : ԺԵ. 21 : ԺԵ. 1. 10 : ԺԸ. 4 : ԺԹ. 8 : Միեւնոյն ժամանակ հոգ կը տարուէր յատուկ օրինակներ պահելու Երուսաղէմայ Տաճարին մէջ, Յովսէպոսին պատմութեանը մէջ՝ Տիտոսի Երուսաղէմ կործանելէն ետքը Տաճարէն Հռոմ տարած աւարին մէջ Հրէից Օրինաց Գիրքն ալ կը յիշուի :

Քրիստոսի ծննդէն երեք դար առաջ Հին Կտակարանին գիրքերէն Եօթանասնից կոչուած Յունարէն թարգմանութիւն մը եղաւ : Աս թարգմանութեան վրայով եղած պատմութիւնը սա է . Աստուածաշունչը Յունարէնի թարգմանելու նպատակաւ 72 ուսեալ Հրեաներ (ուստի ելաւ Եօթանասնից անունը) Երուսաղէմէն Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքն եկան Եգիպտացոց Պտղոմէոս թագաւորին խնդրովը, որ աս գործին իր գրապետէն Դեմետրիոս Փաղերիստէն թելադրուեցաւ : Այս

Թարգմանութիւնը քրիստոսի եւ Առաքելոց ժամանակը Հը-
րէից մէջ առ հասարակ կը գործադրուէր : Հաւանականաբար
այս պատճառաւ է որ անոնց Հին կառկարանէն կոչած վե-
կայութիւնները սովորաբար այն Թարգմանութիւնէն են մա-
նաւանդ՝ քան Եբրայերէն բնագրէն : Նոյն Թարգմանու-
թիւնը Եբրայերէն բնագրին հետ բազմաատելով կը տես-
նուի որ բաւական տարբերութիւններ ունի : Հնգամաս-
եանը մինչ գիրքերէն աւելի ճշգրտեամբ Թարգմանուած
է . իսկ Յօր, Սաղմոսներն ու Մարգարէները, մանաւանդ
Եսայի եւ Դանիէլ, սառիին են : Բայց եւ այնպէս քրիստոս
Յէրն մեր եւ անոր Առաքեալներն անիկայ այնչափ ճիշդ
կը համարէին՝ որ իրենց բերած վկայութիւններն բնագմա-
րագէտ առանց խաբելու անկէ առած են . Թէպէտ երբեմն
բուն Եբրայերէն բնագրէն ալ առած ունին :

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ չորս Աւետարաններն այլ եւ այլ տե-
ղեր գրուած , Առաքելոց Թուղթերն ալ իրարմէ զառաւած եւ
հետու քաղաքներու Եկեղեցիներուն զրկուած ըլլալով բա-
ւական ժամանակ անցաւ , մինչեւ որ այն գրուածներուն ամե-
նը ժողովուելով մէկ գիրք եղաւ : Պէտք է յիշել թէ ան ատեն
այլ եւ այլ երկիրներու , եւ մեւեռոյն երկրին այլ եւ այլ քա-
ղաքներուն մէջտեղ եղած հազարդակցութիւնը՝ հիմակուան
հետ բազդաատուելով որչափ սահաւ էր : Բայց ասկէ , այն
ատենները գիրքերը բազմացնելու համար տպագրութեան
մամուլներ չկային , որպէս զի Եկեղեցիները բոլոր Սուրբ
Գիրքերէն օրինակներ գիւրաւ ստանալու կարող ըլլային : Ա-
մէն օրինակ ձեռքով գրել հարկ ըլլալուն համար՝ գիրքերը
սահաւաթիւ էին . եւ 'ի հարկէ 'ի սկզբան իւրաքանչիւր Ե-
կեղեցի Նոր Կտակարանին միայն գլխաւոր գրութեանց օրի-
նակներովը կը շատանար : Բայց եւ այնպէս յայտնի է թէ
Խիսա կանուխ՝ բոլոր այն գրութիւնները հաւաքելու ջան-
քեր եղան : Պէտքոս առաքեալ (Բ ՊԿ . Գ . 15 , 16 .) Պօ-
ղոսի Թուղթերը կը յիշէ այնպիսի կերպով մը՝ որ կը ցուցնէ
Թէ քրիստոսնայք այն Թուղթերն առհասարակ ունէին եւ կը
կարգային : Քրիստոսնէտութեան առջի դարերէն մնացած եկե-
ղեցական գրութիւններ կան , թէպէտեւ քիչ են . ասոնցմով
կրնայ տպացուցուիլ թէ ան ատենները Նոր Կտակարանը ծա-

նօթ եւ հասարակօրէն մարդոց ձեռքը դանուած գիրք մ'էր : Իգնատիոս վհան՝ որ Ա. դարուն վերջին մասին մէջ Անտիոքայ Եպիսկոպոս էր, իր նամակներէն մէկուն մէջ Աւետարաններուն եւ Աւաքելոց գրուածներուն վրայ համառօտիւ կը խօսի : Նա եւ Աղեմէոս եւ Պողիկարպոս՝ որ նոյնպէս Աւաքելոց ընկերակից էին, իրենց նամակներուն մէջ՝ որ տակաւին կը կենան, Նոր Կտակարանին այլ եւ այլ գիրքերէն վկայութիւններ կը բերեն : Բ. դարուն վերջի կիսուն, Գաղղիոյ մէջ Լիոնի Եպիսկոպոսը Երանոս՝ Հերետիկոսաց գէմ գրած գիրքերուն մէջ Մասթէսոի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու Աւետարաններուն վրայ յանուանէ կը խօսի : Գ. դարուն սկիզբը Աղեմէոս Աղեքսանդրացին եւ Յերասուղիանոս Կարբեզանային նոյն Աւետարաններուն վրայ նոյնպէս յակնէ յանուանէ կը խօսին : Ասանք իրենց գրուածներուն մէջ Աւաքելոց գրեթէ բոլոր թուղթերէն ալ վկայութիւններ կը բերեն : Մանաւանդ Յերասուղիանոս նոյն գիրքերուն վրայով այնպէս կը խօսի, որպէս թէ անանք բոլոր՝ թէ Քրիստոսնայ եւ թէ Հեթանոս՝ աշխարհին քննութեանն առջեւ բաց էին : Այս վկայութիւններէն եւ ասանց նման ուրիշ վկայութիւններէ յայտնի է թէ այն ժամանակներն, այսինքն Ա. եւ Բ. դարերուն մէջ եւ Գ. դարուն սկիզբը, նաեւ այնպիսի հեռաւոր անդեր, ինչպէս են Գաղղիոյ մէջ Լիոն եւ Ափրիկէի մէջ Կարբեզոն, Նոր Կտակարանին գիրքերը թէ Քրիստոսնէից եւ թէ Հեթանոսաց ձեռքը հասած էին :

Երկրորդ դարուն կէսէն առաջ, եւ ըստ ոմանց Ա. դարուն մէջ, Նոր Կտակարանին (նաեւ Հնոյն) գիրքերն Ասորերէն թարգմանուած են, Ասորոց հիւսիսային կողմը եւ Միջագետք ընակող Քրիստոսնէից գործածութեանը համար : Այս թարգմանութիւնը՝ ԲԵՆՇԻՊՈՅ, այսինքն պարզ կամ բառ առ բառ թարգմանութիւն կոչուած է : Նոր Կտակարանին 27 գիրքերն այս թարգմանութեան մէջ բովանդակ կան, բաց 'ի Պետրոսի Բ., Յովհաննու Բ. եւ Գ. եւ Յուդայի թուղթերէն եւ Յայտնութեան գիրքէն : Յայտնութիւնն այլաբանութեամբ ըլլալուն համար, միւս յիշեալ թուղթերն ալ փոքր ըլլալով ամենուն ծանօթ ըլլալուն պատճառաւ, Քրիստոսնայ Եկեղեցիներէն սմանք՝ Նոր Կտակարանին այն

մասերը, եւ Եբրայեցւոց Թուղթն ալ Հեղինակին անունը չունենալուն համար՝ ՚ի սկզբան շնորհունեցան: Եւ որովհետեւ ուրիշ քանի մը գիրքեր ալ երեւան էլած էին՝ որոնք Քրիստոսի կենացն ու վարդապետութեանցը վայով տեղեկութիւն առ կը խոստանային, խնդիր ծագեցաւ թէ որ գիրքերը վստահութեան արժանի են եւ որոնք չեն: Ասիկայ բոլոր աս ոյլ եւայլ գրոց վաւերականութեան ապացոյցները քննելու, եւ Եկեղեցիներէն ընդունուածներուն ցուցակը շինելու առիթ տուաւ: Աս քննութեան արդիւնքն է որ Յամի Յետան 200—400՝ աս գիրքերէն առնուհինգ ցուցակներ հրատարակուեցան: Ասոնցմէ վեցն, այսինքն՝ Աթանաս Աղեքսանդրացւոյնը, Եպիփանիւր, Ռուփինոսինը, Օրտոսինոսինը, Կարբեդոսի երրորդ ժողովինն ու Գիսինոսիոս Աթիպագացւոյն գիրքերուն անանուն Հեղինակինը, Նոր Կտակարանին հիմակուան Կանոնին համաձայն են. երկը, այսինքն՝ Կիւրդի Երուսաղեմացւոյնը, Լուսգիկէի ժողովինն ու Գրիգոր Նազիանզացւոյնը, միայն Յայտնութիւնը չեն գներ. ուրիշ մ՝ ալ, այն է Կայրոսինը (հաւանականաբար 196 ին գրուած), Յակոբոսի, Պետրոսի Բ. եւ Յովհաննու Գ. Թուղթերը չի գներ. ուրիշ մը, այն է Ռոմգինէոսինը, Յակոբոսինն ու Յուդայինը չի գներ, թէպէտ ուրիշ տեղ մը ասոնք ալ կ'ընդունին: Եւսեբիոս իր ցանկին մէջ կը ցուցնէ թէ ոմանք Յակոբոսի, Յուդայի, Պետրոսի Բ., Յովհաննու Գ. Թուղթերուն ու Յայտնութեան գիրքին վրայ կը տարակուսէին: Փիրատորիոս Եբրայեցւոց Թուղթն ու Յայտնութիւնը չի գներ: Ամփիլքեիոս՝ բոլորն ալ կը գնէ, բայց կը նշանակէ անոնք՝ որոնք վրայ երկըստութիւն կար. եւ ինք Եբրայեցւոց Թուղթը հարազատ կը համարի: Իսկ Հերոնիմոս միայն Եբրայեցւոց Թուղթին համար կը խօսի իբրեւ տարակուսական. բայց աս ալ ուրիշ տեղ ոչին Թուղթը կ'ընդունի:

Աս ցանկերէն կը աննուի որ այն ժամանակը Նոր Կտակարանին 27 գիրքերէն 20 հատն առհասարակ ընդունուած էին: Այս քսանն են՝ Չորս Աւետարանները, Գործք Աբաբելոց, Պողոսի 13 Թուղթերը (բայց յԵբրայեցւոց Թուղթէն) եւ Յովհաննու ու Պետրոսի Ա. Թուղթերը: Այս քսան գիրքն առհասարակ ընդունուած էին, եւ վասն որոյ կը

կաշուէին Հոմարու-Կոս : այսինքն՝ Համառայնեալք : Միւս եօթը գիրքերուն վրայ քիչ մը ասան Եկեղեցիներէն սմանց մէջ տարածայնութիւն կար, վասն որոյ անոնք Արքեպիսկոպոսինքն՝ Յարաձայնեալք կոչուեցան : Բայց՝ ի վերջոյ՝ խորին քննութենէ մը ետքը, ասոնք ալ իբրև հարազատ ընդունուեցան . եւ ըսն իսկ անոնց ընդունուելուն ուշանալը կը ցուցնէ թէ ասոնց վրայ եղած քննութիւնը շատ զգուշաւոր եղած է :

Քրիստոսէ առաջ Գ. դարուն մէջ Հին Կտակարանին Յունարէնի, Քրիստոսէ ետքը առաջին կամերկրորդ դարուն մէջ ալ Հին եւ Նոր Կտակարաններուն միանգամայն՝ Յոսոբերէնի թարգմանուած ըլլալն արդէն յիշած ենք : (Տես. 12 և 14 երորդ երեսները Է)

Բ. դարուն մէջ ալ Սուրբ Գիրքէն Հին Իտալական թարգմանութիւն կաշուած Վատիններէն թարգմանութիւն մը եղաւ : Ասոր Հին Կտակարանը՝ Եօթանասնից թարգմանութենէն, իսկ Նոր Կտակարանը Յունարէն ընդարէն թարգմանուեցան : Դէպ՝ ի Բ. դարուն վերջը՝ Տերտուղիանոս այս թարգմանութիւնը կը յիշէ, եւ անկէ քիչ մը հասակոտորներ տակաւին կան :

Գ. դարուն մէջ Հերոնիմոս այս հին Իտալական թարգմանութիւնը որբազրելով գրեթէ քսան տարուան աշխատութեամբ նոր մը պատրաստեց : Այս թարգմանութիւնն ալ Առ-Վարդ (հասարակ) կոչուեցաւ, որ ըստ մասին հին Իտալականէն, ըստ մասին նոյն թարգմանութեան Հերոնիմոսին սրբագրածէն, մասամբ մ՝ ալ անմիջապէս Եբրայեցիներէն առնուած նոր թարգմանութենէն կը բաղկանայ : Հոսմէական Կաթոլիկ Եկեղեցին ետքը քանի մը փոփոխութիւններ ընելով՝ այս թարգմանութիւնն ընդունեց իբրև կանոն եւ օրինակ, եւ Յուրբ Գրոց արգի Եւրոպական լեզուներու եղած թարգմանութեանց շատերն՝ այս թարգմանութեան վրայ հիմնուած են :

Գ. եւ Գ. դարերուն մէջ ըսլոր Նոր Կտակարանն ու Հին Կտակարանէն քանի մը մասեր Խփաբերէնի (կամ Մեմփաց լեզուին) թարգմանուեցան . աիկա ստորին Եգիպտոսի լեզուն է, քանզի Խփաիները Եգիպտացի Քրիստոնե-

եաներ են : Նաև նոյն ատենները Սիւլվերէնի (կամ Թեյ-
բոցուց լեզուին) ալ թարգմանութիւն մը եղաւ . առ ալ զե-
րին նշխարաստի լեզուն է : Գ . գարուն մէջ թարգմանու-
թիւն մ'ալ եղաւ Եթովպացիերէնի , առ լեզուն կը խօսուից
Եթովպիոյ մէջ՝ որ Կանդախոյ թարգուհւոյն կամ հիմափուսի
Հապէշիտասնու երկիրն է :

Չ . գարուն մէջ Վրացուց լեզուին ալ Սուրբ Գրք
Թարգմանուեցաւ . իսկ Սլաւերէն թարգմանութիւնը եղաւ
Թ . գարուն Կիւրեղ Թեստաղանիկեցուոյն ձեռագրը , որ հնարեց
նաեւ Սլաւերէն նշանագիրները : օրոնք հիմա Ռուսերը , Պուլ-
գարները եւ ուրիշ Սլաւ ազգեր կը գործածեն : Այս թարգ-
մանութիւններէն շատը Հին Կապիտանին Եթովպասնից
Թարգմանութիւնէն թարգմանուած է . մէկ քանին Սուրբ
Գրոց Ասորերէն թարգմանութիւնէն , մէկ քանին ալ Վուլ-
կագա կոչուած Ղաաթներէնէն :

Հայերէն թարգմանութիւնն աւելի կանուխ եղած է
(Ե . գարուն) Մեթրոպոլ ձեռքով , որ եւ Հայերէն Այբու-
բենը հնարեց : Կը պատմուի թէ Մեթրոպ եւ ընկերները Յով-
սէփ եւ Եզնիկ նախ ոկտան թարգմանել Ասորերէն Բեշիկոյ
կոչուած թարգմանութիւնէն : Բայց յետոյ Սուրբ Գրոց Յու-
նարէն օրինակ մը ձեռք բերելով , եւ նոյն միջոցին Յովսէփ :
Եզնիկ եւ Մովսէս Խորենացի ատեն մը Ազգասնագրի առջնե-
լով՝ որպէս զի Յունարէն լեզուն սորվին , թարգմանութիւնն
ան օրինակին հետ համաձայնեցուցին : Հայերէն Աստուածա-
շունչին մէկ ընտիր տպագրութիւնը եղաւ Վենետիկ 1805ին :
Առ տպագրութիւնը եղած է Ժ.Գ . գարուն Կիլիկիոյ մէջ
գրուած ձեռագրի մը վրայ : որուն հետ ուրիշ վաթսուն եւ
հինգ ձեռագիրներ ալ նայուած են :

Վերջ յիշուածները Սուրբ Գրոց գլխաւոր հիմ թարգ-
մանութիւններն են : Նոր ժամանակներս գիտուն մարդիկ
առ այլ եւ այլ հին թարգմանութիւնները , նաեւ Սուրբ Գրոց
Եբրայեցիերէն եւ Յունարէն ինչ հին ձեռագիր որ կրցան
գտնել՝ ամէնը իրարու հետ բաղդատելով շատ ջանք ըրած
են , որպէս զի որբազան գրութեանց ճիշդ բառերն ու նշա-
նակութիւնները ստուգելու կարող ըլլան :

Ասոնց ձեռքն անցած եւ բաղդատուած ձեռագիրներուն

Թիւք՝ 1,900ի չափ է, որոնց 1,300ը Երբայեցերէն եւ 600ը Յունաբէն են : Իրաւ է թէ առ ձեռագորաց մէջէն քիչերը Հին եւ Նոր Վասակարանաց բարբ գիրքերուն ամբողջ օրինակը կը պարունակեն . անոնց մեծ մասն՝ Առտուածաշուկն այս կամ այն մասին միայն ձեռագիրներն են, բայց եւ այնպէս ասոնք Սուրբ Գիրքերը ստուգելու մասին շատ մեծ արժէք ունին :

Սուրբ Գրաց Երբայեցերէն ձեռագիրներուն շատերը՝ որ մինչեւ հիմա մնացած են, Քրիստոնէական թուականին 1000 եւ 1457 օտարիներուն միջոցին գրուած են . մինակ քանի մը հատը Ը . եւ Թ . դարերուն կը վերաբերին : Նոր Վասակարանին եւ Եօթանասնից կամ Հին Վասակարանին Յունարէն թարգմանութեան ձեռագիրներն աւելի հին են : Ասոնց ամենէն հիներն ու պատուականները հետեւեալներն են . (1) Աղեքսանդրեան կոչուած ձեռագիրը, զոր 1628ին կոստանդնուպոլսյ Պատրիարքը Վիւրեղ Ղուկաս՝ Անգղիոյ Վարդապետ Ա . Թադաւորին զրկեց, եւ հիմա Լոնտոնի Քրիստոնէական Թանգարանն է : Ասիկա չորս փոքրադիր հատորներու մէջ Հին եւ Նոր Վասակարանները կը պարունակէ, եւ Ե . դարուն մէջ գրուած կը կարծուի : (2) Վատիկանու ձեռագիրը՝ որ նոյնպէս Հին եւ Նոր Վասակարանը Յունարէն լեզուով կը պարունակէ, եւ Հռոմ՝ Վատիկանու Գրատանը մէջ պահուած է, Դ . դարուն կը վերաբերի : (3) Ուրիշ ձեռագիր մ՝ ալ՝ որ Փարիզու թագաւորական Գրատունը պահուած է եւ Արքունական կը կոչուի : Զ . դարուն կը վերաբերի : Այս ձեռագրին վրայ Եփրեմի գործքերը գրուած ըլլալուն համար՝ Եփրեմի ձեռագիր ալ կը կոչուի . քանզի նախնի հեղինակները բաւական մագաղաթ չկրնալով գտնել՝ երբեմն հին մագաղաթեայ ձեռագիրներուն գիրքերը օւրելով՝ վրան իրենց գրուածները կը գրելին . օւրաք եւ այնպիսի մագաղաթներ «Վրկնագիր» կը կոչուին, եւ Յունարէն Բալթիոսի կ'ըսուին, որ վերտինջն զնոյն կամ քերուած ըսել է : Արքունական ձեռագիրն աս անսակէն է, եւ անոր սկզբնական գրութիւնը որ Առտուածաշուկն էր, թէպէտ վերոյիշեալ կերպով աւրուած էր . բայց եւ այնպէս շատ դժուարութեամբ կարդացուեցաւ : (4) Պէզայի ձեռագիրը՝ զոր Պէզա բարեկարգիչ Անգղիոյ Քէմպրիճ քաղքին Համալսարանին ստուաւ : Ասիկա՝ որ չորս Աւետարան

բաններն ու գործք Առաքելոցը Յուսարէն եւ Լատիններէն մէկտեղ գրուած կը պարունակէ, Ե. գարուն կը լինար բնորդ. Թէպէտ անոր քիչ հնութիւն տուող բանագրաներ անկեղ Զ. կամ Է. գարու ձեռագիր կը համարին:

Հոս կրնայ մէկը հարցնել թէ Ի՞նչպէս կարելի է ճշգիւ պատգիւ ձեռագիրներուն գարը, որոնք շատ անգամ ուրիշ բան չեն՝ բայց եթէ հին օրինակներու հասակասորներ: Աս հարցման կը պատասխանենք, նախ օտ գիտազուծիւնն ընկալով թէ ձեռագիրներէն սմանց մէջ անոնց գրուած ժամանակին թուականը նշանակուած է. եւ երբ աս թուականը նոյն իսկ ձեռագիրը գրող գրչէն է, եւ ուրիշ ապացոյցներ ալ թուականին ստուգութիւնը կը հաստատեն, խնդիրը որոշուած կը համարուի. Բայց Ժ. գարէն՝ առաջ գրուած ձեռագիրներու մէջ թուական նշանակուած՝ անհնուած չէ:

Երբեմն ձեռագիրներուն մէջ գտնուած յիշատակաբանները մեծ օգնութիւն են. զոր օրինակ, լերոյիշեալ Աղեքսանդրեան կաշուած ձեռագրին մէջ Աբարեբէն լեզուով գրուած է, թէ Թեկղը անուսով Եգիպտացի իշխանուհի մը՝ որ Նիկիոյ առաջին ծոցովէն (Յ. Յ. 325) քիչ մը ետքը ապրեցաւ, յիշեալ ձեռագիրը գրեց: Երբին ապացոյցներ ալ ձեռագրին յիշատակարանին այս խօսքը կը հաստատեն:

Բայց եւ այնպէս թուականի խնդիրը շատ անգամ բազմակնճիւն է. եւ ուրիշ կերպով չի կրնար պարզուիլ՝ բայց եւ թէ զգուշութեամբ հետազօտելով այլեւայլ միջին ապացոյցներ, զորոնք քանի մը նամակով կրնանք ստանալ. զոր օրինակ նիւթը քննելով՝ որուն վրայ ձեռագիրը գրուած է. նաեւ գիրներուն ձեւէն եւ կամ ընդհանրապէս գրուածքին սեռէն գառազուծիւն ընելով:

Սուրբ Գրոց հին ձեռագիրներէն կան որ սեկի, այսինքն գործուած եւ կարծիք կամ գեղին ներկուած մերթի վրայ գրուած են: Աս մերթիքը օտարաբար իրարու կը կցէին, որպէս զի մէկ րոմի կամ հասորի մէջ Սուրբ Գրքին մէկ սուրբով մասը, զոր օրինակ Հնգամատեանը կամ Մարգարէք, պարունակեն: Աշխարհիս վրայ ամենին հին ձեռագիրներէն սմանք՝ յիշեալ կերպով գրուած Հնգամատեանին օրինակներն են:

Ցեւականութեան մասին՝ ասոնցմէ ետքը կու գայ նախա-
նեաց մագաղաթը : Զ. գարէն առաջ գրուած ձեռագիրնե-
րուն շատերը որ մինչեւ մեր ժամանակը հարած են՝ մագաղա-
թէ են :

Հին դարերուն մէջ Յայնք եւ Հռոմայեցիք եգիպտա-
կան եղեգէ կամ պապիրոսէ շինուած ատակ մը թուղթի կը
գործածէին . բայց գէղ 'ի թ . դարուն վերջերք բամպակե
շինուած թուղթը պապիրոսին տեղը բռնեց . իսկ Ճ . եւ
ՃԱ . դարերուն մէջ հին կտակի կապերաներէ շինուած
թուղթ ալ սկսաւ գործածուիլ : Աւտի ձեռագիրներուն
նիւթն անոնց հնութեանը մէկ վիան է : Սեկի կամ մագաղա-
թի վրայ գրուածներք , եթէ հնութեան ուրիշ նշաններ ալ
ունին , հնագոյն կը համարուին . բայց բամպակէ թուղ-
թի վրայ գրուած ձեռագիր մը չի կրնար Ճ . դարէն հին բը-
լլալ : Աւրիշ նշաններ ալ կան՝ սրմնցմով ձեռագիրներուն
ժամանակը կամ դարը կրնայ որոշուիլ :

Այն ձեռագիրները՝ որոնք հիմնական գլուխներու բա-
ժանումն ունին , չին կրնար ՃԳ . դարէն աւելի հին
բլլալ . (Ցեւ Ա . գլուխ՝ վերջին մասը :) Գարձեալ՝ Ճ .
գարէն առաջ ձեռագիրներու մէջ գործածուած նշանագիրնե-
րը լոյն եւ քառակուսի են , գրագիրներու կը նմանին եւ
իւրաքանչիւր գիր զոտ գրուած է : Ճ . դարուն մէջ սկսան
գործածուիլ հիմնական բոլոր գիրերը՝ որոնց մեւը կլտք է,
գիրերն ալ իրարու կցուած կը գրուէին : Աւտի բոլոր գրով
գրուած ձեռագիր մը Ճ . դարէն աւելի հին չի կրնար բլլալ :

Հարցման կէտերն ու ստորակէտը նախ թ . դարուն
սկսան գործածուիլ . այնպէս որ այս նշաններն ունեցող ձե-
ռագիր մը պէտք է որ այն դարուն կամանկէ ետքը գրուած
բլլայ : Միւս կէտանշանները նախորդ դարուն մէջ կը
գործածուէին . աւտի ձեռագիր մը՝ որ բայ 'ի ստորակէտե
եւ հարցական նշաններէ ուրիշ կէտանշաններ ունի , կրնայ
Ը . դարուն վերաբերիլ :

Աւտարանները նախ եւ առաջ Գ . դարուն երկու տե-
տակ գլուխներու բաժնուեցան . մէկը՝ երկայն , միւսը՝ կարճ :
Ասոնք երբեմն , այն հատուածներն ընտղ հեղինակին անուամ-
բը , Ամինեան հատուած կը կոչուէին . երբեմն ալ՝ Եւգեր

եան կանոնք . քանզի Եւոեբիոս յաջորդ գարուն մէջ իր Համաբարբառները կամ վկայութեանց ցուցակները նոյն բա-
ժանմանց համաձայն յօրինեց : Նոյն գարուն վերջի մասին
մէջ (360) Ռոկեբեբան՝ Աստուածաշունչի ձեռագիրները խիստ
բարակ մագաղաթի վրայ եւ սոկեղէն ու արծաթեղէն գրե-
բով գրելու սովորութեանը վրայ իրրեւ շատոնց սովորական
եղած բանի մը պէս կը խօսի : Ասկէ ալ ձեռագիրներու ժա-
մանակին նկատմամբ ապացոյց կրնայ առնուիլ :

Ե. Գարուն մէջ յիշեալ հասուածներուն բովանդակու-
թիւնը կամ իմաստը՝ իւրաքանչիւր հասուածին սկիզբը
գրուեցաւ . եւ ձեռագիրները Յաիքս կոչուած առղերու
բաժնուեցան : Ուստի եւ այն վերնագիրներն ունեցող ձեռա-
գիր մը Ե . գարէն հին չի կրնար ըլլալ : Բայց ձեռագիր մը
եթէ Ամմոնեան հասուածները միայն ունենայ եւ քառա-
կուսի նշանագիրներով գրուած ըլլայ, կրնայ մինչեւ Գ. եւ Պ.
գարու հնութիւն ունենալ :

Աս ամէն պարագաներուն խնամով միտ դնելով այլեւ
այլ ձեռագրաց թուականը բաւական ճշգիւ ստուգուեցաւ .
բուն ձեռագիրներն ալ իրենց պատուականութեանը համ-
մատ՝ կարգով շարուեցան : Ամմէնէն յարգի ձեռագիրներէն
ոմանք տպուեցան՝ ամէն մէկուն բուն գրուածին ճիշդ նման
յատուկ նշանագիրներով, որոնք մեծ ծախքով ասոնք տպելու
համար միայն շինուեցան : Եւ ասիկա ըրին՝ որպէս զի կար-
գացողները ձեռագիրներուն բնագիրները բուն աչօք տեսածի
պէս ըլլան :

Վերջին երկու գարերուն մէջ Սուրբ գրոց, մանաւանդ
Յունարէն Նոր Կտակարանին բաւերը ստուգելու համար
եղած վերսյիշեալ (տես երես 17) Զանքերուն նման Զան-
քեր ասկէ հազար տարիէ աւելի առաջ Տիբերիոս քաղ-
քին մէջ Երբայեցերէն Հին Կտակարանին համար ե-
ղած են : Այն ատեն գտնուած Երբայեցերէն ձեռագիր-
ները հոն նայուած ու բազդատուած ըլլալով վերջապէս
Հին Կտակարանին մէկ օրինակը կազմուած էր, որ շատ
ընտիր և ուղիղ էր : Աս օրինակը Մասորական կը կոչուի,
և գրեթէ բոլոր նոր քննութիւններն ընդհանրապէս ա-
նոր ընթերցուածներն հաստատած են : Երբ Հրեայք ի-

րենց երկիրը Սարակինոսաց ձեռքն անցնելուն համար ցըրուելու ոտիպուեցան, անոնց գիտունները գեղ 'ի արևմուտք՝ Սպանիա, Իտալիա և Կեդրոնական Եւրոպա գաղթելով, Սուրբ Գրոց Մասսարական օրինակն իրենց հետ տարին, և իրենց ազգին ունեցած կարօտութիւնը լեցընելու համար յիշեալ օրինակը հետզհետէ բազմացուցին:

Տպագրութեան արուեստը գտնուելէն ետքը՝ հրատարակուած առաջին գիրքն Աստուածաշունչին Վուկադա կոչուած Լատիներէն թարգմանութիւնը եղաւ: Առիկա 1455 ին Գերմանիոյ Մայնց քաղաքը Կուդդէմպերկի և Ֆաւադի խնամքովը տպագրուելով՝ Մազարինեան Աստուածաշունչ կոչուեցաւ: Գիրքին տպագրութիւնը շատ գեղեցիկ և ազնիւ ըլլալուն համար, երբ ծախու հանուեցաւ, տպագրիչներէն զատ մէկը դործին ինչ կերպով շինուած ըլլալը չէր գիտեր: Ֆաւադ՝ որ հրատարակողներուն մէկն էր, երբ քանի մը օրինակ առնելով ծախելու համար Փարիզ եկաւ, իբրև կախարդ բանտարկուելով՝ տպագրութեան գաղտնիքն յայտնելու ոտիպուեցաւ:

• Այս Աստուածաշունչէն դեռ 18 օրինակ կայ. մէկը որ ազնիւ տեսակ մագաղաթի վրայ տպուած էր, 1827ին 550 լիբրայի ծախուեցաւ:

Եբրայեցերէն շին Կտակարանը 1488ին Սօնկինօ քաղաքը տպուեցաւ: Ամբողջ Աստուածաշունչը, Եբրայեցերէն, Յունարէն և Լատիներէն մէկտեղ, 1514ին Սպանիոյ Կոմբլուտոն քաղաքը տպուելով՝ Կոմբլուտոնեան Բազմալեզու Աստուածաշունչ կոչուեցաւ: Երասմոս՝ Լուտերի ընկերն ալ՝ 1516ին Հելուեայի Պագէլ քաղաքը Յունարէն Նոր Կտակարանը տպագրութեամբ 'ի լոյս ընծայեց:

Յաջորդ գարուն առաջին մասին մէջ Ելզեվէր գիտնականը Նոր Կտակարանին այս երկու տպագրութեանը վրայ հիմնուած "Ընդունուած բնագիր" կոչուած տպագրութիւնն 'ի լոյս ընծայեց: Ինքը վերը յիշուած երկու տպագրութիւններէն զատ՝ Սթիվէնսի (1546ին Փարիզ տպուած) և Պեզայի (1565 ին Ճէնովա տպուած) հրատարակութիւններն ալ ունենալով, զանոնք առաջիններուն հետ բաղադատած էր: Բայց

այն ժամանակը գիտնաց ձեռքը գտնուած ձեռագրաց թիւը, հիմա գտնուածներուն նայելով, շատ նուազ էր. այնպէս որ նոր տպագրութիւնները, մանաւանդ անոնք որ Գերմանիոյ մէջ հրատարակուած են, աւելի ճիշտ կը համարուին, թէպէտ երևելի տարբերութիւններ չունին, և կարևոր կէտերու նըկատմամբ Սուրբ Գրոց իմաստը հազիւ ուրիշ կը փոխեն :

Վերը յիշուած ժամանակէն 'ի վեր' Աստուածաշունչը 200 է աւելի լեզուներու թարգմանուելով, հիմա երկրիս բաւոր գլխաւոր ազգերուն մէջ ընդհանուր տարածուած է :

Տաճկաստանի մէջ Սուրբ Գիրքերը Հայերէն, Յաճկերէն, Հայերէն գրով Տաճկերէն, Յունարէն գրով Տաճկերէն, Պուլղարերէն, Եբրայեցերէն, Եբրայեցերէն գրով Սպաներէն և Գիւրտերէն լեզուներով հրատարակուած են :

Աշխարհաբար Հայերէն 'նոր կտակարանն' առաջ Փարիզ տպուած ըլլալով, յետոյ 1842 ին ալ Չմիւռնիա տպուեցաւ. ասիկա գրաբար Հայերէնէն բառ առ բառ թարգմանուած էր : 1853 ին դարձեալ Չմիւռնիա բոլոր Աստուածաշունչն Աշխարհաբար Հայերէն 'ի լոյս ընծայուեցաւ. ասիկա Եբրայեցերէն և Յունարէն ընդգիրներէն թարգմանուած և վկայութիւններով նշանակուած էր : Ետքը աս թարգմանութենէն կոստանդնուպոլիս և Նիւ Եօքը այլ և այլ տպագրութիւններ եղած են :

'Նոր կտակարանն ու Սաղմոսներն ալ գրաբար Հայերէն և Արևելեան կամ՝ Արարատեան կոչուած աշխարհաբար լեզուով հրատարակուած են : 'Նոր կտակարան մը՝ աս երկու լեզուն միևնոյն էջի վրայ դէմ առ դէմ երկու սեան մէջ ունենալով՝ 1856 ին կոստանդնուպոլիս տպուեցաւ :

1843 ին Հայերէն գրաբար 'նոր կտակարանը Չմիւռնիա տպուեցաւ. ասիկա Հայերէն թարգմանութեան Յունարէն ընդգիրն հետ ունեցած տարբերութիւնները կը ցուցնէ :

Հայերէն գրով Տաճկերէն 'նոր կտակարանը՝ նախ և առաջ 1831 ին Մալթա տպուեցաւ : Իսկ ամբողջ Աստուածաշունչը Հայերէն գրով Տաճկերէն պատրաստուելով՝ 1843 ին Չմիւռնիա հրատարակուեցաւ. ասոր մէկ ուրիշ տպագրութիւնը վկայութիւններով մէկտեղ 1863 ին կոստան-

24 ՏԱՃԿԵՐԷՆ ԵՒ ԱՅԼ ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

գնուպօլիս 'ի լոյս ընծայուեցաւ : Աս թարգմանութենէն ալ այլ և այլ տպագրութիւններ եղած են Կոստանդնուպօլիս և ուրիշ տեղեր :

Յունարէն գրով Տաճկերէն Աստուածաշունչը նախ 1838ին Աթէնք տպուեցաւ . երկրորդ տպագրութիւնը եղաւ 1856ին Կոստանդնուպօլիս : Աս թարգմանութենէն 'Նոր Կտակարանն ու Սաղմոսներն ալ զատ հրատարակուած են : Աս տպագրութիւնները եղած են մասնաւորապէս Փոքր Ասիո մէջ բնակող բազմաթիւ Յունաց համար՝ որոնք Տաճկերէն միայն կը խօսին , բայց Յունարէն նշանագիրներով կը գրեն : Սուրբ Գիրքերն արդի Յունարէնով շատ անգամ Աթէնք և Լոնտոն հրատարակուած են :

Բուն Տաճկերէն , այսինքն՝ Արաբացի նշանագիրներով գրուած ամբողջ Աստուածաշունչը 1827ին Փարիզ հրատարակուեցաւ : Աս լեզուով 'Նոր Կտակարանը սրբագրուելով՝ 1866ին տպուեցաւ Կոստանդնուպօլիս :

Պուլշարերէն 'Նոր Կտակարանը նախ Զմիւռնիա 1840ին տպուեցաւ : Ուրիշ վեց տպագրութիւն ալ եղաւ Զմիւռնիա , Պուլքերէշ և Լոնտոն . վերջապէս սրբագրեալ տպագրութիւն մը եղաւ Կոստանդնուպօլիս 1865ին : Չորս Աւետարանները սոյն լեզուով 1828ին Պուլքերէշ հրատարակուեցան , Հին Կտակարանն ալ մաս մաս 1861—1863 Կոստանդնուպօլիս հրատարակուեցաւ . նոյնպէս Սաղմոսներուն այլ և այլ տպագրութիւնները եղած են :

Հին Կտակարանը Երրայեցերէն , և Տաճկաստան բնակող Հրէից մեծագոյն մասին խօսած Սպաներէն լեզուով բայց Երրայեցերէն գրով , 1848ին Զմիւռնիա մէկ հատորի մէջ տպուեցաւ : Ասկէ առաջ ուրիշ ամբողջ տպագրութիւն մը , և աւելի առաջ՝ Սուրբ Գրոց քանի մը մասերը Վիենա տպուած էին :

Քիւրտերէն միայն չորս Աւետարանները 1857ին Կոստանդնուպօլիս տպուեցան . Մատթէոսի Աւետարանը նախքան թաց տարին զատ հրատարակուած էր : Աս տպագրութիւնը Հայերէն գրով եղաւ մասնաւորապէս Քիւրտերէն խօսող Հայոց համար :

ԳԼ . Գ

Սուրբ Գրոց հարազատութիւնը :

ՍՈՒՐԲ Գրոց արտաքին պատմութեանը , այսինքն՝ անոնց բնագիր լեզուներուն , գրութեանց պահպանութեանը , հաւաքմանը , թարգմանութեանցն ու ապագրութեանը վրայ համառօտիւ խօսելէ ետքը՝ հիմա բուն գիրքերը քննելու կու գանք : Առաջին խնդիրը սա է թէ մեր ձեռքը գտնուած հիմակուան Սուրբ Գրոց հարազատ ըլլալուն կ'նչ ապացոյց կայ :

Գիրք մը հարազատ կ'ըսուի , երբ կրնայ ապացուցուիլ թէ անիկա բուն հեղինակին գրածին ճշմարիտ օրինակն է . եթէ գիրք մը սա ապացոյցը չունի , անհարազատ կը կոչուի : Եթէ հեղինակին գրութեանն այլայլած կամ խանգարուած ըլլալուն ապացոյց կայ , այնպէս խանգարուած գիրքն՝ ալաալեւ կը կոչուի : Ուստի խնդիրը սա է թէ կ'նչ ապացոյց ունինք որ հիմա գործածուած Սուրբ Գիրքերը՝ բուն Մովսէսին , հին Մարգարէներուն կամ Աւետարանիչներուն և Առաքելոց գրածներուն ճշմարիտ օրինակներն են :

Եթէ այն հեղինակներուն գրած մէկ ձեռագիրը տակաւին գտնուէր՝ այնպէս որ կարող ըլլայինք մեր ունեցած Սուրբ Գիրքերն այն ձեռագրին հետ բաղդատել , այսպիսի բաղդատութեամբ մը հարազատութեան խնդիրը գիւրաւ և շուտով կ'որոշուէր : Բայց ոչ Սուրբ Գիրքերէն , ոչ ալ հին Յայն և Հռոմայեցի հեղինակներուն ուրիշ գրութեաներէն այսպիսի բնագիր ձեռագիր մը կրնայ գտնուիլ : Բայց և այնպէս գոհացուցիչ ապացոյցներ կան որ հիմակուան Ատուածաշունչին գիրքերն այն հեղինակներուն գրուածներն են որոնց կ'ընծայուին :

1 . Նախ և առաջ՝ եթէ Սուրբ Գրոց մեր հիմակուան օրինակները հինուց ապուած Ատուածաշունչներուն հետ բաղդատանք , կը գտնենք որ անոնց նիւթը մի և նոյնն է : (և արդարև անոնք որ տակաւին կան Ատուածաշունչներ՝ որոնք 1455 ին ապուած են . Տես երես 22 .) այնպէս

ՁԵ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

որ շատ յայտնի կերպով կ'ապացուցուի թէ վերջին 400 տարուան միջոցին Սուրբ Գրոց մէջ փոփոխութիւն կամ այլալուծիւն մը եղած չէ :

2. Երկրորդ՝ եթէ նոյն մեր օրինակները բաղդատելու ըլլանք Սուրբ Գրոց հին ձեռագիրներուն հետ , որոնք , ինչպէս տեսանք , Դ . էն մինչև Փ . Ե . դարերուն (Յես 18 , 19 երես) միջոցին գրուած են , դարձեալ երկուքին մէջ ալ մի և նոյն նիւթը պարունակուած կը գտնենք :

Ազգարև այն հին ձեռագիրներն իբարու , կամ մեր այժմու Աստուածաշունչին հետ բաղդատելով՝ բառերու , երբեմն նաև խօսքի , թեթև ասորներութիւններ կը գտնենք : Եւ ասիկա զարմանք չե՛ , քանի որ մեծ զգուշութեամբ Գրոց գիրքերու մէջ ալ շատ անգամ բազմաթիւ սխալներ սպրդած կը տեսնուին : Ձեռագիր օրինակելու ատեն որ խալ ընելու , գրեր , վանկեր և բառեր աւելցնելու կամ գուրս ձգելու , փոխելու կամ տեղափոխելու աւելի վճարանք կայ . քան թէ գիրք ապելու ատեն : Ձեռագիր օրինակող մը՝ կամ ինք գիրքէն կ'օրինակէ , և ան ատեն կրնայ սխալ տեսնել , և կամ ուրիշ մը կը կարգայ և ինք կը գրէ , ան ատեն ալ կրնայ սխալ լսել : Շատ անգամ այլ և այլ բառեր մի և նոյն վերջաւորութիւնը կ'ունենան , կամ այլ և այլ պարբերութիւններու վերջին բառերը մի և նոյնը կ'ըլլան , և այնպէս զանոնք իրարու հետ շփոթելով սխալ գրելք շատ գիւրդին է : Օրինակած ձեռագիրը չհակընալէն ալ նոյնպէս սխալներ տեղի կ'ունենան : Օրինակողը կրնայ ձեռագիրն համառօտագրութիւնները սխալ կարգադրած , կամ սխալ կէտադրութիւն ըրած ըլլալ , քանզի հին ձեռագիրներէն շատերուն մէջ կէտադրութեան նշանները զանց կ'առնուէին . դարձեալ կրնայ օրինակն ալ որմէ ձեռագիրն օրինակուած է , ամբողջ կամ ըստ մասին տարուած ըլլալ : Ձեռագիր օրինակողները բարձր աս պատճառներով սխալ ընելու ենթակայ եղած են . բայց և այնպէս շատ քփշտեցամ պատահած է որ օրինակողներուն ըրած սխալները բնագործն իմաստին այլալուծութիւն տուած ըլլան . անոնց ըրած սխալներն ըստ մեծի մասին կը նմանին ան սխալներուն՝ որոնք փորձ մը զգուշութեամբ

հարգացող սրբազրիչի մը աչքէն վերայելով կըզատասհին , և զորոնք ապագրութեան սխալ կոչել սովորութիւն է : Աւստի՛ եթէ Հիմակուան գրաշարներն ու սրբազրիչներն այնչափ զգուշութիւն ընելէ ետքը՝ ապուած գիրքերու մէջ երբեմն բառի նաև խօսքի սխալներ կը սպրդին , զարմանք չէ որ Հին ատենը Սուրբ Գրոց ձեռագիրներն օրինակելու ժամանակ երբեմն սխալներ կամ տարբերութիւններ տեղի ունեցած ըլլան , և այնպէս ձեռագիրները քիչ շատ իրարմէ տարբերութիւն ունենալով՝ Սուրբ Գրոց Հիմակուան աւագրութիւններն ալ որ և իցէ ձեռագրէ մը աւելի կամ նուազ տարբերութիւններ ունենան : Բայց և այնպէս ան տարբերութիւնները Հիմակուան օրինակներուն հարազատութիւնը չեն ջնջեր , քանզի կարևոր իմաստի մը չեն փոխեր :

3. Երրորդ՝ նախընթաց , այսինքն՝ Աւագին գարէն մինչև Հինգերորդ դար հասնելով՝ նոյն ժամանակ հաստատելու ուրիշ ազդեցոյց մ՝ ալ մեր առջևը կ'ելլէ . այսինքն այն վեպայութիւնները՝ զոր ան դարերուն Քրիստոսնայ Մատեա նազիրներն ու Հարք՝ իրենց մինչև ցարգ ձայնած Թուղթերուն , Ճառերուն , Զատագոգութիւններուն և Մեկնութիւններուն մէջ բերած են : Ան այլ և այլ գրութեանց մէջ ա զկայութիւններն ընդհանրապէս մեծ զգուշութեամբ և Սուրբ Գրոց խօսքը բառ առ բառ աւանելով մէջ բերուած են . և ասանցմեզ յայանապէս կըցուցուի թէ ան Սուրբ Գիրքերը՝ որոնցմէ այն Հին Հեղինակները զկայութիւն աւսած են , մեր Հիմն ունեցածներուն հետ մի և նոյն են :

Նախ՝ Ե . դարուն Ատրուց երկրին մէջ ծագող թեւ զորեառոսի Կիպրացոյն Պողոսի Թուղթերուն և Հին Կապարանին մեծ մասին զրայ բրած գրութիւններն ունինք : Անկէ առաջ Կիւրեղ Աղեքսանդրացին Մարգարէից և Յովհաննու Աւետարանին զրայ գրած է : Գ . դարուն մէջ Ռուկներան ամբողջ Նոր Կտակարանին Մեկնութիւնը գրած է : Գրիգոր Նիւսացոյն գրութիւններն ալ նոյն դարուն կը վերաբերին : Քիչ կարևոր չեն նաև Գ . դարուն մէջ Հերանիմոսին Սուրբ Գրոց զրայ գրած Մեկնութիւնները . նոյն դարուն կը վերաբերին նաև Օգոստինոսի բազմահատար

գրութիւնները : Բ . և Գ . դարերէն ունինք Ռոպինէտի և Թէոփիլոսի Անտիոքացւոյն գրուածները . ասոնց երկուքին ալ գործերէն հասակոտորներ քննարկեն (Թէպէտ վերջնոյնը միայն Լատիներէն է) : Բ . դարէն ունինք նաև Կղեմէս Աղեքսանդրացւոյն գրութիւնները . Լիոնի Եպիսկոպոսին Երանոսինը . նաև Յուստինոս Ակային Հռոմի Կայսեր մատուցած ջատագովութիւններն , ուր հեղինակը՝ լերան վրայ Գրիստոսի ըրած քարոզութիւնը գրեթէ ամբողջ , բոլոր Թուղթերէն ալ այլ և այլ մասեր , իրր վեհայութիւն մէջ կը բերէ : Ա . դարէն ունինք , Թող ուրիշ շատերը , Կղեմէս անուանով մէկուն Հռոմի Եկեղեցւոյն կողմէն Կորնթոսի Եկեղեցւոյն գրած մէկ նամակը : Հին հեղինակներէն շատերը կը կարծեն թէ աս Կղեմէսը Փիլիպ . Գ . Յ . յիշուած անձն է : Ասիկա յիշեալ նամակին մէջ Կորնթացիները կը յորդորէ որ Գրիստոսի « Այ անոր որուն ձեռքովը դայթակզութիւններ կու գան . Անոր աւելի աղէկ է , որ անոր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի : Ան անիկա ծածկ ձգուի , քան թէ աս աղաքիկներէն մէկը գայթակղեցնէ » խօսքը յիշեն : Ասկէ յայտնի է թէ Ա . դարուն մէջ Կղեմէսին և Կորնթացւոց կարգացած Ղուկասու Աւետարանին մէջ յիշեալ խօսքը հիմնականին հետ նոյն էր : Նմանապէս վերոյիշեալ գիրքերուն մէջ բերուած վեհայութիւնները մեր հիմնական Աստուածաշունչին հետ բաղդատելով՝ կրնանք հետևցնել թե այն հեղինակներուն դարձածած Սուրբ Գրոց օրինակներն ու հիմա մեր գործածածները՝ մի և նոյն են , և ան հին դարերէն ի վեր Սուրբ Գրոց մէջ փոփոխութիւն մը եղած չէ :

Աւերոյիշեալները Գրիստոսնէական Եկեղեցւոյն նախնի գաւառց հեղինակներուն միայն մէկ քանին են : Հարիւր ութսուներէն ոչինչ պակաս եկեղեցւոյն մասանադրոց գիրքերուն մէջ , (որոնց գրութիւններն ամբողջ կամ հասակաւոր գեւ կը կենան ,) նոր պատկարանէն վկայութիւններ բերուած են , և աս վկայութիւններն այնչափ բազմաթիւ են , որ իրաւամբ ըսուած է թէ , եթէ նոր պատկարանին բուն գիրքերն Ե . դարէն ետքը կորսուած ըլլային , անոր ամբողջը նոյն դարէն առաջ ծագելու հեղինակ-

ներուն գրութեանցը մէջ բերուած վկայութիւններէն կըր-
նար հաւաքուիլ, Յարթոր Վէնթիխ աս փորձն ըբաւ, և մեր
ըսածը կը հաստատէ :

4. Զորրորդ՝ նախնի դարերուն մէջ Աստուածաշունչին
Երբայցերէնէ և Յաւնարէնէ ուրիշ լիզուներու եզած
Թարգմանութիւններն ալ կը նպատակն ան վերոյիշեալ ա-
պացոյցին՝ զոր հիմնկուան Աստուածաշունչին հարազա-
տութեանը նկատմամբ կ'առնենք հին ձեռագիրներէն և
ան վկայութիւններէն՝ զոր նախնի Քրիստոսնեայ մտանեա-
գիրք իրենց ունեցած Սուրբ Գիրքերէն բերած են : Աս
Թարգմանութիւններն արդէն յառաջագոյն յիշեցինք . զոր
օրինակ՝ Յէշիգոյ կոչուած Ասորերէն Թարգմանութիւնը Բ .
գարուն , կամ՝ ինչպէս սմանք կը կարծեն , Ա . գարուն մէջ .
Խփտերէն Թարգմանութիւնը որ Գ . կամ Դ . գարուն
գործն է . Հայերէն Թարգմանութիւնը Ե . գարուն սիիզ-
բը . Բ . գարուն մէջ հին Լատիններէն Թարգմանութիւնը
զոր Դ . գարուն Հերոնիմոս որբազրեց : Բայր այո այլ և
այլ Թարգմանութիւնները մեր այժմու Աստուածաշունչին
հետ միարան են , բաց 'ի քանի մը թեթեւ տարբերութիւն-
ներէ որոնք կրնային սպրգիլ :

Այոպէս Սուրբ Գրոց մեր հիմնկուան օրինակներն Աս-
տուածաշունչին ամենին հին ապագրութիւններուն , ձեռա-
գիրներուն , նախնի Քրիստոսնեայ մտանեազրաց իրենց գը-
րութիւններուն մէջ Սուրբ Գիրքերէն բերած վկայութիւն-
ներուն , վերջապէս Սուրբ Գրոց ամենէն հին Թարգմա-
նութիւններուն հետ հեռզհեռէ բազդատելով՝ կը գըս-
նենք որ Սուրբ Գիրքերուն երբէք այլայլած ըլլալուն ամե-
նէին ապացոյց չկայ . մանաւանդ թէ , ընդհակառակն , շատ
ապացոյցներ կան թէ մեր հիմնկուան Սուրբ Գիրքերը նախ-
նի Քրիստոսնէից գործածածներուն ճշմարիտ օրինակներն
են : Նախնի Քրիստոսնէից գործածած Սուրբ Գիրքերուն
նոյն իսկ Աւետարանչաց և Աւաքելոց գրուածներուն ճըշ-
մարիտ օրինակներն ըլլալուն համար ալ հետեւեալ ապացոյց-
ներն ունինք : 1 ° Նախնի Քրիստոսնէից մէջան գիրքերն Աւե-
տարանչաց և Աւաքելոց գրութիւններն անուանող և անոնց-
մէ վկայութիւններ բերող հեղինակներէն սմանք՝ Աւաքելոց

80 ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ

բուն ընկերներն էին , և հարկու անձամբ տեղեակ էին թէ ան գիրքերը՝ զորոնք Առաքելոց անուամբը կը կոչէին , բուն Առաքելոց գրութիւններն են թէ ոչ : (Յես երես 13 և 14 :) 2^o . Ուրիշ ապացոյց մ' ալ սա է որ քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ՝ յառուկ խնդիր եղաւ թէ Ո՞ր գիրքերն Առաքելոց հարազատ գրութիւններն են : Աս խնդիրն ան տանն քննուելով՝ բուն Առաքելոց գրութիւնները սկսներէն որոշուեցան . և այն գիրքերը՝ որ իբրև Առաքելոց գրութիւնները սուսգուեցան , նոյն գիրքերն են զորոնք մինք հիմա ունինք : (Յես երես 15 և 16 :) Ուստի բարձր վերայիշեալ ապացոյցներուն նայելով՝ տարակոյտ չկայ որ , մասաւանգ Նոր Կտակարանին գիրքերուն համար , կըրնանք հետեւընել թէ մեր հիմակուան օրինակներն Ա . դարուն մէջ հրատարակուած Աւետարանչաց և Առաքելոց գրութիւններուն ճշմարիտ օրինակներն են :

Նոր Կտակարանին գիրքերուն հարազատութեանը համար ինչ ապացոյց որ ունինք՝ նոյն ապացոյցն ունինք նաև մեր հիմա ունեցած Հին Կտակարանին գիրքերուն հարազատութեանը համար . այսինքն՝ հին ապագրեալ օրինակներուն , ձեռագիրներուն , հին քրիստոնէայ մտանադիրներէն շատերուն ան գիրքերէն բերած վկայութիւններուն և հին թարգմանութեանց ապացոյցը : Հին Կտակարանին վերաբերեալ ապացոյցը՝ ոչ միայն քրիստոնէութեան ժամանակէն , այլ նաև քրիստոնէական թուականէն քանի մը դար առաջուընէ : Երես 8 յիշուած հին թարգմաններէն ապացոյց ունինք : Ասոնցմէ մէկը՝ որ Յովնաթանայ Թարգմանը կը կոչուուի , քրիստոնէական թուականին սկզբնաւորութեան տակները գրուած կը կարծուի . իսկ Օնքելոսին Թարգմանին համար կ'ըսուի թէ քրիստոնէ 60 տարի առաջ գրուած է՝ Այս Թարգմանը կ'ըսուած գիրքերը որոնք Սուրբ Գրոց այլ և այլ մասերուն երբոյեցեքէն բնագրէն Քաղղէաբէնի եղած մեկնարանութիւններ են , եւ ընդ ամենը ասան են , ըստ մեծի մասին բառական բացատրութիւններ քլլալով՝ Սուրբ Գրոց բնագրին մէջ պարունակուած նիւթը որոշելու մասին քիչ շատ արժէք ունին , և Հին Կտակարանին գիրքերուն մէջ փոփոխութիւն եղած լայլուն ալ կը հաստատեն : Ա

Քրիստոս երէք գար առաջ Հին Կապիարանին Եբրայեցիներէնէ Յունարէն Եթեանոսից Թարգմանութեան ապացոյցն ունինք : (Տես երես 12 :) Աս Թարգմանութեան Թերուութեանցը վրայ արգէն հոն խօսեցանք . բայց Աստուածաշունչին հիմա մեր ձեռքը գանուած օրինակներուն հարազատութեանը նկատմամբ այն Թարգմանութեան տուած վեկայութեան զօրութիւնը՝ յիշեալ Թեթև Թերութիւններով չի նուազիք :

Հին Կապիարանին գիրքերուն Խորանին մէջ , յետոյ ալ Յանարին մէջ պահուելուն վրայ արգէն խօսեցանք , (երես 11 ,) և Յովսէպոսին վկայութիւնը բերինք (երես 12) Թէ ոչ որ այն Սրբազան Գիրքերուն վրայ երբէք բան աւելցընելու անոնցմէ բան պահսեցընելու կամ անոնց մէջ փոփոխութիւն մը ընելու յանդգնած է : Ասոնցմէ զատ ունինք նաև մեր Ձերոջը և անոր աշակերտացը վկայութիւնը , օրոնք Մովսէսի գիրքերէն , Սաղմաններէն և Մարգարէից գիրքերէն , Իբրև հարազատ գիրքերէ , ստեպ պատմութիւններ և վկայութիւններ մէջ բերած են : Անոնք երբէք ըսած չեն Թէ այն գիրքերն իրենց գրուելէն 'ի վեր փոփոխութիւն մը կրած են . ինչպէս որ անշուշտ պիտի ըսէին , եթէ անոնց մէջ կարևոր փոփոխութիւն մը եղած ըլլար : Քրիստոսի Ժամանակէն առաջ Հին Կապիարանին ամենէն վաղեմի գիրքերը , այսինքն՝ Մովսէսի Հնգամտաեանը , Թէ Հրէից և Թէ Սամարացոց ձեռքն էին : Սամարացիք ունին տակաւին շատ հին ձեռագրիներ՝ որոնց համար կը պնդեն Թէ Ռաբբակոս աստե՛ն Յուդայի և Քենիտափնի ցեղերէն բաժնուող Իսրայէլի միւս տասը ցեղերուն մէջ գտնուած բուն Մովսէսի գիրքերէն օրինակուած են : Սամարացոց աս օրինակներուն շրէից ձեռքով մեզի հասած օրինակաց հետեայէս համաձայն ըլլալը՝ կը ցուցնէ Թէ այն գիրքերուն մէջ նշանաւոր փոփոխութիւն մը եղած չէ : Հրեայք և Սամարացիք իբարու անհաշտ թշնամի էին . ուստի՝ եթէ երկու կողման մէկը փոփոխութիւն մը ըրած ըլլար , միւս կողմն անշուշտ նոյնը երևան հանած պիտի ըլլար : Քրիստոսի ատենէն 'ի վեր Հին Կապիարանին բոլոր գիրքերը Թէ Քրիստոսնէից և Թէ Հրէից ձեռքն են : Ասանք ալ իրարու նա-

32 ՍՈՒՐԻ ԳՐՈՑ ՀԱՐԱՋԱՏՈՒԹԵԱՆ

խանձընդդէմ ըլլալով՝ անտարակոյտ պիտի խայտառակէին, եթէ երկու կողման մէկը նոյն գիրքերուն մէջ փոփոխութիւն մը ընելու ձեռք զարկած ըլլար : Ուստի՝ ինչպէս որ Նոր Կտակարանին, նոյնպէս Հին Կտակարանին համար կրնանք հետևցնել թէ այն գիրքերուն մեր հիմակուան օրինակները՝ բուն անոնց հեղինակներուն գրութեանցը հարազատ օրինակներն են :

Աս ապացոյցներէն սմանք աւելի գոհացուցիչ պիտի երևին, եթէ զանոնք բազդատենք ան ապացոյցներուն հետ՝ սրովք ուրիշ հին Յոյն և Հռոմայեցի մատենագրաց գործքերուն այժմու օրինակներն իբր հարազատ ընդունուած են : Եթէ այն մատենագիրներէն մէկուն 10 կամ 20 հին ձեռագիրները գտնուի, բաւական և շատ ալ կը համարուի : Վիրգիլիոսի գործքերուն՝ որ Յզոստոս Կայսեր Ժամանակին Լատին բանաստեղծներէն մէկն է, մէկ ձեռագիր օրինակը կայ, որուն հետևութիւնը Դ. դարուն կը հաշուուի : Բայց ուրիշ Յոյն և Լատին հեղինակաց ձեռագիրներուն մեծ մասը թ. կամ թԵ. դարերէն աւելի հին չէ : Ուրիշ Յոյն հեղինակի մը՝ որ Քրիստոսէ 450 տարի առաջ էր, այսինքն՝ Հերոդոտոսի գործերէն 15 ձեռագիր կայ, բայց ամենէն հինը թ. դարուն կը վերաբերի :

Սակայն Նոր Կտակարանին Յունարէն ձեռագիրներուն թիւը՝ ինչպէս ըսինք, 600 է, և Եբրայեցերէն Հին Կրտակարանինը՝ 1300, որոնցմէ սմանց հետևութիւնը մինչև Դ. դար կը հասնի. այնպէս որ Աստուածաշունչ Գիրքերուն հարազատութեանը նկատմամբ ձեռագրաց թուէն և հետևութենէն հանուած ապացոյցը շատ աւելի զօրաւոր է՝ քան թէ ուրիշ հին գրոց հարազատութեանը համար եղած ապացոյցները :

Աս ապացոյցներուն զօրութեանը վրայ շատ ճիշդ գազափար մը ունենալու համար՝ ուրիշ քանի մը բան ալ միտք բերել պէտք է : Ձեռագիրներն՝ անթիւ, ամէն դարու մէջ գրուած, և շատերը խիտ հին ըլլալով՝ դարերով պահուեցան աշխարհիս իրարմէ հեռու մասերուն մէջ, Քրիստոսնէից իրարու հակառակ աղանդներուն պաշտպանութեանը տակ . որոնք, ինչպէս որ Հրէից ու Քրիստոս

նէից նկատմամբ ըսինք , իբարու խիստ թշնամի ըլլալ նուն պատճառաւ շուտով կը խայտառակէին , եթէ հակառակօրք կօղմ մը այն գրութեանց մէջ որ և իցէ փոփոխութիւն մը ընելու յանգգներ : Այն ձեռագիրներն ունեցողները զանոնք (մեծագին և պատուական կը համարէին , և տնոնց մէջ պարունակուած նշմարտութեանց ազդեցութեանը տակ ապրել կը գաւանէին : Զանոնք օրինակողներն՝ տնոնց վերջին ստաիճան յարգանքը կը գոռչանային՝ ամէն մէկ գրքին իւրաքանչիւր գիրը համարելով , և օրէնքին նշանախեցներն անգամ արձանագրելով : Ուրեմն՝ ո՛չ ապաքէն մեր ձեռքն եղած Աստուածաշունչին հարազատութեանը նշանաւոր և յայանի ապացոյց է որ , անիկա Եւրոպէոյ և երկրիս այլ և այլ մասանց գըրատուներուն մէջ գանուած Սուրբ Գրոց հին օրինակներուն հետ բազդատուելով քննուելէ , Երբորդ գարէն մինչեւ Ցասնելվեցերսրգ դար գրուած , ամէն երկրի և այլ և այլ ազգաց մէջ պահուած ձեռագիրներու հետ դէմ առ դէմ բերուելէ , թէ Հրէից և թէ Գրիստոսնէից մէջ եղած և մինչեւ հիմա մնացած բոլոր հին թարգմանութիւններուն հետ բազդատուելէ , բոլոր Հարց միկնութիւններն ալ կրկին և կրկին հետազոտուելէն ետքը , անոր մէջ տակաւին գլխաւոր իմաստի մը վերաբերեալ էական տարբերութիւն մը չի գտնուիր :

Մեր ընթերցողներուն սւղիղ գաղափար մը տալու համար թէ մեր Աստուածաշունչը նախնի դարերուն Աստուածաշունչէն եւրոպէոս տարբեր չէ՛ , նոր Կատկարանին մէջ գտնուած տարբերութիւններէն օմնաբ օրտի յիշենք : Օրինակի համար , ՀՌՈՎՄԱՅԵՑ ԻՈՅ Թուղթին մէջ՝ որ 488 համար ունի , միայն չորս տեղ կայ , ուր Կրիստոսոս անուսով ձեռագիրներու երեւելի քննչի մը գտած տարբերութիւններն իմաստի կը վերաբերին :

Գլուխ Է . համար 6 . փոխանակ " Բրուտ անոր որով բռնուած էինք" , քանի մը ձեռագիրներ ունին , " ան Բրուտ ըլլալով որով բռնուած էինք" . և աս տարբերութիւնը բնագրին մէջ օ և է գիրերուն տարբերութենէն է . Կրիստոսոս առաջին ընթերցուածը հաւանականագոյն կը համարի :

Գլուխ ԺԱ . համար 6 . Կրիստոսի « Իսկ թէ որ գործքերէն է , ալ շնորհք չէ . ապա թէ ոչ գործք ալ գործ չըլլար » կտորն՝ իր աւելի վստահութեան արժանի համարած ձեռագիրներուն մէջ չգտնելուն համար գուրս կը ձգէ :

Գլուխ ԺԲ . համար 11՝ « Տէրոջը » բառին տեղ « Ժամանակին » կը դնէ . այսինքն Յունարէն Κυρίω բառին տեղ Καίρω :

Գլուխ ԺԶ . համար 5՝ « Ասիայէն առջի պտուղ մըն է » խօսքին տեղ՝ Կրիստոսի « Աքայիայէն առջի պտուղ մըն է » կը կարգայ :

Իմաստի վերաբերեալ սրբագրութիւնները միայն ասոնք են . և ասոնք ալ կարեւոր տարբերութիւններ չեն ; Ինք աս սրբագրութիւններն ընելու համար՝ արդէն յիշուած ձեռագիրներէն զատ , նաեւ ուրիշ 110 ձեռագիր , և Մատթէիին Աթոս լեռան վանքը գտած և իրարու հետ բազմաթիւ 30 ձեռագիրներն ալ քննեց :

ԳԱՂԱՏԱՑԻՈՑ Թղթոյն մէջ միայն երեք գլխաւոր տարբերութիւն կայ :

Գլուխ Դ . համար 17 Յու բառին տեղ Կրիստոսի « Ի՜նչ կը կարգայ : Աս ալ բնագրին մէջ գրի մը տարբերութենէն յառաջ եկած է :

Գլուխ Դ . 26 համարին մէջէն « ամենուն » բառը վերջացած է :

Գլուխ Ե . 19 համարին մէջէն ալ « շնութիւն » բառը գուրս ձգած է :

Նոր Կտակարանին 7959 համարներուն մէջ՝ միայն տասը կամ ասոններհաւ երեւելի տարբեր ընթերցուածներ կան . ասոնք ալ Սուրբ Գրոց վարդապետութիւնները չեն այլայլեր : քանզի ուրիշ համարներու մէջ նոյն վարդապետութիւնները բաւական պարզուած են :

Կրիստոսի ընդունած , բայց և այնպէս կարեւոր չհամարուած տարբեր ընթերցուածները՝ հետեւեալներն են :

Գործոց Ը . գլխոյն մէջէն 37 համարը կը վերջանէ :

Գործոց Գլուխ Թ . 5 համարին վերջին մտքը նոյնպէս կը վերջանէ :

Գործոց Գլուխ Ի . 28 համարին մէջ "Աստուծոյ եկեղեցին" խօսքին տեղ՝ կը կարդայ "Յէրոջը եկեղեցին" : Աս փոփոխութիւնն ալ գրի մը տարբերութենէն կատեալ կայ . այսինքն՝ Յ ի տեղ Կ գրուած ըլլալէն :

Փիլիսո . Գլուխ Գ . 18 համարին մէջ "տնօժ" բառին տեղ, որ Կրիստոսոսին համեմատ է , ուրիշ ընթերցուած մը "Քրիստոսոսժ" բառն ունի :

Ա Յիմ . Գլուխ Գ . 16 համարին մէջ 'Ափրասօ' բառին տեղ՝ Կրիստոսոսին ընթերցուածն ունի 'օր' : Աս տարբերութիւնն ալ ինչպէս կը կարծուի , ծագած է բառին երկու գրերէն մէկուսն մէջ՝ նշանի մը զանցառութեանէն . այսինքն Յ ի տեղ Օ գրուելէն :

Յովհաննու Առաջին Թղթոյն Գլուխ Ե . 7, 8 համարներուն մէջ Կրիստոսոս՝ "երկինքի մէջ" բառերէն փնչի "երկրի վրայ" եղած խօսքը հանած է :

Յուդայի Թուղթին 4 . համարին մէջ "Աստուծոյ" բառը զանց կ'ընէ :

Յայտնութեան Գլուխ Ը . 13 համարին մէջ "արծիւի" բառին տեղ ըստ Կրիստոսոսի՝ ուրիշ ընթերցուած ունի "հրեշտակի" բառը :

Շրջ և Հան անուններով ուրիշ երեւելի քննիչներ , բաց ՚ի Գործ . Ի . 28 . և Ա Յիմ . Գ . 16 էն , բոլոր աս տարբերութիւններն ընդունած են : Այն երկու տեղերուն վըրայ , ինչպէս նաեւ ուրիշ մանր և աննշան տարբերութեանց մէջ , յիշեալ երկու մատենագիրները Կրիստոսոսին աւելի "Ընդունուած բնագիր" կոչուած (Յեա երես 22) Սուրբ Գրոց օրինակին հետ կը համաձայնին :

Կրիստոսոսի ընթերցուածներուն շատը , Թէեւ Աստուածաբանական կարեւորութիւն չունին , յիշեալ "Ընդունուած բնագրին" մտած տեղերը կամ գծաւորութիւնները կը վերցնեն :

Հին Ատակարանին մէջ 1314 տարբեր ընթերցուած նըշանակուած է : Ասոնցմէ 147 ըփայն իմաստի կը վերաբերին , բայց և ոչ մէկը կրնայ վարդապետութեան մասին կարեւոր համարուիլ : Ընդհանրապէս Թուականի մը կը վերաբերին , կամ խօսքն աւելի համեմատ կամ աւելի ամ

բազմ ընող բառեր են : Աս տարբերութեանց թիւը որչափ շատ ալ երեւի , ուրիշ հին գրոց ձեռագիրներէն մէջ տեսնուած տարբերութիւններուն նայելով շատ քիչ է : Հին Հռոմայեցի մատենագրին Տերենտիսի գրուածներուն մէջ՝ որոնք միայն վեց կտոր են , 30,000 տարբեր ընթերցուածներ կան , թէեւ այն գրուածները նոր պատկարանին չափ յաճախ օրինակուած չեն : Ուստի շատ իւրաւացի կրնանք համարել անցած դարուն մէջ ծագկող անուանի Գերմանացի քննչին Պենկելի խօսքը , որ այս մասնաւոր կէտերը մեծ աշխատութեամբ հետազօտելէ ետքը՝ իր Տիւս անուն աշակերտին այսպէս գրեց . « Սուրբ Գրոց հացն անվրդով կեր . ճիշդ այնպէս՝ ինչպէս որ է . եթէ տեղ տեղ գտնես աւազի հատ մը որ կրնայ երկանաքարէն սորդած ըլլալ , բնաւ մի խռովիր : Ես ընդհակառակն կը զարմանամ թէ անոնք այսչափ ստեղծ իրարմէ օրինակուելով , ինչպէս անոնց մէջ աւելի բազմութիւ տարբերութիւններ ծագած չեն » : Եթէ Սուրբ Գիրքերը՝ որ յաճախ օրինակուած են , ըստրո վին առանց տարբերութեան ըլլային , այնպիսի մեծ հրաշք մը պիտի ըլլար , որ ան գիրքերուն հաւատարմ համար՝ բնաւ փաստի կարօտ պիտի չըլլային :

ԳԼ Ե

Սուրբ Գրոց Վաներոյնուհիները :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ այժմու օրինակներուն հարադատութիւնը, այսինքն՝ անոնց Սուրբ Գրոց բնագրէն փոխուած կամ տարբեր չըլլալը, նախընթաց գլխոյն մէջ այլևայլ փաստերով ապացուցանելէ ետև՝ հիմա կու գանք անոնց վաւերականութեանը խնդրոյն. այսինքն՝ ջուրընելու և հաստատելու թէ Սուրբ Գրոց մէջ պատմուածները հաւատարմութեան արժանի են :

1. Նախ՝ Նոր Կտակարանին վաւերականութիւնն ապացուցանելու սկսելով կ'ըսենք թէ Անոր պատմութիւնները հաւատարմութեան արժանի ըլլալուն 'ի նպատակող առաջին փաստը սա է, որ անոր Հեղինակներն իրենց պատմածներուն կամ անձամբ ականատես էին, կամ՝ անոնց ճշմարտութիւնը ստուգելու աղէկ պատեհութիւն ունէին : Աս տեսակ պատմիչները, այսինքն՝ ականատես եղողները, միշտ ճշմարտագատում կամ արժանահաւատ համարուած են, եթէ անոնց իրօք ճշմարտախօս ըլլալուն տարակուսելու յատուկ պատճառ մը չկայ : Ընդհակառակն՝ եթէ մէկը կը պատմէ այնպիսի բան մը՝ որուն ինք ականատես չէր, կամ անիկա ստուգելու աղէկ պատեհութիւն չունէր, և, մանաւանդ, եթէ ճշմարտախօս ըլլալուն տարակոյս կայ, այնպիսոյն ըստծները վաւերական, ուստի և արժանահաւատ չեն կրնար համարուիլ : Նոր Կտակարանին հեղինակներուն ականատես վկաներ ըլլալը կը հասկըցուի բուն անոնց խօսքերէն : (Տես՝ Ղ. 1. Ա. 1—4 : Յ. 15. ԻԱ. 24 : Բ. Պիտր. Ա. 18 : Ա. Կորնթ. ԺԱ. 2.) Ասիկա կը հաստատուի նաև անոնց գրութեանց կերպէն. անոնք իրենց պատմածներն ընդհանուր կերպով, իբրև իրենց անծանօթ կամ ուրիշներէն միայն լուած բաներ, չեն պատմեր. այլ ընդհակառակն, տեղւոյ, ժամանակի և այլևայլ պարագաներու վերաբերեալ մանր դէպքեր կը յիշեն : Եթէ անոք կեղծ պատմութիւն շինած ըլլային, այնպիսի մանր դէպքերը մէջ բերելու զգոյշ պիտի ըլլային, ապա թէ ոչ

սխալներ և հակասութիւններ ըրած կ'ըլլային՝ որոնք յետոյ յայտնուելով, պատմութեան կեղծ կամ շինծու ըլլալն ալ յայտնի եղած կ'ըլլար, իրենք ալ խայտառակուած կ'ըլլային : Արդ՝ Նոր Կտակարանին գրուածներուն մէջ այնպիսի պատմական սխալ կամ հակասութիւն չկայ . մանաւանդ, ընդ հակառակն, պատմուած բաները փոփոխակի իրար կը հաստատեն և կը լուսաւորեն : Զոր օրինակ, Յովհ. Զ. 5 . կը պատմուի թէ Քրիստոս Փիլիպպոսին հարցուց թէ անօթի բազմութեանը համար "Ո՞ւսկից հաց ծախու առնենք որ ատոնք ուտեն", և թէ Սիմոն Պետրոսին եղբայրն Անդրէաս ալ այն խօսակցութեան մասնակից եղաւ . բայց ան պատմութեան մէջ ցուցուած չէ թէ ինչու համար Քրիստոս այն հարցումը, ոչ թէ ուրիշներուն, այլ յիշեալ աշակերտներուն ըրաւ : Բայց Յովհ. Ա. 41 էն կը սորվինք որ այն երեք աշակերտները, Փիլիպպոս, Պետրոս և Անդրէաս, Բեթսայիդա քաղաքէն էին՝ որ բազմութեանը ժողովուած տեղւոյն շատ մօտ էր . ուստի և շատ բնական էր որ Յէրն մեր միւս աշակերտներէն աւելի անոնց հարցունէր թէ ան տեղերը հաց ո՞ւր կրնայ գտնուիլ :

Գարձեալ՝ Գործոց ԺԳ . կը պատմուի թէ Պողոս և Բառնաբառ որոշուեցան որ Կիպրոս և ուրիշ տեղեր քարոզելու երթան . բայց պատճառը նշանակուած չէ թէ ինչու համար Բառնաբառ Պողոսի ընկեր կ'ընարուի . սակայն Գործոց Գ. 36 էն կը տեղեկանանք որ Բառնաբառ Կիպրոսցի էր, աւստի և Պողոսի հետ այն կողմերն երթալու յարմար էր : (Բաղդատե՝ Նաև Գործ. ԺԵ. 37, Կողոս. Գ. 10 ին հետ .) և հաւանականաբար մասնաւորապէս աս պատճառի՞ն համար Բառնաբառ Պողոսին գործակից եղաւ : Եթէ մեր աս գործին համառօտութիւնը ներէր, ասոնց նման ուրիշ շատ օրինակներ կրնայինք բերել :

Նոր Կտակարանին այլեայլ տեղերու՝ այսպէս իրար բռնեկուն և իրար լուսաւորելուն վերայիշեալ օրինակներն արդարև դոյզն բաներու կը վերաբերին, բայց և այնպէս պատմութեանը նշմարութեանը զօրաւոր ապացոյց են . քանզի, եթէ այն մասնատիրներն իրենց պատմութիւնը կեղ-

ծօրէն շինած ըլլային , չէին կրնար երբէք այնպէս բրած ըլլալ որ պատմութիւններուն այլևայլ մասերը դոյզն բաներու մէջ անգամ այնպէս իրարու յարմար գային և իրար լուսաւորէին :

Շ. Նոր Կտակարանին պատմութեանց ոճն անոնց վաւերականութիւնը կը հաստատէ : Ան ոճը ճշմարտախօս պատմիչներու ոճն է : Քանզի միշտ և բալբոզիւն բնական , պարզ , ուստի և շատ համոզիչ սճով մը կը գրեն : Իրաւ է որ անոնք շարունակ չեն կրկներ թէ իրենց ըսածները ճշմարիտ են . եթէ այնպէս բրած ըլլային , կասկածելու պատճառ մը ունեցած կ'ըլլայինք : Ընդ հակառակն՝ իրենց ըսածներուն ճշմարտութեանը վրայ ներքին համոզում ունեցողի պէս կը գրեն . անոր համար ալ կ'ենթագրեն թէ կարգացողներն ան պատմութիւններուն հարկաւ պիտի հաւատան : Հոս սա ալ պէտք է յիշել թէ Նոր Կտակարանին զիրքերուն հեղինակներն այնպիսի պատմութիւններ կեղծելու համար անձնասիրական շարժառիթներ ունեցած չեն կրնար ըլլալ : Այն պատմութիւններէն անոնք բան մը չըսէին զատ , թէ՛ անոնք և թէ անոնց վկայութեամբ յիշեալ պատմութիւններուն հաւատացողներն , իրենց պաշտպանած փառտին պատճառաւ , իրենց անձերը մեծամեծ հալածանաց , բանտարկութեան , նաև մահուան վտանգի մէջ կը դնէին : Եւ արդէն 'ի սկզբան անոնցմէ սմանք , Յիսուս Քրիստոսի և անոր վարդապետութեանը նկատմամբ Նոր Կտակարանին մէջ պատմուած բաներուն ճշմարտութեանը՝ անյոզքողք կերպով վկայելուն համար , մահու մասնուեցան : Ո՞վ կրնայ հաւատալ թէ այն հեղինակներն իրենց պատմած բաներուն համար մահուչափ վկայ ըլլալու պիտի յօժարէին , եթէ այն պատմութիւններուն կարևոր ճշմարտութիւններ ըլլալուն անձամբ ծանօթ եղած չըլլային : Եթէ ըսուելու ըլլայ՝ թէ Անոնք մսլեռանդ մարդիկ ըլլալով , իրենց ըսածները ճշմարիտ կարծեցընելու համար մեռնիլ յանձն առին , այս առարկութեան պատասխան կուտանք թէ Անոնց գրուածներուն հանգամանքը կը ցուցնէ թէ անոնք սչ թէ մսլեռանդ , այլ զգօն և հանդարտաբարոյ մարդիկ էին : Արդարև ուրեալ չէին , բայց իրենց վկայած դէպքերը դէ-

տելու և ընտրելու համար բաւական հանձար և դատողութիւն ունէին : Անոնց գրուածներուն մէջ մտքի զրգուութեան և խաբուած կամ հրապուրուած ըլլալու դոյզն նշան մ'անգամ չինչմարուիր . մտեւանդ մարդոց գրութիւններուն մէջ, ընդ հակառակն, միշտ այն նշանները յայտնի կը տեսնուին :

Որչափ որ այն ժամանակի Եկեղեցական պատմութենէն կրնայ ստուգուիլ, գրեթէ բոլոր Առաքեալք իրենց տուած վկայութիւնք իրենց արեամբը կնքեցին : Մատթէոս՝ Եթովպիոյ մէջ (սրով) մարտիրոսութիւն կրեց : Մարկոս՝ Աղեքսանդրիոյ փողոցներուն մէջ գեանաքարչ տարուելով մեռաւ : Ղուկաս՝ Յունաստանի մէջ ձիթենիէ մը կախուեցաւ : Յովհաննէս՝ եռացեալ կաթսայի մէջ նետուեցաւ : Բայց չմտնելով՝ Պատմոս կղզին աքորուեցաւ : Պետրոս՝ Հռոմի մէջ գլխովայր խաչուեցաւ : Յակոբոս՝ Երուսաղէմի մէջ գլխատուեցաւ : Յակոբոս կրտսեր՝ Յաճարին աշտարակէն վար նետուեցաւ, սւ վարը, մինչև սր մեռաւ, ծեծուեցաւ : Փիլիպպոս՝ Փռիւզիոյ մէջ սիւնէ մը կախուեցաւ : Բարթողիմէոս՝ ողջ ողջ քերթուեցաւ : Անդրէաս՝ խաչի մը կապուեցաւ, որուն վրայէն իր հալածիչներուն կը քարոզէր, մինչև որ մեռաւ : Թովմաս՝ Հնդկաստան Գորոմանտէլի մէջ աշտէիւ խոցուեցաւ : Յուդա՝ նեաահար սպանուեցաւ : Մատաթիա՝ նախ քարկոծուեցաւ, և ապա գլխատուեցաւ : Բառնարաս՝ Թեսաղոնիկէի մէջ Հըրեաներէն քարկոծուելով մեռաւ : Պողոս՝ "շատ անգամ մահերու մէջ" գտնուելէն ետքը՝ Ներոն Վայսեր հրամանաւը Հռոմի մէջ գլխատուեցաւ : Աշխարհ կրնա՞յ անկեղծութեան և հաւատարմութեան ուրիշ այսպիսի օրինակներ ցուցնել :

Արդարև եթէ բոլոր այս վկայութիւնները կամ ապացոյցները մերժելու ըլլանք, Նոր Կտակարանին մէջ պատմուած հրաշքներէն շատ աւելի մեծ հրաշք մը ընդունիլ հարկ կ'ըլլայ : Եթէ քրիստոս Աստուծոյ չէր, ուրեմն Հրեայ գեղացի մըն էր, որ աշխարհիս կրօնքը փոխելու ելլելով՝ թէ հին մարգարէութիւններն իր անձին վրայ կատարեց, և թէ իր ազգին աւանդութեամբ սորվեցուցած բարոյա-

կանէն տարբեր, հեթանոսական փիլիսոփայութեան կանոններէն ալ գերազանց բարոյական մը ջցուց . արտաքոյ կարգի համբերութեամբ սաստիկ տանջանքներու գիմացաւ . իր առաջուց պատմած հրաշալի յարուածիւնը հաստատելու համար իրեն հետևողներն ալ համագեց որ նոյնպիսի զրկանաց, նա մանաւանդ սոսկալի մահուան համբերեն : Եւ առ հետևողները՝ որ «տգէտ մարդիկ» էին . յետոյ սկսան ամէն կողմ՝ երթալ ու նորալուր և բարձր վարդապետութիւններ քարոզել . Յունաց և Հռոմայեցւոց քաղաքներուն մէջ մարդիկ համոզել որ իրենց կուսքերը մէկդի ընեն, իրենց հայրերուն կրօնքէն հրաժարին, իրենց փիլիսոփայական հրահանգները մերժեն, և անոնց տեղ, իրրև երկնառաք վարդապետ, ընդունին ստորին վիճակի . Հրեայ մը որ խայտառակ մահուամբ պատժուեցաւ : Բոլոր ասոնք կատարուած տեսնելէն ետքը՝ Ասոնք ընողները խաբեբայ մարդիկ էին ըսելը, ինչպէս ըսինք, բոլոր նոր Կտակարանին մէջ պարունակուած հրաշքներէն աւելի մեծ հրաշք մը ընդունիլ է :

3. Նոր Կտակարանին գիրքերուն պատմութեանցը վաւերականութիւնը հաստատող երրորդ փաստը սա է՝ թէ Այն գիրքերը նոյն իսկ պատմուած դէպքերէն քիչ ժաւմանակ ետքը բոլոր աշխարհի հրատարակուեցան . ուստի և ան ատենուան մարդոց շատ դիւրին էր ստուգել թէ ո՛վ էն զանոնք գրողները, գրուած բաներն ալ ճշմարիտ են թէ ոչ : Արդ՝ շատ յայտնի է որ յիշեալ գիրքերը բուն ան ժամանակը և ան ժամանակէն ետքն ալ միշտ, իրրև Քրիստոսի աշակերտաց գրութիւնները և իրրև եղած բաներու ճշմարիտ պատմութիւններն, ընդունուեցան : Առաջին գարսուն մէջ Քրիստոնէութեան այնպէս արագ հաստատութիւն գտնելն ու տարածուիլն՝ ասիկա կ'ապացուցանէ : Եթէ Նոր Կտակարանին մէջ պատմուածները ճշմարիտ եղած և իրրև այնպիսի ճանչցուած կամ ընդունուած չըլլային, Քրիստոնէութիւնն, իրեն դէմ ելլող այնչափ հակառակութեանց մէջ այն ընդունելութիւնն ու հաստատութիւնը գտած չէր ըլլար : Անիկա ոչ աշխար-

42 ԳՐԻՍՅՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՇՈՒՑ ՑԱՐԱԾՅՈՒԼԸ

Հական բազուկ մը, ոչ ալ իրեն հետևողներուն կողմանէ հարստութիւն կամ բարձր գիտութիւն մը իրեն նպաստ ունեցաւ. ընդհակառակն՝ ամէն քաղաքական իշխանութիւն, աշխարհիս բոլոր մեծութիւնն ու իմաստութիւնը, քրիստոնէութեան դէմ ելաւ: Եթէ անոր մէջ ստութիւն տեսնուած ըլլար, փոխանակ այնպէս մեծ յառաջադիմութիւն ընելու, այնչափ ընդունելութիւն գտնելու և առ բաժուելու, խոկոյն կործանած պիտի ըլլար: Շատ յայանի է թէ ամէն տեղ ուր որ քրիստոնէութիւնը քարոզուեցաւ՝ մարդիկ զօրաւոր աւիթներ սկսեցան քրիստոնէութեան, կամ մանաւանդ՝ Նոր Ատակարանին մէջ պատմուած գեղքերուն ճշմարտութիւնը շատ խիստ քննութեան տակ ձգելու. ըստ որում քրիստոնէութիւնն ընդունելը նոյն գեղքերուն ճշմարտութենէն կախում ունէր: Գիտե՞ք որ քրիստոնէութեան պատճառաւ, նոյն թիկ անոր սկզբնաւորութեան ատենները, հազարաւոր ընտանեաց մէջ գժտութիւններ և բաժանումներ կ'ըլլային. մէկ ընտանիքի մէջ սմանք քրիստոնէութիւնը իբրև ճշմարտութիւն կ'ընդունէին, սմանք կը մերժէին: Հարք՝ սրգիներուն, սրգիք՝ հայրերուն, մարք՝ ազգիկներուն, ազգիկներ՝ մայրերուն: Նոյն պատճառաւ հակառակ ելած էին: Արդ՝ եթէ քրիստոնէութեան թշնամիները կարող ըլլային իրենց քրիստոնեայ եզոզ ազգականներուն և բարեկամներուն ցուցնել թէ սուտ են Նոր Ատակարանին պատմութիւնները, որոնց վրայ քրիստոնեայ եզոզներուն հաւատքը կը կայանար, միթէ նոյնը չէի՞ն ընել, որով քրիստոնէութեան յառաջադիմութիւնը կրնային դիւրաւ խափանել: Ուրեմն տեսնելով թէ քրիստոնէութեան թըշնամիներն աս բանը չըրին, մանաւանդ այնպիսի ժամանակ մը որ, եթէ երբէք կարելի ըլլար, անոնց շատ դիւրին էր անիկայ ընել, զօրաւոր ապացոյց կ'ունենանք թէ այն թշնամիները քրիստոնեայ եզոզներուն հաւատքը ջրելու համար Նոր Ատակարանին գեղքերուն ստութեանը չէին փաստ ընել, քանզի գիտէին թէ անոնք ճշմարտիւ եզած բաներ են: Մինք գիտե՞ք թէ քրիստոնէութեան սկզբնա-

ւորութեան ասեմն անոր թշնամիներն անոր դէմ ի՛նչ աւարկութիւններ մէջ կը բերէին : Կելլոս՝ որ երկրորդ գարուն սկիզբը ծաղկեցաւ, ֆրիստոնէութեան դէմ գիրք մը գրեց, որուն մէջ ֆրիստոնէաները կը ծագրէ՛ ըսելով թէ՛ անոնց պաշտած Աստուածը Խաչի զրայ մեռած է . և ֆրիստոսի կենացը վրայ շատ դեպքեր մէջ կը բերէ ճիշդ այնպէս՝ ինչպէս որ Աւետարաններուն մէջ յիշուած են, առանց ակնարկութիւն մը ընելու թէ ան պատմութիւնները սուտ կամ սխալ են : Յայտնի է թէ ինք Նոր Կտակարանին մէջ յիշուած ֆրիստոսի սքանչելագործութիւններուն պատմութիւնը ճշմարիտ կը համարի : Երկայն կը ջանայ ցուցնել թէ Յիսուս զանոնք մոգական կամ կախարդական զօրութեամբ կը գործէր, և կ'ըսէ թէ ֆրիստոս ան կախարդութիւնը Եգիպտոս սորվեցաւ : Գորփիւր՝ որ երրորդ գարուն մէջ ծաղկած հեղինակ մըն է, և Ուրացոյզ կոչուած Յուլիանոս Կայսրը՝ որ չորրորդ գարուն մէջ էր, գրեթէ միևնոյն աւարկութիւնները մէջ կը բերեն : Ասոնք ալ Նոր Կտակարանին պատմութեանցը ճշմարտութիւնը կ'ընդունին, միայն ֆրիստոսի՝ Աստուծոյ Որդի եմ՝ ըսելը, և յիշեալ պատմութիւններէն ֆրիստոնէից առած սերիշ վարդապետութիւնները ջրելու կ'աշխատին : Եթէ բուն իսկ պատմութիւններուն ճշմարտութենէն կտակածելու բաւական պատճառներ եղած ըլլային, անտարակոյս ֆրիստոնէութեան աս գիտուն և անհաշտ թշնամիները զանոնք փնտուած և բոլոր աշխարհի հրատարակած պիտի ըլլային : Անոնց այսպէս ըրած ըլլալը՝ հզօր ապացոյց է թէ անոնք Նոր Կտակարանին պատմութիւններուն դէմ կտակածելու պատճառներ չգտան : Աւերոյիշեալ ապացոյցներէն ՚ի զատ ուրիշ վկայութիւններ ալ ունինք թէ Նոր Կտակարանին գիրքերն արդարև ֆրիստոսի աշակերտներուն ձեռքովը գրուեցան, ուստի և հաւատարմութեան արժանի են : Ինչպէս որ առաջ տեսանք, ամենէն հին ֆրիստոնէայ մատենագիրներէն ոմանք Աւաքելոց ընկերներն էին, ուստի և շատ աղէկ պատեհութիւն ունէին գիտնալու թէ արդեօք անոնց անուամբը հրատարակուած գիրքերը բուն անոնց

հեղինակութիւններն են , անոնց մէջ պարունակուածն ալ ճշմարիտ է արդեօք՝ թէ ոչ : Բէ՛ այն ֆրիստոնեայ հեղինակները՝ որոնք Առաքելոց ընկերներն էին , և թէ անոնք որ թէպէտ Առաքելոց ընկեր չէին , առաքելական ժամանակին մտ ծաղկեցան՝ միշտ Նոր Կտակարանին զիրքերուն վրայ այնպէս կը խօսին , որպէս թէ անոնք բուն ֆրիստոսի աշակերտներուն գրութիւններն են , և թէ անոնց մէջ պատմուածներն ալ ճշմարիտ են :

Առջի չորս դարերէն յիսուներէն աւելի հեղինակներ Եւնիւնք՝ որոնց գրութիւններն ամբողջ կամ հատկապէս մինչև հիմա կան ասոնք վկայութիւն կու տան թէ Աւետարաններուն մէջ պատմուած բոլոր գէպքերը ճշմարիտ են : Հերոնիմոս՝ յԱմի Ցեառն 392, վկայութիւններ մէջ կը բերէ Եւրիչ գրեթէ յիսուներէն հեղինակներէ՝ որոնց գրութիւնները հիմա կորսուած են : Աս հեղինակներն , Եփրատէն մինչև Պիրենեան լեռները , Հիւսիսային Գերմանիայէն մինչև Ափրիկէի Սահարա անապատը , աշխարհիս այլևայլ երկիրներուն մէջ կը բնակէին . և Ասորերէն , Յունարէն և Լատիներէն կը խօսէին : Ասոնք բազմաթիւ ֆրիստոնեայ Եփեղեցիներու ընդունած ճշմարտութիւնները , ֆրիստոնեայ չեղող շատ մարդոց ալ նոյն ճշմարտութեանց համար տուած վկայութիւնը յիշելով՝ միաբան են թէ Նոր Կտակարանին գրութիւնները հարազատ և ճշմարիտ են , նաև անոնցմէ վկայութիւն կը բերեն . Նոր Կտակարանն իրրև որոշ և ընդհանուր ընդունուած գիրք չը կը յիշեն . անոր վրայ մեկնութիւններ և բացատրութիւններ ըրած են . վերջապէս՝ անիկա իրրև Աստուածային յայտնութիւն կ'ընդունին : Հերետիկոսներն ալ՝ որոնք հաւատացելոց ընդհանուր Եփեղեցիէն զատուած էին , նոյն գրոց պատմութիւնները իրրև ճշմարիտ կ'ընդունէին , մինակ անոնցմէ հետևած կամ յառաջ եկած վարդապետութեանց նկատմամբ ուղղափառաց հետ անմիաբան էին : Ֆրիստոնէութեան չհաւատացողներն ալ , ինչպէս որ արդէն յիշած ենք , ոչ թէ Նոր Կտակարանին պատմութիւնները սուտ համարելով անոնց չէին հաւատար , այլ անոնց ճշմարիտ գէպքեր

ըլլալը կ'ընդունէին . սակայն այն դէպքերուն ուրիշ մեկնութիւններ տալով՝ յիշեալ դէպքերէն քրիստոնէից իբրև հետևութիւն հանած վարդապետութիւններուն չէին ուզեր հաւատալ : Աւետարաններուն մէջ պատմուած դէպքերուն իրօք կատարուած ըլլալն այնպէս ընդհանուր ճանչցուած էր , որ առջի դարուն ակիզքը ծաղկոյ Յուստինոս Ական կ'ըսէ թէ Յիսուսի անուամբը Հօր Աստուծոյ աղօթք և գոհութիւն մատուցանողներ ամէն ազգի մէջ կան : Յուստինոսէն յիսուն տարի ետքը Տերտուղիանոս կը պատմէ թէ գրեթէ ամէն քաղքի մէջ բնակչաց մեծ մասը քրիստոնէայ էր :

Հեթանոս և Հրեայ մատենագիրներ ալ , առանց ուղղակի Նոր Կտակարանին կամ անոր վաւերականութեանը վրայ խօսելու , ընդհանուր կերպով մը քրիստոսի և անոր աշակերտներուն կենացը պատմութիւնները կը հաստատեն : Յովսեփոս իր պատմութեանը (յՄԹ Տեառն 37—93) , Տակիտոս իր Տարեգիրներուն (Ա. Ց. 100) , Սուետոնիոս իր Պատմութեանը (Ա. Ց. 117) , Յօբնաղ իր Երգիծաբանութեանցը (Ա. Ց. 95) , և Պլինիոս իր Նամակներուն մէջ (Ա. Ց. 103) : Նոր Կտակարանին պատմական մասերը կը հաստատեն :

Նախնի Յոյն և Հռոմայեցի մատենագրաց և հին արձանագրութեանց մէջ յիշուած են շատ դէպքեր՝ որոնք Նոր Կտակարանին պատմութիւններուն հետ համաձայն ըլլալով , անոնց հաստատութիւն կու տան : Աս դէպքերուն շատը Նոր Կտակարանին գլխաւոր պատմութիւններուն չի վերաբերիր , բայց և այնպէս անոր ու արտաքին ազբււրներու մէջ տեսնուած աս համաձայնութիւնը՝ յիշեալ Սուրբ Գրոց ճշմարտութեանը փաստին նպաստաւոր է : Եթէ մեր որբազան հեղինակներուն պատմութիւնը շինծու ըլլար , անշուշտ անոնք այսպիսի մանր և երկրորդ տկան դէպքեր չէին կրնար յիշած ըլլալ . կամ , եթէ յիշած ըլլային , յիշեալ համաձայնութիւնը չէր տեսնուեր : Աս երկրորդական դէպքերուն կարգէն են Հռոմայեցւոց քաղաքական պաշտօնատէրներուն տիրադատները կամ պատուանունները՝ որոնք Նոր Կտակարանին մէջ յիշուած են : Հռոմայեցւոց Տէրութեանը մէջ

քաղաքական պաշտօնատերներն այլևայլ քաղաքացի մէջ այլևայլ անուաններ ունէին : Յիշեալ Յէրուսթեան հպատակ քաղաքներէն ոմանք զինսուրական գաղթականութիւններ ըլլալով, անոնց պաշտօնատերները Հռոմի կառավարութեան կողմէն կը դրուէին, և զինսուրական իշխանութիւն ու իրենց համար սեպհական տիտղոս ունէին : Ուրիշ քաղաքներ Սլաւոն քաղաք կը կոչուէին, քանզի անոնց բնակիչները, գէթ ըստ մասին, իրենց գործերը տնօրինելու իրաւունք ունէին . իրենց պաշտօնատերները կամ կառավարիչներն ալ իրենք կ'ընարէին : Աս պաշտօնատերներն ալ իրենց համար յատուկ տիտղոսներ ունէին, որոնք գաղթական քաղաքներուն պաշտօնատեարցը ունեցած տիտղոսներէն տարբեր էին : Արդ, հին մատենագիրներ և Հին արձանագրութիւններ կը ցուցնեն թէ Նոր Կտակարանին մէջ Հռոմայեցւոց հպատակ քաղաքներու պաշտօնատեարցը տրուած անուաները՝ յիշեալ քաղաքներուն ունեցած իրաւանցը համեմատ են : Չոր օրինակ, արտաքին պատմութենէ գիտենք որ Փիլիպպէ քաղաքը զինսուրական գաղթականութիւն մըն էր . Նոր Կտակարանին մէջ ալ աս քաղաքին կառավարիչներուն Յունարէն Տէրշտչոյն, այսինքն՝ Չորագլուխներ տիտղոսը տրուած է, որ ան քաղաքին քաղաքական հանգամանացը համաձայն է : (Գործ. Ժ. 20) Իսկ անոր մօտ եղող Թեսաղոնիկէ, ինչպէս որ արտաքին պատմութենէն յայտնի է, ազատ քաղաք էր . ուստի Նոր Կտակարանին մէջ անոր համար ըսուած է թէ Հասարակաց Ժողով ունէր : (Տես Գործ. ԺԷ. 5) Դարձեալ կը տեսնենք որ Գործ. ԺԷ. 6. աս քաղաքին կառավարիչներուն համար Յունարէն Սոլիւսթալիս այսինքն՝ Քաղաքապետ ըսուած է : Աս վերջին տիտղոսը Հեթանոս մատենագրաց մէջ բնաւ չի յիշուի, բայց աս բառին պատմական ճշդութիւնը յայտնի է հին կամարի մը վրայ եղած արձանագրութենէն որ այժմս Սելանիկ քաղաքին մէջ գեա կը կենայ : Աս արձանագրութեան մէջ նոյն Սոլիւսթալիս տիտղոսը յիշեալ քաղաքին կառավարիչներուն կը տրուի, և կ'ըսուի թէ անոնք եօթը հօգի էին : Այսպիսի մանր բաներու մէջ ան-

գամ՝ պատմական ճշգուծիւն՝ մինակ օտոյդ պատմութեանց՝ մէջ կրնայ տեսնուիլ. շինծու պատմութեան մը մէջ՝ բուն պատմութեան հետ առատիճան համահայնութիւն գրտնուիլն անհնար է :

Նոր Կտակարանին բնագիր լեզուին յատուկ հանգամանքն ալ՝ անոր վաւերականութիւնն ապացուցանող առայլայլ փաստերուն կը նպաստէ : Նոր Կտակարանին լեզուէն յայտնի կը տեսնուի որ առ գիրքը ֆրիտոսի ժամանակին շատ մօտ, այսինքն՝ Հռոմայեցւոց Երուսաղէմ կործանելէն քիչ ժամանակ առաջ կամ նոյն ատենները, Հրեաներու ձեռք գրուած է : Այսպէս ըլլալուն ապացոյցը շատ յայտնի է : Մենք արդէն (Երես 10) ցցուցինք թէ Նոր Կտակարանին բնագիր լեզուն, այսինքն՝ Յունարէնը, այնպիսի Յունարէն մըն է որ Հրէից միայն յատուկ էր : Բայց Հրեայք Երուսաղէմի կործանելէն ետքը այն լեզուն չպահպարդին. քանզի անմիջապէս այլայլ երկիրներ ցրուելով՝ ան երկիրներուն լեզուները օորվիլ սկսան, և կորոնցուցին այն իրենց յատուկ Յունարէնը՝ զոր առաջ ունէին : Ուստի շատ գծուարին էր որ նոյն ժամանակէն, այսինքն՝ Երուսաղէմի կործանելէն շատ ետքը մէկը նոյն գրութիւնները յիշեալ լեզուով գրէր : Քանզի հարկաւ այն ժամանակին մասնաւոր լեզուէն ասարբեր ոճ մը բանեցնելով՝ գրուածքին շինծու կամ կեղծիք ըլլալը դիւրաւ պիտի յայտնուէր :

Նոր Կտակարանին պատմութիւններուն վաւերական, այսինքն՝ հաւատարմութեան արժանի ըլլալը ցուցնելու համար մինչև հիմա յառաջ բերուած փաստերը համառօտ՝ սակայն այնչափ ուժով և իրարու հետ այնպէս կապակցեալ են, որ կրնանք բսել թէ Չկայ ուրիշ Հին Գիրք մը որ Նոր Կտակարանին պատմութեանցը վաւերականութեանը համար եղած փաստերուն տասնին մէկն ունենայ :

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Հին Կտակարանին գիրքերուն մէջ պատմուածներուն վաւերականութիւնն ալ կը հաստատուի գրեթէ նոյն տեսակ

փաստերով, որոնք Նոր Կտակարանին գիրքերուն արժանա-
հաւատ ըլլալը ցուցնելու համար վերը մէջ բերինք :

Պատմութեանց մանր պարագաները, վաղեմի սովորու-
թեանց, մասնաւոր ժամանակներու և տեղերու մանր յի-
շատակութիւնը, և պատմութեան մէջ յիշուած անձանց
բուն խօսքերը՝ կը ցուցնեն թէ գրողները կամ իրենց պատ-
մածներուն ականատես եղած են, և կամ անոնց ճշմար-
տութիւնը ստուգելու աղէկ պատեհակութիւն ունեցած են :
Եթէ այն հեղինակներուն նպատակն իրենց ընթերցողնե-
րուն սուտ պատմութիւններ իբրև ճշմարիտ հաւատացնել
ըլլար, իրենց շինծու պատմութեանը մէջ այնպիսի և այն-
չափ մանր պարագաներ նշանակած չէին ըլլար : Այն
պարագաները պատմութեան մը ճշմարիտ ըլլալուն վկայու-
թիւն են : Արդ՝ կը տեսնենք որ Հին Կտակարանին պատ-
մութիւններուն մէջ ոչ միայն շատ մանր պարագաներ կը
յիշուին, այլ և նոյն իսկ պատմուածներուն ճշմարտու-
թեանը համար տէտք եղածին չափ վկայութիւն կայ : Ոչ
ոք կրնայ ուրանալ թէ Քրիստոսէ քանի մը դար առաջ
Պաղեստինու մէջ Հրեայ կոչուած ժողովուրդ մը կար, և թէ
ան ժողովրդեան պաշտամունքն ու կրօնական և ազգային
սովորութիւնները ճիշդ այնպէս էին՝ ինչպէս որ Հին Կտակա-
րանին մէջ կը նկարագրուին : Միանգամայն յայտնի է թէ ան
գիրքերուն մէջ աւանդուած Հրէից պատմութիւնն այնպէս
է որ, եթէ ճշմարիտ եղած չըլլար, նոյն իսկ Հրեայք անոր
ստուութիւնը ցուցնելու ջանացած պիտի ըլլային . քանզի ան
գիրքերուն մէջ պարունակուած պատմութեանց մեծ մասն՝
այն ազգին անզգամութեանը, Աստուծոյ դէմ ապստամ-
բութեանը, և այն ապստամբութեան համար Աստուծոյ
անոր տուած պատուհասներուն յիշատակութիւնն է : Արդ
առ պատմութիւնը շատ դարերէ 'ի վեր Հրէից ձեռքն է,
և, ոչ Քրիստոսէ ետքը, ոչ ալ անկէ առաջ, անոնք այն
պատմութիւններուն սխալ կամ սուտ ըլլալն ապացուցա-
նելու ձեռնարկած են : Ասիկա բացասական փաստ մըն է,
բայց և այնպէս պատմութեան ճշմարտութեանը համար
հզօր ապացոյց է :

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՄԻՉՆԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ 49

Վերջին տարիներս գիտուն մարգիկ մեծ ջանքով Եգիպտոսի, Պարսաստանի և Ասորեստանի հնուածիւններուն ուսմանը հետամուտ եղան : Երբեմն այնպէս պատահեցաւ որ յիշեալ մարդոց երևան հանած բաները Հին Վտակարանին պատմութիւններն 'ի սկզբան կատկածելի ընելու պէս երևցան . բայց 'ի վերջոյ, եբբ ուշի ուշով քննուեցան, այն պատմութիւններուն ճշմարտութիւնն աւելի ճշգիւ հաստատուեցաւ :

Նոր Վտակարանին պատմութիւններուն վաւերականութիւնը ցուցնելու համար՝ այն պատմութեանց ժամանակակից կամ անոնց ժամանակին շատ մօտ ծաղկող Քրիստոսեայ և Հեթանոս հեղինակաց վկայութիւններն յիշեցինք : Բայց, Հին Վտակարանին գիրքերուն գրուած ժամանակէն նոյն Հին Վտակարանէն զատ, ուրիշ շատ քիչ գիրքեր մեզի հասած են : Եւսեբիոս Քրիստոսեայ պատմագիրը (յԱմի Յեառն 300) իբր գրուածներուն մէջ քանի մը հատուած մէջ կը բերէ Յանքոնիաթոն անուն Փիւնիկեցի պատմագրէ մը որ, ըստ ամանց, կը կարծուի թէ Քրիստոսէ 1200 տարի առաջ, կամ Հռութայ ժամանակն էր : Հին Վտակարանին գիրքերէն զատ՝ մեր ճանչած ամենէն հին գիրքն առ է : Ասկէ ետքը կուգան, Քրիստոսէ իբր 900 տարի առաջ, Հոմերի և Հեսիոդոսի գործքերը . յետոյ Քրիստոսէ 450 տարի առաջ՝ կուգայ Հերոդոտոս Յոյն պատմիչը . նոյն թուականէն 330 տարի առաջ՝ Բերոսոս Քաղդէացի պատմագիրը . Պլատոն Յոյն փիլիսոփան՝ Քրիստոսէ 350 տարի առաջ . Մառնեթովս Եգիպտացի պատմիչը՝ Քրիստոսէ 250 տարի առաջ, և ուրիշներ : Այս մատենագրաց շատերը Հրեաներէն հեռու երկիրներու մէջ բնակելով՝ անոնց վրայ, շատ քիչ յիշատակութիւն ըրած են . բայց և այնպէս Հին Վտակարանին պատմութիւններուն ճշմարտութիւնը կը հաստատեն : Ինչ որ ասոնք այն վաղեմի դարերուն բարուցն ու սովորութեանցը վրայ կ'աւանդեն՝ Հին Վտակարանին մէջ պատմութեաններուն հետ ճշգիւ նոյն են : Բերոսոս ջրհեղեղն ու Բաբելոնի աշտարակաշինութիւնը կը յիշէ : Պլատոն և Հերոդոտոս կը յիշեն այնպիսի հին աւան-

50 ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՌԱՔԵԼՈՑ ՎՅԱՅՈՒԹԻՒՆԸ

գութիւններ որոնք Եննդոց և Հին Վատկարանին սւրիշ ամենէն հին գիրքերուն պատմութեանցը հետ փարան են :

Հին Վատկարանին համար Քրիստոսի և անոր աշակերտներուն տուած վկայութիւնն ալ՝ այն Գիրքերուն վաւերականութեանը համար սւրիշ զօրաւոր ապացոյց մըն է : Անոնք յիշեալ Գիրքերը՝ վաւերական գրութիւններ, անոնց մէջ պատմութեաններն ալ ճշմարիտ գէպքեր ենթարելով՝ անոնց մէջարոււնակ վկայութիւն կը բերեն : Քրիստոս միմեաւոր իր անտուածային հեղինակութիւնը հաստատելու համար Սուրբ Գիրքերը կը կոչէ . Հրեաներն ալ կը յորդորէ որ Գիրքերը քննեն . և յայտնի կ'ըսէ թէ "Վարելի չէ որ գրուածը աւրուի", այսինքն թէ՛ Աստուածաշունչին մէջ պարունակուած ամեն պատուէր կամ յայտնութիւն պէտք է ընդունիլ ճիշդ այնպէս՝ ինչպէս որ գրուած է : Արդարև ոչ Քրիստոս ոչ ալ անոր աշակերտները յիշեալ Գիրքերուն դիմած կ'ըլլային, եթէ անոնց մ'աքին մէջ Սրբազան մատեաններուն վաւերականութեանը վրայով տարակուսելու իրաւացի պատճառ մը եղած ըլլար :

Հին Վատկարանին այլևայլ Գիրքերուն լեզուին մէջ տարբերութիւններ ըլլան ալ զօրաւոր կերպով կը ցուցնէ թէ անոնք բուն այն ժամանակները և այն հեղինակներէն գրուեցան որոնց որ կ'ընծայուին, և թէ՛ հետևաբար ճշմարիտ են : Հին Վատկարանին լեզուին հանգամանացը վրայ արդէն համառօտ տեղեկութիւն մը տուինք, և Մովսէսի ժամանակէն մինչև վերջին մարգարէներուն ժամանակը՝ հետզհետեւ բարայեցեղէն լեզուին մէջ եղած փոփոխութիւններուն վրայ խօսեցանք : (Յեռ երես 5—7) : Չոր օրինակ՝ Մովսէսի Գիրքերուն մէջ կը գտնենք Եգիպտական բառեր, որոնք այն ատեն Հրէից Եգիպտացւոց հետ ընտանութիւն ունեցած ըլլալը կը հաստատեն . կը գտնենք նաև այնպիսի բառեր և անոյցուածներ որոնք Հին Վատկարանին յաջորդ գրութիւններուն մէջ գործածուած չեն : Լեզուի այս տարբերութիւնները կը ցուցնեն թէ հարկ է որ Հին Վատկարանին գիրքերն իրարմէ հեռաւոր ժամանակներու մէջ գրուած ըլլան . ուստի և այն Գիրքերուն գրուած ժամանակին

Նկատմամբ ընդհանուր ընդունուած գաղափարն ամենէն հաւանականն է. այսինքն՝ թէ Մովսէսի գիրքերը գրուած են ամենէն առաջ և ճիշդ ան ժամանակը որ ժամանակը որ նոյն գիրքերն իրենց համար կը զկայեն թէ գրուած են . և թէ՛ միւս գիրքերն ալ նոյնպէս անկէ ետքը գրուած են ըստ մեծի մասին ան կարգաւ՝ որ կարգաւ որ շարուած են :

Հին և Նոր կտակարաններուն պատմութեանցը վաւերականութեանը վրայ մեր յառաջ բերած փաստերուն վերջ ապէ՛տ առաջ՝ սա գիտողութիւնն ալ կ'ուզենք ընել թէ , 'ի նպատակ անոնց վաւերականութեանը , ընդհանուր բայց զօրաւոր ապացոյց մ'ալ կայ , և սա է որ այլեւայլ գորերու մէջ շատ ճարդիկ Աստուածաշունչին գէմ՝ ելան ինչպէս որ սմանք ալ մեր ժամանակը՝ ջանացին անոր ճշմարտութիւնը ջրել . բայց և այնպէս առ թշնամիներէն և ոչ մէկը կրցաւ անոր մէջ պատմականներուն ստութիւնն ապացուցանել , կամ գէթ անոնց վրայ կտակածելու համար բաւական փաստ մը յառաջ բերել : Աստուածաշունչը բոլոր առ հակառակութեանց գէմ՝ միշտ յաղթող ելաւ : Ուստի շատ իրաւացի փաստ ունինք հեռեցնելու թէ տնոր հաստատածները չեն կրնար հերքուիլ , այլ մանաւանդ արժանի են որ բոլոր մարդիկ անոնց ճշմարտութեանը հաւատարմութիւն ընեն :

ԳԼ. Զ

Սուրբ Գրոց Աստուածային հեղինակութիւնը :

Երկրորդ նախընթաց գլուխներուն մէջ , նախ՝ Սուրբ Գրոց այժմու օրինակներուն հարազատութիւնը , այսինքն՝ անոնց բուն բնագիրներէն հաւատարմութեամբ օրինակուած բլլալը , երկրորդ՝ այն գիրքերուն մէջ պարունակուած պատմութեանց վաւերականութիւնն , այսինքն՝ անոնց արժա-

52 ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

նահաւատութիւնն արդէն հաստատած ըլլալով, հիմա նոյն գրութեանց Աստուածային հեղինակութիւն ունենալուն խնդրոյն գանք :

Աս մասին մեր առաջին դիտողութիւնը սա է որ, այն գիրքերուն մէջ պարունակուած պատմութիւններուն ճշմարտութիւնը հաստատուած ըլլալէն ետքը՝ յայտնագէտ կը հետեւի թէ նոյն գիրքերուն մէջ ունակուած վարդապետութիւններն ու հրամայուած պատուէրներն Աստուածային հեղինակութիւն ունին, այսինքն՝ Աստուծոյ գերագոյն և անտուածային իշխանութեամբը արուած և պատուութուած են :

1. Նախ Նոր Կտակարանին պատմութիւնները նկատենք : Աս պատմութիւններուն նայելով՝ Յիսուս Նազովրեցին Հրէից մէջ երևնալով քարոզեց թէ ինք Աստուծոյ Որդին, ճշմարտութեան վարդապետ, աշխարհի լոյսն ու մարգոց Փրկիչն է, և իր աստուածային իշխանութեանն իբրև ապացոյց՝ բազմաթիւ հրաշքներ գործեց հիւանդներ բժշկեց, կոյրերուն աչուքները բացաւ և մեռելներ յարոյց :

Աս հրաշքներն ու իր ըրած մարգարէութիւններն, որոնց վրայ ետքը պիտի խօսինք, ինքը միշտ առաջ կը բերէ իբրև իր Աստուծմէ զրկուած ըլլալուն՝ և իր վարդապետութիւններուն աստուածային հեղինակութիւն ունենալուն համոզիչ փաստեր, և սչ որ անոնց այս մասին բաւական ըլլալը կրնայ ուրանալ : Միշտ այնպէս ճանչցուած և ընդունուած է որ հրաշք գործելու կարողութիւնը՝ հրաշագործին աստուածային հեղինակութիւն ունենալուն տարակոյտ չի թողոր : Հրեայք սր այս հրաշքներուն ականատես էին՝ Յիսուսի վարդապետութիւններուն Աստուածային Հեղինակութիւնը յիշեալ հրաշքներով ապացուցուած ըլլալը խոտովանեցան : Նիկողեմոս օր Փարիսեցի և Հրէից վարդապետ էր՝ գիշեր ասեն Յիսուսի գալով ըսաւ. «Ուա՛րբի՛ գիտենք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես. ինչու որ մէկը չը կրնար ընել առ հրաշքները՝ որ դուն կ'ընես, թէ որ Աստուած իր հետը չըլլայ» : (Յովհ. Գ. 26) Արդարև Նոր Կտակարանին պատմութիւններուն ճշմարտութիւնն ընդու-

նորը՝ պէտք է որ անոր վարդապետութիւններուն Առա-
 ուածային Հեղինակութիւնն ալ ընդունի . իսկ եթէ Յի-
 սուսի գործած հրաշքներն ընդունելով, այն տաննուան
 Հրեաներէն սմանց ըսածին պէ՞ս՝ ըսելու ըլլայ թէ անոնք Սա-
 տանային օգնութեամբը գործուեցան, այսպիսի մէկու մը
 նոյն իսկ Քրիստոսի տուած պատասխանը . յիշեցունել . բա-
 ւական է թէ՛ «Ինչպէս կրնայ Սատանան Սատանայ հանել» .
 (Մարկ . Գ . 23 .) Թերևս մէկը՝ Նոր Վատկարանին պատմու-
 թիւններուն ճշմարտութիւնն ընդունելով, այսինքն՝ ըն-
 դունելով թէ Աւաքեալք իրենց պատմածներն իրօք տեսած
 էին, հրաշքներուն համար ջանայ ցուցնել թէ ճշմարիտ
 հրաշքներ չէին, այլ սնգական կամ գիւթական հնարքներ,
 ինչպէս որ առաջ յիշեցինք թէ սմանք ըսած են : (Յե՞ս երես
 43 .) Ասոր սա պատասխանը կու տանք թէ առ կարծիքը
 հաստատելու ամենևին փաստ չկայ . ընդհակառակն՝ հրաշք-
 ները գործուած են զանազան պարագաներու մէջ, (քաղաք-
 ներու, գիւղերու, ժողովարաններու մէջ, ծովեզերքի և
 ճամբաներու վրայ, թշնամեաց առջև,) առանց պատեհու-
 թիւն ունենալու այն պատրաստութիւններն ընել զորոնք
 կախարդի մը համար ընել միշտ հարկ է . ուստի անհնար
 է որ այն հրաշայի գործքերը կախարդական եղած ըլլան .
 սմանաւանդ ժամանակակից ակնատես մարդիկ այն հրաշք-
 ներուն համար առ կասկածը չունեցան : Դարձեալ, եթէ
 Յիսուս իր հրաշքները մնգութեամբ գործած ըլլար, մեծ
 խաբեբայ մը եղած կ'ըլլար . քանզի միշտ կ'ըսէր թէ զանոնք
 Աստուծոյ զօրութեամբը կ'ընէ . բայց Յիսուս խաբեբայ մը
 եղած ըլլալու նշաններէն և ոչ մէկն ունի : Անոր բոլոր
 խօսքերն անխարդախ և սիրոյ խօսքեր են : Յիսուսի պատ-
 մութիւնը կարդացողներէն և ոչ մէկը կրնայ համարձակիլ
 ըսելու թէ անիկայ խաբեբայ էր : Այս վերջին ժամա-
 նակներս սմանք սկսան ըսել թէ Նոր Վատկարանին մէջ՝
 պատմուած դէպքերուն նման դէպքեր արդարև Հրեաս-
 տանի մէջ տեղի ունեցան, բայց Աւետարանիչներն այն
 դէպքերը չափազանցութեամբ պատմած են, և թէ՛ անոնք
 ազգոս և անապաշտ մարդիկ ըլլալով՝ Յիսուսի գործքերուն

և վարդապետութիւններուն և առանց իրաւացի պատճառի, Աստուածային հեղինակութիւն մը ընծայած են : Ըսոր պատասխանը յայտնի է նախքնթաց գրութիւններուն մէջ բերուած փաստերէն, որոնք նոր կատարանին պատմութիւններուն ճիշդ և արժանահաւատ ըլլալուն նկատմամբ ըսուեցան : Հոն ցուցուեցաւ թէ բոլոր այն պատմութիւններն՝ ակնանտես մարդոց պարզ և արժանահաւատ վկայութիւնք եղած ըլլալու յատուկ նշաններն ունին . թէ՛ այն ակնանտես վկաներն իրենց ըսածներուն ճշմարտութեանը վկայեցին՝ իրենց գրածներուն հաստատութեանը համար հալածուելու և մեռնելու անգամ պատրաստ ըլլալով, ինչպէս որ իբօք ալ հալածուեցան և մեռան . և թէ՛ այն պատմութիւնները գրուելով բոլոր աշխարհի հրատարակուեցան դէպքերուն պատահած ժամանակէն շատ քիչ ետքը, և նոյն իսկ դէպքերուն պատահած տեղերը . այնպէս որ, եթէ այն պատմութիւնները սուտ կամ չափազանցութեամբ գրուած ըլլային, իսկոյն յայտնուած և հերքուած կ'ըլլային և Դարձեալ, ոչ ոք կրնայ ըսել թէ այն պատմութիւններն յետոյ փոխուեցան կամ այլալեցան . քանզի, ինչպէս որ Դ . գլխուն մէջ ցոյցուցինք, առատ ապացոյցներ կան ցուցնելու համար թէ Աւետարանչաց և Աստուծոց գրութիւնները մեզի հասած են ճիշդ այնպէս՝ ինչպէս որ ի սկզբան գրուեցան :

Բայց Նոր կատարանին պատմութիւններուն նայելով, Յիսուս իր Աստուածային պաշտօնը հաստատելու համար ոչ միայն հրաշքներ գործեց, այլև մօր գարեութիւններ բրաւ որոնք, թէ իր կենդանութեան ատենը և թէ յետոյ յաջորդ ժամանակներուն մէջ, իրօք կատարուեցան : Առջուց ըսաւ Յուդային մատնութիւնը (Յովհ . ԺԳ . 21 . բազմաթէ Յովհ . ԺԸ . 3 և Մատթ . ԻԶ . 47—50 ին հետ), իր մահն ու յարութիւնը (Մատթ . ԺԶ . 21, և Ղուկ . ԺԸ . 31—34 . բազմաթէ Մատթ . ԻԵ, և Ղուկ . ԻԳ գլուխներուն հետ), Սուրբ Հոգւոյն գալը (Յովհ . ԺԴ . 26—29, բազմաթէ Գործ . Ա . 4 ին հետ) : Կանխաւ պատմեց նաև Երուսաղէմ քաղքին և ասորին կործանումը (Մատթ .

ԻԳ. 1, 2. Ղուկ. յԲ. 41—44, ԻԱ. 20—24, 32). այս մարգարեութիւնը կաատարուեցաւ քրիստոսի մահուանէն 36 տարի ետքը, և այս գէպքերուն Յիսուսի մարգարեութեանը հետ ունեցած ճիշդ համաձայնութիւնը՝ Յովսեփոսի, Հրեայ պատմագրին, պատմութեանը մէջ յայտնի կը տեսնուի: Աս հեղինակը, կը պատճառէ թէ Երուսաղէմի բնակիչներուն գուրտ փախչելն արգիլելու համար Հռոմայեցիք քաղքին բաշտահքը պատ քաշեցին (Ղուկ. յԲ. 43). և թէ պաշարումը շատ կարճ եղաւ (Մատթ. ԻԳ. 22), քանզի յիշեալ քաղաքը պաշարող Հռոմայեցի զօրավարը Յիսուս՝ Հռոմ գաւառաւոր կը փութար, կը պատմէ նաև թէ թրշնամին հիմերը փորելով քաղաքն ու ասճարը կործանեց (Մատթ. ԻԳ. 2), և թէ մեծ բազմութիւն մը. (1,000,000 հոգի), պաշարման տակնը կորուսեցաւ, մեծ բազմութիւն մ'ալ գերի տարուեցաւ (Ղուկ. ԻԱ. 24):

Այն կերպով կը հաստատուի նաև Առաքելոց գործքերուն պատմութեանը՝ և անոնց իրենց ժամանակին Եկեղեցիներուն գրած թուղթերուն մէջ յիշուած վարդապետութեանց Աստուածային հեղինակութիւնը: Աւետարանի պատմութեանէն յայտնի է թէ Առաքելաբ ուսուցանելու համար Յիսուսէն պաշտօն և իշխանութիւն առին (Մատթ. յԲ. 1, 7, 19, 20: ԻԸ. 19, 20: Ղուկ. յԲ. 11, 12: Յովհ. յԳ. 26: յԵ. 26, 27). ուստի անոնց վարդապետութիւններն ալ Աստուածային հեղինակութիւն ունին, ինչպէս որ Յիսուսինը նաև իրենց այնպիսի հեղինակութիւն ունինալը հաստատուելու համար իրենք ալ բազմութիւն հրաշքներ գործեցին և այլևայլ մարգարեութիւններ ըրին (Մարկ. Զ. 12, 13: Ղուկ. Բ. 6: Գոր. Բ. 43: Գ. 1—11: Ե. 9: Ե. 12: յԱ. 27, 28: յԳ. 11: յԳ. 3: յԲ. 11: Ի. 29, 30: ԻԱ. 10, 11: ԻԷ. 22—25: Հռով. յԵ. 19: Բ Կորնթ. յԲ. 12: Ա Յիմ. Գ. 1—3: Բ Պետ. Բ. 1, 2: Գ. 3, 10, 13: Յայտ. Ա—ԻԲ ԳԼ.)

Ուստի նոր Կաթարանին պատմութիւններուն ճշմարտութիւնն ընգուանողը, այսինքն՝ նազովրեցի Յիսուսին և անոր Առաքելոց հոն յիշուած հրաշքները գործած ու մար-

գարեալթիւններն ըրած. ըլլալուն հարատացողը. պարտի որոշակի հաւատալ նաև թէ անիկայ Աստուծո՛վ զգիւածն վարդապետ մըն է, ուստի և անոր վարդապետութիւններն ու պատուէրներն և Աւարեայներունն ալ՝ Աստուածային Հեղինակութիւն ունին: Արդարէ՛ Աստուած երբէք հրաշք գործելու կամ մարգարէութիւններ ընկու կարողութիւն չտար այնպիսի մէկու մը որուն վարդապետութիւններն անոր կամացը համաձայն չեն. ապա թե ոչ թոյլ տուած կ'ըլլար որ մարդիկ խարուէին և մեջօրին:

2. Երկրորդ, Հին զտակարանին պատմութիւններուն գառնանք: Աս պատմութիւններուն ճշմարտութիւնն արդէն ապացուցուած ըլլալով՝ կը հետևի թէ Հին զտակարանին մէջ գտնուած վարդապետութիւններն ալ Աստուածային Հեղինակութիւն ունին. քանզի Մովսէս. Սամուէլ և միւս մարգարէները, որոնց գրութիւնները Հին զտակարանին մէջ կը գտնուին՝ իրենց համար կ'ըրեն թէ Աստուածային Հեղինակութեամբ կը խօսին, և ասոր վկայ կը կոչեն իրենց հրաշքներն ու ապագայ գեղքերու մարգարէութիւնները զորոնք այն Աստուածային Հեղինակութեան ապացոյց ըլլալու համար ըրած են: Այն հրաշքները բազմութիւ վկաներու առջև հրապարակաւ գործուած են. այնպէս որ անոնց իրօք եղած ըլլալուն վրայ. տարակուսիլ անհնար է. իսկ մարգարէութիւններուն մեծ մասն այնպիսի գեղքերու վրայով են, որոնք մարգարեացուած ժամանակէն հարիւրաւոր ատրիներ ետքը կատարուած են:

Հին զտակարանին մէջ մարգարէութեանց անընդհատ շարք մը կը տեսնուի: Արամին անկուսէն անմիջապէս ետքը մարգկային ազգին համար Փրկչի մը խոստումն եղաւ և ժամանակին կատարուեցաւ. Նոյի ասանը ջրհեղեղը գուշակուեցաւ. Աբրահամին մարգարեական խոստումը արուեցաւ թէ Անոր սերունդը պիտի ժառանգէ Քանանու երկիրը (Ծննդ. ԺԳ, 14), և թէ բոլոր ազգերն անոր սերնդով պիտի օրհնուին (Ծննդ. ԺԲ, 2, 3): Եգիպտոսի գերութիւնն ու անկէ ազատուիլն ալ անոր առաջուց ըսուեցաւ (Ծննդ. ԺԵ, 13, 14): Յակոբայ ժամանակէն

նակն ալ նահապետաց և մանց սերնդոցն ապագայ պատմութիւնը գուշակուեցաւ (Ծննդ. ԽԹ)։ Մովսէս մարգարեացաւ թէ իբրև ակելի մեծ մարգարե մը պիտի գայ (ԲՈՐԻ. ՃԸ. 15—19), և թէ մինչև աշխարհիս վերջը Հրէից ազգին գլխուն ինչ բաներ պիտի գան (ԲՅՐԻ. Դ. 25—31. ԻԸ. 1Գ)։ Աս նոյն ժամանակին մէջ եղած անօրէնութիւնները փանդամայն Աւետարանին մեծամեծ վարդապետութիւններն օրինակով խնայուցած են։

Սամուէլի ժամանակն՝ առաջուց ցուցուեցան Հրէից ուղած թագաւորութեան հեռեանքները (ԱԹագ. Ը. 11—18), Յաւուզի մահը (ԱԹագ. ԻԸ. 19), Գաւթի թագաւորելն (ԱԹագ. ՃԶ. 12, 13), անոր թագաւորութեան հաւատաստիլը (ԳԹագ. Է. 12—17), Սալմոնի ծնունդը, օրպիտութիւնը (ԱՄՆա. ԻԲ. 9, 10. բազրատ ԳԹագ. Գ. 25) և անոր թագաւորութեանը բաժնուիլը (ԳԹագ. ՃԱ. 34—40), Բեթելի սեղանին կործանումը (ԳԹագ. ՃԳ. 1—3) և Իորայելի ցրուիլը (ԳԹագ. ՃԳ. 15)։ Եղիա և Եղիոս Յուդայի և Իորայելի թագաւորութեանց գլխաւոր գեղքերը մարգարեացած են (ԳԹագ. Ա.—ՃԳ) գրեթէ մինչև Յովան՝ որով կրնայ ըսուիլ թէ Երրայեցուց բուն մարգարէներուն շարքը կ'սկսի։ Ասանցմէ Ամիգն կը գուշակէ Սամարիոյ կործանումն ու ասոր ցեղերուն ցրուումը (Ամիգն. Թ. 9. Ա), նոյնը Եսայի ալ մարգարեացաւ (Ես. Է. 5—8), ինչպէս նաև Յուդայի ցեղին առժամանակեայ գերութիւնը Բաբելոնի մէջ (Ես. ԼԹ. 5—8), որ այն ատեն փոքր և Հրէից բարեկամ տերութիւն մըն էր. մարգարեացաւ նաև թէ Ելէկիա նոյն ժամանակը Երուսաղէմ պաշարող Ասորեստանցիներէն պիտի ազատուի (Ես. ԼԷ. 21—35)։ Գերութեան գլխաւոր պարագաներն առաջուց գուշակուցան, այսինքն՝ անոր 70 տարի աւելը (Եբ. ԻԵ. 8—11. ԻԹ. 4—10, Ա.) և Հրէից մեղքերուն պատճառաւ ըլլալը (Եղեկ. ԻԳ. 9—17; Եբեմ. Լ. 14, 15. Ես. ԻԷ. 9. Ա.). նաև նոյն գերութեան վերջանալը և ի՛նչ միջոցներով վերջանալը (Ես. ՃԳ. 19. ՃԳ. 1—23. ԻԳ. 14—17. ԽԵ. 1—4. ԻԵ. 1—7. ԽԸ. 20, 21. Եբեմ

ԻԵ . 12—14) : Աս մարգարէութեանց մէջ ան ասեմն գեւաննշան եղող ազգ մը (Պարզք) և տակաւին չծնած աշխարհակալ մը (Կիւրոս) յականէ յանուանէ յիշուած են , և մարգարէութիւնները գրեթէ պատմութեան պէս յստակ և յայտնի են :

Աս մարգարէութիւններուն և անոնց կատարուելուն վրայ որոշ գաղափար մը ունենալու , միանգամայն անոնց ճշմարտապէս Աստուածային յայտնութիւն ըլլալուն համոզուելու համար՝ Թող մեր ընթերցողները Սաղմ . ԻԲ . և Ես . ԵՊ . գլուխներն Աւետարանին պատմութեանը հետ բաղդատեն . կամ կարգան Հնգամատեանին (Բ . Օք . ԻԸ . 64, 65 . ՂԷա . ԻԶ . 32, 33) Հրէից վրայ ըրած գուշակութիւնները , զորոնք Նեեմիա ալ (Նեեմ . Ա . 8) մէջ կը բերէ , և որոնք Ամփոփ , Երեմիայի և Եզեկիէլի գիրքերուն մէջ ալ ըստ մասին յիշուած են , և աս պատգամները Հրէից պատմութեանը հետ բաղդատեն , Հրեայք Հնգամատեանը 2500 տարիէ 'ի վեր կը պահեն , և անոնց ուրիշ գիրքերն անոր մէջի մարգարէութիւնները 2000 տարի առաջ յիշած են . ուրեմն յայտնի է թէ անոր մարգարէութիւնները՝ մարգարէացուած գէպքերուն կատարուելէն շատ առաջ են : Ընթերցողները Թող գիտեն նաև Հրէից ազգին վրայ եղած ուրիշ մարգարէութիւններն ու անոնց կատարումը :

Աստուած Աբրահամին խոստմունք ըրած ասեմնը՝ գեւ Աբրահամ զաւակ չունէր (Եննգ . 2) . և , յաջորդ 200 տարուան փլօցին , երբ Աստուած նոյն խոստումը շատ անգամ անոր յաջորդներուն կրկնեց , այն ընտանիքը 70 հոգիէ աւելի չէր (Եննգ . 10Զ . 27) : Նոյնպէս Մովսէս նոյն ազգին անիլն ու մեծնալը մարգարէացած ասեմնը՝ անոր գուշակութեանը կատարումն հաւանական չէր , քանզի Հրէից ազգը զինք Աստուծոյ անհամոյ ըրած էր . այն ազգերն ալ զորոնք Հրեայք պիտի ջնջէին՝ անոնցմէ զօրաւոր էին , միանգամայն ամէնքը զՀրեաները ջնջելու միաբանած էին . բայց և այնպէս բոլոր աս մարգարէութիւնները կատարուեցան :

Եսայի մարգարէն ալ բարեպաշտ Թագաւորի մը ու անոր յաջող կառավարութեան ասեմնը գիրք-Քիւն գուշակած է .

ընդհանրապես Երեմիա ոչ ոք չէր մտադարձացած է այնպիսի առնել մը՝ երբ Հրեայք Բաբելոնի մէջ յետին կործանման կէտը հասած էին (Երեմի. Լ. 10. 11. ԼԳ. 25, 26. ԽԶ. 27, 28) :

Երուսաղէմայ Հռոմայեցւոց ձեռքով կործանուելէն ետքը՝ Հրեից երկիրը Հեթանոսներէն ստանալու եղաւ (Ղուկ. ԻԱ. 24) . իրենք ալ անկէ վախուցեցան : Գրեթէ երկու հազար տարի է որ անոնք առանց իրենց հին ցեղային բաժանումը պահած ըլլալու, առանց իշխանի, առանց կառավարութեան, առանց տաճարի, քահանայութեան և զոհերու մնացած են . ցիրուցան եղած՝ բայց պահպանուած են . աշխարհիս ամէն կողմերը տարածուած են, բայց ուրիշներու հետ խառնուած չեն, և միշտ մինչև ցարգ ամենուն առակ և նախապիք են : Բոլոր այս բաներն առաջուց գուշակուած են : Բայց յիշեալ գէպքերն իրենց նմանը չունեցող և բոլոր մեր փորձառութեանը հակառակ գէպքեր են . այսինքն՝ ան աեսակ գէպքերու կարգէն չեն սրոնք բնական կերպով միօրինակ կը պատահին . ուրեմն անոնց կանխատեսութիւնը՝ փորձառութեան միջոցով մարդկօրէն եղած գուշակութիւն մը չի կրնար ըլլալ . ոչ ալ կրնայ ըսուիլ թէ մարդիկ իրենց նպատակներուն համար այն մարգարէութիւնները կատարեցին : Այս կը հետեւի թէ անոնց գուշակութիւնն Աստուծոյ ազդեցութեամբն առաջուց պատմուած ճշմարիտ մարգարէութիւն է, և թէ անոնք Աստուծոյ անօրէնութեամբը կատարուեցան : Ասիկայ աւելի յայտնի ընելու համար Աստուած անօրինած է որ Հրեայք իրենց օրէնքն ու իրենց վրայ իրօք կատարուած մարգարէութիւնները մինչև ցարգ ամբողջ կը պահեն . այնպէս որ անոնք ոչ միայն, եղած մարգարէութիւններուն համեմատ, «նախապիք և արհամարհանք», հապա նաև «առակ և զարմացում», այսինքն՝ խրատ և զարմանալի օրինակ եղած են բոլոր ազգերուն սրոնց մէջ յրուած կը գտնուին : (Եզեկ. Ե . 15) :

Մարգարէութեան փաստն աւելի ազգու կերպով կ'երեւի, եթէ Սուրբ Գրոց մէջ ուրիշ ազգերու վրայ եղած գուշա-

կութիւններն ալ անոնց իրական պատմութեանը և վիճակին հետ բաղդատենք :

Աստուած 'Նոյի յայանեց անոր սերունդին ապագայ վիճակը, զոր օրինակ՝ թէ քանան ծառաներու ծառայ պիտի ըլլայ, և Յաբեթ Սեմի վրաններուն մէջ պիտի բնակի . այսինքն թէ՛ Եւրոպա Ասիոյ պիտի տիրէ, ինչպէս որ այսօրուան օրո այնպէս եղած կը տեսնենք : Իսմայէլի համար տակէ երեք հազար տարի առաջ մարգարէացուած է թէ անոր սերունդն իր թշնամիներուն առջևը պիտի բնակի . անոր ձեռքն ամէն մարդու դէմ, և ամէն մարդու ձեռքն անոր դէմ պիտի ըլլայ . և արդարև մինչև ցայսօր Իսմայէլացիք նուաճուած չեն, թէպէտ Եգիպտացւոց թագաւորը Սեսոտրիս, Պարսից թագաւորը Գիւրոս, Հռոմայեցիք և Օսմանցիք զանոնք նուաճելու ամէն ջանք ըրին :

Եդովմայեցիք ալ, Հրէից պէս, Աբրահամի սերունդ էին . բայց Հրեաներէն առաջ ծագկելով զօրացան . բնաւ գերութեան չգացին, ցիրուցան չեղան, ու Երուսաղեմայ կործանուած ատենն՝ անոնք ծագկեալ ազգ էին, այնպէս որ Կարմիր ծովէն մինչև երեք օրուան ճամբայ հեռու՝ երեսուն կործանուած քաղաքներու մնացորդներն անոնց առջի մեծութիւնը կը ցուցնեն : Բայց աս ազգիւն և անոր երկրին իոպառ կործանումը մարգարէացուած ըլլաւ (Եբեմ. Խթ. 10. 17. Աբդ. 8), նոյն մարգարէութիւնը հիմա կատարուած կը տեսնենք : Անոնք իմաստութեան կողմանէ նշանաւոր էին . բայց մարգարէութեան համեմատ (Աբդ. 8) Եդովմի մէջ թափառական պատող ցեղերն հիմա այնպիսի թանձր ազիւթեան մէջ ընկղմած են, որ իրենց բարտախիքը գանուած աւերակներն՝ ոգիներու կամ դէերու գործ կը կարծեն :

Անոնց երկիրը Հնդկաստան երթալու շիտակ ճամբուն վրան է . բայց բնաւ մէկը, կ'ըսէ մարգարէութիւնը, "յաւիտեանս յաւիտենից անոր մէջէն պիտի չանցնի" (Ես. 1. 7. 10) : Եւ արդարև, ինչպէս որ մարգարէութեանց վրայ գրող քիթ անուն երևելի հեղինակ մը կ'ըսէ, "Արաբացիք անգամ հոն մտնելու կամ անոր սահմաններէն անց-

նելու կը վախնան" : Ըսուած ալ է թէ այն երկիրն "սամայի պիտի ըլլայ" . և թէ՛ "Հոն մարդ մը պիտի չնստի" (Երեմ. ԽԹ . 17, 18) : Ճամբորդները կը պատմեն թէ Կարմիր Ծովուն կողմէն փչող հովերէն հոն բերուած աւազը բոլոր երկիրն մէջ տարածուած է , այնպէս որ հոն բնակութիւն չի կրնար ըլլալ : Ո՞ր մարդկային նախատեսութիւն կրնայ ասանկ որոշ դիպուածներ առաջուց գուշակել :

Ուրիշ օրինակ մ'ալ կրնանք բերել . այսինքն՝ Բաբելոնի լինինը : Աս քաղաքին վրայ Եսայեայ ըրած մարգարէութիւնը՝ քաղաքին կործանումէն հարիւր վաթսուս տարի առաջ էր . ան ատեն Բաբելոն նոր ճանչցուելու սկսած ըլլալով՝ Հրէից ալ գրեթէ անծանօթ էր (Ես . 1Թ . 3) , և անիկա յետոյ կործանող Կիւրոսի հայրենիքը Պարսկաստան՝ տակաւին բարբարոսութեան մէջ էր : Բայց Եսայի կը մարգարէանայ թէ Հրեայք Բաբելոն պիտի տարուին , և ետքն ալ թէ՛ ան քաղաքը պիտի կործանուի : Իր մարգարէութեանը մէջ անոր դէմ Եղամէն (Պարսկաստանէն) ու Մարաստանէն ժողովուրդ կը հրաւիրէ (Ես . ԶԳ . 4, 5 . ԻԱ . 2 . 9) . անոր յաղթողը Կիւրոս յանուանէ կը կոչէ (Ես . ԽԳ . 28 . ԽԵ . 1) , աւելցնելով թէ՛ Կիւրոս անունն անոր պատուանունն է ոչ թէ ծննդեան անունը (Ես . ԽԵ . 4) . կը ցուցնէ ալ թէ թշնամին ի՛նչպէս քաղաքը պիտի մանէ , այսինքն թէ՛ քաղաքին մէջէն անցնող գետը պիտի ցամքի , երկու փեղկով դուռները բաց պիտի մնան , և այլն (Ես . ԽԳ . 27 . ԽԵ . 1—3) :

Եսայիէն 100 տարի ետքը Երեմիա մարգարէացաւ : Ան ատենը Բաբելոն "Թագաւորութիւններուն փռուքը" և "բաւր երկիրն պարծանքն" էր : Նաբուգոդոնոսոր Բաբելոն քաղաքն-ընդարձակած ու գեղեցկացուցած էր , և բաւր այն երկիրներուն վրայ վերին իշխանութիւն ունէր : Երեմիա ան քաղաքին կործանումը կը գուշակէ (Երեմ. ԾԱ . 33, 41, 43, 55 : Ծ . 23—32) , և կ'ըսէ թէ բնակիչներուն զեղխութեան ու արբեցութեան մէջ եղած գիշեր մը քաղաքը յանկարծ պիտի առնուի (Երեմ. ԾԱ . 39, 57) : Երկու մարգարէներն ալ կը յիշեն թէ երկիրը յաւիտեան անբնակ ,

դադաններու դադար և լճացեալ ջուրերու տեղ մը պիտի ըլլայ (Ես . 20—22 . 23 . Երեմ . ԾԱ . 37 , 38) : Աս մարգարէութիւններուն առջինէն , այսինքն՝ Եսայեայ մարգարէութենէն դար մը ետքը՝ գուշակութիւնները սկսան կատարուիլ : Նաբուգոդոնոսոր Հրէաստանի տիրեց , և անկէ 70 տարի ետքը Կիւրոս Բաբելացոց Տէրութիւնը կործանելով՝ Հրեաներն արձակեց : Երկու երևելի Յոյն պատմիչներու , Հերոդոտոսի և Քսենոփոնի գրութեանցը մէջ (որոնց առջինը Եսայիէն 250 ու վերջինը 350 տարի ետքը ծաղկած են)՝ բոլոր աս գուշակութեանց կատարուած ըլլալուն մանրամասն պատմութիւնը կը տեսնուի : Հերոդոտոսս կը պատմէ թէ Կիւրոս աս անուէն աթոռը նստած տանը վրան առաւ : Քսենոփոն կը ծանուցանէ անոր դօրքին այլևայլ ազգերէ խառն ըլլալը . մասնաւորապէս կը յիշէ Պարոիկներն ու Մարք (Կիւր . Խրատք . Ե) : Աս երկու մատենագիրներն ալ պաշարման ճիշդ պատմութիւնը դրած են . գետին ետ դարձուիլը , քաղքին աւնուիլն ու թաղաւորին մահը , Քրիստոնէական թուականին սկիզբը ծաղկող Սարաբոն կ'ըսէ թէ իր օրովը Բաբելոն քաղաքն ընդարձակ ամայի տեղ մըն էր : Ղուկիանոս , Բ . Դարու Հռոմայեցի հեղինակ մը , իր ժամանակին համար կը հաստատէ թէ «Քիչ առենէն Բաբելոն պիտի փնտուռի ու պիտի չգտնուի , ինչպէս որ Նինուէ արդէն անհետ եղած է» : Նոյնպէս Պաւլոսինոս , Բ . Դարու Յոյն հեղինակ մը , կը պատմէ թէ Բաբելոնի աւերակներուն մէջ պատերէն զատ ուրիշ բան մնացած չէ : Հերոնիմոս ալ կ'ըսէ թէ իր ժամանակն (յԱմ Ծ . 380) անիկա գաղաններու բնակարան եղած էր . և արդի ճամբորդներն անոր բնաջինջ եղած ըլլալուն կը վկայեն : «Անիկա ճախնէ մը քիչ տարբերութիւն ունի» , կ'ըսէ այն տեղերուն այցելութիւն ընող ճամբորդ մը , «և ետ ազլած կը նայէի թէ այլևայլ մարգարէութիւններն ինչպէս ճշդիւ կատարուած են» :

Ուրիշ աւելի մեծ քաղաք և աստուածային կարողութեան աւելի նշանաւոր յիշատակ մըն է Նինուէ , որ Սեմայ որդւոյն Ասուրին օրէն՝ ի վեր կար , և ատեն մը շրջապատը 60

մղանի չափ էր : Ասիկա հարուստ մեծագամայն ամբարտա-
 ւան քաղաք մըն էր : «Եո եմ», կ'ըսէր անիկա, «ու ինձ մէ-
 ուրիշ չ'կայ» (Սոփ . Բ . 15) : Ուստի Յովնան հոն զրկուե-
 ցաւ որ անոր կործանուած առաջուց իմացնէ . և թէպէտ
 անոր բնակիչները զղջալով ան ատեն ազատեցան , քանի մը
 տարի ետքը Նաուու մ զրկուեցաւ որ առջի պատգամը նորէն
 կրկնէ : Դարձեալ հարիւր տարի ետքը , քաղքին կործա-
 նու մէն 50 տարի առաջ , Սոփոնիա (Բ . 13 , 14) անոր կոր-
 ծանու մը նորէն գուշակեց : Եթէ մէկն աս մարգարէին
 պատմութեանն իմաստը Դէոդորոսի Յիկիլիացւոյն պատ-
 մութեանը հետ բազդատէ , կարգացած մարգարէութիւնը
 յաւէտ իրողութեան մը պատմութիւնը պիտի կարծէ քան
 թէ գուշակութիւն : Ղուկիանոս որ , ինչպէս ըսինք ,
 Քրիտոստէ ետքը երկրորդ դարուն մէջ ծաղկեցաւ , և ան
 երկրին բնիկներէն էր՝ կը հաստատէ թէ Նինուէ բուրոփին
 կործանած էր , այնպէս որ հոն բնակութեան հետք մ'ան-
 դամ մնացած չէր :

Մարգարէից մէջ Պարոից Ցերութեան Աղբըսանդրի ձեւ-
 քով ջնջուիլը (Դան . ԺԱ . 2 . 4) , նաև Ցիւրացւոց (Եզեկ .
 ԻԸ . 1—20) և Եգիպտացւոց (Եզեկ . ԻԲ . 2—21) կործա-
 նիլը կանխաւ պատմուած է այնպիսի ատեններ՝ որ այս աղ-
 գերէն ոմանք զօրաւոր չէին , ոմանք ալ վերջին աստիճան
 զօրութեան հասած էին : Նոյնպէս Մովարացւոց (Երեմ .
 ԽԸ . 1—47) , Ամնոնացւոց (Եզեկ . ԻԵ . 2—10 . Սոփ . Բ .
 9 , և այլն .) և Փղշացւոց (Եզեկ . ԻԵ . 15—17) պատ-
 մութիւնն այնպիսի մանր պարագաներով կանխաւ գու-
 շակուած են , որպէս թէ մարգարէացողներն այն գէպքե-
 րուն ականատես էին :

Վերոյիշեալ ազգերէն ոմանց Յորդանանու արևելեան ձին
 ատենօք բնակած երկիրը՝ նոր ատեններս ճամբորդներու
 խուզարկութեամբը շատ ճշդիւ քննուելով , Սուրբ Գրոց
 պատմութեանը համեմատ , ժամանակաւ հոն շատ հզօր քա-
 ղաքներ եղած ըլլալը յայտնուեցաւ , և անոնց կործանմանը
 նկատմամբ Աստուածաշունչին մարգարէութիւններուն կա-
 տարու մը յայտ յանդիման երևցաւ : Երկրորդ օրինաց մէջ

(Գ. 4, 5) կը պատմուի թէ՛ Իորայելացիք Բասանու մէջ ՈՎԳԻՆ թագաւորութեան Արդովը կոչուած գաւառէն վաթսուսն քաղաք առին, և թէ՛ բարձր աս քաղաքները բարձր պարիսպներով, դռներով և դռնափակներով ամբարցած էին : Աւերոյիշեալ ճամբորդներէն ոմանք կը պատմեն թէ Բասանու մէջ լեռանմը գլխէն՝ յիշեալ քաղաքներուն 30 հատին աւերակները համրեցին . և յետոյ, անոնց մէջ մտնելով, շէնքերուն շատերը տակաւին մնացած գտան, որոնք տեսակ մը երկաթի նման կարծր մեծամեծ քարերէ շինուած ըլլալով՝ երեսուն դար անցնելէ ետքն ալ տակաւին անկործան կեցած են : Տուներուն պատերը հինգէն մինչև լթ ոտք հաստ են . տանիքները շիտակ, և յիշեալ կարծր քարերով ծածկուած են : Գուռներն ալ քարէ են, որոնց մէկը 9 ոտնաչափ բարձր և $4\frac{1}{2}$ ոտնաչափ լայն է, զրէթէ մէկ ստնաչափ ալ թանձրութիւն ունի : Ուրիշ գուռներ աւելի մեծ են : Աս աւերակ քաղաքներէն ոմանց մէջ 2՝ հարիւրէն մինչև 5 հարիւր տուն տակաւին ամբողջ կը կենան, բայց անոնց մէջ մարդ չի բնակիր : Աս քաղաքներուն համար է որ Երեմիա մարգարէ կ'ըսէ . «Մովարին թեւեր տուէք, որ թռչելով փախչի . ու անոր քաղաքները ամայի պիտի ըլլան՝ բնակիչ չունենալով . . . և Մովարը ժողովուրդ ըլլալէն պիտի կորուի . վասն զի Յէրոջը դէմ հպարտացաւ» (Երեմ. ԽԸ. 9. 42) : Ճամբորդներն այն հին քաղաքներուն այսպէս հրաշալի կերպով պահուած բայց անբնակ թողուած աւերակներն՝ անոնց վրայով եղած մարգարէութեանց հետ բաղդատելով՝ կը վկայեն թէ «Բասանու և Մովարայ երկիրներուն հիմնկուան վիճակը՝ մարգարէութեանց մէկ ճիշդ կատարումն է» :

Հրէից տէրութեանը կործանման տառնները եղած աս մարգարէութիւնները՝ Հրեայք միսթարելու և խրատելու, և միւս ազգերուն ամբարտաւանութիւնը խոնարհեցնելու, և մանաւանդ մարդոց խորհուղները քրիստոսի անշարժ և մշտնջենաւոր թագաւորութեանը վրայ դարձնելու նպատակն ունին : Գերութեան միջոցին՝ Դանիէլ երկրիս շատ թաւալութիւններուն ծագումն ու կործանումը գուշակելէ

եւորք՝ Հինաւուրց կոչածին իշխանութեան ժամանակը որոշակի ցուցուց : (Դան . Է . 22 . 27 , Թ . 24—27) :

Արդարեւ մարգարեութեանց առաջին և վերջին գործն էր իմացնել թէ քրիստոս պիտի գայ, և անոր թագաւորութիւնը հաստատուելով բոլոր աշխարհք պիտի տարածուի : Գիտենք ալ թէ քրիստոսի հաստատած կրօնքը, որ հազար ութ հարիւր տարի առաջ իրեն հետեւող հազիւ քանի մը հազար հագի ունէր՝ հիմա մարդկային ազգին 250 միլիոնէն ընդունուած է, և մինչ ուրիշ կրօնքներ կամ աղանդներ շուտով կործանման կը դիմեն, ասիկա ամէն կողմ տարածուելով՝ կը ցուցնէ թէ բոլոր երկիրը պիտի լեցնէ : Ասիկա ինքնին նշանաւոր իրողութիւն մըն է . բայց աւելի նշանաւոր կէտն ան է որ բոլոր աս դէպքերը Հին Վտակարանին մէջ առաջուց մարդարէացուած էին : ' Ի սկզբանէ գուշակուած էր թէ մարդոց վիճակին մէջ մեծ փոփոխութիւն մը պիտի ըլլայ մեր նախամօրը սերնդովը (Ծննդ . Գ . 15) . յետոյ ցուցուեցաւ թէ Արահամէն սերող ժողովրդեան մը միջոցաւ բոլոր ազգերը պիտի օրհնուին (Ծննդ . ԻԲ . 18) . ' Ի վերջոյ մարգարեացուեցաւ թէ ասիկա ոչ թէ այն ժողովուրդին կրօնքին, այլ նոր ուխտի մը միջնորդութեամբ պիտի ըլլայ (Երեմ . ԼԱ . 31—34 ; ԼԲ . 40 ; Եղեկ . ԼԷ . 26 ; Միք . Դ . 1) , և թէ՛ բոլոր Հրէից ազգը չէ որ աս փոփոխութիւնը պիտի կատարէ, այլ այն ազգէն եկած մէկը, որ միանգամայն իր համազգիներէն անարգուելով և դատապարտուելով պիտի սպանուի, բայց յետոյ ընդարձակ թագաւորութիւն մը պիտի հաստատէ (Ես . Թ . 6 . ԺԱ . 1 : ԵԳ . 3—12 ; Եղեկ . ԼԴ . 23) :

Հին Վտակարանը միւսնոյն յոսակ կերպով կը խօսի այն անձին մարդկային և աստուածային բնութեանը վրայ . կ'իմացնէ թէ անիկա պիտի գայ Իսահակէն և ոչ Իսմայելէն . Յակոբէն՝ և ոչ Եսաւէն . Յուդայէն՝ և ոչ Ռուբենէն որ Յակոբայ որդւոցն անդրանիկն էր, ոչ ալ քահանայական ցեղին նահապետէն՝ Ղևիէն . վերջապէս յայտնի կ'ըսէ թէ անիկա Յեսուէի կրտսեր որդիէն Դաւթէն պիտի գայ (Ա թագ . ԺԶ . 11 : Երեմ . ԻԳ . 5) : Կը ցուցնէ նաև անոր դա-

լուսն ժամանակը (Ծանց. ԽԹ. 10. Դան. Թ. 24, և այլն : Անգե Բ. 6—9), անոր ճննդեանը տեղն ու պարագաները (Միք. Ե. 2 : Ես. Է. 14), անոր մարգարէի, քահանայի և թագաւորի պաշտօնները (Սաղմ. ՃԺ. Ես. 45. 1 : Զպք. Զ. 13), անոր պաշտօնին ուր սկսիլը (Ես. Թ. 1, 2. բաղդատէ Մատթ. Դ. 14—16), անոր հրաշքները (Ես. ԼԵ. 5, 6), չարչարանքն ու մահը (Սաղմ. ԻԲ. 1—18 : Ես. ԾԳ. 1), յարուժիւնն ու համբարձումը (Սաղ. ժԶ. 9—11 : ԿԼ. 18), Ս. Հոգւոյն զրկուիլը (Յովէլ Բ. 28) և Քրիստոսի յայտնած ճշմարտութեանը վերջապէս ընդհանուր տարածուիլը (Սաղմ. Բ. 6—8. ԻԲ. 27—31 : Ես. Թ. 7 : ԾԳ. 11, 12) : Այսպէս հարիւրէ աւելի բացայայտ մարգարէութիւններ կան, որոնք Քրիստոսի անձին կամ գործին կը վերաբերին :

Աս մարգարէութիւններէն շատերը Քրիստոսի գալէն գոնէ 600 տարի առաջ եղած են, և մեծ մասն ան ատեն անհաւանական, նա մանաւանդ իրարու հակասական կ'երեւային, և բոլորն ալ այնպէս զարմանալի են որ առանց Եստուածային իմաստութեան և զօրութեան եղած չեն կրնար ըլլալ : Մեծ աշխարհակալի մը վրայ կարծեօք ընդհանուր և հարեանցի գուշակութիւն մը ընել՝ մարդու մը կարելի է. բայց Քրիստոսի անձին վրայ պատմուած այն մանրամասն և իրարու հակասական երեցող գուշակութիւնները ան միայն կրնայ ընել որ ամէն բան իր կամայք խորհուրդին պէս կը կատարէ : Եւ երբ Քրիստոս աշխարհի վրայ երեցաւ, անոր անձին վրայ առաջուց ցուցուած այն բաղմամբիւ նշանները կատարուած տեսնուեցան. անանկ որ կրնայ ըսուիլ թէ՛ անիկա երեցաւ այնպէս և անոր համար՝ ինչպէս և ինչու համար որ Աստուած առաջուց ըսած էր «Յուրբերուն բերնովը, որոնք աշխարհի սկիզբէն ՚ի վեր անոր մարգարէներն էին» (Ղուկ. Ա. 70) :

Հրէից և անոնց սահմանակից ազգերուն վրայով Հին Յատկարանին մէջ եղած մարգարէութիւններն այն ազգերուն պատմութեանը հետ բաղդատելով, նոյնպէս բաղդատելով մանաւանդ Սուրբ Գրոց մէջ Քրիստոսի վրայով եղած

գուշակութիւններն անոր վարուցքը, վարդադեաութիւններուն, հրաշքներուն, անոր մահուանը եղանակին, անոր թագաւորութեանը հաստատուելուն ու տարածուելուն պատմութեանը հետ, առ բազդաաութիւններն ընելով, կ'ըսենք, ամէն ողջամիտ քննող պիտի համոզուի թէ այն մարգարէութիւններն Աստուածային ազդեցութեամբ եղած են. ուստի և անոնց հետ մէկտեղ հրամայուած պատուէրներն ու հրամանները՝ նմանապէս աստուածային հեղինակութիւն ունին :

Սուրբ Գրոց աստուածային հեղինակութիւն ունենալուն վրայ մեր մինչև հիմա անոնց մէջ պատմուած հրաշքներէն կամ մարգարէութիւններէն յուռաջ բերած փաստերէն զատ՝ ուրիշ փաստ մ'ալ կայ, որ Սուրբ Գրոց բարոյական յատկութեանցը վրայ կը կայանայ :

Եթէ Աստուածաշունչն Աստուծմէ չէ, հարկ է թէ խաբէութեամբ հնարուած առասպել մը եղած ըլլայ, և մեր լուծելու խնդիրը սա է թէ առ երկուքէն ո՞րն աւելի հաւանական է. այսինքն թէ՛ Աստուածաշունչն աստուածային ազդեցութեամբ գրուած է, թէ խաբեբաներու գործ է : Թէպէտ հարևանցի տեսութեամբ այնպէս կ'երևնայ որ մննք գծուարաւ կրնանք որոշել թէ Աստուծմէ եղած յայանուութիւն մը ի՞նչպէս պիտի ըլլայ, բայց և այնպէս սա երկուքէն մէկը կամ միւսը որոշելն, այսինքն թէ՛ Սուրբ Գրոց սորվեցուցածներն աստուածային ազդեցութեամբ թէ խաբեբաներու գործ է, այնպիսի խնդիր մըն է, զոր ամէն մարդ կրնայ դիւրաւ լուծել :

Սուրբ Գրոց բարոյականութեանն առաջին յատկութիւնը սա է որ սրբութեան միշտ մեծ կարևորութիւն կու ապայ : Մարդոց հնարած կրօնական դրութիւններուն վրայ մեր ունեցած տեղեկութեա՛ր նայելով՝ գիտենք որ, եթէ Աստուածաշունչն սորվեցուցած կրօնքը մարդոցմէ եղած ըլլար, կամ ծեսեր և արարողութիւններ միայն պահանջած պիտի ըլլար, և կամ սորվեցուցած պիտի ըլլար թէ բարեգործութիւն համարուած քանի մը գործողութիւններ՝ բարոյական պարաւորութեանց տեղը կրնան բռնել : Այս-

պէս, օրինակի համար, Հնդկաց կրօնքը ծիսական պաշտօն կատարողներուն մեծամեծ վարձեր կը խոտտանայ. Հրէից ազանդներն ալ կը սորվեցնէին թէ քանի մը մարդկային աւանդութեանց պահպանութիւնը՝ բարոյական օրինաց պահպանութենէն աւելի արժէք ունի: Ընդ հակառակն՝ Սուրբ Գիրքը բոլոր մարդոցմէ սրտի և վարուց որբութիւն կը պահանջէ, և յայտնապէս կը վճռէ թէ աւանց սրբութեան մարդ մը չի կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ (Եբր. ԺԲ. 14: Մատթ. Ե. 8: Բ Կորնթ. Է. 1: Ա Պետր. Ա. 15, 16: Սաղմ. ԻԳ 3, 4). և թէ՛ ուրիշ օրեկիցէ դօրծ կամ խօզք՝ առաքելութեան տեղը չի կրնար փոխանակել. այնպէս որ Քրիստոսի անունով քարոզողներ անգամ ըլլանք, եթէ անօրէնութիւն գործողներ ենք, պիտի չընդունուինք (Մատթ. Է 22, 23: Ա Կորնթ. Թ. 27), ուստի և ճշմարիտ հաւատք դաւանիլը՝ մարդուս զրայ Քրիստոսնէական օրբութիւն ոտանայու անհրաժեշտ պարտքը կը գնէ (Յիւս. Գ. 8):

Սուրբ Գրոց օտրվեցուցած բոլոր բարոյական պարտաւորութիւններն այն տեսակ պարտաւորութիւններ են՝ որոնք մարդս չէր կրնար ինքնին գտնել կամ ընդունելի համարել: Հռոմայեցիք իրենց զինուորական փառացքը, Յոյնք ալ իրենց բարձր իմաստութեանը զրայ կը պարծէին. իսկ Հրեայք զիրենք Աստուծոյ ռեպտական և միմիայն ժողովուրդը համարելով՝ թէ՛ իրենց իշխողները (Հռոմայեցիները), և թէ առհասարակ բոլոր Հեթանոս աշխարհը կ'ատէին: Հարկ էր որ խաբէութեամբ կրօնք հաստատող մը առ ազգերէն մէկուն դրութեանը կուսակից ըլլար. անոնց մէջ գտնուած ազանդներուն մէկը շողոքորթելով՝ միւսներուն յանցանքները խայտառակէր, և կամ, եթէ այնպիսի մէկը Հրէից մէջ ըլլար, տիրող ժողովուրդը բամբասելով իր ազգը շողոքորթէր: Քրիստոս ասոնց մէկն ալ չըրաւ. առնիկա եկաւ իբրև անաչառ վարդապետ մը. ամէն սխալմունք յանդիմանեց, ամէն ազանդ դատապարտեց, ժողովուրդին օիրտն իրեն գրաւելու համար շողոքորդութիւն չըրաւ: Առնիկա մարդոց կը պատուիրէր չարի տեղ բարի հատուցանել, իրենց թշնամիները օիրել, խոնարհ և ներսող ըլլալ:

ամեն ջեղի և միճակի մարդիկ Աստուծոյ առջևը հաւատար համարել : Թէպէտ ոչ ոք ասոնք կ'ընդունէր, անիկա աւակուին սաստիկ ստիպմամբ և յարատեւութեամբ կրկին և կրկին նոյն բաները կը պատուիրէր :

Արդարև մարդիկ միշտ պատրաստ են բարձր առաքինութիւններ գովել և պատուիրել . հին փիլիսոփայք իրենց և իրենց քաղաքացիներուն վրայ աեոնուածէն շատ աւելի ազնուական առաքինութիւններ պահանջող ճառեր գրած են . ստիկա ճշմարիտ է : Եւ եթէ Նոր Ասակարանին հեղինակները փիլիսոփայութիւն սորված ըլլային, անոնց հասարակ մարդոց ունեցածէն աւելի բարձր բարոյականութիւն մը սորվեցուցած ըլլալը զարմանալի պիտի չըլլար : Անոնք ոտգէտ մարդիկ" էին . բայց և այնպէս անոնց աուած պատուէրները կամ սկզբունքները ոչ միայն մարդոց գործադրածէն, հապա նաև ընդունելի համարածէն ալ վեր են : Աւետարանը ոչ միայն մարդոց սովորապէս ընդունած բարի վարքէն լաւագոյն, այլ և շատ անգամ անոնց ընդուածին հակառակ վարք ունենալ կը պատուիրէ : Չարչարանաց համբերելը, վնասի ներելը, հեզ և հնազանդ հոգի ունենալը, ոչ միայն մարդոց գործադրած սկզբունքներ չէին, հապա անոնց սիրելի ալ չէին : Աւետարանն առ աեոակ պարաաւարութիւններ սորվեցնելուն հետ կը պահանջէ միանգամայն որ մարդիկ զիրենք նուաաստ գործողութիւններէ ետ պահող վսեմ հոգի մը ունենան : Ասիկա մարդոց անծանօթ էր . և, ըստ կարծեաց աշխարհի, այսպիսի հոգի մը Սուրբ Գրոց պատուիրած այն խոնարհութեան և համբերող առաքինութեանց հետ չի կրնար մէկտեղ ըլլալ :

Բաց ասկէ, Սուրբ Գիրքը կը ջանայ նաև մարդոց Խորհորհոր ու շարժարթիւնները կանոնաւորել . և ամէն բանէ առաջ կը պահանջէ որ անոնք Աստուծոյ կամացը համաձայն ըլլան : Ժողովուրդը խաբել ուզող չար մարդիկ այնպիսի սկզբունքներ չէին կրնար սորվեցուցած ըլլալ . և եթէ այն սկզբունքներուն հեղինակը սքուգիւ Աստուած չըլլար, բարի մարդիկ ալ զանոնք սորվեցնելու ատեն չէին ըսեր թէ զանոնք Աստուծամբ առնելով կը պատուիրեն, ինչպէս որ

Սուրբ Գրոց հեղինակները կ'ըսեն : Ապա ուրեմն շատ յայտնի է թէ Սուրբ Գրոց բարոյականութիւնը մարդկային չէ :

Սուրբ Գրոց բարոյականութեանը մէջ ուրիշ յատկութիւններ ալ կան որ ինքնին ճշմարիտ, միանգամայն նշանաւոր են : Հոն մեղաց համար միշտ բտուած է թէ Աստուծոյ դէմ չարութիւն է . և ամէն բարի բաներու գովութիւնը միշտ Աստուծոյ փառքն արուած է , և ոչ մարդկային միջոցի կամ պատճառի մը : Առաջինը , այսինքն՝ մեղքին Աստուծոյ դէմ չարութիւն ըլլալուն վարդապետութիւնը , հետեանսական փիլիսոփայութեան հետ չի համաձայնիր : Կիկերոն կ'ըսէ թէ "Փիլիսոփաներուն ընդհանուր սկզբը ըսնքն է թէ Աստուած բնաւ բանի մը համար չի բարկանար , ոչ ալ մարդոց փեսա մը երեք կը հասցնէ : Ընդհակառակն՝ Սուրբ Գրոց վարդապետութեանը նայելով՝ Ամադեկացւոց (ԵԼ . ԺԷ . 16) , Սենեքերիմ (Դ թագ . ԺԹ . 22—37) և Բազատասար թագաւորներուն (Դան . Ե . 23) պատահան՝ անսոց մեղացը համար էր : Մեղաց համար էր Հեղիին (Ա թագ . Բ . 29, 30) ու Դաւթի (Բ թագ . ԺԲ . 9—12 : Սաղմ . ԵԱ . 4) պատիժը : Մեղաց համար էր Նազարայ և Արիւղի (ՂԼտ . Ժ . 1—3) , Ողային (Բ թագ . Զ . 7) ու Հերովդեսին (Գործ . ԺԲ . 23) մահը : Մեղաց համար էին Սոզոմանին թշուառութիւնները , անոր թագաւորութեանը բաժնուիլը : Յուդայի և Իսրայէլի գերութիւնն ու թագաւորութիւններուն կործանումը (Գ թագ . ԺԱ . 3—14 . Դ թագ . ԺԷ . 14—23 : Բ Մնաց . ԼԶ . 16, 17 : Ղուկ . ԺԹ . 42—44 : Հում . ԺԱ . 20) :

Երկրորդը , որ է Աստուծոյ միայն տալ ամէն գովեստ և ոչ մարդոյ , մարդկային սրտին բնական յօժարութեանը հետ չի կրնար միաբանիլ , Խաբեբայ վարդապետ մը սովոր է հրատարակել միշտ թէ ինք "մեծ մէկ մըն է" (Գործ . Ը . 9) . Իսկ բոլոր Սուրբ Գրոց ամենէն մեծ նպատակն է՝ մարդոց խորհուրդներն Աստուծոյ միայն առաջնորդել : Այսպէս ըրած են՝ Մովսէս (Բ Օրի . Ա . 81 : Բ . 33 : Գ . 3 : Դ . 32—38 : ԵԼ . ԺԸ . 8) , Յեսու (Յես . ԻԳ . 3) , Դաւիթ (Ա Մնաց . ԻԹ . 11 . 14) , Դանիէլ (Դան . Բ . 20, 23 . 30) ,

Եզրաս (Եզր . Է . 28), Նէեմիա (Նէեմ . Բ . 12), Պետրոս և Յովհաննէս (Գործ . Գ . 12—16), Պօղոս (Գործ . ԻԱ . 19, Ա Կորնթ . Գ . 5—7, Բ Կորնթ . Դ . 7) : Մարգոց միտքերն աւ Աստուած ուղղելու համար Սուրբ Գիրքն ազգերու յեղափոխութիւններն ու յառաջադիմութիւնները (Ես . ԽԴ . 28 : Եր . ժԷ . 7—10 : ԻԵ . 9 : Դան . Դ . 35) : Ընտելեան հասարակ գործողութիւններն անգամ (Սաղմ . ճԴ . 5—30 : Եր . Ե . 24 : Յովել . Բ . 23—25 : Մատթ . ձ . 29) իբրև Աստուծոյ գործը կը ներկայացնէ : Աստուածաշունչը դարձեալ Աստուծոյ հաւատալը, այսինքն՝ անոր օտարագեւեացն անսահման կատարելութեանը և անոր պատուէրներուն արդարութեանը վրայ հաւատք ունենալն՝ ամէն հնազանդութեան հիմը կը համարի, և կը պահանջէ որ մարդիկ զգան և ճանչնան թէ արդարութիւն գործելու զբոլութիւն սասանալու համար Աստուծմէ կախում ունին . այնպէս որ անոր օգնութեամբն ամէն բան կրնան ընել, իսկ առանց անոր օգնութեանը՝ ոչինչ (Եփես . Բ . 8, 9 : Եբր . ձԱ . 6 : Փիլիպ . Դ . 13 : Բ Կորնթ . ձԲ . 9 : Յովհ . ձԵ . 5) :

Սուրբ Գրոց մատենագիրներուն պարզմտութիւնն ու անկեղծութիւնն ալ դիտողութեան արժանի են . այսպիսի բնաւորութիւն մը մօլեռանդ կամ խարեբայ մարգոց վրայ դժուարաւ կը տեսնուի : Յիշեալ մատենագիրներն իրենց ժողովուրդին մեղքերը կը հրատարակեն : «Չեզ ճանչցած օրէս 'ի վեր' Ցէրօջը անհնազանդ էք», կ'ըսէ Մովսէս Խրայէլի ժողովուրդին (Բ Օրի . Թ . 24) . անկէ ետքի մարգարէներն ալ նոյնպէ՛ճ ըրած են (Դաս . Բ . 19 : Ա Թագ . ձԲ . 12 : Նէեմ . Թ) : Միւսոյն անաչառութեամբ կը յայտնեն նաև թէ՛ իրենց և թէ՛ ուրիշ երևելի անձանց պակասութիւնները . եթէ խարեբայ ըլլային, իրենց գործին յարզը չկոտորելու համար՝ թէ՛ իրենց և թէ՛ այնպիսի յարզոյ անձանց թերութիւններն անշուշտ ծածկած պիտի ըլլային : Մովսէս՝ Նահապետաց (Ծննդ . ձԲ . 11—13 : Ի . Ա), նաև իր նախնայն Ղևեայ (Ծննդ . ԽԹ . 5—7), իր եղբօրն Ահարօնի և անոր երէց սրբուսը (ԵԼ . ԼԲ : Ղևա .

ձ) մեղքերը յայտնի կ'ընէ. դարձեալ նոյն պարզմտու-
թեամբ կը պատմէ նաև իր մեղքերը (Թու. Ի. 12: ԻԷ.
12—14: Բ Օրհ. ԼԲ. 51, 52), և կը մարգարեանայ
թէ Հրեայք իր օրէնքները պիտի չպահեն, և թէ իրեն
պէս մարգարէ է՞ր պիտի գայ (Ծննդ. ԽԹ. 10: Բ Օր.
ժԸ. 15. 18: Գործ. Է. 37):

Սոյն պարզմտութեամբ Աւետարանիչները կ'իմացնեն ի-
րենց և ուրիշ Առաքելոց մեղքերը (Մատթ. ԻԶ. 31—56:
Ը. 10. 26: ԺԵ. 16: ԺԶ. 7—11: ԺԸ. 3: Ի. 20—28:
Մարկ. Զ. 52: Ը. 17, 18: Թ. 32—34: Ժ. 13. 14:
ԺԴ. 27—31. 35—45. 50: ԺԶ. 14: Ղուկ. Ը. 24, 25:
Թ. 40—45: ԺԸ. 34: ԻԲ. 24: ԻԴ. 11): Միևնոյն
ճշմարտախօսութեամբ Սուրբ Գիրքերը մեր Տէրոջը խոնար-
հութիւնը, չարչարանքն ու երեսէ ձգուիլը կը պատ-
մեն (Մատթ. ԻԷ. 46: Եբր. Ե. 7): Առաքեալք իրենց
կազմած Եկեղեցիներուն երկպառակութիւններն ալ առանց
աչառութեան կը յիշեն. կ'ըսեն նաև թէ իրենց առաքե-
լական իշխանութեանը վրայ վէճեր ունեցած են (Ա Վորնթ.
Ա. 11, 12: Ե. 1: Բ Վորնթ. Բ. 4: ԺԱ. 5—23: ԺԲ.
20): Այս անկեղծ անաչառութիւնն Աստուածաշունչին
որոշիչ յատկութիւնն է, և ընթերցողը կը համոզէ թէ
անոր հեղինակները «խորամանկութիւնով չէին վարուեր,
հասկա ճշմարտութիւնը յայտնելով՝ անձերնին մարդոց
ամէն խղճմտանքին կ'ընծայէին Աստուծոյ առջևը» (Բ
Վորնթ. Դ. 2):

Բայց Աստուածաշունչին վրայ եղած այս խորհրդածու-
թիւններն անոր բարոյականին վրայ կատարեալ զաղափար
մը չեն կրնար տալ. պէտք է որ անիկա ամբողջապէս ու-
րիշ մարդկային վարդապետութեանց հետ բաղդատենք:
Արտաքիններէն ոմանք առաքինութեան ընդհանուր սկզբ-
բունքներուն, ոմանք ալ մարդուս որտի՞ն բարոյական
զգացմանցը դիմելով՝ զանազան դրութիւններով սրբու-
թիւն յառաջ բերել ջանացած են: Բայց բոլոր այս ջան-
քերը պակասաւոր եղած են: Առաքինութեան ընդհանուր
սկզբունքը միայն մարդոց խորհրդածութեանը կամ փիլի-

սոփայութեան արդիւնք ըլլալով՝ իրենց մէջ պահանջուած սրբութիւնը գործադրել տալու իշխանութիւն կամ ազգեցութիւն չունին : Մեր բարոյական զգացումներուն դիմին ալ անօգուտ է . անոնք շուտով կը ցնդին և կ'ունչանան , կամ՝ զօրաւոր կիրքերէ դիւրաւ կ'ապականուին . քանզի մեր զգացումները մեր կիրքերուն շատ մօտ ըլլալով՝ ամենէն աւելի տկար են կիրքերուն գրգռուած ատենը . ան ատեն՝ որ մնիք ամենէն աւելի սանձի պէտք ունինք : Իսկ բարոյականի դրութիւններն , իմացականութեան բոլոր գործողութիւններուն պէս , մեր մտաւոր կարողութիւններուն կատարելութենէն կախում ունին , ուստի և շատ զօւժաբի՛ն է որ այն դրութիւնները մեզի սուրբ վարք ունենալու զօրաւոր շարժառիթ ըլլան : Գարձեալ յիշեալ գրութիւնները պակասաւոր են , ըստ որում ոչ մեր ինկած զիճակը կը յիշեն , ոչ ալ անկէ կանգնելու դարմաններուն հնարքը կը ցուցնեն . ուր , ընդհակառակն , Սուրբ Գիրքը թէ՛ մեր անկումը և թէ՛ մեր կանգնման դարմանները կը դիտէ , և Քրիստոսն էին իմացնելով կ'ըռէ թէ ան դարմանները Աստուծոյ խօսքէն միայն կրնայ սորվիլ : Սուրբ Գիրքը մեր անկումը մեզի ճանչնալ տալով կը սկսի . յետոյ մեր խիղճը լուսաւորելով մեր մեղքերը մեզի կ'իմացնէ , և մեր բնական ազդումները՝ բանականութեան , բանականութիւնը՝ սիրոյ , սէրն ալ Աստուծոյ հպատակ ընելու ջանալով՝ մեր զգացումները կը կենդանացնէ և կը մաքրէ , և այսպէս յառաջ կը բերէ այնպիսի առաքինութիւն մը որ այնչափ գործնական և գործունեայ է , որչափ որ այն յայտնեալ ճշմարտութիւնները՝ որոնք անոր հիմունքն են , երկրաւոր ըլլալէ հեռու են :

Սուրբ Գրոց ոչ թէ մարդոցմէ այլ Աստուծմէ յառաջ եկած ըլլալուն ամենէն զօրաւոր բարոյական ազացոյցներէն մէկն ալ Քրիստոսի բնաւորութիւնն է : Բայց աս ապացոյցը կը զգացուի մանաւանդ , քան թէ կը բացատրուի . և անոր ազդեցութեան աստիճանը՝ կարդացողին ինչ աստիճանի բարոյական զգացողութիւն ունենալէն կախում ունի : Մարդ մը որչափ աւելի սուրբ և մաքուր է , աս փաստին

զորութիւնն այնչափ աւելի կը զգայ : Անոնք որ Նաթա- նայէլի պէս «Իրաւքնէ Իորայէլացի են, որոնց ներսը նեն- գութիւն չկայ», նոյն Նաթանայէլին հետ պիտի աղաղա- կեն . «Դա՛քբի՛ դուն ես Աստուծոյ Որդին, դուն ես Իս- րայէլի Թագաւորը» :

Առաքեալք իրենց Ցէրը ճանչցող մարդոց վկայութիւնն անոր բարոյականութեանը փաստ կը բերեն, իբր թէ անոր բարոյականութիւնը նշանաւոր և ամենէն ընդունուած ի- ռոզութիւն մըն էր : Քրիստոսի ունկնդիր եղող հասարա- կութեան՝ անոր բարոյական վարդապետութեանը մէջ ա- թառ մը չգտնելով՝ անիկա լուութեամբ մտիկ ընելն ալ՝ անոր սրբութեանը յայտնի ապացոյց է . քանզի, եթէ Քրիստոս իր դատապարտած գործքերն ինք գործած ըլլար, անոր մտիկ ընողներն՝ անոր խօսքին ու գործքին մէջտեղ եղած հակասութիւնն անշուշտ երևան հանած և անոր ե- ընող զարկած պիտի ըլլային . բայց Քրիստոսի հակառա- կորդներն անգամ անոր գերազանց բարոյականին գէ՛մ՝ ըսե- լու բան մը չունեցան :

Քրիստոսի սրբութեանն ընդհանրապէս ճանչցուած կամ ընդունուած ըլլալը հետևեալ վկայութիւններէն կը տես- նուի . Յովհ. Է. 46—51 : Ը. 46 : Ժ. 32 : Մատթ. ԻԶ. 19 : ԻԷ. 23, 24 : Ղուկ. ԻԳ. 13—15 : Գործ. Գ. 13, 14 : Ա Պետ. Բ. 21—23 : Անոր բարերարութիւնն ու կարեկցութիւնը կը յիշուին Յովհ. Դ. Ղուկ. Թ. 55 : Ժ. 30—37 : Մարկ. Է. 24—37 : Ժ. 13—21. 45—52 : Ղուկ. ԺԳ. 16 : ԺԴ. 12 : ԻԲ. 50, 51 : Մատթ. Թ. 36, Ը : ԺԸ. 11, Ը : Քաղցրութիւնն ու սէրը պատ- մուած է Մատթ. ԺԴ. 27—31 : Ղուկ. ԺԹ. 5 : ԻԲ. 61 : Յովհ. ԺԱ. 25—27 : 33—35 : Հեղութիւնն ու խո- նարհութիւնը՝ Մատթ. Թ. 28—30 : ԺԸ. 22, Ը : Ե. 1—12 : Ղուկ. ԻԲ. 27. Յովհ. ԺԳ. 4 : Բարոյական քա- ջութիւնը, անդրդուելի հաստատութիւնն ու Աստուծոյ կամայքը հպատակութիւնը՝ Մատթ. ԻԶ. 39—46 : Մարկ. Ժ. 32 : Ղուկ. Դ. 23, Ը : ԺԳ. 31, Ը : ԺԸ. 31 : Յովհ. ԺԱ. 7 : ԺԸ. 4, Ը : Պարզմտութիւնը, կեղծա-

ւորութենէ և մարդահաճութենէ գարշումը՝ Մատթ . 2 . 1—18 : ձ . 16—39 : Իբ . 18 , Ա : Մարկ . ձԲ . 38—40 : Ղուկ . ձԱ . 44 : Ա : Յովհ . ձԶ . 1—6 : Հանդարտութիւնն ու մելեքանդ խոտակեցութենէ հեռու ըլլալը՝ Մատթ . Ը . 20 : ԻԳ . 23 : Ղուկ . Ե . 29—35 : Յովհ . Բ . 1 , Ա : Մարկ . ձԲ . 17 :

Սուրբ Գրոց բարոյականին նկատմամբ գիտելու ուրիշ կէտ մ'ալ կայ . այն է՝ Սուրբ Գրոց սորվեցուցած կրօնքին մարդուս վրայ յառաջ բերած արդիւնքը : Այս ազդեցութեան սրբիտութիւնը ցուցնելու համար քանի մը իրողութիւններ մէջ բերել բաւական կը համարինք :

Առաջին դարուն մէջ Աւետարանին արդիւնքներն աղէկ ճանչուած էին , և Առաքելոց Թուղթերուն մէջ յիշուած են : Պօղոս Կորնթոսի և Եփեսոսի մէջ պատահածները կը նշանակէ (Ա Կորնթ . 2 . 11 : Եփես . Դ . 20 , Ա : Բ . 1) : Պետրոս ալ՝ Պնտոսի և Գաղատիոյ մէջ յառաջ եկած արդիւնքները (Ա Պետ . Դ . 3) : Ապականեալ դարու մը մէջ և ամենէն գէշ կառավարութեանց տակ , Քրիստոնեայք՝ (որոնք առաջ ուրիշ մարդոցմէ լուսագոյն չէին ,) այն աստիճան բարձր առաքինութեան հասան՝ որմէ վեր երբէք մարդ չհասաւ :

Այսպիսի վկայութիւններ հին Քրիստոնէութեան Զատագններուն գրութեանցը մէջ ալ կրնան գտնուիլ : Կղեմէս Հռոմայեցի (յԱմի Յեառն 100) Կորնթացոց գրած Թուղթին մէջ անոնց առաքինութիւնները նկարագրելով կ'ըսէ . "Ո՛վ ձեր մէջը կեցաւ ու ձեր զգաստ և ժուժկալ բարեպաշտութեանը վրայ չզարմացաւ և ձեր հիւրասիրութեան մեծութիւնը չճանչցաւ : Դուք խոնարհ էք , ոչ հպարտ . Աստուծոյ պարգևած օրական հացով գոհ , Աստուծոյ խօսքը փութով մտիկ ընող ու սիրոյ մէջ առատ" : Յուստինոս Վկան (յԱմի Յեառն 165) որ Պղատոնական փիլիսոփայ մըն էր՝ իր Զատագովութեանը մէջ կ'ըսէ . "Ենք որ առաջ շնութեան մէջ կը զուարճանայիւնք՝ հիմա ամենէն խիստ ողջախոհութիւնը կը պահենք . մենք որ մեղական գիւթութիւններ կը գործածէինք՝ հիմա մեր ան-

ձեռքը ճշմարիտ Աստուծոյ նուիրած ենք . մենք որ արծաթն սւ շահն ամէն բանէ աւելի կը յարգէինք՝ հիմա մեր բուրբ ունեցածն հասարակաց բրած ենք , և ամէն մարդոյ պիտոյքն ըստ կարի կը բաշխենք՝ : «Դուք», կ'ըսէ Մինուկիտս Փելիքոս հեթանոս հակառակորդի մը , «դուք՝ չարութիւնը կատարուելէն ետքը անիկա կը պատժէք . մենք՝ մեղանշական խորհուրդ մը մտքէ անցունելն ալ մեզք կը համարինք . բանտերը ձեր ժողովուրդներէն լեցուած են . Քրիստոսնեայ մը չկայ հոն , և եթէ գտնուի , խստովանող մըն է և կամ ուրացող մը՝ : Տերտուղիանոս՝ առաջին Լատին Եկեղեցական Մատենագիրը , որուն գիրքերը մինչև մեզի հասած են , (յԱմի Տեառն 220) աս յիշուածներուն նման վկայութիւն մը կու տայ , ու իբրև Հռոմայեցւոց կայսրութեան մէջ շատ յայտնի գիտցուած բանի մը պէս , Քրիստոսնէսութեան աս ազդեցութեանը վրայ կը խօսի : Որոգինէս՝ Կելսոսի դէմ գրած պատասխանին մէջ (յԱմի Տեառն 245) և Լակտանտիոս Կոստանդիանոսի դաստիարակը (յԱմի Տեառն 325) նոյն վկայութիւնները կը կրկնեն . Յուլիանոս կայսրն ալ Քրիստոսնեաներն օրինակ ցուցնելով՝ հեթանոսները կը յորգարէ որ վարուց սրբութիւն սւ օտարականաց և թըշնամեաց վրայ սէր ունենալու մէջ անոնց նմանող ըլլան :

Աւետարանին ազդեցութիւնը հին ազգերուն մէջ շատ կանուխ տեսնուեցաւ : Յունաստանի մէջ Լիզուրկոս և Սողոն՝ հռչակաւոր Օրէնսդիրներն՝ ամենէն անարգ պրզծութեանց թոյլտուութիւն բրած էին : Հռոմի մէջ ամէն անառակութիւն յայտնի կը գործուէր և ընդունելի էր : Անձնասպանութիւնը գրեթէ բոլոր ազգաց մէջ գովելի համարուած էր : Սենեկա և Պլուտարքոս , Պլինիոս երեց և Կուինտիլիանոս , որ Փիլիսոփայ և խելացի մարդիկ էին , աս սքրագործութիւնը կը գովեն . և Կիպոն Անգղիացի անհաւատ պատմիչն ալ կը վկայէ թէ հեթանոսութիւնն անօր գէմ չմաքաւեցաւ : Մարգարոհն ու նորածին ազաք գուրս թողուլը թոյլ տրուած , նա մանաւանդ պատուիրուած էին : Բայց Աւետարանն ուր որ եկաւ՝ աս գործերը գատապարտեց , զանոնք սանձեց , ու վերջապէս բնաջինջ

ըրաւ : Այս բաներուն քաղաքակրթութեան միջոցով վերջուած չլլալն անկէ յայտնի է որ կրթութեան և լուսաւորութեան մասին ֆրիստոնեաներէն գերազանց ազգերու մէջ անոնք մնացին . անոնց վերնալն ալ միշտ՝ ոչ թէ մարդկային լուսաւորութեան յառաջադիմութեանը , հապա Սուրբ Գրոց ծանօթութեանը մուտ գտնելուն հետ միենոյն քայլով յառաջ գացած է :

Նեղեալները սփոփել , աղքատներու հոգ տանիլ՝ գրեթէ միայն ֆրիստոնեայ ազգերու յատուկ է : Կոստանդնուպոլսոյ մէջ ֆրիստոնէութիւնը մտնելէն առաջ տնանկաց օգնութեան համար շէնք մ'անգամ չկար . ոչ ալ հին Հռոմի մէջ աղքատանոց մը տեսնուած էր : ֆրիստոնէութիւնը մտնելէն ետքը՝ Կոստանդնուպոլսոյ մէջ որբերու , հիւանդներու , պանդուխտներու , ծերերու և աղքատներու համար երեսունէ աւելի յատուկ բնակութիւններ շինուեցան . Հռոմի մէջ ալ նոյն նպատակներուն գործածուելու համար քսան և հինգ մեծամեծ տուներ հաստատուեցան : Ճշմարտութեամբ կրնայ ըսուիլ թէ Աւետարանը ջնջեց բազմակնութիւնը , պատերազմին սոսկումները թեթեւցուց , զերիները փրկեց , ստրուկներն արձրկեց , աւատային հարստահարութեան (տիրիպոյսութիւն) ոգին սանձեց ու բարբարոս ազգաց օրէնքներն աղնուացուց : "Ճըշմարտութիւնն ու անկեղծութիւնը", կ'ըսէ վերոյիշեալ Վիպլան , "կը ստիպեն մեզ խոստովանելու թէ հեթանոս կամ կռապաշտ ազգերուն ֆրիստոնէութեան դառնալն՝ անոնց շատ աշխարհային օգուտներ բերաւ . ուսման և դպրութեան իսպառ մարելն արգիլեց , ժամանակին վայրենութիւնները մեղմացուց , աղքատն ու անտէրունջը պատսպարեց , և քաղաքային ընկերութեան խաղաղութիւնն ու կարգը պահպանեց կամ նորէն կենդանացուց" :

Ինչպէս որ Աստուածաշունչին պահպանուելուն և անկեղծ պահուելուն մէջ Աստուծոյ Նախախնամութիւնը , այնպէս ալ նոյն Գրքին յառաջ բերած արդիւնքներուն մէջ Աստուծոյ գործելը կը տեսնուի , և այն արդիւնքներն Աստուածաշունչին աստուածային յայտնութիւն ըլ-

լալուն զօրաւոր վկայութիւն են : (Ա թեա . Ա . 4—10 .
Պատղ . Ե . 22, 23 .)

Բայց Սուրբ Գրքին բարոյական փաստէն զատ ուրիշ բոլորովին հոգեւոր փաստ մ'ալ կայ . Բարոյական փաստն ինչպէս ըսինք , Նոր Կտակարանին բարոյականութեանը , մեր Յէրոջը սրբութեանը , վերջապէս Քրիստոսնէական սիրգ բունքներուն մնորդոց մէջ յառաջ բերած արդիւնքներուն վրայ կը կայանայ . իսկ հոգեւոր փաստ ըսուածն՝ ըստ մասին յայնմ կը կայանայ , որ մարդոց իրենց մէջը զգացածն՝ Աստուածաշունչին անոնց հոգեւոր վիճակին վրայով ըսածին՝ կատարելապէս համաձայն է : Աւետարանը վճռելով թէ մարդկային ընութիւնը բոլորովին ազականուած է , ոչ միայն մարդոց գործած յանցանքները կը յանդիմանէ , հապա կ'ըսէ նաև թէ մարդուս հոգին՝ խորունկ արմատացած ամբարշտութիւն մը ունենալով՝ հիմնական նորոգութեան մը կարօտութիւն ունի : Եթէ մարդիկ իրենց զգացումներուն վկայութեամբը կարենային ըսել թէ Աւետարանին աս վճիռները սխալ են , և թէ իրենց կամքն Աստուծոյ կամացը հնազանդեցնելու , և իրենց անձնատիրութիւնն ու ամբարտաւանութիւնը յանդիմանող պատուէրներուն հպատակելու հակամէտ են , կրնային Աւետարանին Աստուծմէ ըլլալը չհաւատալ : Բայց՝ ոչ սք կրնայ ուրանալ թէ Աւետարանին խօսքերն իր վիճակին հետ ճշդիւ համաձայն են , եթէ որչափ աւելի մտադրութեամբ քննէ , այնչափ աւելի յիշեալ համաձայնութիւնը կը տեսնէ և կ'զգայ , ուստի և այն պատգամին ճշմարտութեանը համար իր մէջը շատ ազգու վկայութիւն մը կ'ունենայ :

Նոյն փաստին ուրիշ մէկ մտքը կը կայանայ յայնմ որ մարդու Աւետարանին ջրուցած գարմաններն իր վիճակին համաձայն կը գտնէ : Յանցաւոր է , ապա թողութեան կարօտ է . ապականուած է , ուրեմն սրբութեան կարօտ է . փորձութիւններէ պաշարուած է , ուրեմն զօրութեան պէտք ունի . ասուպանաց և փոփոխական աշխարհի մէջ կ'ապրի , ուրեմն աշխարհի անոր տուած բաժնէն աւելի գոհացուցիչ բաժնի մը կարօտ է . մահկանացու ըլլալով՝

մահէն կը վախնայ, ուրեմն ուրիշ կեանքի մը պայծառ յայտնութեանը կը ցանկայ : Եւ ահա Աւետարանը բուրբ աս կարօտութիւնները կը լեցընէ : Անիկա յանցաւորին՝ թողութիւն, ապականելոյն՝ սրբութիւն, փորձութեան մէջ գոնուողին՝ յաղթութիւն, և մահուան վախէն բռնուողներուն՝ կենաց աւետիս տուող պատգամն է :

Աւետարանին անօրէնութեանցն ու պատուէրներուն մարդուս կարօտութեանը հետ կատարեալ յարմարութիւն ու նենայէն զատ, նշանաւոր է նաև սոյն այս տնօրէնութեանց ու պատուէրներուն արդիւնքներուն վրայով՝ Աւետարանին ըսածներուն ու Քրիստոնէից փորձառութեամբ սորվաներուն մէջտեղ եղած ճիշդ համաձայնութիւնը : Սուրբ Գրոց մէջ Աստուծոյ խօսքին հնազանդելէն յառաջ եկող արդիւնքներուն կրկին և կրկին նկարագրութիւններն ու խոտուամները՝ կանխաւ զրուցուած գուշակութիւններ են, որոնք Քրիստոնէին կենացը մէջ ամէն օր կը կատարուին : Ապաշխարութիւնն ու անոր պտուղները, Աստուծոյ խօսքին հնազանդիլն ու այն հնազանդութենէն հանապաղորդ ծագած լոյսն ու խաղաղութիւնը, աղօթքին ազդուութիւնը, Քրիստոնէական ճշմարտութեան մարդուս մտքին, օրտին և բնաւորութեանը վրայ ըրած ազդեցութիւնը, մարդուս ջանքերն ու յաղթութիւնները, նաև նոր կեանքին թերութիւնները, բոլորն ալ հոն նկարագրուած են, և նորագեալ Քրիստոնէից փորձառութեանը համաձայն ըլլալով՝ Սուրբ Գրոց Աստուծոյ ըլլալուն առաջին կարգի վկայութիւն են . այնպիսի վկայութիւն մը՝ որ Քրիստոնէին հօգևորած մանր հետ կ'աճի, ու այնչափ յառաջ կ'երթայ, որչափ ինքը ճշմարտութեան գիտութեանն ու սիրոյն մէջ կը յառաջանայ : Մարդկային իմաստութեան գործ չէ այսպէս ճշդիւ ճանչնալ մեր բարոյական վիճակը, ու գուշակել այն փոփոխութիւնը, զոր Աստուծոյ խօսքը կրնայ յառաջ բերել : Աւրեմն յայտնի է թէ Աստուած ինք հեղինակ է այն Գրքին՝ որուն մէջ աս ճանաչումը կը տեսնուի :

Թէպէտ բոլոր մարդիկ՝ իրենց ապականեալ վիճակին ու Սուրբ Գրոց աս նկատմամբ ըսածներուն մէջտեղ եղած հա-

մաձայնութիւնը տեսնելու կարողութիւն ունին, բայց և այնպէս կ'ընենք թէ աս փաստը գլխաւորապէս Աստուծոյ կամբը կատարելու փափաքող Քրիստոնեան կը համոզէ, քանզի ոչ ոք իրեն չափ անոր ուժը կրնայ գիտնալ կամ հասկընալ: Այս փաստը Հաւատացեալին համար այնպէս ազդու է որ ուրիշ ամէն փաստ կը գերազանցէ: Քրիստոնէութեան և անհաւատութեան մէջտեղ եղած հին վէճերը՝ Հաւատացեալին համար չնչին բաներ են. անիկա կը զգայ ան վարդապետութիւններուն ճշմարտութիւնը, որոնք ուրիշներուն համար ապացուցուելու կարօտ են: Անիկա անոնց «վկայութիւնը իր մէջը ունի»:

Կրնանք աւելցնել նաև թէ աս փաստին զօրութիւնը կը ճանչցուի մանաւանդ Քրիստոնէութեան Հաւատացեալին մէջ սրբութիւն յառաջ տանելէն՝ քան թէ մարդոց կարօտութիւններուն յարմար ըլլալէն: Քրիստոսի երեւցած ասէնը Հրեայք կը զգային թէ երկրաւոր աղատչի մը կարօտ են, բայց չուզեցին այնպիսի Մեսիա մը որ հեթանոսներն ալ անոնց հետ ժառանգ պիտի ընէր: Հնդկաստանցիք և ուրիշ կուսպաշտ ազգեր փաստ չունեցող կրօնքներու յարած են, քանզի զանոնք իրենց ճաշակին յարմար կը գտնեն: Բայց Քրիստոնէութիւնն այս մասին ան կրօնքներէն շատ տարբեր ըլլալով՝ ոչ թէ մեր բնական հակամիտութիւններուն յարմարցուած կը գտնուի, այլ մեր հակամիտութիւններն իրեն յարմարցընելու կը նայի: Երբ Քրիստոնէութիւնն այս մեր հակամիտութիւններն իրեն յարմարցընելուն գործը կը սկսի և յառաջ կը տանի, ան ասէն անոր մարդոյս վիճակին յարմար կրօնք ըլլալը յայտնապէս կը ճանչցուի: Հեթանոս ազգերն իրենց ապականեալ ախորժակներուն յարմար կրօնք մը կը փնտռէին, և անանկ կրօնք մը գտնելուն պէս՝ անիկա ընգտնելով անոր կը հաւատային: Կուսպաշտական դրութիւնները յարմարցուած են մարդու բնական վիճակին, սրուն մէջ կենալ ալ կ'ուզէ, քանի որ մեղաց հակամէտ է: Բայց Քրիստոնէութիւնը յարմար է մարդու թէ բնական վիճակին, քանզի զանիկա ան վիճակէն կ'ազատէ, և թէ անոր նս-

բողեալ վիճակին, ըստ որում աս վիճակին մէջ ալ զանիկա կը զօրացընէ և յառաջ կը տանի: Հեթանոսութիւնը՝ ապականեալ գրութիւն մը ապականեալ բնութեան յարմարցընել է. քրիստոնէութիւնը՝ նորոգուելու կարօտ եղող բնութեան մը կեանք տուող գրութիւն մը յարմարցնել է: Առաջինն՝ իր վարդապետութիւնը մեր ճաշակներուն յարմարցնելու կը նայի, երկրորդը՝ մեր ճաշակներն իր վարդապետութիւններուն. և, ինչպէս որ ըսինք, երբ աս գործողութիւնն իրօք կը կատարուի, ան ատեն Հաւատացեալը քրիստոնէութեան աս զօրաւոր փաստը կը տեսնէ: Երբ կը հաւատայ, հաւատքէն յառաջ եկող յոյսը կ'ունենայ. անոր ետեւէն փորձառութենէն յառաջ եկող յոյսն ալ կ'ունենայ: այն փորձառութենէն՝ որ Աստուծոյ սիրոյն որբացուցիչ ազդեցութեան միջոցովը կ'ըլլայ: Հռով. Ե. 2-Յ:

Բժիշկ մը՝ որուն մահացու հիւանդութիւն մը բժշկել յանձնուած է, աս գործն ընելու երկու ճամբայ ունի. հիւանդութեան արտաքին նշաններուն նայիլ, և կամ բուն իսկ հիւանդութեան դարման ընել: Եթէ առաջինը կ'ընէ, զոր օրինակ եթէ տենդի մէջ հիւանդին միայն ծարաւը մտնել, կամ կաթուածի մէջ ջրային դրութիւնը սգեւորել կը ջանայ, կրնայ ըսուիլ թէ անոր դարմանը հիւանդին կարօտութիւններուն յարմարցուած է. որովհետեւ հիւանդութենէն յառաջ եկած քանի մը ցաւերը վերցուց կամ թեթեցուց. բայց հաւանական չէ թէ այնպիսի դարման մը կրնայ հիւանդն առողջացնել: Ամենէն աղէկ կերպը բուն հիւանդութեան դարման տանիլն է. և բուն դեղ ան է՝ որ հիւանդութիւնը վերցնելու յարմար է: Դեղի մը հիւանդութեան մը յարմար և յատուկ դեղն ըլլալուն ապացոյցը՝ ոչ անորմարդուս քմացն ախորժեղի, ոչ ալ հիւանդին զուարթութիւն տալու յարմար ըլլալն է, այլ անոր հիւանդութիւնը վերցընել և առողջութիւնը հաստատուն կերպով և միօրինակ յառաջ տանիլն է: Դեղին աս արդիւնքն ունենալը՝ անոր յարմար դեղ ըլլալուն աղէկ և փորձառական ապացոյց մը կ'ըլլայ. կը տեսնուի նաև թէ ուղիղ էին բժշկին ըբած ան քննութիւնները՝ որոնցմէ

անշուշտ ան դարմանը գործածելու քաջալերուեցաւ : Աւետարանին համար ալ նոյն բանը կրնանք ըսել . այսինքն թէ անոր Աստուծոյ ըլլալուն փաստը՝ անոր մեզի զուարթութիւն տալը կամ չտալը չէ : ոչ ալ անոր մեր ճաշակին ախորժելի գալ կամ չգալը, այլ մեր հոգևոր հիւանդութիւնը բժշկելու և մեր հոգևոր առողջութիւնը, այսինքն մեր սրբութիւնը յառաջ բերելու յարմարութիւն սնենային է :

Որո՞նք են ուրեմն այն ապացոյցները որոնց համար Աստուածաշունչին Աստուծոյ ըլլալուն կը հաւատանք : Ասինդրոյն պատասխան տալ գիւրդին է : Քրիստոնէութիւնն ու Քրիստոնէական գիրքեր հազար ութ հարիւր տարիէ 'ի վեր կան : Թէ Քրիստոնեայ և թէ արտաքին մատենագիրք այսպէս ըլլալը միաբան կ'ընդունին և կը հաստատեն : — Քրիստոնէութեան հիմնադրին աշխարհիս մէջ երեցած ատենէն հարիւրաւոր տարիներ առաջ՝ անոր յատուկ նշաններն ու պատմութիւնը Հրէից ընդունած Սուրբ Գիրքերուն մէջ առաջուց բուսած էին : Անկա երեցած ատենը իր Աստուծոյ զրկուած ըլլալը հաստատելու համար հրաշքներ գործեց . նոյն կարողութիւնը իր առաքեալներուն ալ տուաւ : — Ինք ամենամեքուր բարոյականութիւն սորվեցուց . և շատ գուշակութիւններ քուլ , որոնք կատարուեցան : — Առաքեալներուն և Հրէութենէ ու Հեթանոսութենէ գարձօղ Քրիստոնեաներուն 'ի մանկութենէ սորված կրօնական դրութիւններն՝ Աւետարանին վարդապետութեանցը հակառակ էին . բայց և այնպէս անոնք այն վարդապետութիւններն ընդունեցան : Աս վարդապետութիւնները՝ զանոնք ընդունողներուն բնաւորութիւնը կը փոխէին . հին բիրտ աղգերը զգօնացընելով քաղաքակիրթ կ'ընէին . վերջապէս՝ անոր վարդապետութիւններուն ազգեցութիւնը մարդկային ազգին պատմութեանը մէջ առաջ տեղ վերջին աստիճան զօրութիւն սնեցաւ : Ասանկով ան վարդապետութիւններն՝ ոչ միայն իրեն Աստուծոյ տրուած քարոզուեցան , հաստատանց այնպէս ըլլալն ալ անհամար վկայութիւններով հաստատուեցաւ : Աստի պէտք

է որ մենք զանոնք կամ արդարեւ իբրև Աստուծմէ արուած ընդունինք, և կամ զանոնք զերջին աստիճան սքանչելի և բարերար խաբէութիւն մը համարինք: Բայց թող որ բարերար խաբէութիւն մը հակասութիւն է, Աւետարանին պատմութեանցք մէջ խաբէութեան հետքն անգամ չտեսնուիր. մանաւանդ անոր վարդապետութիւններն ընդունողներն՝ անոնց Աստուծմէ բլլալուն իրենց մէջ աւելի զկայութիւն ունին, ու կրնան փորձառութեամբ ըսել. «Պիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ: ու մեզի միտք տուաւ, որ ճշմարիտը ճանչնանք. և ան ճշմարիտին մէջն ենք՝ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջը. ասիկա է ճշմարիտ Աստուած՝ ու յաւիտեան կեանք» (Ա Յովհ. Ե. 20):

Ոչ աս իրողութիւնները գազանի են, ոչ ալ աս ապացոյցները՝ դժուարիմաց. զանոնք ամէն մարդ, ամենէն տկարն անգամ՝ կրնայ զգալ և հասկընալ: Աս փաստերուն որ և իցէ մասը՝ ճշմարտութիւնն անկեղծութեամբ փնտռող մը համոզելու բաւական է, ըստ սրում՝ այսպէս հրաշքներու ու մարդարէութիւններու վրայ հիմնուած, կամ այսպիսի որբութիւն ու սէր յառաջ բերող ուրիշ կրօնական գրութիւն մ'ալ չկայ. բոլոր փաստերը միանգամայն սրչափ ևս աւելի համոզիչ և յազթահարիչ բլլալու են:

ԳԼ. Է

Սորբ Գրոց Աստուծային 'Ներշնչութիւնը:

Հին և նոր կտակարանաց գիրքերուն համար Աստուածային ներշնչութեամբ գրուած են ըսելը՝ կը նշանակէ թէ անոնք Աստուծոյ մասնաւոր օգնութեամբը և անոր Աստուածային առաջնորդութեամբը յօրինուեցան: Նախընթաց գլխոյն մէջ ցցուցինք թէ Սուրբ Գրոց մէջ պարունակուած վարդապետութիւններն ու պատուէրներն՝ Աստուծմէ կու գան և Աստուածային Հեղինակութիւն ունին: Բայց անոնց Աստուածային ներշնչութեամբ գրուած բլլա-

լուն վարդապետութեամբը՝ ոչ միայն կ'իմացուի թէ Սուրբ Գրոց վարդապետութիւններուն ու պատուէրներուն գաղափարները կամ նիւթերը Աստուածային Հեղինակութիւն ունին, այլ թէ՛ նոյն վարդապետութիւններն ու պատուէրները մարդոց հաղորդելու համար Աստուծմէ ընտրուած և գործածուած անձինք՝ Աստուածային ազգեցութենէ մը այնպէս օգնուած և առաջնորդուած էին, որ իրենց միջոցովը տրուած վարդապետութիւնները կամ պատուէրները խօսելու և գրելու մէջ սխալ մը չէին կրնար ընել. ուստի և անոնց ըսածները կամ գրածներն Աստուծոյ միտքն ու կամբը ճշմարտութեամբ կը յայտնեն :

Եթէ վարդապետութիւններուն ու պատուէրներուն միայն նիւթը կամ գաղափարները Աստուծմէ յայտնեալ ըլլային, իսկ զանոնք մարդոց հաղորդելու մէջ, որբազան մատենագիրներն՝ առանց մասնաւոր օգնութեան մը, իրենց անձնական կարողութեանը թողուած ըլլային, մարդկային տկարութեան պատճառաւ՝ անոնց գրութեանցը մէջ մշտութիւն կամ անկատարութիւն սպրդելու վտանգ եղած կ'ըլլար. ուստի այն գիրքերն ամէն կարելի մշտութենէ զերծ պահելու համար՝ անոնց հեղինակներուն մասնաւոր կերպով ստատուածային օգնութիւն և առաջնորդութիւն շնորհուեցաւ : Նոյն իսկ որբազան մատենագիրք կը վկայեն թէ այսպիսի օգնութիւն և առաջնորդութիւն մը ունեցան, և, որովհետև առաջ ցցուցինք թէ անոնք ճշմարտախօս վկաներ են, և թէ անոնց վարդապետութիւններն ալ Աստուածային հեղինակութիւն ունին, պէտք է որ ընդունինք թէ անոնց այն մասնաւոր օգնութիւնն ու առաջնորդութիւնն ընդունած ըլլալուն վրայով տուած վկայութիւնն ալ ճշմարիտ է : Պօղոս Առաքեալ Կորնթացւոց առաջին թղթոյն մէջ ոչ միայն կը սորվեցնէ թէ՛ Աւետարանին վարդապետութիւններն իրեն և իր առաքելակիցներուն Աստուծմէ յայտնուեցան, այլ և յայտնապէս կ'իմացընէ թէ իրենք ալ կը խօսին այն վարդապետութիւնները, այսինքն՝ զանոնք կը հաղորդեն մարդոց . «չէ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Հոգիին սորվեցուցածնե-

րովք՝ (Ա Կորնթ. Բ. 13) : Դարձեալ՝ Թեսալոնիկեցւոց կ'ըսէ թէ՛ անոնք իր և իր ընկերներուն քարոզած խօսքերն ընդունեցին "չէ թէ իբրև մարդոց խօսք, հապա ինտոր որ ճշմարտապէս է, Ասաուծոյ խօսք" (Ա Թես. Բ. 13) : Քրիստոս ալ իր աշակերաններուն խոստացաւ թէ, երբ Աւետարանին համար իշխաններու և Թաղաւորներու առջև կանչուին, անոնց Ասաուծմէ մասնաւոր օգնութիւն և առաջնորդութիւն պիտի տրուի : "Երբոր ձեզ մասնեն, հոգ մի՛ ընէք թէ ինտոր կամ ինչ պիտի խօսիք. ինչու որ ձեզք պիտի տրուի ան ժամուն՝ ինչ որ պիտի խօսիք. վասնզի չէ թէ դուք էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հոգին՝ որ ձեր ներսի գին կը խօսի" (Մատթ. Ժ. 19, 20) : Ճշմարիտ է թէ Քրիստոսի իր Աշակերաններուն ըրած այս խոստումը, Պօղոսի ալ՝ Աւետարանին վարդապետութիւնները օրովեցնելու մէջ իր գործածած խօսքերուն նկատմամբ ըսածը՝ նախ բերնով աւանդուած խօսքերուն կը վերաբերին. բայց և այնպէս պատճառ մը չկայ կարծելու թէ նոյն Հոգին, ինչպէս որ բեւեով վարդապետողներուն, այնպէս ալ նոյն վարդապետութիւնները գրողներուն օգնական և առաջնորդ եղած չէ : Պօղոս Յիմնթեսին գրած Երկրորդ Թուղթին մէջ կ'ըսէ. "Բոլոր Գիրքը Ասաուծոյ շունչն է, և օգտակար է սարվեցնելու, յանդիմանելու, շիտկելու, ու արդարութեան խրատելու համար" (Բ Տիմ. Գ. 16) : Եթէ առարկուելու ըլլայ թէ Առաքելոյն աս խօսքը Հին Կտակարանին Գիրքերուն համար է, ոչ թէ Նոր Կտակարանին, ասոր պատասխան կու տանք թէ բաւական ապացոյց ունինք որ այն ժամանակը Քրիստոսնեայք Նոր Կտակարանին գիրքերէն ալ շատերը ստացած էին, և զանոնք Հին Կտակարանին գրոցը հետ իբրև հաւատար հեղինակութիւն ունեցող գիրքեր կը համարէին : Զոր օրինակ Պետրոս Առաքեալ իր Երկրորդ Թղթոյն մէջ Պօղոսի Թուղթերն այնպիսի կերպով մը կը յիշէ, որ յայտնի կը տեսնուի թէ անոնք արդէն Պետրոսի նամակն ընդունողներուն ձեռքը կը գտնուէին, և ուրիշ Սրբազան Գրոց կարգը զբարեւած էին. այսինքն թէ՛ այն Թուղթերն ալ Սուրբ Գրոց

միւս մասին պէս Աստուծմէ շնչուած և աստուածային հեղինակութիւն ունեցող համարուած էին : Նոյն Առաքեալը յիշեալ Թուղթին Գ. գլխոյն 16 համարին մէջ կ'ըսէ թէ 'տգէտներն ու անհաստատները' Պօղոսի գրուածները "ծուկողմը կը դարձնեն , ինտոր «-րիշ գիրտի» ալ՝ իրենց անձին կորստեանը համար" : Հոս Պօղոսի գրուածները յայտնապէս քրիստոնէից ձեռքն եղած Սուրբ Գրոց ուրիշ մասերուն , այսինքն՝ Հին Կտակարանին գրուածներուն հետ դասուած են : Դարձեալ երբ նոյն Առաքեալը յիշեալ Թղթոյն նոյն Գ. գլխուն 2 համարին մէջ, նամակը կարդացողներուն միտքը արթնցնելու համար կ'ըսէ թէ՝ "Սուրբ Մարգարէներէն առաջուց զրուցուած խօսքերը , և մեր՝ այսինքն Տէրօջն ու Փրկչին Առաքեալներուն պատուէրները միտքերնիդ բերէք" : յայտնապէս իր և ուրիշ իրեն ընկեր եղող Առաքելաց վարդապետութիւններն ու Մարգարէներունը համահաւասար կը դասէ . այնպէս որ անտարակոյս է թէ ընդհանուր այսպէս համարուած էր . ուստի և երբ Պօղոս , ինչպէս վերը յիշուեցաւ , կ'ըսէ թէ 'Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է" , Ա , Գիրտ բառով Հին և Նոր Կտակարանին գրուածները միանգամայն կ'իմացնէ , և կ'ուզէ որ այնպէս իմացուի :

Հին ԿՏԱԿՐԱՆԻՆ ԳՐՈՑ ՆԵՐՇՆՉՈՒԹԵԱՆԸ խնդրոյն գալով , անոնց նկատմամբ ալ Նոր Կտակարանին համար եղածներուն պէս ապացոյցներ ունինք , այսինքն՝ նոյն իսկ մատենագիրներուն վկայութիւնը : Մովսէս կը պատմէ թէ , Տէրօջմէն Իսրայէլի որդւոցը շնչուած ատենը , Աստուած անոր այսպէս պատուիրեց . "Ուստի զնա հիմա , ու ևս քու բերնիդ հետ պիտի ըլլամ , և քեզի պիտի սորվեցնեմ ինչ որ պիտի խօսիս" (ԵԼ. Գ. 12) : Դարձեալ իր կենացը վախճանին մտ , երբ Աստուծմէ ընդունած օրէնքներն ու կարգադրութիւնները նոյն Իսրայէլի ժողովուրդեանը կ'աւանդէր , անոնց այսպէս խօսեցաւ . "Ահա ձեզի կանոններ ու դատաստաններ սորվեցուցի , ինչպէս որ իմ Տէր Աստուածս ինձի պատուիրեց , որ զաննք 'ի գործ դնէք ան երկրին մէջ , ուր որ պիտի մտնէք ժառանգելու համար"

(Բ Օր . Գ . 5) : Գաւիթ ալ կ'ըսէ . "Տէրոջը Հոգին ինծմով
խօսեցաւ . ու անոր խօսքը իմ լեզուիս վրայ էր" (Բ Թագ .
ԻԳ . 2) : Երեմիա ալ ճիշդ նոյն վկայութիւնը կու տայ .
"Եւ Տէրը իր ձեռքը երկնցուց , ու իմ բերնիս դպաւ . և
Տէրը ինծի ըսաւ . Ահա իմ խօսքերս քու բերանդ դրի"
(Երեմ . Ա . 9) : Գրեթէ բոլոր Մարգարեից գիրքերն այն-
պիսի կերպով կը սկսին , որ յայտնի կ'երևի թէ Մարգա-
րէներն իրենց գրուածները ոչ իրենց , այլ իբր Տէրոջը
խօսքերը կը նկատէին : "Ասէ ո՛վ երկինք , և ականջ դիր
ո՛վ երկիր , վասն զի Տէրը կը խօսի" (Ես . Ա . 2) : "Երե-
միայի խօսքերը , որ անոր՝ Տէրոջը խօսքը եղաւ" (Եր . Ա .
1 , 2) : "Ովսէէին միջոցովը եղած Տէրոջը խօսքին սկիզբը .
և Տէրը ըսաւ Ովսէէին" , Ա (Ովս . Ա . 2) : "Տէրոջը խօսքը
որ . . . Միքիային եղաւ , և Սամարիայի ու Երուսաղէմի
վրայով անոր յայտնուեցաւ" (Միք . Ա . 1) :

Բայց Հին Կտակարանին գրուածներուն Աստուածաշունչ
ըլլալուն նկատմամբ ուրիշ վկայութիւն մ'ալ ունինք , այն
է՝ Քրիստոսի և անոր Առաքելոցը վկայութիւնը : Մեր
Տէրը Յիսուս Քրիստոս Հին Կտակարանին Գրոցը վրայ շա-
րունակ այնպիսի կերպով մը կը խօսի որ անոնց Աստուա-
ծային ազդեցութեամբ գրուած ըլլալը յայտնի կը ցուցնէ :
Անիկա կը հաստատէ թէ Հարկ է որ այն գրուածոց ոչ միայն
ընդհանուր գաղափարն , այլ և իւրաքանչիւր բառը կա-
տարուի : "Մինչև որ երկինք ու երկիր անցնին , օրէնքէն
յո՛վա մը՝ կամ նշանադիր մը պիտի չանցնի , մինչև որ բո-
լորն ալ կատարուի" (Մատթ . Ե . 18) : Սուրբ Գրոց մէջ
գործածուած խօսքերուն համար կ'ըսէ թէ աստուածային
հեղինակութիւն ունին . զոր օրինակ՝ երբ Հրեայք անիկա ,
Աստուծոյ Որդին եմ ըսելուն համար , իբրև հայհոյիչ կը
բամբասուին , անոնց իրենց Սրբազան Գիրքերէն ցուցուց թէ
Աստուած անունը Հրէից Գատաւորներուն և Իշխաններուն
տրուած է , ապա որչափ ևս առաւել նոյնը կրնար տրուիլ
իրեն , զոր Հայրը սրբեց ու աշխարհք խրկեց (Յովհ Ճ 34—
36) : Եւ որովհետև կրնային առարկել թէ Աստուած
բառը յիշեալ դէպքերուն մէջ անյարմար կերպով գործա-

ծուած է, կը յաւելու թէ «Կարելի չէ որ ան գրուածը աւրուի», այսինքն թէ՛ այն բառը Սուրբ Գրոց մէջ այնպէս գործածուած ըլլալուն համար, պէտք է որ յարմարութեամբ գործածուած համարուի. կամ թէ ըսել ուղեց թէ՛ ասուածային ազդեցութեամբ գրուած բառ մը ըլլալով, չի կրնար մերժուիլ, ոչ ալ անոր դէմ առարկութիւն մը կրնայ ըլլալ :

Պետրոս Առաքեալ յայտնապէս կ'ընէ թէ «Աստուծոյ Սուրբ մարդիկը», այսինքն՝ Մարգարէք, «Սուրբ Հոգիէն շարժուած խօսեցան» (Բ Պետր . Ա . 21). և Պօղոս Հռոմ եղող Հրէից կ'ընէ. «Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր Հայրերուն՝ Եսայի մարգարէին ձեռքովը» Թ. (Գործ . ԻԸ . 25): Աս Առաքեալներուն փոքր յայտնապէս սա է թէ՛ Հին Կառկարանին նախնի մատենագիրներն՝ իրենց գրուածներուն մէջ Սուրբ Հոգիէն այնպէս առաջնորդուած էին, որ այն գրուածներն իբր Հագույն Սրբոյ խօսքերը նկատել պէտք է :

Նախընթաց գլուխներուն մէջ յառաջ բերուած բոլոր փաստերէն սա եզրակացութիւնը կ'ելլէ : — Հիմա մեր ձեռքը գտնուած Հին և Նոր Կառկարաններուն գիրքերը՝ Հին Մարգարէից և մեր Յէրոջը և Փրկչին Յիսուս Գրիտաստի Առաքելոցը գրուածներուն հարազատ և անեզծ օրինակներն են, և այն գրութիւններն աստուածային հեղինակութիւն ունին՝ ոչ միայն ընդհանուր կերպով մը, այսինքն՝ Աստուծմէ եղած յայտնութեան գաղափարները միայն անոնց աւանդուած ըլլալուն համար, այլ վասն զի Աստուած իր ազդեցութեամբն ան հեղինակներուն ներկայ գտնուելով, իրենց ընդունած յայտնութիւններն ուրիշներուն հազորդելու մէջ զանոնք այնպէս առաջնորդեց, որ կրնայ վստահութեամբ ըսուիլ թէ՛ անոնց գրուածներուն մէջ բոլոր ըսուածներն՝ Աստուծոյ կամացը յայտնութիւնն են :

Ասով ըսել չնք ուղեր թէ այն գիրքերուն ընագիրներէն հետզհետէ և յաճախ օրինակուած ձեռագիրներուն մէջ ամենևին վրիպակ սպրդած չէ, կամ թէ Եբրայեցերէն և Յունարէն ընագիրներէն այլևայլ լեզուներու եղած բոլոր

Թարգմանութիւնները կատարեալ են : Օրինակներն ու
 Թարգմանիչները ներշնչեալ անձինք չէին : Ներշնչութիւնը
 բուն հեղինակներուն միայն սեպհական է : Բայց և այն-
 պէս, ինչպէս որ Սուրբ Գրոց բազմաթիւ ձեռագիրներուն,
 տպագրեալ օրինակներուն և այնչափ լեզուներու եղած
 Թարգմանութիւններուն ճիշդ բաղդատութենէն յայտնի
 եղած է, յիշեալ վրիպակները շատ քիչ և շատ թեթեւ
 են, և Սուրբ Գրքին կարևոր վարդապետութիւններուն և
 պատուէրներուն իմաստին ամենէին Պատ կամ՝ այլպ-
 լութիւն մը տուած չեն : Իր Հագույն ներշնչութեամբը
 Սուրբ Գրոց մատենագիրներուն օգնութիւն և առաջնորդու-
 թիւն ընող Աստուած՝ այն ժամանակէն 'ի վեր իր նախախ-
 նամութեամբը, մինչև յիշեալ գրուածներուն մեր ձեռքը
 հասնելն ու առ վերջին գարուն մէջ երկրիս գրեթէ բոլոր
 ազգերուն արուիլը : զանանք անեղծ պահելու հոգ տարաւ :

ԳԼ. Ը

Սուրբ Գրոց սեպհական յարկաւորութիւնները :

ՆԱԽԸՆԹԱՑ գլուխներուն մէջ նախ՝ Սրբազան գրու-
 թեանց բնագիր լեզուներուն, ձեռագրաց գրուելուն և
 պահուելուն, ու նաև Սուրբ Գրոց այլևայլ մասերուն
 մինչև ցարդ անեղծ մնալուն վրայ խօսեցանք. և երկրորդ՝
 անոնց Աստուծոյ ներշնչելովը գրուած՝ աստուածային հե-
 ղինակութիւն ունեցող գիրք մը ըլլալը ցուցուցինք :

Հիմա ալ Սուրբ Գրոց սեպհական յատկութիւններուն
 չըայ խօսելու գալով, նախ կ'ըսենք թէ՛ Սուրբ Գրքն Աս-
 տուծոյ բնաւորութեանը, ստորագելեացը և կամացը կա-
 տարեալ յայտնութիւնն է : Աստուծոյ կամքն և ստորս-
 գելիքներն արդարև անոր ձեռացը բոլոր գործքերուն,
 մանաւանդ մարդուս բնական և բարոյական կազմութեանը
 մէջ յայտնի կը տեսնուին. բայց Սուրբ Գրոց մէջ յատ-
 կապէս ու կատարելապէս յայտնուած, ու անեղծ և անա-

պահան պահուած են : Երկրորդ կ'ըսենք թէ՛ Սուրբ Գիրքը մարդուս նկարագրութիւնն է . անոր այլեայլ վիճակներուն մէջ ունեցած բնութիւնը և վարմունքը մեր առջնը կը դնէ : Աս Գիրքը, մարդուն Եղեմական Դրախտին մէջ իր Արարչին հետ դեռ բարեկամ եղած ատենին սրբութեան վիճակէն սկսելով, անոր փորձուիլը, մեղանշական վիճակի մէջ ու դատապարտութեան տակ իյնալը, և անոր փրկութեանը համար 'ի գործ դրուած միջոցները պատմելէն ետքը՝ վերջապէս անիկայ, ոչ երկրի վրայ կամ Դրախտին մէջ, այլ Երկինքը դարձեալ նոյն աստուածամերձ վիճակին փառքով բարձրացած կը ցուցնէ, իմացնելով թէ ինչպէս անիկա, Աստուծոյ Արդւոյն մարդեղութեանն ու շարչարանաց արդիւնքովը իր կորսնցուցած օրհնութիւններուն բոլորն ալ վերստին կ'ստանայ : Երրորդ, աւելի ընդհանուր մտօք, կ'ըսենք թէ՛ Սուրբ Գիրքն այլեայլ դէպքերու ստոյգ տեղեկութեանը, պարտաւորութեանց վերաբերեալ սկզբունքներու և ամէն հոգեւոր ճշմարտութիւններու գանձարան կու չէլ յարմար և վայելի չէ : Անիկա խիստ հեռաւոր ժամանակներու վրայ, երբ մարդկային գրուած կամ պատմական տեղեկութիւն տակաւին չկար, կամ եղածն առասպելով լեցուն էր . ստոյգ պատմական տեղեկութիւններ կու տայ : Ար պատմէ լեզուաց բաժանման սկիզբը, ազգաց ծագումը, պատերազմները, յաջողութիւններն ու ձախողութիւնները : Սուրբ Գրքին ըրած աս պատմութիւններուն օգնութեամբն է որ մարդկային աշդին յառաջադիմութեանն ընթացքը կը տեսնենք, և կը ճանչնանք թէ 'ի սկզբանէ հետէ Աստուած մարդիկ ինչ սկզբունքներով կառավարած է, և թէ՛ ան սկզբունքներն Անոր իմաստութիւնն ու սրբութիւնը, և կառավարութեանը ողորմութեամբ ըլլալը յայտնի կը ցուցնեն : Ար տեսնենք նաև թէ, մարդկային ցեղին գտնուած այլեայլ կացութիւններուն կամ վիճակներուն մէջ, ինչ ընթացքով մարդկային բնութիւնը զարգացած և յառաջ գացած է . փրկագործութեան պատմութիւնն ալ կարդալով՝ կը տեսնենք թէ ինչպէս Աստուած իր ամէն ըրածը նոյն փրկագոր-

ծուծեան նայելով՝ անօրինած է, և թէ՛ նոյն գործը քը-
րիստոսի ձեռքը կատարուելով Աւետարանին միջոցովը բու-
լար աշխարհի յայտնուած է: Մեկ խօսքով՝ հին պատմու-
թեանց և մարդոց պարտաւորութեանցը վերաբերեալ, ի-
մաստուն մարդոց ուշադրութիւնը գրաւող ամէն կարևոր
խնդիր աս գրքին մէջ լուծուած է այնպիսի հեղինակու-
թեամբ և օկզբունքներով՝ որոնց դէմ բողոքելու պատ-
ճառ չկայ. այնպէս որ անսահման իմաստնոյն Աստուծոյ
օրէնքներն ու որոշումները՝ մեր խորհուրդներուն և մեր
վարմանցը, Անոր խոստումներն ալ մեր յուսոյն հիմ կըր-
նանք ընել:

Ուրեմն Աստուածաշունչին մէջ ամէն գրուածներուն նշ-
կատմամբ սա երեք հարցումները կրնանք ընել թէ՛ Հոռ
Սուրբ Գիրքն ի՞նչ կը սորվեցնէ Աստուծոյ, Մարդս և
Փրկագործութեան նկատմամբ:

Աշխարհիս պատմութիւնն ըրած ատենը՝ Սուրբ Գիրքն
աշխարհս իբր Աստուծոյ աշխարհը և իբր Աստուծոյ Որդ-
ւոյն թագաւորութիւնն ըլլալու սահմանուած տեղ մը կը
նկատէ: Նախ՝ աշխարհիս Աստուծմէ ստեղծուած ըլլալը
կը պատմէ, որպէս զի Աստուծոյ գործերէն հասկընանք թէ
Անոր ինչ պատիւ և մեծարանք վայել են, և թէ՛ ինչ կա-
րողութիւն ունի Ան՝ որուն օրէնքներն աս գրքին մէջ յայտ-
նուած են. դարձեալ՝ որպէս զի ճանչնանք թէ մենք Անոր
արարածներն ըլլալով, պէտք չէ որ Անիկա շփոթենք Հե-
թանոսաց կուռքերուն հետ, որոնք կամ՝ Անոր արարած-
ներն են, կամ անոնց պատկերներն, և կամ ըսլորովին կեղծ
և մտայածին էակներ:

Արարչագործութեան պատմութենէն զատ՝ Աստուածա-
շունչին բոլոր պատմութիւնն ալ գրեթէ նոյն սկզբանց հա-
մեմատ գրուած է. այսինքն՝ Աստուծոյ վրայ և մարդու և
ուրիշ արարածոց Աստուծոյ հետ ունեցած յարաբերու-
թեանցը վրայ տեղեկութիւն տալու մտօք, կամ, ուրիշ
բառերով ըսենք, Սուրբ Գիրքը ի՞նչպէս ճշմարտութեանց
յայտնութիւնն է. այնպիսի ճշմարտութեանց՝ որոնք Ա-
ստուծոյ պատուէրներուն անհնադանգ, և անոր դէմ ապրո-

տամբ գտնուելով իրենց որբութեան վիճակը կորսնցուցած, երջանկութենէ ալ զրկուած, ու մեղքին պատիժը կրելու գառապարտութեան տակ իրենք իրենցմէ ազատուելու ճարմը չունեցող, թշուառ ու անմխիթար վիճակի մը հասած անկեալ մարդոց բնութեանն ըստ ամենայնի յարմար են : Ուստի Սուրբ Գիրքը միայն ատեն ըստ արժանւոյն գործածած կ'ըլլա՞ք, երբ անիկա մեր փրկութեանն ու մխիթարութեանը կը նպաստէ : Աստուած անիկա տուած է որ մեզ «սորվեցնէ, յանդիմանէ, շիտկէ ու արդարութեան խրատէ» : Ամէն գիտութիւն կրնայ օգտակար ըլլալ. բայց աս գիտութիւնը ոչ օգտակար միայն, այլ և հարկաւոր է : «Նաւ մի թողուր. զանիկա պահէ. վասն զի քու կեանքդ անիկա է» : Առակ Գ. 13 :

Աս գիտողութիւններէն երկու գործնական կանոն կ'ելլէ : Առաջի՛ : Ժ է մենք Սուրբ Գիրքէն ոչ այլ ինչ սորվել նայելու ենք, բայց ան բանը միայն՝ զոր գիտնալ, կրօնական նկատմամբ, մեզի կարեւոր է : Անիկա՝ փրկութեան առաջնորդելու ճշմարտութիւններ կրկին և կրկին կը յայտնէ. այսինքն՝ այնպիսի ճշմարտութիւններ որոնք կը շարժեն մեզ զԱստուած սիրելու և անոր հնազանդելու : Անոր պատմուածքը կամ ոճն ալ կարճ և ամփոփ է, ըստ որում համառօտութիւնն ու ամփոփութիւնը յիշեալ նպատակին համար յարմարագոյն են :

Երկրորդ՝ թ է պէտք է որ Սուրբ Գրոց յայտնած ճշմարտութիւնները գործնականի բերնը, այսինքն՝ անոնց ամենուն ալ հաւատանք և անոնց համեմատ վարուինք : Ճշմարտիտ վարդապետութեան մը, կամ բարոյական պարտաւորութեան մը գէժ գնել, կամ զանոնք իրարմէ զատելն ալ մնլորութիւն է : Առաքինութիւնը՝ ճշմարտութեան վրայ հիմնուած և անոր պահանջմանը համեմատ ի գործ գրուած ատենը միայն ճշմարտ առաքինութիւն է :

Թէպէտ Սուրբ Գիրքը կրօնական ճշմարտութեանց յայտնութիւնն է, ինչպէս վերն ըսուեցաւ, և հասարակ գիտութեանց յայտնութիւն մը չէ, բայց և այնպէս կրնանք անկեալէլ թէ անիկա Աստուծոյ Գիրքն ըլլալով, անոր

ըսածներն ու յայտնածները բնական իրողութեանց համա-
ձայն պիտի ըլլան, և թէ՛ անիկա իր կարճաուօտ և պարզ
լեզուին տակ շատ խորին իմաստութիւն պարունակելով,
այն իրողութեանց վրայ կարևոր և ճշմարիտ տեղեկու-
թիւններ պիտի տայ: Սուրբ Գրոց համար այսպիսի ակն-
կալութիւն մը ընել արդար և իրաւացի է. և սա նկատ-
մամբ, այսինքն՝ Աստուածաշունչին յայտնութիւններուն
բնական իրողութեանց հետ համաձայն, և ոչ հակառակ
ըլլալուն նկատմամբ, Սուրբ Գիրքը Հեթանոս ազգաց սըր-
բազան կարծուած մատեաններէն յայտնապէս կը տարբերի:

Բոլոր հին կրօնական դրութեանց և ամենէն անուանի
նախնի փիլիսոփայից ամենուն, մեր անոնց վրայ ունեցած
տեղեկութեանը նայելով, ոչ միայն աստուածաբանութիւ-
նը, այլ և բնական իրողութեանց մասին տուած ծանօ-
թութիւններն անհեղեղ և անտեղի են:

Յսնաց և Հռոմայեցւոց փիլիսոփայութեանը նայելով՝
երկինք երկրիս վրայ հաստատուն կամար մը, կամ, ինչպէս
Արիստոտէլ կ'ըսէ, աստեղազարդ գունդ մըն է: Եգիպ-
տացւոց իմաստուններուն խօսքին նայելով՝ աշխարհն օգին
շարժմամբը և բոցին գէպ 'ի վեր յոլանալովը կազմուած է.
իսկ ըստ Պլատոնի՝ աշխարհ իմացական էակ մըն է: Եմ-
պետոկղէոս երկու արեգակ կը դնէր. Զեկիպպոս ալ կ'ըսէր
թէ աստղերն իրենց շարժմամբը բարձրելով կը վառին, և
իրենց կրակոյն արեգակը կը սնուցանեն:

Բոլոր արևելեան նախնի ազգերը կը հաւատային թէ երկ-
նային մարմինները մարդկային իրաց վրայ զօրաւոր, և շատ
անգամ՝ ձախող ազդեցութիւն մը կ'ընեն. և թէ՛ բոլոր բը-
նութիւնը չորս տարրներէ բաղկացած է. հողէ, ջուրէ,
օդէ, հուրէ. քանի սր ասոնք, ինչպէս յայտնի է, տարր,
այսինքն՝ սկզբնական կամ պարզ նիւթեր չեն:

Հնդկաց փիլիսոփայութեանը նայելով՝ երկիրս տափարակ,
եռանկիւնի և եօթնայարկ է. երկրիս բոլոր զանգուածն
ալ փղերու գլուխներուն վրայ հաստատուած է. ուստի և
երկրաշարժին պատճառը փղերուն գլխուն ջնցմանը կը
տրուէր: Եկեղեցւոյ Հարք կամ Հայրապետներն ալ

ասոնցմէ ոչինչ ընդհատ անտեղի վարդապետութիւններ ըրած են : «Երկրիս բոլորակութիւնը», կ'ըսէ Լակտանտիոս, «ենթադրութիւն մըն է որուն հաւատալու չափ տխմար մէկը չկայ» :

Արդարեւ գիտողութեան արժանի կէտ մըն է որ բնութեան վրայ բոլոր հին կռապաշտ ազգաց իմաստուններուն այսպիսի անտեղի կարծիքներ յայտնած ատենը, անոնց մտաւ և դրացի եղող ազգի մը քառասնի չափ մատենագիրները՝ որոնք Սուրբ Գիրքը գրած են, այն սխալ և անճշտի դրութեանց և կարծեաց չհետեւելէ զատ, անոնց նպաստաւոր տող մը բան անգամ գրած չեն : Ասիկա անոնց պատգամներուն՝ Աստուծմէ, իբրև ամէն ճշմարտութիւն գիտցող աղբիւրէ, բխած ըլլալուն յայտնի ապացոյց է :

Սուրբ Գրոց ըսածներուն կամ յայտնածներուն՝ արդի փամանակուն գիւտերուն հետ ճշդիւ համաձայն ըլլալը զարմանալի է : Զոր օրինակ՝ Սուրբ Գիրքը երկիրս իբրև Գոնիք ենթադրելով կ'ըսէ թէ՝ Ուշիւն Լրոյ Կոնոսթէ : Յոր. ԻԶ. 7-10 : Առակ. Ը. 27 : Ես. Խ - 22 : Երկրիս հընութեանը վրայ՝ ալ խօսելով, գործարանաւոր մարմնոց ստեղծումը երկնից և երկրի ստեղծմանէն կ'որոշէ : Ծննդ. Ա. 1, 2 : Մարդուս ստեղծումն ալ, համեմատութեամբ, ուրիշ արարածներուն ստեղծումէն աւելի նորագոյն կը դնէ. և աս մտաին Աստուածաշունչին ճշդութիւնը՝ երկրիս ներքին կողմերուն ու մակերևութին վրայով եղած քրննութիւններէ և հին յիշատակարաններէ կը հաստատուի : Աստուածաշունչը երկնից համար կ'ըսէ թէ Խնիւն Գեղաց է, ոչ թէ հաստաառուն գունտ մը. լոյսն ալ արեգակէն անկախ տարր մը, և անկէ առաջ եղած կը դնէ. և այսպէս շատ առաջ ըսած կ'ըլլայ ինչ որ հիմա նոր բնագէտներն ընդհանրապէս կ'ըսեն : Գալիլէոս աս վերջին դարերուս մէջ օդին ծանրութիւն ունենալը հաստատեց. բայց Աստուածաշունչն օդին վրայ խօսելով արդէն ըսած է թէ Աստուած անոր «կշիռ կը դնէր». ծովերու համար ալ ըսած է թէ Աստուած զանոնք «չափով կը չափէր» (Յոր. ԻԸ. 25). և արդարև նոր բնագէտները կը հաստա-

տեն թէ ցամաքին ու ծովուն այժմու համեմատութիւնը կամ չափը՝ թէ շնչաւորաց և թէ տնկոց առողջութեանն ու ապահովութեանը համար կարևոր է : Զուրերուն համար Սուրբ Գրոց մէջ ըսուած է թէ անոնցմէ մեծ քանակութիւն մը շագինաւով դէպ 'ի վեր կը ցնդի . և շատ անգամ ան վերի ջուրերուն վրայ կը խօսուի : Արդի բնագէտք առ բնական երևոյթն աղէկ ծանչցան , և անոր կարևորութիւնը կը խոստովանին : Նոր քննութիւններով ցուցուած է թէ միայն Անգղիոյ մակերևութին խոնաւութենէն ամէն օր քանի մը միլիոն տակառաչափ (18 կենդիւնար է 1 տակառաչափը) ջուր գոլորշանալով վեր կը ցնդի :

Սուրբ Գրքը մարդկային ազգին վրայ խօսելով՝ բոլոր մարդոց ցեղերը կամ մարդկային սերունդը մէկ սկիզբէ կը դնէ . լեզուաց համար ալ կ'ըսէ թէ 'ի սկզբան մէկ լեզու էր , որ յետոյ այլ և այլ լեզուներու բաժնուեցաւ . բայց ոչ այնչափ բազմաթիւ լեզուներու սրչափ հիմա աշխարհիս վրայ կը տեսնենք , այլ երկու կամ երեք գլխաւոր լեզուներու (Ծննդ . Ժ . 32 : ԺԱ . 1—9) . եղելութիւն մը՝ որ ազգերու պատմութենէ և փիլիսոփայութենէ հաստատուն վկայութիւն գտած է . թէպէտ անոր վրայ շատ վէճեր և խնդիրներ յաղուած են :

Յետուայ արեգտկան հետ մէկտեղ լուսնին ալ կենալն յիշելը՝ արդի աստեղագիտաց սորվեցուցածին հաւանալն է : Ասոնք կ'ըսեն թէ արեգական և լուսնին օրական առերևոյթ շարժումը՝ միջնոյն պատճառէ , այսինքն՝ երկրիս իր առանցքին վրայ դառնալէն յառաջ կուգայ . այնպէս որ արեգական առերևոյթ շարժումը կեցած տեսնուած ատենը՝ հարկաւ լուսնին կենալն ալ պիտի սպասուէր : Բայց ըստ հին դրութեան , որովհետև կ'ենթադրուէր թէ արէն ու լուսինն , իրարմէ անկախ , երկրիս բոլորափքը զատ շրջաններով կը դառնան , մէկուն կենալէն միւսին կենալը չէր հետևեր : Ուրեմն արեգական կենալուն հետ լուսնին ալ կենալուն խօսքը՝ ոչ հին , այլ նոր աստեղագաշխական արեգականային դրութեան համաձայն կուգայ . և նոր դրութիւնը ճշմարիտ բլալուն համար՝ իրաւաբար կրնանք ըսել թէ Աստ-

ոււածաշունչին առ յիշատակութիւնը բնական ճմարասութեան համաձայն է : Սուրբ Գիրքն աստղերուն վրայ խօսած ատենն ալ : փոխանակ , հին աստեղագիտաց պէս , հազարի չափ միայն դնելու , (ինչպէս կ'ընեն Հիպպարքոս և նախնի աստեղագիտաց ամենէն հռչակաւորը Պտղոմէոս , որոնց առաջինը՝ 1022 , երկրորդը՝ 1026 աստղ կը դնէ ,) ճիշդ նոր դիտակներով եղած դիտողութիւններուն համեմատ , աստղերուն անթիւ անհամար ըլլալը կ'իմացնէ : Ահաւասիկ այս մասին արդի աստեղագիտաց վկայութիւնը . 'Աստուած' , կ'ըսէ Սքր Ջօն Հէրշէլ , համաստեղութիւններն ու խիստ մանր աստեղաց խումբերն աչքէ անցընելէն ետքը՝ "զանոնք երկնից անհուն միջոցին մէջ փոշույ կամ մղեղի պէս ցաննեց" :

Բայց և այնպէս սա ալ պէտք է գիտնալ որ , Սուրբ Գիրքը բնական իրողութեանց վրայ խօսած ատենը՝ ընդհանրապէս հասարակ կամ սովորական լեզուով կը խօսի . և առ լեզուն իրողութեանց երևութիւն քան թէ իրականութեանը համեմատ է : Զոր օրինակ՝ Ճողովոյ Ա . 5 . 'Արևը կը ծագի ու արևը կը մտնէ՝ և իր ծագած տեղը արտօրալով կը դառնայ' ըսելով՝ անոր առերևոյթ շարժումները միայն կը նկարագրէ . քանզի արևին ծագելու , մտնելու կամ ետ գառնալու շարժումներն՝ իրական շարժումներ չեն , այլ , ինչպէս քիչ մը առաջ ըսուեցաւ , երկրի իր առանցքին վրայ դառնալէն յառաջ եկող երևոյթներ են : Սուրբ Գիրքին այսպէս երևոյթներու համեմատ խօսելուն պատճառն յայտնի է : Եթէ անիկա փիլիսոփայական ճիշդ լեզու գործածած ըլլար , թէև բնական իրողութեանց վրայ խօսող մասերն աստուածային հեղինակութիւն կ'ունենային , ան լեզուն չհասկցող սգէտներուն դժուարիմաց ըլլալով՝ զանոնք երկրայութեան մէջ պիտի ձգէր , և այնպէս անոնց օգտակար պիտի չըլլար . գիտնոց համար ալ բաւական պիտի չըլլար , քանզի , իր գլխաւոր նպատակին նայելով , այն բնական իրողութեանց վրայ հարկաւ հարեանցի և համառօտ պիտի խօսէր . սուտի և ոչ ճմարիս փիլիսոփայական ոգի մը մշակելու , ոչ ալ կրօնական օգուտներ յառաջ բերելու յարմար գիրք մը պիտի ըլլար :

Առնցմէ ոչինչ նուազ դիտողութեան արժանի է նաև այն կերպը՝ որով Սուրբ Գիրք վերացեալ խնդիրներ, կամ բարոյական դիտութեան մեծամեծ սկզբունքներ վր ծանուցանէ : Ան սկզբունքներն անոր մէջ յատուկ կերպով յայտնուած կամ բացատրուած չեն : Բայց, անոր պատմութեանցը և վարդապետութեանցը միջոցաւ յայտնուած ճշմարտութեանց մէջ պարունակուած ըլլալով, ան ճշմարտութիւններէն կրնան մակարերուիլ :

Սուրբ Գիրքէն անկախ կամ արտաքին քննութիւններ ՚ի վաղուց հետէ ցուցուցած են թէ՛ մարդուս սրտին համագամանքը կամ որպիսութիւնը մեծաւ մտամբ անոր մտքին խորհուրդներէն կախում ունի . և թէ՛ մարդուս մտքին վրայ ազդեցութիւն ընող բաներ՝ անոր սրտին վրայ ալ ազդեցութիւն կ'ընեն : Սուրբ Գիրքը, ճիշդ աս օրէնքին համամետ, կը սորվեցնէ թէ Աստուածային ճշմարտութիւններուն մտքով հաւատալը՝ կրնայ անոր սկզբունքները դործադրելը մարդոց դիւրացնել նոյն դերագոյն օգնութեամբ՝ որ բուն իսկ Սուրբ Գրոց մէջ հաւատքի հնազանդողներուն խոստացուած է, և այնպէս զանոնք սրբութեան զիճակին հասցունել : Սաղմ. ՃԺԹ. 9—11 : Ա կոր. ԺԵ. 2 : Բ կոր. Գ. 18 : Ա Պետր. Ա. 22 : Ա Յովհ. Գ. 16. 19 :

'Մարդս ի՞նչ կրնայ ընել որ իր հաւատքն ուղիղ ըլլայ' : Աս խնդիրն երկար ատեն խոհական մարդոց ուշադրութիւնը գրաւած է : Փիլիսոփայութիւնն աս խնդրոյն սա պատասխանը տուած է : 'Նրօնական վարդապետութեանց փաստերը քննելու է, մինչև որ ճշմարտութիւնը յայտնուի' : Սուրբ Գիրք ալ փիլիսոփայութեան աս վճռոյն հետ ըստ ամենայնի համաձայն է : Ճշմարտութեան մը հաւատալու (անիկա ընդունելու) և զայն սիրելու համար՝ հաւատոյ և սիրոյ ինչ ըլլալը պիտեալ բաւական չէ . և, ոչ թէ բռնի՝ այլ ճշմարտութիւնը քննելով հաւատքը կ'ուղղուի, և սիրոյ առարկային քաջ ծանօթ ըլլալով ուրիշ կը ծագի : Ուստի Սուրբ Գիրք կը պատուիրէ որ ուշադրութիւն և քննութիւն ընենք, վստահացնելով մեզ որ անկեղծ մտքը և խանարհութեամբ ասոնք ընելէն ետքը՝

ուղիղ հաւատք, հաւատքէն ետքն ալ՝ սուրբ զգացումներ անշուշտ կուգան :

Թէ մարդիկ ճշմարտութեան "ուշադրութիւն ընելով" հաւատքի կուգան՝ տես Գործ . Է. 6. 12; Եբբ . Բ. 1; Առակ . Բ. 1-9; Գ. 1-4; Մարկ . Գ. 24; Գործ . Ժ. 11, 12; Թէ մարդոց անզեղջուութիւնն անսոց անհոգութեանը հետեանքն է, անհոգութիւնն ալ սրտին ծուռ վիճակէն յառաջ կուգայ՝ տես Բ Թես . Բ. 10, 11; Մարկ . Է. 17; 18; Յովհ . Գ. 19, 20; Ե . 38, 40; Բ Կոր . Գ. 3, 4; Ովս . Գ. 10; Եւ թէ ուշադրութիւնն ու հաւատքը սուրբ զգացումներ յառաջ կը բերեն՝ տես Գաղ . Ե . 6; Բ Կոր . Ե . 11; Եբբ . ԺԱ . 3-31; Ա Յովհ . Գ . 16-18; Հռոմ . Զ . 6; Կող . Ա . 22, 23; Յես . ԻԲ . 5 :

Սուրբ Գիրքը կը յաւելու նաև թէ՛ ուշադրութիւնը Հոգւոյն Սրբոյ շնորհքն է, և թէ՛ նոյն Հոգւոյն ներգործութեամբն է որ հաւատքը, ճշմարտութեան յոտակ ճանաչումն ու որբութիւնը քննութեան և ուշադրութեան արդիւնք կ'ըլլան :

Թէ ուշադրութիւնը Հոգւոյն Սրբոյ շնորհքն է՝ տես Գործ . ԺԶ . 14; Զար . ԺԲ . 10 . և թէ ուշադրութենէ հետևած հաւատքը Սուրբ Հոգւոյն շնորհքն է՝ տես Գործ Ժ . 44 . և՛ ԺԱ . 17, 18 . 21 : Նոյնպէս թէ ուշադրութենէ և հաւատքէ հետևած ճշմարտութեան պայծառ ճանաչումը նոյն Հոգւոյն շնորհքն է՝ տես Ես . ԽԲ . 7 : Սաղմ . ԺԺԹ . 18 : Ղուկ . ԻԳ . 45 : Ա Կոր . Բ . 14 : Բ Կոր . Գ . 16 : Եփես . Ա . 17, 18 : Թէ ճշմարտութեան համար ուշադրութեամբ և հաւատով եղած քննութենէն հետևած սուրբ զգացումները նոյնպէս Հոգւոյն Սրբոյ գործն են՝ տես Եզեկ . ԼԶ . 27 : Բ Թես . Բ . 12 : Բ Պետր . Ա . 2, 3 : Գաղ . Ե . 22, 23 :

Աստուածաշունչին սեպհական մէկ յատկութիւնն ալ սա է, որ անիկա աստիճան աստիճան յառաջ երթալով եղած յայանութիւն մըն է : Աստուծոյ վերաբերեալ ճշմարտութիւններն ու անոր խորհուրդներն ինքնին յառաջագիմնութիւն կամ զարգացում չեն կրնար ընդունիլ, ըստ որում արդէն ինքնին կատարեալ են . բայց այն ճշմար-

տուժեանց յայտնուելն այնպէս չէ : Նոր ծագող արեւն առաւօտեան նսեմութիւնը փարատելով նախ բարձրերը կը լուսաւորէ , ու անոր լոյսը հետզհետէ աւելնալով վերջապէս ամէն դաշտ և ձոր կը փայլեցնէ : Դաշտն ու ձորը յաւաջագոյն ալ կային , բայց չէին երևեր : Յայտնութեան նկատմամբ ալ այսպէս է . Ճմարտութիւնն Աստուծոյ մըտապը մէջ միշտ նոյն է , բայց աստիճանաւ յայտնուելուն համար՝ յաւաջագիծութիւնը ոչ թէ ճմարտութեան , այլ անոր յայտնուելուն կերպին մէջ է , ըստ որում՝ Սուրբ Գիրքը ճմարտութիւն մը առաջ ազօտ կերպով նշմարել տալով նոյնը հետզհետէ որոջ և բացայայտ կ'ընէ :

Ջոր օրինակ՝ Աստուածաշունչին ամենէն հին գիրքերուն խօսքերէն Աստուածութեան մէջ բազմաւորութիւն , այն է՝ Երրորդութիւն ըլլալուն վարդապետութիւնը կը գուշակուի . և հաւանական է թէ ան խօսքերը յիշեալ վարդապետութիւնն ակնարկելու գիտմամբ ըսուած են : Այսպէս է հետևեալ խօսքը . «Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք» (Ծննդ . Ա . 26) : Թերևս աս գիտմամբ է նաև՝ որ Աստուածաշունչը ճմարտաւ Աստուծոյ վրայ խօսած ատենն ալ երբեմն Աստուծոյ անունը յոբնակի և բայը եզակի կը դնէ . ինչպէս Ծննդ Ա . 1 . Սաղմ . ԾԸ . 11 (ըստ Երրայտկան բնագրին) , և ուրիշ շատ տեղեր : Սակայն աս ճմարտութիւնը որ 'ի սկզբան այսպէս անորոշ և ազօտ կերպով կը նշմարուէր՝ ետքը Մարգարէից մէջ աւելի որոշակի իմացուեցաւ (Ես . Թ . 6 : Մէք . Ե . 2) . իսկ Նոր Կտակարանին մէջ լիովին յայտնուած է : Թուոց Զ . գլխոյն 22—27 համարներուն մէջ ըսուածը բազմատէ Նոր Կտակարանին յանուն Երրորդութեան եզած օրհնութեանը հետ . տես նաև Ես . Զ . 3 . ԽԸ . 16 . և Երեմ . ԻԳ . 5 . 6 : Աստուածաշունչը շատ տեղ «Յերոջը Հրեշտակն» ըսելով հաւանականաբար Մեսիան (Որդին , Աստուածութեան երկրորդ Անձը) կ'ուզէ իմացնել , քանզի , ինչպէս Հրեայ մատենագիրներն ալ ընդհանրապէս կը հասկընան , աս Հրեշտակը հոն աստուածային երկրպագութեան աշխարհի համարուած է . տես Ծննդ . ԻԶ . 7 և 13 , ուր

Աստուծոյ միայն սեպհական եզոզ անունն անոր կը տրուի .
տես նաև Ծննդ . ԻԲ . 11—18 : ԼԱ . 11—13 : ԼԲ . 28—30 .
Ովս . ՃԲ . 4, 5 : Ծննդ . ԽԸ . 15, 16 : ԵԼ . Գ . 2—15 :
ՃԹ . 19, 20 : Ի . 1 : ԻԳ . 20, 21 : Ասոնց հետ բաղդատէ
Գործ . Է . 38 : Յես . Ե . 13—15 : Զ . 2 : Դատ . ՃԳ .
3 . 23 : Ես . ԿԳ . 9 : Մաղ . Գ . 1 :

Սուրբ Հոգւոյն գործն ալ Հին Կտակարանին մէջ 'ի սկզբ-
բան նոյն անորոշ և ազօտ կերպով յայտնուած կը գըտ-
նենք . և որչափ Աւետարանին կամ 'նոր Կտակարանին կը
մտանանք , նոյնչափ սոյն վարդապետութիւնն աւելի պայ-
ծառութիւն կը ստանայ . բայց Սուրբ Հոգւոյն անձնաւո-
րութեանը , այսինքն՝ Աստուածութեան մէկ Անձն ըլլա-
լուն , և անոր գործին վրայ բացայայտ տեսութիւն մը՝
'նոր Կտակարանին մէջ միայն կ'ուենանք :

Սուրբ Գրոց մէջ Քրիստոսի վրայով եղած խօսքերէն ալ
աւելի բացայայտ կը տեսնուի թէ Աստուած իր յայտնու-
թիւնն աստիճանաւ , այսինքն՝ երթալով աւելի յայտնի և
լրասաւոր ընել ուզած է : Քրիստոսի վրայով եղած առա-
ջին խոստումը (Ծննդ . Գ . 15) սաչափ միայն մարգարէա-
բար կ'իմացնէր թէ՛ Աստուած մարգկային ազգին պիտի
ողորմի . Քրիստոսի գալուստն ու պաշտօնն ալ ընդ ազօտ
միայն կը գուշակէր : Արեւի պատարագին Աստուծոյ ընդու-
նելի ըլլալը՝ նախատիպ օրինակ մըն էր (Ծննդ . Գ . 4 :
Եբբ . ՃԱ . 4) . և կը ցուցնէր թէ այն պատարագը մա-
տուցողը կը հաւատար թէ առաջին խոստումը պիտի կա-
տարուի : Արեւի պատարագն , իբրև օրինակ , ընդ ազօտ
կ'իմացնէր նաև թէ՛ փոխանակ յանցաւորին , անմեղ մը 'ի
մահ պիտի մատնուի : Այսպիսի խոստումներ և օրինակներ
Ժամանակ անցնելով յաճախեցին : Մովսիսական օրինաց
մէջ շատ արարողութիւններ յայտնապէս օրինակի համար
հաստատուած էին , և անոնց նշանակութիւնը բացատրու-
ած է (Ղևա . Ա . 4 : Զ . 2—7 : ՃԷ . 11) : Սամուելէն
մինչև Մաղաքիա , վեց հարիւր տարուան միջոցին , իրարու
յաջորդեցին մարգարէներ՝ որոնք Մեսիային անձն ու պաշ-
տօնը հետզհետէ աւելի յայտնի կը ցուցնէին : Ասոնք գու-

շակեցին նաև թէ Սուրբ Հոգին պիտի թափուի , և Մենիայի թագաւորութիւնն ընդհանուր պիտի ըլլայ (Ա Պետր . Ա . 11 : Սաղմ . ԿԸ . 18 : Յովել . Բ . 28 : Ես . ԾԳ . և ԿԱ . 11 . Ջաք . ԺԴ . 9) . քանի որ առաջին յայտնութեանց մէջ ասոնց վրայ բան մը ըսուած չէ : Առաջին խոստմանն ու Մարգարէից ըսածներուն մէջ եղած տարբերութիւնը յայնմ է , որ Մարգարէք փրկութեան ինչպիսի բան և ինչ միջոցով ըլլալուն վրայ մանր և աւելի յոսակ տեղեկութիւն տուին . նոյնպէս փրկութեան վրայ յոսակ և մանրամասն խօսելու կարգանէ Աւետարանը Մարգարէներէն այնչափ աւելի յառաջ գացած է , որչափ Մարգարէներն Հնգամատեանէն :

Վարուց վերաբերեալ պատուէրներու մասին ալ Հին Ատակարանին մէջ նոյն առտիճանաբար յառաջագիմութիւնը կը տեսնուի : Մովսիսական օրինաց մէջ Աստուծոյ պատուէրներն աւելի ընդարձակ և յայտնի բացատրուած են քան Նահապետաց ժամանակը . Մարգարէից մէջ՝ աւելի բացայայտ և մանրամասն . Աւետարանին մէջ՝ ևս աւելի : Մարգարէները Մովսիսական օրինաց հետ բաղդատելով՝ կը գտնենք որ անոնք մարդուս անձին կամ հոգւոյն սրբութիւնը ծիսական մարբութենէն զանազանելով՝ սրբութեան աւելի կարեւորութիւն կուտան , նաև Աստուծոյ պատուիրանքներուն կատարմանը համար ժամանակաւոր վարձատրութիւններ շատ քիչ կը խոտանան : Օրէնքը համառօտ և խիստ պատուէրներ ունի , անհնազանդներուն ալ անողզքելի խտտութեամբ պատիժ կը սպառնայ . Մարգարէից մէջ ամենայն ինչ մեղմ և յանկուցիչ կերպով ներկարգրուած է : Ջոր օրինակ՝ Օրէնքն ըսած էր . “ՔուՅէր Աստուածդ պիտի սիրես բոլոր սրտովդ ու բոլոր զօրութեամբդ” : Մարգարէք նոյն պատուէրին միտքն աւելի յայտնի ընելով՝ անոր նոր հոգի , նոր զօրութիւն տուին . իմացուցին թէ աս պատուէրը մարդէն ինչ գերազանց սրբութիւն կը պահանջէ , և այսպէս աս պատուէրը որ մարդոց վարուց կանոն է՝ աւելի լուսաւոր և գործնական ըրին : Թող ընթերցողը զղջման վրայ Հնգամատեանին մէջ գրանուած պատուէրները՝ նոյն զղջման պարտաւորութեանը վրայ

Մարգարէից մէջ գրուածներուն հետ (Բ Օր . Լ . 1-6 . ԵԼ . ԺԸ . Ես . ԾԷ . 15, 16 . Սաղմ . Խ . 6-8 . ԾԱ . 16, 17) բաղդատէ . Թող իրարու հետ բաղդատէ նաև Մովսէսի ու Մարգարէից այն խօսքերն (Ես . ԿԶ . 20, 21) որոնք իր Իսրայէլ ժողովուրդը և Հեթանոսները լուսաւորելու եկող Մեսիային նոյն շրջից և Հեթանոսաց հետ ունեցած յարաբերութեանը կը վերաբերին : Դարձեալ Թող դիտէ Թէ Ինչպէս , քանի որ Աւետարանին առաւօտը ծագելու կը մտնեար , նոյնչափ բոլոր յայտնուած ճշմարտութիւնները հոգեւոր և յասակ կ'ըլլային (տես մանաւանդ Եբ . ԼԱ . 31-34) . առ բաղդատութիւններն և առ դիտողութիւնը , կ'ըսենք : Թող ընթացողն ընէ , անտարակոյտ յայտնութիւնն ինքն իրեն համաձայն , բայց երթալով աճած ու զարգացած պիտի գտնէ . և այս երկու կէտերուն , այսինքն՝ համաձայնութեան և զարգացման մէջ յայտնապէս ներկայ պիտի տեսնէ առաւօտային ազդեցութիւն մը որ , ինչպէս տարւոյն եղանակներն իրարու յաջորդել տալու , նոյնպէս գէպքերը նախաինամբար անօրինելու և Աստուծոյ կամքը որոշակի ցուցնելու մէջ , յամբ և աստիճանաբար յառաջ երթալով կը գործէ :

Սուրբ Գրոց այսպէս աստիճանաբար յայտնութիւն մը ըլլալուն համար՝ հարկ է որ անոր այլևայլ մասերն , այսինքն՝ պատմական մասերը , Սաղմուններն ու Մարգարէները , կարգացուին այն ժամանակագրական կարգով որով Սուրբ Հոգին զանոնք յայտնած է : Պէտք է գիտնալ նաև թէ , ոչ միայն վարդապետութեանց աստիճանաբար յայտնուած ըլլալուն համար , այլ և . որպէս զի բոլոր բռնածոներուն յարգն ու զօրութիւնն ըստ արժանւոյն ճանչցուի , գործեալ Սուրբ Գիրքը ժամանակագրական կարգաւ սորվիլ հարկ է : Օրինակի համար՝ Պողոսի առաջին երկու թուղթերն , այսինքն Թեոսղոնիկեցաց Ա . և Բ . թուղթերը , վերջէն գրուած Յիմիթէոսի Ա . և Բ . թուղթերուն հետ բաղդատելով պիտի տեսնուի թէ քանի մը ապրուան միջոցը յիշեալ Աւաքելոյն զբացմանցն ու Քրիստոսնից վիճակին վրայ Ինչ փոփոխութիւններ յառաջ բերած է :

Առտուածային յայտնութիւնն այսպէս հետզհետէ աւա-
ւել որոշ և ընդարձակ կերպով տրուած ըլլալուն համար
այլևայլ գլխաւոր դարազլուիւններ ունի, որոնք, իբրև ի-
բարու յաջորդող մէյմէկ նոր տնտեսութիւն համարուած
են. զոր օրինակ՝ Ադամեան, Նահապետական, Մովսէս-
կան և Աւետարանական տնտեսութիւններ: Տնտեսութիւն
բառն այս առմամբ կը նշանակէ այս ինչ ժամանակ Առտու-
ծոյ մարդոց հետ հաղորդակցութիւն ընելուն եղանակը, և
այն ժամանակուան միջոցին մէջ յայտնուած շշմարտու-
թիւնները և հրամայուած արարողութիւններն ու վարմանց
կանոնները:

Ադամեան տնտեսութիւնը մարգուտ անմեղութեան միջո-
ցը միայն կը պարունակէ:

Նահապետական տնտեսութիւնը 2,500 տարիէ աւելի
աւելց: Ասոր պատմութիւնը Ծննդ. Գ. գլխէն մինչև ԵԼ. Ի.
գրուած է: Աս տնտեսութիւնը Նահապետական բուռեցաւ,
վասն զի աս միջոցին մարդկային ազգը կառավարող և կրթ-
թող անձինք՝ ընտանեաց գլուխներն (Նահապետք) էին.
զոր օրինակ՝ Ադամ, Սեթ, Ենոզք ու Նոյ՝ ջրհեղեղէն ա-
ռաջ. Յոբ, Մեղքիտեգեկ, Աբրահամ և անոր զաւկները՝
ջրհեղեղէն ետքը: Ասոնք էին Առտուծոյ կամքին աւան-
դապահները, մարգարէութիւններ ընդունողները. ոմանք
նաև քանի մը նկատմամբ քրիստոսի օրինակ էին, ինչպէս
անոնց պատմութենէն յայտնի է: Աս շրջանին մէջ, թէև
կանխատեսութիւններ քիչ եղան, սակայն Մեոխայի վրոյ
կան քանի մը նշանաւոր ակնարկութիւններ, ինչպէս են՝
զոհ ընելը, զոհի համար սուրբ անասնոց անուրբներէն
որոշուելը (Ծննդ. Ը. 20.), և Աբրահամին եղած ուխտը
(Ծննդ. փ. 3.): Նահապետական տնտեսութեան մէջ
ալ Մովսէսականին գլխաւոր սկզբունքներէն շատերը կը
նշմարուէին:

Մովսէսի ձեռք չբերող եղած ուխտը, այսինքն՝ Մովսի-
սական տնտեսութիւնը, իբր 1,500 տարի աւելց: Ասոր մէջ,
իբրև 'գալու բաներուն շուքը', կան նաև շատ անձինք,
անզեր և իբր, որոնց 'բուն կերպարանքը' Աւետարանին

մէջ կը գտնուի : Նոյն իսկ Հրէական ժողովուրդն իր օրէնք-
ներովն ու պատմութեամբն Աւետարանին տնտեսութեանը
ներքէ ըլլալու Եկեղեցւոյն ճշմարիտ օրինակէր : Յետ՝ ՂԼտ .
Ջ . 2—Թ : ԺՋ . 22 : ԺԷ . 11 : Գոշ . Բ . 17 : Եբբ . Ժ . 1 :
և Ա Գոբն . Ժ :

Աւետարանական տնտեսութիւնը՝ որուն մեծամեծ սկզբ-
բունքներն առջի տնտեսութեանց մէջ կը նշմարուէին՝ Աւե-
տարանին մէջ պատմուած իրողութեանց, այսինքն՝ Գրիտոսի
կենացն ու մահուանը վրայ կը կայանայ : Գործոց Առաքե-
լոց մէջ յիշուած թէ՛ անհատ հաւատացեալներու թէ Եկե-
ղեցեաց պատմութիւններն՝ այն իրողութեանց արդիւնքը
կը ցուցնեն : Սոյն այս իրողութեանց վրայ հիմնուած վար-
դապետութիւններն Առաքելոց Թուղթերուն մէջ պարզու-
ած են , անոնց գործադրութիւնն ալ պահանջուած է . իսկ
Յայտնութեան Գրքին մէջ, մոլորութեան հետ ճշմարտու-
թեան ընելու կռիւները և Եկեղեցւոյ պատմութիւնը մինչև
աշխարհիս վերջը՝ մարդարէական տեսիլքներով յայտնուած
կը գտնենք : Յիշեալ Գիրքերն , այսինքն՝ Աւետարանները ,
Առաքելոց Գործքերը , Թուղթերն ու Յայտնութեան Գիր-
քըն , Աւետարանական տնտեսութիւնը կը պարունակեն , և
ազոնցմով Առասուծային վարդապետութեանց յայտնու-
թիւնը կը վերջանայ : Կան թերևս Առասուծաշունչին մէջ
այնպիսի տեղեր՝ որոնց բովանդակնշանակութիւնը ասկաւին
գտնուած չէ . անոնց նշանակութիւնն ու զօրութիւնն ալ
ժամանակաւ ծագելու հերետիկոսութիւն մը նուաճելու ,
կամ դեռ անծանօթ առարկութիւն մը լուծելու , կամ
տակաւին անյայտ մոլորութիւն մը խայտառակելու , կամ
Սուբբ Գրոց Առուծմէ արուած ըլլալուն մարդարէական
նոր ապացոյց մը ըլլալու պահուած են : Քանզի Սուբբ Գիր-
քը կը նմանի խորայտակ ծովու , որ պայծառագեղ՝ բայց
խորունկ է . ուստի և անոր նշանակութեանը վրայ մտքին
տեսութեանը չափ և ուսման չի կրնար արուիլ : Բայց և այն-
պէս՝ եղածէն զատ նոր յայտնութեան սպասելու չենք . ոչ
ալ մարդոց Սուբբ Գրոց վրայ ըրած յաւելուածներն՝ անոր
վարդապետութեանը բացարրութիւն կամ զարդացում

Համարելու ենք : Սուրբ Գրոց վարդապետութիւններուն վրայ այսպիսի յաւելուածներ ընելու Եկեղեցական Հեղինակութեամբ փորձեր եղած են . բայց այսպիսի Հեղինակութիւն մը Եկեղեցոյն արուած չէ : Աւարելոյն Եկեղեցին «Ճշմարտութեան սիւնը և Հաստատութիւնը» կոչելը (Ա ՅԻՄ . Գ . 15) կը նշանակէ թէ Եկեղեցին ճշմարտութիւնը Հաստատ բռնելու և մարդոց ցուցնելու միջոց, ոչ թէ Աստուծոյ Խօսքին վրայ բան աւելցնելու իշխանութիւն ունեցող է . ընդհակառակն՝ Սուրբ Գրոց վարդապետութիւններուն վրայ որեւիցէ յաւելուած ընելը բացարձակ կերպով արդիւուած է (Գաղ . Ա . 8 : Յայտ . ԻԲ . 18) :

Սուրբ Գրոց մէկ գլխաւոր յատկութիւնն ալ անոր Բնական է : Գրութեան մը Համար՝ միութիւն ըսելով կ'իմացուի անոր մէկ գլխաւոր նպատակ ունենալը , որ սկիզբէն մինչև վերջը գրեթէ անոր ամէն մէկ էջին մէջ կը տեսնուի :

Սուրբ Գրոց միութիւնը նախ անոր միօրինակ բարոյական նպատակ մը ունենալուն մէջ կը տեսնուի : Անիկա մարդկային ազգին Աստուծոյ Հետ ունեցած բարոյական յարաբերութեանցը պատմութիւնն է : Բոլոր ուրիշ կեղծ յայտնութեանց մէջ՝ մատենագիրները երկար կը պատմեն թէ Յիւզերաց սկիզբն ի՛նչ էր , կամ թէ ուրիշ կեանքի մը մէջ մարդոց բնակարանը , կերակուրն և ըմպելիքը Խ : Ի՛նչ պէս պիտի ըլլան . այնպիսի բաներ՝ որոնց կարևորութիւն մը ունենալը երևակայել անգամ անտեղի է : Իսկ Աստուծաշունչին բոլոր սորվեցուցածք՝ մարդոց , այսինքն՝ անհատից , ընտանեաց և ազգաց , Աստուծոյ Հետ ունեցած բարոյական և գործնական յարաբերութեանցը կը վերաբերի : Անոր մէջ չենք տեսնել , ոչ աշխարհածնութիւն , այսինքն արիւնքերաց բնական կերպով կազմուելուն պատմութիւնը , ոչ դիցարանութիւն , ոչ բնազանցութիւն , այն է վերացեալ կամ մտօք միայն ըմբռնուելու բաներու օւսումը : Հոն պատմուած չէ այնպիսի սքանչելիք մը որ բարոյական չէ : ոչ ալ յառաջ բերուած է երևակայութեան մէջ յղացուած գաղափար մը որ իրական չէ և կամ չի կրնար իրօք ըլլալ : Անոր պատմութիւններուն , վարուց նկարագիրներուն ,

մարդարէութեանցը և երգերուն (Սաղ: 105) մէջ՝ միայն մէկ նպատակ կայ, այն է՝ Աստուծոյ ու մարդոց, և մարդոց իրարու մէջեղ եղած յարաբերութիւնները որ կտրած են՝ նորէն կցելով, մարդկային ազգն անկեալ վիճակէն վերջնել ու սրբացնել:

Ոչինչ նուազ զարմանալի միութիւն մը կը գտնենք նաև, եթէ Սուրբ Գրոց միջոցաւ մարդոց սորված և հաւատացած վարդապետութեանց միտ դնենք: Ամէն տնտեսութեան տակ Աստուծոյ ծառաները նոյն մեծամեծ սկզբունքները ճանչցած են. այսինքն՝ թէ Աստուած անոնցմէ միշտ հաւատք և հնազանդութիւն կը պահանջէ: Անոնց հաւատքն ալ, շատ հին ատեններն անգամ, սա բաներուն վրայ կը կայանար, այսինքն թէ՛ Աստուած մէկ է, և ամէն բան անոր զօրութեամբը ստեղծուած է և կը պահպանուի. թէ՛ կայ ընդհանուր ու մասնաւոր նախախնամութիւն, և Աստուածային օրէնք մը՝ որ արդարին և անիրաւին մէջեղ զանազանութիւն կ'ընէ. թէ՛ մարդս ինկած և ապականուած է, և թէ անոր վարուց սրբութիւն հարկաւոր է: Թէ՛ մէկը փոխանորդաբար չարչարուելով մարդոց մեղքերուն համար քաւութիւն ընելու է. թէ՛ ազօթել պարտք է, և ազօթքն ազդուութիւն ունի. թէ՛ մարդոց որտերուն և գործքերուն մէջ Աստուած ուղղակի կերպով կը գործէ, բայց և այնպէս մարդս կատարելապէս պատասխանատու է:

Մովսէսի ձեռք տրուած օրէնքը շատ արարողութիւններ ունէր, և յայտնի է թէ ամէն ժողովրդեան վիճակին յարմար չէր կրնար գալ: Այլ Հրէից յատուկ պարագաներուն միայն կը յարմարէր: Աւետարանը շատ քիչ արարողութիւններ ունի, որոնք պարզութեան կողմանէ զբանջելի են, այնպէս որ ամէն ազգ և ժողովուրդ զանոնք միշտ կրնայ գործարել: Բայց, թէպէտ առաջին հայեցումով առ երկու դրութիւնները, Հրէականն ու Աւետարանականը, այսպէս իրարու աննման կ'երևին, երկուքն ալ էապէս մի են: Աստուծոյ ու մարդոց վրայ միևնոյն տեսութիւնը կուտան, միևնոյն ճշմարտութիւնները կը նշմարեցնեն կամ յայտնի կը վարդապետեն, և միևնոյն զգացումներն յառաջ բերելու յարմար են:

Այս երկու դրութեան միևնոյն ըլլալուն օրինակ մը յաւաաջ բերենք : Սուրբ Գրոց, այսինքն՝ Հին և Նոր Կտակարանաց մէջ, մարդկային բնութեան իրարու ետևէ քանի մը նկարագրութիւնները կան . այսինքն՝ նկարագրուած է թէ մարդկային բնութիւնն ինչպէս էր նախ՝ ջրհեղեղէն առաջ . երկրորդ՝ ինչպէս էր անկէ անմիջապէս ետքը . երրորդ՝ ինչպէս էր ջրհեղեղէն հաւանականաբար 8(10) տարի ետքը, և աս նկարագիրը Յօբայ գրքին մէջ պահուած է . չորրորդ՝ ինչպէս էր՝ յիշեալ թուականէն 500 տարի ետքը, այն է՝ Դաւթի ժամանակը . հինգերորդ՝ ինչպէս էր անկէ ուրիշ 500 տարի մը ետքը, այսինքն՝ Երեմիայի ատենը . վեցերորդ և վերջապէս՝ ինչպէս էր վերջինէն 500 տարի ետքը, որ է՝ Առաքելոց ժամանակը : Թող ընթերցողք աս նկարագիրներն իրարու հետ, նաև իրենց բուն փորձառութեանը հետ բաղդասանն . աս նկարագրութեանց ամենուն ալ միևնոյն, նաև ճշմարիտ ըլլալը պիտի զգան, և պիտի տեսնեն թէ՛ ներշնչեալ մատենագիրք մէկ նպատակ ունէին, այն է՝ մեր ազգականեալ բնութիւնը եղածին պէս նկարագրել, և ցուցնել թէ անիկա զղմամբ և հաւատով կը նորոգուի : (Ծննդ. Զ. 5 : Ը. 21 : Յօբ. ԺԵ. 16 : Սաղմ. ԺԴ. 2, 3 : Հռոմ. Ա. 21—32 : Գ. 1—20) :

Սուրբ Գրոց մէջ տեսնուած աս միութեան առարկաները՝ մարդկային գիտութենէ բոլորովին դուրս վարգապետութիւններ են : Ազտուածաշունչն ամէն տեղ միևնոյն սուրբ, իմաստուն և բարի Աստուածն յայտնելով՝ կը ոտրվեցնէ թէ Աստուած աշխարհս վարելու մէջ ի՛նչ նպատակներ ունի, և թէ աշխարհիս վրայ բարւոյն ու չարին մէջտեղ եղած կռուոյն վերջին արգիւնքն ի՛նչ պիտի ըլլայ (Ծննդ. Գ. 15 : Դան. Է. 13, 14 : Ա Յովհ. Գ. 8 .) : Սուրբ Գիրքը մարդկային բնութեան ու ճշմարիտ երջանկութեան վրայ կը խօսի (Ծննդ. Ա. 26 : Ժող. ԺԲ. 13 : Մատթ. Ե. 3—12), մարդկային գործողութեան գաղտնի շարժառիթներն անհամեմատ Խարտարութեամբ մի առ մի կը ցուցնէ, մարդկային թշուառութեան գլխաւոր աղբիւրներն ալ կը նշանակէ : Աոճը այնպիսի նիւթեր են որ ամենէն իմաստ-

տուն մարդոց խորհուրդները գրաւեցին . բայց որչափ բոլոր այն մարդոց տեսութիւններն անորոշ և իրարմէ տարբեր են, նոյնչափ Աստուածաշունչին տեսութիւնները որոշ և յայտնի են :

Դիտողութեան արժանի է որ Սուրբ Գրոց մէջ առ միւս-թիւնը գրքին մէկ հեղինակի կամ մէկ դարու գործ ըլլալէն չէ : Աստուածաշունչին փոքր մասերուն հեղինակներն ալ մէկտեղ հաշուելով . քառասուն այլևայլ մասենագիրք այն գիրքը գրած են . անոր ոճը կամ գրուածն ալ երբեմն պատ-մութիւն, երբեմն երգ, մերթ փաստարանութիւն, մերթ մէկուն վարուց պատմութիւնը կամ մարգարեութիւն կամ թուղթ է : Ցեսնելով որ բոլոր առ տարբերութիւն յառաջ բերող պատճառները Սուրբ Գրոց միութիւնը չեն կրցած ազարտել, այլ ընդհակառակն անոր մէջ զարմանալի ներ-դաշնակութիւն մը կը տիլէ՝ կը ստիպուինք խստաովանելու թէ այն ներդաշնակութիւնը հարկաւ յիշեալ պատճառե-րէն աւելի խորին, և անոնց ազգեցութեանը դէմ գնելու չափ զորաւոր գաղտնիք մը ունեցած է : Այս գաղտնիքն անտարակոյս գերմարդկային խնամք ունեցող, իմաստու-թեամբ և կարողութեամբ անհուն էակի մը քով միայն կր-նայ գտնուիլ . ուստի և կրնանք ըսել թէ՝ Սուրբ Գրոց այն-պէս սքանչելի համեմատութեամբ շինուած ամբողջ շէնքը, որուն կանգնեալը 4000 տարիէ աւելի տևեց, անշուշտ ու-նեցած է Աստուածային հիմնադիր մը որ, անոր գաղափարը ծրագրելէն ետքը, բոլոր գործին վրայ տեսչութիւն և հսկա-ղութիւն ալ բրաւ :

Աս իրողութիւններէն հետևեալ դիտողութիւնը կ'ելլէ : Սուրբ Գիրքը ոչ իբր զատ զատ յայտնութիւններէ բազ-կացեալ, այլ իբրև մի և անբաժին յայտնութիւն մը պա-րունակող գիրք պէտք է նկատել : Նոր Կապարանին մէջ յոսակ յայտնուած վարդապետութիւնները՝ Հնոյն վար-դապետութեանցը հետ սերտ կապակցութիւն ունին, ըստ սրում անոնց մեծ մասը շին Կապարանին մէջ յայտնեալ վարդապետութիւններէն կամ պատմուած դէպքերէն ապացոյց և բացատրութիւն կ'ընդունին : Նոր (Աւետա-

բանական) Տնտեսութիւնը՝ Հնոյն (Մովսէսականին) լրուսն է . այսինքն՝ Նորը կերպով մը միշտ Հնոյն պակասը կը լեցնէ : Առաջինը (Հինը) օրինակ էր . երկրորդը (Նորը) այն օրինակաւ նշանակուած բուն իրն է : «Գալու բարիքներուն» , այն է՝ Նոր Տնտեսութեան մէջ ըլլալու բաներուն , բնութիւնը , այսինքն՝ անոնց ինչպիսի բաներ ըլլալն , անոնց «շուքէն» , այն է՝ Հին Տնտեսութեան մէջ ցուցուած օրինակներէն , կրնայ հասկցուիլ , ինչպէս որ բուն կամ իրական բարիքներէն ալ : Դարձեալ Հին Վտակարանը Հին Տնտեսութեան նկատմամբ կը յիշէ շատ մը պատմական կամ գործնական բաներ՝ որոնք Նոր Տնտեսութեան ներքեւ եղող մարդոց համար ալ մեծ կարևորութիւն կրնան ունենալ : Չոր օրինակ . Հին Վտակարանը կարդալով կը տեսնենք որ Հրէական Եկեղեցւոյն մէջ ալ կը պահանջուէին նոյն շը . նորհիւքները՝ որոնք հիմա Նոր (Քրիստոնէական) Եկեղեցւոյ մէջ կը պահանջուին . կը տեսնենք որ այն ատենն ալ սուրբ մարդիկ մեր ունեցած փորձութիւններուն նման փորձութեանց դէմ կը կռուէին : Բայց Հին Վտակարանին նկատմամբ ուս ալ մանաւանդ գիտնալ պէտք է որ , անհատներու և ազգերու , ինչպէս նաև բոլոր մարդկային ցեղին պատմութեանը մէջ կայ ժամանակ մը՝ որուն մէջ , կ'երևի թէ , մարդոց բնաւորութիւնը հոգևորապէս կրթելու համար հարկաւոր էր որ ճշմարտութիւնը՝ Հին Վտակարանին մէջ եղածին պէս իրրև նախնական սկզբունք , և կամ թէ Նոր Վտակարանին մէջ եղածին հետ բաղդատելով , անհարթ կամ անկատար կերպով մը տրուէր : Արդի փորձառութիւններով յայտնի եղած է , որ Աստուծոյ սրբութեանն ու մարդուս պարտաւորութեանը վրայ Հեթանոս ազգաց աւելի յստակ գաղափար կուտան Հին Տնտեսութեան իրողութիւններէն և արարողութիւններէն ոմանք՝ քան թէ Նոր Վտակարանին մէջ տրուած կատարեալ և բացայայտ յայտնութիւնները :

Սուրբ Գրոց ուրիշ մէկ յատկութիւնն ալ ուս է , որ անոր մէջ յայտնուած ճշմարտութիւնները դրութեան ձև չունին . և ամբողջ Քրիստոնէական վարդապետութիւնն

անոր մէջ բովանդակուած չէ այնպէս՝ ինչպէս՝ համառօտ Աստուածաբանութեան կամ Քրիստոնէականներու մէջ ընել սովորութիւն է : Նոյնպէս ալ Քրիստոնէական կենաց կամ վարուց կանոններն անոր մէջ այնպէս ժողովուած և աւանդուած չեն, ինչպէս Քարոյական Ուսման Դասազրքի մը մէջ կ'ըլլայ : Սուրբ Գիրքն այս կողմանէ սուտ կրօնքներու գիրքերէն շատ տարբեր է : Աս վերջիններուն մէջ հաւատոյ մասերը, ծովերու, լուացմանց և կրօնական պաշտաման ուրիշ կէտերուն վերաբերեալ կանոններն ալ՝ մանրամասն աւանդուած են :

Սուրբ Գրոց մէջ այսպէս չէ : Հին Կտակարանին ամենէն նախկին մասը, մնացած գիրքերուն ալ շատերը, լոկ պատմական են, թերի և համառօտ . իսկ բարոյական ճշմարտութիւնները ոչ ուղղակի այլ պատմութեանց միջոցով միայն կը սորվեցնեն : Աստուած դեռ Մովսիսական օրէնքը չտուած, իբր 2000 տարի, երբեմն երբեմն մարդոց հետ հաղորդակցութիւն ունեցաւ . այլ թէ ինչ բաներ յայտնեց և ինչ կերպով Սուրբ Գրոց մէջ այն ժամանակին վրայով յիշուած պատմութենէն ըստ մասին միայն կրնայ հասկցուիլ : Արդարև Աստուածաշունչին մեծ մասին միջոցովը ոչ այնչափ ուղղակի ճշմարտութիւններ կը յայտնուին, որչափ արդէն յայտնուած ճշմարտութիւնները կը պատմուին կամ կ'աւանդուին : Նոյնպէս Նոր Կտակարանը Քրիստոնէական հաւատքն արդէն ընդունող և անոր մէջ կրթուողներուն համար այլևայլ առթիւ գրուած է : Չորս Աւետարանները լոկ պատմական են . կրօնական ճշմարտութիւններն աւելի պատմութեանց միջոցով կը սորվեցնեն քան թէ դրութեան ձևով կը յայտնեն : Առաքելոց Քուղթերուն գրուած ատենը՝ շատ Եկեղեցիներ աստուածային վարդապետութեան վրայ հիմնուած, և Աստուծամէ ցուցուած գաղափարներուն համեմատ արդէն կազմուած էին : Ուստի չենք կրնար ակնկալել որ աս Գիրքերը Քրիստոնէական ուսման տարերքը դասազրքի մը պէս կարգաւ և ամփոփ աւանդեն . կամ հաւատոյ մասունքը մի ըստ միով բովանդակեն :

Արօնը բառով երկու տեսակ բան կը նշանակուի . մէյ մը՝ ուղիղ վարդապետութիւններ . երկրորդ՝ յայտնեալ բարոյական սկզբանց համեմատ աւերը զգացմունք և վարք : Աւջիններն հաւատալու աւարկաներ են և ճշմարտութիւն կ'ըսուին . երկրորդը հաւատացող անձին կը վերաբերի և բարեպաշտութիւն կը կոչուի : Սուրբ Գիրքը, ոչ թէ գիտութեան դասագրքի մը պէս իբրև ուսում, այլ միայն օրինակով կամ երբեմն դէպքէ մը առիթ առնելով, երկուքն ալ կը սորվեցնէ : Օրինակի համար՝ դիտենք թէ Սուրբ Գիրքն Աստուծոյ բնաւորութիւնն ու անոր բարոյական կառավարութիւնը, մարդուս բնութիւնն ալ ինչպէս կը նկարագրէ :

Աստուծոյ բնաւորութիւնն ըսելով՝ անոր զօրութիւնը, իմաստութիւնը, սրբութիւնը, և այլն, կը հասկցուի . բարոյական կառավարութիւն ըսելով ալ՝ անոր սուրբ և անխախտ սկզբունքներով տիեզերաց վերաբերութիւն ունեցող ամէն բանի վրայ վերին տեսչութիւն մը ունենալը կը հասկցուի : Բոլոր Աստուածաշունչին մէջ ամէն աեղ անոր վերոյիշեալ կատարելութիւններն, միայն անոր գործքերուն միջոցովը յայտնուած են ; այսինքն՝ դէպքի մը առիթիւ, և բարոյական արդիւնք մը յառաջ բերել պէտք եղած ժամանակը : Աստուծոյ կառավարութիւնն ալ՝ անոր բրածներուն կամ տուած պատուէրներուն միջոցաւ միայն նկարագրուած է . զոր օրինակ՝ մանաւառ դէպքերու նըկատմամբ ըսուած խօսքերէն կամ տրուած պատուէրներէն կը սորվինք թէ՛ Աստուած մարդիկ իրենց գործոցը համեմատ առանց աչառութեան կը դատէ (Բ Օր . ձ . 17 : Բ Մնաց . ձ . 7 : Հուով . Բ . 11 : Գաղ . Բ . 6 : Եփես . Զ . 9 : Կոր . Գ . 25 . Ա . 17) . կը ներէ և ներելու պատրաստ է (Դան . Թ . 24 : Բ Մնաց . Է . 14) . մարդոց աղօթքը կը լսէ և անոնց պատասխան կուտայ (Բ Մնաց . ԼԳ . 12 . 13 : Ծննդ . ԻԴ . 12—61) . մարդոց շարժառիթներուն կամ անոնց սրտի խորհուրդներուն միտ կը դնէ , ինչպէս Ղովտին կնոջն ու Յովասին դէպքերէն յայտնի է (Ծննդ . ձ . 26 : Դ Թագ , ձԴ 14—19) . իր ամենէն աւելի սիրե-

լիներն ալ կը պատժէ, ինչպէս Մովսիսի, Դաւթի և Եզեկիայի ըրաւ (Թու. Ի. 12, Բ Թագ. ԻԴ. 11. 15, Բ Մնաց. ԼԲ. 25). արդարը կը պահպանէ, և թէ՛ իրեն ապաւինողներէն ոչ ոք անյոյս թողած է (Ա Թագ. ԺԷ. 37, Փիլիպ. Դ. 12. 18): Կը սորվինք նաև թէ՛ ամենէն աւելի գիպուածական կարծուած իրողութիւններն անգամ անոր տնօրինելիքն եղած են (Երեմ. ԼԸ. 7-13, Գործ. ԺԶ. 23). թէ՛ անիկա շնչին կամ իրարու հակասական երևցող միջոցներով իր նպատակներն 'ի գլուխ կը հանէ (Ա Թագ. Թ. 3. 15, 16, Դատ. Է. 13-15). և թէ՛ չարերն անգամ իր կամայցը կատարմանը գործիք կ'ընէ (Նեեմ. ԺԻ. 2, Գործ. Բ. 23): Նոյնպէս Սուրբ Գիրքն, այլ և այլ մարգոս ըրած գործքերը պատմելով, կը սորվեցնէ մարդկային բնութեան մեղանշականութիւնը: Ուստի՛ ջրհեղեղէն առաջ եղող մարգոս պատմութեանը մէջ կը տեսնենք զգուելի չարութիւն և ամբարշտութիւն մը (Ծննդ. Զ. 11-13, Յուգ. 14, 15). Յովսեփայ եղբայրներուն և Կայենի վրայ՝ նախանձ (Ծննդ. ԼԷ. 11, Դ. 5). Սաւուղի վրայ չարակամութիւն (Ա Թագ. ԺԸ. 28, 29). Գովեկի և Սիբայի վրայ քսութիւն (Ա Թագ. ԻԲ. 9, Բ Թագ. ԺԶ. 1-3). Կորիայ և Աքայաբու վրայ՝ Աստուածային կարգադրութեանց արհամարհութիւն (Թու. ԺԶ. 3, Գ Թագ. Ի. 13. 28. 33-43, ԻԲ. 1-40). Աքարայ և Բաղամի, Գեեզի և Յուգայի վրայ՝ ազահութիւն (Յես. Զ. 19, Է. 21, Մարկ. Ժ. 35-37). Զերեթէոսի որդւոցն ու Աբիմեկիբի վրայ՝ փառասիրութիւն (Մտթ. Ի. 20, 21, Դատ. Թ. 1-15). Եզեկիայի և Նաբուգոդոնոսորայ վրայ՝ հպարտութիւն (Դ Թագ. Ի. 13, Դան. Դ. 30):

Դարձեալ՝ մարգուս իր կիրքերէն խաբուած կամ կուրացած ըլլալուն ազդեցութիւնը կը տեսնենք Բաղամի և Դաւթի վրայ (Թու. ԻԲ, Բ Թագ. ԺԲ. 5-7). նախանշաւարման զօրութիւնը՝ Նեեմանայ, Նիկոդեմոսի, և Աթէնքի ու Եփեսոսի ժողովրդեան վրայ (Դ Թագ. Ե. 11, 12, Յովհ. Գ. 1-11, Գործ. ԺԷ. 18, ԺԹ. 28). ու նախութեան զօրութիւնը՝ Աքայաբու վրայ, որ Եզիայի

առջև խոնարհելէն ետքը՝ դարձեալ իր կուռքերուն դարձաւ (Գ Թագ. ԻԱ. 27, ԻԲ 6) . նոյնը կը տեսնենք Փելիքոսի վրայ, որուն համար կը կարդանք Թէ անգամ մը զարհուրեցաւ, բայց չենք կարդար Թէ դարձեալ զարհուրեցաւ (Գործ. ԻԴ. 25) : Ընդհակառակն, եթէ Սուրբ Գրոց մէջ առաքինութեան մը բացատրութիւնը փնտռելու ելլենք, կը տեսնենք որ Սուրբ Գիրքն աս առաքինութեան ինչ բլլալը մեզի կը սորվեցնէ այնպիսի օրինակներով՝ որոնց մէջ աս առաքինութեան զօրութիւնը կը տեսնուի : Ուստի՝ Աբրահամու վրայ կը տեսնենք հաւատք (Գաղ. Գ. 7—9) . Յորայ վրայ՝ համբերութիւն (Յակ. Ե, 11) . Մովսիսի վրայ՝ հեղութիւն (Թու. ԺԲ. 3) . Յեսուայ վրայ՝ հաստատուն կամք (Յես. ԻԴ. 15) . Նեեմիայի վրայ հայրենասիրութիւն (Նեեմ. Ա. 4, Ե. 14) . Յովնաթանու վրայ՝ բարեկամութիւն (Ա Թագ. ԺՅ. 2—4, Ա) : Աննա՝ մայրերու (Ա Թագ. Ա. 27, 28) . Սամուէլ, Յովիտ և Յիմութէոս՝ որդւոց (Ա Թագ. Գ. Բ Մնաց. ԼԴ. 3, Բ Յիմ. Գ. 15), Յովսէփ և Դանիէլ՝ երիտասարդաց (Ծննդ. Թ. 9, Դան. Ա. 8, 17), Բերղելի՝ տարիքն առած մարդոց (Բ Թագ. ԺՅ. 34, 35. 37), Եղիազար՝ ծառաներու (Ծննդ. ԻԴ) : ԼԴաւիթ իշխանութեան տակ եղողներու (Ա Թագ. ԻԴ. 6—10, Ա.) բարեպաշտական օրինակներ են : Աս օրինակներուն մարդկային բնութեան վրայով մեզի սորվեցուցած վարդապետութիւններն աղէկ հասկընալու համար՝ պէտք է որ այն անձանց տկարութիւններուն ալ միտ դնենք : Անոնք իրենց բնաւորութեանն ամենէն զօրաւոր մասերուն մէջ անգամ սխալեցան : Հաւատացելոց հայրն, Աբրահամ, օրխակեցաւ՝ վախնալով (Ծննդ. Ի. 2) . Համբերոզաց օրինակը Յովբ՝ անհամբերութեամբ (Յօբ. Գ. 1) . Հեզն Մովսէս՝ բարկացոտութեամբ և յանձնապաստանութեամբ (Բ Օր. ԼԲ. 51) :

Սուրբ Գիրքն մեզի նման կրից տէր մարդիկ այսպէս մեր առջևը դնելով՝ բուն մեր սիրտն ու մեր գործերը մեզի կը ճանչցնէ, այնպէս որ զայն կարդալու ատեն կը զգանք Թէ այն գիրքն աստուածային բլլալէ զատ՝ մարդոց ալ սերտիւ

վերաբերութիւն ունի, և թէ՛ անոր խօսքերը, ճարտար նկարուած պատկերի մը աշուքներուն պէս, ո՛ր դի՛ դառնանք, մեզի կը նային :

Յստուածաշունչին այսպէս այլևայլ պատմութիւններով և օրինակներով վարդապետութիւններ և վարուց կանոններ սորվեցնելու կերպը՝ ի՛նչ ոքանչելի յատկութիւն մըն է այն գրքին վրայ՝ որ բոլոր երկիրներու և բոլոր դարերու համար սահմանուած է :

Եթէ անոր մէջ հաւատալիքներ և վարուց կանոններ միայն ընդհանուր խօսքերով բացատրուած ըլլային, օգտակար պիտի չըլլային . իսկ եթէ մանրամասն կերպով դրութեան մը պէս աւանդուած ըլլային, հարկ պիտի ըլլար զանոնք ճիշդ դրուածին պէս յաւիտեան պահել, սակայն ամէն բան ամէն տեղ գործադրելի պիտի չկրնար ըլլալ, ոչ ալ բոլոր հաւատացեալք անոնց ամէնը հասկնալու կարող պիտի ըլլային : Քրիստոնէական վարդապետութեանց համար ուստ բովանդակութիւն մը զոր հասուն Քրիստոնեան կատարելապէս կը հասկընայ՝ Քրիստոնէութեան նոր դարձող Հոթենթացոյ մը համար գրեթէ անիմանալի է : Բայց Սուրբ Գրոց մէջ՝ ուր ճշմարտութիւնը ցիր և ցան է, այնպէս որ պարտաւորութեան հետ վարդապետութիւն, և վարդապետութեան հետ պարտաւորութիւն խառն կը գտնուի, երբ մէկուն միտ կը գնենք, հարկաւ միւսն ալ անոր հետ մեր խորհրդածութեանը կը զարնէ . և որովհետեւ երկուքն ալ, այսինքն՝ վարդապետութիւն և պարտաւորութիւն, այլևայլ օրինակներով և պատմութիւններով բացատրուած են, ամէն մարդ, գիտուն և ուսմիկ, իրեն պէտք եղածներն անկէ կրնայ սորվիլ :

Գարձեալ՝ եթէ միւսնոյն կարգի կամ տեսակի ճշմարտութիւններ Սուրբ Գրոց մէջ զատ զատ աւանդուած ըլլային, ամէն մարդ իրեն ամենէն աւելի հաճոյ եղած նիւթը կարդալով՝ ուրիշ միւսնոյն կարեւորութիւնն ունեցող շատ բաներ, իր ախորժակին յարմար չըլլալուն համար, պիտի թողուր :

Քիչ մը յառաջ ըսինք թէ Քրիստոնէական վարդապետ

տուժիւններն ու վարուցականները, եթէ դրութեան մը պէս, այսինքն՝ իբրև դասագիրք զիտնական բառերով և ոճով աւանդուած ըլլային, ամէն մարդու իմանալի պիտի չկրնային ըլլալ. հոս կը յաւելունք որ թէ և այնպիսի դրուժիւն կամ բովանդակութիւն մը ամենուն գիւրբմաց ընելու հնարը գտնուի, անոր ազդեցութիւնը հաւատացելոց վրայ ֆիասակար կ'ըլլայ. քանզի այնուհետև անոնք Սուրբ Գրոց մնացած մասին քննութիւնը մէկդի թողլով իրենց յիշողութիւնն հաւատոյ հանգանակի մը պէս եղող բովանդակութեան բուն բառերովը միայն կը լեցնեն. իրենց խորհելու և իմաստասիրելու կարողութիւնը կը բթանայ, հետազօտելու և քննելու փափաքը կը մարի, հետևաբար ոչ զգացումները կ'արծարծին, ոչ սիրտերը կ'ազդուին, Հանգանակն ալ ոչ իբրև հաւատք սորվեցնելու միջոց մը, այլ իբրև բուն հաւատալիք նկատուելով ցուրտ և անպիտան յարգութիւն մը կ'ընդունի: Գիտութիւն կամ հըմտութիւն մը ան ատեն միայն մեր վրայ իր պատշաճ տըպաւորութիւնը կ'ընէ, երբ մեր մտաւոր կարողութիւնները կը շարժէ և մտադրութիւնը կ'արթնցնէ, և երբ կը զգանք թէ բան մը սորվեցանք, կամ սխալ մը ուղղեցինք, և կամ մեր արդէն ունեցած հմտութիւնը յառաջացուցինք: Աստուած Սուրբ Գիրքն ոչ թէ պարտէղի մը պէս ըրաւ ուր պտուղներն հասած, ծաղիկները բացուած են, և ամէն բան պատրաստ մեր առջև դրուած է, այլ անիկա դաշտի մը պէս ըրաւ ուր ամէն պատուական բաներուն սերմերն ունինք. բայց առանց ջանքի և զօրծունէութեան, միանգամայն առանց երկնաւոր շնորհաց ցողոյն, հասուն պտուղներ չենք կրնար վայելել: Աստուածաշունչն՝ իր մէջը պարունակուած աստուածային վարդապետութիւնները դրութեան վերածելու ջանացողներուն համար իբր թէ կ'ըսէ. «Թողուն զիս ինչպէս որ եմ. բայց, թէ իմաստունք և թէ տգէտք, թող զիս միշտ իրենց ուսում՝ ընեն, քանզի ես իմաստնոց համար անսպառ գանձ եմ, օրինակներովս և առակներովս ալ տգէտներուն իմացողութենէն և զգացումէն վեր և անհաս չեմ»:

Աս դիս ողութիւններէն յայտնի կը տեսնուի թէ որչափ կը սխալին անոնք որ Սուրբ Գրոց ուսումը, այն է՝ Սուրբ Գիրք կարդալը, կ'արգիլեն. քանզի այնպիսի դրուածեան տակ մարդիկ անձամբ ճշմարտութիւնը հետազոտելու արգիլուած ըլլալով, ուրիշներուն աշխատութեամբն ու քննութեամբը պատրաստուած որ և իցէ վարդապետութիւն անտարբերութեամբ և ծուլութեամբ, առանց քննութեան, իբրև ճշմարտութիւն ընդունելու կը սովորին: Սուրբ Գիրք, նոյն իսկ իր գրութեան կերպովն, այսպիսի գրութեան մը դէմ կը բողոքէ:

Աս մասին ուրիշ գիտողութեան արժանի կէտ մ'ալ կայ: Արդարև քրիստոնէական վարդապետութիւն կոչուած դասագիրքեր, որոնց մէջ հաւատոյ վարդապետութիւնները հաւաքուած և դրութեան վերածուած կը գրուին, օգտակար են. ասոնք սա նպատակաւ կը շինուին որ հաւատացեալք այն վարդապետութիւններն աղէկ հասկընան, և ամենուն հաւատալիքը միօրինակ ըլլայ. բայց աս տեսակ գիրքեր կրօնական ուսման բուն աղբիւր կամ շտեմարան համարուելու չեն. որպէս թէ կրօնքին գիտութիւնը ուղղակի և միայն ասոնցմէ կրնայ առնուիլ: Կրնայ մէկն Աստուծոյ մարդասիրութեանն ու քաղցրութեան օրինակներէն, որոնք Սուրբ Գրոց մէջ պատմուած կամ նկարագրուած են՝ Սուրբ Գիրքը կարդալու յորդորուիլ. ուստի և Աստուծոյ իրեն ըրած ողորմութեան և շնորհացը հոն տեղեկանալով՝ ան գիրքը սիրել, անոր ըրած խոստումներուն յուսալ, իր հոգին անոր ցուցուցած միջոցներովը սնուցանել, և իւր վարքն անոր խրատներուն համեմատ ուղղել. կրնայ այս ամէնն ընել՝ առանց ամենեին Սուրբ Գրոց վարդապետութիւններն իրեն դրութիւն ընելու, և առանց գիտնալու կամ հասկնալու այն ուսումնական բառերն ու սճերք՝ որոնք Աստուածաբանական ուսման արուեստական եզրներն են: Աստուծոյ նախախնամութիւնը ճանչնալով և քրիստոսի նմանելով բարեպաշտ կեանք վարելը գլխաւոր բանն է. երբ այսպէս ընողը դրութեամբ մտածելու վարժ գիտուն մէկն է, հարկաւ այն-

պիսեղյն սրբութիւնն ու հոգևոր իմաստութիւնը խորին կ'ըլլայ . բայց դրութեամբ կամ գիտնական կերպով մշտածել չգիտնալով ալ՝ սրբութիւն և հոգևոր իմաստութիւն կրնայ ըլլալ : Ուստի յիշեալ դասագիրքերն իրենց բուն սահմանին մէջ նկատելու և այնպէս գործածելու է , համազուած ըլլալով որ մարդոց կրթելու և ազնուացնելու բուն և յատուկ միջոց այն գիրքն է՝ սրուն մէջ սիրոյ , գթութեան և յանդիմանութեան կամ խրատու օրինակներ առատ են . որուն իմաստներն , ակնարկութիւններն ու բառերն անգամ՝ մարդկային միանգամայն Աստուածային են , որ և միշտ մի՛ննոյն բայց տակաւին միշտ նոր է : Արդ Աստուածաշունչն է այն գիրքը :

Գ Լ . Թ

Լ՛նկանոն գիրքերը :

Աստուածաշունչին խնդիրն մէջ պարունակուած , այսինքրն՝ Երրայեցերէն գրուած և Պաղեստինու Հրեաներէն 'ի վաղուց հետե առհասարակ իբրև Սուրբ կամ Ներշնչեալ ճանչցուած Հին Ատակարանին գիրքերէն զատ , կան ուրիշ քանի մը գիրքեր ալ զորոնք ոմանք Արքայան մասենագրութեանց կարգը գասելու և Աստուծոյ խօսքին իբր մէկ մասը նկատելու արժանի կը համարին :

Աս գիրքերուն անունները հետևեալներն են . 1⁰ . Մակարայեցոց երկու , այսինքն՝ Ա . և Բ . Գիրքերը . 2⁰ . Եզրասոյ երկու . Ա . և Բ . Գիրքերը . (ոմանք ասոնք Գ . և Դ . Գիրք Եղբայ կը կոչեն , Նէեմիի և Եզրի կանոնական Գիրքերն Ա . և Բ . Եզրայ կոչելով .) 3⁰ . Տորիթայ , Յուդութայ և Բարուքայ Գիրքերը . 4⁰ . Սողոմոնի իմաստութիւն կոչուած Գիրքն ու Սիրաքը որ Եկզեսիստտիկէս ալ կը կոչուի . 5⁰ . Մանասէի (Տէր ամենակալ) աղօթքը . 6⁰ . Շուշանայ , Բելայ և Վիշապին պատմութիւնները . 7⁰ . Եսթերայ և Դանիէլի կանոնական Գիրքերուն մէջ աւելցուած գլուխները :

Աս գիրքերը, բայց 'ի թերևս մէկ հատէն, Մաղաքիա Մարգարէէն մինչև Քրիստոսի ծնունդը իրր 40) տարուան միջոցին մէջ գրուած են. բայց զանոնք զրոզ հեղինակներուն անունները ծանօթ չեն: Անոնց, եթէ ոչ ամենը, գէթ մեծ մասը Յունարէն լեզուով գրուած է. երկուքը, այսինքն՝ Ա Մակաբայեցւոցն ու Սիրաքը, թերևս նախ Եբրայեցերէն, կամ, ինչպէս ոմանք կը կարծեն, Քաղդէարէն գրուած ու յետոյ Յունարէնի թարգմանուած կը համարուին: Մակաբայեցւոց գիրքերը պատմութիւն են, և, Ասորոց (Սելևկեան) թաշաւորներուն հարստահարութիւններէն ու մանաւանդ անոնց կրօնական հալածութիւններէն ազատելու համար, Քրիստոսէ առաջ Բ. դարուն մէջ, Մակաբեանց զորավարութեամբը Հրէից ըրած ջանքերը կը պատմեն: Աս պատմութիւնն արիական հաւատոյ շատ օրինակներ յառաջ կը բերէ, և ըստ մեծի մասին ճիշդ և ստոյգ կրնայ համարուիլ. բայց աս նկատմամբ Մակաբայեցւոց Բ. գիրքը Ա. գիրքէն ոտորին է: Ուրիշ երեք գիրքեր ալ կան, որ Գ. Դ. և Ե. Մակաբայեցւոց կը կոչուին, բայց ասոնց ընդհանրապէս խիստ քիչ արժէք կը տրուի. միայն Գ Մակաբայեցւոցը Յունաց Եկեղեցւոյն մէջ երբեմն կը կարդացուի: Եզրասայ Առաջին գիրքը մեծաւ մասամբ Եզրի կանոնական զրոց կրկնումն է, միայն այլևայլ յաւելուածներ կը պարունակէ: Իսկ Եզրասայ Բ. Գիրքը գրեթէ Յովհաննու Յայտնութեանը նման տեսիլքներ կը պատմէ, ուստի և ոմանք ասիկա միւս անկանոն գիրքերէն շատ ետքը գրուած կը համարին: Սողոմոնի Իմաստութիւնը ըստ լաճը Սողոմոնի գրութիւնը չէ, այլ անոր գրուածներուն նմանութիւն է: Աս գիրքն ու Սիրաքը հաւաքում են բարոյական պատուէրներու, որոնց շատերը ուղիղ և իմաստալից են: Աս երկու գիրքն, ինչպէս նաև Բարուքը, Մանասէի Աշօթքն ու Երից Մանկանց Օրհնութիւնը յարգ ու արժէք ունին, ըստ սրում անոնց գրուած ժամանակն Հրէից կրօնական կարծիքն ինչ ըլլալուն վրայ բաւական գաղափար կուտան: Բայց, ընդ հակառակն, Տօրիթ, Յուգիթ, Շուշանայ, Բելի և Աիշապին պատմութիւնները

տղայական դիւրահաւանութեան ու մոլոր սկզբունքներու խել մը օրինակներ կը պարունակեն :

Հիմա սա խնդրոյն գանք , թէ Արգեօք աս գիրքերն ալ , Սրբազան Գրոց պէս , իբր Ատողածուրոյն հեղինակութիւն ունեցող կրնա՞ն համարուիլ : Աս նկատմամբ քանի մը դիտեալ բաներ կան : Նախ ստոյգ է թէ՛ ոչ նախնի և ոչ արդի Հրեաներն աս գիրքերը երբէք ներշնչեալ համարած են : Հին Կտակարանին գրոցը նկատմամբ Հրէից ունեցած ջանկերուն մէջ՝ աս գիրքերուն անունները տեսնուած չեն : Փիլոն , Առաքելոց դարուն անուանի Հրեայ մատենագիրը , որ Հին Կտակարանին Կանոնական Գիրքերէն յաճախ վերկայութիւններ կը բերէ՝ Անկանոն Գիրքերէն երբէք վկայութիւն բերած չէ : Յովսեփոս Մակարայեցոց գիրքերէն վկայութիւն բերած է . բայց , ինչպէ՞ս որ յայտնի կը հասկըցուի անոր խօսքերէն որ մեր աս գրքին (էջ 12) մէջ յիշուած են , Հրեայք Մաղաքիայէն ետքը գրուած պատմական գիրքերը՝ երբէք նախնի Մարդարէից , այսինքն՝ անոնց ներշնչեալ համարած մատենագիրներուն , գրուածօցը "հաւասար և համապատիւ չհամարեցան" :

Երկրորդ , Քրիստոս , Առաքեալք և Առաքելական դարուն մատենագիրները՝ յիշեալ Անկանոն Գիրքերէն վկայութիւն բերած չեն . և Քրիստոնեայ Եկեղեցիներուն ընդունած Սուրբ Գրոց ամենէն հին ջանկերուն մէջ՝ ան գիրքերուն անունները չեն յիշուիր : Արդարև անկէ ետքը Քրիստոնեայ Հայրերէն սմանք , մանաւանդ Ազեքսանդրիոյ Յունախօս Հարք , յիշեալ գիրքերը Հրեաներէն առնելով՝ անոնց վրայ խօսիլ և անոնց մէջ պատմուած դէպքերն ու խօսքերը յիշել սկսան , ինչպէ՞ս որ Հեթանոս մատենագիրներուն խօսքերն ալ իրենց գրուածներուն մէջ կը յիշէին : Արևելեան Քրիստոնեաներն ընդհանրապէս Հին Կտակարանին Եթթանասնից կոչուած Յունարէն թարգմանութիւնը կարդալու սովորած ըլլալով , բնական էր որ Անկանոն Գիրքերն ալ կարդային , ըստ որում աս գիրքերն ալ Յունարէն գրուած ըլլալով , Մաղաքիայէն փնչև քրիստոս Հրէից պատմութեանը վրայ տեղեկութիւններ կը

պարունակեն: Բայց և այնպէս յիշեալ երկիրներուն Քը-
րիստոնեայ մատենագրաց այն գիրքերը յիշելուն կերպէն,
շատ անգամ նաև անոնց բուն իսկ խօսքերէն յայտնի է,
որ առ Հայրերն ալ յիշեալ գիրքերուն Ատողածային հե-
ղինակութիւն չեն ընծայեր: Որոգիներն Աղեքսանդրացի,
Գ. դարուն մէջ, Մակարայեցւոց գիրքերը կը յիշէ. բայց
զանոնք յայտնապէս բուն Սուրբ Գիրքերէն կը զատէ: Եւ-
սերիոս ալ, Գ. դարուն մէջ, Անկանոն Գիրքերէն շատե-
րուն յիշատակութիւնը կ'ընէ, բայց անոնց բուն Սուրբ
Գրոց հեղինակութիւնը չի տար: Նոյն դարուն մէջ Աթա-
նաս, Սուրբ Գրոց ցանկը տալէն ետքը, կ'ըսէ. «Ասոնք
փրկութեան աղբիւր են. միայն ասոնցմէ Ատողածպաշ-
տութեան վարդապետութիւնը կրնանք սորվիլ, և չենք
կրնար ասոնց վրայ բան աւելցնել կամ ասոնցմէ բան
պակօնցնել»: Յետոյ կը յաւելու. «Բայց աւելի զգուշու-
թեան համար՝ ինծի կարևոր թուեցաւ ծանուցանել որ,
ասոնցմէ (Վանոնական Գիրքերէն) զատ, կան նաև ուրիշ
գիրքեր որոնք ինծի կարևոր թուեցան, և Հայրերը՝ մեզի նոր յարող-
ներուն կարդալու համար զանոնք որոշեցին»: Աս ըսելէն
ետքը՝ այն գիրքերուն անունները տալով կ'ըսէ. «Ասոնք
են՝ Սողոմոնի Իմաստութիւնը, Սիրաք, Եսթեր, Յուդիթ,
Յովբիթ», այլովքն հանդերձ: Ռուփինոս ալ, դարձեալ
նոյն դարուն մէջ, Սուրբ Գրոց ցանկը դնելէն ետքը՝ կ'ըսէ.
«Հարը այս գիրքերը Վանոնին մէջ գրած են, և մեր հա-
ւատոյ վարդապետութիւններն ասոնցմով հաստատուեցան.
բայց պետք է գիտնալ որ ուրիշ գիրքեր ալ կան որոնք Վա-
նոնական չեն. և մեր Հայրերը զանոնք Եկեղեցական Գիր-
քեր կոչած են: Ասոնք են՝ Սողոմոնի Իմաստութիւնը,
Սիրաքայ գիրքը, Յովբիթ, Յուդիթ և Մակարայեցւոց
գիրքերը»:

Ռուփինոսին, Վանոնական Գիրքերէն որոշելու համար,
Եկեղեցական անուամբ յիշած այս Անկանոն Գիրքերն՝ ի
սկզբան առանձին կամ առանին կը կարդացուէին. յե-
տոյ ասոնց ընթերցումը նոր յարողներուն համար օգտա-
կար համարուելով՝ զանոնք հրատարակաւ ժողովներու

կամ Եկեղեցեաց մէջ կարգալ տակաւ սովորութիւն եղաւ : Բայց և այնպէս Օգոստինոս կը զկայէ թէ ոտորին կարգի պաշտօնեաներ աս Գիրքերը կը կարդային, և թէ՛ զանոնք կարդալու համար որոշուած տեղը՝ բուն Կանոնական Սուրբ Գիրքերը կարդալու համար սահմանուած տեղէն կամ բեմէն խոնարհագոյն էր : Ասիկա ժողովրդեան իմացնելու կամ յիշեցնելու համար էր թէ աս Գիրքերը բուն Սուրբ Գիրքերէն ոտորին են : Եւ արդարև Անկանոնները Եկեղեցւոյ մէջ կարդալու աս նոր սովորութեան դէմ շատ ընդդիմութիւն եղաւ : Լաւոդիկէի ժողովը, 363 ին, Կանոնական Գիրքերէն զատ սուրիշ սրեւիցէ գրքի մը Եկեղեցւոյ մէջ կարդացուիլն արգիլեց . բայց և այնպէս անոնց կարդացուիլը շարունակուեցաւ քանի մը Եկեղեցեաց մէջ, մանաւանդ Եգիպտոս . և կարդացողներուն դիւբութեանը համար՝ աս Գիրքերը Կանոնականներուն հետ միեւնոյն հատորի մէջ կը կազմուէին, երբեմն հատորին վերջը գրուելով իբր յաւելուած, երբեմն ալ հատորին մէջ միւսներուն (Կանոնականներուն) հետ խառնուելով սա դիւմամբ՝ որ միեւնոյն սեւի Գիրքեր իրարու, այսինքն՝ պատմականները պատմականներուն, վարդապետականները վարդապետականներուն, և առականքն առականքներուն քով գան : Այսպէս պատահեցաւ որ Էբրոնիմոս, (էջ 16 յիշուած) Լատիներէն Սրբագրեալ Թարգմանութիւնը պատրաստելու ժամանակը, Եօթանասնից Թարգմանութենէն առնուած հին Լատին Թարգմանութեան ձեռագիր օրինակին մէջ յիշեալ գիրքերը միւսներուն հետ կազմուած գտնելով՝ զանոնք նոյնպէս իր Սրբագրեալ Թարգմանութեանը մէջ առաւ, բայց անոնց Անկանոն գիրքեր ըլլալը զգուշութեամբ իմացուց : Նոյնը պատահեցաւ նաև Աստուածաշունչին Հոյ Թարգմանիչներուն, որոնք իրենց Թարգմանութեան Յունարէն Աղէքոսանդրեան օրինակին մէջ Անկանոն գիրքերն ալ պարունակուած գտնելով, զանոնք Կանոնականներուն հետ Թարգմանեցին . թէպէտ, ինչպէս անոնց աշակերտներուն և անոնցմէ ետքը ուրիշ Հայ մատենագրաց ըսածներէն յայտնի է, Հայոց մէջ ալ այն Անկանոն կոչուած գրք-

ուածները՝ Երրայեցերէն բնագրին մէջ գտնուած բուն Կանոնական Քրոց հետ համազօր և համապատիւ համարուած չէին : Աս թարգմանութեան թուականին (391) : Անկանոն Քրոց անուներն , առաջին անգամ , Կարբեդոնի ժողովին Սուրբ Քրոց վրայ հրատարակած ցանկին մէջ տեսուեցան : Սակայն հաւանական է թէ , աս դէպքին մէջ , յիշեալ ժողովը կանոնական բառն ընդհանուր նշանակութեամբ մը գործածած է . այսինքն՝ նոյն անուամբ ոչ միայն բուն Աստուածաշունչ Գիճքերը , հապա նաև օգտակար համարուած Եկեղեցական Գիրքերը նշանակել ուզած է : Թէ Քրիստոնեայք , նոյն իսկ Կարբեդոնի ժողովին ժամանակն , աս երկու դաս գրոց մէջ տեղ մեծ խտրութիւն կ'ընէին՝ նոյն ժողովքին ժամանակը ծաղկող Հերոնիմոսի և Ռուփինոսի վերոյիշեալ վկայութիւններէն յայտնի է . և այս խտրութիւնն այնուհետև ալ երկայն ժամանակ տևեց : Արդարև , ինչպէս նոյն իսկ Հռոմէական մատենագիրք կը խոտոտվանին , մինչև ժ.Ձ . դար այն գիրքերն Աստուածաշունչ Քրոց ցանկին մէջ գնելու Եկեղեցական որոշում մը եղած չէր : ժ.Ձ . դարուն մէջ Տրիտենոյեան ժողովը վճռեց որ , բաց 'ի Մանասեի աղօթքէն , Եզրայ Գ . և Դ . և Մակարայեցաց Գ . Դ . և Ե . Գիրքերէն , վերոյիշեալ Անկանոն Քրոց բոլորն ալ Սուրբ Քրոց միւս գիճքերուն հաւասար Աստուածային հեզինակութիւն ունին , և Հռոմայ Եկեղեցին այնուհետև սկսաւ այնպէս ընդունիլ : Յունաց Եկեղեցին երբէք պաշտօնական վճռով կամ իր երևելի Հայրապետներէն մէկուն բերնովը նոյն գիրքերը կանոնական հրատարակած չէ . միայն այն գիրքերէն ոմայ մէջէն Եկեղեցական պաշտօնի ատեն ընթերցուածներ կ'ըլլան :

Հայոց Եկեղեցւոյն մէջ ալ նոյնպէս եղած է . երբէք Եկեղեցական վճիռ մը այն գիրքերը բուն Աստուածաշունչ , այսինքն՝ Աստուծմէ ներշնչեալ գրոց հետ հաւասար դասած չե . միայն հին թարգմանութեան Յունարէն օրինակին մէջ գտնուելով անոնց հետ թարգմանուած և մէկ գիճք եղած ըլլալուն համար՝ ժողովուրդը զանոնք կա-

նոնական Գրոց հեռ իբր հաւասար հեղինակութիւն ունեցող գիրքեր համարած է :

Բողոքական Եկեղեցիներուն և ոչ մէկը զանոնք իբր Աստուածաշունչ, կամ վարդապետութիւն մը հաստատելու մասին հեղինակութիւն ունեցող գիրքեր կը համարի :

Յիշեալ Անկանոն Գրոց վրայ եղած կարծիքներուն նըկատմամբ առ համառօտ պատմութիւնն ընելէն ետքը, եթէ բուն իսկ գիրքերը քննելու ելլենք, յայտնի ապացոյցներով պիտի տեսնենք որ զանոնք Աստուածաշունչ Գրոց հաւասարապատիւ համարելու պատճառ չկայ :

Սիրաբայ Գրքին կամ Եկեղեցիատախտիկէսի համար ըսինք թէ՛ անոր մէջ հաւաքուած բարոյական պատուէրներուն շատերն՝ ուղիղ և իմաստալից են . բայց և այնպէս անիկա Աստուածային հեղինակութեամբ գրուած չէ : Անոր Եբրայեցերէն ընագիրքը կարուած է . մեր ունեցածն անոր Յունարէն թարգմանութիւնն է : Առ թարգմանութեան հեղինակը որ Յեսուայ Սիրաբայ (գիրքը գրողին) թոռն էր՝ գրքին ոչիզբը գրած յառաջաբանին մէջ կ'ըսէ թէ՛ Իր Հաւը Յեսու , օրինաց և մարգարէից հմուտ և իմաստութեան փափաքող մէկն ըլլալով, առ գիրքը, իբրև բարոյական խրատ, (ինչպէս կ'երևայ, Եբրայեցերէն) շարագրեց, ինք ալ ըստ կարի Յունարէնի գարձուց : Ուրախ յայտնի է թէ բուն հեղինակը, ոչ թէ Աստուածային ներշնչութեամբ, այլ մարդկային շարժառթով, հասարակ բարոյական գիրք մը գրողի պէս, ինքնայորգոր, իբրև օգտակար գործ մը, գիրքը շարագրելու ձեռնարկած է : Մակարայեցոց Գիրքերուն համար ալ ըսինք թէ, իբր հասարակ պատմութիւն, արժէք ունին . բայց և այնպէս առ մասին ալ անանց մէջ շատ սխալներ և հակասութիւններ կան : Չոր օրինակ՝ Ա Մակար . Զ . 4—16, և Բ Մակար . Ա . 13—16 . Թ . 7—8 իրարու հեռ բազմատեղով կը տեսնենք թէ ան գիրքերուն մէջ յիշուած Անտիպոսի Եպիփանու մահուանը տեղւոյն և պարագաներուն վրայ եղած պատմութիւններն իրարու հակասական են : Դանիէլի Գրքին մէջ Բէլի և Աիշային պատմութիւնը նոյն Մարգարէին

Առիւծներու գուրը նետուելուն պատմութեանը հետ յայտնապէս հակասական է :

Աս գրուածներէն ոմանց մէջ Աստուածաշունչ գրութեան մը չվայլող տղայական և շնչին վէպեր կան . և ոչ այսչափ միայն , այլ և այնպիսի վարդապետութիւններ կան՝ որոնք Աստուածաշունչ Գրոց վարդապետութիւններուն հակառակ են . զոր օրինակ՝ Հրեշտակի մը սուտ խօսելէն կը հետեւի թէ սուտ ընելն օրինաւոր է . (Յօրիթ Ե . 12 . և ՃԲ . 15 . իրարու հետ բաղդատէ) : Անձնասպանութիւնը կը գովուի (Բ Մակար . ԺԴ . 4) — 46) : Կախարդական հրամայութիւններու զօրութիւն կ'ընծայուի . (Յօրիթ Զ . 16 — 22) : Սիրաբայ մէջ (Գ . 4) ըսուած է թէ՛ «Իր հայրը պատուողին մեղքերը կը քաւուին» : Ներշնչեալ Գիրքերն , սուոր հակառակ , կը սորվեցնեն թէ մեղքի քաւութիւնն արեամբ կ'ըլլայ , «Արիւն շթափուած թողութիւն չըլլար» (Եբբ . Թ . 22) : Հին Կտակարանին մէջ Աստուած իր ժողովրդեան կ'ըսէ . «Նս ձեզի առիւն (արիւնը) , որ սեղանին վրայ ձեր հոգիներուն համար քաւութիւն ընէք . քանզի հոգիին համար քաւութիւն ընողը արիւնն է» (Ղեա . ԺԵ . 11) : Նոր Կտակարանը կ'ըսէ . «Անոր (Աստուծոյ) Արդւոյն Յիսուս Քրիստոսին արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ» (Ա Յովհ . Ա . 7) : Եթէ Աստուածաշունչին Կանանկան Գիրքերն Աստուածային հեղինակութիւն ունին , ինչպէս արդէն ցուցուցինք , յայտնի է թէ Անկանոն Գիրքերն որ անոնցմէ այսչափ տարբեր սկզբունքներ կը սորվեցնեն՝ միեւնոյն աղբիւրէ բխած չեն կրնար ըլլալ : Անկանոն Գիրքերուն վարդապետութեանցը բուն Աստուածաշունչ Գրոց վարդապետութիւններէն տարբեր ըլլալը միայն՝ բաւական է ցուցնելու թէ անոնք Աստուածային հեղինակութիւն չունին . այսինքն՝ Աստուծմէ արուած , ուստի և հաւատաց և վարուց անոխալ կանոն չեն :

Աս գրքին (էջ 15 ին) մէջ ըսինք թէ Քրիստոսէ ետքը Բ . և Գ . դարուն , Նոր Կտակարանին առհասարակ ընդունուած գիրքերէն զառ ուրիշ քանի մը գիրքեր ալ երևան ելան որոնք Քրիստոսի կենացն ու ժամանակին վրայ տե-

ղեկութիւններ տալ կը խոստանային, և թէ՛ ասիկա առիթ տուաւ ճիշդ քննութեան առնելու սա խնդիրը՝ թէ բոլոր աս գիրքերէն որոնք ընդունելի են և որոնք մերժելի: Աս քննութեան արդիւնքը սա եղաւ որ այժմու կանոնական Գիրքերուն Աստուածաշունչ ըլլալը հաստատուելով, միւսներունը մերժուեցաւ: Աս որոշման մէջ բոլոր Եկեղեցիք միաբան են, այնպէս որ, թէև անոնց մէջ, ինչպէս վերը յիշուեցաւ, Հին Կառկարանին գրոցը նկատմամբ կարծեաց տարբերութիւն կայ, Նոր Կառկարանին գիրքերուն նկատմամբ այնպիսի անհամաձայնութիւն մը ամենևին չկայ: Ա՛հն Եկեղեցի միւսոյն գիրքերը կ'ընդունի:

Ոմանք կ'ուզեն հաստատել թէ այժմու քրիստոսնէից յիշեալ գիրքերէն մէկ քանին ընդունելն ու միւսները մերժելն անոր համար է, որ Գ. և Գ. դարերուն մէջ գիտուն մարդիկ և ժողովներ աս խնդիրը քննելով որոշեցին թէ այս ինչ գիրքերն ընդունելի, և այնինչ գիրքերը մերժելի են. կամ թէ՛ Սուրբ Գրոց կանոնը Եկեղեցւոյ հեղինակութեամբը որոշուած է. բայց ասիկա որոշումներ է: Աս խնդիրը թէ ո՞ր գիրքերն ընդունել պէտք է՝ փաստերով որոշուելու է, ոչ թէ որևէ մարդոց կամ ժողովոց հեղինակութեամբը: Նախնի քրիստոսնէոյ Հարց վկայութիւնը թէ իրենց ժամանակը որ գիրքերն Աստուածաշունչ համարուած էին՝ արդարև մեծ արժէք ունի, ըստ որում թէ անոնք և թէ ան ժամանակուան Եկեղեցիներն Աւաքելոց դարուն աւելի մօտ ըլլալով այն գիրքերուն վրայ քննութիւն ընկլու մննէ աւելի աղէկ պատահութիւն ունէին: Աս պատճառաւ ժողովոց որոշումն ալ յարգելու պարտական ենք, մանաւանդ որ այն ժողովներուն անդամներէն շատերը գիտուն և խնդրոյն ապացոյցներուն վրայ քննութիւն ընկլու ձեռնհաս մարդիկ էին: Բայց և այնպէս անոնց որոշումը բացարձակ հեղինակութիւն չունի: Մենք այսօրուան օրս փաստերու և ապացոյցներու նայելու ենք, և Նոր Կառկարանին մէջ պարունակուած գիրքերն ընդունելու ենք ո՛չ Հարց կամ ժողովոց հեղինակութեանը:

այլ այն ապացոյցներուն համար՝ որոնց վրայ անոնց կարծիքն ու որոշումները հիմնուած են : Այս ապացոյցները յիշեալ Հարց և ձողովոց գրուածոցը մէջ յայտնուած են , աւտտի և անոնց արժէքը մեծք մեզէն կրնանք քննել : Բայց պէտք է գիտնալ որ , թէ նախնի Քրիստոսնէից և թէ մեզի համար , ամենէն աւելի արժէք ունեցող ապացոյցները՝ բուն իսկ Սուրբ Գրոց մէջ են , և թէ , ինչպէս արդէն աս գրքին մէջ ցուցուեցաւ , անոնք լիովին կը ցուցնեն թէ մեր հիմա ունեցած Նոր Կտակարանին գիրքերը՝ Քրիստոսի Առաքեալներէն և առաջին Աշակերտներէն Հոգւոյն Սրբոյ շնչմամբը շտապարուած վաւերական գրութիւններ են :

Անկանոն Գիրքերն ալ , որ Բ . և Գ . դարերուն մէջ երևցան , բայց նախնի Քրիստոսնէաներէն մերժուեցան , մեծաւ մասամբ մինչև ցարդ կան . և կրնանք , զանոնք քննելով . անոնց վաւերականութիւնը կամ անվաւերութիւնը բուն անոնցմով վճռել : Անկանոն Գրոց գլխաւորները հետեւեալներն են . Մարիամն Ծննդեան , Յիսուսի Մանկութեան , Յակոբայ , Թովմայի , Նիկիդեմոսի կոչուած Աւետարանները . Քրիստոսի և Արդարութեան Թուղթերը . Պողոսի Թուղթերն առ Լաւաղիկեցիո և առ Սենեկա , և Սենեկայի Պատասխանները . Կղեմայ Թուղթերն առ Կորնթացիս , Բառնաբասիններն ու Իգնատիոսինները , Վերջապէս Հերմասայ Հովիւր :

Քրիստոսէ ետքը երևան ելլող աս Անկանոն Գիրքերուն նկատմամբ կրնանք ըսել ինչ որ Քրիստոսի ժամանակէն առաջ գրուած Անկանոն Գրոց համար ըսուեցաւ . այսինքն՝ թէ անոնցմէ ոմանց կրնայ արժէք մը արուիլ , և կրնան օգտակար համարուիլ . ոմանք ալ աղայական գեղարքերով լիցուն են . իսկ անոնց Աստուածային ազդեցութեամբ գրուած ըլլալուն ամենեւին ապացոյց չկայ : Կղեմայ , Բառնաբասի , Իգնատիոսի Թուղթերն ու Հերմասայ Հովիւր , եթէ չեն գրուած նոյն հեղինակներէն որոնց անուամբ կը կոչուին , հաւանականաբար Առաքելոց ժամանակէն քիչ ետքը գրուած են , և արժէք ունին , ըստ որում այն ժամանակուան Քրիստոնեայ Եկեղեցեաց վիճակը կը ցուցնեն , և մանաւանդ , Առաքելոց և Աւետարանչաց

գրուածներուն ան առին ծանօթ և զործածուած ըլլալուն վկայութիւն կուտան, բաւական ընտիր կրօնական իմաստներ ալ կը պարունակեն : Բայց անոնց հեղինակներն, Առաքելաց և Աւետարանչաց պէս, չեն ըսեր թէ Աստուծային ներշնչմամբ գրած են, և բուն գիրքերուն մէջ տեսնուած ապացոյցներուն նայելով՝ անոնք ուրիշ բան չեն բայց լոկ մարդկային մտաց օգտակար ծնունդներ : Միւս գիրքերը յայտնապէս աւելի նորագոյն ժամանակի գրուածներ են : Արգարաւ Թուղթն ու Քրիստոսի Պատասխանը կոչուած գրութիւնները Գ. դարէն առաջ ծանօթ չէին : Մարիամու Ծննդեան, Նիկոդեմոսի և ուրիշ այլևայլ կեղծ Աւետարաններուն համար ալ նոյնը կրնանք ըսել : Շատ յայտնի է թէ ասոնք ներշնչեալ Աւետարանչաց ըրած պատմութիւններուն կեղծ նմանութիւնն են, և լի են տըղայական վէպերով . զոր օրինակ թէ՛ Մաքիամ դեռ երեքամեայ մանուկ ըլլալով, առանց ուրիշի մը օգնութեան տաճարին 15 աստիճանները ելաւ, երբորք աստիճանին վրայ կաքաւեց, և տաճարին մէջ մնալով հրեշտակի ձեռքով կը կերակրուէր . թէ՛ Յովսէփայ զաւազանին վրայ աղանուոյ մը իջնելէն՝ իմացուեցաւ թէ անիկա Մարիամու խօսնայրը պիտի ըլլայ : Շատ հրաշքներ ալ պատմուած են, իբր թէ Քրիստոս զանոնք իր տղայութեան առենը գործած էր, զոր օրինակ թէ՛ անոր լուացուած ջրովը հիւանդներ կը բժշկուէին . թէ՛ Յիսուսի ջորւոյ մը վրայ նստելովը, ջորին որ կախարգի մը հնարքով այն կենդանւոյն փոխուած տղայ մըն էր՝ նորէն մարդկային կերպարանք առաւ . և թէ՛ Յուզա Իսկարիսովտացի որ յետոյ Յիսուսը մատնեց՝ տղայութեան առենը Յիսուսի դրացի ըլլալով, օր մը անիկա խածնել ուզեց . և ուրիշ ասոնց նման անտեղի պատմութիւններ :

Աս գիրքերը կարգալով, անոնց մէջ պատմուած տղայական վէպերը ներշնչեալ Աւետարանչաց պատմութեանցը հետ բազդատողն՝ ուրիշ ապացոյցներու կարօտ չէ համոզուելու համար՝ թէ այն գիրքերը ներշնչեալ գրաց կարգը գրուելու ամենեին արժանի չեն : Աւստի, ինչպէս Քրիս-

ասուէ առաջ գրուած անհասնան գրոց, նոյնպէս առ վերջին-
ներուն համար կրնանք նշմարտութեամբ ըսել թէ, քանի
որ անոնց աստուածային ազդեցութեամբ գրուած ըլլալուն
ապացոյց չկայ, անոնց երևան ելլելուն ժամանակն ու գր-
ութեան վերոյիշեալ հանգամանքները բաւական կը ցուց-
նեն թէ անոնք չեն կրնար բնա Յուրբ Գիրք համարուիլ:

ԳԼ. Ժ

Սուրբ Ղ.իբն ուսանելու վրայ ընդհանուր դիպրոս-լի-ններ:

Աստուածաշունչին այլ և այլ գիրքերուն գրուելուն եզա-
նակին, և նոյն իսկ Գրքին ընդհանուր սրպիտութեանցը
նկատմամբ նախընթաց գլուխներուն մէջ ըսուածներէն
կրնայ մակարերուիլ որ զանիկայ զգուշութեամբ, և ձեռք
բերել կարելի էղող ամէն կերպ օգնութեամբ սուսնելու
ենք:

Աս գիրքերուն հեղինակներն այլ և այլ աստիճանի կրթ-
ութիւն ունեցող այլ և այլ կարգի վերաբերեալ մար-
գիկ էին: Ոմանք՝ օրէնսդիր, ինչպէս Մովսէս. ուրիշները՝
աազմասերգու և բանաստեղծ, ինչպէս Դաւիթ և Սողոմոն.
ոմանք ալ զօրավար՝ ինչպէս Յեսու. քահանայ՝ ինչպէս
Եզրաս. հովիւ՝ ինչպէս Ամփ. Յերութեան պաշտօնեայ՝
ինչպէս Դանիէլ. գրագէտ՝ ինչպէս Պօղոս, կամ ձկնորս ու
'անուուում և ագէտ մարդիկ'', ինչպէս Պետրոս և Յով-
հաննէս: Ասոնցմէ սմանց գրածը մարգարէութիւն է.
ոմանցն ալ պատմութիւն, ինչպէս Աւետարանիչներունը.
ուրիշներունն ալ նամակներ, ինչպէս Պօղոսինն ու ուրիշ
քանի մը Առաքելոցը:

Սուրբ Գրոց այլ և այլ գիրքերը տարբեր տարբեր ժա-
մանակներ գրուած են. առաջին հեղինակը Մովսէս՝ Յու-
նաստանի և Ասիոյ պատմութեանը մէջ յիշուած ամենէն

հին իմաստուններուն, Թաղէտի, Պիլթազորայ և Կոմիու-
կիոսի ժամանակէն 900 տարի աւաջ էր. իսկ Մովսէսի
ժամանակէն մինչև Սուրբ Գրոց հուսկ վերջին հեղինակը
Յովհաննէս՝ 1500 տարուան միջոց կայ:

Գիրքերը նաև այլ և այլ տեղեր գրուած են. Արարիոյ աւա-
զուա կողմերը, Հրէաստանի անապատներուն մէջ, Յաճա-
րին սրահները, Բեթէլ և Երիքով մարգարէից գարոցնե-
րուն մէջ, Բաբելոնի պալատները, Ասորեստանի Քովբար
գետին եղերքը և Արեմեան ազգերուն այլ և այլ քա-
ղաքներուն մէջ, Խոզբին ձկերն ու բացատրութիւններն
առնուած են այնպիսի պարագաներէ և սովորութիւններէ՝
որոնք իրարմէ ալ, հիմակուածներէն ալ տարբեր են:

Աստուածաշունչին մէջ կան գիրքեր, ինչպէս Եսայեայ
և Նաուամայ՝ գիրքերը, որոնք բոլորովին կամ ըստ մասին
Հեթանոսներու վերարերութիւն ունին. կան նաև՝ որ
Հրէից միայն ուղղուած են: Մասթէոսի Աւետարանը Հրէ-
ութենէ դարձողներուն համար էր. Ղուկասինը՝ Հեթա-
նոսաց համար: Կորնթացաց Թուղթերն այնպիսի մարդոց
գրուած են՝ որոնք իշխանութենէ քիչ ակնածութիւն ու-
նէին, և կարելի եղածին չափ քիչ կապերու տակ ըլլալ
կ'ուզէին: Գաղատացաց Թուղթը գրուած է այնպիսինե-
րու՝ որոնք Քրիստոսեանները Ղևտական օրէնքին ծաբայ-
ութեանը տակ նուաճել կը ջանային. իսկ Հռոմայեցացը
(ըստ մասին) գրուած է զիրենք փարիսեցաբար արդար
կարծողներու. Յակոբայ Թուղթը՝ կեղծաւոր կամ դաղջ
Քրիստոսեաններու: Սուրբ Գիրքն ուսանելու ատեն՝ բոլոր
աս բաները նկատելու է. այսինքն՝ մատենագիրներուն բը-
նաւորութիւնը, ժամանակը, տեղը, պաշտօնը, անոնց կե-
նացը բոլոր պարագաները, և թէ ի՞նչ նպատակաւ այն
գիրքերը գրեցին. նաև այն մարդոց զիճակը կամ կացու-
թիւնը որոնց համար կը գրէին. քանզի այդ պարագաները,
եթէ ոչ Սուրբ Գրոց իմաստին, գոնէ լեզուին և իմաստ-
ներուն բացատրութեանը լրաց ազդեցութիւն մը ըրած են:

Սուրբ Գիրքը խնամով և զգուշութեամբ ուսանելու
կարևորութիւնն աւելի յայտնի կը տեսնուի, եթէ կրօ-

130) ԵՅԼԸԲԱՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ

նական և հոգևոր ճշմարտութեանց վերաբերեալ վերացեալ գաղափարներ մարդոց և մարդկային լեզուաւ հաղորդելու գոնաբաւութիւնը դիտենք : Հոգևոր բաներու վրայ խօսելու ատեն մարդիկ ընդհանրապէս չ'երարանութիւն կամ նմանութիւն կը գործածեն : Մտքի և մտաւոր գործողութեանց վերաբերեալ գաղափարներ աս կերպով միայն կըրնան բացատրուիլ : Մարդկային ցեղերուն տղայութեան ատենը՝ գրեթէ միշտ աս այլաբանական լեզուն գործածուած է . հասարակ իրողութիւններ և իրեր անգամ՝ այլաբանական բառերու օգնութեամբ նկարագրուած կը գտնենք : Ձոր օրինակ՝ մտքին ըմբռնելու գործողութիւնն՝ աչքին գործողութեանը հետ նմանութիւն մը ունենալուն համար՝ «միտքը կը տեսնէ» ըսուած է . «հոգի» բառն 'ի սկզբան «շունչ» կը նշանակէր . 'խորհրդածել'՝ բային բառական նշանակութիւնը՝ խորհուրդը նորէն բերել ըսել է . 'ուշադրութիւն' կամ 'մտադրութիւն' բառը որ մտաւոր գործողութիւն մըն է՝ միտքը բանի մը վրայ դնել, կեցնել կը նշանակէ : 'Մծել', 'դնել' բառերը որ մարմնոյ անդամներու միջոցաւ եղած գործողութիւններ կը նշանակեն՝ վերաբանութեամբ կամ նմանութեամբ իմացական գործողութիւններու վրայ ըսուած են : Մարդկային վիճակն այնպէս է՝ որ մարդս մտաց կամ վերացեալ ճշմարտութեանց վերաբերութիւն ունեցող գաղափարներ չի կրնար բացատրել պարզապէս, այսինքն՝ առանց զգալի բաներու բառերը կամ անունները գործածելու : Աստուած, իմացական գաղափարներ բացատրելու մասին մեր աս բնական կերպին զիջանել ուզելով, կրօնական և հոգևոր ճշմարտութիւններ մեզի՝ մեր գիտցած և ճանչցած զգալի իրաց նշաններովը կամ բառերովը հաղորդած է, կամ թէ ըսենք՝ մեզի ընտանի եղող միջոցներով ծանօթացուցած է :

Ըսինք թէ Աստուած մեր բացատրութեան բնական կերպին զիջանել ուզած է . աւելի ճշմարիտ կ'ըլլար ըսել թէ՝ Աստուած բոլոր զգալի իրերն այնպէս կարգադրած է, որ անոնք հոգևոր գաղափարներ ներկայացնելու և յայտնելու շատ յարմար են : 'Յեսանելի աշխարհս անտեսանե-

լռոյն հայելին է" : Աս աշխարհներուն երկուքն ալ միևնոյն ձեռքէ ելած են : Մասնաւորապէս բարեպաշտ մարդը տեսանելի և անտեսանելի աշխարհներուն մէջ տեղ այնչափ նմանութիւն կը տեսնէ, որ նիւթական աշխարհս՝ հոգւոց աշխարհին խորհրդաւոր մէկ նշանը կամ պատկերը կը համարի :

Բայց հոգւոր ճշմարտութիւններ բացատրելու մասին մարդկային լեզուին ունեցած գոյաւորութենէն, կամ զգալի և իմանսյի իրաց մէջտեղն եղած զարմանալի կապակցութենէն միայն չէ որ ներշնչեալ մատենագիրներն այլաբանական լեզու կը գործածեն : Այսպիսի լեզու մը շատ անգամ զօրաւոր և գեղեցիկ ըլլալուն համար՝ գաղափարներն աւելի ազդուութեամբ մտքին կը ներկայացնէ, դատողութիւնը կը կրթէ, երևակայութիւնը կը զուարթացնէ, յիշողութեան վրայ աւելի տպաւորութիւն կ'ընէ, և սիրար կը շահի . հասարակ կամ բնական բացատրութիւններ աս առաւելութիւնները չունին :

Հոգւոր ճշմարտութիւններ բացատրելու համար Սուրբ Գրոց այլաբանական լեզու գործածելուն օրինակները շատ են : Զոր օրինակ՝ Աստուծոյ համար ըսուած է թէ "Լոյսի" մէջ կը բնակի . իր "Թագաւորութիւնը" կը հաստատէ . Երկինք անոր "աթոռն" է : Քրիստոնէին հաւատքը հասարակ կամ զգալի գործողութիւններ բացատրող բառերով նկարագրուած է, զոր օրինակ՝ ըսուած է . Կենաց խօքը "բռնել", Անբրեւոյթը "տեսնել", Քրիստոսի "երթալ" . Անոր "կռթնիլ" : Դարձեալ Գիրքն Աստուծոյ վերայով մարդու վրայ խօսելու պէս կը խօսի, որպէս թէ՛ Աստուած մարդկային կիրքեր ունի և մարդկային գործողութիւններ կը կատարէ : Այսպէս նաև Աստուծոյ ձեռք, աչք և ստք ընծայած է, որոնց նշանակութիւնը սա է թէ՛ Աստուած կարող է կատարել բոլոր այն գործողութիւնները զոր մենք մեր յիշեալ անդամներովն ու գործարաններովը կը կատարենք . Անիկա "Հայր" կոչուած է, վասն զի մարդու ստեղծողն ու պահպանողն է, և՛ մանաւանդ, վասն զի հոգւոր կենաց աղբիւրն է, ըսուած է թէ՛ Ան իր "երեսին լոյսը կը ծագէ" (Սաղմ. Դ. 6), փոխանակ ըսելու

Թէ իր ներկայութիւնը և ուրիշ կը յայտնէ . «Անտես կ'ըլլայ» ըսուած է (Մաղմ. Ճ. 1) , փոխանակ ըսելու թէ իր օրհնութիւններէն կը զրկէ :

Այսպէս վերաբանութեամբ գործածուած բառերու վրայ երկու կարևոր դիտողութիւն կայ :

1. Երբ վերաբանական կամ այլաբանական նշանով մը հոգևոր ճշմարտութիւն մը կը ներկայացուի, ներկայացուած բանը ներկայացնող իրէն կամ առարկայէն շատ աւելի ազնիւ և կատարեալ է . ամէն տեսակ այլաբանութեանց մէջ (օրոնց վրայ քիչ մը ետքը պիտի խօսինք) այսպէս է : Չոր օրինակ . Միտքը ձեռնարկութիւնները կամ փաստերը կը կշտ, կ'ըսենք . բայց մտքին այն գործողութիւնը զոր կշտել բառով կը բացատրենք՝ մեքենայէս կշտելու գործողութենէն աւելի ազնիւ է : Այսպէս ալ՝ Աստուծոյ տեմնէն՝ աչքի մը տեսնելէն անհամեմատ աւելի կատարեալ է . և անոր բնական լոյսն այնպէս է որ մեր բնական լոյսը հազիւ անոր շատ ազատ մէկ նմանութիւնը կրնայ ըլլալ : Երբ Եկեղեցին Քրիստոսի «Հարսն» է կ'ըսենք, Եկեղեցւոյն աս երկնաւոր առնչութիւնը՝ նոյն առնչութեան երկրաւորէն, այսինքն երկրի վրայ եղած հարսնութենէ շատ աւելի դերազանց է . երկրաւորը երկնաւորին շուքն է, ինչպէս որ երկրաւոր թագաւորութիւններ կամ երկրաւոր թագաւորներու վեհափառութիւնն՝ Աստուծոյ թագաւորութեանն ու վեհափառութեանը լոկ օրինակը կամ ստուերն են : Ուստի պէտք է դիտնալ որ, թէև շատ յատկութիւններ կան որ առհասարակ Աստուծոյ և մարդոց կ'ընծայուին, զոր օրինակ՝ իմաստութիւն, ուր, գիտութիւն, սրբութիւն, Աստուծոյ և մարդոց աս յատկութիւններուն մէջտեղ մեծ տարբերութիւն կայ : Աստուծոյ յատկութիւններն անսահման ազնիւ և կատարեալ են, անոր և մարդոց ունեցածներուն մէջտեղ վերաբանութիւն կամ նմանութիւն մը տեսնուելուն համար է միայն, որ միեւնոյն բառերն երկուքին ալ : Աստուծոյ և մարդոց, վերայ միանգամայն կ'ըսուին :

2. Պէտք է գիտնալ որ այլաբանական բառեր կամ խօսքեր երբեմն այլ և այլ մտքով ըսուած կ'ըլլան : Չոր օրինակ՝ ըսուած է թէ Աստուած կը զղջայ, և մեղաւորներուն դէմ՝ ըրած սպառնալիքէն ետ կը դառնայ . ուրիշ տեղեր այլ ըսուած է թէ՝ «Աստուած մարդ չ'» որ սուտ խօսի, ո՛չ ալ մարդու օրդի՝ որ զղջայ» (Եւ. 1Թ. 14. Թու. 1Գ. 19) : Առաջին խօսքը կը նշանակէ թէ Աստուած մեղաւորներուն հետ իր վարուելուն կերպը կը փոխէ, երբ անոնք իրենցը կը փոխեն . իսկ երկրորդն ըսել կ'ուզէ թէ Անոր մէջ փոփոխամտութիւն և ստուութիւն չկայ : Սաղմոսի 3Ը. 11 համարին մէջ ըսուած է թէ՝ Աստուած «խաւարը իրեն ծածկոյթ՝ դրաւ» . Ա Յիմ. 2. գլխոյն 18 համարին մէջ ալ ասոր հակառակ՝ ըսուած է թէ՝ «Ղոյսի մէջ բնակած» է : Առջի խօսքին մէջ՝ «խաւարը իրեն ծածկոյթ՝ դնել» խօսքը՝ Անոր անքննելի ըլլալը կը նշանակէ . երկրորդին մէջ «Ղոյս» բառը մաքրութիւն, իմաստութիւն կամ փառք կը նշանակէ : Ելից 1Գ. գլխոյն 11 համարին մէջ ըսուած է թէ՝ «Տէրը կը խօսէր Մովսէսին հետ դէմ առ դէմ» . իսկ 2) համարին մէջ ալ կ'ըսուի թէ Մարդ չի կրնար զԱստուած տեսնել ու ազդիլ : Առջի համարին մտքը սա է թէ Աստուած Մովսէսի հետ ուզողկի, առանց միջնորդի կը խօսէր . իսկ երկրորդ խօսքով Աստուծոյ փառքը կատարեալ և անընդմիջաբար տեսնել անկարելի ըլլալը կը հասկցուի :

Աստուածաշունչը շատ անգամ հնգևոր ճշմարտութեանց վրայ այնպիսի բառերով կը խօսի, որոնք չրէից պատմութենէն դէպք մը, կամ Աստուծոյ կարգադրած մէկ արարողութիւնը կ'ակնարկեն : Չոր օրինակ՝ երբ Աստուած սրբութեան զաղափարը չրէից հասկցնել ուզեց, մասնաւոր կարգադրութիւն մը միջոց ըրաւ : Պաղեստինու մէջ հասարակ եղող անասուններն երկուքի բաժնեց, մաքուր և անմաքուր . և պատուիրեց որ մաքուրներէն միայն զօհի համար արատ կամ բիծ չաւննցողներն ընտրուին : Պարձեալ՝ չրէից ցեղերուն մէջ մասնաւոր ցեղ մը զատելով այն՝ մաքուր զօհերը կամ նուէրներն իրեն մատուցանելու պաշ-

տօնն անոր յանձնեց : Նաև առ մատուցանողները կամ քահանայք՝ ոչ միայն մատուցուելու զոհերը մաքուր ջրով պիտի լուային, հապա իրենք ալ նոյնպէս լուացուելու էին : Այս մաքրութիւններն ըլլալէն ետքն ալ՝ տակաւին ոչ քահանան, ոչ ժողովուրդէն մէկը, և ոչ զոհն՝ Աստուծոյ առջև ելլելու չափ բաւական սուրբ կը համարուէր, այլ զոհք կամ նուէրը բուն սուրբ տեղէն գուրս կը մատուցուէր : Այս կերպով Աստուած իր անհուն սրբութեան գաղափարն անոնց մաքրութեն մէջ ապաւորել ուզեց . ուստի ստեղծական բանի մը սրբութիւնը, շին Օրինաց մէջ, այն բանին սրբազան գործածութեան մը համար նիւթական ազատեցութենէ մաքրուած ըլլալը կը նշանակէր . իսկ քրիստոսնէութեան մէջ հոգւոյն մեղքէ մաքրուած, «աստուածային բնութիւն» մը տաացած ըլլալը կը նշանակէ : Աստուած մեղքին պատժապարտութիւնը, և մտադուն անկէ ազատուելուն կերպն ալ նմանապէս խորհրդաւոր նշանակութիւն ունեցող արարողութեանց միջոցով սորվեցուց : Պատուիրեց որ մեղքի համար զոհը մտրթելէն ետքը՝ արիւնը (որ մտրթուած անանոյն Կանտն էր) քաւութիւն կոչուած տեղւոյն վրայ սրսկուի (ՂԼա . ԺԶ . 14, 15) . Ժողովուրդն ալ գուրսի գաւիթն ազօթք ըրած ատենը՝ հոն աչքով զոհէն ելած թանձր ծուխին կը նայէր : Արով սրչափ յայանի կը հասկցուէր թէ՛ Աստուծոյ դէմ մեղք գործելն ահաւոր բան է, և թէ մարդոց հոգիներն ուրիշի մը արեանը քաւութեամբ միայն մեղքէ կրնան ազատիլ : Աստուած ուզեց որ այս կերպով արուած սրբութեան գաղափարները հաստատ մնան, ուստի և կը տեսնենք որ այն գաղափարները շատ անգամ շին Օրինաց յիշեալ զոհի կարգադրութիւնները կամ արարողութիւններն ակնարկող բաւերով բացատրուած են :

Դարձեալ՝ շին Օրինաց մէջ քահանայք ճերմակ կատակը հագնէին, և շքեղ հանգերձներով կը զարդարուէին . ուստի քրիստոսնէութենէն մաքրութիւնն ու պատուականութիւնը ցուցնելու համար՝ այն սովորութիւններէն առնուած բազմեր մշտ գործածուած են :

Սուրբ Գրքին ուսանելու մէջ թերևս օգնութիւն պիտի ըլլայ մեր ընթերցողաց, եթէ հաս կարգու և իրենց յաւանակ անուաներսքը յիշենք այլարանութեան այլ և այլ մէկերը, զորոնք Արարչան Գրոց մասննագիրները, հոգևոր նշմարաութեանց զրոյ խտեղու աստն, գործածած են :

Երբ բառ մը՝ որ այս ինչ բանը նշանակելու յատկացած է՝ ուրիշ անկէ տարբեր բանի մը համար գործածուի, այլաբանութիւն մը կ'ըլլայ . և բառին ան նոր նշանակութիւնը այլաբանութիւն կը կոչուի : Արքեմբ բառին առաջին նշանակութիւնն անգործածելի կ'ըլլայ, և այլարանական նշանակութիւնը՝ բառին բուն կամ յատուկ նշանակութիւնն կը համարուի : Ձոր օրինակ՝ Երբայեցերէն այն բառը որ օրհնել կը նշանակէ, 'ի սկզբան ծունր գնել կամ ծունր կրկնել կը նշանակէր . յետոյ այս նշանակութեամբ չգործածուելով, փնակ օրհնել նշանակութիւնը մնաց . ուստի և այս նշանակութիւնն այն Երբայեցերէն բառին յարուց, ոչ թէ այլարանական նշանակութիւնը եղաւ . նմանապէս Հայերէն երկրպագութեան բառն իր նախնական նշանակութենէն փոխուելով յատկապէս և փայն Աստուծոյ պաշտօն մատուցանելու մտքը կը գործածուի : Այլաբանութիւնը Երեք է :

1. Երբ այլարանական սեռով նշանակուած երկու տարբեր բաներուն մէջանոցը նմանութիւն մը կայ, նարատասնական բառով փոխաբերութիւն կը կոչուի . զոր օրինակ՝ «Յուզան առիւծի ձագ է» խօսքը, այլարանօրէն Յուզարի առիւծակերպ բնաւորութիւնը կ'իմացնէ . և՛ «Ես որթն եմ, ու դուք ճիւղերն էք» խօսքը՝ որթին և ճիւղերուն մեջ տեղ եղած յարաբերութեան նմանութեամբ՝ Յերոջը իր աշակերաններուն հետ ունեցած սերտ միասնութիւնը կը ցուցնէ : Յովհ . ԺԵ . 5 :

2. Երբ նշանակուած երկու տարբեր բաներուն մէջանոց նմանութիւն չկայ, բայց փայն կատակցութիւն մը կամ յարաբերութիւն մը կայ՝ նոյնպէս արուեստական բառով փոխաբերութիւն կը կոչուի . զոր օրինակ՝ Երբ բաժակ կամ գաւաթ բառը՝ մէջը պարունակուած գինուցն (Ա կորնթ . ԺԱ .

27) . կամ մասը բոլորին տեղ կ'առնուի, ինչպէս Սաղ. ԺԶ. 9, սիրտ բառը բոլոր անձին տեղը գրուած է :

3. Երբ յիշեալ կապակցութիւնը արտաքսուտ չիտեսնուիր, այլ մտօք միայն կ'ըմբռնուի. փոխանակութիւն կը կոչուի. զոր օրինակ՝ երբ պատճառը գործին, կամ նշանը նշանակեալ իրին տեղ կ'առնուի. ինչպէս (Յով. Ժ. 1. 8) «Թէ որ քեզ չլուամ, գուն ինձի հետ բաժին չունին» խօսքին մէջ լատ. իրր պատճառ՝ իր արդիւնքին, այսինքն՝ մաքրութեան տեղ գրուած է : Երբեմն Սուրբ Գրոց մէջ այլաբանութեամբ գործածուած խօսքերէն ետքը՝ անոնց բացատրութիւնը կը դրուի, զոր օրինակ՝ Ա Պետ. Գ. 21, Մկրտութիւն բառին նշանակութիւնը կը բացատրուի, «բարի խղճմանքին վկայութիւնը առ Աստուած» :

Այս տեսակ այլաբանութիւնները բառերու կը վերաբերին. ասոնցմէ զատ՝ շատ բառերէ կազմուած խօսքի կամ պատմութեան այլաբանական ձևեր ալ կան, ինչպէս հետեւեալները :

Երբ որ եիցէ գէպերու ճառը կամ պատմութիւնը՝ իր նկարագրական (բառական) մեկնութենէն զատ ուրիշ բարոյական կամ այլաբանական մեկնութիւն մ'աղ առնելու ընդունակ է, այլաբանական պատմութիւն կը կոչուի : Աս այլաբանութիւնն ալ քանի մը տեսակներ ունի :

1. Եթէ այլաբանական սճով գրուած պատմութիւնը, կամ նշանակուած գէպն այնպէս է որ կրնայ իրաբ պատահիլ, որով կը կոչուի :

2. Եթէ յառաջ բերուած գէպն այնպէս է որ չիկրնար իրօք պատահիլ, արուեստական լեզուով որոտով կ'ըսուի : Թէպէտ Սուրբ Գրոց մէջ ասոր ալ միւսին պէս առակ ըսուած է. ինչպէս են Պատաւորաց Թ. գլխոյն մէջ 7-15, կամ Դ Թագ. ԺԴ. 9. և Բ Մնաց. ԻԵ. 18, եղած այլաբանութիւնները :

3. Եթէ այլաբանութեան մէջ ակնարկուած նմանութիւնը միմիայն և գծուարիմաց է, որովհետեւ կամ հանկուտ կը կոչուի : Սուրբ Գրոց մէջ առեղծուած կամ հանկուտ կոչուած այլաբանութեանց մեկնութիւնը միշտ

արուած է : (Գառ . ՃԴ . 14 . բաղդաւակ 18 ին Հեա .)

Երբեմն այլաբանութեամբ ակնարկուած բանք յայտնի ցուցուած չէ , ինչպէս է Անառակ սրդւայն պատմութիւնը . բայց երբեմն այլաբանութեամբ նշանակել ուզուած իրը կամ անձը՝ խօսքին մէջ յայտնի է . զոր օրինակ՝ Սաղմոս 2 . 8 համարին մէջ յիշուած որթ բառին՝ Հրէից ժողովուրդն իմացընելը նոյն Սաղմոսին 15 համարէն յայտնի է :

Երբ անձ մը կամ դէպք մը ուրիշ ապառնի՝ բայց իրեն նման անձ մը կամ դէպք մը կը ներկայացընէ , ներկայացուցածին ԳԻՂ կամ ՆԻԿԻՂ կը կոչուի : Երբ այսպէս ներկայացուած դէպքը հոգևոր գործողութիւն մը կը յիշեցընէ , անիկա ներկայացնող բանը նշանակէ կամ Խորհրդոսր նշան կը կոչուի : Այսպէս Մկրտութիւնը ներքին հոգևոր մաքրութեան արտաքին և տեսանելի նշան մըն է . և հաղորդութեան հացն ու գինին՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը յիշատակող նշանակ են : (Տես և Գ թագ . ՃԱ . 30, 31 : Գ թագ . ՃԳ . 14—19 : Երեմ . ՃԳ . 1—14 : ՃԸ . 2—10 : ԻԷ . 2—8) : Սուրբ Գրոց մէջ կան բաներ որ նշանակ միանգամայն տիպ են , ինչպէս պատեքը . որ իբր նշանակ՝ հոգևոր կարևորութիւն ունեցող անցեալ դէպք մը կը յիշեցնէ : և իբր տիպ՝ ապագայ դէպք մը՝ յառաջագոյն կը նկարէ :

Այս ձևերը միայն Սուրբ Գրոց լեզուին յատուկ չեն . այլ ուրիշ գրուածներու , մանաւանդ հնոց մէջ ալ սովորական են . սակայն Սուրբ Գրոց մէջ որ ամենէն հին գրքն ոււածներէն են՝ յաճախ գործածուած ըլլալով , զանոնք մեկնելու մէջ սխալ հասկնալէ ազատ ըլլալու համար՝ այս ձևերը գիտնալ կարևոր է :

Հիմա գանք հարցնելու թէ Ի՞նչ սփռվ Սուրբ Գիրքն ուսանիլ դիտէ : Աս հարցման պատասխան տալով կ'ընենք թէ՛ Ա՛յն բանէ առաջ խոնարհ և ջերմեռանդ միտք ունենալ հարկաւոր է . պէտք է որ անկեղծութեամբ և յարգութեամբ անոր յայտնած բաներուն միտ դնենք , և մանաւանդ խնդրենք որ Աստուծոյ խոստացած Սուրբ Հոգին մեզի առաջնորդէ ու սորվեցընէ : Ուրիշ որևէիցէ գիտու-

Թիւն մը ուսանելու մէջ ասոր նման զգացումներ պէտք կն: Զոր օրինակ՝ Նշմարիտ բանաստեղծութեան յարգը ճանչնալու համար՝ բանաստեղծական ճաշակ ունենալ պէտք է. փիլիսոփայութիւն սորվելու համար ալ՝ փիլիսոփայական ոգի մը հարկաւոր է:

Բայց Սուրբ Գրոց ուսման մէջ մարդս Սուրբ Հոգւոյն օգնութեանը կարօտ է. ոչ թէ Սուրբ Գրոց լեզուն մասնաւոր գծուարութիւն մը ունենալուն, կամ անոր վարդապետութիւնն անհասկանալի բլալուն համար: Այլ վառ գիտցոյ վարդապետութեանց ազդեցութիւնը զգայով է որ ուսանողը զանոնք կը հասկընայ. և եթէ Աստուած չսորվեցրնէ, մարդս ոչ զանոնք սորվել կ'ուզէ, ոչ ալ անոնց ազդեցութիւնը կրնայ զգալ: Քրիստոս աշխարհք եկած ժամանակը՝ "չոյր խաւարի մէջ կը լուսաւորէր, և խաւարը անիկա չհասկցաւ": Արտի կուրաութիւնը ազիտութիւն յառաջ բերած էր, և մարդուս "Աստուծոյ կեանքէն" օտարացած բլալը՝ "խաւարած իմացողութեան" պատճառով փանգամայն նայն խաւարած իմացողութեան ծանր արդիւնքն էր: (Եփես. Գ. 18.)

Սուրբ Գիրքը սորվեցնողն Աստուած բլալը՝ շատ յատակ կերպով յայտնի եղած է. Հաւատացեալներուն "ամէնն ալ Յէրոզմէն սորված են": Եփեսոցոց եկեղեցւոյն "իմաստութեան ու յայանութեան հոգին" տուողը՝ "մեր Յէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառաց Հայրն" էր (Իփս. Ա. 17): "Նոյնպէս առ մեզի պէտք էլ ուժ արգութիւնը Աստուծմէ ընդունելուն ստոյգ միջոցը յայտնուած է "Հեղեբուն Դատաստանի մէջ պիտի առաջնորդէ, ու իր ճախան հեղեբուն պիտի սորվեցնէ": Սաղ. ԻԵ. 9. Ան որ կ'ուզէ Անոր կամքը ընել, "պիտի գիտնայ առ վարդապետութեանս համար թէ ազգեզք Աստուծմէ" է" (Յովհ. Ի. 17): "Թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պահսած բլալ, թաղ ինչքէ Աստուծմէ. . . և անոր պիտի արուի": Յակ. Ա. 5. Ղերջապէս աստուածային Նշմարութիւնը յաջողութեամբ սորվելու համար՝ ազու հլութիւն, հնազանգ սիրտ և ազոթասիրութիւն հարկաւոր են:

Այս նշմարառութիւնն ազէկ հասկցուած ըլլալու համար՝ սա ալ աւելցնել հարկաւոր է որ Սուրբ Հոգին հլու և հնազանդ գրիտառնէին ալ չի թելադրեր ընդունիլ այնպիսի վարդապետութիւն կամ իմաստ մը՝ որ Սուրբ Գրոց մէջ պարունակուած չէ։ Անիկա մարդիկ իմաստուն կ'ընէ հան գրուածներուն վրայ՝ և ոչ աւելի։ Գրիտառ տնոր համար Առաքելոց 'միտքը բացաւ, որ Գիրքերը հասկնան'՝ (Ղուսի, ԻԴ. 45)։ Լիգիային պիտաք Յէրը բացաւ, որ Պողոսին ըստմենքուն ուշադրութիւն ընէ։ Սաղմոսերգուն ազօթք ըբաւ որ Յէրը անոր աշուրնորը բանալու հաճի, որպէս զի կարող ըլլայ Աստուծոյ օրհնիկն հրաշքներ տեսնել (Սաղմ, ՃՃԲ. 18)։ Աստուածաշունչին հակառակ կամ անոր վրայ յաւելուած, կամ առանց անոր զգնութեանը հնարուած սրեիցէ վարդապետութիւն՝ խաւարային հոգւոյն կամ մեր սխալական միտքին պէտք է ընծայել։

Աստուածաշունչն ուտանելու այս կարևոր սկզբունքը՝ բուն իսկ Աստուածաշունչէն առնուած է և մեր Յէրոջ վարդապետութեանը մէջ առաջին տեղին ունի. ինչպէս որ իր առաջին յիշուած խօսակցութեանը մէջ 'Նիկոգիմոսին ըսաւ. 'Թէ որ մէկ մարդ մը նորէն չ'նանի, չկրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը', այսինքն՝ անոր ընտելիւնը չի կրնար հասկնալ և անոր երանութեանը հաղորդ չի կրնար ըլլալ։ Ձ-ԷՅ. Գ. 3։ Քաղդասէ նահ Ա Կոր. Բ. 14։ Ա. 21։ ՃԲ. 4. 8։ Բ Կոր. Գ. 1-6։ Ա Յ-ԷՅ. Բ. 20. 27։ Ա ՊԻԿ. Բ. 1, 2։ Յ-Է. Ա. 21. Սաղմ. ԻԷ. 4, 5։ ՃՃԲ. 12. 18։ Բ ՅԷԷ. Գ. 13-17, ԻԷ։

ԳԼ. ԺԱ

Աստուծոյ Գիրքը Մեկնելու Կանոններ :

Որչիցէ գիրքի մը խօսքերը մեկնելու առաջին կանոնը սա է. գիրքին խօսքերն իրենց ընդհանուր կամ հասարակ նշանակութեամբը հասկնալ, եթէ անոնց ուրիշ նշանու-

կութիւն մը տալու յատուկ պատճառ չկայ : Եւ որովհետեւ Սուրբ Գրոց մատենագիրները գրեցին կամ խօսեցան որպէս զի աւելն մարդ հասկնայ, անոնց խօսքերն այն մտաքով հասկնալու և մեկնելու ենք՝ որ մտքով որ մարդիկ զանոնք ընդհանրապէս կը գործածեն : Զոր օրինակ՝ հետեւեալ խօսքը՝ «Սղէկութիւն ընող մը չկայ» . և դարձեալ ուրիշ տեղ մը այլարանութեամբ ըսուած սա խօսքը՝ «Սմէն մարմին իր ճախարան ապականեր է», բառերուն գործածական և պարզ առումներուն նայելով մեկնելու ենք : Նոյնպէս Աստուծոյ գոյութիւնն աւ կատարելութիւնները, Եհովային, այսինքն՝ Աստուծոյ Հօր, Արդւոյ և Հոգւոյն Սրբոյ միութիւնը, և Սուրբ Գրոց ուրիշ գլխաւոր վարդապետութիւնները, այսինքն՝ Թէ մարդս ինկած է և ապականեալ բնութիւն ունի, Թէ՛ իր գործերուն համար պատասխանատու է, Թէ՛ փրկութիւնը ֆրիստոսի քաւիչ արեամբը կ'ըլլայ, Թէ՛ սրտի նորոգութիւնը Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբը կը կատարուի, Թէ՛ Թողութիւն գրեւելու համար սրտանց զղջում հարկաւոր է, Թէ՛ զղջումն ու Թողութիւնը ֆրիստոսի պարգևներն են, Թէ՛ ֆրիստոնեան սրբութեան մէջ հետզհետէ կ'աճի, աս և ասոնց նման կարևոր վարդապետութիւններ, ինչպէս նաև մարդուս վերջին ու յաւիտեական երջանկութեան վարդապետութիւնը, Սուրբ Գրոց մէջ յայտնուած են այնպիսի պարզ խօսքերով որ զանոնք սխալ հասկնալ անհնար է :

Բայց, Թէպէտ այս ընդհանուր կանոնին համեմատ Սուրբ Գրոց խօսքերն իրենց հասարակ կամ ընդհանուր հասկըցուած նշանակութեամբը պիտի հասկնանք, կան նոյն գրքին մէջ բացատրութեան յատուկ ձևեր՝ որոնք Երրայական լեզուին սեպհական ոճերն ըլլալով Աստուածաշունչին Թարգմանութեանցը մէջ ալ կը նշմարուին : Այսպէս Սուրբ Գիրք Երրայական ոճով

(ա) Շատ անգամ բանի մը որպիսութիւնը ոչ Թէ Թեմականով այլ ուրիշ գոյական անունով մը կը բացատրէ . զոր օրինակ՝ «փառաւոր Թագաւոր» ըսելու տեղ՝ «փառաց Թագաւոր» ըսուած է (Աաղմ. ԻԳ. 7. 10) : և փոխանակ

ըսելու՝ «Չեր լի հաւատով գործը, ու սիրայիբ աշխատու-
թիւնը և յուսայից համբերութիւնը», «Չեր հաւատքին
գործը ու սիրոյ աշխատութիւնը և յոյսին համբերու-
թիւնը» ըսուած է (Ա թեա . Ա . 3) : Այսպէս Եփես . Ա .
13. «Ճշմարտութեան խօսքը՝ կը նշանակէ՝ «Ճշմարիտ
խօսք» : Տես նաև Գործ . Է . 2 :

(Բ) Աղէկ կամ գէշ սրպիտութիւն մը ունեցող անձ մը
այն սրպիտութեան սրդին կամ գաւակը կ'անուանէ : Բ
Օր . ՃԳ . 13 Հայերէն թարգմանութեան մէջ «Չար
մարդիկներ» խօսքը՝ Երբայեցերէն բնագրին մէջ «Բեւիարի
(այսինքն՝ չարածիւթեան) սրդիներ» ըսուած է : Աւ Եփես . Է .
6, 8 . «Անհնազանդութեան սրդիք», և՛ «Ղուսոյ սրդիք»
խօսքերը՝ նոյնպէս անհնազանդ և լուսաւորեալ անձինք կը
նշանակեն : Այսպէս նաև Մատթ . ԻԴ . 15, և Մարկ . ժԳ .
14 . «Աւերմունքին պղծութիւնը» ըսելով «Աւերիչ պղծ-
ծութիւն» կը հասկցուի : Տես նաև Ա Յովհ . Գ . 10 :
Եբր . Ա . 3 : Յայտ . Գ . 10 :

(Գ) Բաղդատութիւնը յատուկ կերպով մը կ'ընէ . զոր
օրինակ՝ փոխանակ ըսելու՝ «Յակորը Եսաւէն աւելի սիրե-
ցի», «Յակորը սիրեցի բայց Եսաւը ատեցի» ըսուած է
(Մաղ . Ա . 2, 3 . Հռոմ . Թ . 13) : Մատթէոս . Ը 37ին մէջ
Ցէրը սոգորական կերպով ըսած է . «Ան որ հայրը կամ մայրը
ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ» . բայց Ղուկաս
ժԴ . ՉԶին մէջ նոյն իմաստը բաղդատութեան յիշեալ յա-
տուկ կերպով կը բացատրէ ըսելով . «Թէ՛ որ մէկը ինձի կու-
գայ, ու չատեր իր հայրը, և՛ չկրնար իմ աշակերտս ըլլալ» :
Բացատրութեան ոոյն կերպը գործածուած է նաև Յովհ .
ժԲ . 25 . Ծննդ . ԻԹ . 30, 31 . և Բ Օրին ԻԱ . 15, ուր
մէկուն համար «ատելի», ուրիշի մը համար ալ «սիրելի»
ըսելը՝ «մէկը միւսէն աւելի սիրելի էր» կը նշանակէ : Բաղ-
դատութիւնը Սուրբ Գրոց մէջ երբեմն անջատական շաղ-
կապներու միջոցով ալ կ'ըլլայ . զոր օրինակ՝ Ծննդ . ԻԵ .
8 . «Չիս հոս խրկողը դուք չէք, հոգա Աստուած է», ըսե-
լը՝ «Չիս հոս զրկողն Աստուած էր մանաւանդ քան դուք»,
ըսել է : Տես նաև ԵԼ . ժՁ : 8 : Ա թագ . Ը . 7 : Առակ .

Ը. 10: Երեմ. Է. 22, 23: Ով. 2. 6: Այսպէս Մարկ. Թ. 36. «Ով որ զիս ընդունի, քի՛ թէ զիս կ'ընդունի, հապա զիս խրկողը», ըսելը՝ Ոչ այնչափ զիս, կամ Ոչ միայն զիս՝ հապա մանաւանդ զիս զրկողը կ'ընդունի ըսել է: Նշանակեալ է Ղուկ. ԺԳ. 12: Յովհ. Ե. 22. 30: 2. 27: Ա կորնթ. Ա. 17: Եփես. 2. 12: Ա Թես. Գ. 8:

(Դ) Երբեմն յորնակի կը գործածէ՝ սւր մէկէ աւելի անհատ կայ, թէև խօսքն անոնց մէկուն վրայ միայն ըլլայ, կամ մէկը միայն ակնարկուի. տես Ծննդ. Ը. 4, և ԺԶ. 24, 25: Այսպէս Մատթ. ԻԳ. 1. «աշակերտները» ըսելով անոնցմէ մէկը միայն կ'ուզէ նշանակել: Տես նաև Մարկ. ԺԳ. 1. բազմաթիւ նշանակեալ Մատթ. ԻԶ. 8 ը՛ Յովհ. ԺԹ. 4ին հետ, և Մատթ. ԻԷ. 41ը և Մարկ. ԺԵ. 32ը՝ Ղուկ. ԻԳ. 39ին հետ: Աս օրինակներէն ամենց մէջ կ'իմացուի թէ յիշուած անհատներուն բոլորն ալ կամ շատերը միևնոյն խորհուրդը կամ զգացումն ունէին, թէպէտ թերևս միայն մէկը նոյն խորհուրդը կամ զգացումը խօսքով կամ գործով կը յայտնէր: Յովհ. ԺԳ. 4. «Հանդերձներ» բառը կը նշանակէ անոնց մէկը, վրայինը. տես և Մարկ. Ե. 27, 28. 30:

(Ե) Ծնագոյց կամ նախահարց անունները շատ անգամ անոնց զաւկին կամ սերունդին տեղ կը գործածէ: Այսպէս Ծննդ. Թ. 25, ըսուած է. «Անիծեալ ըլլայ քանանը», այսինքն՝ քանանու սերունդը: Բայց պէտք է գիտնալ որ այս անէծքը քանանու սերունդին մէջ Աստուածապաշտներուն շնորհուր. քանզի Մելքիսեդեկ քանանացի էր, ինչպէս նաև քրիստոսի եկող կինը՝ որուն գուտարը բժշկուեցաւ. տես Ծննդ. ԺԳ. 18—20: Մատթ. ԺԵ, 2՝—28: Նոյն կերպով Յակոբ և Իսրայէլ անունները շատ անգամ Իսրայէլացւոց տեղ գրուած են, ինչպէս Գ Թագ. ԺԸ. 17. 18: Սաղմ. ԺԳ. 7:

(Զ) «Որդի» բառը սերունդի կամ զաւկի նշանակութեամբ կը գործածէ: Այսպէս քահանայը՝ Ղեկի որդիները կոչուած են. Մեմֆիթոսթեի համար Սաուղին որդին էր ըսուած է (Թ Թագ. ԺԳ. 24), թէպէտ անիկա

Յովնայանու որդին էր : Ջաքարիա Ադդոզի թոռը (Ջաք .
 Ա . 1) Ադդոզի որդին կոչուած է (եղբ . Ե . 1) , Նմանապէս
 "Հայր" բառը որեւիցէ նախնւոյ մը համար կը դործածէ :
 "եղբայր" բառն ալ մօտ ազգականի տեղ կ'առնէ . այս-
 պէս Արբահամ իր եղբորորդին Ղովար՝ եղբայր կոչեց
 (Ծննդ . ԺԴ . 16) : Տես նաև Իթ . 12 . 15 : Հաւանա-
 կանարար Յովհաննու 7 . գլխոյն 3 . համարին մէջ ալ նոյն
 բառն առ մտքով դործածուած է . տես և Գաղ . Ա . 19 :
 Ուրիշ տեղ մ'ալ Քերզելիին մէկ աղջկանը հետ ամուսնացեալ
 մարդու մը սերունդը՝ Քերզելիի որդիքը կոչուած է յա-
 նուն Քերզելիի՝ որ մօր կողմանէ անոնց նախնին էր (եղբ .
 Բ . 61) : Այս կերպով Յայիր՝ որդի Մանասէի կոչուած է ,
 քանզի հաւը (Կաղ) Մանասէի իշխաններէն մէկուն աղջիկն
 առած էր : Կը կարծուի թէ մեր Յերոջը հայրը նախնւոյ
 Յովսէփ այս մտքը Հեղիի որդին ըսուած է (Ղուկ . Գ . 23) ,
 քանզի անիկա Հեղիի ըսն աղջկանը Մարիամնու հետ ամուսնացած էր :
 ուստի և Ղուկասու գրած աղգարանու-
 թիւեր ոչ թէ Յովսէփոյ , այլ Մարիամնու ազգահամարն
 է , և ըստ այսմ մեր Յերը ոչ միայն Մաթթէոսի գրած
 աղգարանութեանը համեմատ իր կարծեցեալ Հօրը Յովսէ-
 փին : հապա նաև Մօրը կողմանէ , ուղիղ գծով , Դաւթի
 որդին էր :

Այս իրողութիւնները գիտնալով շատ անգամ իրարու
 հակասական երեցած տեղերը կրնանք միարանել . զոր
 օրինակ , Դ Թագ . Ը . 26 . Ամբիին աղջիկը Գոթողիա՝
 18 համարին մէջ Աքաաբին աղջիկը կոչուած է . և աը-
 դարև Գոթողիա Աքաաբին աղջիկը , իսկ Ամբիին թուան
 էր :

(է) Քանի մը թիւեր անորոշ թուաց տեղ կը դործածէ :
 Ջոր օրինակ , "Յաղ" թիւն իր բուն նշանակութենէն
 զատ կը նշանակէ նաև "Քանի քանի" (Ծննդ . ԼԱ . 7) : Նոյն-
 պէս Դան . Ա . 20 , "Յասնապատիկ" բառը՝ "Իսիտ շատ"
 հասկնալու է : Նոյնպէս "Քառասուն" կը նշանակէ "Շատ" :
 Պերսեպոլիս քաղաքն Արեւելեան լեզուաց մէջ "Քաղաք քա-
 ռասուն աշտարակով" կոչուած է : թէպէտ աշտարակները

քառասունէն շատ աւելի էին : Հաւանականաբար Գ
 Թագ. Ը. 9 համարին նշանակութիւնն ալ աս է, ուր ըս-
 ուած է թէ Ազայէլ Եղիսէին ընծայ բերաւ, «Այսինքն
 Դամասկոսի բոլոր բարիքներէն բառասուն ուղտ բեռնա-
 ւորած», Նոյնպէս հաւանական է թէ Եզեկ. Իթ. 11. 13
 համարներուն մէջ «քառասուն տարի» յիշուած միջոցը՝
 նմանապէս անորոշ բայց երկայն ժամանակ կը նշանակէ :
 «Եօթը» և «Եօթանասուն» թիւերն ալ մեծ և կատարեալ,
 բայց անորոշ թիւ մը նշանակելու համար գործածուած են
 (Սաղմ. ճԺԹ. 164 : Առակ. ԻԶ. 16. 25 : Ղևտ. ԻԶ.
 24, և ուրիշ տեղեր : Տէրը մեզի պատուիրած է որ մինչև
 եօթանասուն անգամ եօթը հեզ ներենք, ասիկա կը նշա-
 նակէ թէ, ցորչափ մեր եղբայրն իր յանցանացը վրայ կը
 զղջայ, մեր ներելը վերջ պիտի չունենայ :

(Ը) Երբ թիւ մը ճշգրիտ գիտցուած չէ, Սուրբ Գիրք
 երբեմն անոց մօտ հաւանական թիւ մը կը դնէ. զոր օրի-
 նակ, Թու. ԻԵ. 9 էն կը տեղեկանանք որ 24,000 ի չափ
 մարդիկ հարուածէն մեռան, բայց Ա Կորնթ. Ժ. 8ին մէջ,
 23 հազար կը յիշուի :

(Թ) Երբեմն ներգործական Բայ մը կը գործածէ, թէպէտ
 ան Բային ենթական ոչ թէ գործող, այլ գործո-
 ղութիւնը կամ վիճակը ծանուցանող միայն է : Չոր օրի-
 նակ, Ղևտ. ԺԳ. 3. 13, քահանային համար Երբայե-
 ցերէն բնագրին մէջ կ'ըսուի թէ անիկա բորոտութենէ
 բռնուած մարդը մաքուր կամ անմաքուր կ'ընէ. փոխա-
 նակ ըսելու թէ մարդուն մաքուր կամ անմաքուր ըլլալը
 կը ծանուցանէ : Այսպէս ըսուած է. «Գիրք կը սպաննէ».
 այսինքն՝ մեղքին հետևութիւնը մահ ըլլալը կը ծանու-
 ցանէ (Բ Կորնթ. Գ. 6) : Այսպէս նաև Մարգարէու-
 թեանց մէջ Մարգարէից համար այս ինչ բանը պիտի ընեն
 կ'ըսուի. փոխանակ ըսելու թէ ըլլալիքը պիտի ծանու-
 ցանեն : Չոր օրինակ, Երեմ. Ա. 10. կ'ըսուի, Տէրը
 Երեմիային ըսաւ. «Նայէ՛, և այսօր քեզ ազգերուն վրայ՝
 ու թաղաւորութիւններուն վրայ կայնեցուցի, որ խլեռ ու
 փլցնեա, և կորսնցնեա ու աւբեա : նաև շինեա ու ուղն-

կես" . ուր պէտք է հասկնալ թէ Երեմիա ազգերուն և թագաւորութիւններուն պիտի ծանուցանէր որ անոնք ապագային մէջ յիշեալ վիճակները պիտի ունենան : Յէրոջը իւր աշակերտներուն՝ "Որոնց որ մեղքերը թողուք, թողուած ըլլայ անոնց . և որոնց որ մեղքերը ետ բանէք, բանուած ըլլայ" ըսածը՝ նոյն մտօք հասկնալու է, այսինքն թէ անոնք՝ թողութեան պայմաններն ընդունողներուն պիտի ծանուցանէին որ իրենց մեղքերը թողուած են :

Սուրբ Գրոց մէջ յատուկ անուանց գործածուելուն կերպն ալ դիտողութեան արժանի է . զոր օրինակ՝ շատ անգամ՝ այլ և այլ անձինք միևնոյն անուամբ կ'անուանուին : Այսպէս Աբրահամու ժամանակէն մինչև Պարսից Եգիպտոսի տիրելը՝ Սուրբ Գրոց մէջ Եգիպտացի թագաւորաց, իբր պաշտօնի անուն կամ տիտղոս, "Փարաւոն" անունը տրուած է, որ Ֆրէ (արև) բառէն կ'ելլէ, և իշխան կամ թագաւոր կը նշանակէ . ինչպէս որ արտաքին պատմութեանց մէջ Պտղոմէոս յորջորջումը՝ Մեծէն Աղեքսանդրէ ետքը Եգիպտոսի տիրող թագաւորաց ընդհանուր անուն եղաւ : Նոյնպէս Աստուածաշունչը հաւանականաբար Աբիմելքը՝ որ հայր Ռֆայուս կը նշանակէ, և Ագաթու Բենադադ (Արեգական որդի) անունները՝ կուտայ, իբր պաշտօնի անուններ, Փղշտացւոց, Ամաղեկացւոց և Դամասկոսի թագաւորներուն : Կ'երևի թէ Եգիպտացւոց և Փղշտացւոց թագաւորներն, իրենց յատուկ անունէն զատ, հասարակ պաշտօնի անուն մ'ալ ունէին . քանզի անոնցմէ ոմանք պատմութեանց մէջ յիշուած են կրկին անուամբ, ինչպէս Փարաւոն Նեքաւով, Փարաւոն Վափար. և Սաղմ. ԼԳ. վերնագրին մէջ յիշուած Աբիմելքը՝ Ա թագ . ԻԱ . 10 համարին մէջ Անքուս կոչուած է : Հռոմայեցւոց Ինքնակալներն ալ Յուլիոս Կեսարէն ետքը, իրենց բուն անունէն զատ, իբր պատուանուն կամ պաշտօնի անուն, "Կայսր" յորջորջումը կ'աւանդին : Ուստի և Սուրբ Գրիբ այլ և այլ Հռոմայեցի թագաւորներ կամ ինքնակալներ նոյն պաշտօնի անուամբ "Կայսր" կը կոչէ : Այսպէս Ղուկ . Բ . 1 . Կայսր տիտղոսով յիշուած Օգոստոսն՝ այն տիտղոսը

կրօններուն երկրորդն է . Գրիստոսի խաչուած ատենը տիրող Տիբերիոս ալ նոյն կայսր անուամբ կոչուած է . նոյնպէս Ներոն առ որ Պողոս բողոքեց՝ կայսր կը կոչուի (Գործ . ԻԵ . 11 .) :

Նոր կտակարանին մէջ այլ և այլ անձինք Հերովդէս անուամբ կը յիշուին : Բեթղեհէմի մանր տղաքը ջարդել տուողն՝ արտաքին պատմութեան մէջ Մեծ Հերովդէս կոչուած է : Աս այն Հերովդէսն է որ Յաճարը նորոգել ու զարդարել տուաւ , և Պաղեստինու կեսարիա քաղաքն բնդարձակեց : Ասիկա անգութ և վրէժխնդիր բնաւորութեանը կողմանէ նշանաւոր է : Մահուընէն ետքը ասոր թագաւորութեան կէսը , այսինքն՝ Հրէաստան ու Սամարիա , իր որդւոյն Արքեղայոսի (Մատթ . Բ . 22) տրուեցաւ . Գալիլեայի մեծ մասը՝ միւս որդւոյն Հերովդէս չորրորդապետի . իսկ Ասորոց և Գալիլեայի քանի մը մասերը՝ երրորդ որդւոյն Փիլիպպոսի (Ղուկ . Գ . 1) : Յովհաննէս Մկրտիչ գլխատողն ու մեր Յէրն իր չարչարանաց օրերը ծաղր ընողը՝ Հերովդէս չորրորդապետն էր . որ Մատթ . ԺԴ . 9 և Մարկ . Զ . 14 . թագաւոր ալ կը կոչուի : Ասոր իր եղբօրը կնօջը Հերովդիային հետ ունեցած վարմունքը պատճառ եղաւ որ Արևմտեան Գաղատիա (այժմու Գաղիա) աքսորուեցաւ : Աս Հերովդէսին ու Փիլիպպոսին երկիրները վերջապէս տրուեցան Հերովդէս Ազրիպպասին , որ Հերովդիայի եղբայրը և Չորրորդապետին եղբօրորդին էր , ու Սուրբ Գրոց մէջ լոկ Հերովդէս կոչուած է : Ասիկա ՚ի վերջոյ իշխեց բոլոր այն երկիրներուն որոնց իր հաւը Մեծն Հերովդէս Պաղեստինու մէջ տիրած էր : Աս Հերովդէս է որ Յակոբոս Առաքեալը սպաննել տուաւ , ինք ալ կեսարիա յանկարծ և չարաչար մեռաւ (Գործ . ԺԲ . 1 . 20-23) : Ասոր որդին էր միւս Հերովդէս Ազրիպպաս որ Գործոց մէջ լոկ Ազրիպպաս կը կոչուի : Պողոս առ վերջնոյն առջև ատենաբանելով ինքզինք ջատագովեց Գործ ԻԵ . 13 և ԻԶ . 1 :

Սուրբ Գրոց մէջ շատ անգամ ալ և այլ տեղերու ալ միեւնոյն անունը տրուած է : կեսարիա երկու քաղքի անուն

է . մէկը կ'ըսուէր Փիլիպպոսի Վեսարիա և Գալիլիոյ մէջ էր (Մատթ . ԺԶ . 13) . միւսը՝ Միջերկրականին եզերքը : Գործոց Առաքելոց մէջ յիշուած Վեսարիան աս վերջինն էր : Հրէաստանէն Հռոմ գաղտը ճամբորդներ ընդհանրապէս աս քաղքին նաւահանդիստէն ճամբայ կ'ելլէին : Նոյնպէս Անտիոք երկու քաղքի անուն է . մէկն՝ Ասորոց մէջ, և Պոզոսի ու Քառնարոյ իրենց աշխատութիւնները սկսած տեղն է, և Քրիստոսի հետևողները հոս առաջին անգամ Քրիստոնեայ անուանեցան : Իսկ Գործ . ԺԳ . 14՝ և Բ Տիմ . Գ . 11 յիշուած Անտիոք՝ Վիսիդեայի կամ այժմու Գարամանի մէջ էր :

Մասփա անուամբ (որ դիտանոց ըսել է) քաղաք մը կար Գաղայադու լեռանը վրայ . Յեփթայէ աս քաղաքը կը բնակէր, ուր և Յակոբ ու Լարան իրենց դաշինքն ըրին (Ծննդ . ԼԱ . 49 . Դատ . ԺԱ . 29 . 34) : Աւրիշ Մասփա մ'ալ կար Մովբարի մէջ (Ա Քաղ . ԻԲ . 3) . Թերևս ասիկա առաջնոյն հետ նոյն է : Աւրիշ Մասփա մ'ալ կար Գաբաւոնի մէջ, ուր Սաւուղ Թագաւոր ընտրուեցաւ (Ա Քաղ . Ժ . 17—27) : Գարձեալ ուրիշ Մասփա մ'ալ կար Յուդայի երկրին մէջ (Յես . ԺԵ . 38) :

Աստուածաշունչին մէջ երբեմն ալ միւսնոյն անձինք և տեղեր տարբեր անուններով կը յիշուին . զոր օրինակ՝ Մովսէսին աները Յոբաբ և Յոթոր կոչուած է (Դատ . Գ . 11 . ԵԼ . Գ . 1) . Ղևին՝ Մատթէոսն է . Թովմաս և Երկուորեակ միւսնոյն անձն է (Թովմաս ալ երկուորեակ կը նշանակէ) . Թադէոս, Ղեբէոս և Յուդա միւսնոյն Առաքելոյն անուններն են : Քորբեբ և Սինա միւսնոյն լեռանց շղթային այլ և այլ ծայրերուն անուններն են, և աս երկու անուններն ալ երբեմն նոյն լեռանց ամբողջ շղթային կը տրուին : Գալիլեայի Վեսարիան հին ատենը Լայիս, և յետոյ Դան կոչուած է (Դատ . ԺԸ . 29) : Գեննեսարեթի ծովակը (Ղուկ . Ե . 1) կը կոչուի նաև Գալիլեացոց կամ Յիրեբիայի ծով (Մատթ . Գ . 18 . Յովհ . ԻԱ . 1) :

Այժմու Հապէշիստանը կոչուած է Եթովպիա, երբեմն ալ Բուշ . Թէպէտ այս վերջին անունը Հնդկաստանի և

Արարից ալ կը տրուի : Յունաստան երբեմն Ելլադա կը կոչուի երբեմն ալ Յաւան (Ես . ԳՁ . 19) . Եգիպտոս ալ թէ քամ թէ Ռահար կոչուած է (Սաղմ . 22 . 51 . Ես . ԾԱ . 9) : Մեռեալ ծովը Դաշտի ծով կոչուած է (Դ . Թագ . ԺԴ . 25) . քանզի այս ծովուն կից տափարակ մը կար որուն վրայ Սոդոմ և Գոմոր քաղաքները շինուած էին : Նոյն ծովը Երուսաղէմի նկատմամբ սւնեցած գրիցը նայելով Արևելեան ծով կոչուած է (Յովել . Բ , 20) . երբեմն ալ Ադի ծով կը կոչուի (Ծննդ . ԺԴ 3) : Նեղոս գետը Սուրբ Գրոց մէջ Եգիպտոսի գետ և Սիրիոյ ջուր կոչուած է (Ծննդ . ԺԵ . 18 . Երեմ . Բ . 18) : Միջերկրական ծովը մերթ Փղշտացւոց ծով կը կոչուի Փղշտացւոց անուամբը , որ այն ծովուն եզերքը կը բնակէին , մերթ Արևմտեան ծով , և աւելի ստէպ՝ Մեծ ծով (Ել . ԻԳ . 31 . Բ Օր . ԺԱ . 24 . Թու . ԼԴ . 6 , 7) : քանանու երկիրը կոչուած է՝ Փղշտացւոց երկիր (Ել . ԺԵ . 14) , Եբրայեցւոց երկիր (Ծննդ . Խ . 15) , Իսրայէլի երկիր (Եզեկ . ԺԱ . 17) , Սուրբ երկիր (Ջաբ . Բ . 12) և Աւետեաց երկիր (Եբր . ԺԱ . 9) :

Յատուկ անուանց աս տարբեր գործածութիւնը՝ Սուրբ Գրոց առերևոյթ հակասութիւնները երբեմն կը միաբանէ , զոր օրինակ՝ Յովրամի որդին Ոքոզիա (Դ Թագ . Ը . 29)՝ Ազարիա (Բ Մնա . ԻԲ . 6) և Յովաքազ (Բ Մնա . ԻԱ . 17) կոչուած է . Յովսիայի որդին Յովաքազ ալ (Դ Թագ . ԻԳ . 30)՝ Յօհանան (Ա Մնա . Գ . 15) , և Սեղղում (Եբ . ԻԲ . 11) : Ոզիա՝ Ազարիա կոչուած է , Նաթանայէլ՝ Բարթողիմէոս : Աս տարբեր անունները շատ անգամ գրեթէ միևնոյն նշանակութիւնն ունին :

Սուրբ Գրոց բառերը մեկնելու առաջին և ամենէն ընդհանուր կանոնը վերը (139 էրես) տուած ենք , այսինքն թէ Գիրքին խօսքերն իրենց ընդհանուր կամ հասարակ նշանակութեամբը պէտք է հասկնալ , եթէ անոնց ուրիշ նշանակութիւն մը տալու յատուկ պատճառ չկայ : Բայց երբեմն կը պատահի որ բառ մը միևնոյն գիրքին մէջ այլ և այլ նշանակութիւններ կ'ունենայ . ուստի ճանշնալու հա-

մար թէ այլ և այլ նշանակութիւն ունեցող բառ մը խօսքի մը մէջ ո՛ր նշանակութեամբ գործածուած է՝ մեկնութեան երկրորդ կանոնի մը կը կարօտինք :

Աս երկրորդ կանոնը սա է . Խնդրոյ տակ եզոզ բառին հետ միանգամայն այն խօսքին մէջ պարուսակուած միւս բառերուն իմաստին ալ միտ գնելով՝ սրռելու է թէ գրողն այն բառով ինչ բան հասկցնել ուզած է : Ձոր օրինակ՝ Հաւատք բառը Սուրբ Գրոց մէջ այլ և այլ նշանակութիւն ունի . և ամէն անգամ պէտք է անոր հետ կապուած ուրիշ բառերուն միտ գնել որ հասկցուի թէ ո՛ր նշանակութեամբ այս ինչ կամ այն ինչ տեղ գործածուած է : Օրինակի աղագաւ՝ Գաղ. Ա . 23 . "Հիմա ինքքան հաւատքը կը քարոզէ՝ որ ատեն մը կը կործանէր" խօսքը կարգալով, եթէ "քարոզել" և "կործանել" բառերուն իմաստին միտ գնենք, գիւրաւ կը հասկցուի թէ հոս հաստատ բառը կրօնք, այսինքն՝ հաւատալիք կը նշանակէ : Ցեանաւ Ա Տիմ. Գ . 9 . Գ . 1 . Գործ . ԻԴ . 24 : Սոյն կանոնին համեմատ կը հասկցուի թէ Հռոմ. Գ . 3 . գրուած "Միթէ անոնց անհաւատութիւնը Աստուծոյ հաւատքը կը խտփանէ՞ր" խօսքին մէջ՝ հաւատք բառը կը նշանակէ ճշմարտութիւն կամ հաւատարմութիւն . և թէ՛ Հռոմ. ժԴ . 23 . նոյն հաւատք բառը կը նշանակէ պարտաւորութիւնը խղճի մտօք ճանչնալ : Նոյն կանոնով կ'իմանանք թէ Եբբ . ժԱ . գլխոյն մէջ հաւատք կը նշանակէ յԱստուածուստ յայտնուած վարդապետութիւնները սրտանց ընդունիլ և անոնց հնազանդիլ . և թէ՛ ուրիշ տեղեր, զոր օրինակ՝ Հռոմ. Գ . 28 , կը նշանակէ քրիստոսի կատարած փրկագործութեանը վրայ յոյս գնել և անիկա մեր թողութեան հիմն ու մեր սրբութեան միջոցը համարել :

Գարձեալսոյն այս կանոնով, այսինքն՝ հետը կապուած ուրիշ բառերուն նշանակութեանը միտ գնելով, եթէ Բարձի բառին այլ և այլ նշանակութիւնները քննելու ելլենք, պիտի տեսնենք որ աս բառը երբեմն կը նշանակէ փափուկ և գիւրաթեք բան մը, ինչպէս Եպեկ . ժԱ . 19 .

“Անոնց մարմնեղէն սիրա պիտի տամ”, ուր մարմնեղէնը քարեղէնին հակառակն իմացնելու համար դրուած է : Երբեմն ալ յարֆին՝ կը նշանակէ մարդկային բնութիւն, առանց նկատելու անոր մեղաւորութիւնը (Յովհ. Ա. 14. Հռոմ. Ա. 3. Թ. 3) : Բայց աւելի յաճախ՝ մարդկային ապականեալ և մեղաւոր բնութեան տեղ կ’առնուի. (Հռոմ. Ը. 5. Եփես. Բ. 3) : Գարձեալ ուրիշ առում մը ունի որով կը հասկցուին այն բաները՝ որոնք կրօնքի մէջ արտաքին և արարողական ըլլալով անոր ներքին և հոգևոր բաներէն բոլորովին տարբեր են . այս նշանակութիւնն ունի Գաղ. Գ. 3. Զ. 12, ուր մանաւանդ Մովսիսական արարողութիւնները կ’ակնարկուին : (Բաղդ. Գ. 3) :

ՓՐԿՈՒԹԻՒՆ բառը երբեմն արտաքին չարիքներէն ազատութիւն կը նշանակէ, ինչպէս Ել. ԺԴ. 13 : Կը նշանակէ նաև բժշկութիւն, ինչպէս Յակ. Ե. 15, ուր Քրիստոսէի մը հիւանդութեանը վրայ խօսելով Առաքեալը կ’ըսէ թէ Հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ, այսինքն՝ պիտի բժշկէ, զհիւանդը : Սակայն փրկութիւն բառը սովորաբար կը վերաբերի հաւատացելոց հոգևորապէս վայելած օրհնութիւններուն . երբեմն այն օրհնութիւններուն՝ զոր երկրի վրայ կը վայելեն (Եփես. Բ. 8. Ղուկ. Ա. 77) . բայց աւելի յաճախ՝ Քրիստոսի՝ իրեն հաւատացողներուն համար ապահովուցած ամբողջ երանելի վիճակին, որուն սկիզբը մեղաց թողութիւն է և վախճանը յաւիտենական փառք (Հռոմ. ԺԳ. 11) :

Այսպէս ԱՐԻՒՆ բառն ալ Սուրբ Գրոց մէջ այլևայլ նշանակութեամբ գործածուած է : Ատտուած՝ “բոլոր մարգոց ազգերը մէկ արիւնէ մը ըրաւ” (Գործ. ԺԷ. 26) . աս խօսքը կը նշանակէ թէ բոլոր մարդկային ազգը միևնոյն ծագումը կամ բնութիւնն ունի : Մատթ. ԻԷ. 25. “Ատոր արիւնը մեր վրայ” ու մեր որդւոցը վրայ” խօսքին մէջ՝ արիւն բառը Քրիստոսը ապաննելուն յանցանքը կը նշանակէ, իբր թէ Հրեայք ըսել կ’ուզէին . “Ատոր մահը (այսինքն՝ անոր ապաննուելուն յանցանքը) մեր վրայ ըլլայ” :

Հռոմ. Ե. 9. հաւատացելըն համար բուռած է թէ քրիստոսի արեամբը կ'արդարանայ . և Ա Յով. Ա. 7. քրիստոսի արեանը համար բուռած է թէ 'Մեզ ամէն մեզքէ կը սրբէ' . փրկուածներուն համար ալ կ'ըսուի թէ 'Իրենց հանդերձները լուացին, ու զանոնք Գառնուկին արիւն հովը ճերմկացուցին' (Յայտ. Է. 14) : Այս վկայութեանց մէջ՝ քրիստոսի արիւն քսելով կ'իմացուի անոր 'մահուան հնադանդիլը' , խաչին վրայ իր անձը մատուցանելը որ արդարեւ մեղաւորին արդարանալուն հիմը , և անոր սրբուեց լուն պատճառն ու միջոցն է :

Շնորհաբար բառին ընդհանուր նշանակութիւնն է 'բարեբարութիւն , պարզեւ' : Ատուածոյ վրայ բուռած ատենը կը նշանակէ Ատուածոյ մարդոց ըրած բարեբարութիւնը , որուն մարդիկ արժանի չեն . այսպէս է հետեւեալ խօսքին մէջ . Բ Յիմ. Ա. 9. 'Իբ դիտաւորութեանը ու շնորհքին նայելով' : Կը նշանակէ նաև այս շնորհքին տուած այլ և այլ պարգևները . զոր օրինակ՝ արգարացումն , ինչպէս Հռոմ. Ե. 15 . զօրութիւն և սրբութիւն , ինչպէս Բ Կորնթ. ԺԲ . 9 . 'Իմ շնորհքս հերիք է քեզի' . կը նշանակէ նաև յաւիտեանական փառք , ինչպէս Ա Պետր . Ա. 13 : "Շնորհաց խօսք" բառով (Գործ . ԺԳ . 3) Աւետարանը կը հասկըցուի : Նոյնպէս Եբր . ԺԳ . 9 . Շնորհք բառով Աւետարանին վարդապետութիւնները կ'իմացուին :

Այս տեղեաց գրեթէ ամենուն մէջ յիշեալ բառերուն այս ինչ կամ այն ինչ նշանակութիւնն ունենալը՝ անոնց հետ գործածուած միւս բառերուն իմաստէն կ'որոշուի :

Խօսքի մը մէջ բառի մը շատ նշանակութիւններէն տեղուոյն յարմարը որոշել տուող աս երկրորդ կանոնը՝ կ'օգնէ նաև հասկնալու թէ այն բառը հօն նկարագրապէս , այսինքն՝ առաջին և հասարակ նշանակութեամբ , թէ այլաբանութեամբ առնուած է : Երբ խօսք մը կարգալով կը տեսնենք որ , եթէ անոր բառերն իրենց հասարակ նշանակութեամբն առնուին , իմաստին մէջ հակասութիւն կամ անհնարութիւն պիտի ծագի , յայտնի է թէ հսն բառերն այլաբանական մտքը առնուած են :

Օրինակի համար . Ա Պետր . Բ . 5 . Գրիստոնեայք «կեն-
դանի քարեր» կոչուած են : Հռոմ . ՔԳ . 12 . Առաքեալը
կը յորդորէ հաւատացեալները որ «լուսոյ զէնքերը» հագ-
նին , Ա Պետր . Ա . 13 . Նոյնպէս Գրիստոնէից «Ձեր միտ-
քերուն մէջքը գօտևորած» ըսուած է : Այս խօսքերուն
մէջ բառերուն կապակցութիւնը յայանի կը ցուցնէ թէ
այլարանութիւն կայ . քանզի նկարագրական կամ սովո-
րական մտքով առնել չի յարմարիր : Այսպէս են նաև
հետևեալ վկայութիւնները : Ա Կորնթ . Զ . 11 , Առա-
քելոյն Գրիստոնէաներէն սմանց՝ «լուացուեցաք» ըսելը՝
այլարանական մտօք հասկնալու է , քանզի սա խօսքն ալ
կը յաւելու . «Մեր Աստուծոյ Հոգիովը» : Նոյնպէս Գրիս-
տոսի հրամանը թէ՛՝ «Թող տուր մեռելներուն որ թաղեն
իրենց մեռելները» (Մատթ . Ը . 22)՝ այլարանաբար հաս-
կնալու է , այսինքն՝ ըսել կ'ուզէ թէ Աշխարհաւորները
թող աշխարհային գործերու երթան : Նոյնպէս Գրիստոսի
սա խօսքը՝ «Ասիկայ է իմ արիւնս» , այլարանութեամբ է .
քանզի նկարագրական մտօք առնելով անոր տուած իմաս-
տը ուղիղ բանին և Սուրբ Գրոց հակադակ կուգայ :

Արդարև բառերուն նկարագրապէս կամ այլարանու-
թեամբ գործածուած ըլլալը որոշելու համար՝ վերոյիշեալ
կանոնը , այսինքն՝ անոնց հետ կապուած բառերուն իմաս-
տին միտ դնելը՝ միշտ բաւական չէ , սակայն ընդհանրա-
պէս ասիկա որոշող կանոնն այս է :

Սուրբ Գիրք կարդալու ատեն կը տեսնենք որ ներշնչեալ
մատենագիրք շատ անգամ պարբերութեան կամ համարի
մը մէջ գործածուած բառին իմաստը՝ նախընթաց կամ
յաջորդ պարբերութեանց կամ համարներուն մէջ կը բա-
ցատրեն , երբեմն այն բառին նշանակած իրը նկարագրե-
լով , երբեմն օրինակներ բերելով , երբեմն ալ այնպիսի
յաւելուածներով՝ որոնք բառերուն նշանակութիւնը կ'որոշեն
ու կը յայտնեն : Ուստի Սուրբ Գիրքը մեկնելուն Երրորդ կա-
նոնը սա է . Եթէ պատահի որ բառի մը նշանակութիւնը ոչ
անոր ընդհանուր գործածութեանը , ոչ ալ անոր հետ գոր-
ծածուած միւս բառերուն իմաստին միտ դնելով որոշուի , ան

ատեն հարկ կ'ըլլայ զանիկա պարունակող պարբերութենէն կամ համարէն անդին անցնելով նախընթաց կամ յաջորդ պարբերութեան կամ համարներուն իմաստին ալ նայիլ :

Օրինակի համար՝ Առաքեալը եբբ . ԺԱ . գլխուն առաջին համարին մէջ յիշուած հասարակ բառը յաջորդ համարներուն մէջ կը բացատրէ շատ օրինակներ յառաջ բերելով : Աս օրինակներէն յայանի կը տեսնուի թէ հաւատք հոն ինչ նշանակութեամբ գործածուած է , այսինքն թէ՛ եբբ Աստուած շնորհք մը կամ ողորմութիւն մը կը խոստանայ , հաւատքը հաստատուն ակնկալութեամբ կը սպասէ այն խոստմանց կատարմանը , իսկ եբբ հոգևոր կամ հանդերձելոց վերաբերեալ բաներ կը յայանէ , հաւատքը կը համոզուի և կ'ընդունի թէ այն բաներն այնպէս են ինչպէս որ կ'ըսուին :

Նոյնպէս Եփես . Գ . 4 համարին մէջ գտնուած Խորհուրդ բառին նշանակութիւնը յաջորդ համարներուն մէջ օրինակով մը կը բացատրուի : Ըսել կ'ուզենք թէ Առաքեալը Հեթանոսներուն Քրիստոսով եղած խոստմանքին Աւետարանով հաղորդ ըլլալուն ճշմարտութիւնը ԽՈՐՀՈՐԴԻԿ կը կոչէ :

Եբբ . Զ . 1 . «Կատարեալին գանք» խօսքին մէջ՝ «Կատարեալ» բառին նշանակութիւնը կը սահմանուի նախընթաց խօսքերէն , այսինքն՝ Ե . գլխոյն 14 համարէն , ուր գրուած է թէ «Հաստատուն կերակուրը կատարեալներուն է , որոնց զգայաբանքները ոովորութեամբ կրթուած են բարին ու չարը զանազանելու» : Առաքելոյն միտքը սա է որ , Քրիստոնեայք Աստուծոյ խօսքը սորվելով և աղօթք ընելով՝ հոգևոր գիտութեան մէջ յառաջանալու և զօրանալու են , մինչև որ կրօնքին բարձր ճշմարտութիւնները բացայայտ իմանալու կարող ըլլան :

Եփես . Բ . գլխոյն երկրորդ համարը յաջորդ համարին օգնութեամբը մեկնելով՝ կ'իմանանք որ «Աս աշխարհիս բռնած ճամբան» խօսքը՝ կը նշանակէ մարդուս բնական վիճակն ու վարքը որ Քրիստոսի թագաւորութեանը հակառակ , և ապստամբութեան օրդուոցը ներսիքին գործող

Հոգւոյն ազդեցութենէն է : Նոյնպէս Գաղ. Գ. 3. գործածուած «Աշխարհիս սկզբունքները՝ խօսքը՝ նոյն գլխուն 9, 10 համարներուն մէջ բացատրուած է :

Հատ հեղ պարզ պատմութեան մէջ անգամ՝ բառի մը նշանակութիւնը կ'որոշուի կամ կը բացատրուի յաւելուած խօսքերով. զոր օրինակ՝ Ծննդ. Զ. 19, 20, և Է. 2, 3, իրարու հետ բաղդատելով կը տեսնուի որ աւջինին մէջ յիշուած զոյգերուն, այսինքն՝ արու և էգ կենդանիներուն, քանիկան հատ ըլլալը՝ երկրորդին մէջ որոշուած է : Նոյնպէս Ծննդ. ԽԸ. 8 և 10 համարներուն մէջ ըսուածներն իրարու հետ բաղդատելով կ'իմանանք թէ Յակոբ բոլորովին կոյր չէր : Նոյնպէս Ելից Ք. գրլխոյն 6 համարը 20 համարին հետ բաղդատելով կը հասկնանք որ «բոլոր» բառը՝ մաս մը 'ի բաց առնելով հասկնալու է : Թուոց Գ. 3ը՝ Ը. 24ին հետ բաղդատելով կը հասկցուի որ Ղևտացիք բուն իրենց պաշտօնին չմտած՝ հինգ տարի նոյն գունդին մէջ կ'անցնէին :

Գաղ. Գ. 18. Առաքեալը կը բացատրէ թէ 17 համարին մէջ «Ան կտակը որ առաջուց Աստուծոյ հաստատուեցաւ» ըսելով՝ Աստուծոյ Արրահամալ ըրած խոստմունքը կ'իմանայ : Նոյնպէս Հռոմ. Զ. 23, «Մեղաց վարձքը մահ է՝ խօսքին զօրութիւնը ևս աւելի յայտնի կ'ընէ աւելցնելով թէ «Բայց Աստուծոյ ձրի պարգևը յաւիտենական կեանք է՝ մեր Ցերօջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը» :

Հռոմ. Գ. 5. ըսուած է թէ «Ան որ չգործէր, բայց կը հաւատայ անոր՝ որ ամբարիշտը կ'արգարացնէ, անոր հաւատքը իրեն արդարութիւն կը սեպուի» : «Չգործել» բառին նշանակութիւնը նոյն գլխուն մէջ քանի մը տեղ բացատրուած է. զոր օրինակ՝ յիշելով Արրահամալ արդարութիւնը՝ որ անոր սեպուեցաւ ոչ թէ թիփատութեան, այլ անթիփատութեան մէջ, այսինքն՝ դեռ թիփատութիւնն 'ի գործ չգրած : Նոյնպէս եթէ Յակոբայ թղթոյն Բ. 14 համարը նոյն գլխոյն ուրիշ համարներուն հետ բաղդատուի, յայտնի կը տեսնուի թէ փրկել չկրցող հաւատքն ան հաւատքն է՝ որ միայն բերնով է և ոչ իրօք :

Այսպիսի հաւատք մը առանց հնազանդութեան հաւատք է . այն հաւատքն է զոր դէերն ալ ունին (համար 19), ո՛չ այն հաւատքը զոր Արրահամ ունեցաւ, և Աստուծոյ հրամանին հնազանդելով յայտնեց (համար 21. 23) : Նոյնպէս Ա Պետ . Գ . 21 . Մեզ ապրեցնող մկրտութեան իմաստը բացատրուած է յաջորդ խօսքով, որով յայտնի կ'ընէ Առաքեալը թէ իր ըսած մկրտութիւնն է "Չէ թէ մարմինին ազտը մէկդի ձգելը, հապս բարի խղճմտանքին վկայութիւնը առ Աստուած", այսինքն՝ մաքրուած սիրտ մը :

Ա Յովհ . Գ . 9 . ըսուած է թէ "Ամէն ո՛վ որ Աստուծոյ ծնած է, մեղք չգործեր" : Արդ աս խօսքը նոյն թուղթին ուրիշ մասերուն հետ բաղդատելով կը գտնենք որ մեղք գործել խօսքը կը նշանակէ՝ «Խաւարի մէջ պտտիլ» (Ա . 6 .), "Պատուիրանները չպահէլ" (Բ . 4 .), "Եղբայրը ատել" (Բ . 9 .), "Աշխարհը սիրել" (Բ . 15) : Թոյր աս բացատրութիւնները՝ քրիստոնէական ոգւոյն հակառակ արմատացեալ չար ունակութիւններ կը նշանակեն : Աստուծոյ ծնածն՝ այսպիսի ունակութիւններ չի կրնար ունենալ :

Երկրորդ կանոնին համար ըսինք թէ Սուրբ Գրոց խօսքերուն նկարագրական կամ այլաբանական ըլլալը որոշելու կ'օգնէ . արդ՝ այլաբանական խօսքին իմաստը հասկնալու համար ալ՝ անոր նախընթաց կամ յաջորդ համարներուն կամ պարբերութիւններուն միտ դնել մեծապէս կարևոր է : Օրինակի համար՝ "Իր անօրէնութիւնը կրել" խօսքին մէջ որ այլաբանական է՝ անոր հետ գործածուած Բրտէլ, Կրտէլ բառերէն կը հասկցուի որ ան խօսքին իմաստը մեղքին պոյժը կրելու նկատմամբ է : Յետ Ել . ԻԸ . 43 . Ղևտ . ԺԹ . 8 :

Ովսէէ Գ . 12 և ուրիշ տեղեր, մանաւանդ Եզէկիէլի մէջ, ըսուած է թէ Պառնկութեան ոգին Իսրայելացիները գլխէ հանեց . բայց սրբազան մատենագիրն անմիջապէս կը յաւելու թէ՝ "Ղեռներուն գլուխները զոհ կը մատուցանեն, ու բլուրներուն վրայ խուսկ կը ծխեն", և ասով յայտնի

կ'ըլլայ որ Մարգարէին գործածած պսակութիւն բառն այլաբանօրէն գործածուած է, և առ Աստուած անհաւատարմութիւն կամ կռապաշտութիւն կը նշանակէ :

Երբ Գրիստոս ըսաւ թէ "Ան որ զիս կ'ուտէ, ինքն ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ" (Յովհ. 2. 58), Հրեայք անոր միտքը սխալ հասկցան . բայց Գրիստոս քիչ մը յառաջ իր միտքն ուրիշ սովորական բառերով բացատրած էր ըսելով. "Ան որ ինձի կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի" (Անդ. 47) : Հռոմէական (Պապական) մատենագիրներէն շատերն 'ուտել' բառը նկարագրական մտօք հասկցած են, թէպէտ մեր Տէրը յայտնապէս նոյն բառին մեկնութիւնը տուած է . և Տէրունական Ընթրիքը զոր նոյն խօսքով ակնարկուած կը կարծեն՝ դեռ ան ատենը հաստատուած չէր, և ունկնդիրներուն բոլորովին անծանօթ էր :

Մատթ. 10. 28. Գրիստոս զինին իր արիւնը կը կուչէ . բայց յետոյ (համար 29) նոյն գաւաթը որթի բերք կ'անուանէ . ասով կը հասկցուի թէ առջի բացատրութիւնն այլաբանական էր : Պապականք՝ (Ա Վորնթ. Գ. 15) 'Ինքը պիտի ազատի, սակայն անանկ՝ իբր թէ կրակի մէջէն՝ խօսքն՝ ընդհանրապէս իրենց Կաթոլիկ վարդապետութեանը համար վկայութիւն կը բերեն : Բայց, եթէ յաջորդ համարներուն միտ դնելու ըլլանք, իսկոյն կը տեսնուի թէ բոլոր խօսքն այլաբանական է . նախ՝ հի՛ բառն այլաբանական մտօք դրուած է և Գրիստոսը կը նշանակէ . Կայր, Իր, Ինք, զորոնք մէկը կրնայ այն հիմին վրայ շինել՝ նոյնպէս այլաբանական են . ապա "Իբր թէ կրակի մէջէն" խօսքն ալ բոլոր պարբերութեան իմաստին յարմար մտքով մը այլաբանաբար հասկցուելու է : Ասոնց Նրման այլաբանական բացատրութիւններ կը տեսնուին Ա Վորնթ. Ե. 8. Մատթ. 22. 6—12 : Տես նաև Եսայ. ԵԱ. 1, 2 :

Երբ բառի մը ընդհանուր նշանակութիւնը, կամ անոր հետ կապակցեալ ուրիշ բառերուն իմաստը, և կամ նախընթաց կամ յաջորդ պարբերութիւններն, իրենց բոլոր

կապակցութեամբը, չեն կրնար ան բառին իմաստը բարբո-
վին պարզել ու գրողին միտքը լիովին տալ, ան ատեն երկ-
գիմուութիւն տուող բառին նշանակութիւնը ստուգելու
համար՝ անիկա պարունակող ամբողջ գրքին կամ ա-
նոր մեծ մասին նպատակին նայիլ հարկ կ'ըլլայ: Ուստի
Սուրբ Գրոց մեկնութեան չորրորդ կանոնն է. Խնդրոյ տակ
եղած բառ մը պէտք է մեկնել՝ Գիրքին նոյն բառը պա-
րունակող մասին կամ ամբողջ գրքին նպատակին հա-
մեմատ:

Երբեմն ամբողջ գրքի մը կամ անոր մէկ գլխաւոր մա-
տին նպատակը կամ վախճանը ջուրջուած է բուն ան գրքին
կամ այն մասին մէջ: Այսպէս՝ Հռոմ. Գ. 27, 28. Գո-
ղոս Առաքեալ իր մինչև այն համարներն ըրած ձեռնար-
կութենէն յառաջ եկած եզրակացութիւնը կը գնէ. այ-
սինքն՝ Թէ Մարգը հաւատքով կ'արդարանայ առանց օ-
րէնքին գործքերուն: Եփեսացւոց Թղթոյն ալ գլխաւոր
եզրակացութիւնները գրուած են. առաջինը՝ վարդապե-
տական է (Բ. 11—19), այսինքն Թէ՝ Հեթանոսներն այլ
ևս օտար չեն, երկրորդը՝ գործնական (Գ. 1—3), որով
Առաքեալը Հրեաներն ու Հեթանոսները կը յորդորէ որ
իրենց կոչմանը վայելուչ ոգին և վարքն ունենան: Եր-
րորդական եզրակացութիւններն ալ բացատրուած են Գ.
13. Դ. 17. 25. Ե. 1. 7. Զ. 13, 14, որոնց մէջ՝
"ուստի", "արդ", "ասոր համար" բառերն՝ ընդհանրապէս
այլ և այլ ձեռնարկութեանց ամէն մէկուն հետեւութիւնը
կը ջուրջեն:

Առակաց գրքին նպատակը՝ Ա. գլխուն 1—4 և 6 հա-
մարներուն մէջ յայտնուած է. Աւետարաններունը՝ Յով-
հաննու Ի. գլխուն 31 համարին մէջ, և բարբ Աստուա-
ծաշունչինը՝ Հռոմայեցւոց ժԵ. գլխուն 4 համարին, ու
Բ Տիմոթէոսի Գ. գլխուն 16 և 17 համարներուն մէջ:

Կաղոտացւոց, Եփեսացւոց և Գաղատացւոց Թուղթերն՝
Աւետարանին մասնաւոր վարդապետութիւնները բացատ-
րելու, և Քրիստոսնէից մէջ Հրեութիւն քարոզող ուսուց-
չաց Թիւր վարդապետութիւնները հերքելու համար գրք-

ուած են : Աս Թուղթերուն շատ տեղերը կը լուսաւորուին , եթէ Գործոց Առաքելոց , մանաւանդ անոր ԺԵ . գլխուն նայելու ըլլանք , ուր յիշեալ Թուղթերուն ճառած խնդրոյն պատմութիւնը կը գտնենք :

Աստուածաշունչին քանի մը մասերուն նպատակն՝ անոնց ինչ առթով գրուած ըլլալէն միայն կրնայ , հասկցուիլ : Գ . ԺԸ . ԼԻ և ԾԱ Սաղմոսներուն նպատակն՝ անոնց վերնագիրներէն յայտնի է : ԱՒ—ԱԼԻ Սաղմոսները որոնց վերնագիրն է «Ստիճաններու երգը»՝ Հրեից համար գրուած էին , արպէս զի իրենց տարուէ տարի Երուսաղէմ՝ դացած ատենը ճամբան երգին : Աս իրողութեան միտ գընելով՝ պիտի տեսնուի որ յիշեալ Սաղմոսներուն համար ներէն շատերը յատուկ և սրտաշարժ նշանակութիւններ ունին :

Մեր Ցէրոջը Մատթ . ԺԹ . 17 . յիշուած խօսքը՝ «Թէ որ կ'ուզես կեանքը մտնել՝ պատուիրանքները պահէ»՝ հասկնալու համար , ան խօսքին ինչ առթով զրուցուած ըլլալը դիտելու ենք : Իր բարի գործերովը պարծեցող իշխան մը կը հարցնէ թէ յաւիտենական կեանքն ընդունեալու համար ինչ բարի գործ գործելու է . Ցէրն ալ անոր թերութիւնները ցուցնելով անիկա խնարհեցնելու համար Յօրէնքն անոր առջին կը դնէ , և կը ցուցնէ թէ օրէնքին կատարեալ պահպանութիւնը որչափ անձնուրացութիւն կը պահանջէ :

Եբբ . Գ . գլխուն մէջ յիշուած «հանգիստ» (կամ , ինչպէս որ կրնայ թարգմանուիլ , հանգստեան օր մը պահել) բառին նկատմամբ խնդիր եղած է թէ արդեօք անիկա բուն Շարաթ օրուան հանգստեան համար ըսուած է , թէ երկնից մէջ ըլլալու հանգստեան , կամ թէ Աւետարանին բերած մտքի խաղաղութեան համար , որուն վախճանը նոյնպէս յաւիտենական կենաց հանգիստ է : Աս խնդիրը միայն ամբողջ խօսքին նպատակէն կրնայ որոշուիլ : Բողգատէ 3 , 9 և 10՝ համարները :

Նոյնպէս եբբ . Ե ; գլխուն մէջ Մեղքիտեղեկի համար «Առանց հօր , առանց մօր , ազգահամար չունեցող» ըսուած

Քօսքը հասկնալու համար՝ պէտք է գիտնալ որ Առաքելոյն խօսքը Մեկքիսեդեկի քահանայութեանը վրայ է. և անիկա Քրիստոսի քահանայութեանը հետ բազդատելով՝ քսել կ'ուզէ թէ անոնց երկուքն ալ յաջորդութիւն չունենալու կողմանէ իրարու նման ըլլալով, Ահարոնէն կը տարբերին. ուստի և բոլոր խօսքին մէջ առ կէտին պէտք է միտ գնել. և բառերուն ընդհանուր նշանակութեանը շնայելով՝ զանոնք հեղինակին յիշեալ նպատակին համաձայն հասկնալու է :

Այսպէս ալ եթէ Պօղոսի Հռոմայեցւոց, և Յակոբայ թուղթերուն նպատակին նայելու ըլլանք, այն թուղթերուն առերևոյթ հակասութիւնը կը վերնայ, Հռոմայեցւոց թղթոյն նպատակն է հաստատել թէ մարգ հաւատքով կ'արդարանայ, ոչ թէ օրէնքին պատուէրները կատարելով, քանզի մարդու օրինապահութիւնը կատարեալ չի կրնար ըլլալ: Իսկ Յակոբայ թուղթին նպատակն է հաստատել թէ՝ ոչ որ կրնայ արդարանալ սոսկ հաւատքով, այսինքն՝ այ՛պիսի հաւատքով որուն հետ գործք չկայ: Եթէ առ նպատակները նկատուին, կարծեցեալ հակասութիւններն իսկոյն անհետ կ'ըլլան:

Հռոմայեցւոց թուղթին նպատակը Քաղատացւոց թուղթին նպատակին հետ բազդատելով՝ անոնց մէջ կարծուած առերևոյթ հակասութիւն մը կը վերնայ: Մէկուն մէջ օրերու խտրութեան թոյլտուութիւն եղած է (Հռոմ. ՃԴ. 5). միւսին մէջ այս խտրութիւնն արգիլուած է (Քաղ. Դ. 10, 11): Բայց այն տրուած թոյլտուութիւնը Հրեայ հաւատացելոց եղած է, սրոնք, թէպէտ Քրիստոսի հաւատացած էին, Մովսիսական օրինաց մէջ ծնած և սնած ըլլալով՝ օրէնքին պատուէրները զանց ընելու խիղճ կ'ընէին: Իսկ արգելքը հեթանոսութենէ դարձող հաւատացելոց եղած է, որոնք կը կարծէին թէ առանց օրէնքին պահանջումները կատարելու՝ Քրիստոսի հաւատալը զիրենք չի կրնար փրկել. ուստի և անոնց՝ օրէնքին մէջ յիշուած օրերը խտրելու միտումը, սոյն համազուտէն յառաջ եկած ըլլալուն համար՝ արդարև դատապարտելի էր:

Բայց և այնպէս Աստուածաշունչին զանազան գիրքերուն կամ մասնաւոր տեղերուն նպատակին վրայ տեղեկութիւն ստանալու մեծ միջոցը՝ բուն իսկ Գիրքը կրկին և կրկին ու շարունակ ուսում ընելն է: Երբ այս գիտութիւնն անգամ մը կը ստացուի, ան ատեն յատուկ տեղերը պայծառ կը բացատրուին, և Աստուածաշունչին այլ և այլ մասերն այնպէս կը պարզուին որ ընթերցողը զարմանօք կը լեցուի:

Ես. Ա.—ԼԹ գրուած մարգարէութեանց նիւթերն՝ ընդհանրապէս բուն ան մասերուն մէջ նշանակուած են. բայց յաջորդ գլուխներուն մէջ մարգարէութեանց նիւթերն այնչափ որոշ նշանակուած չեն, և զանոնք կրկին և կրկին կարգալով միայն՝ խօսքերուն իմաստը և անոնց իրարու հետ ունեցած կապակցութիւնը կրնայ հասկցուիլ. բայց հասկցուելէն ետքը իմաստը կը լուսաւորուի: Չոր օրինակ՝ ԾԱ—ԾԵ գլուխները մէկ մարգարէութիւն են: ԾԱ. գլուխոյն 1—8 համարներուն մէջ՝ ժողովրդեան ուշագրութիւնը գրաւելու համար “Մտիկ ըրէք” խօսքը երեք անգամ կըրկնուած է: ԾԲ. գլխուն մէջ դարձեալ Սիժնին եռանդուն յորգոր մը կը տրուի. իսկ ԾԲ. 13—ԾԳ. 12, Մարգարէն Մեսիայի գործին փառաւոր նկարագրութիւնը կ'ընէ, որ մարգարէութեան իբր թէ կեդրոնն է: ԾԳ. գլուխը կը ցուցնէ թէ Քրիստոսի գործը իր ժողովուրդին վրայ ինչ հետեանք պիտի ունենայ. իսկ ԾԵ. գլուխը նոյն գործին աշխարհիս վիճակին վրայ ունենալու ազդեցութիւնը կը յայտնէ:

Երբեմն գժուարին է ըսել թէ արդեօք գրքի մը մէկ յօդուածին կամ մասի՞ն միայն՝ եթէ բովանդակ գրքին ընդհանուր նպատակին նայիլ պէտք է: Չոր օրինակ՝ Ղուկ. ԺԵ. յառաջ բերուած Անառակ որդւոյն առակին վրայ խնդիր եղած է թէ անոր մէջ յիշուած Երէց և Կրտսեր որդի բառերով Տէրը զո՞վ իմացնել կ'ուզէ: Ոմանք կ'ըսեն թէ ասոնք Փարիսեցիին ու զղջացեալ մեղաւորը կը նշանակեն. ուրիշները կ'ըսեն թէ՝ Հրեան ու Հեթանոսը: Եթէ նոյն գլխուն առանձին նպատակին նայելու ըլլանք, առաջին միկնութիւնը յարմար է, քանզի Տէրը նոյն լա-

աւակով Փարիսեցւոց գանգատին պատասխան կուտայ . իսկ եթէ գիտելու ըլլանք Աւետարանին ընդհանուր նըպատակը, որ էր՝ Քրիստոսի վարդապետութիւնները Հեթանոսաց քարոզել, երկրորդ մեկնութիւնն աւելի պատշաճ կ'երևայ : Ուստի երկու մեկնութիւնն ալ այլևայլ նկատմամբ յարմար և հաւանական է :

Աւերը յիշուած չորս կանոններէն զատ, կայ նաև մեկնութեան հինգերորդ կանոն մը որ արդարև ուրիշ ամէն կանոն իր մէջը կը պարունակէ . այն է՝ Սուրբ Գիրքը Սուրբ Գրքին հետ բաղդատուել . «Հոգևոր բաները հոգևորի հետ» (Ա Կորնթ . Բ . 13) : Աս կանոնին հետևելով միայն ապահով կրնանք ըլլալ թէ Սուրբ Գրոց աւանձին առանձին կտորներուն կամ խօզքերուն նշանակութիւնը ուզիչ հասկցանք : Դարձեալ միայն այս կանոնով Սուրբ Գրոց հաւատոյ և բարուց վերաբերեալ ընդհանուր վարդապետութիւնները կը ստուգենք :

Ինչպէս բնութեան երևոյթները, նոյնպէս Աստուծոյ խօզքերը քննելու ճամբան միևնոյն է : Նախ ամէն եղելութիւն կամ երևոյթ քննելով անոր ինչ ըլլալը կը ստուգենք . յետոյ անիկա ուրիշ համանման եղելութեանց կամ երևոյթներու հետ բաղդատելով ամենուն համաձայնութենէն ճշմարտութիւն մը կը հանենք : Այսպիսի ճշմարտութիւններ ընդհանուր Օրէնք կը կոչուին :

Նոյնպէս քննութեան տակ եղած որևիցէ հաւատոյ մասի մը նկատմամբ՝ Սուրբ Գրոց բոլոր սորվեցուցածներուն համաձայն եղող մեկնութիւնը՝ կ'ըսուի Աստուածային վարդապետութիւն : Սուրբ Գրոց Աստուածային պատուէր ըսելով ալ կ'իմացուի նոյնպէս՝ քննութեան տակ եղած բարուց վերաբերեալ խնդրոյ մը նկատմամբ [Սուրբ Գրոց տուած պատուէրներուն համաձայն եղող մեկնութիւնը :

Սուրբ Գիրքն աս կերպով չուսանելուն հետևանքը՝ Հրէից անոր մէջ Քրիստոսի վրայով ըուտածները սխալ մեկնելէն շատ յայտնի կը տեսնուի : «Մենք օրէնքէն լսեցինք՝ (ըսին) որ Քրիստոսը յաւիտեան կը մնայ, և դուք ինսոր կ'ըսես թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ՝

(Յովհ. ձբ. 34): Բայց Սուրբ Գիրք ոչ միայն ֆրիստորֆ՝ այսինքն՝ անոր թագաւորութեանը յաւիտեան մնալը, հապա նաև անոր բարձրանալը (խաչին վրայ) ու պանդուխիլը կանխաւ իմացուցած էին (Նս. ՆԳ. Դան. Թ. 26): Եթէ Հրեայք առ վկայութիւններն իրարու հետ բաղդատած ըլլային, ֆրիստորֆ խօսքերը մարգարէից ըսածներուն հակառակ չէին գտներ:

Սուրբ Գրոց խօսքերն իրարու հետ բաղդատելը՝ որ վերջոյ իշխալ կանանին մէջ յիշուեցաւ, Աստուածաշունչին թէ բառերուն, թէ պատմած դէպքերուն և թէ վարդապետութեանցը կը վերաբերի:

Նախ՝ Սուրբ Գրոց բառերն իրարու հետ բաղդատելու ենք: Ձոր օրինակ՝ Ա. Թագ. ձԳ. 14, և Գործ. ձԳ. 22, Դաւիթ Աստուծոյ սրտին համեմատ մարդ մը կոչուած է: Աս խօսքին համար խնդիր եղած է թէ արդեօք անոր միաքը զԴաւիթ անմեղ և կատարեալ մարդ մը ջուղենլ է: Բայց Ա. Թագ. Թ. 35, կը տեսնենք որ առ խօսքին բառերուն նման բառեր հոն ալ գործածուած են. «Ինձի մէկ հաւատարիմ քահանայ մը պիտի հանեմ, որ բոլոր իմ սրտիս ու հոգւոյս մէջի եղածը կատարէ»: Աս երկու խօսքն իրարու հետ բաղդատելով առ աջնոյն նշանակութիւնը կը հասկնանք. այսինքն թէ՛ Դաւիթ, իրբև պաշտօնական անձ մը, Աստուծոյ կամօջը համեմատ պիտի գործէր, և անոր առած օրէնքը ճշդիւ պիտի պահէր: Սաղմոսներէն և Սուրբ Գրոց պատմութենէն գիտենք որ Դաւիթ, իրբև անհատ անձ մը շատ ջերմեանդ և աստուածապաշտ էր. Բայց վերը յիշուած խօսքը մանաւանդ անոր թագաւորական պաշտօնին նկատմամբ է, թէպէտ Դաւիթ ջջուցած ընդհանուր բարեպաշտական սգւոյն, և մեղաց մէջ իյնալէն ետքը՝ ի սրտէ զղջմանն ու ապաշխարութեանն ալ կըրնայ յարմարիլ:

Գաղ. Գ. 27. առ խօսքը կը գտնենք. «Դուք ամէնքդ որ ֆրիստորֆ մկրտուեցաք, ֆրիստորֆ վրանիդ հագած էք». նաև Վոզ. Գ. 10. ասոր նման «Կոր մարդը հագնիլ»

խօսքը կը գտնենք, և հետևեալ համարներէն կ'իմանանք որ 'Ըսոր մարդը հազնիլը" գուժ, ազարմուժիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեղուժիւն, և ուր ուր յման կն' հազնիլ կամ ունենալ կը նշանակէ: Ապա առ կրկու տեղերուն բաղդատագութիւնէն ստագգիւ կը հասկնանք որ Քրիստոսը հազնիլն ալ կը նշանակէ այն բնաւորութիւնը, այն զգացումներն ունենալ՝ զոր Քրիստոսս ունէր: այսինքն՝ գուժ, ազարմուժիւն, քաղցրութիւն, հեղուժիւն, այլովքն հանգերծ:

Գալ. Զ. 17. Առաքեալը կ'ըսէ թէ՝ 'Ասկէ կտես. մէկը զիս թող չչոգնեցնէ" (զբոյարտեցիւ զոր իբր թէ ես ծիփական օրինաց պաշտպան եմ): 'Ինչու որ ես Տէր Յիսուս օրն վերքի նշանները իմ մարմնոյս վրայ կը կրեմ': 'Նոյնպէս Բ Վարնի. Գ. 10, առ ուր նման խօսք մը կայ. 'Յիսուսի մասը մեր մարմններուն մէջը կը կրենք': Յետոյ կարգալրով նոյն գլխուն 11 համարը և Բ Վարնի, ՔԱ. 23—27՝ կը հասկնանք որ Առաքեալը Տէր Յիսուսին վերքի նշաններն ըսելով Քրիստոսի համար իր կրածներուն վերքի նշանները կը հասկնայ, ոչ թէ (ինչպէս օրմանք բառերուն նկարագրական մեկնութեանը նայելով կարծած են) խաչին նշանները կամ պիտները:

Սուրբ Գրոց բառերն իրարու հետ բաղդատելու վերաբերեալ ընդհանուր սկզբունքը սա է: Քննութեան տակ եղող բառին ինչ նշանակութիւն ունենալը պէտք է ստուգել՝ նախ միւսնոյն հեղինակին նոյն բառը գործածած օւրիշ տեղերէն. յետոյ՝ անոր ժամանակակից սուրիշ ներշնչեալ հեղինակաց գրուածներէն որոնց մէջ նոյն բառը կը գտնուի: Բայց որովհետեւ բառերուն նշանակութիւնը կրթման կը փոխուի, և ամէն մատենագիր նոյն բառը միւսնոյն իմաստով չի գործածեր, աս մտորն զոչը ըլլալ պէտք է: Երբ խօսքին կապակցութենէն կը տեսնենք որ քննութեան տակ գտնուող բառ մը երկու տարբեր տեղեր միւսնոյն նշանակութեամբ առնուած չէ, միւսնոյն բառը պարունակող այն կրկու տեղերը կամ խօսքերն՝ իրար չեն կրնար լրասուորել: Օրին.

նակի համար . Հռոմայեցւոց և Գաղատացւոց Թուղթե-
րուն մէջ 'Գործք' բառը փրկութեան ճշմարիտ միջոց եղող
հաւատքին հակադրեալը , պոխնքն՝ Օրէնքին պատուեր-
ներն իբրև միջոց փրկութեան կատարելը կը նշանակէ :
Յակոբոս Առաքելոյն Թուղթին մէջ նոյն բառը միշտ կը
նշանակէ հաւատքէ յառաջ եկած հնազանդութիւն և
որբութիւն : Առաջին նշանակութեամբ առնելով՝ գործքը
փրկութեան հետ բան չունի . երկրորդ՝ նշանակութեամբ
առնելով՝ փրկութեան համար կարևոր է : Ուստի բառին
այս երկու իմաստներն իրարու այսպէս հակառակ ըլլալով
իրար չեն կրնար պարզել :

Երկրորդ՝ Սուրբ Գրոց դէպքերը և վարդապետութիւն-
ներն ալ իրարու հետ կը բաղդատենք , որպէս զի անոնց
վրայ կատարեալ տեսութիւն մը ստանանք : Զոր օրինակ .
Սաղմ . ՃԶ . 19 . Իսրայելացւոց համար ըսուած է թէ
'Որ՞ե՞ շինեցին Քորեբի մէջ' : Ելից ԼԲ . գլխէն կը սոր-
վինք որ աս դէպքը պատահեցաւ բուն այն տեղ՝ ուր
Հրեայք կռապաշտութենէ հրաժարելու խոստումն ընելով
Աստուծոյ հետ դուրս ըրած էին : Աս պարագան նկատ-
ուելուն պէ՛ս՝ անոնց յանցանքը ճանրացնող կէտը յայտնի
կը տեսնուի :

Թուոց ԻԲ—ԻԴ . Բաղամի գործոցը վրայ տեղեկու-
թիւն տրուած է , ուր պնոր Մարգարէ կոչուած ըլլալէն
իսկոյն սա խնդիրը կը ծագի թէ արդեօք Բաղամի բարի
մարդ մը չէ՞ր , թէև մեծ սխալանաց մէջ ինկաւ : Բայց
աս խնդիրը նոր վտակարանին մէջ լուծուած կը գտնենք :
Պետրոս Առաքեալ կ'իմացնէ թէ Բաղամի որդայթի
մէջ ձգողն՝ պգահուութիւնն էր (Ք Պետր . Բ . 15) . և
Յուդա Առաքեալ (11 համար) զԲաղամի՛ վայելի և զոր-
խայ կարգը կը գնէ . և Յայտ . Բ . 14 էն կ'իմանանք որ
անոր թիկադրութեամբը Բաղակ Իսրայելի որդիքը գայ-
թակղեցուց , և այս պատճառաւ մէկ օրուան մէջ անոնցմէ
24,000 մարդ ինկաւ (Թու . ԻԵ . 9) :

Նոյնպէս եթէ կ'ուզենք գիտնալ թէ արգեօք Տէրու-
նական ընթրեաց մէջ բոլոր հաւատացեալք թէ եկեղե-

ցականք միայն բաժակին հաղորդ ըլլալու են, կարդալով Մատթ. Ի. 27. սա պատուէրը կը գտնենք. «Ամենքդ ալ խմեցէ՛ք սակէ՛» : Եւ եթէ հարցուի թէ արդեօք «Ամենքդ» բառը միայն Առաքեալները կը նշանակէ թէ բոլոր հաւատացեալները, կսկզանք Ա Վորնթ. ՃԱ. 23—30, ուր նոյն նիւթին վրայ խօսուած է : Հոն կը գտնենք որ հացն ուտելն ու գաւաթը խմելը վեց անգամ մէկտեղ յիշուած են, պատուէրն ալ առանց խտրութեան՝ բոլոր Քրիստոնէից կը տրուի : Ամենուն տրուած ըլլալն ալ՝ նոյն տեղը յիշուած սա խօսքէն յայտնի է. «Թո՛ղ մարդ իր անձը փորձէ, ու այսպէս ան հացէն ուտէ և ան գաւաթէն խմէ» :

Եթէ Մատթ. Ճ. 18. «Դուն Պետրոս եմ, ու աս վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս» խօսքին նշանակութիւնը քննելով վէմ՝ բառն Առաքեալին համար ըսուած հասկնանք, և ըսենք թէ Պետրոս է այն վէմը որուն վրայ հաւատացելոց փրկութիւնը հաստատուած է, աս մեր տուած մեկնութիւնը Սուրբ Գրոց աս նկատմամբ ըսած ուրիշ խօսքերուն հակառակ կուգայ. քանզի Ա Վորնթ. Գ. 11. կարդալով կը գտնենք որ Եկեղեցւոյն մի միայն հիմը Քրիստոս է : Քայց Գործ. Ք. 38—41. և Ճ. ու Ճ. 7. կարդալով կը գտնենք որ՝ թէ Հրէից և թէ Հեթանոսաց մէջ առաջին անգամ հաւատքի եկողներուն դարձի գալուն միջոցը Պետրոսի քարոզութիւնը եղաւ, և ասանկով կրնայ ըլլալ որ Պետրոս իր աշխատութեամբը Եկեղեցւոյ շէնքը սկսած ըլլալուն համար Եկեղեցւոյն հիմը կոչուած ըլլայ : Դարձեալ՝ վէմ՝ բառը Պետրոսի ըրած դաւանութեանը համար ալ կրնայ հասկցուիլ, ինչպէս որ Օգոստինոս և ուրիշ գիտուն մեկնիչներ հասկցած են :

Իսկ վարդապետութեանց վերաբերեալ խօսքեր իրարու հետ բաղդատելու նկատմամբ ամենէն կարևոր սկզբունքը սա է. Մոսի և համարօրէն զբոսցուած իօսիբ՝ յարի և Լիւսի և զբոսցուած իօսիբով, դժոհարին և այլբանիսն իօսիբ ալ յայտնի և սուրբալիսն քարտրով քացարոսած իօսիբոս զիւրս և սոստարիլ :

Օրինակի համար՝ հաւատքով արդարանալու վարդապետութիւնը՝ Փիլիպ. Գ. 9. համառօտիւ, իսկ Հռոմայեցեաց ու Գաղատացեաց թուղթերուն մէջ՝ լիովին բացատրուած է: Գաղ. 2. 15. գործածուած «Նոր ստեղծուած» այլաբանական խօսքը՝ նոյն թուղթին մէջ Գլ. Ե. 6, և Ա կորնթ. Է. 19. մեկնուած է:

Ա Պետր. Գ. 8. գործածուած «Էր բառը՝ եղբայրական սէր է. և աս սիրոյ համար ըսուած է թէ «Մեզաց բազմութիւնը կը ծածկէ», ոչ զի եղբայրական սէրը մեղքերը ջնջելով մեզաւորը կ'արդարեացնէ: այլ (ինչպէս որ Առակ. Ժ. 12. կ'երևայ) վասն զի, փոխանակ ատելութեան ըրածին պէս, հակառակութիւններու կռիւններ հանելու զանոնք կը հանդարտեցնէ:

Սուրբ Գրոց մէջ Ատուած շատ անգամ՝ այնպէս կը ցուցուի մեզի որպէս թէ ձեռքը գաւաթ մը բռնած՝ մարդոց խմել կուտայ. անոնք ալ խմելով՝ իբր թէ սաստիկ գինովցած գետինը կ'իյնան: Այս ձևը մարգարէներէն ոմանց մէջ շատ համառօտ և առանց բացատրութեան գործածուած է (Սաղմ. ՀԵ. 8. Նաւում Գ. 11. Ամբ. Բ. 16): Բայց Եսայեայ ԾԱ գլխուն 17—23 համարներուն մէջ նոյն այլաբանութիւնը լիովին բացատրուած է. աս վկայութեան մէջ կը տեսնենք որ գինովութիւնը կը նըշանակէ անտանելի վիշտ և յուսահատութիւն. գաւաթը խմելն ալ՝ Եհովային սրտմտութիւնը կամ անոր արդար բարկութիւնը կրել:

Գործ. Բ. 21. ըսուած է թէ «Ամէն ո՛վ որ Տէրոջը առնունը կանչէ, պիտի փրկուի»: Թերևս հարցուի թէ Տէրոջը անունը կանչել ի՞նչ կը նշանակէ: Յայտնի է որ այն խօսքն իր նկարագրական և անձուկ մտքովն առնուելու չէ. քանզի Մատթէոս (Է. 21) կ'ըսէ, «Ո՛չ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէ՛ր Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը»: Արդ՝ Հռոմ. Ժ. 11—14, և Ա կորնթ. Ա. 2. վկայութիւններուն նայելով՝ կը գտնենք որ Յովելի մարգարէութենէն առնուած վերոյիշեալ խօսքերը Յիսուսի Մեսիայութիւնն ընդունել, և անոր յայտնած

վարդապետութիւններուն հնազանդիլ կը նշանակեն : Բրիտոս իւր աշակերտներն իր ոչխարները կ'անուանէ : Աս խօսքը Սուրբ Գրոց ուրիշ խօսքերուն հետ բաղդաառուելով կ'իմացնէ Բրիտոսոսի անոնց վրայ ունեցած գուլթն ու ինամքը, անոնց ալ անոր վրայ ունեցած սէրն ու վստահութիւնը : Նոյն ինքն Բրիտոս շատ անձուկ մտքով "գառն" կոչուած է. այսինքն՝ գլխաւորաբար իւր բնաւորութեանն ու իր անձը գոհ ընելուն նկատմամբ : Այսպէս դարձեալ, մեղքը՝ Սուրբ Գրոց մէջ պարտք, քաւութիւնը՝ պարտքին վճարումը : Թողութիւնը՝ պարտքին ներուիլը կամ շնորհուիլը կոչուած են : Բայց մենք այս բառերը սահմանելու ենք՝ զանոնք ուրիշ խօսքերու հետ բաղդատելով, և այնպէս առնելու չենք որ հասկցուի թէ՛ որովհետեւ Բրիտոս մարդոց մեղքերուն համար մեռաւ, ապա ամէնքը պիտի փրկուին . կամ թէ՛ Բրիտոս օրէնքին հնազանդած ըլլալուն համար՝ մեղաւորները մեղքի մէջ ապրելու ազատ են : Նոյնպէս ըսուած է թէ՛ հաւատացեալները մեղքի մեռած են . այսինքն՝ մեղք գործելու յօտարութիւն չունին ուրիշ մարդոց պէս, ոչ թէ բոլորովին մեղքէ ազատ են . ոչ ալ անմեղ կ'ըլլան, եթէ աստուածային կոչումն արհամարհեն :

Երբեմն Սուրբ Գրոց մէկ խօսքը մեկնելու է՝ զանիկա ոչ թէ մէկ կամ քանի մը յատուկ խօսքերու, այլ անոր նկատմամբ Աստուածաշունչին սորվեցուցած վարդապետութեանց բովանդակութեանը հետ բաղդատելով : Այսպիսի մեկնութիւն մը ՀԱՒԱՑՈՅ ՎԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ կամ ՀԱՒԱՑՈՅ ԿՈՆՍՏԱՆ համեմատ մեկնութիւն կը կոչուի :

Հաւատոյ վերաբանութիւն կամ Հաւատոյ կանոն բռնելով կ'իմացուի այս ինչ կամ այն ինչ վարդապետութեան վրայ Սուրբ Գրոց սովեցուցածներուն բովանդակութիւնը, այսինքն՝ ինչ որ Սուրբ Գիրք այն վարդապետութեան նկատմամբ կը սորվեցնէ : Վարդապետութեան մը նկատմամբ Սուրբ Գրոց սորվեցուցածներուն բովանդակութիւնը կը ճանչցուի, երբ այն մասնաւոր վարդապետութեան վերաբերեալ ամէն վկայութիւն կը քննենք Սուրբ

Գիրքէն անկողմնակալ մտօք, և իւրաքանչիւր վկայու-
թեան իմաստը միւս մնացած վկայութեանց նայելով կը
ռահմանաւորենք, և այնպէս ամէնքը՝ անոնց իրարու հետ
ունեցած պատշաճութեանը կամ վայելչութեանը համե-
մատ կը մեկնենք: Որեւիցէ վարդապետութեան մը նկատ-
մամբ Սուրբ Գրոց այսպիսի մէկ ընդհանուր վարդապե-
տութիւնը, կամ, ինչպէս ըսինք, սորվեցուցածներուն
բովանդակութիւնը զոր մենք վերաբանութիւն կամ կանոն
հաւատոյ կոչեցինք՝ նոյն Սուրբ Գրոց մէջ կը կոչուի «Բո-
լոր մարգարէներուն բերանը» (Գործ. Գ. 18.), «Բոլոր
օրէնքը» (Գաղ. Ե. 14):

Փիլիսոփայութիւնը բնական երևոյթները նոյն կերպով
կը մեկնէ: Բնութեան ընդհանուր օրէնք մը անդամ մը
ապացուցուելէն և հաստատուելէն ետքը՝ մասնաւոր եղե-
լութիւններ կամ դէպքեր այն օրէնքին կը վերաբերենք,
ու իրարու հակասական երևցող երևոյթներ առանձին
առանձին քննելով, եթէ զանոնք բացատրող ենթադ-
րութիւնները երկու են, այն երկուքէն ան միայն կ'ըն-
գունինք՝ որ ընդհանուր օրէնքին ակելի միաբան կուգայ:
Սուրբ Գիրք մեկնելու մէջ ալ սոյն կանոնը պէտք է պա-
հել:

Օրինակի համար. Սուրբ Գ'րքը զԱտուած մեզի իրրև
ամենագէտ, սուրբ և գերագոյն հօգէ մը կը ներկայացնէ:
Ապա ուրեմն աս յայտնեալ ճշմարտութեանց համաձայն
մեկնուելու են բոլոր ան վկայութիւնները՝ որոնք զԱտու-
ած նիւթեղէն, մասնաւոր տեղ մը ամփոփուած, գի-
տութեամբ՝ զօրութեամբ և արդարութեամբ ռահմանաւոր
կ'ընծայեցնեն:

Դարձեալ՝ եթէ մեկնիչ մը Սուրբ Գրոց հաւատքով ար-
գարանալու վերաբերեալ խօսքերն այնպէս մեկնէ, որպէս
թէ հաւատքով արդարանալը մեղքէ զգուշանալու պար-
տաւորութենէ ազատ կը կացուցանէ, այնպիսի մեկնու-
թիւն մը մերժելի է, քանզի աս մտաին Ատուածաշուն-
չին սորվեցուցած վարդապետութիւններուն բովանդակու-
թեանը և գիրքին հոգւոյն հակառակ կուգայ:

Առակ. ՃԶ 4. ըստած է թէ՛ 'Տէրը ամէն բան իր նըպատակին համար ստեղծեց, ու ամբարիշտն ալ ձախորդ օրուան համար': Ոմանց սա խօսքէն հանած սա գաղափարը թէ Ամբարիշտները դատապարտուելու համար ստեղծուած են՝ Սուրբ Գրոց ուրիշ անհամար տեղերուն հետ անհամաձայն է (Տե՛ս Սաղմ. ՃԽԵ. 9. Եզեկ. ՃԸ. 23. Բ Պետր. Գ. 9): Ուստի Առակաց խօսքին իմաստը Հաւատոյ վերաբանութեան համեմատ սահմանուած կ'ըլլայ այսպէս. Ամէն բան Աստուծոյ նպատակներուն կատարմանը կը նպաստէ. ապա ամբարիշտներուն ըրած չարութիւնը և անոնց կրած ձախորդութիւնն ալ՝ անոր փառացը պիտի ծառայէ:

Ուրեմն Սուրբ Գրոց որ և իցէ մէկ խօսքին նշանակութիւնը ստուգելու համար՝ հետևեալ հարցումներն ընելու ենք:

1. Այս ինչ խօսքին պարունակած բառերուն ուղբական նշանակութիւնը ի՞նչ է: Եթէ բառերը մէկ նշանակութիւն միայն ունին, իմաստն ան է: Իսկ եթէ բառ մը քանի մը նշանակութիւն ունի, ան ատեն սա հարցումն ալ ընելու ենք.

2. Խօսքին փոքր բառերն՝ սա նշանակութիւնն ո՞րն ասելի յարմար լըցանքին: Եթէ նշանակութիւնը տակաւին անորոշ կը մնայ, ան ատեն սա հարցումը.

3. Ո՞ր նշանակութիւնը նախնայ ի՞նչ ասելի յարմար համարներն էմարտն լըցանքին: Եթէ տակաւին մէկէ աւելի նշանակութիւն կը մնայ, այն ատեն ալ սա հարցումը.

4. Գրքին ընդհանուր նպատակն ո՞րն լըցանքին: Եթէ ստուգ ալ մի միայն ճշմարիտ իմաստին չկարենանք հասուրըլլալ, ան ատեն սա հարցումն ընելու է.

5. Սուրբ Գրոց ուրիշ տեղերն ի՞նչ լըցանքին: Եթէ այս միջոցներուն ամէնն ալ փորձելէ ետքը՝ տեսնուի թէ խօսքին տակաւին մէկէ աւելի նշանակութիւն կրնայ տրուել, ան ատենը տրուած մեկնութիւններուն ամէնն ալ ուղիղ կրնան ըլլալ. և անոնց մէջէն առնելու ենք ան՝ որ շատ պարագաներու կը յարմարի, կամ առաջիկայ խնդրոյն նկատմամբ Աստուծաշունչին սորվեցուցած վարդապետու-

Թեանց բովանդակութեանը, այոհնքն, ինչպէս ըսինք, Հաւատոյ վերաբանութեան կամ Հաւատոյ կանոնին, համեմատ կուգայ :

ԳԼ . ԺԲ

Սորք Գրոց առաիները և ուրիշ այլաբանուիտն
Տասերը յիշելու Տասուոր կանոններ :

Նախընթաց գլխոյն մէջ արուած կանոնները՝ Սուրբ Գրոց աւամանը հեռեւորներուն նոյն գիրքերուն մեծկակ մասերը մեկնելու ըստ բաւականին կ'օգնեն : Ինչպէս տեսնուեցաւ, այն կանոններուն նպատակն է Սուրբ Գրոց մէջ գործածուած բառերուն նշանակութիւնը ստուգելու օգնել, և սովորաբար, երբ Սուրբ Գրոց մէկ խօսքին մէջ պարունակուած բառերուն նշանակութիւնն առանձին առանձին քաջ կը հասկցուի, այն խօսքին իմաստն ալ լիովին կը պարզուի : Քայց Սուրբ Գրոց մէջ կան այնպիսի մասեր ալ որոնք հասկնալու համար աւելի բան մը կը պահանջուի : Զորօրինակ . Մատթ . ՁԳ . 4—9 . Սերմ ցանողին առակին մէջ հարկ է ստուգել ոչ միայն Սերմ ցանող, քաւ և ուրիշ այլաբանական բառերուն բառական նշանակութիւնը, այլ և այն հոգեւոր իմաստը զոր այն առակով իմացնել դիտուած է : Յիշեալ առակին մէջ մեր Յէրը հետեւեալ համարներով (18—23) առակին հոգեւոր միտքը բացատրած է :

Ընդհանրապէս առակի կամ ուրիշ այլաբանական խօսքի մը հոգեւոր իմաստը քննելու փորձը դեռ չըրած՝ հարկ է գործածուած բառերուն նշանակութիւնը ստուգել կամ աղէկ հատկնալ : Աս ընելէն ետքը՝ առակին կամ այլաբանական խօսքին հոգեւոր մեկնութիւնը տալու համար Առաջին կանոնը սա է . ՍԳՊԻԷ ԻՒ այլաբանութեանն է՝ նչ Բանի է իմ Գրքերի, կամ անոր ընդհանուր իմաստն է՝ նչ է . և առիկա կ'ըլլայ միտ գնելով նախընթաց և հեռեւորք մա-

սերուն այն խօսքին հետ սւնեցած կապակցութեանը, կամ անոր ինչ առթիւ ըսուած ըլլալուն պարագային, և կամ Սուրբ Գրոց մէջ գտնուած սւրիշ համանման տեղերուն, այսինքն՝ այնպիսի մասերու որոնք առաջիկայ խօսքին հետ միևնոյն իմաստն ունին և անիկա կը լուսաւարեն: Այն ընդհանուր կամ գլխաւոր իմաստը ստուգելէն ետքը՝ Այլաբանութեան իօսիւն Բուր Ժառն անսր համայնի Ժիւլ:

Այլաբանութեանց մէջ ընդհանրապէս նպատակը ցուցուած է. զորօրինակ. 2. Սազմոսին 8—16 համարներովը յառաջ բերուած այլաբանութեան մէջ՝ Սրբազան մատենագիրը՝ Որթին Եգիպտոսէն փոխադրուելն ու հեթանոսաց տեղ տնկուիլը, յետոյ 17 համարին մէջ Աստուծոյ իւր ձեռքն իր հաստատած մարդուն վրայ դնելն, այնպիսի կերպով մը կը յիշէ, որ յայտնի կը տեսնուի թէ Որթով նշանակուածն՝ Իսրայելի ժողովուրդն է: Բայց երբեմն ալ այլաբանական խօսք մը մեկնելու համար հարկ կ'ըլլայ Սուրբ Գրոց սւրիշ մասերուն գիմել:

Երգոց Երգոյն ամբողջ գիրքը ծայրէ 'ի ծայր ընդարձակ այլաբանութիւն մ'է, և այն ձևով Քրիստոսի ու Եկեղեցւոյ մէջտեղ եղած սերն ընդ աղօտ ցուցուած է: Արդ աս գիրքը մեկնելու համար հարկ կ'ըլլայ գիմել Աստուածաշունչին սւրիշ տեղերուն՝ սւր Աստուծոյ և անոր Եկեղեցւոյն մէջտեղի յարաբերութիւնը Երգոց Երգոյն համանման խօսքերով նկարագրուած է: 8ե՞ս՝ Ե. Ե. 1—7. Եզեկ. ԺԵ. ԺԹ. ԻԳ. ԼԱ. 3—17:

Առականերուն մէջ ընդհանրապէս սկիզբը (Ղուկ. ԺԸ. 9. ԺԹ. 11) կամ վերջը (Մատթ. ԻԵ. 13. Ղուկ. ԺԶ. 9—13), երբեմն ալ թէ սկիզբը և թէ վերջը (Մատթ. ԺԸ. 23. 35. Ի. 1. 16. Ղուկ. ԺԹ. 15. 21) առական ինչ բանի համար ըլլալը բացատրուած կ'ըլլայ. և աս բացատրութիւնը երբեմն նոյն իսկ առակը խօսողին, զոր օրինակ՝ Քրիստոսի (Մատթ. ԻԲ. 14), երբեմն ալ ներշնչեալ հեղինակին, զոր օրինակ՝ Աւետարանչին, բերնովը կ'ըլլայ (Ղուկ. ԺԸ. 1):

Երբ առական իմաստն աս կերպով յայտնուած չէ, ա-

նոր առիթ տուող դէպքը կամ պարագան փնտռել հարկ կ'ըլլայ : Այս կերպով կրնայ ստուգուիլ Անպտուղ թղենւոյն (Ղուկ. ԺԳ. 6—9) և Անառակ Որդւոյն (Ղուկ. ԺԵ. 11—32) առակներուն նպատակը : Եթէ աս առակներուն ընթացքին միտ դնենք, կամ անոնց ինչ պարագաներու մէջ ըսուած ըլլալուն հասու ըլլանք, յայտնի կը տեսնենք թէ մեր Տէրը զանոնք ինչ նպատակաւ ըսած է : Տես Ղուկ. ԺԳ. 1 և ԺԵ. 1, 2 :

Նրբեմն, թէև դուն ուրեք, կը պատահի որ առակին մեկնութեանը համար, ինչպէս ըսինք, Սուրբ Գրոց ուրիշ տեղերուն դիմել հարկ կ'ըլլայ. զոր օրինակ. Ղուկասու ԺԵ. 3—10 համարներուն ամբողջ մեկնութեանը համար՝ Մատթ. ԺԸ. 10—14 համարներուն դիմել հարկ է :

Պէտք է մերժել այլաբանութեան մը, զոր օրինակ՝ Առակի մը որ և իցէ մեկնութիւնը, որ անոր գլխաւոր իմաստին կամ նպատակին հետ անհամաձայն է : Զոր օրինակ՝ ոմանք կը համարին թէ Սամարացւոյն առակին մէջ Բարի Սամարացւով մեր Տէրը կ'ակնարկուի. և թէ՛ վիրաւորեալ ճանապարհորդը՝ մեղաւոր մարդկային ազգը, քահանան և Ղևտացին ալ՝ Բարոյական և Ղևտական օրէնքները կը ցուցնեն, իսկ Պանդոկը՝ Եկեղեցին : Ահա մեր Տէրը նպատակին բոլորովին անհամաձայն մեկնութիւն մը, քանզի Քրիստոս աս առակով պատասխան տալ կ'ուզէր Սրինականի մը, որ իր կատարեալ օրինապահութիւնը ցուցնելու համար կ'ըսէր թէ՛ «Իմ ընկերս ո՞վ է» :

Նոյնպէս մերժելի է այլաբանական խօսքի մը իւրաքանչիւր մասին կամ բառին ջանալ ինքնակամ մեկնութիւններ կցկցել, որոնք անոր գլխաւոր նպատակին հետ համաձայնութիւն կամ վերաբերութիւն մը չունին, և ընթերցողին ուշադրութիւնը բուն նպատակէն խտորեցնելով՝ առակին ազդեցութիւնը կը տկարացնեն : Զոր օրինակ. մեկնիչներէն ոմանք Անառակ Որդւոյն առակին մանր հանգամանացն այնպիսի մեկնութիւններ տուած են որ առակին նպատակն ու ազդեցութիւնը գրեթէ անհետ կ'ըլլայ : Առակին բոլոր պարագաներն անոր բուն միտքը

յայտնի կը ցուցնեն. Անառակ Որդւոյն իր հօրը սէրը մերժելը, անկէ հեռանալով երջանկութիւն փնտռելու որոշումը, և այնպէս ընելով անոր վիճակին սոսկալի կերպով փոխուելը, այն փոփոխութեան վրայ անոր ունեցած զգացումը, դառն յուսահատութիւնը, և հետևապէս իր այս վիճակը լաւացնելու ջանքը, դառնալու որոշումը, հօրը գուլթն ու մարդասիրական ընդունելութիւնը, անսր դարձին համար եղած հանդիսաւոր ուրախութիւնը, երէց եղբօրը դժգոհ և նախանձոտ ոգին, հօրը տուած ազնիւ խրատն աս վերջնոյն, ասոնց ամէնքն ալ կարևոր պարագաներ են, և առակին սա մեծ ճշմարտութիւնը յայտնի կ'ընեն թէ՛ Աստուած իր զաւկներէն նուաստագունին անգամ դարձը սիրով կ'ընդունի, Բայց ոմանք, ինչպէս ըսինք, աս ընդհանուր նպատակին շնայելով, առակին այլևայլ մասերուն իրարու անյարիր մեկնութիւններ կուտան՝ պնդելով թէ մատանին Աստուծոյ յաւիտենական սէրը կամ Հոգւոյն կնիքը կը նշանակէ, թէ՛ կրտսեր որդին մեղաւորն է, ըստ որում մեղաւոր մարդն արդար մարդէն կրտսեր է, թէ՛ քաղաքացին որուն քով Անառակ Որդին մտաւ՝ կը նշանակէ դորձքով արդարանալ քարոզողը, խոզերն ալ այս չարապետութիւնը կամ սկզբունքը լսող և ընդունողները, թէ՛ եղջիւրներն անձնարդարութեան գործքեր են, թէ՛ գէր զուարակը Քրիստոս է, թէ՛ կօշիկները Սուրբ Գրոց մաքուր խօսքերուն, վարդապետութիւններուն և հրամաններուն նշանակ են, և թէ վերջապէս՝ երէց եղբօրը լրած երաժշտական ձայներն Աւետարանին քարոզութիւնն է: Աս կցկցոտ կամ ինքնահնար մեկնութիւնները մեր մտադրութիւնն առակին կարևոր իմաստէն կը խոտորեցնեն այնպիսի գաղափարներու՝ զոր Քրիստոսի աշակերտները բուն առակին մէջ չէին կրնար գտնել: Եթէ առանց յառելոյ մեր միտքն առակին բուն նպատակին, անոր այլևայլ մասերուն մէջ այսպէս բացէն յարմարական մեկնութիւններ փնտռենք, անոր իսկական և զխաւոր դիտաւորութիւնը կը սքողի, և մենք փոխանակ առակին մէջ պարունակուած իմաստը երևան հանելու՝

անոր մէջ դուրսէն իմաստ մուծած կ'ըլլանք, և առիկա մեզի սովորութիւն ըլլալով՝ շատ ուրիշ տեղեր ալ մեզ ծանր սխալումներ ընկու վտանգին մէջ կը դնէ ւ :

Արդ սրովհետեւ ամէն մեկնութիւն հեղինակին գլխաւոր նպատակին համաձայն ըլլալու է, կը մնայ գիտնալ թէ այլաբանութեան մը մանր մասերէն ո՞րը կարեւորութիւն ունի և ո՞րչափ : Սուրբ Գրոց այլաբանութիւններուն նոյն իսկ Սուրբ Գրոց մէջ տրուած ներշնչեալ մեկնութիւններէն կը տեսնենք որ այլաբանութեան մանր մասերէն շատերուն միտ դնելու է . բայց հարկ չէ իւրաքանչիւր մաս կամ պարագայ այլաբանութեան գլխաւոր իմաստին իբրև միշտ 'ի հարկէ վերաբերութիւն ունեցող նկատել : Զոր օրինակ . Սերմ Յանօղին և Որոմանց առակներուն մէջ զորոնք մեր Տէրը մեկնած է՝ Թռչունները, փուշերն, ապառաժուտ երկիրն, իւրաքանչիւր իր նշանակութիւնն ունի . և կրնայ ըսուիլ թէ նմանութիւնը կատարեալ է . բայց և այնպէս առ առակներուն մէջ ալ կան պարագաներ որոնք, ոչ թէ առակին գլխաւոր իմաստին վերաբերութեամբ, այլ իբրև զարդ կամ լոկ առակին պատմութիւնն ամբողջացնող պարագայ աւելցուած են . և կրնան առանց մեկնութեան թողուիլ . ինչպէս են Որոմանց առակին մէջ մարդոց քնանալուն և ծառաներուն տան տիրոջը հետ խօսելուն պարագաները (Մատթ . ԺԳ . 25, 27, 28) : Անիրաւ Տնտեսին առակին մէջ "Հողագործութիւն չեմ կրնար ընել", "Մուրալու կ'ամչնամ" խօսքերը (Ղուկ . ԺԶ . 3) առակին իմաստին նկատմամբ մեր Տէրոջը տուած բացատրութեանը մէջ մեկնութիւն մը ընդունած չեն : Այսպէս է նաև Սուրբ Գրոց այն ընդարձակ այլաբանութեանը, Երգոց Երգոյն մէջ, ուր Հարօին վրայ եղած նկարագրին շատ մանր մասերը՝ հաւանականաբար Եհովային իւր ընտրելոցը վրայ ունեցած տէրն ու հաճութիւնը յիշեցնելու նպատակէն ուրիշ յատուկ նշանակութիւն մը չունին :

Այլաբանութեանց նպատակին վրայով ասկէ առաջ տրուած առաջին կանոնին վրայ հեռեկալ երկու կանոն

ներն ալ կը յաւելլանը, որոնք այլաբանութիւններ մեկնելու մտախն մեզի բաւական օգնութիւն կրնան ըլլալ : Ուստի՝

Բ. Կանոն. Այլաբանութեան մը որ և իցէ մտռէն այնպիսի հեռուութիւն մը հանկու չէ որ Սուբբ Գրոց ուրիշ մասերուն գորվեցուցած բացայայտ մէկ ճշմարտութեանը հակառակ կամ անհամաձայն գայ : Զոր օրինակ . Մովսիսական օրինաց ատենը նախ իր և ապա ժողովրդեան մեղացը համար պատարագ մատուցանող քահանայապետը քրիստոսի նախատիպն էր : Բայց ապէ չի հետևիր թէ քրիստոս ալ մարդկային մեղաւոր բնութեան հաղորդ էր . քանզի ընդհակառակն «ինքը մեղք մը չգործեց» (Ս Պետր . Բ . 22) : Այսպէս ալ Զատկական Պառը մեր Յէրոջը մէկ նախատիպն էր, ստուերագիծ օրինակ անոր մահուանն ու անձին, այլ ոչ այն մահուան զօրութեանը կամ քրիստոսի անձին որբութեանը համազօր և հաւասար օրինակ : Գաւիթ ալ քրիստոսի մէկ նախատիպ օրինակն էր իբրև թագաւոր : այլ ոչ իր մեղացը նկատմամբ :

Եթէ Կեծատան առակին մէջ նոյն Կեծատան Աբրա-համու աղաչելէն մէկը հետևեցնել ուզէ թէ ուրեմն փառաւորեալ Սրբոց կամ Երանելեաց կրնանք աղօթք և պաշտօնք մատուցանել, այնպիսի մեկնութիւն մը կը մերժենք իբրև յայտնապէս հակառակ Սուբբ Գրոց ուրիշ խօսքերուն . կամ, եթէ Հաւատարիմ Ծառային կամ Անառակ Որդւոյն առակէն այնպէս հասկնալ ուզուի (ինչպէս նախնի Պեղապետներ կը հասկնային) թէ Աստուած առանց քաւութեան կամ միջնորդի, միայն մեր ապաշխարանացը համար մեզի կը ներէ, առ հետևութիւնն ալ, իբրև հակառակ Աստուածաշունչ գրոց եսկան ճշմարտութեանցը, կը հերքենք : Յէս Եովհ . Ը . 24 . Եբբ . Թ . 32 . 28 : Ղուկասու ԺԵ . 7 համարէն ալ չենք կրնար այնպէս հասկնալ թէ՛ Փարիսեցիք արդար մարդիկ ըլլալով ապաշխարութեան կարօտ չէին . կամ 29 համարէն թէ՛ Երեց օրդին երբէք հօրը հրամանին անհնազանդ գտնուած չէր . ո՛չ ալ դարձեալ նոյն Ղուկասու ԺԶ . գլխոյն Ձրկո

տեքին առակէն պէտք է հասկնալ թէ իբր խելացուծիւն ըսուած խարդախութիւնը ճշմարիտ իմաստութիւն է :

Գ. Կանոն. Պէտք է գիտնալ թէ ոչ առակները, ոչ ալ ուրիշ այլաբանութիւններ կրնան Սուրբ Գրոց վարդապետութիւններուն առաջին կամ մի միայն աղբիւրը համարուիլ. այլ փպցուցուած վարդապետութիւնները կրնան անոնցմով աւելի բացայայտ կամ հաստատուն ըլլալ. ուստի և պէտք չէ որ միայն կամ իբրև առաջին աղբերէ՝ անոնցմէ վարդապետութիւն մը հանենք :

Սուրբ Գրոց նախնի մեկնիչներէն ոմանք, առանց բանաւոր պատճառի, Անիրաւ Տնտեսին առակէն Սատանային ապստամբութեանը պատմութիւնը կը հանէին. Կ'ըսէին թէ Սատանան Աստուծոյ ծառաներուն մէջ առաջին էր, և իր պատուէն իյնալէն ետքը միւս հրեշտակներն իր ետեւէն ձգեց՝ անոնց աւելի թեթեւ պաշտօն և աւելի դիւրին ծառայութիւն խոստանալով : Տասը Կուսանաց առակին մէջ անոնց հինգն իմաստուն և հինգը յիմար ըլլալուն պարագայէն չենք կրնար հետեցնել թէ վերջապէս քրիստոնէական դաւանութիւն ղենեցողներուն կէսը պիտի փրկուի, միւս կէսն ալ պիտի կորսուի. ինչպէս որ Մարտիոս Ոչխարին առակէն ալ, ուր հարիւր ոչխարէն միայն մէկը մնորած կ'ըսուի, կամ Դրամի առակէն ուր տասն գրամէն մէկը ևեթ կորսուած էր՝ չենք կրնար հետեցնել թէ հարիւրէն իննսուն և ինը կամ տասնէն ինը պիտի փրկուին. քանզի աս պարագաներէն և ոչ մէկը կրնայ վարդապետութեան մը հիմ ըլլալ :

Աս երկու կանոնները կը հետեւին նախընթաց գլխուն մէջ յիշուած այն սկզբունքներէն որ կը սորվեցնեն թէ՛ Սուրբ Գրոց որ և իցէ մէկ խօսքը նոյն Սուրբ Գրոց մէջ գտնուած և յայտնի կերպով բացատրուած Հաւատոյ Կանոնին համեմատ մեկնելու է. այսինքն՝ յայտնեալ ճշմարտութեանց համաձայն. և թէ՛ Գժուարիմաց խօսքերուն իմաստը պարզելու համար ուրիշ բացայայտ համարներ փնտռելու է :

Կէանակներու կամ խորհրդաւոր նշաններու (Տես էջ

137) և նշանակական գործողութեանց վերաբերեալ խօսքերն ալ, նմանութեան վրայ հիմնուած ըլլալով, այլաբանական խօսքեր մեկնելու նկատմամբ, վերը ցուցուած սկզբանց համեմատ մեկնուելու են :

Այլաբանութիւններ և առակներ մեկնելու կանոնները՝ Սուրբ Գրոց պատմական մասերն ալ մեկնելու կ'օգնեն : Հրէական ժողովրդեան առ Աստուած ունեցած յարաբերութիւնը՝ արդի քրիստոնեայ Եկեղեցւոյ և ամէն քրիստոնեայ անհատի առ նոյն ինքն Աստուած ունեցած յարաբերութեանը հետ նոյն է : Անոնց Եզիպտոսի մէջ կրած տառապանքը, Մովսէսի ձեռքը ազատութիւնը, անապատին մէջ թափառիլը, Քանանու երկիրը մտնելը, բոլոր ասոնք՝ քրիստոնեայ անհատներու կենցաղավարութեանը մէջ նման կամ հանգէտ իրողութիւններու և դէպքերու կրնան համեմատուիլ : Իսրայելացիք ոչ միայն այնպիսի իշխանութեան տակ կ'ապրէին որպիսի է մեր ապրածը, և ճիշդ մեր կարգադրութեանց նման կարգադրութիւններով կը կառավարուէին, հապա անոնց պատմական անցքերը՝ քրիստոնէական Եկեղեցւոյ պատմութեանը խորհրդաւոր օրինակներն էին (Հռոմ. ձե. 4. Ա կորնթ. ձ. 1—11. Եբբ. Դ. Ա Վեար. Բ. 9, 10) :

Հրէից ու անոնց բոլորտիքը բնակող ազգաց մէջտեղ եղած յարաբերութիւնն ալ՝ քրիստոնէական Եկեղեցւոյ և անոր թշնամեացը մէջտեղի յարաբերութեանը նման է : Սողոմի բնակիչներուն և Իսմայելի, Եզիպտոսի և Բաբելոնի տէրութեանց Աստուծոյ ժողովուրդին հետ ունեցած վարմունքը՝ քրիստոնէական կենաց մէջ համանման իրողութիւններ կը ներկայացնեն (Գաղ. Դ. 25. Յայտ. ձ. Դ. 8) : Ինչպէս Հին Կտակարանին ժողովուրդը՝ նոյնպէս անոր արարողութիւններն ու աստուածային պաշտօնը նախատիպ օրինակներ էին : Բովանդակ Հին Տնտեսութիւնը գալու բարիքներուն շուքն էր, ոչ թէ այն բաներուն բուն կերպարանքը կամ իսկութիւնը. քանզի բուն կերպարանքը կամ իսկութիւնը քրիստոս էր (Եբբ. Թ. 11. 23, 24. ձ. 1) : Այսպէս մարդկային ազգին ստեղծուելէն հետէ՝

անընդհատ տեւեց նմանութեանց շարք մը, և իւրաքանչիւր նմանութիւն կարեւոր ճշմարտութիւն մը կը պարունակէ, և ամէնքը Քրիստոսի պաշտօնն ու գործը, կամ անոր ժողովուրդին փորձառութիւնները յայտնելու կը ծառայեն: Հին Կտակարանը, ինչպէս Օգոստինոս շատ տարիներ առաջ բռած է, Նոր Ուխտն է՝ քողարկեալ, և Նոր Կտակարանը Հին Ուխտն է՝ բացայայտ: Բոլոր այս տիպերը, և բովանդակ Հրէից պատմութիւնը մեկնելու, այսինքն՝ անոնց հոգևոր նշանակութիւնները բացատրելու համար՝ բուն առակներ և այլաբանութիւններ մեկնելու կանոնները կը գործածենք: Պատմութեան կամ տպին ընդհանուր իմաստը կամ ակնարկած ճշմարտութիւնը կը քննենք, շատ մասնաւոր կէտերու մէջ կարեւորութիւն կը փնտռենք, բայց ոչ ամենուն մէջ. և կը նայինք որ իւրաքանչիւր մասին մեկնութիւնը՝ ամբողջին նպատակին և Աստուածաշունչին ուրիշ մասերուն մէջ պարզապէս յայտնուած վարդապետութեանց հետ համաձայն ըլլայ:

Աս կանոնները գործածելու նկատմամբ պէտք է յիշել որ ներշնչեալ հեղինակները Սուրբ Գրոց պատմական իմաստը երբէք չէին եղծաներ հոգևոր իմաստ մը հաստատելու համար (ինչպէս Քրիստոսեայ մեկնիչներէն ոմանք ըրին). ոչ ալ, Հրէից պէս, բառերէն ծածուկ իմաստներ հանելու կ'աշխատէին. այլ միայն իւրաքանչիւր խօսքի գիւրին, բնական և Սուրբ Գրոց համաձայն նշանակութիւնը կը ջանային երևան հանել, և, ուրիշ բաներ ձգելով, բաւական կը համարէին այնպիսի մեկնութիւններ միայն տալ՝ որոնք գործնական կամ հոգևոր նկատմամբ կարեւորութիւն ունին (Եբր. Ե. 11. Թ. 5): Նոր Կտակարանին մէջ Հին Կտակարանէն վկայութիւն եղող կամ զանոնք մեկնող համարները քննելով՝ բացայայտ կը տեսնենք որ այն վկայութիւնները՝ կամ մեր Յէրոջն անձնական պատմութիւնը, միջնորդական պաշտօնը և անոր թագաւորութեանը հոգևորութիւնը, և կամ անոր Եկեղեցւոյն ապագայ զիճակը ցուցնելու համար յառաջ բերուած են:

Մեկնիչներէն ոմանց պարզ բաներու մէջ ծածուկ իմաստներ կամ այլաբանական նշանակութիւններ գտնելու ըղձանօք ըրած քանի մը զեղծութիւնները հոս յիշել օգտակար կը համարինք, որպէս զի Սուրբ Գիրքն ուսանողներուն զգուշութիւն ըլլայ :

Նախնի Հրեայք Ծննդոց Ա. 1. համարին մէջ 'Ստեղծեց' թարգմանուած Եբրայեցերէն բառին մէջ՝ Հայր, Որդի և Հօգի բառերուն առաջին գիրերը գտնելով կ'ուզէին անով Եբրայեցեան վարդապետութիւնը հաստատել : Յետեւելով նաև որ նոյն համարին մէջ - Եֆ տառը վեց անգամ կը գտնուի, և որովհետև նոյն տառը, վրան երկու կէտով, 1,000 կը նշանակէ, ասկէ ոկսան կարծել, և իրենց մէջ իբրև ճշմարիտ իրողութիւն ընդունուեցաւ, թէ աշխարհս վեց հազար տարի պիտի տևէ : Աս կերպով Բառնաբասի ընծայուած հին կեղծ գրութեան մը մէջ Աբրահամն 318 մարդ թլփատելուն նայելով (Ծննդ. ՃԴ. 14 և ԺԷ. 27)՝ ըսուած է թէ, որովհետև I, H, T Յունարէն գիրերն Յիսուս և անոր խաչը կը նշանակեն և նոյն գիրերուն իբր թուանշան ցուցուցած թիւերն, այսինքն՝ I=10, H=8 և T=300, իրարու վրայ յաւելլով նոյն 318 թիւը կը գումարուի : ուրեմն յիշեալ Նահապետին այնչափ թուով մարդ թլփատելը՝ Յիսուոի և անոր խաչին այլաբանական նշանն էր : Նոյն Բառնաբայ նամակին մէջ Մովսէսի՝ 'Ամէն բաժնուած կճղակ ունեցող ու սրոճացող անասուն, պիտի ստեք' (ՂԼ. ՃԱ. 3) խօսքին սա մեկնութիւնը արուած է թէ՛ Որոճացողն ատուածային հրամանին վրայ խորհողն է. Կճղակաբաշխն ալ՝ առ աշխարհիս մէջ ապրող, միևս աշխարհին ալ ակնկալութիւն ունեցողն է : Յուստինոս կ'ըսէ թէ Յակոբայ գտեմարտութիւնը մեր Յերոջը մէկ նախատիպն է, և թէ անոր զոտին Քնասուիլը Գրիստոսի շարչարանքն ու մահը կը նշանակէ (Ծննդ. ԼԲ. 25) : Յերունական աղօթքին մէջ՝ 'Երկինք' և 'Երկիր' բառերով (Մատթ. 2. 10), ըստ Յերտուղիանոսի, մարդուս մարմինն ու հօգին կ'իմացուին : Հինգ նկանակը որով մեր Յերը բազմութիւն մը կերակրեց (Յովհ.

Ձ. 9)՝ մարդու հինգ զգայարանք ունենալը կը նշանակէ, կ'ըսէ Գղեմէս : Ուրիշ հեղինակ մը Գիւրեղ՝ Նոյն պատմութեան Հինգ Կեանքի օրինակ կը համարի Մովսէսի Հինգ Գիրքերուն . հոն յիշուած Երկու Ձուկն ալ՝ Յունական փիլիսոփայութեան՝ որ Հեթանոսութեան ծովին մէջ գոյացած և երևան ելած է : Նոյն հեղինակը, համարելով թէ Մաղքոս շրէից մէկ նախատիպ օրինակն է, զանոնք իրարու հետ կը համեմատէ ըսելով . «Ինչպէս որ Պետրոս Մաղքոսին աջ ականջը կտրելով մէկդի նետեց, նոյնպէս շրէից և զրից լսողութենէ պիտի զրկուին, և միշտ անստոտ և անհնազանդ պիտի մնան» : Աթանաս Մատթ. Ե. 29 համարին մեկնութեանը մէջ կ'ըսէ թէ Մարմինը կը նշանակէ Եկեղեցին, Աչքն ու Ձեռքը կը նշանակեն Եպիսկոպոսներն ու Սարկաւագները, որոնք, եթէ Եկեղեցւոյն ֆիսս մը հասցնելու ըլլան, անշուշտ կտրուելու և մէկդի նետուելու են : Հիլարիոն կը կարծէ թէ Մատթ. Ձ. 26—30 յիշուած Երկնից Թռչունները պիղծ ոգիներն են, որոնց Աստուած անխռով կեանք տուած է . իսկ Շուշանները հրեշտակներն են, ու կանաչ խոտը հեթանոս ժողովուրդն է : Կը կարծէ նաև թէ Չերեթէոսին սրգւոցը մայրն՝ օրէնքը կը նշանակէ, որդիքն ալ շրէից հաւատացելոց նշանակ են :

Աս կերպ մեկնութիւնը հնոց մէջ ընդունելի էր : Անոնք Սուրբ Գրոց մէկ խօսքին պարզ պատմական իմաստը կարևոր չէին համարեր, նա մանաւանդ երբեմն իբրև բուրովին անստոյգ կը նկատէին, քանզի իմաստասէր մտաց համար այն ժամանակները խորհրդաւորը կամ այլաբանականը միայն ընդունելութեան արժանի համարուած էր : Ուստի Որագինէս կը պնդէ թէ Արարչութեան, Ղովտին ազգապղծութեանը, Աբրահամու երկու կանանց, Յակոբայ Լիային ու Ռաքելի հետ ամուսնութեան պատմութիւններն այլաբանութիւններ են : Նախնի Եկեղեցւոյ մէջ ընդունուած աս տեսակ մեկնութեան անխտիր կը հետևէին զանազան ազանդներ : Ասոնց ամէնքն ալ իրենց վարդապետութիւններն ու կարծիքները կը ջանային ար-

դարացնել Սուրբ Գրոց խօսքերն յիշեալ կերպով ըստ հաճոյս մեկնելով . և ասիկա տեեց չարաչար, այնպէս որ վերջապէս Արբազան պատմութեան նկարագրական իմաստն ու պարունակած բարոյական և հոգևոր խրատներն անտես եղան կամ ժխտուեցան: Ջոր օրինակ . ոմանք ըսած են թէ Յովհաննէս Մկրտիչ անձնաւոր, այսինքն՝ գոյութիւն առած անձ մը, չէ. այլ քրիստոսէ առաջ եղող շրեայ մարգարէից դատուն հաւաքական մարմնոյն մէկ այլաբանական նշանն է: Բեթզեհեմի իջևանին ու մարոյն պատմութեանը համար ալ կ'ըսեն թէ Աստուածային ազդեցութեան աս աշխարհս մտնելը նշանակող այլաբանութիւն մըն է: Նոյնպէս կը կարծեն թէ Արարչութեան օրերուն եօթը թիւը՝ միայն Աստուծոյ գործին կատարելութիւնը, Հոգւոյն ջուրերուն երեսը շարժիլն ալ՝ քրիստոնէական մկրտութեան լուացումը ցուցնող այլաբանական խօսքեր են, ոչ թէ պատմական իրողութիւններ: Ողջամիտ աստուածապաշտք բոլոր աս մտացածին մեկնութիւններն, իբրև անհիմն և անտեղի երեւակայութեան արդիւնք, կը մերժեն:

ԳԼ . ԺԳ

Մարգարէութիւնները մեկնելու հանձններ:

Աս գիրքին ժԱ. գլխոյն մէջ Սուրբ Գրոց մեկնութեանը նկատմամբ յառաջ բերուած ընդհանուր կանոնները, ինչպէս նաև նախընթաց գլխոյն մէջ նոյն գրոց այլաբանական մասերուն մեկնութեանը համար տրուած մասնաւոր կանոնները՝ կրնան մարգարէական գրուածները սորվիլ ու զողներուն նոյն գրուածները մեկնելու մասին ըստ բաւականին նպաստել: Բայց մարգարէական գրուածները քանի մը սեպչական յատկութիւններ ալ ունին, զորոնք պէտք է առանձինն յիշատակել, և այն յատկութեանց համեմատ մարգարէութիւնները մեկնելու համար քանի մը մտահաւոր կանոններ աւանդել:

Ա թագաւորաց թ. գլխոյն 9 համարին մէջ ըսուած է թէ Մարգարէք՝ առաջ «Տեսանող» կը կոչուէին : Այս բաւար շին Կտակարանին մէջ օտէպ յիշուած է, (տես Դ թագ. ձե. 13. Ամիգ. է. 12. Միք. Գ. 7) : Նոյնպէս Մարգարէից Ատուծմէ յայտնուած Պատգամներուն համար «Տեսիլք» ըսուած է. (տես Բ Մնաց. թ. 29. Արդ. 1. Նաւոււմ Ա. 1) : Ա տիպողոճներէն կամ մնուններէն կը սորվինք թէ ինչ էր մարգարէութեան ձիրքը, և ինչ՝ մարգարէական գրուածոց որպիսութիւնը : Ինչպէս որ բարձր տեղ կեցող մարդ մը կրնայ այն բարձրութենէն տեսնել կամ դիտել այնպիսի բաներ, զոր օրինակ՝ հեռաւոր լեռանց գլուխները, զօրանք ցած տեղեր գտնուողը չի կրնար տեսնել, նոյնպէս «Տեսանողը», այսինքն՝ Մարգարէն, Ատուծոյ զօրութեամբը հասարակ մարդոց մտքի տեսութեանը դիրքէն աւելի բարձր տեսութեան դիրքի մը վերաջած ըլլալով, ապագային վրայ իր ունեցած տեսութեանք մէջ այն մեծամեծ և երևելի հեռաւոր դէպքերը կը տեսնէ՝ որոնք լեռներու բարձր գլուխներու պէս ապագայ յին մէջ կ'երևան. երբեմն ալ զանոնք կը տեսնէ և կը պատմէ իբրև իրեն ներկայ և իւր աչաց առջև արդէն կատարուած : Այսպէս Եօայ. թ. 6. Մարգարէն՝ Քրիստոսի վրայ խօսելով, որ այն մարգարէութեան ժամանակէն իբր 700 տարի ետքը աշխարհք պիտի գար, անոր ծնունդն իբրև արդէն եղած և կատարուած կը պատմէ, ըսելով «Մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ» : Ա՛ մարգարէութեան Քրիստոսի վերաբերիլն անկէ յայտնի է, որ Մարգարէն նոյն խօսքին մէջ անոր օա անունները կուտայ. «Մքանչելի, Խորհրդակից, Հզօր Ատուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան» : Նոյնպէս ԾԳ. գլխոյն մէջ Քրիստոսի անարգանքը, շարձարանքն ու մահը մարգարէանալու ատեն նոյն Մարգարէն անցեալ ժամանակ կը գործածէ այսպէս. «Մնիկայ մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ. և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ. մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ. և անոր վերքերովը մենք բժշկուեցանք :

Անիկայ անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ, բայց իբր քերանք չբացաւ. մերթուեյրու տարաւող ոչխարի պէս, ու իբր խուզողներուն առջևը մուկն՝ կեցող մաքիի պէս՝ անանկ իր բերանը չբացաւ: Նեղութեամբ և դատապարտութեամբ վերցաւ. ու անոր ազդատոհմը ո՞վ կրնայ պատմել. քանզի անիկայ կենդանեաց երկրէն կտրուեցաւ. անիկայ իմ՝ ժողովուրդիս յանցանքին համար զարնուեցաւ՝ (Եսայ. ԾԳ. 5. 7. 8):

Դարձեալ ինչպէս որ բարձր լերան մը գլուխը կեցողին աչուրներուն հեռաւոր առարկաներ, զոր օրինակ՝ այլ և այլ լերանց գլուխներ, իրարու կից կամ շատ մօտ կ'երևան, թէ և անոնք իրօք ընդարձակ միջոցով իրարմէ զատուած են, և այն անձն իբր աչուրները կրնայ մէկ լեքան գլխէն իսկոյն միւսին վրայ տանիլ առանց անսնելու այն իրարմէ հեռու լերանց մէջտեղի լայնարձակ դաշտերն ու հովիտները, նոյնպէս Մարգարէի մը մտաց աչքը՝ երկայն ժամանակի միջոցաւ իրարմէ բաժանեալ դէպքեր՝ միանգամայն կը տեսնէ, և զանոնք իբրև անընդհատ իրարու յաջորդող, երբեմն նաև իբրև իրարու հետ խառն կը պատմէ, առանց զգացնելու անոնց մէջտեղ սահող տաքիներուն երկայն շարքը: Չոր օրինակ. Երեմ. Ծ. և ԾԱ. գլուխներուն մէջ՝ Բաբելոնի առաջին անգամ առնուիլն ու անոր իսպառ կործանումը, իբրև իրարու անմիջապէս յաջորդող դէպքեր, կապակցուած են իրարու հետ. թէպէտ այն նշանաւոր քաղքին Պարսիկներէն առնուելէն մինչև անոր վերջին կործանումը՝ հազար տարուան միջոց կայ: Եսայեայ Ժ. և ԺԱ. գլուխներուն մէջ՝ Հրէից Ասորեստանցւոց լուծէն ազատուիլը՝ Մեսիայի ձեռք կատարուելու հոգևոր ազատութեան հետ կապակցուած է. նոյնպէս Միքիա, Ովոէէ, Եզեկիէլ և Երեմիա՝ աս երկու դէպքն իրարու անմիջապէս կից կը ներկայացընեն, թէպէտ չեն ըսեր թէ Մեսիան երկուքին մէջ ալ մօտ օւնի: Դարձեալ՝ Չաբարիա մարգարէն, որ Հրէից գերութենէն ետքն է՝ Եկեղեցւոյ հոգևոր փրկութիւնը որ հեռաւոր ապագայի մէջ պիտի ըլլար՝ և Աղեքսանդրի ու

Մակեդոնացուց ժամանակին չրէից ժամանակաւոր ազատութիւնը իբրև իրարու կից կը տեսնէ : Մեսիայի խոնարհութեանն ու անոր փառացը վրայ եղած մարգարէութեանց մէջ՝ առ երկու իրողութիւններն իրարու կից ցուցուած են , և հազիւ ակնարկուած իւր եղած է թէ առ եղելութեանց , այսինքն՝ ֆրիստոսի մահուամբ խոնարհելուն , և իր թագաւորութեան հաստատութեամբ փառաւորութիւնն մէջ տեղ՝ բաւական ժամանակ պիտի անցնի :

Քրիստոս ալ Մատթ . ԻԴ . յիշուած մարգարէութեանց մէջ՝ Երուսաղէմի կործանումն ու վերջին դատաստանը , իբրև իբարու հետ կապակցեալ գէպքեր , մէկտեղ յառաջ կը բերէ : Երուսաղէմի կործանումն արդարև պէտք է Աստուծոյ Որդւոյն մէկ այցելութիւնը համարուիլ , որով չրէից ազգին 'ի վաղուց հետէ Աստուծոյ գէմ ստեպ ապտամբող կամակորութիւնը և վերջուպէս զնոյն ինքն Մեսիան մերժած ըլլալը պիտի պատժուէր , միանգամայն ճշմարիտ աստուածապաշաները պիտի պաշտպանուէին : Արդ առ այցելութիւնը կերպով մը նմանութիւն կամ օրինակ էր վերջին գալստեանն Քրիստոսի , որ 'ի կատարածի աշխարհիս պիտի գայ բոլոր մարդկային ազգը դատելով չարերը պատժելու ու արդարներն իր երկնաւոր թագաւորութեանը մէջ ընդունելու : Աս երկու գէպքին նախընթաց նշաններն ու զուգընթաց պարագաներն ալ իրարու նման պիտի ըլլային . վասնորոյ մեր Ցէրը յիշեալ երկու դիպաց , այն է՝ չրէից մայրաքաղքին կործանմանն ու վերջին դատաստանին կանխառացութիւնները խառն կ'ընէ , առանց զանոնք իրարմէ բաժնող ժամանակի երկայն միջոցին վրայ ակնարկութիւն մ'ընելու : Արդարև յայտնի է որ անոր նպատակը յիշեալ ապառնի դիպաց պատահելու ժամանակը յայտնել չէր , այլ միայն առաջուց իմացնել իւր աշակերտացը թէ այն գէպքերն արդարև պիտի պատահին , և անտարակոյս անոնց պատահելու ժամանակն անյայտ թողուց , որպէս զի հաւատացեալք միշտ արթուն և պատրաստ գտնուին : Ուտի և նոյն գլխոյն ՅՅ համարին մէջ յայտնապէս կ'ըսէ . 'Իսկ ան օրուան և ան ժամուան

Համար՝ մէկը չգիտեր, ոչ ալ երկնից հրեշտակները, հապա միայն իմ Հայրն՝ : Մարկոս (ՃԳ. 32) կը յաւելու նաև թէ՛ «Եւ ո՛չ Որդին» . ասով անտարակոյս կը հասկըցուի թէ Որդին այն ժամանակը չի գիտեր, ըստ սրում՝ Աստուած կամեցած չէ անիկա մարդոց յայտնել : Որդին, իբրև Աստուած, ամենագէտ էր . այլ իբրև Աստուածամարդ՝ գիտէր ան բաները միայն որոնք Հօրմէն անոր յայտնուած էին, և զորոնք մարդոց յայտնել իր պաշտօնն էր : Ապագայ դէպքի մը որոշ ժամանակը յայտնել հարկ չեղած ատեն, մանաւանդ երբ այնպիսի յայտնութիւն մը ֆրասակար ալ կրնար ըլլալ, ըստ սրում՝ մարդիկ այն գիտութեամբ անհոգ կրնային ըլլալ միշտ պատրաստ գրանուելու, այնպիսի դէպքերու ժամանակն անյայտ կը թողուէր : Ուր որ աս պարագան տեղի չունէր, Աստուած երբեմն դէպքերուն ճիշդ ժամանակը Մարգարէից կը յայտնէր, անոնք ալ նոյնը կը յիշատակէին, ինչպէս է Աբրահամը և Եգիպտոսի մէջ անոր սերնդեանը պանդխտանալուն (Ծննդ. ՃԵ. 13), Եփրեմի ցեղին ջնջուելուն (Եսայ. Է. 8) և Բաբելոնեան գերութեան (Երեմ. ԻԹ. 10) դէպքերուն ժամանակը . սակայն մարգարէք սովորաբար աս պարագային (այսինքն՝ դէպքերուն պատահելու ժամանակին) անգէտ էին, ինչպէս Պետրոս Առաքեալ կը յիշէ (Ա Պետր. Ա. 10—12) :

Սուրբ Գրոց մարգարէական մասերուն մէկ տարիչ նշանաւոր յատկութիւնն ալ սա է որ այլաբանութիւններ յաճախ կը գործածեն : Ապագայ դէպքեր երբեմն ուղղակի յայտնուած են . այսինքն՝ պատահելու դէպքը կանխաւ բացայայտ ըսուելով, ինչպէս է Աբրահամը եղած սա մարգարէութիւնը թէ՛ Ննոր սերունդը «Իրենցը չեղած երկրի մէջ պանդուխտ պիտի ըլլան, և ծառայութիւն պիտի ընեն . ու հոն չորս հարիւր տարի պիտի չարչարեն զանոնք» (Ծննդ. ՃԵ. 13) : Բայց աւելի յաճախ՝ յայտնութիւններն եղած են իբրև տեսիլք, որոնց մէջ ապագայ դէպքերը Ցեսանողին կամ Մարգարէին կը ներկայանան այլաբանորէն : Այսպէս չորս մեծամեծ ազգերու թագաւորաց

ապագայ վարմունքը Դանիէլի ցուցուած է ծովէն ելող չորս մեծամեծ գազանաց տեսիլքով (Դան. Է. 3. 17)։ Նոյնպէս Մարաց, Պարսից. և Յունաց Թագաւորութիւններուն ապագայ պատմութիւնը ցուցուած է Խոյին և Քօշին տեսիլամբը (Դան. Ը. 3. 5. 20, 21)։ Այսպէս տեսիլքներով յայտնուած դէպքերուն նկարագրութիւնը հարկաւ այլարանական կ'ըլլայ . բայց Սուրբ Գրոց ան յայտնութեանցը մէջ ալ որ տեսիլք չեն՝ այլարանական լեզու գործածուած է։ Մարգարէք՝ Հրեայ, մարգարէութիւններն ալ առ Հրեայս օւղղեալ ըլլալով՝ այլարանական լեզուն սովորաբար Հրեական պատմութեան դէպքերէն կամ առ նոյն կրօնական պաշտամանցը յատուկ պարագայներէն առնուած կը գտնենք։ Ձոր օրինակ՝ երբ մարգարէք Մեհիայի գալուտան ու անոր հոգևոր Թագաւորութեանը հաստատութիւնը կը գուշակեն, նոյն Մեհիան իբրև Թագաւոր կը յիշեն, և անիկա Հրեական Աստուածպետութեան ամենէն նշանաւոր Թագաւորին հանգամանքն ունեցողի պէս ընծայեցնելով, շատ անգամ Դաւթի տիրաջոյն անոր կուտան (Ովս. Գ. 5. Եբեմ. Լ. 9)։ Նմանապէս Հրեական Տնտեսութեան մէջ ամենէն բարձր և կատարեալ բաներուն անունները Մեհիային շնորհաց և փառաց Թագաւորութեանը կուտան։ Աս Թագաւորութիւնը կոչուած է Երուսաղէմ կամ Սիոն (Ես. Գր. 1. 6, 7. Կ. 15—20, Գաղ. Գ. 26—28. Եբբ. ՃԲ. 22. տես նաև Ես. Կ. 6, 7. ԿԶ. 23)։ Մեհիայի օրերուն փառքը՝ Դաւթի և Սաղմանի բարենշան ժամանակներուն նմանցուած է (Ջաք. Գ. 10. Գ. Թագ. Գ. 25)։ Նոյնպէս անոր հոգևոր Թագաւորութեանը թշնամիներուն օչ միայն հին Աստուածպետական դառավարութեան թշնամիներուն տրուած 'Հեթանոս ազգեր' անունը, հապա շատ անգամ նաև նոյն տոհմը Հրէից հետ մասնաւոր թշնամութիւն օւնեցող զօրաւոր ազգաց անունները տրուած են, զոր օրինակ՝ Մարգարու (Ես. ԻԵ. 10), Եդովի (Ես. ԿԳ. 1. Ամովս. Թ. 12) և Մագագայ (Եզեկ. ԼԸ 2)։ Աս ազգերէն և քաղաքներէն շատերուն վրայ մագնաւոր մարգարէութիւններ կան. բայց

վերջիչեալ համարներուն մէջ և ուրիշ շատ տեղեր յիշեալ անուններն, իբրև հասարակ կամ հանրական բառ, և կամ փոխարեութեամբ գործածուած են, և ոչ իբր յատուկ անուն: Այն մարգարեութեանց մէջ թէ Աստուած ետքի որերը Մովսէսի և Եղամի գերութիւնը պիտի գարձնեց (Եբրեմ. ԽԸ. 47. ԽԹ. 39)՝ Մովսէս և Եղամ մեր յիշած կերպով իբրև հանրական բառ կամ իբր հասարակ անուն առնուած են, փոխանակ ըսելու թէ քրիստոսի թագաւորութեան հակառակորդներն իրենց թշնամութիւնը թողչ լով Աստուծոյ հետ պիտի հաշտուին:

Մարգարէք Մեսիայի պաշտօնն ալ իբրև մարգարէի կամ քահանայի պաշտօն կը նկարագրեն. որտեղ և անոր վրայ բարձր գաղափարներ տալու համար՝ ան պաշտօններէն առնուած խօսքի ձևերով կամ նմանութիւններով կը խօսին (Սաղմ. ԾՓ. 4. Ձաք. Ձ. 13): Յովէլ մարգարէ իր լեզուն շրտից կրօնական գաղափարներուն յարմարցնելով Հոգւոյն Սրբոյ հեղման արգիւնքը կը նկարագրէ ըսելով թէ անիկա ընդունողները Հին Կտակարանին երէք տեսակ Աստուածային Յայտնութիւններն ալ (մարգարեութիւն, տեսիլ, երազ) վերջին աստիճան կատարեալ կերպով պիտի ունենան: Ձաքարիա բոլոր ազգաց ճշմարիտ Աստուծոյ երկրպագութեան գալու դէպքը կը բացատրէ սա խօսքերով թէ՝ Անոնք որոշարարացոյց ոտնն պիտի միանան (Ձաք. ԺԴ. 16): Ովտէ և ուրիշ մարգարէներ Աստուծոյ ճաղովորեան կատարեալ սերն ու հաւատարմութիւնը կը բացատրեն սա խօսքերով թէ՝ Քահաղին երկրպագութիւնը զնջուած պիտի ըլլայ (Ովտէ ԳԴ. 4-8. Եբրեմ. ԺԲ. 16):

Ձարմանք չէ որ Մարգարէք ապագայ գէպքերու վրայ խօսելու ատեն՝ այսպէս իրենց պզգային պատմութեանը, իրենց յատուկ կրօնական գաղափարներուն ու պաշտաման կերպերուն վրայ հիմնեալ այլաբանական լեզու մը կը գործածեն. քանզի կը տեսնենք որ Հին և Նոր Կտակարանաց բոլոր Մատենագիրները նոյն բանն ըրած են:

Արահամու ըսուած էր թէ անոր սերունդը երկնից արտղերուն չափ պիտի բազմանայ, և թէ բոլոր ազգեր առ

նով և անոր սերունդովը պիտի օրհնուին : Պողոս Առաքեալ առ կանխասացութեան առաջին մասը կը վերաբերե Սրբահամու բազմաթիւ հոգևոր սերունդին, այսինքն անոնց որ անոր հաւատոցը շաւիղներուն մէջ կը քալեն (Հռոմ. Գ. 16. Գաղ. Գ. 8, 9) . նոյն խոստման երկրորդ մասն ալ, այն է՝ ամէն ազգաց Սրբահամով և անոր սերնդեամբն օրհնուիլը, Հեթանոսաց Քրիստոսի ձեռօք փրկութեան հասնելովը կատարուած կը յուշնէ, ըստ ուրու՞ մեր Ցէրն ըստ մարմնոյ Սրբահամու զաւակէր (Գաղ. Գ. 14. 16. 19) :

Առաքեալք բոլոր իրենց գրութիւններուն մէջ սոյն սկզբամբ կը խօսին : Անոնք որ Քրիստոսի հաւատալով աւնոր հետ միացած են՝ Աստուծոյ Իօրայէլը անուամբ (Գաղ. Զ. 16) կը նկարագրուին իբրև զատ և որոշ մարմնաւոր Իօրայէլէն (Ա. Կորնթ. Ժ. 18) . Ճշմարիտ Թլփատութիւնը (Փիլիպ. Գ. 3. Հռով. Բ. 28, 29) որ հին խոստումներն իրեն կը սեպհականէ (Եննգ. ԻԲ. 16, 17)՝ բոլոր հաւատացելոց վերաբերուած է (Եբբ. Զ. 13-20 բաղդաստե Յես. Ա. 5, Եբբ. ԺԳ. 5, 6 ին հեա. և Ռվ. Ա. 10. Բ. 23, Հռոմ. Թ. 24—36 ին հետ) :

Նոյնպէս «Սրբարան» կամ «Ցածար», «Քաջանայք», «Սուրբք» կամ «Սուրբ», «Ճողով» կամ «Եկեղեցի», «Այգի», «Հօտ», «Քառանգութիւն» կամ «Ախճակ ժառանգութեան», և Իօրայելի ժողովրդեան վրայ ըսուած շատ ուրիշ անուններ՝ երկու տնտեսութեան ներքև ապրող հաւատացելոց միանգամայն վերաբերուած են, Թէպէտ Իօրայելացւոց վրայ երկրաւոր և ժամանակաւոր նկատմամբ ըսուած են, իսկ նոր տնտեսութեան ներքև ապրող հաւատացելոց վրայ՝ հօգեւոր և յաւիտենական նկատմամբ :

Դարձեալ Հրէից ծիսական օրինաց մէջ յիշուած պատարագը, քաջանայութիւնը, քառութիւնը, սեղանը, խորանը, տաճարն ու պաշտամունքը, որոնց համար Մարգարէք ըսած են Թէ վերջին օրերը պիտի նորոգուին, Նոր Կտակարանին մէջ մեր Ցէրօջը կամ անոր Եկեղեցւոյն վրայ պռնուած են : Քահպնայ և քաւիչ, և խորան՝ Քրիս-

տոտ է . և անոր համբառնայլն ի վեր անոր Եկեղեցին և Եկեղեցւոյն անդամները՝ որ հոգևոր պատարագներ կը մատուցանեն՝ հոգևոր տաճար , Թագաւորական քահանայութիւն , սուրբ ազգ են (Ա Պեա . Բ . 5 . 9) :

Սամուէլ մարգարէ զրկուեցաւ զստահացնելու զԴաւիթ թէ անոր արթունքն վրայ անոր սերունդը յաւիտեան պիտի նստի . այսինքն՝ նկարագրապէս առնելով մինչև Թագաւորութեան վերջը , կամ հոգևորապէս առնելով՝ մինչև ան ատեն որ ամէն բան անոր Որդւոյն Քրիստոսի ոտից պատուանդանին տակ դրուի : Այս ընդարձակ նշանակուած թեան վրայ Սամուէլ բան մը չըսեր . բայց Դաւիթ միանգամայն մարգարէ բլլալով՝ հասկցաւ առ իմաստը և ըստ մասին իրեն վերաբերեց (Գ Թագ . Բ . 4) . սակայն խստաման հոգևոր կատարումը իր Տէրոջը միայն կ'ընծայէ (Սաղմ . Բ . 2Բ . ԾԺ) : Բոլոր այս Սաղմոսները Նոր Կտակարանին մէջ վերաբերուած են այն Թագաւորութեան՝ զոր Քրիստոս սկսաւ հաստատել երկրի վրայ երեցած (Եբբ . Ա . 5, 6) , կամ մեռելներէն յարութիւն առած ատենը (Հռոմ . Ա . 4) :

Ամովսի , Ովսէի , Եսայեայ և վերջին Մարգարէից մեծ նիւթը՝ Հրէից գերութենէ դառնալն ու անոնց տնտեսութեանը նորէն հաստատուիլն էր , այսինքն Հին տնտեսութեան . Թէպէտ դարման գտնելու յոյս չունենալով՝ ասիկա ջնջուելու մտա կ'երևար : Գերութենէն առաջ և գերութեան ատենը գտնուող մարգարէք՝ գերեդարձ մը կը մարգարէանան , և անկէ բացատրութեան ձևեր առնելով՝ նոր Թագաւորութեան մը հաստատութիւնը կը նկարագրեն : Անդէ և Ջաքարիա տաճարի մը նորէն կանգնումը կը մարգարէանան , և նոյն մարգարէական սճով Եկեղեցին ալ կ'ակնարկեն : Ցաճարին երկրորդ շինութիւնը լմնայլն ետքը՝ Մաղաքիա սկսաւ մարգարէանալ թէ պիտի գայ մէկը որ Ղևեայ որդիքը պիտի մաքրէ , և այնպէս պիտի ընէ որ ամէն մարդ ճշմարիտ հոգևոր պաշտօն մատուցանէ : Համառօտ ըսենք՝ ոչ միայն մարգարէք , այլև ամէն ներշնչեալ հեղինակ Աստուծոյ հին ժողովրդեան և կամ քը-

քիստոսի Եկեղեցւոյն ապառնի վիճակը կը նկարագրէ՝ հին տնտեսութեան պատմութեանը մէջ Հրէից իրարու յաջորդող այլևայլ վիճակներուն համեմատ բացատրութիւններ գործածելով : Արդ որովհետև մարգարէութիւններն այսպէս Հին տնտեսութեան վրայ հիմնուած կամ անկէ առնուած բառերով բացատրուած են , անոնց կատարումը Եկեղեցւոյ նկատմամբ ոչ թէ բառերուն նկարագրական , այլ ըստ մեծի մասին այլաբանական իմաստին համեմատ միայն կրնայ ըլլալ :

Մարգարէական գրութեանց ուրիշ մէկ յատկութիւնն ալ սա է որ անոնց շատ խօսքերը կրկին իմաստ ունին : Աբրահամու և Դաւթի եղած կանխասաց խոստումները , Եսայեայ և ուրիշ մարգարէից մէջ շատ տեղեր՝ այսպէս կրկին իմաստ ունին : Եննդ . ԺԵ . և Ք Քազ . Է . 12-17 . Եսայ . ԵՔ . Երեմ . 1Ա . և Ամոս Թ . յիշուած մարգարէութիւնները մէկ իմաստով անմիջապէս կատարուած են . բայց ուրիշ իմաստ մ'ալ ունին որուն կատարումն արդաւրէ հեռաւոր , բայց աւելի փառաւոր է : Չոր օրինակ՝ Դաւթի համար բռնած է . «Մնոր թագաւորութեան աթոռը յաւիտեան պիտի կանգնեմ» (Ք Քազ . Է . 13) : Յայտնի է թէ առ խոստումը Դաւթի վրայ չէր կրնար նկարագրապէս , յաւիտեան բառին ըուն նշանակութեամբը , կատարուիլ . հարկ է ըսել թէ յաւիտեանական բառը Դաւթի վերաբերութեամբ այլաբանական իմաստով առնուած է , և կը նշանակէ մինչև Յուդայի թագաւորութեան կամ անկախութեան վերջը , և թէ՛ յիշեալ մարգարէութեան մէջ խոստացուած մշտապեսութիւնը՝ ոչ թէ բացարձակ կամ անվախճան տևողութիւն մը , այլ ժամանակի մը շրջանի անընդհատ շարունակութիւն մը պիտի ըլլար : Եւ արդարև Յուդայի թագաւորներն , իրենց տևողութեան բոլոր տևողութեանը մէջ : Դաւթի ցեղէն էին , և գրեթէ 400 տարուան միջոցին իբր քսան արքայազուն պայազատք որդի 'ի հօրէ առին թագաւորութիւնը . քանի որ Իօրայելի թագաւորութեան 250 տարուան կարճագոյն միջոցին՝ ինը տարբեր ազգատոհմներէ՝ տասնեկնը թագա-

և արք նստան : Ուստի՞ կրնայ ըսուիլ թէ նկարագրական մտօք խոստումը Գաւթի վրայ ըստ մասին կատարուեցաւ, ուր նոյն խոստումը Մեսիայի վերաբերութեամբ փառաւորապէս կատարուած է խոստմունքին ընդարձակ իմաստովը : Թէպէտ հոգևորապէս :

Հոս հարկ է սա գիտողութիւնն ալ ընել որ, այսպէս երկու նշանակութեամբ կրկին կատարում ունեցող մարգարէութիւններէ զատ, կան այնպիսիներ ալ որոնք ընդհանուր բարոյական ճշմարտութիւններ ըլլալով՝ յաճախ կամ շարունակ կը կատարուին : Այսպէս են հետեւեալ մարգարէական վճիռները . Անոնք որ զԱստուած կը թողուն՝ ընաջինջ պիտի ըլլան (Եսայ . Ա . 28) . Մարդոց հպարտութիւնը պիտի ցածնայ (Բ . 11) : Արգարութիւն կամ ուղշողութիւն ընողին հաց և ջուր պիտի չպակսի (ԼԳ . 15 , 16) : Աս կանխասաց վճիռներուն ամէն մէկը, թէև մասնաւոր առիթներու մէջ ըսուած էր, իբրև ընդհանուր սկզբունք՝ ամէն ժամանակի համար ճշմարիտ և յարմար է : Մարգարէից գրուածները լի են այսպիսի բարոյական կանխասացութիւններով, և սասնց նկատմամբ շատ յարմար է երևելի հեղինակի մը սա գիտողութիւնը թէ՛ ինչպէս որ Գետերը դէպ 'ի ծով վաղելու ատեն նաև իրենց ափունքը պողարեր և զուարճալի կ'ընեն : նոյնպէս մարգարէութեանց քաղցր հոսանքը միշտ ապառնւոյն ուշ դնելով յառաջ վազած ատենը՝ իւրաքանչիւր ժամանակի մարդիկ ալ որ իրմէ օգուտ քաղել կ'ուզեն՝ երբեք անպտուղ և անշահ չի թողուր :

Հիմա մարգարէութեանց մեկնութեանը գալով՝ ամենէն կարևոր կէտերը հարկաւ հետեւեալներն են . այսինքն՝ Մարգարէից պարագաները, Այլաբանական լեզուին յատկութիւնները, Նոյնանշան և ըստ մասին կատարուած մարգարէութեանց իրարու հետ բաղդատութիւնը, և մանաւանդ՝ Այն սկզբունքները զորոնք Նոր Կտակարանին Հին մարգարէութիւնները մեկնելու կերպը մեզի անուղղակի կը սորվեցունէ կամ կը թելադրէ : Բւտտի մարգարէութիւններն ուսում ընողը

Նախ թող քննէ և հասկնայ թէ Իւրպքանչիւր մարգաւորէի ժամանակին պարագաներն ինչ էին, և թէ Անճիք Բարենց մարգարեացած դէպքերն ինչպէս կը նկատէին : Իւրաքանչիւր մարգարէ՝ իւր խօսքը ժամանակակիցներուն ուղղած ըլլալուն համար՝ նոյն ժամանակին պարագաներուն և կամ իւր երկրին ներկայ կամ ապագայ բարոյական կամ բնական վիճակին կը յարմարցունէր իր ոճը : Սորվելու համար ալ թէ Մարգարէն մարգարեացած դէպքերը ինչպէս կը նկատէր՝ ուսանողը պէտք է որ զինք ըստ կարի մարգարէին կացութեանը մէջ դնէ, և անոր հետ նայի անցելոյն և ապառնւոյն : Եթէ մարգարէին երկիրն աւերակ և ամայի կը տեսնէ, թող ուսանողն ալ աս վիճակն իր աչքին առջև իրրեւ իրական նկատէ : Եթէ մարգարէին տեսածները՝ քրիստոսի վերաբերեալ դէպքեր են, թող ուսանողն, իբր թէ մարգարէին հետ, մեր Յէրոջը ծննդեան կամ մահուան պարագաները դիտէ, կամ անոր հոգեւոր թագաւորութեանը մէջ դնէ ինքզինք :

Երկրորդ՝ թող ուսանողը քաջ տեղեկանայ մարգարէին լեզուին, անոր սյլաբանութիւններուն ու խորհրդաւոր նշանակներուն : Մարգարէութիւններն՝ առ հասարակ պատմութիւններէն աւելի առատ են այսպիսի ձևերով . անոնց բանաստեղծական ոճով գրուած ըլլալուն համար՝ աս կերպ լեզուն անոնց հարկաւոր միանգամայն յարմար էր : Այս սյլաբանական ձևերուն նշանակութիւնը թերեւ 'ի սկզբան այնչափ յայտնի և պայծառ չէր, բայց հիմա մեզի որ ամբողջ Աստուածաշունչը մեր ձեռքն ունինք՝ պէտք է որ ընտանի և ծանօթ ըլլան :

Զոր օրինակ՝ նեղութեանց և տաղնապներու նկարագրութիւններն ուսանելու համար թող հետեւեալ վկայութիւնները կարդայ . Եսայ . ԺԳ . 13 . ԻԹ . 6 . ԼԴ . 4 . Երեմ . Գ . 20—26 . Եզեկ . ԼԲ . 7, 8 . ԼԸ . 20 . Յովել . Բ . 10 . 30, 31 . Ամոս . Ը . 8, 9 : Գիտնալու համար թէ Աստուծոյ Նախախնամութեան վտանգներէ ազատելն ինչպէս կը նկարագրուի՝ թող կարդայ . Ամբ . Գ . 3—19 . Զաք . ԺԴ . 4—11 : Ազատութեան համար եղած սերտ-

խուժեանց նկարագրութիւններուն տեղեկանալու համար՝
 Թող կարգայ Եսայ. ԺԱ. 1—14. Լե. 8—10. Եբ. 12,
 13. Կ. 9—22. Կե. 17—25. Յովել Գ. 18.

Երրորդ՝ Մարգարէութիւնները մեկնելու մէջ մեծ օգնու-
 թիւն կրնայ ըլլալ մեզի, եթէ զանոնք իրարու հետ բաղդա-
 տենք, մանաւանդ միւսնոյն նիւթոյ վերաբերութիւն ունեցող
 մարգարէութիւնները: Աս բաղդատութիւնը շատ անգամ՝
 որչափ կուտայ թէ արդեօք մարգարէութիւնը նկարագրա-
 պէ՞ս պէտք է մեկնել թէ այլազգ: Ջոր օրինակ՝ Եսայ.
 ԺԱ. 5—10. Մեսիայի Թագաւորութեանը համար ըսուած
 է թէ խաղաղական Թագաւորութիւն մըն է. բայց առաջ
 ԳԼ. Թ. 3—5 նոյն Թագաւորութեան պատերազմներուն
 և յաղթութիւններուն վրայ խօսուած է: Նոր Կտակարա-
 նին և նոյն իսկ Եսայեայ մարգարէութեան ուրիշ տեղե-
 բուն միտ դնելով կը տեսնենք որ Թ. գլուխն այլաբանա-
 կան է. ուստի յիշեալ պատերազմներն ու յաղթութիւն-
 ներն արգարե իրական են բայց ոչ նկարագրական. այ-
 ռինքն՝ խօսքը ոչ աշխարհային այլ հոգևոր պատերազմնե-
 բու և խաղաղութեան վրայ է:

Եթէ Եսայեայ ԿԶ. 20 համարը նկարագրապէս մեկնուի,
 հարկ է 21 և 23 համարներն ալ նկարագրապէս մեկնել. և
 ան ատեն հարկ կ'ըլլայ ըսել թէ աս մարգարէութեան հա-
 մեմատ շրէական քաջանայութիւնն ու պաշտամունքը նորէն
 հաստատուելու էր. ուր Եբր. Թ. 9. Ժ. 9, 10. ըսուածներն
 ճիշդ ասոր հակառակը կ'իմացնեն: Եզեկիէլի ԽԱ—ԽԸ.
 գլուխներուն մարգարէութիւնները նկարագրապէս մեկնել
 'ի սկզբան յարմար կ'երևի, սակայն նոյն գլուխներուն մէջ
 շատ տեղ նկարագրական մտօք հասկնալ անհնար է. զոր
 օրինակ՝ յայտնի է թէ ԳԼ. ԽԷ. 1—12 նկարագրուած ան-
 հուն և անյատակ գետը որ Յաճարէն բղխելով Մեռեալ
 Ծովուն ջուրերը կը բժշկէր և ուր որ կը հասնէր կենդա-
 նութիւն կուտար՝ նկարագրապէս չի կրնար հասկցուիլ:
 այլ շատ հաւանական է թէ անո՞վ Մարգարէն Հոգւոյն
 Սրբոյ հեղմամբն Աւետարանին ընելու յառաջադիմութիւ-
 նը կ'ուզէր իմացնել: Այսպէս է նաև Զաք. ԺԴ. 8:

Չորրորդ՝ կատարուած մարգարէութիւններն անոնց կատարմանը հետ բազդատելու է : Այսպիսի մարգարէութեանց կատարուածները կը գտնենք Ս . Գրոց և Արտաքին պատմութեանց մէջ : Առ բազդատուութիւնը պէտք է ընել մանաւանդ շին կատարանին այն մարգարէութիւններուն նկատմամբ՝ որոնց կատարումը Նոր կատարածին ներշնչեալ հեղինակներն յայտնապէս կը յիշեն և յառաջ կը բերեն : Մարգարէութեանց կատարմանն այս յիշատակութիւնը նոյն իսկ մարգարէութեանց հետ զգուշութեամբ բազդատելը՝ մեզի ըստ բաւականին կ'օգնէ գիտնալու թէ տակաւին չկատարուած մարգարէութեանց միտքն ինչպէս հասկնալու ենք :

Յիշեալ բազդատութիւններն ընելով պիտի տեսնենք որ շատ անգամ մարգարէութիւնները ճշգիւ, գրեթէ բան առ բան կատարուած են : Այսպէս են հին քաղաքներէն «մանց» Բաբելոնի, Յիւրոսի և Սիզոնի՝ վրայ եղած մարգարէութիւնները, ինչպէս նաև անոնք որ Մեծիայի կենացը մէջ քանի մը մասնաւոր դէպքերու վերաբերութիւն ունին, զոր օրինակ՝ թէ Անիկա էշու մը վրայ պիտի նստէր : Անոր հանգերձները պիտի բաժնուէին, և թէ Անոր գերեզմանն ամբարիշտներու հետ պիտի գրուէր, բայց մեռնելէն ետքը հարուստին հետ պիտի ըլլար (Ձաք . Թ . 9 . Սաղմ . ԻԲ . 18 . Եսայ . ԵԳ . 9) :

Սուրբ Գրոց ուսմանը պարագայներէն «մանք շատ մարգարէութիւններու, մանաւանդ հոգևոր օրհնութեանց վերաբերեալներուն, այսպէս ճշգիւ կատարուած ըլլալը տեսնելով, տեսնելով նաև որ Հրեայք, ՚ի շնորհս իրենց նախահարցը, շին և Նոր Յնտեսութեան մէջ միանգամայն միշտ իբր Աստուծոյ սիրելի ժողովուրդը կը յիշուին, և թէ Իսրայելի և Յուդայի թագաւորութեանց վերաբերեալ՝ գերութենէն թէ առաջ և թէ ետքը յիշուած քանի մը մարգարէութիւններ գեւ կատարուած չեն (Եսայ . ԺԱ . 12 . Ովո Բ . 14—20 Ձաք . ԺԳ), և դարձեալ թէ կան մարգարէութիւններ որոնք թէպէտ կրնան ըստ իմիք քրիստոսնէութեան վերաբերեալ համարուիլ, բայց և այնպէս

չի կրնար ըսուիլ թէ յատկապէս քրիստոնէութեան վրայ, եղած մարգարէութիւններ են, վերջապէս տեսնելով որ Հրէից և քրիստոնէական Եկեղեցւոյ պատմութեանը մէջ արդէն յայննապէս կատարուած մարգարէութիւններու համար (ինչպէս Եսայ. ՃԳ. 9, 10. Իս. 8. Անդ. Բ. 6) Նոր կտակարանին մէջ ըսուած է թէ ապագային մէջ կրկին պիտի կատարուին (տես Մատթ. ԻԳ. 29. Ա կորնթ. ՃԵ. 54 երբ ՃԲ. 26), առ բաները տեսնելով, կ'ըսենք, կը պնդեն թէ մարգարէութիւններուն շատերը Հրէից պատմութեանը մէջ անգամ մը՝ իրական. մանք նաև Նոր կտակարանին Յնտեսութեանը մէջ՝ հոգևոր կատարում մը ունեցած ըլլալէն զատ, պիտի ունենան ուրիշ ապագայ կատարում մ'ալ որ աւելի նկարագրական և աւելի լիովին պիտի ըլլայ: Այս կարծիքն ունեցողները բառական կամ նկարագրական մեկնութեան սկզբունքը պինդ բռնած են, ուստի և Հրէից նորէն իրենց երկիրը գառնալու. քրիստոսի երկրորդ գալտանանը (զոր ոմանք կը կարծեն թէ հազարամեան թագաւորութենէ մը առաջ պիտի ըլլայ), և անոր թագաւորութեանը վերաբերեալ մարգարէութեանց՝ անոնց ճիշդ բառական նշանակութեամբը կատարուելուն կը սպասեն:

Ասոր հակառակ ուրիշ մեկնիչներ սա զազափարէն ըլլալով թէ քրիստոնէական Յնտեսութիւնը սկսելէն ետքը Հրէի և Հեթանոսի մէջտեղ եղած խտրութիւնը բոլորովին ջնջուեցաւ, խորհելով դարձեալ թէ, եթէ մարգարէութեանց խօսքերը բոլորովին նկարագրապէս աւանդին, հարկ պիտի ըլլայ հաւատալ թէ Հրէից թագաւորութիւնն ու կրօնքը նորէն պիտի հաստատուին, ուստի և Եկեղեցին նորէն այնպիսի դրութեան մը պիտի գայ որ յաւէտ անոր ազայութեանը քան թէ կատարելութեան հասակին յարմար է, վերջապէս տեսնելով նաև որ Հրէից ազգին նորէն կանգնուելուն մարգարէութիւնները Նոր կտակարանին մէջ կրկնուած չեն, մանաւանդ թէ Նոր կտակարանը Հրէից ազգին վերաբերեալ երեսոյ շատ մը մարգարէութիւնն Բ կեղեցւոյ, կամ Հրէից 'ի քրիստոնէութիւն գառնալուն

կը վերաբերէ (Գործ. Բ. 17-21 և Հռոմ. ՃԱ. 26. բաղդատէ Յովէլ. Բ. 30, 31 և Եսայ. ԾԹ. 20 ինչեան). առ ամէնը տեսնելով, կ'ըսենք, ասոնք ալ կը հետեցնեն թէ յիշեալ մարգարէութիւնները հոգևորապէս մեկնուելու են որ Աստուածաշունչը հակասութենէ զերծ, կամ իր մէջ համաձայն ըլլայ:

Հինգերորդ՝ Մարգարէութեանց այլաբանական խօսքերը մեկնելու համար պէտք է միշտ յիշել որ այնպիսի խօսքեր ընդհանրապէս նմանութեան սկզբան վրայ հիմնուած են: Յարգ և կարեորութիւն ունեցող բաներ բացատրելու համար՝ բնութեան մէջ գտնուած մեծապահանջ իրեր նմանութիւն կը բերուին: Այսպէս՝ երկնային մարմիններ, լեռներ և բարձրաբերձ ծառեր կը նշանակեն թագաւորութիւններ և ազդեցութիւն կամ իշխանութիւն ունեցող անձինք. գաշտեր, սուտեր, երկիրս իսկ՝ հասարակ ժողովուրդը կը նշանակեն: Սնանուութիւն կամ երկրաշարժ, մրրիկ, խաւարում, գծեալու և ծովերու արիւն դառնալ ըսելով քաղաքական յեղափոխութիւններ կ'իմացուին (Եսայ. ՃԳ. 10, 13: Երեմ. Գ. 23-28. Մատթ. ԻԴ. 29. Գործ. Բ. 19, 20): Պաղարքեր ընելու զօրութիւն ունեցող բաներ, ինչպէս ցօղ, անձրև, աղբիւր, վտակ՝ հոգևոր օրհնութիւններ նշանակել տալու կը գործածուին (Յովհ. Գ. 13, 14): Այլաբանական խօսքերու մէջ անասնոց բնաւորութենէն ալ նմանութիւններ կ'առնուին. այսպէս գիշակեր գազաններ և յափշտակող թռչուններ՝ հարստահարողներու նշանակեն: Գաւազան բառը՝ պատուհասելու իշխանութիւն կը նշանակէ: Ուրախութեան, գիտութեան, յաջողութեան և որբութեան տեղ՝ կը գործածուի լըս. արտամութեան, տգիտութեան, ձախողութեան և մեղացանդ խաւար (Եսթեր. Ը. 16. Եսայ. Ե. 20. Սաղմ. ԳԷ. 11. Եփես. Ե. 14): Հարսնախօսութիւն (նշանել)՝ շատ անգամ Աստուծոյ հետ եղած ուխտ մը կը ցուցունէ (Եսայ. ԾԳ. 5, 6. Ռվա. Բ. 19, 20), ինչպէս որ շնութիւն՝ կը նշանակէ նոյն ուխտին դրժել կռակաշտութեամբ (Երեմ. Գ. 8-13) -Յայտ. Բ. 22): Այգին սովորաբար Եկեղեցի կը նշանակէ:

եթէ այդին վայրի խաղող կը բերէ, Եկեղեցին, անպատշաճ է. եթէ այդուցն քանկերը քակուած են, բռեկ է թէ Եկեղեցին զշապցեալ կամ տպակունեալ է (Եսայ. Ե. 1—7):

Մարգարէութիւնները սորվողներուն դիւրութեանը համար հոս աս ընդհանուր ծանօթութեանց վրայ կ'ուզենք յաւելուլ հեռեկեալ ցուցակն, ուր Սուրբ Գրաց մէջ իբր նշանակ կամ այլաբանութիւն գործածուած գլխաւոր բառեր դրուած են այբուբենի կարգաւ՝ իրենց այբարանական նշանակութեամբը:

ԱԿՆ, այսինքն՝ պատուական քար կամ գոհար՝ շքեղութեան և գեղեցկութեան նշանակ է (Յայտ. ԻԱ. 19—21)

ԱՂԵՂ՝ նշանակ է պատերազմի և յաղթութեան (Յայտ. Զ. 2). կամ, որովհետև կրնայ կարանալ. կամ, ծափէ, նենգութիւն ալ կը նշանակէ (Ովս. Ե. 16):

ԱՆԴՐԱՆԻԿ՝ կը նշանակէ ան որ իր եզրայրներուֆ վրայ իշխանութիւն ունի (Ծննդ. ԻԷ. 37). կամ՝ ան որ իր ընտանեացը քահանան էր (Թու. Ը. 18, 19): Դարձեալ կը նշանակէ ան որ Աստուծոյ նուիրեալ էր (Ել. ԺԳ. 1. 13), և իր հօրը զօրութեանը սկիզբն ըլլալով ժառանգութեան մէջ երկու բաժին կ'առնէր (Բ Օր. ԻԱ. 17): Տէգ և Հռոմ. Ը. 29. Կող. Ա. 15, ուր քա. ախաղաղը քրիստոսի կը տրուի:

ԱՆՏԱՌ՝ քաղքի կամ թագաւորութեան նշանակ է (Եսայ. Ժ. 18, 19. 34. ԼԲ. 19. Երեմ. ԻԱ. 14. Եզեկ. Ի. 46. 47):

ԱՇՏԱՆԱԿ կամ ճրԱԳ՝ լուսոյ, ուրախութեան, ճշմարտութեան և կառավարութեան նշանակ է (Յայտ. Բ. 5, տես և Ել. ԻԵ. 31, 32): Իսկ Գ թագ. ԺԱ. 36 և Սաղմ. ՃԼԲ. 17, ճրԱԳ՝ յաջորդ կը նշանակէ:

ԱԶՔ՝ նշանակ է գիտութեան, հաւատարմութեան և փառաց (Ջաբ. Դ. 10). դարձեալ՝ առաջնորդելու (Յար. ԻԲ. 15): ՁԱՐ ԱԶՔ՝ կը նշանակէ նախանձ (Առակ. ԻԳ. 6. Բ Օր. ԺԵ. 9). ԲԱՐԻ ԱԶՔ՝ առատածեռնութեան (Առակ. ԻԲ. 9):

ԱՐԲՏՈՒԹԻՒՆՆԸ՝ նշանակ է. մեղքին յիմարութեանը

(Երեմ. ԾԱ. 7) և թմբութեան՝ որուն ձեջ կը ձգէ զմարդ
Ասաուեայ բարկութիւնը (Եսայ. ԻԲ. 9) :

ԲԱԲԻԼՈՆ՝ Եգիպտոսի կուսակալու և հայրենի թշնամի
կը նշանակէ, մանաւանդ կուսակալու և պապական Հռոմը
(Եսայ. ԻԷ. 6 Յայտ. ձե 5. 6. 18) :

ԲԱԶՈՒԿ՝ կը նշանակէ զօրութիւն կամ կարողութիւն
(Սաղմ. ձ. 15. Եսայ. ԾԱ. 9) : ՄԵՐԿԱՑԱԾ ԲԱԶՈՒԿ՝
կը նշանակէ 'ի գործ գրուած կարողութիւն (Եսայ. ԾԲ.
10) :

ԲԱՆԱԼ՝ կը նշանակէ իշխանութիւն, բանալու և գոցե-
լու պաշտօն (Եսայ. ԻԲ. 22. Յայտ. Ա. 18. Գ. 7. Ի 1) :

ԳՆԱՆՆԵՐ՝ բռնաւոր և յափշտակիչ զօրութեան մը,
կամ սոսկ աշխարհային զօրութեան մը նշանակներ են
(Դան. Է. 3. 17. Եղեկ. ԼԴ. 28) : զոր օրինակ՝

ԱՌԻԻԾ՝ կը նշանակէ իշխանութիւն և ազգե-
ցութիւն ունեցող (Ամսգ. Գ. 8. Դան. Է. 4. Յայտ.
Ե. 5) :

ԱՐԸ՝ յիմար և գազանարարի թշնամայ նշանակ է
(Առակ. ձե. 12. Եսայ. ձԱ. 7. Դան. Է. 5. Յայտ.
ձԳ. 2) :

ԻՆՉ՝ կը նշանակէ անգութ և նենգաւոր հակառակորդ.
(Եսայ. ձԱ. 6. Երեմ. Ե. 6. Դան. Է. 6. Ամբ. Ա. 8.
Յայտ ձԳ. 2) :

ԼԵԻԹՐԱՆ՝ կամ ՎԻՇՆՊ՝ (Եսայ. ԻԷ. 1. ԾԱ. Թ.
Եղեկ. ԻԲ. 3. ԼԲ. 2. Սաղմ. ԶԳ. 13, 14) կը նշանակէ
Եգիպտոս, կամ որեիցէ ասաուածամարտ զօրութիւն մը
(Յայտ. ձԲ. 9. ձԳ. 4) :

Ուրիշ Կենդանիներէն ալ

ՉԻ՝ նշանակէ պատերազմի և աշխարհակալութեան վե-
րաբերեալ գործքերու (Ջաբ. Ժ. 3). գարձեալ՝ արշաւա-
նաց (Յովէլ Բ. 4) : ՉԻ ԶԵՄԵԼ՝ կը նշանակէ իշխա-
նութիւն ունենալ. (Ամբակ. Գ. 8) : ԵՐԿՈՒ ՉԻԱՒՈՐ՝ կը
նշանակեն Կիւրոս և Դարեհ. (Եսայ. ԻԱ. 7) :

ՄԱՐԱՒ՝ կը նշանակէ թշնամի և աշխարհակեր զօրք
(Յովէլ. Ա. 4) : Մարտիներուն թագաւորը կոչուած է

Աբադան կամ Ապոզզիան, այսինքն՝ կարուսիչ կամ աւերիչ (Յայտ . Թ . 11) :

ՇՈՒՆ՝ անմաքրութեան նաև ապոստամբութեան 'ի հաւատոյ (Առակ . 10 . 11 . Փիլիպ . Գ . 2 . Յայտ . ԻԲ . 15) , երբեմն նաև արթնութեան նշանակ է (Եսայ . ԽԶ . 10) :

ՅՈՒԼ՝ կատաղի թշնամւոյ նշանակ է (Սաղմ . ԻԲ . 19) : ՅԼՈՒ ՁՈՒԱՐԱԿ՝ կը նշանակէ ժողովուրդ (Երեմ . Ծ . 7 . Եղեկ . ԼԹ . 18) . Իսկ Գ՝Մ կամ ՄՍՈՒԲ՝ քաղքի կամ տան նշանակ է (Մաղ . Դ . 2) :

ՔՍՇ կամ ԱՅԾ՝ կը նշանակէ Մակեդոնացի թագաւորներ, մանաւանդ Աղեքսանդր Մակեդոնացին (Դան . Ը . 5—8) . Ընդհանուր մաքով՝ չարերու նշանակ է (Մայաթ . ԻԵ . 32 . ՅԻ) :

ԳԱՒԱԹ՝ կը նշանակէ հրապուրիչ ցանկութիւն (Յայտ . ՓԷ . 4) . գարձեալ՝ կառաջապահան արարողութիւններ (Ա Կորնթ . Ժ . 20) , և գարձեալ՝ մէկուն բաժինը (Յա,տ . ԺԳ . 10 . ՖԸ . 6) :

ԳԻՐՔ . եթէ Կերն ա գտարու էրուստ է , կը նշանակէ իրարու յաջորդող երկարատև գէղքեր (Ելեկ . Բ . Կ . 10 . Յայտ . Ե . 1) . եթէ Իսուստ է , գաղանիք կը նշանակէ : ԳԻՐՔ ՈՒՑԵԼ՝ խորհրդածելու նշանակ է (Եղեկ . Գ . 1 . 2 . Յայտ . Ժ . 9 . 10) : ԿԵՆԱՑ ԳԻՐՔ կը նշանակէ ցուցակ մը աւր փրկելոց անուաններն արձանագրուած են (աես Յայտ . Գ . 5) : ԳԻՐՔԵՐՈՒՆ ԲԱՑՈՒԻԼԸ՝ գառառուանին սկիւրը կը ցուցունէ (Յայտ . Ի . 12) :

ԳՈՐՆ . առ բառը ո՛ր առարկայի վրայ որ կ'ընուի՝ անոր բնութիւնը կը ցուցունէ : Սեւ գոյնը թշուառութեան և սգոյ նշանակ է (Յոր . Լ . 28 . 30 . Յայտ . Զ . 5 . 12) . ԳԵՂԻՆԸ՝ մահաբեր սպառկման (Յայտ . Զ . 8) . ԱՇԽԵՏՆԵՈՒ ՇԱՐՄԱԳՈՐԵՆԸ՝ արիւնհեղութեան կամ յաղիւթութեան (Ջաք . Զ . 2 . Յայտ . ՖԲ . 3) . ԿՐԿԱՍԿԻ և ՅՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ կ'ըսուի այնպիսի բանի մը որ անհնչեկ է (Եսայ . Ա . 18) . ՃԵՐՄԱԿԸ՝ գեղեցիկութեան և սրբութեան նշանակ է (Ճող . Թ . 8 . Յայտ . Գ . 3 . 4) . ՃԵՐՄԱԿԱՆ ՈՒ ԼՈՒՍԱՓԱՅԼԸ չբէից մէջ թագաւորական

և քահանայական գոյն էր, ինչպէս որ ծիրանին՝ Հռոմէացի յեղևոց մէջ (Եսթ . Ը . 15 . Յովհ . ԺԹ . 2) :

ԳՈՐՑ՝ պիղծ և լիրբ թշնամեայ նշանակ է (Յայտ . ԺԶ . 13) :

ԵԳԻՊՏՈՍ՝ կը նշանակէ գոռուղ և հալածիչ զօրութիւն մը . ինչպէս էր Հռոմ (Յայտ . ԺԱ . 8) :

ԵՂՁԻՒՐ՝ նշանակ է զօրութեան (Բ Օր . ԼԳ . 17 . Գ Թագ . ԻԲ . 11 . Երեմ . ԽԸ . 25 . Ամոզ . Զ . 13 . Մէք . Դ . 13) . գարձեալ՝ արքայական աստիճանի (Դան . Ը . 9 . Յայտ . ԺԳ . 1) : Ղևորիս զհի տեղնին եղջիւրները՝ յանցաւորաց պաշտպանութեան համար ապաստանարան էին (Գ Թագ . Ա . 50 . Երեմ . ԺԵ . 1 . Ամոզ . Գ . 14) :

ԵՐԿԻՆՔ և ԵՐԿԻՐ . աս բառերը գործածուած են երեք նշանակութեամբ . այսինքն՝ նախ անտեսութիւն կամ հոգեւոր . երկրորդ՝ տեսանելի կամ նկարագրական , և երրորդ՝ քաղաքական նկատմամբ : Այս վերջին առումը երկինք՝ իշխանաց նշանակ է . երկիր՝ ժողովրդեան . իրկ երկինք և երկիր կը նշանակեն թագաւորութիւն կամ քաղաքակառուցութիւն մը (Եսայ . ԾԱ . 16 . ԿԵ . 17 . ԿԶ . 22 : Երեմ . Դ . 23—28 . Մատթ . ԻԴ . 29—31) : ԵՐԿԻՆՔԷՆ ԻՅՆԱԼ ըսելով կ'իմացուի պատիւ կամ իշխանութիւն մը կորսնցնել (Ղուկ . Ժ . 18 . Յայտ . Թ . 1) : ԵՐԿԻՆՔԸ ԲԱՅՈՒԱԾ կամ ԵՐԿԻՆՔ ՄԷՋ ԲԱՅՈՒԱԾ ԴՈՒՌ ՄԸ կը նշանակէ նոր յայտնութեան մը սկսիլը (Յայտ . Դ . 1 . ԺԹ . 11) : ԱՐԵԳԱԿ , Լուսին , Ատեղք՝ նշանակ են ծայրագոյն , և կամ երկրորդական իշխանութեան (Եսայ . ԺԳ . 10 . Յովէլ . Բ . 10 . Յայտ . ԺԲ . 1) :

ԼԵՌ՝ հաստատութեան և մեծութեան նշանակ է (Եսայ . Բ . 2 . Դան . Բ . 35) :

ԽԱՂՈՂ , եթէ հասուն է , կը նշանակէ ժողովուրդ մը գրուն պատժուիլը մօտ է (Յայտ . ԺԴ . 18) : ԽԱՂՈՂՆԵՐ ԿԹԵԼ կը նշանակէ այն ժողովուրդին աւերումը (Յայտ . ԺԴ . 19) : ԾՌԱՔԱՂ ԵՂԱԾ ԽԱՂՈՂ՝ ժողովուրդի մը գերուածութեան երթալը կը նշանակէ (Երեմ . Զ . 9) :

ԽՈՒՆԿ՝ ազօթից նշանակ է (Սաղմ . ԾԽԱ . 2 . Մաղ .

Ա. 11. Յայտ . Ը . 3, 4) : Խուսկը կը մատուցուէր աղջակիզաց սեղանէն առնուած կրակով (Ղևա . ԺԶ . 12) :

ԾԾՈՒՄԲ՝ կը նշանակէ տանջանք (Յոր . ԺԸ . 15. Յայտ . ԺԴ . 10 . Ի . 9) :

ԿԱՌՔ՝ կառավարութեան կամ՝ պաշտպանութեան նշանակ է (Դ թագ . Բ . 12) : ՉՈՐՍ ԿԱՌՔ (Ձաք . Զ . 1)՝ կը նշանակեն չորս մեծ ինքնակալութիւնները : ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՌՔ ըսելով կ'իմացուի երկնից զօրքը (Սաղմ . ԿԸ . 17 . Եսայ . ԿԶ . 15) :

ԿՇԻՌ՝ կը նշանակէ արդարութեան գործիք (Յոր . ԼԱ . 6) , կամ՝ սղութիւն , երբ խօսքը ցորենի և ուրիշ նպարեղինաց վրայ է (Ղևա . ԻԶ . 26 . Եզեկ . Դ . 16 . Յայտ . Զ . 5, 6) :

ԿՈՅՍ՝ կռակաշուռութենէ զերծ հաւատարիմ ծառաներու նշանակ է (Յայտ ԺԴ . 4) :

ԿՐԱԿ՝ կը նշանակէ Աստուծոյ խօսքին զօրութիւնը (Երեմ . ԻԳ . 29) . դարձեալ՝ բան մը զտելու միջոց (Ձաք . ԺԳ . 9 . Մաղ . Գ . 2) : Կը նշանակէ նաև հալածանք (Ա Պետր . Ա . 7) և պատիժ կամ տանջանք (Մարկ . Թ . 44) :

ՀԱՆԴԵՐՁ՝ նշանակ է յատկութեանց կամ վիճակի՝ ՄԱՔՈՒՐ ՀԱՆԴԵՐՁ՝ արդարութեան (Յայտ . ԺԹ . 8 . Ձաք . Գ . 3—5) , ՃԵՐՄԱԿԸ՝ սրբութեան կամ երջանկութեան նշան է (Յայտ . Գ . 4, 5) : ՀԱՆԴԵՐՁ ԸՆԾԱՅԵԼԸ՝ սէր կամ բարեկամութիւն կը նշանակէր (Ա թագ . ԺԸ . 4) :

ՀՈՎ՝ խափութեանց նշանակ է (Երեմ . Դ . 11—12)՝ ՀՈՎԵՐՈՒՆ ԲՈՆՈՒԻԼԸ հանդարտութիւն կը նշանակէ (Յայտ . Է . 1) :

ՀՈՒՆՁՔ՝ կը նշանակէ ազգի մը ջնջուելուն կամ ցրուելուն ժամանակը (Երեմ . ԾԱ . 33 . Եսայ . ԺԷ . 5 . Յայտ . ԺԴ . 14—18) . ՄԱՆԳԱՂ՝ կը նշանակէ ան որուն ձեռօք ջնջումը պիտի ըլլայ (Յովէլ . Գ . 13) : Դարձեալ նոյն հաւնձք բառը կը նշանակէ կատարեալ ազատութիւն կամ՝ ժողովրդեան մը նորէն իւր հայրենիքը դառնալու ատենը (Ովս . Զ . 11) . դարձեալ՝ Եկեղեցւոյ աշխատութեան դաշտին նշանակ է (Մատթ . Թ . 36—38) :

Ձեռք՝ կը նշանակէ գործողութիւն . իսկ ՄԱՔՈՒՐ
 ձեռք . ԱՐԻՒՆԱՎ ԼԵՑՈՒՆ ձեռք . և այլք՝ կը նշանակեն
 արիւնհեղութենէ զերծ կամ արիւնհեղ ըլլալ (Ապգ՝ Ղ .
 17. Յոր . Բ . 30. Եսայ . Ա . 15) : Ձեռք ԼՈՒԱԼ՝ կը նշա-
 նակէ յարենէ քաւեալ ըլլալ . կամ յանցանք մը ազատ
 ըլլալ (Բ Օր . ԻԱ . 6—9. Մատթ . ԻԷ . 24) : Ընկերակ-
 ցութեան կամ հաղորդակցութեան համար Ձեռք ՑԱԼ՝
 կը նշանակէ իրաւանց և օրհնութեանց հաղորդ ըլլալ (Գաղ .
 Բ 9) : Ձեռքեք ԵՐԿՆՑՆԵԼ՝ կը նշանակէ ուրիշին հնա-
 զանդիլ (Սաղմ . ԿԸ . 31) : Ձեռք ԿԵՒՐՑՆԵԼ՝ երգում
 ընելու նշան էր (Եննգ . ՃԳ . 22 Դան ՃԲ . 7) : Ձեռքեք
 ՄԵԶ ԿԱՄ ՎՐԱՑ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ՝ ծառայութեան
 նշանակէ (Ջաք . ՃԳ . 6. Յայտ . ՃԳ . 16) : Աւրիշի մը
 վրայ Ձեռք ԴՆԵԼ՝ կը նշանակէ թէ այն անձին օրհնու-
 թիւն . իշխանութիւն և կամ յանցանք մը պիտի հաղոր-
 քուի (Եննգ . ԻԸ . 14—20. Դան . Ճ . 10) : ԱՍՑՈՒԾՈՑ
 Ձեռք ԲԱՐԳԱՐԷԻ մը վրայ դրուած՝ հոգևոր զօրութիւն
 կը ցուցանէ (Եզեկ . Ա . 3 . Գ . 22) :

ՁՈՒԿ՝ ժողովրդաց նշանակէ (Եզեկ . ԻԲ . 4, 5) :

ՃԱԿՑԻ վրայ անուն կամ նշան մը ունենալ՝ կը նշանակէ
 ծառայ ըլլալ (տես Յայտ . ԻԲ . 4) . կուոց պաշտօն տա-
 նողներն իրենց ճակատին վրայ դրոշմ՝ անուն մը . կամ թիւ
 մը կը կրէին (տես Յայտ . ՃԳ . 16, 17) :

ՄԱՑԻ՝ որևիցէ բան մը յառաջ բերող կը նշանակէ
 (Յայտ . ՃԷ . 5) դարձեալ՝ քրիստոսի Եկեղեցւոյն նշա-
 նակէ (Գաղ . Գ . 2) :

ՄՆՆՆՆԱՑ՝ կը նշանակէ աստուածային անմահական
 սնունդ (Յայտ . Բ . 17. տես և Եյից ՃԶ . 33, 34) :

ՄԵՂՈՒՆԵՐ՝ կը նշանակեն Ասորեստանի թագաւորին
 զօրքերը (Եսայ . Է . 18) : Դարձեալ կը ցուցանէ որևիցէ
 կատաղի հալածող մը (Բ Օր . Ա . 44. Սաղմ . ՃՃԸ . 1) :
 ՄԵՏԵՆԱԿԱՆ (Եգիպտական) նշանագրաց մէջ ՄԵՂՈՒ մը
 թագաւոր կը նշանակէ :

ՈՐԻ՝ բազմապիսի բեղմնաւորութեան նշանակէ (Երեմ՝
 Բ . 21. Ոգո . ՃԳ . 7) :

ՈՒՑԵԼ՝ կը նշանակէ ճշմարտութեան չորս խորհիլ և ա-
նոր հաղորդ ըլլալ (Եսայ. ԵՍ. 1, 2) : Կը նշանակէ նաև
մարդու նախընթաց կենացն արդիւնքը կրել (Եսայ. Գ.
10. Սաղմ. ՃԻԸ. 2) : դարձեալ այս բառով կը նշանակ-
ուի Ակուն խաղաղութեանը կամ ստացուածոցը կորուստը
(Յայտ. ՃԷ. 16. Սաղմ. ԻԷ. 2) :

ՉԱՓԵԼ կամ ԲԱԺԱՆԵԼ կը նշանակեն յաղթութիւն և
ստացումն (Եսայ. ԵԳ. 12. Ա՛նժո. Է. 17) : Իսկ Ձաք,
Ք. 2. ՉԱՓԵԼ՝ զերտին ստանալու իմաստն ունի :

ՊՂԻՆՉ՝ զտաթարութեան և խոտարտութեան նշանակ
է (Եսայ. ԽԸ. 4. Երեմ. Ձ. 28) : դարձեալ նշանակ է
ամբուութեան և հաստատութեան (Սաղմ. ՃԷ. 16. Եսայ.
ԽԵ. 2) :

ՊՍԱԿ՝ կը նշանակէ Ակուն մը յանձնուած իշխանութիւն
(ՂԵա. Ը. 9) :

ՓՈՂ կը հնչեցունեն ըսելով կ'իմացուի թէ նշանաւոր
դէպք մը պիտի պատահի (Յայտ. Ը. 6-13) :

ՔԵՐՈՎԱՔԻՔ՝ կը նշանակեն արքայական փառք (Յօլից.
ԻԵ. 18. 22. Գ. Թագ. Ձ. 23. Ը. 7) : դարձեալ՝ հրեշ-
տակ կամ Աստուծոյ սպասուսութիւն ընող հոգիներ
(Եննդ. Գ. 24. Սաղմ. ՃԸ. 10) :

ՔՆԱՐ՝ գովութեան և ցնծութեան նշանակ է (Սաղմ.
ԼԳ. 2. ԵԷ. 8) : Քնարն ընդհանրապէս յաղթութիւնէ
մը ետքը կը գործածուէր (Բ Մնաց. Ի. 28. Եսայ. Լ՝
32. Յայտ. ՃԴ. 2) :

ՎԵՅԵՐՈՐԳ՝ Մարգարէութեանց մէջ յիշուած ժամանակ-
ներուն նկատմամբ՝ աւհասարակ ընդունուած կանոն է որ :
երբ տարի յիշուած չէ, օրը տարի մը կը հաշուուի, այնպէս
որ մարգարէական օրը մեր հասարակ տարին է : Աս կանոնը
քանի մը օրինակներով հաստատուած, կամ գոնէ շատ
հաւանական է : Յես. Թու. ՃԴ. 34. Եզեկ. Գ. 5, 6՝
ուր Աստուած յայտնապէս կ'ըսէ. "Ամէն մէկ տարիին ան-
զը մէյմէկ օր տուի" :

Դարձեալ՝ "ժամանակ մը, ժամանակներ, ու կէս ժա-
մանակ" խոզրով (Դան. Է. 25)՝ երեք ու կէս մարգարէ-

ական տարի կը հասկցուի . և որովհետև մարգարէական օրը մեր հասարակ տարին է , ու տարին ալ 12 ամիս և ամէն ամիս 30 օր ունենալով՝ 360 օրէ կը բաղկանայ , մարգարէական տարին 360 մարգարէական օրէ , այսինքն՝ 360 հասարակ տարիներէ բաղկացեալ ժամանակ մը հասկնալու է : Աս հաշուով «Ճամանակ , ժամանակներ (այսինքն՝ 2 ժամանակ) և կէս ժամանակ» խօսքերուն մէջ՝ վերոյիշեալ երեք ու կէս մարգարէական տարին կ'ընէ 1260 հասարակ տարի , որ Աստուծոյ դէմ խօսողին և օուրբերը մաշողին ծագմանն ու կործանմանը համար որոշուած շրջանն է : Յայտ թԱ . 2 , 3 , և թԳ . 5 . նոյն շրջանը հաշուուած է մէյ մը իբրև 1260 օր և մէյ մ'ալ իբրև 42 ամիս որ միևնոյն միջոցն է , այսինքն՝ 1260 օր :

Բայց և այնպէս՝ Սուրբ Գրոց ամենէն նշանաւոր մարգարէութիւններէն ոմանք տարի բաւը գործածելով կ'ուզեն ժամանակին միջոցը ճշդիւ իմացնել : Այսպէս Աբրահամը սերունդին պանդխտութեան ժամանակը որոշուած է իբր 400 տարի (Ծննդ . թԵ . 13) : Եսայի ալ . 65 տարի կը հաշուէ իր ատենէն մինչև Եփրեմի ցեղին ջնջուելու ժամանակն եղած միջոցը (Ես . Է . 8) : Իբրև ճշդիւ որոշուած ժամանակ իմանալու է նաև Յուզպի գերութեան եօթանասուն տարին , և եօթանասուն եօթնեակը (շաբաթը) , այսինքն՝ 490 տարին , որուն վերջը Մեսիան պիտի կտրուէր (Գան . Թ . 24—27) : Սակայն ստոյգ է որ Աստուած Մարգարէից բերնով մեզի իմացուցած դէպքերուն ճիշդ ժամանակներն ընդհանրապէս յայտնի ընել ուզած չէ , այլ զանոնք բուն իր իշխանութեանը մէջ դրած է : Մարգարէութիւնը կ'ապահովցնէ մեզ միայն որ դէպքը պիտի կատարուի , և կուտայ մեզի այնպիսի նշաններ որոնք շատ օգտակար են Աստուծոյ գիտաւորութիւնը գտնէ ընդհանուր կերպով մը ճանչնալու : Արդէն կատարուած մարգարէութեանց մէջ անգամ ժամանակները ճշդիւ որոշել շատ անգամ դժուարին է : Զոր օրինակ՝ գերութիւնը 70 տարի տեսց . բայց կրնայ հարցուիլ թէ աս 70 տարին ե՞րբ կը սկսի . քանզի երկու ժամանակ կայ , և գերութիւնն ան

երկուքէն ալ կրնայ սկսած համարուիլ. այսինքն՝ մէյ մը Յովակիմ՝ Թագաւորին գերի երթալէն մինչև երկրորդ տաճարին շինութեանը համար Կիւրոսի տուած հրովարտակը (Բ Մնաց . ԼՁ . 5—7 . 20—23) . երկրորդ՝ առաջին Ցաճարին կործանմանէն մինչև Կարոյց Դարեհ թագաւորին հրովարտակը՝ որով երկրորդ Ցաճարին շինութեանը համար Կիւրոսի տուած հրովարտակին գործադրութիւնը կը հրամայուէր (Բ Մնաց . ԼՁ . 14—21 . Եզրաս . Զ . 1—12) : Ոմանք երրորդ ժամանակ մ'ալ կը ցուցունեն , այսինքն՝ Նարուզարդանի ձեռօք եղած վերջին գերութենէն մինչև երկրորդ Ցաճարին նաւակատիքը (Երեմ . ԾԲ . 30 . Եզրաս . Զ . 15—17) :

Դանիէլի մէջ յիշուած եօթանասուն եօթնեակներուն (չարաթնեռուն) մեկնութիւնը նոյնպիսի դժուարութեան մը ներքև է : Աս շրջանին կամ ժամանակի միջոցին երբ սկսելուն վրայ հասարաւոր գիւրքեր գրուած են . և թէպէտ հիմա աս դժուարութիւնը հարթուած և ինդիրը լուծուած է , յիշեալ մարգարէութիւնը հին Հրէից հազիւ աղօտ գաղափար մը կու տար Մեսիայի գալստեան ժամանակին վերայ : Աս դժուարութիւնը տեսնելով՝ դեռ չկատարուած մարգարէութեանց ժամանակները որոնելու և գիտնալու մասին խոնարհ և համեստ ըլլալու կը յորդորուինք :

Թէպէտ մարգարէութիւններն հասկնալու մասին այսչափ դժուարութիւններ կան , պէտք չէ որ հասարակ ընթերցողը վհատի , քանզի երկու բան կայ որ ամէն ընթերցող , մարգարէութիւնները կարդալու ատեն , կրնայ ընել : Նախ ուշադրութիւն ընելով կրնայ անոնցմէ շատ օգտակար խրատներ սորվիլ : Մարգարէութեանց մէջ ազդու կերպով նկարագրուած են Հրէից յանցանքն ու վատթարութիւնները , և անոնց դէմ Աստուծմէ տրուած սատիկ յանդիմանութիւններն ու պատիժները : Մարգարէութիւն մը որչափ խորին ըլլայ՝ անոր բարոյական մասնը նշահանրապէս պարզ և յայտնի է (Յես Երեմ . Թ . 11—16) : Երկրորդ , թէև մարգարէութեան մը բուն նպատակը կամ դիտումը որոշ և յայտնի չըլլայ , կարդացողն ա-

Նոր ընդհանուր իմաստը սովորաբար կրնայ հասկնալ : Զոր օրինակ՝ Յայտ . Զ. 2. “ Ճերմակ ձի ” բառին նշանակու- թիւնն ինչ որ ըլլայ՝ յայտնի է թէ անով ակնարկուած ժամանակը կամ դէպքը, որ այն գլխուն մէջ յիշուած ժա- մանակներուն կամ դէպքերուն ոկիզբն է՝ խազաղ և յա- ջող պիտի ըլլայ . ուր 3 և 4 համարներուն մէջ նկարագ- րուած ժամանակը կամ դէպքը լի է հալածանօք և արիւն- հեղութեամբ . իսկ 5 և 6 համարները կը գուշակեն արդար կառավարութեան մը ժամանակ՝ ուր սով պիտի ըլլայ . 7 և 8 համարները կը ցուցնեն մահաբեր հիւանդութեան և կործանման ժամանակ . 9—11 համարներն ալ՝ երկար և դառն հալածանաց օրեր . 12—17 համարները կ'իմացնեն թէ ընդհանուր յեղափոխութիւններ պիտի ըլլան , այս- ինքն՝ տէրութիւններ պիտի կործանին , և հաստատուած դրութիւններ վեր 'ի վայր պիտի շրջին : Առ մարգարէաւ- թեանց 'որ մասնաւոր ժամանակի կամ դէպքի վերաբերե- լուն նկատմամբ իրարմէ շատ տարբեր կարծիքներ եղած են և կրնան ըլլալ . բայց ժամանակին ընդհանուր և նշանա- ւոր հանգամանացը վրայ ամենուն կարծիքը միաբան է , և այլազգ չի կրնար ըլլալ : Յայտնութեան բոլոր դրբին հա- մար նոյնը կրնանք ըսել . մասնաւոր բառերու նշանակու- թիւնն ինչ որ ըլլայ՝ յայտնի կը հասկցուի թէ , մինչև մեր Ցէրովը գաղուստը Եկեղեցին նեղութեան և տառապանաց մէջ պիտի ըլլայ , բայց յետոյ Ցէրը մեծ զօրութեամբ և փառօք պիտի երևնայ , և անատեն Եկեղեցին յաղթող և երջանիկ պիտի հանդիսանայ : Այս ճշմարտութիւնն ա- մէն գարու մէջ ո՛րչափ միսիթարական է , և Սուրբ Գը- րոց գրեթէ բոլոր մարգարէական մատերն ի՛նչ բացայայտ կը ցուցունեն ասիկա : Այսպէս մարգարէութիւնները միշտ բարոյական և հոգևոր դաս կամ խրատ կուտան , և կրնան մարդոց ջանքերը խթանելու և հաւատքը անու- ցանելու ծառայել : Մարգարէութեանց գաղտնեացը հա- սու ըլլալու համար ալ ամենէն աղէկ պատրաստութիւ- նը՝ յիշեալ խրատներուն ուշադրութիւն և հնազանդու- թիւն ընելն է : Մասնաւոր կերպով կրանի արուած է ա-

նոնց որ կը կարգան ու կը լսեն մարդարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է : (Յայտ . Ա . 3) :

ԳԼ . ԺԴ

Սուրբ Վիգէր + Տեյնելու համար արդարէն աղբիւրներու
օժանդակութիւնը :

Սուրբ Գիրքը կատարելագէտ հասկնալու, մանաւանդ անոր այլ և այլ խօսքերուն զօրութիւնը լինողին իմանալու համար, շատ անգամ օգտակար է ուրիշ գիրքերու օժանդակութեանը գիմելով տեղեկանալ՝ թէ՛ Հրէից և թէ՛ ուրիշ հին ազգաց մէջ տիրող գաղափարաց և կարծեաց, անոնց բարուցը, սովորութիւններուն, անոնց պատմութեանն ու ժամանակագրութեանը . դարձեալ բնական պատմութեան, կենդանեաց և բուսեղինաց, և աշխարհագրութեան ընդհանուր իրողութիւններուն :

Նախ Հրէից մէջ տիրող գաղափարաց և կարծեաց տեղեակ ըլլալ օգտակար է : Աս նկատմամբ մեր ունեցած տեղեկութիւններուն գլխաւոր աղբիւրներն են՝ Թարկումները, Սոհարն ու Թալմուտը : Թարկումներուն վրայ արդէն բաւական տեղեկութիւն տուինք . տես աս գրքին մէջ էջ 8 և 30 :

Սոհարը որ Բ . Դարուն ծաղկող Ովսէի որդի Բարբի Սիմոնի գրած մէկ գիրքն է՝ Հրէից մէջ մեծ յարգ ունեցած է, և անոնց կապակալ կոչուած տեսակ մը գաղտնի գիտութիւնն աս գիրքէն է : Սոհարը կը խօսի Մեսիայի գալըտեանն ու անոր Թագաւորութեանը վերաբերեալ առաջուց գուշակուած գէպքերու վրայ . ուստի և Հրէից աս նկատմամբ ունեցած կարծեացը վրայով մեզի բաւական լոյս կու տայ, և կ'իմացնէ թէ Հրեայք ալ Նոր կտակարանին մէջ վկայութիւն բերուած քանի մը մարդարէութիւնները, երկու կամ երեք բացառութիւններէ զատ, ընդհանրապէս ճիշդ Առաքելոց հասկցածին պէտ կը հաս-

կընային : Զոր օրինակ՝ Սոհար Նոր Կտակարանին մէջ Սաղմոսներէն և Եսայեայ մարգարէութենէն բերուած վը-
ճայութիւններուն ամէնն ալ Մեծիայի կը վերաբերէ :

Թալմուտը՝ Միշնա և Կեմարա կոչուած երկու մասէ կը-
բաղկանայ : Աւջինը կը պարունակէ Հրէից կանոնադրու-
թիւնները որոնք , ըստ կարծեաց Հրեայ Վարդապետաց ,
Մոփսէսէն Աստուածաշունչին գրաւոր օրէնքներուն վրայ իբր
յաւելուած բերնուց պատուիրուելով՝ դարէ դար աւան-
դութեամբ եկան , մինչև որ Քրիստոսէ ետքը Երրորդ դա-
րուն Միշնա անուամբ գրքի մը մէջ ամփոփուեցան : Երկրորդ
մասն , այսինքն՝ Կեմարան , Միշնային տեսակ մը մեկնու-
թիւնն է , և կը պարունակէ Հրէից մեծանուն Բարունեաց
և Գիտնոց այլ և այլ հոգևոր և աշխարհային իրաց վրայ ,
Քաբիլոնեան գերութենէն մինչև Քրիստոսէ ետքը Չորրորդ
և Հինգերորդ դար , ըրած զրոյցները , որոնց մէջ կան նաև
շատ այլաբանութիւններ , առակներ և պատմութիւններ :
Կեմարային պարունակած նիւթերն ալ բաւական ժամա-
նակ իբրև աւանդութիւն Հրէից մէջ պահուելէն ետքը ,
Քրիստոսի թուականին Չորրորդ և Հինգերորդ դարուն ,
հատորի մը մէջ հաւաքուեցան : Կեմարան երկու տեսակ
է . մէկը որ Պաղեստինու գիտուն Հրեայ Բաբելոններուն
աշխատասիրութիւնն է՝ Միշնային հետ մէկ հատոր կազ-
մուելով Երուսաղեմեան Թալմուտ կոչուած է . միւս Կե-
մարան Բաբելոնեան Բաբելոններուն երկասիրութիւնն է ,
և նոյնպէս Միշնային հետ իբրև մէկ գիրք՝ Բաբելոնեան
Թալմուտ կոչուած է , և Երուսաղեմեան Թալմուտէն գը-
րեթէ չորս անգամ աւելի ճախ ըլլալով՝ 12 հատորէ կը-
բաղկանայ : Թալմուտին նիւթն , ինչպէս վերն ըսուե-
ցաւ , Բաբելոնական գերութեան դարձէն մինչև Քրիստոսէ
ետքը Չորրորդ և Հինգերորդ դար , իբր հաղարամեայ ժա-
մանակի մը մէջ հաւաքուած ըլլալով՝ կրնայ այն ժամա-
նակներուն ամենէն հմուտ Հրեայ Վարդապետաց և գիտ-
նոց կրօնից և փիլիսոփայութեան վրայ ունեցած գաղա-
փարներուն նկատմամբ մեղի առաջ տեղեկութիւններ
տալ : Անոր մէջ շատ անգամ Աւետարանաց յիշածնե-

բուն հետ շատ երեւելի նմանութիւններ կը տեսնենք : Կը տեսնենք որ Հրէից Բարբիներն իրենց աշակերտներուն կ'ուսուցանէին առակներով , այլաբանութիւններով և առածներով , ինչպէս որ Քրիստոս կ'ընէր : Կը տեսնենք որ անոնք ալ կը գործածէին՝ Փրկութիւն , Աերասին Ծնունդ , Մկրտութիւն , Շնորհք , Հաւատք բառերը : Անոնք արգարեւ գործածած շին առ բառերը ճիշդ նոյն մտօք որով նոր Կտակարանին մէջ կը գործածուին . բայց և այնպէս նոյն բառերուն գործածութիւնը կը ցուցունէ թէ յիշեալ գաղափարներն այն դարերուն ծանօթ և ընտանի էին , և Սուրբ Գրոց մէջ յիշուած նոյն բառերուն բուն նշանակութիւնը յուսաւորելու կը ծառայէ :

Թալմուտէն կը տեղեկանանք որ , Քրիստոսի աշխարհ եկած ատենք , Հրէից մէջ Մեսիային գալստեանը ընդհանուր ակնկալութիւն մը կար . անոր Թագաւորութիւնը՝ « Գալու աշխարհք » , « Երկնային Երուօղէմ » , « Երկնից՝ կամ « Աստուծոյ Թագաւորութիւն » կը կոչուէր . այն Թագաւորութիւնը « մտնել » ըսելով ալ՝ Մեսիային աշակերտիլ կը հասկցուէր : Հրեայք անոր Թագաւորութեանը սրպիսութեանը վրայ շատ մնլար գաղափարներ ունէին , և հարկ էր որ Քրիստոս զանոնք ուղղէր : Աերոյիշեալ տեղեկութիւններն ունենալով՝ Հրէից առ մնլար գաղափարներն ուղղելու համար Քրիստոսի և Առաքելոց ըրած խօսքերուն զբութիւնն ու յարմարութիւնը լաւ կրնանք հասկընալ :

Հրեայք նորահաւատ մէկու մը համար « Նորէն ծնած է » կ'ըսէին . ուստի Հրէից առ բացաարութիւնը գործածելը՝ Քրիստոսի Յովհ. Գ. 8. ըսածը կը պարզէ : Հրէից մէջ « Կապել և արձակել » բառերը՝ բան մը իբրև ապօրինաւոր՝ արգելուլ , կամ իբրև օրինաւոր՝ պատուիրել կը նշանակէր : Աս ալ Մատթ. ժԸ , 18 համարին բուն նշանակութիւնը կը բացատրէ . Լեւան վրայ Քրիստոսի ըրած քարոզութեան մէջ տրուած պատուէրները՝ հետեւեալ իրողութիւններուն լուսովն աւելի ազդու կ'երևին : Փարիսեցիք կը կարծէին թէ սրտին չար խորհուրդներն ամենեկին մեղ-

սական չեն (տես Մատթ. Ե . 28) . Դպիրներն ալ կը պնդէին թէ այն պատարագները կամ ընծաները զոր Աստուածապաշտ Հրեայք Սեղանին վրայ դնելու (Տաճարը բնդելու) պարտական էին՝ ամէն յանցանք կը քաւեն՝ բաց 'ի դատաւորի մը առջև դատուելու յանցանքներէն (Մատթ. Ե . 21—26) : Հրեայ Վարդապետաց ընդհանուր կարծիքն էր թէ երկդիմի կամ խարէական մտօք յանուն երկնից կամ երկրի երդնուլ ներելի է , և սրոշակի Աստուծոյ անունը տալով երդում ընելու պէս մեծ կարեորութիւն մը չունի (Հոն , Համար 33—36) : Դարձեալ կը պնդէին թէ երկար աղօթքը պարագ ետ չի դառնար (Մատթ. Զ . 7) :

Հոս սա գիտադուծիւնն ընել կարևոր է որ , թէև նախնի Հրէից կարծեացը տեղեակ ըլլալն արդարև շատ անգամ Սուրբ Գրոց մէջ գործածուած բառերուն բուն իմաստն հասկնալու կ'օգնէ , սակայն այն բառերուն Սուրբ Գրոց մէջ ինչ իմաստով գործածուած ըլլալը ստուգելու համար այն օգնութիւնը միայն իբր երկրորդական կրնայ համարուիլ : Զոր օրինակ , ինչպէս քիչ մը առաջ յիշուեցաւ , Հրէից մէջ նորահասատները , այսինքն՝ անոնք որ թլփատութեամբ կամ մկրտութեամբ (լուացմամբ) Հրեայ կ'ըլլային՝ «Նորէն ծնած» կը կոչուէին : Սակայն յայտնի է որ վերի խօսքին աս գործածութիւնը կը ցուցունէ միայն թէ հաւանականաբար ինչու համար Քրիստոս նոյն բառերը գործածեց (Յովհ. Գ. 3) , անոր գործածած միտքն ալ ըստ բաւականին կը բացատրէ . բայց մեր Ցէրօջը հասկցնել ուզած բուն իմաստը՝ Սուրբ Գիրքէն միայն կրնանք կատարելապէս սորվիլ :

Իսրայէլացւոց բոլորտիքը բնակող ազգաց կրօնական գաղափարներուն տեղեկութիւն ունենալն ալ շատ օգտակար է : Զոր օրինակ՝ Փիւնիկեցիք հանդիսաւոր տօներու ատեն իրենց զոհերուն միտէն մաս մը հում կ'ուտէին . մաս մը արևուն մէջ կը խորովէին , մաս մ'ալ գիւթական նպտակներու համար ջրով կը խաշէին . իոյ փորոտին գուշակութեան կամ հմայութեան համար կը գործածուէր :

Քուրբ այս արարողութիւնները Հրէից արգելեալ էին : Ողջակէզ ընելու, այսինքն՝ զոհերն ամբողջ այրելու պատուէրն այլ և այլ նպատակներ ունէր . բայց և այնպէս մէկ նպատակն ալ անտարակոյս Հրեաներն հիթանաական արարողութիւնէ զգուշացնել էր (տես Ղևա . Ա . 2—9. ՃԲ . 26 : Սաղմ . ՃԶ . 4. Երեմ . ԽԴ . 17, 18) :

Հին Պարսիկները կրակապաշտ էին, և երկու համազօր սկզբունք կ'ընդունէին . մէկը բարի՝ Որոմիզդ, միւսը չար՝ Արհմն : Եհովան մարգարէին բերնով իր խօսքը Պարսից թագաւորին Կիրոսի ուղղած տակնը՝ հաւանական է թէ այս երկարմատեան կարծեաց նայելով ըսաւ . « Լոյսը հաստատողը, և խաւարը ստեղծողը, խաղաղութիւնը ընողը, ու չարիքը ստեղծողը, աս ամէն բաները ընողը՝ ես Յէրոսեմ » (Եսայ . ԽԵ . 7) :

Արևելեան փիլիսոփաներէն ոմանք, զոր օրինակ՝ Գէա (Կնոստիկեան) կոչուածները, սա կարծիքն ունէին թէ Աստուածութիւնը քանի մը Բիււսներ ունի որ կը կոչուին Բան, Կեանք, Լոյս, այլովքն հանդերձ : Կը կարծուի թէ Յովհաննէս Աւետարանիչ (Ա . 1—8) աս կարծեաց նայելով նոյն տիտղոսները մեր Յէրոջը կ'ընծայէ : Կնոստիկեաններէն շատերն՝ իրենց սկզբունքներէն թոյլ բարոյական մը կը հանէին . ուրիշներն ալ չափազանց խոտաճերութիւններ ընել կը պատուիրէին : Աս ազանդներուն վարդապետութեանցը գէմ են հետեւեալ համարները . Ա Յովհ . Ա . 1, 2 . 7 . Բ . 22, 23 . Դ . 2, 3 . 9 . 14, 15 . Ե . 1—5 . 9—20 : Իսկ անոնց բարոյականին գէմ են սա համարները . Ա Յովհ . Ա . 5, 6 . Բ . 3—6 . Գ . 4—10 . Ե . 18 . 21 : Յայտ . Բ . 6 . յիշուած Նիկողայոսեանք՝ հաւանականաբար նոյն ազանդներէն էին :

Եւրոպիոյ մէջ ամենէն աւելի տիրող փիլիսոփայութիւնն՝ Յունացն էր : Նոր Կաթարանին մէջ Յունական փիլիսոփայութեան ազանդներէն երկուք միայն յիշուած են, այն են՝ Եպիկուրեանն ու Ստոյիկեանը : Առջինները, Եպիկուրեանք, կը կարծէին թէ Աստուած հեռաւոր տեղ մը բնակելով տիեզերաց գործերուն ամենեկին հոգ չի տանիր :

Միւսները, Ստոյիկեանք, կ'ըսէին թէ Աստուծոյ և մարդոց զրոյ միանգամայն՝ անփոփոխ և անվրէպ ճակատագիր մը կ'իշխէ : Պօղոս Առաքեալ երկուքն ալ հերքելով (Գործ. ձե. 18—32), և անոնց սխալումներն ուղղելով՝ քարոզէր որ Աստուած՝ մեր ամէն մէկէն ալ հեռու չէ՝, և մեր բոլոր գործերը գիտնալով՝ « օր մը սահմանեց որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ » : Այս մտրութիւնները որոնց այլ և այլ ազգաց պատմութիւններէն կը տեղեկանանք՝ այս ինչ կամ այն ինչ ազգի կամ ժամանակի մոլորութիւններ են . սակայն, մարդուս ապականեալ բնութեան թիւր միտումներէն յառաջ եկած բլաւուն համար, ուրիշ ազգերու և ժամանակներու մէջ ալ երևան կ'ելլեն, թէպէտ տարբեր ձևով կամ կերպարանօք : Ուստի Սուրբ Գրոց այն խօսքերը որ այս ինչ մասնաւոր ազգի կամ ժամանակի մոլորութիւնները կը հերքեն՝ մի և նոյն զօրութիւնն ունին և կրնան իրրև հերքում գործածուիլ, ե՛րբ և ու՛ր որ նոյն մոլորութիւնները տարբեր կերպարանօք երևան կ'ելլեն :

Հրէից և ուրիշ հին ազգաց բնականութեան, հագուստի և ասոնց նման բաներու վերաբերեալ սովորութիւնները գիտնալն ալ՝ Աստուածաշունչը մեկնելու շատ կ'օգնէ :

(ա) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ : Իսրայէլացւոց ազգին նահապետները վրանաբնակ էին : Արանը ջրհեղեղէն առաջ հնարուեցաւ (Ծննդ. Գ. 20), և 'ի բնէ հովուական կենաց շատ յարմար էր : Անապատին մէջ Աստուծոյ սրբարան բլաւու համար շինուած խորանը (վրանը) խոյի մորթէ ծածկոց մը ունէր (Ել. ԻԶ. 14). բայց Սուրբ Գրոց մէջ յիշուած վրաններէն շատերուն ծածկոցներն էին այճի մազէ զոր կանայք կը մանէին և կը հենուին, ուստի և գունով սև էին (Երգ. Ա. 5) : Քթանէ վրաններ երբեմն միայն զուարճութեան համար կամ ճամբորդութեան տակն կը գործածուէին : Առաջին վրաններն հաւանականաբար, ցարդ Արաբիոյ մէջ տեղնուածներուն պէս, երկայնաձիգ էին՝ սւթ կամ տասը ոտք բարձրութեամբ : Երևելի անձ մը երբեմն երեք կամ չորս վրան կ'ունենար . մէկն՝ էրէն,

միւսն՝ իր կանանցը , մնացած երկուքն ալ ծառայից և օտարականաց համար (Ծննդ . ԻԳ . 67) . բայց ընդհանրապէս մեծ և երկայնաձիգ վրան մը վարագուրներով երկու կամ երեք մաս կը բաժնուէր : Այսպէս բաժնուած էր վերոյիշեալ Ակայութեան Խորանը (ԵԼ . ԻԶ . 31—37) : Յակոբ իրեն համար տուն և իր անասուններուն համար փարօտի շինեց (Ծննդ . ԼԳ . 17) . նաև կը գտնենք որ այգիներու մէջ պահապաններուն պաշտպանութեանը համար խրճիթ կամ հիւղ կը շինուէր (Յօբ . ԻԷ . 18 . Ես . Ա . 8) : Ասոնք , վրանի և ասան նայելով , երկուքին մէջտեղ միջին շէնքեր էին :

Հաւանական է թէ Իսրայէլացիք Եգիպտոսի մէջ գեղեցիկ տուններ տեսած էին . բայց երբ Պաղեստին եկան , ի սկզբան իրենց նախորդներուն , այսինքն՝ այն երկրին բնակներուն շինած տուները բնակեցան , յետոյ իրենք տուներ շինեցին , և շատ հաւանական է թէ Հրէից Թագաւորաց ատենը ճարտարապետութեան արուեստը բաւական յառաջադիմութիւն ունեցաւ : Սոդոմնին պալատը որ Փիլեսիկեցւոց օգնութեամբը շինուեցաւ՝ այս յառաջադիմութիւնը յայտնապէս կը ցուցունէ : Երեմիա (ԻԲ . 14) իր ժամանակին շէնքերուն շքեղութիւնը կը նկարագրէ : Աղքատաց տուններն ընդհանրապէս հողով կամ շաղախով կը շինուէին , ուստի և պատերը գիւրաւ ճաթուտելով վար կու գային , և այսպէս մարգկային անհաստատ կենաց շատ յարմար պատկեր էին (Յօբ . ԻԳ . 16 . Եգեկ . ԺԲ . 5 . Մաթթ . Զ . 19) : Հարուստներուն տուններն աւելի հաստատուն էին : Ասոնք ընդհանրապէս կը շինուէին քառակուսի ձևով , որուն մէկ երեսը փողոցին վրայ ըլլալով՝ վարէն դուռ մը , վերէն ալ մէկ կամ երկու փոքրիկ պատուհան ունէր : Աս դուռնէն մտնողը կու գար գաւթի մը՝ որուն մէկ կողմը գտնուած ուրիշ դռնէ մը սպասաւորին կամ գոնապանին խուցը կու գար , անկէ ալ վրան բաց քառակուսի բակ մը : Աս բակին բոլորողը , գետնի վրայ՝ պատերուն քովէն կարգաւ սրահ էր , և սրահին վրայ նոյն ընդարձակութեամբ նեղ և երկայն ճեմելիք : Դռնապանին խուցին դիմացը , բակին միւս ծայրը , հիւրանոց էր ուր

տանուտէրն այցելուները կ'ընդունէր, և որ երբեմն նաև անոր գործի սենեակն էր : Ցանկքը տափարակ էր, և բակին վրայ նայող եզերքը խաղխամայ վանդակապատ (Գ-Ֆի-լի Կ-ր-Վ-Լ-Է) էր . իսկ դուրսի, այսինքն՝ փողոցին կողմի եզերքին վրայ ատամնածե պատ քաշուած կ'ըլլար : Ցանկքը և շէնքին ամէն մէկ գոտիկոնը հանող սանդուղներն ընդհանրապէս բակին մէջ՝ դրանը կից եղող անկիւն մը շինուած կ'ըլլային, այնպէս որ ամէն այցելու, առանց վարի յարկին սենեակներէն անցնելու, վերի սենեակներն ու տանիքը կրնար ելլել : Մարդիկ ամառը տանիքը կը պառկէին . տանն այս մասը գրեթէ միշտ իբրև աղօթքի, սգոյ և հանգստեան տեղ կը գործածուէր : Ցազաւարահարաց տօնին ժամանակը՝ տանեաց վրայ վրաններ կանգնել ու վարութիւն էր : Հանդէսներու և հրապարակական խնջոյից ատեն հիւրերը շատ անգամ կը ժողվուէին վարի քառակուսի բակը, որուն վրայ երբեմն գոց կ'ըլլար :

Հետևեալ համարները և ուրիշ շատեր աս իրողութիւններովը կը բացատրուին . Բ Օր . ԻԲ . 8 . Ա Թագ . Թ . 25 . Բ Թագ . ԺԱ . 2 . Ե . ԺԵ . 3 . Մարկ . ԺԳ . 15 . Գործ . Ժ . 9 :

Տուներուն գուռներն ընդհանրապէս երկփեղկ էին, առանցից վրայ կը գառնային, և, որպէսզի գոցուելէն ետքը դուրսէն մարդ կարող չըլլայ բանալ, դրան ետևը ձողեր դնելով կ'ամրացնէին (Բ Օր . Գ . 5) : Հին ատենուան գուռափակները կամ աղխերը, այսինքն՝ դուռները կղզելու գործիքները, փայտէ էին, և ասամուաւոր կամ ճանկաւոր նիգ մը մէկ դի կամ միւս դի օահեցնելով՝ կրնային գուռը կղզել և բանալ (Դաս . ԺԶ . 3 . Ե . ԻԵ . 2 . Երգ . Ե . 5) : Ինչպէս քաղաքաց, նոյնպէս տանց գուռներուն վրայ օրէնքէն խօսք մը կամ հաաուած մը իբր վերնագիր կը դրուէր : Պատուհաններն առանց ապակւոյ վանդակապատ էին . ձմեռը բարակ վարագուռով կամ փեղկերով կը գոցուէին, միայն լոյս առնելու չափ ծակ մը կ'ունենային (Գ Թագ . Է . 4, 5 . Երգ . Բ . 9) : Ովուէ . ԺԳ . 3 . Ժըխնելոյց յիշուած է . բայց աւելի հին ժամանակի տուները

ծիննելոյզ չունէին, միայն տեղ տեղ ծակեր բացուած էին ուստի ծուխը դուրս կ'ելլէր : Մեհամեծաց տուններուն սենեակները տաքցունելու համար, արևելեան արդի սովորութեան համեմատ, կրակարան կը գործածուէր և ածուխ կը վառուէր (Երեմ. ԼՁ. 22) :

Տուններուն կահ կարասին միշտ քիչ և մանր էր : Նստելու սենեակներուն մէջ փոքր աթոռներ կամ նստարաններ երբեմն տախտակէ սեղաններ կը գործածուէին : Երբեմն ալ կը գործածուէր թաղեայ (իւլ) կամ պրտուեղէն (իւլի) բազմոց (ֆլոր) որուն վրայ մարդիկ ծալուած կամ ծնկան վրայ գալով կը նստէին : (Գ թագ. Բ. 19. Ա թագ. Ա. 9. Առակ. Թ. 14. Մատթ. ԻԱ. 12) : Պառկելու համար կը գործածէին անկողին և բամբակալից վերմակ : Սաւան, ասուեղէն (ֆանկլ) վերմակ և մահիճ ծանօթ չէին, միայն տանիքներու վրայ կը գտնուէր փայտէ, երբեմն փղոսկրէ մահիճ մը, կամ արմաւենւոյ ճիւղերէ շինուած ոտքերով գահաւորակ մը. ասոնց վրայ անկողինը կը տարածուէր (Ամօզ. Զ. 4) :

Տան հասարակ անօթները հողէ կամ պղնձէ էին. մորթէ կամ կաշիէ ամաններ ալ կը գտնուէին : Հասարակ անօթներն էին՝ սափսր, օան, ափսէ, գաւաթ, տիկ և ասոնց նմաններ : Ճրագարանները ոտվորաբար կանթեղներ էին որոնց մէջ ձէթ կը վառուէր. և կանթեղներն էին հողէ կամ մետաղէ. մեծատանց տուններուն մէջ կանթեղներն աշտանակներու վրայ կը դրուէին : Ճրագարանները կամ աշտանակները երբեմն ստեղունք (ճիւղեր) կ'ունենային, այնպէս որ իւրաքանչիւր ստեղան վրայ մէյմէկ կանթեղ կը դրուէր (ԵԼ. ԻԵ. 31—40) : Ճրագները գրեթէ միշտ գիշերն 'ի բուն վառ կը պահուէին (Յօբ. ԺԼ. 6. Առակ. Ի. 20) :

Պաղեստինու բազմաթիւ քաղաքները, 'ի բաց առեալ Երուսաղէմ, Սամարիա և Կեսարիա, փոքր էին, և տաճարներ ու հասարակաց շէնքեր չունենալով (բաց յերուսաղէմէ)՝ գծուծ երևոյթ մը ունէին, մութ և նեղ փողոցներով զորոնք քարայտակ յօրինել սովորութիւն չէր :

Մովսէսի ժամանակն անգամ՝ քաղաքներէն շատերը պարուպաւոր էին (Թու. ժԳ. 29) . դուռներ ունեցող քաղաքներ Արրահափն օրովն ալ կը յիշուին (Ծննդ. ժԹ. 1) . Հասարակաց գործերը սովորաբար այս դուռներուն քով կը տեսնուէին (Ծննդ. ԻԳ. 10 . 18 . Բ Օր . ԻԱ . 19 . Հուլ. Գ . 1-4) . հոն էին նաև հրապարակները (Բ Մնաց. ժԸ. 9. Նէեմ. Ը. 1. 3) . և ցորչափ որ Հրէից վաճառականութիւնը միայն իրենց բերքերն ու անասունները ծախելու մէջ կը կայանար . այն հրապարակներն էին նաև վաճառանոց . բայց յետոյ անոնք ալ ուրիշ արևելեան ազգաց պէս զատ վաճառանոց կամ վրան ծածկուած շուկաներ ունեցան :

(բ) ՀԱԳՈՒՍՏ : Հրէից հագուստը հասարակօրէն երկու տեսակ հանդերձէ կը բաղկանար . մէկը մերկ մարմնոյն վերայ հագնելու ձորձ կամ շապիկ էր՝ ընդհանրապէս երկայն թեզանօք , և մինչև ծնկուրները կը հասնէր , թէպէտ յետոյ ոտքին կոճերն ալ ծածկելու չափ երկայն սկսու շինուիլ : Միւս տեսակը քանի մը կանգուն երկայն լաթ էր , որ ուսոյ վրայ առնուելով՝ բոլոր մարմնը կը ծածկէր : Առջի տեսակ հանդերձը տան մէջ հագնելու համար էր . անով միայն դուրս ելլել կամ այցելութեան երթալ սովորութիւն չէր : Լոկ աս տեսակ հանդերձով դուրսը տեսնուող մարդիկ Սուրբ Գրոց մէջ մերկ կամ հանգերձը հանած կը կոչուին (Ես . Ի . 2 . 4 . Յովհ . ԻԱ . 7 . ժԳ . 4) :

Հանդերձին թեզանիքը հասարակօրէն ձեռքը ծածկելու չափ երկայն էր , և հագնողը հանգէսի մը ներկայ գտնուած ատենը ձեռքն անով կը ծածկէր . բայց ուրիշ ատեն , մանաւանդ երբ աշխատիլ հարկ էր , ուղղը կրնար թեզանիքը վեր ժողկելով բազուկները մերկացնել (Ես . ԾԲ . 10 . Եզեկ . Գ . 7) :

Արտաքին հանգերձը որ տեսակ մը թիկնոց կամ վերարկու էր՝ երբեմն իբր վերմակ կամ անկողին կը գործածուէր գիշերը (Բ Օր . ԻԳ . 13 . Ել . ԻԲ . 27) : Մարգարէք և ուրիշ անձինք ալ անով , իբրև յարգութեան կամ սգոյ նշան , իրենց երեսը կամ գլուխը կը ծածկէին (Գ Թագ .

ձԹ. 13. Բ Թագ. ձԵ. 30. Եսթ. 2. 12) : Երբ աս
հանդերձը մէջք կապուելով՝ վարի ծայրովը վեր կ'ամփոփ-
ուէր, գոգ կը ձեանար (Ղուկ. 2. 38). Իսկ երբ ուսի
վրայ ձգուելով՝ նոյնպէս ծայրերէն ամփոփուելու ըլլար,
ամփոփուած միջոցը ծոց կը կոչուէր (Սաղմ. 2Թ. 12) :
Արևելեան ազգերուն ստացուածոց շքեղ մասն աս հան-
դերձներն ըլլալով՝ շատ անգամ իբրև ընծայ՝ ի նշան սիրոյ
ուրիշի կը տրուէին (Ծննդ. ԽԵ. 22. Գ. Թագ. Ե. 22) : Սո-
վորութիւն էր պատուել հանդերձն ի նշան սոցյ և զղջ-
ման (Ծննդ. ԼԷ. 29 34. Բ Թագ. Գ 31. Յոր. Ա. 20) :

Ներքին հանդերձը կամ շապիկը քթանէ կամ բամբա-
կէ կ'ըլլար : Հարուստները մէկ շապիկ տեղ երբեմն երկու
կը հագնէին . բարակ կտաւէ շապիկ մը՝ տակէ, ուրիշ
մ'ալ հասարակ նիւթէ՝ վրայէն : Ասոնց պատուականու-
թիւնը ձեռն չէր, քանզի ձեռք միշտ միօրինակ էր, այլ
սպիտակութենէն կախում ունէր (Ռոզ. Բ. 8) : Վրայի
հանդերձն ընդհանրապէս ասուէ, կամ ասուէ ու մազէ
խաւն էր :

Ան ատենուան մարդիկ նկարագործութեան կամ ասղ-
նեգործութեան, այսինքն՝ ասեղով բանելու արուեստին
բաւական հմուտ էին (Ել. ԼԵ. 35). և կ'երևի թէ ըն-
տանիք կամ տոհմ մը մասնաւորապէս բարակ կտաւ կամ
բեհէզ գործելու արուեստին մէջ համբաւ ստացած էր
(Ա Մնաց. Գ. 21) : Ճերմակը, կապոյտը, կարմրոյ և ծի-
րանւոյ այլ և այլ երանգները՝ հանդերձներու համար շաթ
գիրելի գոյներ էին . Սուրբ Գրոց մէջ ասոնցմէ ուրիշ գոյ-
ներ յիշուած չեն :

Ներքին հանդերձին կամ շապիկին վրայէն, երբեմն վե-
րարկուին վրայէն ալ սովորութիւն էր երկայն գօտի մը
կապել, ու ճամբորդութեան և աշխատութեան ատեն
ճարմանդներով պնդել (Գ Թագ. Ա. 8. Երեմ. ՁԳ 1.
Մատթ. Գ. 4) : Գրադէտ անձինք իրենց գօտւոյն մէջ
կաղամար և գրիչ կը կրէին (Եզեկ. Թ. 2). շատ անգամ
նաև դանակ կամ թուր և ուրիշ մեծագին բաներ գօ-
տւոյն մէջ կը պահուէին (Ա Թագ. ԻԵ. 13. Մատթ.
ձ. 9) :

Կօշիկները կամ հողաթափները կաշիէ կամ փայտէ ներ-
բաններ էին, որոնք խրացով ոտքին կը կապուէին: Անձ-
նական պարտաւորութիւն մը ուրիշի մը փոխադրելու կամ
որ և է առուտուրի մէջ անոր հետ որոշում մը հաստատե-
լու ատեն կօշիկ հանել և այն անձին տալ սովորութիւն
էր (Հուս. Գ. 7), ինչպէս որ Միջին դարու մէջ Եւ-
րոպացւոց սովորութիւնն էր ձեռնոց մը տալ: Երկրի կամ
կալուածոյ մը վրայ կօշիկ կամ մոլճակ նետելը՝ կը ցուցը-
նէր թէ կալուածը կօշիկը նետող մարդուն կը վերաբերի
(Սաղմ. Կ. 8). Իսկ կօշիկներն հանել՝ մեծարանաց նը-
շան էր (Եւ. Գ. 5. Յես. Ե. 15): Մէկուն կօշիկները
քակել և ոտքէն հանել, կամ կօշիկները կրել ծառայի
գործ ըլլալուն համար՝ իբրև խոնարհ վիճակի մը նշան կը
ցուցուի (Մարկ. Ա. 7. Մատթ. Գ. 11. Գործ. ձԳ.
25): Ձանկապան երբէք չէր գործածուէր. բոլոր ժողո-
վուրդը, բաց ՚ի ձմեռուան և ճամբորդութեան ատեննե-
րէ, մշտ բոկ կը շրջէր:

Հրեայք իրենց վիզը, շատ անգամ նաև գլուխը, բաց
կը թողուին: Երբ գլուխը ծածկել հարկ ըլլար, բարձր
աստիճանի մարդիկ իրենց գլուխը տեսակ մը փակեղով կը
ծածկէին, իսկ հասարակ ժողովուրդը ճակատն ապարօշ
կը կապէր. կանայք փակեղ կը դնէին, վրայէն ալ քող
կը ձգէին որ մինչև ուսերը կ'իջնէր:

Իտրայէլացիք կը թողուին որ իրենց մաղն ու մօրուքը
երկնայ. միայն երբեմն երբեմն կը փոքրէին. ածելով մօ-
րուքին քովերն աւրել՝ օրէնքին դէմ էր (Ղևտ. ձԹ.
27). Իսկ կնտութիւն դուն ուրեք կը պատահէր և կը նա-
խատուէր (Գ. Թագ. Բ. 23. Ես. Գ. 24. Երեմ. ԽԷ. 5):
Մօրուքն իբրև նշան արութեան (չափահաս ըլլալու)՝ շատ
յարգի էր. մօրուք ածիլել կամ փետել կամ վրան
թքնել, անոր դպչելն անգամ, եթէ ողջունելու համար
չէր, մեծ թշնամանք կը համարուէր (Բ. Թագ. ձ. 4—6.
Ա Մնաց. ձԹ. 3—5. Ես. Է. 20). և եթէ մէկն իր մօ-
րուքը չյարդարէր, կամ մանաւանդ ապականէր, յիմար
կամ յետին տխրութեան մէջ կը կարծուէր (Ա. Թագ.

ԻԱ. 13. Բ Թագ. ԺԹ. 24. Եսայ. ԺԵ. 2) :

Ինչպէս բոլոր Արևելեայց ընդհանրապէս, նոյնպէս Իսրայելացւոց կերակուրը պարզ և անխառն ուտելիք էին. գորօրինակ՝ հաց, միրգ, մեղր, կաթ, կարագ և պանիր : Միս քիչ կը գործածուէր, քանզի օրէնքը, պատուիրելով որ անասնոց մէջէն միայն որոճացողներն ու թաթահերձները, ձուկերէն ալ թու և թեփ ունեցողներն ուտուին՝ ուտելի անասնոց չափ գրած էր (Ղևտ. ԺԱ. 1—28) : Արիւն, ճարպ, լեարդ և երկկամուկը ուտելն ալ արգելուած էր : Հաւեղէն շատ քիչ կը գործածուէր. Պաղեստինու մէջ միայն աղանին ու ընտանի հաւը կը սընուցանէին : Հաւկթին իբրև կերակուր գործածուիլը երկու անգամ միայն յիշուած է : Թէպէտ թու և թեփ ունեցող ձուկերն ուտելու հրաման կար, ձկնեղինաց ուրիշ ուտելեաց պէս յաճախ գործածուած ըլլալը չենք կարգարբայց և այնպէս ձկնորսութիւնը շրջից մէջ հին ատեններն ալ սովորական էր (Յոբ. ԻԱ. 1. Եսայ. ԺԹ. 8) : Տիւրացիք Միջերկրական ծովէն մինչև Երուսաղէմ ծախելու համար ձուկ կը բերէին (Նէեմ. ԺԳ. 16), և յիշեալ քաղքին դռներուն մէկը “ Ձկանց դուռ ” կը կոչուէր. թերևս ձկան վաճառանոցը նոյն դրան մօտ էր (Բ Մնաց. ԼԳ. 14. Նէեմ. Գ. 3) : Միջատներէն մարտին ուտելու հրաման ըլլալն յայտնի է (Ղևտ. ԺԱ. 22) : Ասիկա Արևելք սովորական կերակուր մըն էր (Մատթ. Գ. 4) : Հացը հիմակուան պէս նկանակի ձևով չէր շինուեր, այլ իբրև լայն և բոլորակ շօթ և բլիթ (Իբրե, ԿօրեԿ) . և ամէն ընտանիք իւր հացն օր ըստ օրէ տանը մէջ կ'եփէր : Եփելու կերպն ալ միօրինակ չէր : հաստ շօթերը՝ կրակարանի, բարակ և աւելի տափարակները՝ տապակի վրայ կամ բակերու մէջ շինուած թոնրին ներսի պատերուն փակցնելով կ'եփէին (Ծննդ. ԺԼ. 6. Ղևտ. Բ. 4, 5) : Իսկզբան ասիկա, ինչպէս նաև ցորեն աղալը, կանանց և աղջկանց գործն էր (Ծննդ. ԺԼ. 6. Բ Թագ. ԺԳ. 6. 8. Երեմ. Է. 18) : Ատեսակ հացերը դանակով կտրելու հարկ չկար. առհասարակ ձեռքով կը բրդէին կամ կը ջարդէին (Ողբ. Գ. 4) :

Հրեայք ընդհանրապէս օրը երկու անգամ կերակրոյ կը նստէին . անգամ մը՝ կէսօրէն առաջ երրորդ ու վեցերորդ ժամերուն միջոցին , երկրորդ անգամ՝ իրիկուան դէմ ժամը տասնումէկին . աս երկրորդ ճաշն անոնց գլխաւոր ընթրիքն էր : Ընթրեաց ատենը բոլոր բազմականք սեղանին բոլորտիքը դրուած բազմոցներու վրայ դէպ՝ իրենց ձախը յեցած կը նստէին , այնպէս որ մէկուն գլուխը միւսին կուրծքին կը մօտենար , և այս կերպ նստուածքը « Կուրծքի վրայ իյնալ » կամ « Գոգը նստիլ » կը կոչուէր : Յիսուս վերջին Ընթրեաց ատեն , իր աշակերտներովը ճիշդ այսպէս նստած ըլլալով՝ կրցաւ իր քովն եղող Յովհաննէսին ըսել թէ ո՛վ պիտի ըլլար իւր մատնիչը , և սեղանը նստող միւս աշակերտներէն մէկը չկրցաւ լսել անոր խօսքը (Յովհ. ԺԳ . 23—28) : Այսպէս քովի վրայ նստողին ոտուրները դէպ՝ ի յետս երկնցած կ'ըլլար , ուստի և Ընթրեաց սենեակը մտնողը նախ բազմոցին ոտուրներուն կը մօտենար . վասն որոյ մեր Տէրօջը ոտուրներն արցունքներովը թրջող կնոջն համար Աւետարանին մէջ ըսուած է թէ « Ետևի կողմն անոր ոտքերուն քովը կեցեր » էր (Ղուկ . Է . 38) . Հրեայք աս սովորութիւնը Պարսիկներէն առած էին : Հաւանական է թէ անոնք աւելի հին ատենները նստարան կը դործածէին , և արևելեան արդի սովորութեան համեմատ՝ շատ ցած սեղաններու բոլորտիքը կը շարուէին :

Հրեայք կերակուրը մատուրներով կ'առնէին և կը մանրէին՝ առանց պատառաքաղի և դանակի . ուստի և կերակուրէն առաջ և ետքը ձեռք լուալ սովորութիւն էր (Մարկ . Է . 5) : Շատ հին ատեններ իւրաքանչիւր բազմականի զատ բաժին կը տրուէր (Ծննդ . ԽԳ . 34 . Տեա և Ա թագ . Ա . 5) : Բայց ետքերը բոլորը մի և նոյն պնակէն կ'ուտէին :

Անոնց սովորական ըմպելին ջուր կամ ջրախառն գինի էր (Ա Տիմ . Ե . 23) զոր ճաշն աւարտելէն ետքը կը խմէին , Գործաւորներուն և զինուորներուն սովորական ըմպելին էր ջրախառն թթու գինի որ քացախ կոչուած է : Մեր Տէրօջը խաչին վրայ « Ծարաւ եմ » գոչած ատենը զին-

ուորներուն տուած քացախն աս էր (Մատթ. ԻԷ. 48) : Իսկ անոր առաջուց մատուցուած ըմպելին լեղուով խառնած քացախ կամ զուսով խառնած գինի էր (Մատթ. ԻԷ. 34. Մարկ. ԺԵ. 23) . ասիկա սպաննուելու մահապարտաց կը տրուէր՝ զանոնք թմրեցնելու համար : Մեր օրհնեալ Տէրը չխմեց անկէ , քանզի խաչին մահը կամաւ յանձն առած ըլլալով՝ անոր և ոչ մէկ տանջանքէն կ'ուզէր փախչիլ :

Ընթրեաց ատենները տանուտէրը կամ հիւրընկալն անձամբ ըմպելին առաջուց կը պատրաստէր , և հիւրերէն ամէն մէկուն զատ զատ գաւաթներով կը մատուցանէր , ուստի գաւաթ կամ բաժակ բառը շատ անգամ իւրաքանչիւր անձի բաժինը նշանակելու համար կը գործածուի (Սաղմ. ԺԱ. 6. Եսայ. ԾԱ. 22. Մատթ. ԻԶ. 39) : « Խառնուած գինին » ոչ թէ ջրախառն՝ այլ համեմներով պատրաստուած զօրաւոր գինի էր (Առակ. ԻԳ. 30) : « Օղին » սաստիկ և արբեցուցիչ հեղուկ էր , որ արմաւէ և ուրիշ զանազան սերմերէ կը հանուէր (Ղևտ. Ժ. 9. ԱԹագ. Ա. 15) :

Շատ անգամ խնջոյից ատեն հիւրերն օծելու համար մեծագին իւզեր կը գործածուէին (Սաղմ. ԻԳ. 5. ԽԵ. 7. Ամսիւս. Զ. 6) : Այսպէս անգամ մը Քրիստոս ի նշան մեծարանաց հացկերոյթի մը ատեն օծուեցաւ (Մատթ. ԻԶ. 7) : Օծողը շիշը կոտրեց . ասկէ կը հասկցուի թէ շիշին բերանը կնքուած էր՝ ցուցնելու համար թէ յատուկ գուրսէն բերուած մաքուր օծանելիք էր (Մարկ. ԺԴ. 3) :

Գլխաւոր ճաշն իրիկունն արևը մտած և մութը կոխած ատենը կ'ըլլար . ուստի և տանը մէջ ան ատենը վառուած ճրագներուն լոյսը և ընտանեաց մէջ եղած ուրախութիւնը երկնից մէջ ըլլալու երջանկութեան խորհրդաւոր նշան էին . ինչպէս որ « արտաքին (դուրսի) խաւարն » ալ դատապարտելոց թշուառութիւնը կը նշանակէր (Մատթ. Ը. 12) :

Հռամայեցւոց Պաղեստինու տիրելէն առաջ , յայտնի չէ . թէ Հրեայք ինչ հարկ կը վճարէին : Հրեայ թագաւորաց

առանձն թագաւորին եկամուտը կը բաղկանար ըստ մասին ընծաներէ (Ա թագ . ժ . 27 . ժԶ . 20 . Բ Մնաց . ժէ . 5) . ըստ մասին՝ ժառանգուած կամ դրաւուած երկիրներուն , այգիներուն և հօտերուն արդիւնքէն (Ա թագ . ԻԱ . 7 . Գ թագ . ԻԱ . 15 , 16 . Ա Մնաց . Իէ . 28 . Բ Մնաց . ԻԶ . 10 . ԼԲ . 28 , 29) . ըստ մասին տուրքերէ որ հաւանականաբար ժողովրդեան հունտերուն , այգիներուն և հօտերուն առասնորդէն էին (Ա թագ . Ը . 15) . ըստ մասին յաղթուած ազգերուն հարկէն (Բ Մնաց . Իէ . 5) , և ըստ մասին՝ տէրութեան մէջ առուտուր ընող վաճառականաց տուած մաքսէն (Գ թագ . ժ . 15 . Եզր . Դ . 13 . 20) : Առ երկու տեսակ տուրքն ալ , այսինքն՝ հարկ և մաքս , առնելը՝ Պարսից և Ասորեստանեաց օրէնքն էր , և վերջին առանձները Հրէից մէջ անոնցմէ մտաւ :

Հրէաստան Հռոմայեցւոց տէրութեան անցնելէն անմիջապէս ետքը՝ աշխարհագիր մը եղաւ ուր իւրաքանչիւր քաղաքացւոյ անունն ու ստացուածքը գրի առնուեցաւ , և առ աշխարհագրին համեմատ « տուրք » կամ « հարկ » անուամբ մարդահարկ դրուեցաւ : Իւրաքանչիւր քաղքի կառավարութիւնը ժողովրդեան վրայ այս հարկը կը դնէր : Աս մարդահարկը Հրէաստանի մէջ երկպառակութեան , և քանի մը անգամ ապստամբութեանց պատճառ եղաւ (Գործ . Ե . 37) : Հրեայք մեր Տէրը փորձելով հարցուցին անոր թէ Աս մարդահարկը « տա՞նք թէ չտանք » (Մարկ . ժԲ . 14) : Մարդահարկին համար կը տրուէր դենար (հռոմայեցի դրամ) . եթէ հարկ տուողն ուրիշ դահեկան ունէր , լրմափոխներուն (ստակ փոխողներուն) տանելով անիկա դենարի կը փոխէր , քանզի Հռոմայեցւոց դանձը հռոմայեցի դահեկանէ ուրիշ դրամ չէր ընդունէր : Աս մարդահարկէն զատ՝ երկրին մէջ մտած և ելած վաճառքներուն համար ալ մաքս կ'առնուէր (Մատթ . Թ . 9) : Մաքսն օրէնքով կտրուած էր , և Տէրութեան կողմէն շահադէտ մարդոց վարձու կը տրուէր . առնք ստակն իրենց ծառաներուն ձեռօքը կը ժողովէին : Նոր Կտակարանին մէջ մաքսը վարձու բռնողները՝ Մաքսապետ (Ղուկ .

ժԹ . 2) , հաւաքիչները Մաքսաւոր կոչուած են , Այոպէս մաքսերը վարձելու դրութիւնը հարստահարութիւններ ընելու առիթ էր Մաքսապետաց և Մաքսաւորաց (Ղուկ . Գ . 12 , 13 . ԺԸ . 11 . ժԹ . 8) , որոնք ընդհանրապէս անձնատէր , շահատէր մարդիկ էին :

Հրէից ուրիշ մէկ հարկն ալ Մովսէսի օրէնքին պահանջած կէս սիկղն էր (ԵԼ . Լ . 13) , զոր ամէն Հրեայ Տաճարին գանձատանը հատուցանելու պարտական էր : Բոլոր Հրէեայք , Պաղեստինէն դուրս ընակողներն անգամ , աս տուրքը հրէական դրամով կը հատուցանէին : Ստակ փոխողները որ Տաճարին մէջ կը նստէին՝ աս վաղեմի հարկին համար յոյն և հռոմայեցի դրամները փոխելով՝ հրէական գրամ կու տային ժողովրդեան (Մատթ . ԻԱ . 12 . Յովհ . Բ . 15) : Այս տուրքն իբր Աստուծոյ հատուցուած նուէր կը համարուէր (ԵԼ . Լ . 11—13) . ասիկա ակնարկեց մեր Տէրը , երբ Պետրոսին ըսաւ թէ թագաւորաց որդիքը հարկէ ազատ են . այսինքն՝ ըսել ուղեց թէ քանի որ աս տուրքն Աստուծոյ կը տրուի , ինք Աստուծոյ Որդին ըլլալով՝ անիկա վճարելու պարտքէն ազատ է (Մատթ . ժԷ . 23—26) :

Նոր Կտակարանին մէջ յիշուած դրամները հետևեալներն են .

Լուամայ (Մարկ . ժԲ . 4?) . արժէքն է երկու փարայէն քիչ պակաս .

Նաքարակիտ (Մարկ . ժԲ . 4?) , 2 լուամայ . արժէքը չորս փարայէն քիչ պակաս .

Դանկ (Մատթ . ժ . 29) , 4 նաքարակիտ . արժէքը 15 փարա :

Դահեկան (Մատթ . ԻԲ . 19) , 10 դանկ . արժէքը 3 շուրուշ 30 փարա .

Երկդրամեան (Մատթ . ժԷ . 23) , 2 դահեկան . արժէքը 7 շուրուշ 20 փարա .

Վատեր (Մատթ . ժԷ . 26) , 2 երկդրամեան . արժէքը 15 շուրուշ .

Մնաս (Ղուկ . ժԹ . 13) , 100 դահեկան . արժէքը 375 շուրուշ :

Հին Կտակարանին մէջ, մինչև Եզրասայ ժամանակը կամ մինչև Հրէից Բարելոնի գերութենէն դառնալը՝ դրամի, այսինքն՝ վրան դրոշմ կամ պատկեր ունեցող դահեկանի յիշատակութիւն չկայ: Եզրի Բ. 69 և Նեեմեայ Է. 70—72 դրամ թարգմանուած բառը Բնագրին մէջ Տարի է, որ պարսկական դրամի մը անուն էր, և զոր Հրեայք հաւանականաբար Բարելոնի մէջ գործածել սովոր էին: Մակարայեցի իշխանաց օրովը Հրեայք սիկլ և կէս սիկլ անուամբ իրենց յատուկ դրամներն ունեցան: Գերութենէն առաջ Հրեայք ալ ուրիշ հին ազգաց պէս ոսկին և արծաթին իբրև դրամ կամ իբրև փոխանակութեան միջոց կը գործածէին, բայց կու տային և կ'առնէին կշռով ոչ հատով իբրև կարծ և կոխուած դահեկան: Այսպէս Ծընընդոց ԻԳ. 16. յիշուած է թէ «Արրահամ կշռեց արծաթը, ու տուաւ Եփրոնին, ինչպէս որ անիկա Քետին որդւոցը առջևը խօսեր էր. այսինքն՝ չորս հարիւր սիկլ արծաթ՝ վաճառականներուն մէջ անցած գնով»:

Հրէից մէջ գործածուած կշիռներն են՝

Կերատ (ԵԼ. Ը. 13. Ղևտ. ԻԷ. 25), որ գրեթէ 1/4 տրամի հաւասար էր.

Պէգա (ԵԼ. ԼԸ. 26). 10 կերատ. իբր 2 1/2 տրամ.

Սիկլ (ԵԼ. Լ. 13), 2 պէգա իբր 4, 86/100 տրամ.

Մնաս (բաղդատէ Գ թագ. Ժ. 17. Բ Խնաց. Թ. 16 ինչեա), այսինքն՝ 100 սիկլ. իբր 1 քաշ (օխ) և 86, 1/10 տրամ.

Տաղանդ (ԵԼ. ԻԵ. 39. Գ թագ. Ի. 39), այսինքն՝ 30 մնաս որ 36 քաշ 183 տրամի հաւասար էր:

Այս կշիռներուն համեմատ առնուած ոսկւոյ կամ արծաթոյ այլևայլ մասերուն արժէքը հոս կը նշանակենք.

Մէկ կերատ արծաթին արժէքն էր իբր 26 փարա.

Մէկ սիկլ արծաթինը՝ 13 զուրուշ.

Մէկ մնաս արծաթինը՝ 1,300 զուրուշ.

Մէկ տաղանդ արծաթինը՝ 39,000 զուրուշ.

Մէկ սիկլ ոսկւոյն արժէքն էր 208 զուրուշ.

Մէկ տաղանդ ոսկւոյնը՝ 624,000 զուրուշ:

Պէտք է յիշել հոս որ հին ատենները սակին և արծաթը հիմակուընէ տւելի նուազ ըլլալով՝ անոնց արժէքն ալ համեմատութեամբ այժմու եղածէն աւելի բարձր էր : Ուստի մէկ սիկղ արծաթով կերակրոյ կամ ուրիշ պիտոյից վերաբերեալ վաճառք մը հաւանականաբար 10 անգամ աւելի քանակութեամբ կ'առնուէր ան ատենը : Սըրբարանին սիկղը խօսքէն հաւանականաբար կը հասկցուի կշիռներուն բուն չափը . և ասոր ճիշդ օրինակը , որուն հետ ուրիշ կշիռներ պիտի բաղդատուէին կամ փորձուէին՝ նախ ձողովքի խորանին մէջ պահուեցաւ , յետոյ Ցաճարին մէջ , ուստի և Սըրբարանին սիկղը ըսելով կ'իմացուի ճիշդ կամ անխարդախ սիկղ : Երբ Հին կտակարանը հատով արծաթի կամ ոսկւոյ յիշատակութիւն կ'ընէ , հաւանականաբար սիկղի մը կշիռ ունեցող ոսկւոյ կամ արծաթի կտոր կ'իմանայ : Այսպէս երեսուն արծաթը , զոր Յուդա իւր վարդապետը քահանայապետներուն մատնելու համար իբր վարձք ընդունեցաւ՝ 3) սիկղ ըլլալով , 390 ղուրուշ էր , և ճիշդ այն գինն է զոր Մովսէսի օրէնքը կը պահանջէր որ գերի մը սպաննող անասնոյ մը տէրը նոյն գերւոյն համար վճարէր (տես Եւ . ԻԱ . 32) : Նոյնպէս հաւանականաբար սիկղ էր և 1,248.000 ղուրուշ արժէք ունէր ան 6000 ոսկին զոր Նէեման Ասորի ուզեց տալ Եղիսէի , երբ Մարգարէն անիկա իր բորոտութենէն բուժեց : Հոն յիշուած տասը տաղանդ արծաթն ալ 390,000 ղուրուշէ աւելի կ'ընէր : Եղիսէ մերժեց աս փորձիչ ընծան , բայց անոր արծաթասէր ծառան իւր տիրոջը երկիւղածութիւնը յիմարութիւն համարելով՝ այն գումարէն մաս մը իրեն համար խնդրեց , և առաւ երկու տաղանդ արծաթ կամ 760 լիբա : Աս ստակներուն արժէքը գիտնալը Սուրբ Գրոց շատ խօսքերուն լոյս կու տայ : Այսպէս 100 դահեկան , այսինքն՝ իբր 375 ղուրուշ , պարտքի համար իւր ծառայակիցը բանտարկել տուող ծառան՝ իր տիրոջը պարտական էր 10,000 տաղանդ որ , արծաթ ալ ըլլար , 390 միլիոն ղուրուշի կը հասնէր , և տէրն անոր այս ահագին գումարը ներած էր (Մատթ . ԺԸ . 23-35) :

Հին Հրէից մէջ երկայնութեան , և , թէ հեղուկներու և

Թէ Հաստատուն մարմնոց համար, քանակութեան չափերը հետեւեալներն էին .

Ուղուկ (ԵԼ . ԻԵ . 25), չորս մասնաչափ, որ այժմու փոքր կանգնոյ (Կնդնոյ) մը 14'100 մասին հաւասար էր .

Թիզ (ԵԼ . ԻԸ . 16), 3 Ուղուկ . հաւասար այժմու 43/100 կանգնոյ .

Կանգուն (Ծննդ . Զ . 15), 2 Թիզ . հաւասար 86'100 այժմու կանգնոյ .

Գրկաչափ (Գործ . ԻԷ . 28), 4 կանգուն . հաւասար 3, 46/100 այժմու կանգնոյ .

Եղեկիէլի եղէզը (Եղեկ . Խ . 3—5), 6 կանգուն . հաւասար 5, 18'100 այժմու կանգնոյ .

Ասպարէզ (Ղուկ . ԻԴ . 13), 400 կանգուն . հաւասար 345,64/100 այժմու կանգնոյ .

Շարաթ օրուան ճամբայ (Գործ . Ա . 12), 5 ասպարէզ . հաւասար 1728 1/5 այժմու կանգնոյ .

Մղոն (Մատթ . Ե . 41), 10 ասպարէզ . հաւասար 3,456 2/5 այժմու կանգնոյ .

Մէկ օրուան ճամբայ, 24 մղոն, որ հաւասար էր 82,953 3/5 այժմու կանգնոյ :

Կը կարծուի թէ: Շարաթ օրուան ճամբան կը նշանակէ՝ Հրէից Եգիպտոսէն դէպ 'ի քանան երթալու ատենն անապատին մէջ ժողովրդեան բանակին վերջին ծայրերուն ու Ցապանակին մէջտեղի հեռաւորութիւնը : Քանակին այն ծայրերը գտնուող Խորայելացիք երկրպագութեան համար ստիպուած էին շարաթ օրեր այն ճամբան քալել, ուստի և անոնց նոյն սուրբ օրուան մէջ այնչափ ճամբայ միայն երթալ հրամայուած էր :

Հեղուկներու չափերն էին՝

Ճաշակ (Ղևտ . ԺԴ . 10) . հաւասար 100 տրամի .

Հիմէն (ԵԼ . Լ . 24), 12 ճաշակ . հաւասար 3 քաշի .

Մար (Գ Թագ . Է . 26), 6 հիմէն, իբր 18 քաշ .

Քոռ (Եոսյ . Ե . 10), 10 մար, իբր 180 քաշ :

Հաստատուն կամ պինդ մարմնոց չափերն էին՝

Կապիճ (Դ Թագ . Զ . 25), 1 քաշի հաւասար .

Գրիւ (Մատթ. ժԳ. 33), 6 կապիճ, իրր 6 քաշ.

Արդու (Եզեկ. ԽԵ. 11), 3 գրիւ, իրր 18 քաշ.

Օմեր (ԵԼ. ժԶ. 36), արդուին տասներորդ մասը, իրր 1 քաշ 320 տրամ.

Քու (Թուոց ժԱ. 32), 10 արդու, իրր 180 քաշ:

Աս չափերուն տեղեկութիւնն ալ կրնայ Սուրբ Գրոց շատ տեղերուն լոյս տալ. զոր օրինակ՝ Եսայեայ մէջ (Ե. 8—10) ըսուած է թէ Աստուած ժլատ և յափշտակող մարդիկ պիտի պատժէ՝ անոնց երկիրներն այնպէս անպըտուղ ընելով որ «Տասը լծուաբ այգին՝ մէկ խաբ պիտի տայ, ու մէկ խաբ սերմը մէկ խաբ պիտի տայ». այսինքն արտավար (Կեօնի-ժ) մը երկիրը 18 քաշ գինի միայն պիտի տայ, և արտէ մը հնձուած բերքը՝ սերմանուած ցորենին մէկ տասներորդը միայն պիտի ըլլայ:

Հրեայք տարին հաշուելու երկու կերպ ունէին: Մէկ կերպին նայելով՝ տարին կը սկսէր Գարնան: Աս Սրբազան համարուած տարւոյն առաջին ամիսն էր՝ Ապրիլ (ԵԼ. ժԳ. 4), որ կը սկսէր այժմու Մարտ ամսոյն վերջին կիսուն, կամ՝ Ապրիլի առաջին կիսուն մէջ պատահող, այսինքն՝ գարնան գիշերահաւասարին ամենէն մօտ, նոր լուսնէն: Աս ամսոյն մէջն էր որ Իսրայելացիք Եգիպտոսէն ելան. վասն որոյ և Աստուած պատուիրեց որ այն ըլլայ Հրէից մեծ տօնը. Պասեք կամ Զատիկ, աս ամսոյն 14 ին կը սկսէր (ՂԼտ. ԻԳ. 5):

Հաշուելու միւս կերպին նայելով՝ Քաղաքային համարուած տարին կը սկսէր Աշնան: Սրբազան տարւոյն Եօթներորդ ամիսը՝ Քաղաքայնոյն Առաջին Ամիսն էր, և կը պատահէր այժմու Սեպտեմբերի կէսէն մինչև Հոկտեմբերի կէսը տևող միջոցին: Երկրին հանգչելուն համար Շաբաթական կամ Հանգստութեան տարին, ինչպէս նաև Յորեկանը, աս ամսով կը սկսէր (ՂԼտ. ԻԵ. 8, 9): Հրէից Քաղաքեան մեծ օրը կը պատահէր աս ամսոյն 10 ին (ՂԼտ. ԻԳ. 27). դարձեալ ուրիշ մեծ տօն մը, այն է՝ Տաղաւարահարաց տօնը, նոյն ամսոյն 15 ին (ՂԼտ. ԻԳ. 34):

Տարին կը բաժնուէր 12 լուսնական ամիս . ասոնց վրայ կ'աւելնար երեքտասաներորդ ամիս մը , ե՛րբ որ հարկ կ'ըլլար տարեգլուխը բերել բուն ժամանակին , ասինքն՝ Գարնան գիշերահաւասարին . և աս աւելեաց ամիսը կը պատահէր 19 տարուան մէջ եօթն անգամ :

Հրէից մէջ օրն ալ կրկին էր՝ Բնական և Քաղաքային : Բնական օրը կամ ցորեկն արևին ծագելէն մինչև մարը մտնելու միջոցն էր , և (գերութենէն ետքը) տասուերկու անհաւասար ժամերու բաժնուեցաւ : Իսկ Քաղաքային օրը որ առհասարակ գործածական էր՝ կը հաշուուէր երեկոյէ երեկոյ , և ասով կը տարբերէր Հռոմայեցւոց օրէն որ , ըստ արդի Եւրոպական հաշնի , կէս գիշերէ կէս գիշեր էր , և կը բաժնուէր երկու հաւասար մասերու , այն է՝ տուընջեան և գիշերոյ :

Ցորեկը տասուերկու ժամ կը բաժնուէր . երրորդ , վեցերորդ և իններորդ ժամերն Աստուածային հրապարակական պաշտաման նուիրուած էին : Աս բաժանումը Հրէից մէջ տակաւին կը պահուի : Գարձեալ ցորեկը շատ հին ատեններ , և մինչև Բարեւոյնի գերութիւնը , կը բաժնուէր չեռեռու մասերուն .

Արևագալ .

Առաւօտ կամ Այգ .

Յօթածամ՝ որ կէս օրէն երեք ժամ առաջ կը սկսէր ու երեք ժամ կը տւէր .

Միջօրեայ կամ Կէսօր .

Ձովագին ժամանակ՝ որ կէսօրէն երեք ժամ ետքը սկսելով կը տւէր երեք ժամ .

Երեկոյ :

Երբեմն կէսօրէն մինչև արևուն մարը մտած ատենը կը կոչուէր Երեկոյ (իրիկուն), և կը բաժնուէր երկու մաս , և այնպէս կ'ըլլար կրկին երեկոյ կամ իրիկուններ . ասոր համար է որ Հին Կտակարանին մէջ "Իրիկունան գէմ" թարգմանուած խօսքին տեղ՝ Եբրայերէն բնագիրը կ'ըսէ՝ "Իրիկուններուն մէջտեղը" (Եւ . ԺԲ . 6 . Ղևտ . ԻԳ . 5) :

Գիշերը շատ հին ատեններ Պահ կոչուած երեք մասե-

բու բաժնուած էր . Առաջին պահ՝ արևը մտնելէն մինչև կէս գիշեր (Ողբ . Բ . 19), Միջին պահ՝ կէս գիշերէն մինչև երեք ժամ ետքը (Դատ . Է . 19), և Առաւօտեան պահ՝ միջին պահուն վերջացած ժամանակէն մինչև արևուն ծագելը (Ել . ԺԴ . 24) : Բայց մեր Փրկչին ատենը, Հռոմայեցւոց սովորութեանը համեմատ, գիշերը չորս պահերու բաժնուած էր, և իւրաքանչիւր պահ երեք ժամ էր (Մարկ ԺԳ . 35) . առաջինը կը կոչուէր Երեկոյ, երկրորդը՝ կէս գիշեր . երրորդը՝ Հաւախօս (Մատթ . ԻԶ . 34), և չորրորդն՝ Առաւօտ :

Վերոյիշեալ տեղեկութեանց նայելով՝ Սուրբ Գրոց այլև այլ խօսքերը կը լուսաւորուին : Զօր օրինակ՝ Պասեքատօնի ժամանակին վրայ տրուած տեղեկութենէն կը հասկըցուի թէ Բրիստոսի խաչելութեան օրը վեց ժամէն մինչև իններորդ ժամ եղած խաւարումը՝ բնական խաւարում մը չէր կրնար ըլլալ . քանզի այն խաչելութեան ժամանակն, այսինքն՝ Զատիկի կամ Պասեքի տօնը, Ապիպ ամսոյն 14 ին, այսինքն լուսնի լրման ատենը պատահելով, լուսինը չէր կրնար այն ատեն արեգական ու երկրի մէջ տեղը գտնուած ըլլալ որ արևը խափանէր :

Ժամերու վրայ տրուած տեղեկութենէն կը տեսնուի թէ Բրիստոսի իններորդ ժամուն բարձրաձայն աղաղակելով հոգին աւանդած, այսինքն՝ « Իր անձը մեղաց համար զոհ քրած » ատենը՝ երեկոյեան պաշտաման, կամ սովորական զոհին մատուցուելու ժամանակն էր : Նոյն տեղեկութիւնները կը մեկնեն նաև այն պատասխանը, զոր Պետրոս Պենտեկոստէի օրը զանազան լեզուներ խօսող աշակերտաց համար՝ « Անոնք նոր գինիով լեցուեր են » ըսողներուն տուալ ըսելով . « Դեռ օրուան երբորդ ժամն է » (Գործ . Բ - 15) . քանզի երրորդ ժամն, ինչպէս վերն ըսուեցաւ, առաւօտեան պաշտաման ատենն էր, և Հրեայք այն ժամանակէն առաջ ոչ կ'ուտէին և ոչ կ'ըմպէին : Յովհաննու սա խօսքին համար ալ թէ Պիղատոս Յիսուսը դուրս հանեց և ժողովրդեան ցուցուց վեցերորդ ժամուն (Յովհ . ԺԹ . 14)՝ կրնանք հաւանականաբար ըսել թէ Աւետարանիչը կը խօսի ըսա

սովորութեան Հռոմայեցւոց որոնք օրը կէս գիշերէն կը հաշուէին . մինչդեռ Մարկոս՝ Հրէից սովորութեանը համեմատ հաշուելով կ'ընէ թէ Երբորդ ժամ էր երբ Յիսուս խաչը հանուեցաւ (Մարկ . ԺԵ . 25) : Հրէից հաշուին նայելով՝ Երբորդ ժամը Հռոմայեցւոց Իննեւորդ ժամն էր , այսինքն՝ Պիղատոսին Յիսուսը ժողովողեան ցուցնելէն (ըստ Յովհաննու Հռոմայեցւոց հաշուին վեցերորդ ժամէն) երեք ժամ ետքը : Այսպէս կը տեսնուի որ Յովհաննէս և Մարկոս համաձայն են , տարբերութիւնը միայն հաշուելու կերպին մէջն է : Գիշերուան շրջանը պահուն , այսինքն՝ Արևագալին էր որ Յիսուս ծովուն վըսյէն քալելով աշակերտներուն եկաւ . ուստի յայտնի է թէ բոլոր գիշերն աղօթքով անցուցած էր (Մարկ . 2 . 48) : Իր տիրոջը եկած ժամանակը , երկրորդ կամ երրորդ պահուն , արթուն գտնուող ծառային մեծ գովեստ կամ երանի տրուելուն պատճառն ալ այն էր , որ անիկա այսպէս ընելով գրեթէ բոլոր գիշերն արթուն կեցած էր (Ղուկ . ԺԲ . 38) :

Սա ալ պէտք է գիտնալ որ Հրեայք և ուրիշ Արևելեան ազգեր՝ ընդհանրապէս օրուան , կամ որ և է ժամանակի միջոցի մէկ մասին վըսյ այնպէս կը խօսին , իբր թէ այն մասը՝ յիշեալ միջոցին ամբողջը եղած ըլլար : Այսպէս Յիսուս իրեն համար ըսաւ թէ " Երբորդ օրը յարութիւն պիտի առնէ " (Մարկ . Ժ . 34) . և երբ Յովնանին օրինակը բերելով իմացուց թէ՛ գերեզման պիտի մտնէ , ըսաւ . " Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս սրտին մէջ երեք օր ու երեք գիշեր " (Մատթ . ԺԲ . 40) : Արդ յայտնի է թէ ըստ ճիշդ հաշուի Յիսուս ամբողջ օր ու կէս միայն գերեզմանին մէջ մնաց . այսինքն՝ Ուրբաթ օրն արևը մը տած ատենէն մինչև Կիրակի առտուան արշալոյսը . բայց վերոյիշեալ սովորութեան նայելով յայտնի է թէ , թէպէտև " Երեք օր " և " Երեք գիշեր " խօսքերը կը նշանակեն երեք ցորեկ և երեք գիշեր , այսինքն՝ երեք ամբողջ օր , սակայն Գրիստոս որ այլ և այլ մասերու բաժնուած երեք օրուան մէյմէկ մասը , այն է՝ Ուրբաթին իրիկունը , Շաբաթին ամբողջ օրը և Կիրակուան առտուն գերեզմա-

նին մէջ կեցաւ, նոյն սովորութեան համեմատ օրերու մասերն ալ մէյմէկ ամբողջ օր հաշուելով՝ կրնար ըսել թէ « Երբոր օրը յարութիւն պիտի առնէ », և թէ՛ « Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս որտին մէջ երէտ օր -- երէտ քէյք », այսինքն՝ երեք օր :

Հրեայք ուրիշ շատ սովորութիւններ ունէին, որոնց վերայ հոս հարեւանցի կերպով միայն կրնանք խօսիլ : Զոր օրինակ . Տաղաւարահարաց տօնին՝ ժողովուրդը (« տօնին վերջի մեծ օրը ») ջուր կը հանէր Սելովամի աւազանէն որ Տաճարին մօտ ապառաժէ մը կը բխէր : Աս ջուրին մէկ մասը կը խմէր ժողովուրդը ցնծութեան ձայներով՝ Եսայեայ սա խօսքը երգելով թէ՛ « Ուրախութեամբ ջուր պիտի քաշէք փրկութեան ազրիւրներէն » (Եսայ . ՃԲ . 3), մնացորդը երեկոյեան զոհին վրայ կը թափուէր : Հաւանականաբար առ սովորութիւնը կ'ակնարկէր մեր Տէրոյն խօսքը որ Յովհ . Է . 37 . յիշուած է :

Զատկի տօնին ատենները Երուսաղեմի բնակիչք յատուկ սենեակներ կը պատրաստէին որոնց մէջ որ և իցէ օտարական մը կրնար տօնը կատարել . ըստ այսմ՝ Գրիտոս Պետրոսն ու Յովհաննէսը նոյն նպատակին համար այսպէս պատրաստուած սենեակ մը գանելու զրկեց (Մարկ . ՃԴ . 12—16) :

Հիներուն մէջ նաև կնքելու վերաբերեալ շատ սովորութիւններ կային : Կնիքը հասարակօրէն մատանւոյ ձևով էր . ասոր վրայ տիրոջն անունը փորագրուած կ'ըլլար : Կնքելը կնքուած իրը զգուշութեամբ կամ գաղտնի պահելու համար էր (Յօր . ՃԴ . 17 . Եսայ . ԻԹ . 11 . Դան . Զ . 17) . դարձեալ մուրհակներու կամ գրուածոց վաւերական ըլլալը կը ցուցնէր (Նէեմ . Թ . 38 . Եսթ . Ը . 8) . երբեմն ալ կը ցուցնէր թէ կնքուած իրը կնքոյն տիրոջն է (Հնամ . Դ . 11 . Բ Տիմ . Բ . 19 . Յայտ . Է . 2 , 3) :

Հին շուրջ մէջ տղաք նախ առանձին կերպով որդեգիր կ'ընդունէին . յետոյ որդեգրութիւնը Կառավարութեան վաւերացնելովը հրապարակաւ կը հաստատուէր . և այս վերջին կերպով որդեգրուած անձինք իրենց հայրազրին ժա-

ուսնդները կ'ըլլային : Ուստի ֆրիստոնէից համար ըսուած է (Հռոմ. Ը . 15 . 23) թէ " Որդեգրութեան հոգին առաւ " են , սակայն կը սպասեն իրենց որդեգրութեանը , այսինքն՝ իրենց մարմիններուն ազատութեանը , այն է՝ որդեգրութեան 'ի դործ դրուելուն , կամ , ինչպէ՞ս ըսինք : հրապարակաւ և 'ի պաշտօնէ ճանչցուելուն , և ասիկա պիտի կատարուի Ցերոջը գալստեան ատենը :

Մեր Ցերոջը ժամանակը Պաղեստինու թագաւորները սովոր էին Հռոմ երթալ իրենց իշխանութեան հաստատութեանը համար հրաման կամ ուրիշ շնորհք մը կայսրէն և Եբրահիուտէն ընդունելու . Մեծն Հերովդէս , անոր որդիքն ալ , աս պատճառաւ Հռոմ գացին : Ուստի (Ղուկ . ԺԹ . 12—27) " Ազնուական մարդ մը հեռու երկիր գնաց իրեն թագաւորութիւն առնելու և դառնալու " , այլովքըն հանդերձ , ըսելով՝ մեր Ցերոջը զրուցած առակն այն ասենուան սովորութեան համեմատ ըլլալով , Աւետարանին ճշմարտութեանը գէթ անուղղակի ապացոյց մը կ'ընծայէ :

Հին ատենները երբ տէրութեան դէմ յանցաւոր ամբաստանուած անձ մը գատաստանի կը մատնուէր , գատաւորները քուէով կու տային իրենց վճիռները . անոնց մէջէն ամբաստանելոյն ազատութիւնն ուզողները՝ քուէտուփին մէջ ճերմակ խիճ , դատապարտութիւնն ուզողներն ալ սև խիճ կը նետէին : Ուստի Յայտ . Բ . 17 . ըսուած է թէ մեր Ցերը ճերմակ խիճ մը պիտի տայ անոր որ կը յաղթէ :

Խաչելութիւնը ոչ թէ շրէից , այլ Հռոմայեցւոց պատիժ էր . անոնց մէջ ալ գերեաց կամ այնպիսի անձանց համար էր միայն՝ զորոնք չարաչար խայտառակել որոշուած էր : Հռոմայեցի մը երբէք չէր կրնար այն կերպով պատժուիլ : Այսպէս ֆրիստոս " Հեթանոսներուն մատնուեցաւ " , և իր մահուան ատենը "անօրէններու հետ սեպուեցաւ" (Մատթ . Ի . 19 . Ղուկ . ԻԲ . 37 Եսայ . ԾԳ . 12) :

Նախնի շրեայք միշտ իրենց զաւկներուն արուեստ մը կը սորվեցնէին . հարուստներն անգամ ասիկա կ'ընէին , որպէս զի , եթէ զաւկները ձախորդութեան մէջ իյ-

նան , անոնք իրենց ապրուստը հազարու միջոց մը ունենան ' Ըստ այոմ Պօղոս Առաքեալ որ ուսումն և գաղութեան մէջ կրթուած էր՝ նաև "արհեստով վրանագործ" էր (Գործ . թԸ . 3) :

Հրեայք իրարու հանդիպած առնն՝ ողջոյն ապուռ համար սովորութիւն ունէին իրար համբարել (Ծննդ . ԻԷ . 26 . ԵԼ . Դ . 27 . Ա թագ . ժ . 1 . Սաղմ . Բ . 12 . Գործ . Ի . 37) և շատ ուրիշ քաղաքավարական կերպեր գործածել . ուստի և ստիպողական գործով զբաղեալ մարդիկ ճամբան կ'արգելուէին ուրիշի ողջոյն տալու (Դ թագ . Դ . 29 . Ղուկ . ժ . 4) : Անոնց սովորական բարեք՝ "Խնդաղութիւն քեզի" խօսքն էր (Դատ . ժԹ . 20) . բաց ասկէ ուրիշ ձևեր ալ կը յիշուին (Հռութ . Բ . 4 . Գ . 10 . Ա թագ . ԻԵ , 6 . Սաղմ . ՃԻԹ . 8) :

Մեծամեծաց այցելութեան գացող անձինք սովորաբար ընծայ կը տանէին (Առակ . ժԸ . 16) . Թագաւորներն ու իշխաններն ալ 'ի նշան՝ պատուոյ ընծաներ կու տային (Եսթ . Ը . 15) , և ընծայ տրուած հանդերձ մը չհագնելը՝ զայն տուողին մեծ նախատինք կը համարուէր (Մատթ . ԻԲ . 11 , 12) :

Հին ատենները քաղաքներու մէջ հիմակուան պէս պանդոկներ չկային . ուստի երբ ճամբորդները քաղաք մը կամ գեղ մը կը հասնէին , փողոցը և քաղքին գրանը քով կը սպասէին , մինչև որ տուն մը հրաւիրուէին (Ծննդ . ժԹ . 1 , 2 . Դատ . ժԹ . 15—21) : Մեր Յերոջը ժամանակը կային իջևաններ որոնց մէջ ճամբորդներուն հանգրստեանը համար պատրաստ սենեակներ կը գտնուէին ; բայց ամէն իջևոր կամ հիւր իր կերակուրը , վառելիքն ու անկողինը ինք կը հոգար : Քրիստոս ալ այսպիսի իջևանի մը գոմին մէջ ծնաւ , քանզի բուն իջևանին մէջ իր ծնողացը համար սենեակ մը չգտնուեցաւ : Ճամբորդներու համար աս տեսակ իջևաններ հաւանականաբար Նահապետաց ժամանակն ալ ճամբաներու վրայ կը գտնուէին (Ծննդ . ԻԲ . 27) :

Սոյ նշան էր հանդերձները պատուել , քուրճ հագնել ,

երբեմն երեսը ծածկել, երբեմն ալ գլխուն վրայ հող ցանել (Բ Թագ. Գ. 31. ՃԹ. 4. Յոր. Բ. 12) : Երբ մէկը կը մեռնէր, ազգականներն իրենց հանդերձները վերէն վար կը պատուէին. հանդիսատեսք ալ նոյնը կ'ընէին ըստ մասին, և վարձու բռնուած լալական կանայք իրենց ողբերոզն ու երգերովը մեռնողին տէրերուն կակիծը ստեպ ստեպ կ'աւելցնէին (Երեմ. Թ. 17, 18. Մատթ. Թ. 23. Գործ. Թ. 39) :

Մեռեալ մարմինները զմռսել Արևելեան ազգաց մէջ ընդհանուր սովորութիւն էր. սակայն Հրէից մէջ զմասելն ուրիշ բան չէր բայց անուշահոտ բաղադրութիւններով դիակն օծել ու կտաւով պատել : Թաղումը կամ յուղարկաւորութիւնը մեռնողին մահուընէն ետքը քսան և չորս ժամու մէջ կը կատարուէր : Մեռելը անտուկ չէր դրուէր, այլ ստքէն մինչև գլուխը պատանքի մէջ առնուելով, վրան բաց դագաղի մը մէջ կը դրուէր, և այնպէս գերեզման կը տարուէր : Աղքատաց համար հասարակաց գերեզմաննոց կար. բայց Թագաւորներ և շատ ընտանիք ալ իրենց համար յատուկ շիրիմներ կ'ունենային : Գերեզմանին վրայ կատարուելու յատուկ արարողութիւն չկար. միայն Թագման օրը սգալի հանդէսով մը կը վերջանար : Գերեզմաններն ընդհանրապէս քաղքէն քիչ մը հեռուն ժայռերու մէջ փորուած քարանձաւներ էին, ուրսնց մէջ կարգաւ խորշեր կը փորէին, և ամէն մէկ խորշի մէջ մէյակ մարմին կը դրուէր :

Հին արտաքին պատմութեանց տեղեկութիւն ունենալն ալ շատ անգամ Աստուածաշունչը հասկնալու կ'օգնէ : Զորօրինակ՝ Ծննդ. ԽՁ. 34, ըսուած է Թէ "Ամէն հովիւ Եգիպտացւոց առջևը գարշելի է" : Հովիւներու դէմ Եգիպտացւոց ունեցած զզուանքը կը ցուցնէ Թէ ինչու համար Իսրայելացւոց ընկալութեան համար (Եգիպտոսի մէկ ծայրը եղող) Գեսեմ երկիրը տրուեցաւ, և ասով անոնք Եգիպտացւոց հետ աւելի ներքին կապակցութիւն մը ունենալէ ազատ պահուեցան :

Եգիպտացւոց մէջ Հովիւներու դէմ այսպիսի զզուանք

մը բլլալուն իրողութիւնը՝ թէ Եգիպտոսի զազեմի յիշատակարաններուն վրայ գծուած պատկերներէն, և թէ հին պատմաց խօսքերէն յայտնի է : Արդարև Եգիպտացիք ալ ունէին ոչխարաց և արջառոց խումբեր . ունէին նաև մարդիկ կամ արածողներ որ ասոնց հոգ կը տանէին (Եննդ . ԽԵ . 6 . ԵԼ . Թ . 19 , 20) : Բայց ան հին յիշատակարաններուն վրայ փորագրուած հովիւներն իբրև տըգեղ և ժանտատեսիլ ցեղ մը կը ցոլցուին : Հերոդոտոս և ուրիշ հին պատմիչք ալ կը վկայեն թէ Հովուաց ցեղը Եգիպտացւոց մէջ ժողովրդեան ամենէն ստորին և նուաստ կարգէն կը համարուէր : Հովուութիւն ընող ցեղերուն սու վորութեանց մեծ մասն ալ Եգիպտացւոց կրօնական գաղափարներուն շատ հակառակ էր : Չորօրինակ՝ Եբրայեցիք արջառոյ , այսինքն՝ կովու և եզան , միտ ուտելու սովոր էին , ուր Եգիպտացւոց համար կովը նուիրական անասուն էր . անոր կաթը կ'ուտէին , բայց կովը միրթել մեծ յանցանք համարուած էր : Եբրայեցիք ցուլ , այծ և ոչխար կը զոհէին . Եգիպտացիք ալ արդարև աս անասուններէն կը զոհէին , բայց զանոնք ընտրելու համար Եբրայեցւոց կանոններէն շատ տարբեր կանոններ ունէին : Շատ հաւանական է թէ զոհի անասուններն ընտրելու տարբեր կանոններուն նկատմամբ էր Եբրայեցւոց ընելու զոհին համար Մովսէսի (ԵԼ . Ը . 26) առ Փարաւոն ըսած խօսքը թէ՝ ' Եգիպտացւոց գարշելի սեպուածները Տէրու ջը մեր Աստուծոյն զոհ պիտի մատուցանենք ' . ըսել կ'ուզէր թէ՝ Մեր զոհ մատուցանելու անասուններն ըստ Եգիպտացւոց գաղափարին անարժան են զոհուելու : Հաւանական է նաև թէ հովուութիւն ընող ցեղերուն թափառական կեանք վարելն ու յափշտակութիւններ ընելը՝ վերոյիշեալ պատճառներուն համար Եգիպտացւոց անոնց դէմ ունեցած զղուանքը կ'աւելցնէր , այնպէս որ կրնար ըսուիլ թէ ' Ամեն հովիւ Եգիպտացւոց առջևը գարշելի է ' : Ոմանք հովիւներու դէմ Եգիպտացւոց ունեցած ատելութիւնն ուրիշ պատճառի մը կու տան , այսինքն՝ այն երկար հարստահարութեան , զոր Եգիպտացիք հովիւ

կոչուած Թագաւորներէն ժամանակաւ կրած էին : Մանեք Թովս անուն շատ հին հեղինակի մը գրած Եգիպտական հին պատմութեան հատակոտորներէն կը տեղեկանանք որ , Քրիստոսէ իբր 2159 տարի առաջ , Արևելքէն Հովիւներու խումբ մը Եգիպտոսի վրայ արշաւելով , հոն շատ տարիներ անգթութեամբ տիրելէ ետքը , վերին Եգիպտոսի Թագաւորներէն դուրս վաճառեցան ու Պաղեստին քաշուեցան : Այս դէպքը որ Յովսեփայ Եգիպտոսի մէջ պաշտօնի հասնելէն առաջ պատահած է՝ Թերևս կրնայ մեկնել Թէ Պաղեստինու սահմանէն ելլելով Եգիպտոս եկող Իսրայէլացիք ինչո՛ւ համար Եգիպտացիներէն կասկածով ընդունուեցան , և Թէ ինչո՛ւ համար անոնց արուեստը որ վրանաբնակ հովուութիւն էր՝ գարշելի էր Եգիպտացւոց : Արրահամու Եգիպտոս երթալուն պատմութեանը մէջ՝ հոն հովուներու դէմ այսպիսի դժկամակութեան զգացում մը չի յիշուիր : Արդարև , եթէ Հովիւ կոչուած Թագաւորներուն Եգիպտոս գալուն վրայով վերոյիշեալ Մանեթովսեան Թուականը ճշմարիտ է , Արրահամու Եգիպտոս եկած ատենը հոն դեռ Հովիւ Թագաւորները կ'իշխէին , ուստի և Արրահամու դէմ որ հովիւ էր՝ ամենեւին դժկամակութիւն յայտնող մը չէր կրնար ըլլալ :

Դարձեալ , Թէ՛ Բ Օրինաց ԻԸ . գլխուն և Թէ Երուսաղեմի կործանմանը համար Քրիստոսի ըրած մարգարէութեան ամենէն աղէկ մեկնութիւնը՝ Յովսեփոսի գրած Հըրէական պատերազմներուն պատմութեանը մէջ կը գտնուի : Յովսեփոս ազգաւ Հրեայ և Քրիստոսէ իբր 37 տարի ետքը Երուսաղէմ ծնած ըլլալով՝ նոյն քաղքին պաշարմանն ականատես էր : Անոր պատմութեանը ճշմարտութիւնը Թէ՛ ժամանակակից պատմիչներէ և Թէ Յիսոս Վայսեր վըկայութեամբը հաստատուած է :

Մատթէոսի Ք . Գլխոյն 2 և 3 համարները կը պարզուին սա իրողութեամբ որ , այն ատեն Արևելքի մէջ ընդհանուր խօսք մը կար Թէ մեծ Թագաւոր մը պիտի երևնայ և աշխարհք պիտի կառավարէ : Անուանի հին պատմիչները Տակիտոս և Սուետոնիոս կը յիշեն Թէ այն ատեն

ներն այսպիսի ընդհանուր ակնկալութիւն մը կար :

Ղուկ . ԻԱ . 20 , 21 , մեր Փրկիչն իր աշակերտները կը զգուշացնէ թէ " Երբոր տեսնեն Երուսաղէմը չորս կողմէն զօրքերով պատած . . . լեռները փախչին " . և արտաքին պատմութիւնը կ'ըսէ թէ Քրիստոնեայք աս խրատէն օգուտ քաղելով , Հռոմայեցի զօրքը դեռ քաղաքը չպաշարած , Յորդանանու արևելեան կողմը Պելլա կոչուած տեղը քաշուեցան :

Գործոց Թ . 31 , յիշուած խաղաղութեան պատճառը՝ ժամանակակից արտաքին պատմութենէ յայտնի կ'ըլլայ : Եկեղեցւոյն աս խաղաղութեանը պատճառ Պօղոսի դարձը չէր : քանզի Գաղատ . Ա . 18 ին նայելով՝ Հալածման դարերէլուն ժամանակը երեք տարի ետքն էր , այլ՝ վասն զի նոյն ատենը (40 յետ Քրիստոսի) Հռոմայեցի Կայսրը Կալիկուլա կը ջանար իր արձանը Հրէից Յաճարին մէջ Սրբութիւն Սրբութեանց կոչուած տեղը կանգնել տալ : Հրեայք աս վերահաս արբազը թեմէն զարհուրելով՝ իրենց ուշադրութիւնը Քրիստոնեաներէն յիշեալ անհաւոր դէպքին դարձուցին , և այսպէս " Եկեղեցիները խաղաղութիւն ունեցան " :

Գործոց ԺԷ . 16 . ըսուած է թէ Աթէնք " քաղաքը բոլորովին կռապաշտութեան մէջ ընկղմած " էր : Եղիանոս յիշեալ քաղաքը Յունաստանի բազինը կ'անուանէ . և ուրիշ պատմիչ մը , Պաւսանիաս , կը պատմէ թէ մինակ Աթէնքի մէջ աւելի կուռք կար քան թէ Յունաստանի մնացեալ բոլոր մասերուն մէջ :

Փելիքսի և Պօղոսի մէջտեղ եղած խօսակցութեան (Գործ . ԻԴ . 25) պատմութիւնը հարևանցի կարդացողն անգամ՝ Առաքելոյն հաւատարմութիւնն ու քաղաքավարութիւնը կը տեսնէ : Բայց ասոնք աւելի բացայայտ կ'ըլլան Յովնպոսի պատմութեամբը , որ կ'ըսէ թէ՝ Փելիքս բռնաւորութեան կողմանէ երևելի էր , և թէ Եղեսիոյ (ա . - Հսոյի) վերջին թագաւորին կնոջը Դրուսիդայի հետ շնութեամբ յաճ էր : Պօղոս ոչ ինք վինք արդարացուց , ոչ ալ Փելիքսի " - - - - - անաց արժանի մոլութիւնները

կշտամբեց, այլ արդարութեան և ժուժկալութեան առաքինութիւններուն, և հանդերձեալ դատաստանին ահաւոր ճշմարտութեանը վրայ խօսեցաւ: Փեղիքս անշուշտ հասկցաւ թէ Պօղոսի այն խօսքերն իրեն դէմ յանդիմանութիւն էին, բայց և այնպէս անոր խօսքերուն մէջ քաղաքավարութեան դէմ բառ մը կամ որ և իցէ բողոքելու կէտ մը չէր կրնար գտնել:

Սուրբ Գիորքը մեկնելու մասին Եկեղեցական պատմութիւնն ալ կարեւորութիւն ունի. քանզի կը ցուցնէ թէ Աստուածաշունչ Գրոց իմաստն հասկնալու յատուկ դիւրութիւն ունեցող նախնի բարեպաշտ մարդիկ՝ Սուրբ Գրոց խօսքերն այնպէս մեկնած են, ինչպէս որ անոնք հիւմա կը մեկնուին:

Զմիւռնիոյ Քրիստոնեաներէն գրուած, և Պողիկարպոսի մարտիրոսութեան պատմութիւնը պարունակող ընդարձակ նամակի մը մէջ՝ Հրէից սա ամբաստանութեանը դէմ՝ թէ Քրիստոնեայք փոխանակ Քրիստոսի՝ Պողիկարպոսի երկրպագութիւն ընելու հակամէտ են՝ հետեւեալ պատասխանը տրուած է. «Այդ անհնար է. քանզի երկրպագութեան առարկայ միայն Քրիստոս կրնայ ըլլալ և է. մենք անոր միայն երկրպագութիւն կ'ընենք. մարտիրոսները երախտագիտութեան և սիրոյ միայն առարկաներ են»: Առաջին երեք դարերու հարբ Քրիստոսի նկատմամբ նոյն վարդապետութիւնը կ'ընէին. «Ասոր համար», կ'ըսէ Եւսեբիոս, «սկիզբէն հաւատացեալ մարդոց ձեռքով գրքուած երգերն ու սաղմոսները՝ Քրիստոսի գովեստները կը հռչակեն, և Աստուածութիւնն անոր կ'ընծայեն»:

Սուրբ Գիորքը քննելու համար բոլոր մարդոց պարտաւորութիւնը՝ նոյն Սուրբ Գրոց այլ և այլ համարներէն յայտնի կը տեսնուի. բայց օգտակար է գիտնալ թէ Եկեղեցւոյ նախնի մատենագիրներն աս պարտաւորութեան ազդու կերպով ջատագով են: Ոսկերերան, Հերոնիմոս, Որօզինէս և Օգոստինոս, միարանութեամբ կը հաստատեն մանաւանդ թէ իրենց ժամանակներուն չարութիւնը՝ «Յ պատճառը Սուրբ Գրոց վրայ տգիտութիւն»:

Հերետիկոսութեանց պատմութիւնն ալ Սուրբ Գրքը մեկնելու մասին քիչ կարևոր չէ : Հերետիկոսութեանց նորագոյն ժամանակներու ծնունդը ըլլալէն կը հետեցնենք թէ անոնք Սուրբ Գրոց սորվեցուցածին համաձայն չեն . քանզի Քրիստոսի ժամանակին մօտ դարերուն մէջ ապրող մարդիկ, որոնք Սուրբ Գրոց բուն իմաստը հասկնալու աւելի զիւրութիւն կամ պատեհութիւն ունէին, այնպիսի վարդապետութիւններ չունէին և չէին սորվեցուցած : Չոր օրինակ՝ Հռոմայ Եպիսկոպոսին, այն է՝ Պապին, իբրև տիեզերական եպիսկոպոս, առած տիտղոսները՝ եօթներորդ դարուն սկիզբէն (607) առաջ չենք գտներ : Անկանոն գրոց և Առլկաթա կոչուած Լատիներէն թարգմանութեան կանոնական հեղինակութիւն տրուիլը, այսինքն՝ իբրև աստուածաշունչ մատենագրութիւն համարուիլը, և աւանդութեանց իբրև հաւատոյ մասունք ընդունուիլը՝ վեշտասաներորդ դարուն Տրիտենդեան ժողովին մէջ եղան : Ռամկօրէն, այսինքն՝ աշխարհիկ լեզուները մերժելով՝ եկեղեցական պաշտամանց համար միայն Լատիներէն լեզուն գործածելը՝ եօթներորդ դարուն սկսած է : Գոյափոխութեան վարդապետութիւնը նախ ութերորդ դարուն երևցաւ : Տէրունական Ընթրիքը կրճատելով՝ աշխարհականները մէկ տեսակով միայն հաղորդելը՝ մետասաներորդ դարուն հաստատութիւն գտաւ : Եօթն խորհրդոց վարդապետութիւնը նախ երկոտասաներորդ դարուն հնարուեցաւ : Ապաշխարանաց վարձուց արժանի առաքինութիւն ըլլալուն և ննջեցելոց համար աղօթք ընելու, ինչպէս նաև քաւարանի վարդապետութիւնները՝ եօթներորդ դարէն առաջ չկային, և մինչև 1140 իբրև հաւատոյ վարդապետութիւն հաստատուած չէին : Երկոտասաներորդ դարէն առաջ Պապերը չէին պնդեր թէ ներողութիւն տալու իշխանութիւն ունին : Ականջալուր խոստովանութիւնը նախ երեքտասաներորդ դարուն Լատերանու չորրորդ ժողովքէն պատուիրուեցաւ, Եկեղեցականաց ամսուրութիւնը, իբրև ընդհանուր և պարտաւորիչ օրէնք, չորրորդ դարուն վերջերը սահմանուեցաւ, և Գրիգոր Ե .

դայն մետասաներորդ դարուն վերջերը նորէն հաստատեց : Ժամանակագրութեան կամ դէպքերու ժամանակագրական կարգին և անոնց մէջ եղած ժամանակի միջոցներուն տեղեկութիւն ունենալը՝ նոյնպէս շատ անգամ Սուրբ Գրքոց խօսքերը հասկնալու, կամ անոնց զօրութիւնը լիովին իմանալու համար կարևոր է : Զոր օրինակ . Պօղոսի առ Տիմոթէոս ուղղած առաջին թուղթը նոյն Առաքելոյն դարձէն գրեթէ երեսուն տարի ետքը գրուած է : Այն թուղթին մէջ (Գլ . Ա . 15) Առաքելոյն սա խոստովանութիւնը թէ Մեղաւորներուն գլուխը ինքն է, մեծ կարևորութիւն ունի, քանզի ասով կը տեսնենք որ Առաքեալն իր դարձին վրայ այնչափ տարի անցնելէն, ինք ալ սրբութեան մէջ այնքան յառաջանալէն ետքը, տակաւին իր մեղանշականութեանը վրայ խորին զգացում ունենալէ դադրած չէր :

Առաքելոց թուղթերուն մէջ ամենէն հինը՝ Թեսաղոնիկեցւոց գրուած առաջին թուղթն է . և աս թուղթին մէջ մասնաւոր պատուէր տրուած է որ նոյնը բոլոր "սուրբ եղբայրներուն կարդացուի" (Ա Թես . Ե . 27) : Այսպիսի պատուէր մը կը յուշեն թէ աս կարգի գրութիւններն ըսկիզբէն ոչ թէ առանձնականաց ուղղուած նամակներ, այլ առ ընդհանուր հաւատացեալս գրուած կանոնական թուղթեր համարուած էին :

Պետրոս Առաքելոյն սա պատուէրը՝ "Թագաւորը պատուեցէք" (Ա Պետ . Բ . 17), աւելի կարևորութիւն կ'ունենայ, երբ մտածելու ըլլանք թէ աս առաքելական պատուէրին տրուած ատենը՝ Հռովմէական աշխարհին թագաւորն էր Ներոն բռնաւոր կայսրի :

Ծննդոց Ե և ԺԱ գլուխները քննելով՝ կը տեսնենք թէ Ղամբք իբր 56 տարի Ադամայ հետ ժամանակակից էր, իբր 95 տարի ալ՝ Սեմայ հետ, Սեմ ալ մինչև Աբրահամու մեռնիլն՝ անոր հետ ժամանակակից էր, և թէ այսպէս Աբրահամ Ղամբայ և Սեմայ միջոցաւ միայն կրնար արարչագործութեան պատմութիւնն Ադամէն առած ըլլալ. ասկէ կը տեսնենք նաև թէ ան ատեն Աստուածային պատ-

գտնեալ յազգ անգիր աւանդել ո՛րչափ դիւրին էր :

Նոյնպէս շատ յայտնի և լուսաւոր կերպով կը տեսնենք նաև մարդուս բնածին ապականութիւնը, երբ կը տեղեկանանք թէ Ագամայ ժամանակակիցները դեռ չմեռած՝ աւելն մարմին իւր ճամբան այնպէս ապականած էր, որ Աստուած մարդը ստեղծելուն վրայ զղջաց, և թէ՛ Նոյ նահապետին մեռնելէն ետքը դեռ հարիւր տարի չանցած՝ Սոդոմի և Գոմորի բնակիչները բոլորովին չարացած էին :

Դարձեալ ժամանակագրութենէ տեղեկանալով որ Դաւիթ յիսուն տարուան էր, երբ իրեն ամենէն շատ անարգանք բերող մեղքը գործեց, ազգու կերպով կը զգանք թէ ո՛րչափ ոաստիկ է չար կիրքի մը զօրութիւնը, և թէ կըրօնական երկայն փորձառութիւնն անգամ մարդ մը մեղքէ ազատ պահելու բաւական չէ :

Ճամանակագրութենէ կը տեղեկանանք թէ Սողոմոնի ԱստարովԹայ համար շինած տեղերը մինչև Յովսիայի օրերը, այսինքն՝ Սողոմոնէն մինչև 350 տարի ետքը մնացին : Ասկէ կը սորվինք որ, թէև հաւանականաբար Սողոմոն դեռ չմեռած իր գործած մեղքերուն վրայ ապաշխարեց, անոր մեղքին հետևութիւնն անկէ ետքը մինչև քանի մը ցեղ ազգեցութիւն ունեցաւ : Յես Դ Թագ. ԻԳ. 13 :

Բոլոր ազգաց մէջ որոշուած է երևելի թուական մը, որմէ իւրաքանչիւր ազգ իր ժամանակագրական հաշիւները կը սկսի : Նախնի Հռոմայեցիք կը հաշուէին Հռոմ քաղքին շինութենէն, որ պատահեցաւ Քրիստոսի ծնունդէն 753 տարի առաջ, և կը գործածէին սա նշանագիրները . յԱ. Շ. Գ. որ ըսել է՝ յԱԴ շինութեան Իտալի : Յոյնք կը հաշուէին Ողիմպիադներով, որոնք չորեքամեայ շրջաններ էին, այսինքն՝ ամէն չորս տարին մէկ Ողիմպիադ էր : Առաջին Ողիմպիադը Քրիստոսէ 776 տարի առաջ կը պատահի, այսինքն՝ Հրէից գերութենէն իբր 170 տարի յառաջ, Ողիմպի ասենք : Քրիստոսեայ ազգեր Քրիստոսի ծնունդէն կը հաշուեն, և իրենց թուականը կը նշանակեն այսպէս՝ յԱ. Յ. որ յԱԴ Յետո՛ւ ըսել է : Ասոնք կը հաշուեն նաև Արարչութենէն կամ Ադամին ստեղծումէն, որ ընդհան-

բազեո ֆրիստոսէ 4004 տարի առաջ պատահած կը կարծուի : Իսկ արդի Յոյնք և Հայք իրենց հաշիւը Եօթանասնից Թարգմանութեան վրայ հիմնելով՝ Արարչութիւնը կը դնեն ֆրիստոսի ծննդէնէն 5508 տարի առաջ : Արարչութենէ հաշուուած Թուականը կը նշանակուի այսպէս՝ յԱ . Աշ . , որ կը կարգացուի յԱմի Աշխարհի :

Հրեայք ալ Արարչութենէն կը հաշուեն , զոր ֆրիստոսի ծննդէնէն 3760 տարի առաջ կը դնեն : Ոմանք կ'ըսեն թէ Հրեայք , ըստ իրենց հաշուին , Արարչութեան և Քրիստոսի ծննդեան մէջտեղ եղած միջոցը դիտմամբ կարճեցուցած են , ցուցնելու համար թէ , Քրիստոսի ծնած Թուականին , Մեսիայի գալստեանը համար սահմանեալ ժամանակը դեռ լրացած չէր : Ասիկա հաստատելու համար արդարև զօրաւոր փաստեր չկան : Տիտ . Գ . 9 էն օսմիայն յայտնի է որ նոյն Առաքելոց ժամանակէն ազգաբանութեանց նկատմամբ վէճեր կային : Հրեայք երբեմն նաև ջրհեղեղէն , երբեմն Եգիպտոսի ելքէն , երբեմն ալ Սողոմոնեան Տաճարին շինութենէն կը հաշուեն :

Մահմետականք կը հաշուեն Հիբրդէն , այսինքն՝ Մահմետի Մետինէ փախչելէն , որ պատահեցաւ յԱ . Տ . 622 : Բայց որովհետև ասոնց տարին ֆրիստոնեայ ազգաց տարիէն 11 օր աւելի կարճ է , երկու դէպքի մէջտեղ եղած ժամանակի բաժանումները , այսինքն՝ տարիներ և ամիսներ , հարկաւ ըստ հաշուին Մահմետականաց աւելի շատ կ'ըլլան քան թէ ըստ հաշուին ֆրիստոնէից :

Հրէից պատմութեան առաջին ժամանակաբաժինը կը սկսի արարչութենէն և մինչև ջրհեղեղ կը վերջանայ : Աօբաժնին տևողութիւնը Սուրբ Գիորգէն միայն կրնայ ստուգուիլ՝ գումարելով այն տարիները զոր իւրաքանչիւր նահապետ իւր անդրանիկ որդին ծնած ատենն ունէր (Տեա՛ Ծննդ . Ե .) : Հրէից Եբրայական բնագրին համեմատ՝ աս գումարը կ'ըլլայ 1656 , ըստ Եօթանասնից՝ 2262 , իսկ ըստ Սամարացոց բնագրին՝ 1307 տարի , ինչպէս որ հետևեալ աղիւսակին մէջ կը տեսնուի :

ԱՐՐԱՊՈՒԹՅՆԻՆ ՄԻՆՁՆԻ ԶՐԿՆՂԵՂ

Ըստ Ըստ Ըստ
Երբայականին Եօթանասուինց Սամարացւոց

Ազգամ	130	230	130	ապրիլ	Սենթ Ջեյմս	Ծն	Ե	3	
Սեթ	105	205	105	"	"	"	"	6	
Ենով	90	190	90	"	"	"	"	9	
Կայնան	70	170	70	"	"	"	"	12	
Մարգրինէ	65	165	65	"	"	"	"	15	
Յարեդ	162	162	62	"	"	"	"	18	
Ենով	65	165	65	"	"	"	"	21	
Մաթուսաղա	187	187	67	"	"	"	"	25	
Ղամիք	182	188	53	"	"	"	"	28	
Նայ	600	600	600	ապրիլ	էր ջրհեղեղին	ասենք	Ծն	Ե	11
	1656	2262*	1307						

Ուստի ջրհեղեղը պատահեցաւ քրիտոսն առաջ 2348 ին՝ ըստ Երբայական ընտրին և 3246 ին՝ ըստ Եօթանասուինց :

* Եօթնագոս առ ժամանակաբաժնին ապրիլները 2256 ի կը հանէ՝ Ղամիքայ տարիներն ըստ Երբայականին 182 հաշուելով, Թէպէտ ուրիշ տեղեր Եօթանասուինց հետ կը մտաբանի :

Հրէից պատմութեան երկրորդ ժամանակաշաժիւրը կը սկսի ջրհեղեղէն և կը տևէ մինչև Իսրայէլացւոց Եգիպտոսէն ելլելը : Ասոր ալ տևողութիւնը նոյնպէս Սուրբ Գիրքէն կընայ ասուգուիլ : Յետ երես 244 :

Աս ժամանակագրական հաշիւներուն մէջ՝ Եօթանասնից Թարգմանութեանն ու Եբրայական բնագրին մէջտեղ եղած տարբերութեանց ուստի ծագիլը վերի աղիւսակներէն յայտնի է : Եօթանասունը ջրհեղեղէն առաջ վեց՝ Նահապետներու , մինչև անոնց որդեծնութիւնը , 100 ական տարի աւելի կ'ընծայեն , վեց տարի ալ Ղամբայ տարիներուն զլայ կ'աւելցնեն : Նոյնպէս ջրհեղեղէն ետքը աւաջին վեց Նահապետաց տարիներուն զլայ նոյն Եօթանասունը 100 ական տարի կ'աւելցնեն : Գարձեալ Ղուկասու բրածին պէս (Ղուկ . Գ . 36)՝ Եօթանասունը պայնան մը աւելցնելով , մինչև Սաղայի ծնանիլն՝ անոր 130 տարի կու տան . Սերուգն ալ փոխանակ 30 տարուան գնելու՝ 80 տարեկան կը դնեն : Ուստի ջրհեղեղէն մինչև Աբրահամու ժամանակը Եբրայականին և Եօթանասնից մէջտեղ եղած տարբերութիւնը 780 տարի է :

Սամարացւոց բնագիրն առ ժամանակաբաժնին մէջ Եօթանասնից հետ միաբան է , միայն պայնանի անունը չկայ , ուստի և առ բաժնին տարիներուն գումարն ըստ Սամարացւոց 130 տարի պակաս կ'ելլէ :

Դիւրին չէ որոշել թէ առ ժամանակագրական հաշիւներէն ո՛րն աւելի ընտրելի է : Շատերը կը կարծեն թէ երկայն ժամանակագրութիւնն , այսինքն՝ այն որ Եօթանասնից Թարգմանութեան վրայ հիմնուած է , աւելի արժանի .

նաև որ Ծննդոց ժԱ գլխոյն 26 համարին մէջ Թարայի համար՝ « Եւ Թարա Եօթանասուն տարի ապրեցաւ և ծընաւ Ա » խօսքը ոչ թէ Աբրահամու , այլ անոր հետ յիշուած միւս եղբայրներէն մէկուն նկատմամբ ըսուած է :

(բ) Գաղատացւոց Գ . 17 էն կ'երևայ որ 430 տարին կը ձգուի Աբրահամու կոչումէն մինչև օրէնքին տրուիլը որ Սինա լեռան վրայ Եգիպտոսէ ելքէն ետքը եղաւ : Ուստի և Իորայեւացւոց Եգիպտոսի մէջ բնակած ժամանակին տեւողութիւնը . գտնելու համար՝ պէտք է որ 430 տարիէն հանենք այն միջոցը որ Աբրահամու կոչմանն ու Յակոբայ Եգիպտոս իջնելուն մէջտեղն է , այսինքն 215 տարի :

է վստահութեան՝ և առ այս հետևեալ պատճառներն յառաջ կը բերեն :

1. Նահապետաց իրենց անդրանիկներուն ծննդեան ատենն ունեցած տարիքը՝ մարդկային կենաց երթալով նուազող երկայնութեանն աւելի համեմատ կու գայ ըստ երկայն քան թէ ըստ կարճ ժամանակագրութեան :

2. Ըստ Եօթանասնից Թարգմանութեան և ըստ Սամարացոց ընագրին , ջրհեղեղին ու Աբրահամու ծննդեան մէջտեղի տարիներն աւելի շատ ըլլալով (իբր 1100)՝ այս միջոցը պատմական իրողութեանց աւելի յարմար կու գայ քան Եբրայական ընագրին ցուցուցած կարճ ժամանակը որ գրեթէ 350 տարի է : Նոյի սերունդին այնչափ բազմանալով : Հնդկատանէն և Ասորեստանէն մինչև Եթովպիա , Եգիպտոս և Յունաստան օժուելուն և տարածուելուն , Բաբելոնի , Նինուէի և Եգիպտոսի կարգաւորեալ և հզօր տէրութեանց , և քանանու փոքր ցեղերուն տեղւոյն նախնի բնակիչները վաճառելով հոն հաստատուելուն համար՝ այնչափ կարճ ժամանակ մը բաւական չի կրնար համարուիլ :

Կարճ , այսինքն՝ Եբրայական ընագրին վրայ հիմնուած ժամանակագրութեան կողմնակիցներն ալ սա գլխաւոր պատճառներն յառաջ կը բերեն :

1. Հրէից առ հատարակ նախանձաւոր զգուշութեամբ Եբրայական ընագիրն առանց փոփոխութեան պահելը :

2. Աստուածային յայտնեալ ճշմարտութեանց նախնի դարուց մէջապահով և արագ ցեղէ ցեղ հասնելուն համար՝ կարճ ժամանակագրութեան ընծայած դիւրութիւնները :

3. Իսկ այն առարկութեան՝ թէ ջրհեղեղին և Աբրահամու ծննդեան մէջտեղ եղած ժամանակի միջոցն , ըստ Եբրայականին , այնչափ կարճ է որ մարդիկ այնչափ ատենուան մէջ , այսինքն՝ ջրհեղեղէն մինչև Աբրահամ , չէին կրնար այն աստիճան բազմացած ըլլալ որչափ կը տեսնենք որ իրօք բազմացած են , կարճ ժամանակագրութեան պաշտպանները պատասխան կու տան թէ՛ Արդի փորձառութիւնն սա առարկութիւնը լիովին կը լուծէ :

քանզի հիմա ալ նորոգ բնակութիւն հաստատուած տեղերու մէջ մարդոց արագ և ուժով աճին՝ ապացուցուած իրողութիւն մըն է : Դարձեալ եթէ ենթադրելու ըլլանք թէ մարդիկ այն ժամանակը կանուխ կ'ամուսնանային, այն բազմամարդութիւնը կրնայ եղած ըլլալ նաև ըստ Եբրայական ժամանակագրութեան, քանզի Եբրայական բնագիրն ալ որ ժամանակին միջոցը կարճ կը դնէ՝ նոյնչափ ազգ կամ սերունդ յառաջ կը բերէ որչափ Եօթանոնիցը. ուստի և այն կարճ ժամանակին մէջ սերունդներու այնչափ շատութիւնն ալ անկարելի չէր :

Հրէից պատմութեան երրորդ ժամանակաբաժինը Իսրայելացւոց Եգիպտոսէ ելած ժամանակէն սկսելով՝ մինչև Սողոմոնեան Ցաճարին շինութիւնը կը հասնի : Գ թագաւորութեանց մէջ (Գլ. 2 . 1), ըստ Եբրայական բնագրին, ըսուած է թէ այս վերջին դէպքը, այն է՝ առաջին կամ Սողոմոնեան Ցաճարին շինուելու սկսիլը, պատահեցաւ « Իսրայելի որդւոցը Եգիպտոսի երկրէն ելելուն 480 երրորդ տարին . . . երկրորդ ամսուն մէջ », այնպէս որ բովանդակ միջոցը կ'ըլլայ 479 տարի և ամիս մը : Ուստի, ըստ Եբրայական բնագրին, Սողոմոնեան Ցաճարին շինուելու սկսելուն թուականը՝ Քրիստոսէ 1012 տարի առաջ է : Բայց անոնք որ իրենց հաշիւը Եօթանոնից թարգմանութեանը վրայ կը հիմնեն՝ այս բաժնին 601 տարի կուտան : Այս վերջին հաշիւը հաստատուած կը համարուի Պօղոս Առաքելոյն խօսքովը թէ՝ « Եւ անկէ (Քանանացւոց երկիրն Իսրայելացւոց ժառանգութիւն տալէն) ետև չորս հարիւր յիսուն տարիի չափ դատաւորներ տուաւ անոնց (Աստուած) մինչև Սամուէլ մարդարէն » (Գործ . 29 . 20) : Քանզի, եթէ այս 450 տարւոյն վրայ գոնէ 45 տարի ալ աւելցնելու ըլլանք, իբրև միջոց անապատին մէջ եղած ճամբորդութեանն ու Քանանու նուաճուելուն (տես՝ Յես . 27 . 10), դարձեալ 40՝ Սաուղի (Գործ . 29 . 21), 40 ալ Դաւթի թագաւորութեան տարիները (Ա Մնաց . 10 . 27), և Սողոմոնի առաջին երեք տարին, քանզի անոր դահը նոսփելէն մինչև տաճարին հիմնարկութիւնը

այսչափ տարի անցած էր (Գ թագ. Զ. 1), եգիպտոսե ելքէն մինչև Սողոմոնեան Ցաճարին շինութիւնը կառնենանք 578 տարի, որ վերոյիշեալ 601էն 23 տարի պակաս կընէ :

Հրէից պատմութեան չորրորդ ժամանակարածինը կը հասնի՝ յիշեալ Ցաճարին շինութենէն մինչև անոր երկրորդ շինութիւնը, Հրէից Բարեւոնի գերութենէն դառնալէն ետքը : Այս միջոցը կը հաշուուի իբր 476 տարի, և կը գտնուի՝ Յուդայի Թագաւորաց իշխած տարիներն իրարու վրայ գումարելով, ինչպէս որ հետևեալ աղիւստ կին մէջ ցուցուած է :

Սողոմոնի Ցաճարին շինութիւնը քրիստոսէ 1012 տարի առաջ պատահած դնելով, Ցաճարին շինութենէն ետքը՝ Սողոմոնի Թագաւորութեան ժամանակը (անոր ամբողջ Թագաւորութեանը 40 տարիէն 3 ը հանելով որ շինութենէն առաջ են . Գ թագ. յԱ. 42 . Բ Մնաց . Թ. 30) կ'ըլլայ 37 տարի, ուստի և անոր որդւոյն Ռորովամայ Թագաւորութեան սկիզբը կը պատահի ք. ա. 975 ին :

Յարի . ք . ա .

Ռորովամ Թագաւորեց	(Բ Մն . յԲ . 13)	17	975—958 .
Աբիա	(" յԳ . 2)	3	958—955 .
Ասա	(" յԶ . 13)	41	955—914 .
Յովսափաս	(" ի . 31)	25	914—892 .
Յովրամ	(" իԱ . 5)	8	892—885 .
Ոքոզիա	(" իԲ . 2)	1	885—884 .
Գոթողիա	(" իԲ . 12)	6	884—878 .
Յովսա	(" իԳ . 1)	40	878—839 .
Ամասիա	(" իԵ . 1)	29	839—810 .
Ոզիա	(" իԶ . 3)	52	810—758 .
Յովսթամ	(" իԷ . 1)	16	758—742 .
Աքազ	(" իԸ . 1)	16	742—726 .
Եզեկիա	(" իԹ . 1)	29	726—698 .
Մանասէ	(" լԳ . 1)	55	698—643 .
Ամոն	(" լԳ . 21)	2	643—641 .
Յովսիա	(" լԴ . 1)	31	641—610 .
Յովակիմ նիս . ք . զգեր .	(Եբ . իԵ . 1 . 11)	4	610—606 .

Այսպէս գերութիւնը քրիստոսէ 606 տարի առաջ պատահած զնեղով, անոր տևած 70 տարին ալ աս գումարէն հանելով՝ երկրորդ Յաճարին շինուելուն թուականը կ'ըլլայ ք. ա. 536 ին : Աս թուականին ու առաջին Յաճարին շինութեան թուականին, այն է՝ 1012 ին, մէջտեղ եղած միջոցն ալ կ'ըլլայ 476 տարի, ինչպէս որ վերը յիշուեցաւ :

Վերի աղիւսակին մէջ պիտի տեսնուի որ թէպէտ Յովասափատայ թագաւորութիւնը 25 տարի տևած էր, աս տևողութիւնը հաշուուած է միայն 22 տարի, այն է՝ 914—892 ք. ա. : Ասոր պատճառը սա է . Դ թագաւորութեանց Գ. 1 ը՝ Դ թագ. Ը. 16 ին հետ բաղդատելով կը տեսնենք որ Աքայարու որդին Յովրամ՝ Յուդայի թագաւորին Յովսափատայ թագաւորութեան 18 երորդ տարին Իորայէլի վրայ թագաւորել սկսաւ, և 5 տարի ետքը, Յովասափատայ 23 երորդ տարին, անոր որդին Յովրամ կը սկսի իր հօրը Յովսափատայ հետ թագաւորել, ուստի և հարկաւ գոնէ ամբողջ 2 տարի : Ուրիշ տարւոյ մ'ալ հաւանականաբար մէկ մասը, հօրը հետ թագաւորած ըլլալու է : Աս պատճառաւ Յովսափատայ թագաւորութեան ժամանակն՝ անոր 23 երորդ տարին վերջացած, կամ 22 տարի միայն տևած կը համարուի :

Դմանապէս Յովասափատայ որդւոյն Յովրամայ թագաւորութեանը 8 ամեայ ժամանակին տարի մը պակաս տևողութիւն արուած է աղիւսակին մէջ, այն է՝ 892—885 ք. ա. քանզի, թէպէտ թագաւորաց Դ. գիրքին Ը երորդ գլխոյն 16 և 17 երորդ համարներուն մէջ ըսուած է Յուդայի թագաւորին Յովրամայ համար թէ միւս Յովրամայ Իորայէլի թագաւորին 5 երորդ տարին գահը ելաւ և 8 տարի թագաւորեց, նոյն գլխոյն 25 համարին մէջ ըսուած է նաև թէ Իորայէլի Յովրամ թագաւորին 12 երորդ տարին Յուդայի թագաւորին Յովրամայ որդին Ոքոզիա սկսաւ թագաւորել, և ասով Յովրամայ թագաւորութեանը 7 տարի միայն արուած կ'ըլլայ : Այնպէս որ, կամ Ոքոզիա հօրը հետ տարի մը թագաւորեց, և կամ, որ աւելին հաւանական է, հայրը Յովրամ 7 տարի, ուրիշ տարւոյ մըն

ալ մէկ մասը միայն գահակալեց . և պատմիչը էջ 230 յիշուած հաշուելու եղանակին հետեւելով՝ տարւոյն առ մէկ մասն ամբողջի տեղ առնելով , և անիկա 7 ամբողջ տարիներուն հետ հաշուելով՝ 8 տարի կը գնէ : Աղիւսակին ուրիշ մասերուն մէջ ալ ասոր նման պատճառներու համար այսպիսի զեղչումներ եղած են :

Հրէից պատմութեան հինգերորդ ժամանակաբաժինը Յաճարին Երկրորդ շինութենէն մինչև Քրիստոսի ծնունդը կը հասնի : Աս բաժնին տեղուլութիւնը կը ստուգուի այլև այլ աղբիւրներէ , մանաւանդ արտաքին մատենագիրներէ : Աս տեղուլութիւնն ընդհանրապէս 536 կամ 537 տարուան միջոց մը կը կարծուի :

Ապա Հրէից պատմութեան այլև այլ ժամանակաբաժիններն են .

Աղամայ ստեղծումէն կամ Ա-	Ըստ Եբբ .	Ըստ Եօթ .	
բարչութենէն մինչև Զրհեղեղ	1656	. 2262	տարի
Զրհեղեղէն մինչև Ելք	857	. 1632	»
Յեից մինչև Առաջին Յաճարը	479	. 601	»
Առաջին Յաճարէն մինչև Երկրորդը	476	. 476	»
Երկրորդ Յաճարէն մինչև Քրիստոսի			
Ծնունդը	536	. 537 »
		<hr/>	
		4004	. 5508 »

Սուրբ Գրոց շատ խօսքերն ալ բնական պատմութեան այլև այլ ճիւղերուն տեղեկութիւն ունենալով կրնան պարզուիլ : Օրինակի համար՝ Բ Օրինաց ԼԲ գլխոյն 11-13 համարներուն մէջ՝ Աստուծոյ իր ժողովուրդին վրայ ունեցած խնամքն՝ արծուոյն իր ձագերուն տարած խնամոցը կը նմանցուի : Երբ ձագերը թռչելու չափ բաւական կը մեծնան , արծուին իր բոյնը քայքայելով և ջրուելով՝ ձագերը դէպ՛ի մօտակայ լեռը թռչելու կը ստիպէ . ինք ալ անոնց վրայ գրգալով և զանոնք խնամելով՝ անոնց կը սորվեցնէ իրենց թռիկոյնը , զիրենք ուղիղ գրիւք բռնել , և իրենց շարժումներովը զիրենք վարել : Երբ անոնք յոգնին և տկարանան , ինք թռիկոյն տարածելով նորավարժ ձագերը կռնակը կ'առնէ ու անոնց հետ օդին

մէջ կը ալանայ : Անոնց զօրութիւնը զարգացնելու համար շատ անգամ զանոնք վրայէն կը նետէ , և երբ անոնց թւեերը յոգնած կամ թշնամի մը անոնց մտեցած կը տեսնէ , իսկոյն զարմանալի ճարտարութեամբ անոնց տակը մտնելով՝ զանոնք նորէն կը զօրացնէ , կամ իր անձը ձագերուն և անոնց սպառնացող թշնամւոյն մէջ տեղը կը դնէ : Միայն արծուին է որ այս բնական ազդման ձիրքն ունի , և անոր բոլոր գործքերն Աստուծոյ գործողութիւններուն վրայով մեզի խթան և հրահանգութիւն կու տան : Հին և Նոր Եկեղեցւոյ , ինչպէս նաև անհատ քրիստոնէից պատմութեանը մէջ կը տեսնուի որ Աստուած շատ անգամ վելտերու միջոցաւ իր ծառաներն անոնց հանգչած տեղերէն հեռու տեղեր կը նետէ . այսինքն՝ անոնց բոյնը կը քակտէ : Մերթ ուրիշ մարդոց բարի օրինակովը , կամ իր կատարելութիւնները և կամ իր Որդւոյն բնաւորութիւնն ու վարքը ցուցնելով՝ անոնց վրայ կը գրգայ , և մերթ իր խոստումներովը և հազուովն անոնց սիրտերը զօրացնելով՝ անոնց երջանկութիւնը կ'ապահովցնէ :

- Պաղեստինու նման լեռնային երկիրներու մէջ էշն ու ջորին , բնտանեկան պիտոյից մասին , ձիէն աւելի պատուական համարուած էին . բարձր աստիճանի մարդիկ ալ զանոնք կը գործածէին : Աս անասուններն Աբրահամու և Յոբայ հարստութեանցը կարգը կը յիշուին (Ծննդ . ՃԲ . 16 . Յոր . ԽԲ . 12) : Սաւուղի թողը , Մեմփիբոսթէ , և Դաւթի խորհրդականն , Աքիտոփէլ , էշու վրայ կը նստէին : Սունամացի կինն էշուն վրայ համետը դնելով կը հեծնէր ու Կարմեղոս Եղիսէի բնակութեան տեղը կ'երթար (Դ թագ . Դ . 8 . 24) : Սակայն վերջի ատենները , մանաւանդ Սողոմոնի թագաւորութեան ատենէն , ձիուն սէգ և հաստատուն քայլուածքին համար՝ անոր աւելի պատիւ տրուիլ սկսաւ : Նոյն ինքն Սողոմոն իր ասպաստանները շատ գեղեցիկ ձիերով լեցուց . իսկ Բաբելոնի դարձէն ետքը՝ Հրէից մեծամեծներն ըստ մեծի մասին ձիերու կամ ջորիներու վրայ կը հեծնէին , այնպէս որ այնուհետև

հրապարակաւ իշու վրայ հեծած երևնալն՝ աղքատութեան կամ խոնարհութեան նշան կը համարուէր, և քրիստոսի ժամանակն առ հասարակ տիրող գաղափարն առ էր (Յեռ Զաք. Թ. 9, և Մատթ. ԻԱ. 5) :

Երբայց իբր գետին հերկելու համար թէ եղ և թէ էշ կը գործածէին (Ես. Լ. 24. ԼԲ. 20). բայց, որովհետև առ երկու տեսակ անասուններն անհաւասար քալուածք ունին և իրարու հետ չեն միաբանիր, անոնց երկուքը մէկ լուծի լծելն արգելուած էր : Աս արգելքին մէկ նպատակը թերևս ընկերական և կրօնական կենաց մէջ Աստուածապաշտ ու կուսապաշտ մարդոց իրարու հետ հաղորդակցութիւն ընելու անյարմարութիւնն սկնարկել էր . բայց անոր առաջին և գլխաւոր նպատակն էր՝ անասուններն անագորոյն գործածութեան դէմ պաշտպանել :

Յակոբ իւր որդին Իսաքար իշու նմանցնելով՝ 'որ գամբրուն մէջտեղը կը պառկի'՝, այլովքն հանդերձ, անտարակոյս նոյն որդիէն սերելու ցեղին աշխոյժն ու մարմնոյն ուժը, և հանգիստ սիրելն սկնարկել ուզած է (Ծննդ. ԽԹ. 14) : Այն ցեղին պատմութեանը մէջ առ մարգարէութիւնը կատարուեցաւ, քանզի Իսաքար գերութեան լուծը՝ պատերազմէ, և մեղկ հանգիստն իրական ազատութենէ աւելի ընտրելով՝ հետզհետէ, մէկ կողմանէ՝ Փիւնիկեցւոց, միւս կողմանէ՝ Քանանացւոց, հպատակ եղաւ :

Ասորոց երկրին ոչխարներուն դմակն՝ սւրիշ տեղերու ոչխարաց դմակէն մեծ է : Ոչխար մը եթէ 25 քաշ կը կըշուէ, դմակը սովորաբար 6 քաշ կը կշուէ, և կը կարծուի թէ անասնոյն այս մասն՝ անոր ամենէն ազնիւ տեղն է . ուստի և Երբայցեցւոց կրօնական արարողութեանը մէջ քահանային պատուիրուած է որ խոյին ճարպն ու դմակն առնելով Եհովային զոհ մատուցանէ :

Ոչխարն իր ընտանի վիճակին մէջ տկար ու անպաշտպան է . ուստի թէ պաշտպանութեան և թէ սննդեան համար՝ Հովուին խնամոցը կարօտ է : Սուրբ Գրոց մէջ առ անասնոյն իր փարախէն հեռանալով՝ 'ի կորուստ երթալու միտումը՝ շատ տեղ սկնարկուած է (Սաղմ. ԾՃԹ. 176 :

Եսայ . ԾԳ . 6) : Ոչխարներուն վրայ հովուին ունեցած խնամքն , և անոր պաշտպանութեանը տակ անոնց վայելած ապահովութիւնը՝ Յովհաննու ձ . Գլխոյն 2-16 համարներուն մէջ գեղեցիկ կերպով նկարագրուած է :

Առիւծն իր քաջութեանը և ուժոյն կողմանէ անուանի է : Եթէ թշնամեոյ մը առջեւէն փախչելու ստիպուի , կրճնակը չի դարձներ , այլ աչուրները թշնամեոյն տնկած ետ ետ կ'երթայ : Իւր որսն սպաննելէն ետքը՝ կտոր կտոր կ'ընէ և անհնարին արագութեամբ կ'ուտէ (Սաղմ . ձե . 12 . Ովս . ձե . 8) : Առիւծուն կորիւնն ալ ըստ հին բնագիտաց որս ընելով կ'ապրի , և ամայի անապատներէն դուռ ուրեք կը հեռանայ . բայց մեծնալէն ետքը մարդաբնակ տեղերու այցելութիւն ընելով՝ անոնց աւելի ֆիսաս կուտայ : Աս գաղաններուն գտնուած անտառներուն մէկը՝ Յորդանանու ցած եզերքն էր . երբ գետը բոլորտիբը ողողած ատենը՝ շրջակայ անտառներն ալ ջրով կը ծածկէր , ան ատեն բոլոր գաղանները բլուրներուն գլուխները խոյս տալով՝ շատ անգամ մեծամեծ ֆիսասներ կը գործէին (Երեմ . ԽԹ . 19) , այնպէս որ « Առիւծի պէս Յորդանանու ջուրերուն յորդելէն » խօսքը՝ Հրէաստանի մէջ առակ եղած էր : Առիւծուն կատաղի բնաւորութիւնը Սուրբ Գրոց մէջ ակնարկուած է , և միշտ գէշ իմաստով . զորօրինակ՝ Ա Պետրոսի Ե . Գլխոյն 8 համարին մէջ Սատանան առիւծու նմանցուած է . Եկեղեցւոյ թշնամիներն ալ նոյն անուամբ կը նշանակուին (Եսայ . Ե . 29) :

Սաղմ . ՂԲ . 12 ըսուած է թէ « Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի , Լիբանանի եղևինի պէս պիտի մեծնայ » : Աս ծառերուն յատկութիւններն արդարին , այսինքն՝ բարեպաշտ մարդուն , բնաւորութեանն ու օգտակարութեանը շատ գեղեցիկ օրինակներ են : Արմաւենին անտառի կամ արգասաւոր հողի մէջ չի բուսնիր , այլ անապատի մէջ . ուստի բուսած գետինը շատ անգամ չոր և տաք հող է , բայց և այնպէս հոն ծաղկած ըլլալով՝ մօտ տեղեր ջուր գտնուելը ցուցնելով , զայն հեռուէն տեսնող ճամբորդները ջրարբի տեղեր կ'առաջնորդէ : Դարձեալ այս

Ժառն իր գեղեցկութեանը, ուղղորդ և բարձրաբերձ ամսանը և տերեւալից հովանւոյն համար ալ նշանաւոր է : Անոր խիտ տերեւներն ամէն դարու մէջ ուրախութեան և ցնծութեան նշան համարուած են : Անիկա երբէք չի թառաւիր, և անոր վըայ փոշի բնաւ չի նստիր : Ուստի Իսրայելացիք անոր ոստերէն տաղաւարահարաց տօնին տընիկներ կը շինէին (Ղևտ. ԻԳ. 40-43) . Մեսիային հետ Երուսաղէմ մտնող բազմութեան բռնած ճիւղերն՝ արմաւենւոյ ճիւղեր էին (Յովհ. ԺԲ. 13) : Դարձեալ՝ ըսուած է թէ Երկնից փրկեալներուն ձեռքն արմաւենւոյ ճիւղեր կան (Յայտ. Է. 9) : Օգտակարութեան կողմանէ ալ աս ծառին նմանը չկայ . Ասորեստանի բնիկներուն ըսածին նայելով՝ արմաւենին 360 կերպ բաներու կը գործածուի : Հովանին ճամբորդները կը զովացնէ, պտուղը զանոնք կը կազդուրէ . երբ ծարաւէ պասքած են, անիկա ջուր գըտնուած տեղերն անոնց կ'իմացնէ . անոր տերեւները՝ բազմոց, ոստերը՝ ցանկ և պատ, մանրաթելերն ալ չուան շինելու կը գործածուին : Աս ծառին պտուղը մանաւանդ ծերութեան ատենը շատ ազնիւ է, այնպէս որ հարիւրամեան եղած ատենն ալ անկէ սովորաբար շատ ընտիր և գեղեցիկ արմաւ կ'առնուի : Անիկա մի և նոյն արմատէն բազմաթիւ բողբոջներ կ'արձկէ, և արդարեւ այս մեղապարտ աշխարհիս անապատին մէջ գտնուող արդարին խորհրդաւոր նշանն է : Նոյն Սաղմոսին մէջ յիշուած եղևինն ալ շատ գեղեցիկ ծառ է : Աս ծառն արմաւենւոյն պէս ջուրը կը սիրէ և անիկա գտնելու համար իւր արմատները մինչև Ժայռերու պատառուածներուն մէջ կ'արձակէ : Արմաւենւոյ պէս ալ՝ մշտադալար է . ձմեռուան ցուրտին կը դիմանայ ու միշտ տերեւազարդ է : Գեղեն ու տերեւները համեմային են, այնպէս որ "Լիբանանու հօտը" որ ասկէ է՝ անուշութեանը կողմանէ առակ եղած է : Եղևինը սա յատկութիւնն ալ ունի որ մինչև իր ներսի կողմը բոլորովին անապական և անփուտ է . լերանց գլուխներուն զարդ՝ շէնքերու համար ալ շատ պիտանի է : Հազարամեայ ըլլալէն ետքը՝ գլած կամ հետը մէկտեղ գրուած

բաները պահելու զորութիւն ունի : Եղևինն էր որ Տէրու-
ջը տանը դրան գրանդիներուն և ձեղուններուն գեղեց-
կութիւն կու տար : Աս ծառին համար ալ կընանք բոեւ
թէ անյողգողդ և հաստատուն արդարոյ կամ բարեպաշտի
մը բնաւորութեանն ու օգտակարութեանը մէկ գեղեցիկ
խորհրդաւոր նշանն է :

Սուրբ Գիւրքն ընթերցողներուն դիւրութեանը համար՝
նոյն Գրոց մէջ յիշուած այլ և այլ բուսոց մէկ ցանկը հոս
այբուբենի կարգաւ գնել օգտակար կը համարինք :

ԱԼՎՈՒԿ . Այս ծառը կը յիշուի Գ Թագ . Ժ . 11 , 12 .
Բ Մնաց . Բ . 8 . Թ . 10 , 11 . կը կարծուի թէ գեղին կամ
ճերմակ հոտաւէտ փայտ էր , որ հիմա Սանդալ անուամբ
ծանօթ է , և Հնդկաստանի ու Խաղաղական Ովկիանոսի
կղզիներուն մէջ գտնուելով՝ Սուրբ Գրոց մէջ յիշուած
կերպով կը գործածուի :

ԱՆՈՐՃԱԿ . Ընդհանրապէս կը կարծուի որ ձող . ԺԲ .
5 . յիշուած արհիւսի բառով Կողմուր տունկը կը հասկըց-
ուի , որուն՝ պողէն ակորժակ գրգռող բարկ քացխուտ
(Բորլէ) մը կը շինուի :

ԱՂԱՒՆՒՈՅ ԱՂԲ . Աս բառը Դ Թագ . Զ . 25 , հաւա-
նականաբար կը նշանակէ սիսեռն՝ որ Արևելքի մէջ հասա-
րակ ունգ մի է . Արաբերենի մէջ ալ աղաւնոյ աղբ և
սիսեռն՝ մի և նոյն բառով կը նշանակուին : Ոմանք կը կար-
ծեն թէ վերոյիշեալ վկայութեան (Դ Թագ . Զ . 25) մէջ
յիշուած քաղքին պաշարման ատենը սովն այնպէս սաս-
տիկ էր , որ ժողովուրդը ստիպուեցաւ բուն աղաւնոյ
աղբ ուտել :

ԱՆԱՆՈՒՒ . Ասիկա կը յիշուի Մատթ . ԻԳ . 23 . Ղուկ .
ձԱ . 42 : Անուշահոտ խոտ է որ իբր համեմ կերակուր-
ներու մէջ կը գործածուէր :

ԱՐՄԱՒԵՆԻ . Աս ծառին վրայ վերը խօսած ենք : Ասի-
կա Պաղեստին գլխաւորաբար Յորդանանու ձորին մէջ կը
բուսնի . աս պատճառաւ այն ձորին մէջ գտնուող Երե-
քով քաղաքն՝ Արմաւենեաց քաղաք կը կոչուէր (Բ Մնաց .
ԻԸ . 15) , թէպէտ նոյն ծառն ուրիշ շատ տեղեր ալ կը

գտնուէր: Բեթանիա անունը, որ Տուռն արմաւոյ ըսել է, Երուսաղէմի մօտ Ձիթենեաց լերան վրայ եղող գեղի մը տրուած ըլլալով՝ կը ցուցնէ թէ հոն այս ծառն առատակութեամբ կը գտնուէր, ուստի և Քրիստոսի էշով Երուսաղէմ մտած օրը՝ զանիկա դիմաւորելու ելլող Երուսաղէմացիք դիւրութեամբ կրցան այնչափ արմաւենեւոյ սասեր գտնել (Յովհ. ձԲ. 13. տես նաև Նէեմ. Ը. 15):

ԱՐՋՆԻԵՂ. Ասիկա. Ես. ԻԸ. 25. 27 համարներուն մէջ միայն կը յիշուի: Ասոր սերմը սև է, և համեմային ու կծու համ մը կերակուրներուն տալու համար կը գործածուի:

ԲԱՎԼԱՑ. Կը յիշուի Բ Թագ. ձԵ. 28. Եղեկ. Դ. 9: Ասոր տեսակները շատ են, բայց իրարմէ քիչ կը տարբերին:

ԲԵՒԵԿՆՍԻ. Ասիկա որ Ես. Զ. 13. Ովս. Դ. 13. յիշուած է՝ շատ կը մեծնայ և տեսակ մը անուշահոտ իւզ կու տայ որ Բևեկնեւոյ իւզ կը կոչուի:

ԳԻՀԻ. Գ Թագ. ձԹ. 4, 5. Յոր. Լ. 4. Սաղմ. ճԻ. 4 յիշուած է: Աս ծառին փայտը պայծառ բոցով կը վառի և շատ տաքութիւն կու տայ: Արմատը շատ դառն է, և մարդոց յետին կարօտութեան ատենը միայն կ'ուտուի: Արարացիք սոյն արմատը յարգի կը համարին ածուխ շինելու համար: Ոչխարներն ասոր պտուղը կ'ուտեն:

ԳԻՆՁ. Հովանոցաձև տունկ է. պղպեղի հատի չափ, բոլորչի և գորշագոյն սերմ կու տայ: Անուշարարներ և դեղարարներ կը գործածեն ասոր պտուղը, քանզի ստամոքսի օգտակար կը համարուի: Կը յիշուի Ել. ձԶ. 31. Թու. ձԱ. 7, 8:

ԴԻՄԵՆՍԻ. Յիշուած է Յովնան Դ. 6—10: Ասիկա լայն տերևներով, արագ աճող և արևելքի կողմերն ամենուն ծանօթ տունկ է: Բայց ոմանք կը կարծեն թէ Յովնանու մէջ յիշուած տունկը՝ Դժնի կոչուած բոյսն է որ դժմ պէս արագ կ'աճի: Ասկէ ալ տեսակ մը իւզ կը հանուի:

ԵՂԵԻՆ. Աս ծառին վրայ արդէն խօսած ենք, տես էջ 254: Հաւանական է թէ աս բառին Երբայեցերէնը

շատ ընդարձակ նշանակութիւն ունէր, և թէ՛ Ղևա. ՃԴ. 4. 6 յիշուած եղևնափայտը՝ վերոյիշեալ գիհի կոչուած ծառն էր, որ Սինայի անապատներուն մէջ շատ հասարակ է: Այստեղն էլ կոչուածը եղևնին աղանիւ մէկ տեսակն էր:

ԵՂԻԳ. Սրածայր տերևներով, երկայն և բազմայոգ ծղօտներէ բաղկացեալ բարձր տունկ է. կը բուսնի գետերու, առուներու եզերքը և ուրիշ խոնաւ տեղեր: Տիգրիս և Եփրատ գետերուն մէջտեղի ճահիճներուն մէջ առատութեամբ կը գտնուի (Գ Թագ. ՃԴ. 15. Ես. ՃԹ. 6. ԼՁ. 6. Եզեկ. Խ. 5): Ասիկա՝ չափելու, ձուկ որսալու, փոքր տեսակն ալ՝ գիր գրելու կը գործածուէր:

ԵՂՋԻԻՐ (Ղուկ. ՃԵ. 16). Ասոր ծառը միջին մեծութեամբ է, պտուղը 6-8 մատ երկայն և մէկ մատ լայն կ'ըլլայ: Կուտը կարծր, դառն և անպիտան է. բայց կեղևները քաղցր են, և անասուններ, մանաւանդ խոզեր, կերակրելու կը գործածուին: Աղքատներն ալ երբեմն ասիկա կ'ուտեն:

ՉՄՈՒՌՍ. Երկու եբրայեցերէն բառ Սուրբ Գրոց մէջ չմարտնչուի. նախ՝ մարտնչ (Ել. Լ. 23. Սաղմ. ԽԵ. 8 և ուրիշ տեղեր): Կը կարծուի թէ աս համարներուն մէջ չմարտնչը Արարիոյ և Ափրիկէի մէջ բուսող ծառէ մը ելած բժշկական և շատ համեմային, բաւական ալ զրգուիչ խէժն է. գոյնը նախ ճերմակ և իւղային է, և ապա կը կարծրանայ: Յոյնք ասիկա գինեոյ բաղադրութեան համար կը գործածէին: Երկրորդ՝ լոք բառն ալ (Ծննդ. ԼԵ. 25. ԽԳ. 11) չմարտնչուի, Բուն զմուռս Պաղեստինու մէջ շէր գտնուեր, ուստի կը կարծուի թէ աս վերջինն՝ աղանգանոյն ըսուած խէժն է որ Պաղեստինու և Կիպրոս կղզւոյն մէջ գտնուած ծառէ մը կ'ելլէ, և հիմա զլիւսաորապէս իբրև անուշահոտ նիւթ կը գործածուի: Սուրբ Գրոց մէջ յիշուած ուրիշ խէժերը՝ հետեւեալներն են:

Բալսամը (Ծննդ. ԼԵ. 25. Երեմ. Ը. 22): Աս խէժին ծառը Պաղեստինու, Արարիոյ և Ափրիկէի մէջ հասարակ է. անկէ ելած խէժը շատ քիչ, բայց սաստիկ համեմային

և բժշկական է : Պաղեստինու աղնուագոյն բերքերուն մէկը կը համարուէր , և կը գործածուէր մանաւանդ վէրքեր օժեկու :

Խոնկը . Ասիկա խէժ մըն է որ սոխի կոչուած տեսակ մը խունկի ծառէ կ'ելլէ և շատ հոտաւէտ է : Երբայեցիք ասիկա իրենց կրօնական պաշտամանց ատենը իբրև ծխանելիք կը գործածէին , և աղօթքի այլաբանական նշան համարուած էր (Ղևտ . Բ . 2 . Սաղմ . ՃԽԱ . 2 . Յայտ . Ը . 3 , 4) : Ասոր ամենէն ընտիր տեսակն հիմա Հնդկաստանէն կը բերուի :

Հոփի-նիլ (Ծննդ . ԼԷ . 25 . ԽԳ . 11) . Ասիկա ալ տեսակ մը խէժ է որ թերևս Գու կոչուած ծառին հոյզն է :

Սորուի (ԵԼ . Լ . 34) . Աս ալ անտարակոյս խէժի մէկ տեսակն է , բայց ո՛րն ըլլալը հիմա յայտնի չէ : Կը կարծուի թէ ան ատեն զմուսին մէկ ստորին տեսակը ստաշիս կը կոչուէր :

Քուֆուի (ԵԼ . Լ . 34) . Ասիկա ալ զօրաւոր՝ բայց ոչ շատ անուշահոտ խէժ է որ հովանոցաձև ծառէ մը կը ծորէ : և Ելից Լ . 34 հրամայուած բաղադրութեան բաղկացուցիչ մէկ մասն էր : Նոյն Ելից Լ . 34 յիշուած Ել-նիլ որ այն բաղադրութեան մէկ ուրիշ բաղկացուցիչ մասն էր՝ տեսակ մը խեցեմորթէ շինուած անուշահոտ նիւթ էր :

Զոֆու . Ելից ԺԲ . 22 զոֆո թարգմանուած բառը՝ կամ կաքաւախոտն է (սփուլի օրհն) , և կամ անոր նման կակուղ . և աղուամազոտ տերևներով վայրի խոտ մը : Զոպան , ինչ որ է , ջուր բռնելու յատկութիւն ունէր , ուստի և հեղուկներ սրսկելու կը գործածուէր :

Թօփու . Ասիկա Պաղեստինու մէջ ընտանի ծառ է (Ծննդ . Գ . 7 . Բ Օր . Ը . 8) , լայն և հովանաւոր տերևներով (Գ Թագ . Գ . 25) : Մարտի ամսուն կը բողբոջի (Երզ . Բ . 13) , և այլ և այլ տեսակներէն տարին երեք անգամ պտուղ կ'առնուի : Առաջին պտուղը Յունիս ամսուն վերջերը կը հասնի , ընտիր համ ունի և ընդհանրապէս դալար (չչորցած) կուտուի (Երեմ . ԻԴ . 2) :

Թօփու (Ղուկ . ԺԷ . 6) . Աս ծառն ալ Պաղեստինու մէջ հասարակ է (Բ Թագ . Ե . 23 , 24) :

ԹՈՒՆԱՒՈՐ ԽՈՑ (ՈՎՊ. Ժ. 4). Ոմանք կը կարծեն թէ աս համարին մէջ գործածուած Եբրայեցերէն բոլ բառք. մելախինդ կը նշանակէ. ուրիշները կը կարծեն թէ որ և իցէ թուանաւոր և դառն խոտ է :

ԽԻԺԱԲԵՐ ՓԱՅՑ կամ նոճի. Միայն Ծննդ. 2. ԳԼ. 14 համարին մէջ յիշուած է, և հաւանական է թէ տեսակ մը սոճի կամ բուն նոճի կը նշանակէ, քանզի նոճին Ասորւոց երկրին մէջ շատ առատ է :

ԽՆՁՈՐ. Թերևս այսու անուամբ կ'իմացուի սերկևիլ կամ կիտրոն որ ոսկեգոյն պտուղ է (Առակ. ԻԵ. 11. Յովել Ա. 12. Երգ. Բ. 3. 5. Է. 8) :

ԽՈՒՆԿԵՂԻԳՆ (ԵԼ. Լ. 23. Եզեկ. ԻԵ. 19. Ես. ԽԳ. 24. Երեմ. 2. 20). Աս տունկը Հնդկաստանի և Եգիպտոսի մէջ կը գտնուի. բունն ու տերևները շատ անոյշ հոտ կը բուրեն, մանաւանդ եթէ ճմլուին : Կը կարծուի թէ միջին Ասիոյ մէջ Հիմալայա կոչուած լեռները զարդիս գտնուած մէկ տեսակը՝ Սուրբ Գրոց մէջ յիշուածին նմանն է : Երեմիայի (ԳԼ. 2. 20) յիշածը՝ հեռու երկրէ կու գար :

ԽՈՒՆԿԻ ՓԱՅՑ (Յայտ. ԺԸ. 12). Ասիկա Հռոմայեցւոց մէջ շատ յարգի էր, և Կիտրոնի փայտ կ'անուանուէր : Ասոր ծառն Ափրիկէի մէջ միայն, Ատլաս լեռանց մօտ, կը բուսնի, և անկէ կ'ելլէ վաճառականութեան մէջ ծախուած սանտալ արեւելից որ շատ իւղոյին և հոտաւէտ է :

ԽՍՏՈՐ. Թուոց յԱ. 5. միայն կը յիշուի : Ըստ Հերոդոտոսի Եգիպտոսի մէջ բուրգերը շինող գործաւորաց տրուած կերակուրներուն մէկն աս էր :

ՇԱՂԻԿ (Երգ. Բ. 1). Բնագրին բառը որ հոս ծաղիկ թարգմանուած է՝ բառին կազմութեանը նայելով յայտնի կ'երևայ թէ սոխի նման արմատ կամ կոճղէղունեցող Կալֆուսի ծաղիկ կը նշանակէ, և հաւանականաբար նարգէսն է որ բոլոր Ասորւոց երկրին մէջ կը գտնուի, և շատ գեղեցիկ ու անուշահոտ ծաղիկ է : Վարդ բառը Սուրբ Գրոց մէջ ամենեւին յիշուած չէ, թէպէտ այս ծաղիկն Ասորւոց երկ-

րին մէջ շատ ծանօթ է, մանաւանդ մէկ տեսակը որ Դաւ
մասկոսի անուամբ Դամասկեան վարդ ըսուած է :

ԿԱՂԱՄԱԽ (Ծննդ. Լ. 37. Ովսէէ Դ. 13). Ոմանք կը
կարծեն թէ աս համարներուն մէջ բնագրին բառը որ կա-
ղամասի թարգմանուած է՝ շեր կամ, յունարէն բառով,
ստիւրակ ծառին անունն էր: Եօթանասունը ծննդոց մէջ
յիշեալ բառը «Կիւրա» կը թարգմանեն, իսկ Ովսէէի մէջ
Կաղամասի: Աս երկու տեղերուն մէջ ըսուածը՝ կաղամասի
և ստիւրակի ալ կը յարմարի: Վերջինէն, այն է ստիւրա-
կէն, կնդրկի անուշահոտ ռետինը կ'ելլէ :

ԿԱՂՆԻ (Ծննդ. ԼԵ. 8. Եսայ. Բ. 13. Զ. 13. ԽԴ. 14.
Եզեկ. ԻԵ. 6. Ովս. Դ. 13. Ամովս. Բ. 9. Զաք. ԺԱ. 2).
Կաղնին Պաղեստինու մէջ հազուադիւտ է. թէ-
պէտ Բասանի մէջ մեծամեծ կաղնիներ կան, և ասոնք կամ
Վարդաւար կոչուած կաղնիներ են, և կամ «լոյլ»: Սուրբ
Գրոց մէջ ոչ թէ սղոցին (Քալաթաթ), այլ անոր տերևնե-
րուն վրայ գտնուած որդէն կամ ճճիէն շինուած կարմիր
ներկը կը յիշուի (ԵԼ. ԻԵ. 4. Ղևտ. ԺԴ. 4. 6. Ը):
Աս որդը յիշեալ ծառին տերևներուն վրայ կը գոյանայ,
և ի սկզբան կը կարծուէր թէ ծառին տնկային մէկ մասն է,
Գոյնը շատ կարմիր ըլլալուն համար՝ հին ատենը կրնայի
Կաղնի կոչուած ծիրանի ներկն ասկէ կ'առնուէր :

ԿԱՍԻԱ (ԵԼ. Լ. 24. Եզեկ. ԻԵ. 19). Ասիկա կիրամանի
մէկ ստորին տեսակն է. ասոր կեղևէն առատ և կծուա-
համ իւղ մը կ'ելլէ, թէպէտ կիրամանի չափ համեմային
չէ :

ԿԻՆԱՄՈՆ (ԵԼ. Լ. 23. Առակ. Է. 17. Երգ. Դ. 14.
Յայտ. ԺԸ. 13). Ասիկա Հնդկաստանի և Չինու մէջ
գտնուած տունկի մը կեղևն է. ազնուագոյն տեսակը Մա-
լապարէն և Սէյլան կղզիէն կու գայ :

ԿՐՏՈՒ և ՊՐՏՈՒ (Յոբ. Ը. 11). Կիւնը ջրարբի տե-
ղեր բուսնող խոտ է (Եսայ. ԼԵ. 7). Ցածկերէն ուղ
կը կոչուի: Պրոսն (ԵԼ. Բ. 3) Եգիպտական պոպիւն է
որ ութ կամ տասը սաք բարձր կ'ըլլայ. ծղոտը եռան-
կիւնածև և առանց տերևի է, բայց լայն և թփանման

ծայրը՝ Թաւ և ասուեղ է : Աս տունկը՝ նաւ (Եսայ . ԺԸ . 2), փսիաթ , չուան և ուրիշ ասանց նման բաներ շինելու կը գործադուէր . ցողնէն ալ Եգիպտոսի հուշակաւոր Թուղթը կը շինուէր հետեւեալ կերպով : Յունկին ցողնոյն մէջի մասը խաւ խաւ կը կտրուէր . և այն խաւերը տախտակի մը վրայ քովէ քով դրուելէն ետքը՝ սոսնձով կը փակցուէին . յետոյ այնպէս փակած Թերթերը մամլոյ տակ դրուելով և չորնալով՝ իբրև Թուղթ գրելու կը գործածուէին . աս էր Եգիպտոսի պապիրը կամ պապիրոսը : Պըրտուն ներս գետին կողմերը , Բարելոնի մօտ և Հնդկաստան կը գտնուի (Յոր . Ը . 11) :

ԿՈՐԵԱԿ (Եզեկ . Դ . 9) . Մանրահաստ արմտիներէն է , և հասարակ է Արևելքի մէջ :

ՀԱԼՈՒԷ . Աս ծառը Հնդկաստան տակաւին կայ և Ասիա կը կոչուի . փայտը շատ անուշահոտ է (Սաղմ . ԽԷ . 8) : Արևելեան աւանդութեան մէջ աս ծառին համար Դրախտին ծառերէն մէկն էր ըսուած է (Թու . ԻԴ . 6) : Փայտը շատ ծանրագին էր , և մեռելի պատանքի անուշահոտութիւն տալու համար կը գործածուէր :

ՀԻՆԱ (Երգ . Ա . 14 , Դ . 13) . Ասիկա հոտաւէտ , և ծիրանածաղկի (փյուկ) նման ծաղկալից փոքրահասակ Թուփ է , որոյ տերևներն Արևելքի և Եգիպտոսի մէջ փոշի ընելով՝ եղունգ և ընքուի ներկելու կը գործածեն : Կ'երևի Թէ մատուրներու եղունգները ներկելու աս սովորութիւնը Եգիպտացոց մէջ շատ հին էր , քանզի մուսիաներու , մանաւանդ կանանց մուսիաներու , եղունգներուն վրայ ասոր նշմարանքը կը տեսնուի : Ոմանք կը կարծեն Թէ ԲՕՐ . ԻԱ . 12 . ըսուածն՝ աս սովորութիւնը կ'ակնարկէ :

ՁԻԹԵՆԻ . Մշտադալար , և Արևելքի մէջ հասարակ տունկ է : Հրէից մէջ յաջողութեան նշանակ էր (Սաղմ . ԾԲ . 8) , և ամէն դարու մէջ առատութեան և գեղեցկութեան նշանակ համարուած է : Ձիթենուոյն օտտերը տաքաւարահարաց տօնին կը գործածուէին : Աս օտտերը Երուսաղէմ կը բերուէին մօտ լեռնէ մը (Նեեմ . Ը . 15) ուր ձիթենին այնպէս առատ էր որ նոյն անուամբ կը կոչուէր

լեռը : Գեթսեմանի որ նոյն լեռան ստորոտը գտնուող պարտէզին անուան էր՝ իւզոյ կամ ձիթոյ հնձան կընշա- նակէ :

ՄԱՅՐ ՓԱՅՑ. Սուրբ Գրոց մէջ յաճախ յիշուած է (Բ Թագ . Զ . 5 . Երգ . Ա . 17 , 66) : Հաւանական է թէ աս բա- ուով սոճիի այլև այլ տեսակները կ'իմացուին : Ոմանք կը կարծեն թէ բնագրին մէջ գործածուած Կերու բառը բուն նոճի և գիհի կը նշանակէ . ուրիշները նոյն բառով եղևի- նը կ'իմանան , ոմանք ալ հասարակ սոճին : Բոլոր աս ծա- աերը Պաղեստինու մէջ կը գտնուին . և որովհետև Սուրբ Գրոց մէջ շատ անգամ եղևին և մայր փայտ մէկտեղ գոր- ծածուած կը գտնուին , հաւանական է թէ սրբազան հե- ղինականներն աս բառերով յիշեալ ծառոց բոլոր տեսակնե- րը կ'ուզեն իմացնել :

ՄԱՆԱՆԵԽ. Ասոր սերմը շատ մանր է , բայց բոտ աըն- կաբանից Խորայի կոչուած տեսակներուն մէջ ամենէն բարձր և ծառանմանն է :

ՄԱՆՐԱԳՈՐ (Ծննդ . Լ . 14 . 16 . Երգ . Է . 13) . Հա- ղարոյ մեծութեամբ և ձևով , ու թխագոյն կանանչ տե- րևներով տուռնկ մըն է . պտուղը մանր խնձորի չափ կ'ըլ- լայ և հունձքի ատեն կը հասնի : Ասիկա հին ատենը զու- արթացուցիչ և որդեծնութեան օգտակար կը կարծուէր :

ՄՈՒԱԹԱՅՆՆԻ (Գ Թագ . Ժ . 27 . Սաղմ . ԶԸ . 47 , 66) . Ասոր ծառը բարձր և հովանաւոր կ'ըլլայ , տերևները թը- թ ենուոյ տերևներուն կը նմանին . պտուղը շատ յարգի չէ , փայտն ալ ծակոտկէն՝ բայց տոկուն է . աս պատճառաւ Եգիպտացիք մուսիպի սնտուկներն ընդհանրապէս ասոր փայտէն կը շինէին :

ՄՈՒՈՇ. Միայն Յօբայ գրքին մէջ (Լ . 4) յիշուած է : Ասիկա Տաճկաստանի մէջ ամենուն ծանօթ խոտ մըն է , զոր աղբատները դեռ իբրև հասարակ ուտելու բանջար կը գործածեն :

ՄՐՏԵՆԻ (Եսայ . ԽԱ . 19) . Պաղեստինու մէջ վայրի կը բուսնի և մինչև քսան ոտք կը բարձրանայ : Տերևը մուր- և փայլուն է , ծաղիկը համեմային : Ասոր ճիւղերը տաղա-

ւարահարաց տօնին կը գործածուէին (Նէեմ. Ը. 15) . Աս ծառին անուէնը Երրայեցերէն Ադամ է . այսու անուամբ յորջորջուեցաւ Եսթեր Տիկինը (Եսթ. Բ. 7) :

ՆԱՐԳՈՍ . Ասկէ ազնիւ և մեծագին անուշահոտ օծանելիք կը շինուի (Երգ. Ա. 12. Դ. 13, 14. Մարկ. ԺԴ. 3. Յովհ. ԺԲ. 3) : Ասոր բուէնը, մանաւանդ վարի մասը, շատ թաւ է, տերեւները սրածայր են :

ՆՇԵՆՍԻ . Աս ծառը գարնան մէջ ամենէն առաջ կը բողբոջի, վասն որոյ Երրայեցերէն շփեր կոչուած է որ Բընյոթ կը նշանակէ : Ասոր ծաղիկները խնձորենւոյ ծաղիկին նման են, 'ի սկզբան' վարդագոյն, յետոյ սպիտակ կ'ըլլան . աս պատճառաւ նշենին ծերութեան նշանակ է (Ժող. ԺԲ. 5) . կանուխ ծաղկելուն համար ալ օրինակ է արագ և յանկարծ օգնութեան (Երեմ. Ա. 11. Թու. ԺԷ. 8. Ծննդ. խԳ. 11) :

ՆՈՒՆԵՆՍԻ . Ասոր պտուղը կլոր է, և մեծ խնձորի մը չափ կ'ըլլայ . մէջը թթուախառն անոյշ հիւթով խիտ առ խիտ կարմրագոյն հատեր կը պարունակէ : Աս ծառը հիւսիսային Ափրիկէի և Ասիոյ մէջ կը բուսնի և յարգի է (ԲՕր. Ը. 8. Ա. Թագ. ԺԴ. 2. Երգ. Ը. 2. Անգ. Բ. 19. Յովել Ա. 12) :

Քանդակուած նուռեր կամ նունաձև զարդեր Յաճարին սիւներուն գլուխները դրուած էին (Գ. Թագ. Է. 18. 20) : Հրէից քահանայապետին եփուտին ստորոտն ալ նուան նմանութիւններ կարգաւ շարուած էին (Եւ. ԻԸ 33, 34) :

ՇՈՒՇԱՆ . Հաւանականաբար աս բառը Պաղեստինու մէջ քանի մը տեսակ իրարու նման ծաղիկներու անուն էր : Հին Կտակարանին մէջ աս բառը կոկոռ կամ հարունամատն կոչուած ծաղիկը կը նշանակէ : Աս տեսակը կ'ուտուէր . արմատը, ցօղունը և սերմերը, թէ դալար ըլլան և թէ չոր, շատ քաղցր են . ուստի և 'Շուշաններու մէջ արածուիլ' խօսքը (Երգ. Բ. 16. Դ. 5) հաւանականաբար աս տեսակը կ'ակնարկէ : 'Շուշան հովտաց' կոչուածը, այսինքն՝ ջրային շուշանը, նոյնպէս աս

տեսակին կը վերաբերէր (Երգ . Բ . 1, 2) : Աս ծաղիկը հանդիսաւոր տօներու կը գործածուէր , և Տաճարին զարդեալուն մէկ մասն՝ այսպիսի շուշաններու քանդակակերպ յօրինուածն էր (Գ Թագ . Է . 19) :

Նոր կտակարանին մէջ յիշուած « Դաշտի շուշանը » (Մատթ . 2 . 28) ծիրանեզոյն վայրի շուշանն է , որ բոլոր Գալիլէայի մէջ ընտանի է , և ապարօշի (փաթթոցի) նման շքեղ ծաղիկ է . կը բացուի Ապրիլ և Մայիս ամիսներու մէջ որ , հաւանականաբար , մեր Տէրոջը լերան վրայ տուած քարոզին ատենն էր :

ՈՊՆԻԱԶ (Եզեկ . ԻԷ . 15) . Աս փայտն իր գոյնին և կարծրութեանը կողմանէ մեծապէս յարգի է : Առիկա որ Արևելք , և մանաւանդ Սէլլան կղզին , շատ աւատ կը բուսնի՝ տեսակ մը արմաւենեւոյ մէջտեղի կարծր մասն է :

ՈՍՊ . Տեսակ մը ունդ է որ թան կամ ապուր շինելու կը գործածուի (Ծննդ . ԻԵ . 34 . Բ Թագ . ԺԷ . 28) :

ՈՐԹ կամ ԱՅԳԻ (Ծննդ . Թ . 20, Ա) . Ամենուն ծանօթ տունկ է և բոլոր Արևելից մէջ շատ յարգի : Որթը Պաղեստինու դարաւանդներուն և բլուրներուն վրայ կը բուսնէր (Եսայ . Ե . 1 . Միք . Ա . 6) , կամ ցած գետնի վրայ (Եզեկ . ԺԷ . 5, 6) : Երբեմն որթին բարունակները շատ կ'երկննան , ուստի և խեչակներու կամ ձողերու վրայ աւնուելով : Հովանի կ'ընեն (Գ Թագ . Դ . 25) : Աս տեսակ հովանոցներ Արևելքի մէջ ցարդ կը գտնուին , և Ձողաբարձ (սոմուէ) կը կոչուին : Ազնուաբարոյ մարդիկ Սուրբ Գրոց մէջ որթոյ ազնիւ տեսակին նմանցուած են (Երեմ . Բ . 21 . Ես . Ե . 2) , ինչպէս որ վատագգի և անարգ մարդիկ վայրի որթոյ (Բ Օր . ԼԲ . 32) :

ՈՐՈՄ (Մատթ . ԺԳ . 25) . Սէզի կամ խօտի մէկ տեսակն է , և կը նմանի ցորենոյ , մանաւանդ նոր բուսած ատենը : Աս տունկը գետնին հիւթը կը նուազեցնէ , և փնասակար յատկութիւն ունեցող սերմ ունի :

ՈՒՌԻ (Յար . Խ . 22 . Եսայ . ԽԴ . 4) . Արևելքի մէջ ծանօթ ծառ է : Հին ասաններն ասոր ոստերն ուրախութեան այլաբանական նշան համարուած էին (Ղևա . ԻԳ .

40) . բայց Հիմա նոյն ծառը , մանաւանդ Արտասուող կամ Բարեկոնեան ուռի կոչուած տեսակը , Թերեւս Սաղմ . ՃԼԷ . 1, 2 յիշուած դէպքին պատճառաւ , տրամուլթեան և սգոյ նշան համարուած է :

ՉԱՄԱՆ (Եսայ . ԻԸ . 25 . 27) . Ասիկա արջնդեղի կը նմանի . սերմերը դառնագին ջերմ համ ունին , ծաղիկը համեմային է , և աղիւ խառնուելով կերակուրներ համեմելու կը գործածուի : Մալթա կզզւոյն բնակիչներն ասիկա կը մշակեն , և Եսայեայ վերոյիշեալ գլխուն մէջ նկարագրուած կերպով հունար կը հանեն :

ՊՐԱՍ . Նոյն Երբայեցերէն բառը որ Թուոց ՃԱ . 5 պրո . Թարգմանողած է՝ ուրիշ տեղեր իոո կը Թարգմանուի (Գ Թագ . ՃԸ . 5 . Յօբ . Ը . 12 . Առակ . ԻԷ . 25) , քանզի բառը բուն կանաչ կամ դալարի կը նշանակէ : Բայց Թուոց վերոյիշեալ գլխուն մէջ Սոխ և Խստոր բառերուն հետ դասուած ըլլալուն համար՝ կը կարծուի թէ հոն խստ բառիւ պրո իմանալու է , որ Եգիպտոսի մէջ ՚ի վաղուց հետէ ծանօթ տունկ էր :

ԱՍՏԻՄԻ ՓԱՅՏ (ԵԼ . ԻԵ . 5) . Ասիկա Հայերէն ծայրի , ըստ Եւրոպացուց Ալֆոֆո կոչուած ծառն է : Ասոր բունն ուղղորդ և փշոտ է , կեղևը՝ գորշ , և փայտը՝ շատ թեթեւ ու տոկուն . ուստի և ապականակի նման շարժական կամ բառնալի կաղմածներու շատ յարմար կու գայ : Ատեսակին վերաբերեալ ծառոց ամենն ալ ծաղիկ կու տայ , և ծաղիկներն անուշահոտութեան ու գեղեցկութեան կողմանէ երևելի են :

ՍՈՒՍ . Այս երկրին մէջ ամենուն ծանօթ տունկ է . տաք երկիրներու մէջ շատ ախորժելի և աննդարար կ'ըլլայ (Թու . ՃԱ . 5) :

ՍՕՍԻ (Երննդ . Լ . 37 . Եզեկ . ԼԱ . 8) . Ասիկա Ասորուոց երկրին մէջ շատ հասարակ և գեղեցիկ ծառ է :

ՎԱՅՐԻ ՎԱՐՈՒՆԳ (Գ Թագ . Գ . 39) . Ասոր տերևները որթի տերևներու նման են , բայց պտուղը թունաւոր յատկուլթիւն մը և դառն համ ունի : Երբ աս սողացող տունկին պաղոյն ձեռք դպցուի , իսկոյն կը ճալթուտի և սերմերը դուրս կը թափին :

ՎԱՐՈՒՆԳ (Թու . ժԱ . 5 . Եսայ . Ա . 8) . Արևելքի մէջ ծանօթ է և շատ կը մշակուի :

ՏՈՍԱԽ . Ասոր Եւրոպայի մէջ մշակուածը մանր թուփ է . Արևելքի մէջ վայրի կը բուսնի և մեծ կ'ըլլայ (Եսայ . ԽԱ . 19 . Գ . 13) : Լեռնային տեղեր կը սիրէ , և Լիբանաննու պէս կրաքար ունեցող հողի մէջ աւելի աղէկ կ'աճի :

ՓԵԳԵՆԱՅ . Ասիկա Ղուկատու ժԱ . գլխոյն 42 համարին մէջ միայն յիշուած է : Պարտեզի հասարակ բոյս է . տերևները սաստիկ և դառն հոտ ունին : Հին ատենը բժշկականութեան մէջ կը գործածուէր :

ՓՈՒՇ . Պաղեստինու փշալից տունկերն այլ և այլ են . Հրէից Բաբուսինները կ'ըսեն թէ Սուրբ Գրոց մէջ , իբր փշոյ այլ և այլ տեսակներու տնուներ , քսան և երկու բառ գործածուած կը գտնուի : Աս բառերով նշանակուած տունկերուն մեծ մասն իրարմէ չենք կրնար որոշել . և գրեթէ բոլորն ալ անպիտան են : Ոմանք կը կարծեն թէ Աւակ ԻԳ . 31 և Յոր . Լ . 7 Եւթն թարգմանուած Եբրայեցիներէն բառը՝ վայրի մանանիխ կը նշանակէ , որ Արևելքի մէջ հասարակ է և ուրիշ տունկերու ֆլասակար :

Փշոյ տեսակներէն Դժնիլը (Դատ . Թ . 14 , 15)՝ նուրբ , փշալից և երկայն ճիւղեր կ'արձակէ : Ոմանք կը կարծեն թէ Գրիտոսի փշեղէն պսակն ասկէ շինուած էր , ուստի և Գրիտոսի էնալ ալ կոչուած է :

Փուշ , Եւթն , Դժնիլ , այլովքն հանդերձ , հիմա Պաղեստինու մէջ յաճախ են : Հասարակ դժնիկն այնպէս առատ է որ ընդարձակ դաշտեր կը ծածկէ , և շատ մեծ կ'ըլլայ :

ՓՍՏՈՒՂ (Եննգ . ԽԳ . 11) . Ասորոց երկրին և Հնդկաստանի մէջ ծանօթ պտուղ է :

ՔԹԱՆ . Ելից . Թ . 31՝ Բեռ , իոկ Եսայ . ԽԲ . 3 և ԽԳ . 17՝ պարոյթ թարգմանուած Եբրայեցիներէն բառը կտաւի բոյսը կը նշանակէ : Աս տունկը Եգիպտոսի և Ասորոց մէջ շատ կը մշակուի , և կտաւ , չաւան և ճրագի պատրոյգ շենելու կը գործածուի : Ոմանք կը կարծեն թէ Եթ . Ա .

6. և Եզեկ . ԻԷ . 16 Կերպոս Թարգմանուած բառը կը նը-
շանակէ Բամբակ, որ կ'երևի Թէ հին ատենը Հնդկաստա-
նի մէջ տարազագործութեան (Մանիֆակտուրայի) մէջ կը գոր-
ծածուէր, և անկէ նախ՝ Եգիպտոս, և ապա Պաղեստին
բերուեցաւ : Եզեկ . ԻԷ . 16 յիշուած Բեհեզը՝ հաւանա-
կանաբար Կանիֆ կոչուած տունկէն կը շինուէր :

ՔՐՔՈՒՄ (Երգ . Գ . 14) . Գեզնագոյն ծաղիկ է . ծի-
ղերն ու ցօղուներ չորցուելով անուշահոտ համեմ մը կը
շինուէին, և կերակրոյ ու գինւոյ անուշահոտութիւն տա-
լու համար, նաև իբրև գրգռիչ դեղ, կը գործածուէին :

ՕՇԻՆԴՐ (Առակ . Ե . 4 . Ողբ . Գ . 15) . Ջանազան
տեսակներ ունի, բոլորն ալ շատ դառն են : Առուտուրի
մէջ ծախուած օշինգրը՝ նոյն տունկին տերևներէն, ծա-
ղիկներէն ու մանր մանր սերմերէն բաղադրուած է :

Սուրբ Գրոց մէջ յիշուած հանքային նիւթերուն ա-
նուններն ալ համառօտ տեղեկութիւններով հաս կը դը-
նենք :

1 . Հանքային նիւթեր և հողեր :

Աղ . Առիկա Պաղեստինու մէջ, մանաւանդ Մեռեալ
ծովին եզերքը, յաճախ կը գտնուի : Աս ծովին ջուրը շատ
աղի է, և ծովին հարաւային արևմտեան կողմին ընդար-
ձակ ձորը՝ ազին առատութեանը համար Ալէ յօր կը կոչ-
ուէր (Բ Թագ . Ը . 13 . Սաղմ . Կ . վերնագրին մէջ), և
տակաւին հոն աղի բլուր մը կայ : Սոփ . Բ . 9 յիշուած
« աղի հանքը »՝ հաւանականաբար ըսուած է Մեռեալ ծո-
վուն բոլորտիքը փորուած փոսերուն համար, ուր ծովին
ջուրը կը վազէր . և ցամաքելէն ետքը աղի Թանձր կեղև
մը կը Թողուր : Աղն այլաբանաբար կը նշանակէր սուրբ,
փրկաւէտ և առողջարար (ազդեցութիւններ որ ազակա-
նութենէ և փտութենէ կը պահպանեն (Ղևտ . Բ . 13 .
Մատթ . Ե . 13 . Մարկ . Թ . 49 . Կող . Գ . 6) . առ նը-
շանակութեամբ կ'ըսուի նաև « Աղ սևտի » (Բ Մնաց .
ժԳ . 5) : Գարձեալ ազոտ տեղ բան չբուսնելուն համար՝
Աղն ամլութեան նշան էր (Սաղմ . ԾԷ . 34 . Եր . ձԷ . 6) :

ԲՈՐԱԿ . Միայն Առակ . ԻԵ . 20 . և Երեմ . Բ . 52 յիշուած է : Բորակը հանքային նիւթ մըն է , կը գտնուի Եգիպտոսի մէջ ուր Սոթայի լէճ կոչուած լիճեր կան , որոնք ամառը ցամքելով կը փորուին , ու բորակը կը հանուի : Աս նիւթը , եթէ վրան քացախ լեցուի , գարշելի հոտ մը կ'արձակէ , և անոր բորակային յատկութիւնները կը խանգարուին , ինչպէս որ Առակաց ԻԵ . 20 վկայութեանը մէջ ակնարկուած է :

ԾԾՈՒՄԲ . Ասիկա հանք է , երբեմն զատ երբեմն ալ ուրիշ հանքային նիւթերու և քարերու հետ խառն կը գտնուի , և արուեստական միջոցներով կը զատուի : Պաղեստինու մէջ տեղ տեղ կը գտնուի , մանաւանդ Մեռեալ ծովուն եզերքը : Ծծումբը Սողոմ և Գոմար քաղաքներուն կործանմանը համար գործածուած ըլլալով՝ շատ անգամ Աստուծոյ վրէժխնդրութիւնը նշանակելու կ'առնուի (Ծննդ . ԺԹ . 24 , 25 . Սաղմ . ԺԱ . 6 . Եսայ . ԼԴ . 9 . Եզեկ . ԼԸ . 22 . Յայտ . ԺԴ . 10) :

ԿԱՒ . Իւղային հող է . խեցեղէն անօթներ շինելու կը գործածուէր (Եսայ . ԻԹ . 16 . ԽԵ . 9 . Եր . ԺԸ . 4 . 6) : Աւազի հետ խառնուելով՝ շէնքերու կառուցման համար կը գործածուի (Յոր . Դ . 19) :

ՀՈՂ կամ ԵՐԿԻՐ . Երբայեցերէնի մէջ երեք բառ կայ որ հող կամ երկիր կը նշանակէ . Երեց՝ որ կը նշանակէ երկր , թէ շէն և թէ ամայի . Արամ՝ որ բուն կարմիր հող , մշակելի երկիր . երբեմն նաև ամբողջ երկիրը կամ մեր բնակած գունտը կը նշանակէ . Աֆու՝ որ կը նշանակէ ցամաք հող կամ փոշի : Կան ուրիշ բառեր ալ որ մանր հող կամ բուն փոշի կը նշանակեն (ԲՕր . ԻԸ . 24 . Նաւում . Ա . 3) , և կամ՝ հողամաղ , մանրամաղ փոշի (Եսայ . Խ . 15) :

ՁԻԹԹ . Խիժային նիւթ մըն է որ Ասորոց երկրին , Մեռեալ ծովուն մօտերն ու Պաղեստինու ուրիշ տեղերն առատութեամբ կը գտնուի : Ասոր մեծամեծ զանգուածները Մեռեալ ծովուն երեսը կը լողան : Ձիւթը նաև իւրև շաղախ կը գործածուէր (Ծննդ . ԺԱ . 3) , և Արևելքի

շատ կողմերը տակաւին կը գործածուի : Պլինիոս կը պատմէ թէ Եգիպտացիք ասիկա կ'աղփով խառնելով՝ իրենց պապիրոսէ շինած նաւակները կը ծեփէին (Տեա ԵԼ. Բ. 3) :

Կոչուած նիւթը՝ ձիւթէն հանուած եղն է, Պաղեստինսու մէջ կը գտնուի, և ծծմբոյ պէտ շատ աղէկ կը վառի :

2. Քարեր .

ԱՅՆ ՎԱՆԻ կամ ԲԻՒՐԵՂ . Գայլախազի ցեղէն ապակոյ նման թափանցիկ քար է . որ Եբրայերէն և Յունարէն լեզուաց մէջ նկարագրապէս սոր կը կոչուի (Յոբ . ԻԸ . 18. Եզեկ . Ա . 22 . Յայտ . Դ . 6) :

ԱՊԱՌԱՃ . Սեռային անունն է : Սինայի ժայռերը որ ԲՕՐ . Ը . 15 սպասի կոչուած են՝ Գրանիտ , պորֆիր և Կանաչ անուանուած քարի տեսակներ են : Երուսաղէմի մօտակայ ապառաժները Կրատ են (Եսայ . ԻԷ . 9) . Իսկ Մեռեալ ծովուն մերձ գտնուող ժայռերը հրաբխային են :

ԲՈՒՍ . Ասիկա ապառաժուտ նիւթ է , զոր մանր մանր ծովային որդեր կամ ճճիներ ծովուն մէջ կը շինեն կրաքարէ , և սովորաբար իր ծառանման , երբեմն ալ աստղակերպ ձևին և գեղեցիկ գոյնին համար յարգի է (Յոբ . ԻԸ . 18 . Եզեկ . ԻԷ . 16) : Վաճառականներուն Տիւրոս բերած բուստը՝ հաւանականաբար Հնդկաց ծովէն էր :

ԿԻՐ . Կրաքար այրելով կիր շինելու սովորութիւնը , ինչպէս նաև ծեփելու և բռնելու համար կիր գործածելը՝ շատ հին ատեններ ծանօթ էր (ԲՕՐ . ԻԷ . 2 . 4 . Եսայ . ԼԳ . 12 . Ամոզ Բ . 1) :

ՄԱՐՄԱՐԻՌՈՆ . Կրաքարի խիտ կամ կարծր տեսակն է : Ասոր Եբրայեցերէն անունը սպիտակութիւն կը նշանակէ , և հաւանական է թէ սպիտակն աս քարին սովորական գոյնն էր (Ա Մնաց . ԻԹ . 2 . Եսթ . Ա . 6 . Երգ . Ե . 15) : Ասիկա Արաբիոյ և Պարսկաստանի մէջ շատ հասարակ է : Յովսէպոս կը պատմէ թէ Հերովդէսի շինած տաճարը ողիտակ մարմարիոնէ էր , որ , հաւանականաբար , Արաբիայէն կամ Թերևս Ասորոց երկրին լեռներէն բերուեցաւ :

ՇԻՂ. Աղաբասդր (սո- Գրգրի) տեսակ մը գաճ (ուլււ) է : Աս բառն հին ատենը տեսակ մը եղնգնաքարէ շինուած տուփ կամ շիշ կը նշանակէր (Մատթ. Ի. Զ. 7. Մարկ. Ժ. Գ. 3. Ղուկ. Է. 37) : Ըստ Պլինիոսի՝ ասկէ մանաւանդ անուշահոտ իւղոյ կամ օծանելեաց տուփեր կը շինուէին, ինչպէս որ Եգիպտոսի մէջ տակաւին կը շինուին : Շիշը կամ տուփը կտարել կ'ըսուէր բերնին կնիքը հանելուն, քանզի ամանը կնքուած կ'ըլլար որպէս զի անուշահոտութիւնը չցնդէր :

3. Պատուական քարեր .

ԱԿԱՏ. Կարծր քար է բազմագունի զուգահեռական կամ համակեդրոն խաւերով, և Սիկիլիա կղզւոյն Աքատէս գետին անուամբն այսպէս կոչուած է : Այս քարն յիշուած է Ելից. ԻԸ. 19. ԼԹ. 12 :

ԱՄԵԹՈՎՍ կամ ՄԵՂԵՍԻԿ. Ասիկա տեսակ մը մանուշակագոյն թափանցիկ վանաքար (գոպրոս) է, որ երբեմն նաև ծիրանեգոյն կամ կարմիր կ'ըլլայ : Յոյնը կը կարծէին թէ աս քարն արեւեցութենէ պահպանող զորութիւն մը ունի, և Յունարէն «*Քիթի-Քիթի*» բառը՝ չարեցող, չգինովցող կը նշանակէ. իսկ Եբրայական անունը Իրազբի կը նշանակէ՝ Իիւթ բառէն որ երազ ըռել է (ԵԼ. ԻԸ. 19. ԼԹ. 12. Յայտ. ԻԱ. 20) : Ամենէն ընտիր մեղսելին՝ Արաբիոյ, Հայաստանի և Հնդկաց մէջ կը գտնուէր :

ԱՆԴԱՄԱՆԻ. Աս անունը կը տրուի շատ կարծր քարերու (ԵԼ. ԻԸ. 18. Երեմ. ԺԷ. 1. Եզեկ. Գ. 9. ԻԸ. 13. Ջաք. Է. 12) :

ԲԻԻԲԵՂ. (Յայտ. ԻԱ. 20). Ջմրուխտի նման կանաչ պատուական քար է :

ԳՈՃԱՋՄ կամ ՅԱԿԻՆԹ. Նարնջագոյն կարմիր թափանցիկ քար է. Սէյլան կղզին և Հնդկաստանի մէջ կը գտնուի (ԵԼ. ԻԸ. 19. Յայտ. ԻԱ. 20. Թ. 17) :

ԵՂՆԳԻՆՔԱՐ (Խննդ. Բ. 12. ԵԼ. ԻԵ. 7. Յոր. ԻԸ. 16. Եզեկ. ԻԸ. 13). Ընդհանրապէս թափանցիկ և տըժգոյն կանաչ քար է. փորագրողներն ասոր շատ յարգ կ'ըն-

ծայեն : Թափանցիկ ըլլալու մտօին մարդու եղունգին նըման ըլլալուն համար այնպէս կոչուած է :

ԶՄՐՈՒԹՅ. Այլ և այլ առտիճանի բաց կամ մուծ կանաչ գունով գեղեցիկ քար է (ԵԼ . ԻԸ . 17 . Եզեկ . ԻԸ . 13) :

ԿԱՐԿԵՀԱՆ (ԵԼ . ԻԸ . 18 . Եզեկ . ԻԸ . 13) . Աս բառով քանի մը տեսակ պայծառ և կարմրագոյն քարեր կ'իմացուին , զորօրինակ՝ կարմիր յակինթ , մեղեսիկ և այլք :

Կարկեհանի տեսակները հրաշէկ կամ շողացող պայծառութիւն ունին . Թերևս Հայերէն բառին կազմութիւնն ալ աս կ'ակնարկէ :

ՅԱՍՊԻՍ . Կանաչ , կարմիր և դեղին գոյներով անթափանցիկ քար է , և յղկուելու շատ մեծ յարմարութիւն ունի (ԵԼ . ԻԸ . 20 . Եսայ . ԾԴ . 12 . Եզեկ . ԻԸ . 13 . Յայտ . Դ . 3 . ԻԱ . 11 . 18) :

ՀԱՓԻՒՂԱ . Ընդհանրապէս շատ կարծր , երկնագոյն և թափանցիկ քար է , ուստի և երկնից մէջ Ատտուծոյ աթոռին յատակն աս քարին նմանցուած է (ԵԼ . ԻԴ . 10 . տես նաև Եզեկ . Ա . 26 . Յայտ . ԻԱ . 19) :

ՈՍԿԵՔԱՐ , Դեղին ոսկեփայլ տեսակ մը պատուական քար է (ԵԼ . ԻԸ . 20 . ԼԹ . 13 . Եզեկ . Ա . 16 , 17 . Յայտ . ԻԱ . 20) : Երգոց երգոյն մէջ (ԳԼ . Ե . 14) յիշուած ' Թարսիսի քարերը ' սոյն տեսակէն կը կարծուին :

ԱԱՐԴԻՈՆ . Մարմնագոյն քար է ակառ բոռած քարին ցեղէն , և Արարիոյ մէջ առատ կը գտնուի . նմանապէս փոքր Աթիոյ Լիւդիա գաւառին մէջ Սարդիկէ յաճախ գտնուելուն համար՝ այն քաղքին անուամբը կոչուած է (ԵԼ . ԻԸ . 17 . Եզեկ . ԻԸ . 13 . Յայտ . Դ . 3 . ԻԱ . 20) :

ՏՊԱԶԻՌՆ (ԵԼ . ԻԸ . 17 . Յոբ . ԻԸ . 19 . Եզեկ . ԻԸ . 13 . Յայտ . ԻԱ . 20) . Կարմիր , կանաչ կամ գորշագոյն դեղին քար է . հարաւային Արարիոյ մէջ կը գտնուի : Ասկէ Արարիոյ ծոցին մէջ կղզի մը Յպագիոն կը կոչուի :

ՔՐԻՍՈՊՐԱՍՏ (Յայտ . ԻԱ . 20) . Քիւրեղի մէկ տեսակն է : Աս անունն առած է Յունարէն «*քրի*» և «*ստ*» բառերէն , քանզի գոյնը պրասի հիւթոյն նման է ոսկեգոյն պիտակներով :

4. Մետաղներ .

ԱՆԱԳ. Նախ Թուոց ԱՍ. 22 յիշուած է : Վաճառա-
կաններ ասիկա Թարսէն (Սպանիայէն) Տիւրոս կը բերէին
(Եղ. ԻԷ. 12) : Անագ կը յիշուի նաև իբրև կղզւանք ար-
ծաթոյ (Եսայ. Ա. 25. Եղեկ. ԻԲ. 18. 20) :

ԱՐԾԱԹ. Եբրայեցերէնի , ինչպէս նաև Յունարէնի մէջ,
նկարագրապէս սպիտակ մետաղ կը կոչուի : Կը գոյանայ
թէ մաքուր և թէ ծծմբոյ և ուրիշ մետաղներու հետ խառն.
և ան ատեն բովի մէջ կը հալեցնեն կապարով, որուն հետ
խառն նիւթերը միանալով՝ զուտ արծաթը կ'առնուի (Ե-
զեկ. ԻԲ. 20—22) : Շատ անգամ երակ երակ կը գտնուի
(Յօբ. ԻԸ, 1) : Աս մետաղը կը բերուէր Թարսէն (Եզեկ.
ԻԷ. 12. Երեմ. Ժ. 9) , և շատ հին ատեններ ասիկա
իբր դրամ գործածուած կը գտնենք . թէպէտ սիկղ ըս-
ուածը՝ գործուած դրամ չէր , այլ կշռուած արծաթի կը-
տոր , որ իբրև դահեկան փոխանակութեան միջոց էր
(Ծննդ. Ի. 16. ԻԳ. 15, 16) . տես աս գիրքին մէջ Էջ
224 : Նոյնպէս էր նաև Երեմիայի Ժամանակը (Երեմ. ԱԲ.
9) : Սպասուց , անօթոց և զարդուց մեծ մասն աս մետաղէն
կը շինուէր (Ծննդ. ԽԳ. 2. ԵԼ. ԺԲ. 35. Թու. Է. 13 Ժ. 2) :

ԵՐԿԱԹ. Ասիկա Ասորուոց երկրին մէջ շատ յաճախ կը
գտնուէր (ԲՕր. Ը. 9) նաև շատ հին ատեններ : Ասկէ
կը շինուէին գործիքներ (Ծննդ. Գ. 22. Թու. ԱԵ. 16.
ԲՕր. ԺԹ. 5) : Երեմիայի մէջ (ԳԼ. ԺԵ. 12) ժիշուած
"հիւսիսային երկաթը" հաւանականաբար ուղեւոր էր .
քանզի հին ատենը պողովատ շինելուն համար հուշակաւոր
եղող քաղիպ կոչուած ցեղն՝ Ասորուոց երկրէն դէպ 'ի հիւ-
սիս Սև ծովուն մտա կը բնակէր : Նաւում Բ. 3 . "Եր-
կաթի փայլունութիւն" թարգմանուած բառն ալ թերևս
պողովատ կամ պողովատիկ գերանդի կը նշանակէ :

ՇԱՐՈՅԲ (Գ Թագ. Թ. 30. Երեմ. Գ. 30) . Եղեկ. ԻԳ.
40) . Արարիոյ , Պարսից և ուրիշ արևելեան երկիրներու
մէջ ասոր սև և նուրբ փոշին ոգիով խառնելով՝ աչուը-
ններ ներկելու դեռ կը գործածուէր :

ԿԱՊԱՐ. Նախ Ելից մէջ (ձե . 10) յիշուած է : Դեռ
անդիկը ծանօթ չեղած՝ առ մետաղն արծաթ զտելու կը
գործածուէր (Երեմ . 2 . 29 . Եզեկ . ԻԲ . 20) : Ամսվայ
է գլխոյն 7 համարին մէջ (կապարէ) գնտակ յիշուած
է :

ՈՍԿԵՊՂԻՆՁ (Եզեկ . Ա . 4 . 27 . Ը . 2 . Յայտ . Ա .
15) . Ասիկա հաւանականաբար ոսկիէ և պղնձէ բազադը-
եալ մետաղ, կամ ըստ ոմանց, շատ յղկուած արոյր է :

ՈՍԿԻ . Ասիկա կը գտնուի զրուտ , նաև արծաթոյ և եր-
կաթի հետ խառն : Հրեայք ոսկին կ'առնուին մեծաւ մա-
տամբ Սաբայէ և Ոփիրէ , որոց երկուքն ալ Արարիոյ մէջ
էին (Գ Թագ . Թ . 28 . Սաղմ . ԻԵ . 9 . ՀԲ . 15) : Հիմա
Արարիոյ մէջ ոսկի չի գտնուիր , բայց հին պատմիչները կը
հաստատեն թէ առջի ատենները շատ կը գտնուէր : Դան՝
ձ . 5 . և Ք Մնաց . Գ . 6 համարներուն մէջ յիշուած տե-
ղերը ծանօթ չեն : Կռածոյ (ծեծուած կամ թերևս ուրիշ
մետաղներու հետ խառնուած) ոսկի՝ Գ Թագ . Ժ . 16 , 17
համարներուն մէջ յիշուած է : Ոսկին երբեմն կրակով
կը զտուէր (Առակ . ձե . 3) , և ասիկա ընելու համար
կը գործածուէին կապար , ծարոյր , աղ , անագ և թեփ :
Ոսկիէ զարդեր շատ հին ատեններ կային . ոսկին իբրև
գահեկան գործածելու օովորութիւնը Դաւթի ատենէն
յիշուած կը գտնենք (Ա Մնաց . ԻԱ . 25) :

ՊՂԻՆՁ կամ ԱՐՈՅՐ . Պղինձը Կիպրոսի մէջ շատ կը
գտնուէր . իսկ արոյրն ուրիշ բան չէ բայց զինգով կամ
անագով խառնուած պղինձ , և հին ատեններն ընդհան-
րապէս երկաթի տեղ կը գործածուէր : Պղնձոյ և արուրի
ընդհանուր գործածութեանը կը վկայեն նախնի Յոյն և
Եգիպտացի հեղինակներ : Աս մետաղները կը գործածուէին
աղեղ և ուրիշ տեսակ զէնքեր շինելու . Սողոմոնի Ցաճա-
րին սիւները (Գ Թագ . ԻԵ . 13—17) , ծովը որ օրահին մէջ
էր , և ուրիշ կազմածներ պղնձէ էին (Գ Թագ . Է . 40—
47 . Գ Թագ . ԻԵ . 13) : Եզրայ Ը . 27 յիշուած " ոսկիի
պէս պատուական պղինձը " թերևս առ երկու մետաղներուն
մէկ խառնուրդը կամ բազադրութիւնն էր :

ՍՈՒՐԲ Գրոց մէջ յիշուած երկիրներուն վրայ աշխարհագրական տեղեկութիւն ունենալն ալ նոյն գրքին ուսմանը մեծ օգնութիւն կը մատուցանէ :

Աստուածաշունչը մեզի Հայաստանու բարձր երկիրն ու Տիգրիսի և Եփրատայ մէջտեղի բարեբեր դաշտերը կը ցուցնէ՝ իբր մարդկութեան առաջին բնակութիւնը : Սենասարայ աշտարակաշինութեան ամբարտաւան գործին պատճառաւ Նոյի սերունդը կը ցրուի . Սեմ և անոր զաւկները բնակութեան համար Սև ծովուն ու Հնդկաց Ովկիանոսին մէջտեղի երկիրները կը գրաւեն . քա՛մ՝ Ափրիկէ , և Ժամանակէ մը ետքը Յարեթ՝ “Ազգաց կղզիները” (Ծննդ. ձ. 5) , այսինքն՝ Սև ծովուն և Միջերկրականին հիւսիսային եզերքը՝ ուստի Յարեթեան սերունդը կը ցրուի բոլոր Եւրոպա և հիւսիսային Ասիա :

Արարատայ դաշտէն դէպ՛ի հարաւային արևմուտք երթալով՝ կը հասնինք Պաղեստինու մէջ Լիբանան լեռները , և առ գօտւոյն ամենէն բարձր սարերէն մէկը , այն է՝ Հերմոն ելլելով՝ մեր բոլորտիքը կ'ունենանք Աստուածաշունչին մէջ յիշուած երկիրները : Եթէ այն բարձրութենէն դէպ՛ի հարաւ նայինք , մեր ձախ կողմը կ'ունենանք Արաբիոյ անապատը , և անապատէն անդին Եփրատ ու Տիգրիս գետերը , որոնք Հայաստանէն ելլելով Պարսից ծոցը կը թափին , և իրենց ճամբուն վրայ շուրջ կը պատեն Միջագետք կոչուած երկիրը : Եփրատ գետին քով Բաբելոն քաղաքը շինուած էր , Տիգրիսի քով ալ՝ Նինուէ :

Նոյն Հերմոն լեռնէն ճիշդ դէպ՛ի հարաւ նայելով՝ մեր առջև կը տեսնենք Պաղեստինու երկիրը , որուն արևմտեան կողմի ծովեզերաց հիւսիսային մասին վրայ է Փիւնիկէ , այն է՝ Տիւրոսի և Սիդոնի եզերքը . իսկ հարաւային մասին վրայ կը գտնենք Փղշտացւոց երկիրը : Կը տեսնենք նաև որ Լիբանան լեռանց երկու ճիւղերը բովանդակ Պաղեստինու մէջէն կ'անցնին , մինչև որ երթալով անհետ կ'ըլլան , ձախակողմեան ճիւղը՝ Կարմիր ծովուն , աջակողմեանն ալ՝ Սինայի թերակղզւոյն մէջ ուր Իսրայելացիք քառասուն տարի թափառեցան : Աս վերջին երկրին , այն է՝ Արաբիոյ

ցամաքակղզւոյն , արևմտեան դին կը գտնենք Եգիպտոս :

Դարձեալ մեր նոյն կեցած տեղէն , այն է՝ Հերմոնի լեռնէն դէպ'ի մեր աջ կողմը նայելով՝ կ'ունենանք մեր առջև Միջերկրական ծովը որուն մէջ են « Կղզիք ծովու » կոչուածները , որ են Կիպրոս , Կրետէ , Մալթա և Սիկիլիա : Եթէ դէպ'ի հիւսիս դառնանք , դարձեալ կ'տեսնենք նոյն Լիբանան լեռանց երկու շղթանները որոնք դէպ'ի Փոքրն Ասիա կ'երթան . աս երկու շղթաներուն մէջ տեղն է Լիբանանու տափարակը որուն մէջ է Հեղիուպոլիս (Պաալպէք) , այսինքն՝ Արեգ քաղաքը : Անկէ դէպ'ի հիւսիս է Փոքր Ասիա որուն այլ և այլ գաւառները յիշուած են Գործոց Առաքելոց մէջ : Եթէ անկէ ալ դէպ արևմուտք յառաջ երթանք , Եգէական ծովէն (Արշիպեղագոտէն) անցնելով կու գանք Մակեդոնիա , որուն հարաւային կողմըն է Ելլազա , այսինքն՝ Յունաստան , և հիւսիսային դին՝ Թրակիա :

Երկրորդ անգամ՝ գալով մեր առաջին կեցած տեղը Հերմոն , եթէ մեր երեսը նորէն դէպ'ի հարաւ դարձնելով աւելի ճշդիւ քննենք երկիրը , կը գտնենք մեր ձախ կողմը , Յորդանանէն անդին , Դադաադու բարձր երկիրն ու Բառանու արտոները : Բոլոր աս երկիրները գեղեցիկ են և կանաչադարդ : Աս երկրին հովիտներուն համար կ'ըսուի թէ ցորենով և ձիթենիներով լի են , և բլուրներն այգիներով ծածկուած (Թու . ԼԲ . 1—4) : Հոս դէպ'ի հարաւ էին Ամնացւոց , Մովսացւոց և Եդոմայեցւոց երկիրները :

Յորդանանու արևելեան կողմը՝ Լիբանանու դէպ'ի հարաւ գացող գօտւոյն , և , Նեփթաղիմայ , Եփրեմի , կամ Իսրայելի և Յուդայի լեռինք անուամբ , նոյն Յորդանանու արևմտեան կողմը նոյնպէս դէպ'ի հարաւ գացող միւս գօտւոյն մէջտեղն է Յորդանանու հովիտը , ուր կը գրտանենք Գեննեսարեթի (Գալիլեայի) ծովակը : Յորդանան գետն ու Մեռեալ ծովը : Յորդանանու բոլոր երկայնուածիւնը , իր պաղպանքերովն հաշուելով , իբր 200 մղոն է . Պեննեսարեթի ծովուն լայնութիւնն ալ հինկէն մինչև ութը մղոն (Յովհ . Զ . 19 ը՝ Մատթ . ԺԳ . 24 ին հետ բազ-

դատէ) : Աս երկու կարգ լեւանց արեւմտեան դօտւոյն ու Միջերկրականին մէջտեղն են Տիւրոսի երկիրը, Սարոնի հովիտին տափարակն ու Փղշտացւոց երկիրը : Յիշեալ լեւանց արեւմտեան կողման հարաւային մասը, Գաղայէն անդին, անապատ է, այնպէս որ այն արեւմտեան ծովեզերեայ երկիրը կը հասնի մինչև Գաղայի անապատը. Յորդանանու հովիտը կը հասնի մինչև Սինայի անապատը, Յորդանանու արեւելեան կողմի երկիրն ալ՝ մինչև Եդովմի անապատները :

Նորէն մեր աչուքները հերմոնէն դէպ'ի մեզ մօտ եղող տեղերը դարձնելով՝ պիտի տեսնենք ձոր մը, որուն մէկ կողմը դէպ'ի Միջերկրական ծովը բաց է, իսկ միւս երկու կողմերը շրջապատուած են Կարմեղոսէ որ Իսրայէլի լեւանց մէկ ծայրն է, և Գեղըուայ լեռներէն : Աս ձորը հետզհետէ կոչուեցաւ՝ Դաշտ Յեզրայելովի : Յեզրայելի և Մակեդոնովայ : Կիսոնի հեղեղատը, այն « հին հեղեղատը », առ ձորէն անցնելով՝ Ակքովի մօտ « Մեծ ծովը » (Միջերկրական) կը թափի (Դատ . Դ . 13 . Ե . 21) : Նազարէթ կոչուած փոքր քաղաքն այս ձորին հիւսիսային կողմի լեւանց մէջ կ'իյնայ : Աս ձորը տեսարան եղած է շատ պատերազմներու . Դերսովրայի ու Քարակայ և Գեդէոնի յաղթութիւններուն, Փղշտացւոց Սաւուղի դէմ՝ ըրած վերջին յաղթութեան, Աքայաբու՝ Քենադադայ դէմ, և Եգիպտացւոց՝ Յովսիայի դէմ՝ պատերազմներուն և յաղթութեանցը . հոս տեղի ունեցած են նաև Ասորեստանեայց, Պարսից, Խաչակրաց, Եգիպտացւոց և Տաճկաց պատերազմները . հոս Նաբոլէոն Պոնաբարդ Ասորւոց երկրէն ելլելու ստիպուելէն առաջ մեծ յաղթութիւն մը վաստկեցաւ : Թափոր լեռն առ դաշտին հիւսիսային կողմը կ'իյնայ (Դատ . Դ . 12—24 . Ա թագ . 1Ա . 1—7 . Գ թագ . Ի . 22—30 . Դ թագ . ԻԳ . 29) :

Պաղեստին և անոր տրուած անուանները :

Սուրբ Գրոց մէջ Պաղեստին ամենէն առաջ քանանացի երկիր կոչուած է, քանզի Նոյի թոռանը քանանու սեռունդը (Ծննդ . Ժ . 15—18) բնակեցաւ առ երկրին մէջ :

Յետոյ Յակոբայ սերունդին Իսրայէլ անուամբը կը կոչուէի Իսրայելի երկիր . գերութենէն ետքն ալ Յո֊ցոյի երկիր (Յուդայաստան , Հրէաստան) սկսաւ կոչուիլ , քանզի գերութենէն Պաղեստին գարձողներուն գրեթէ բոլորն՝ Յուդայի ցեղէն էր : Ա֊տ֊ոյ , այսինքն՝ խոստման երկիր ալ կոչուած է , քանզի Աստուած առ երկիրն Արարհամառ և անոր զաւկին խոստացաւ (Ծննդ . ՁԲ . 7 . ՁԳ . 14 , 15) : Պաղ֊տին ալ կը կոչուի Փղշտացւոց անուամբը , քանզի առանք յիշեալ երկիրն Հարաւային արևմտեան ժովեզեբեայ սահմանին վրայ կը բնակէին : Դարձեալ Սուրբ Գրքը նոյն երկիրը Ս֊րբ երկր (Չարք . Բ . 12) ալ կոչած է . երբեմն ալ Աւի֊րհ կամ Երկր անուամբ միայն կը յիշուի (Ղուկ . Բ . 1 . Դ . 25 . Իս . 26 . Գործ . ՁԱ . 28 . Յակ . Ե . 17) : Այսպէս Սողոմոնի Համար ըսուած է թէ՛ Գեատն , այսինքն՝ Եփրատէն , մինչև երկէ ծայրերը պիտի տիրէ (Սաղմ . ՀԲ . 8) : Արարիս Հրէաստանի Հարաւային դին կէնար , Սաբա քաղաքն ալ նոյն Արարիոյ վերջին ծայրը կամ սահմանագլուխն էր , ուստի ըսուած է թէ Սարայի թագաւորին երկէ ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լռելու :

Պաղեստինու տարածութիւնն ու բաժանումները :

Իսրայելի տարածքը երկրին երկայնութիւնը Դանէն մինչև Քերսարէէ՛ իբր 140 մղոն էր , ամենէն ընդարձակ լայնութիւնն ալ իբր 90 մղոն կամ 30 ժամ էր . միջին լայնութիւնն էր 50 մղոն : Զբհեզեզէն ետքը , իբր եպ֊ը Հարիւր տարի Հոն բնակեցան Քանանացիք , որոնք աասը ցեղ կամ ազգ բաժնուած էին (Ծննդ . ՁԵ . 19—21) : Ասոնց մէջ ամենէն զօրուորն Ամ֊վրհացիք էին , ուստի և երբեմն այն երկրին բոլոր բնակիչներն ասոնց անուամբը կը յիշուին (Ծննդ . ՁԵ . 16 . Ամ֊վ . Բ . 10) : Իսրայելացւոց Հոն մերտած ասէնը Փղշտացիք , Մովաբացիք , Մադիանացիք , Ամ֊նացիք և Ամ֊զեկայ ու Եդ֊ս֊ սրգիքը՝ Քանանու սահմանագլուխներուն կից , ամենք նաև նոյն երկրին մէջ կը բնակէին : Յետև երկիրը տարաւերկու բաժին

ընելով՝ Իսրայելի աստուերկու ցեղերէն ամէն մէկուն մէջ մէկ բաժին առաւ . և որովհետեւ Ղեւեայ ցեղին զատ բաժին չարուեցաւ, այլ անոնց բնակելու քաղաքներ միւս ցեղերուն բաժիններուն մէջ որոշուեցան, Յովսեփայ երկու որդւոցը, Եփրեմի և Մանասէի, երկու զատ բաժին արուեցաւ, և այսպէս Իսրայելացւոց ցեղերուն աստուերկու թիւն ամբողջ մնաց:

Աս ցեղերէն Ասեր, Եփթաղիմ, Չաբուղոն և Իսաքար՝ Քանանու հիւսիսային կողմը բնակեցան. աս մասին յետոյ՝ Գալիլեա, անոր հիւսիսային կողմին ալ Գալիլեա Հեթաւնոսոց անունը արուեցաւ:

Եփրեմն ու Մանասէի կէս ցեղը՝ բնակեցան երկրին ձկն մասը որ ետքը Սամարիա կոչուեցաւ:

Յուդայ, Բենիամին, Դան և Շմաւոն բնակեցան հարաւային կողմը որ յետոյ Հրէաստան ըսուեցաւ:

Ռուբէն, Գադ և Մանասէի միւս կէս ցեղը Յարդանանու անդիի (արևելեան) կողմը բնակեցան. աս մասն ալ ետքերը Բերէա կոչուեցաւ որ յայնչոյ կամ՝ անդիի Կոլ՝ Ըսել է:

Սողոմոնի Թագաւորութեան ատենը Իսրայելացւոց սահմանը շատ ընդարձակուած էր, և ցեղերու բաժանումն այնչափ ճիշդ պահուած չէր. առտի Սողոմոն իր բոլոր Յերուսթիւնը վերստին աստուերկու մասերու բաժնեց, և իւրաքանչիւր մասին վրայ զատ զատ գործադարներ գրաւ (Գ Թագ. Գ. 7—19): Սողոմոնի մահուընէն ետքը անոր որդւոյն Ռուբովամի ժամանակն Իսրայելացւոց մէկ մեծ մասն անկէ ազատամբերով՝ զատ իշխանութիւն մը հաստատեց Իսրայելի Թագաւորութիւն անուամբ, որուն մայրաքաղաքն եղաւ Սեքար կամ Սիւքէմ: Բենիամինի և Յուդայի ցեղերը, Դանի և Շմաւոնի ցեղերն ալ ըստ մասին, Մնային Ռուբովամի իշխանութեանը ներքեւ որ այնուհետեւ Յուդայի Թագաւորութիւն սկսաւ կոչուիլ, և մայրաքաղաքն եղաւ Երուսաղէմ: Իսրայելի Թագաւորութիւնը, 25½ տարի տեւելէն ետքը, Ասորեստանի Սողոմոնասար Թագաւորին ձեռքով կործանեցաւ, և յետոյ բոլոր երկիրը հետզհետէ

Քաղաքացւոց : Յունաց (Ազէքսանդրի յաջորդներուն) :
 Հրէից (Մակաբայեցւոց) և Հռոմայեցւոց անցաւ :

Քրիստոսի ատենը Հրէից երկիրը կամ Հրէաստան՝ հինգ
 նահանգ կը բաժնուէր .

Ա . ԳԱԼԻԼԵԱ ուր Քրիստոս ընդհանրապէս կը կենար
 և իր քարոզութիւններն ու սքանչելիքները կ'ընէր . անոր
 աշակերտներուն ալ մեծ մասը Գալիլեացի էր (Ես . Թ . 1 .
 Մատթ . Բ . 22 . Իջ . 69 . ԻԸ . 7 . 16 . Ղուկ . Գ . 14 '
 15) : Այս գաւառն Երուսաղեմէն հեռու էր , բնակիչները
 Սամարացւոց : հետ հազարգակցութիւն ունէին , անոնց լե-
 ղուն ալ խորթ և անմարուր էր . աս պատճառներուն հա-
 մար Գալիլեա ասեցի էր Հրէից :

Բ . ՍԱՄԱՐԻԱ որ երկրին միջին կամ կեդրոնական մաս-
 ոք կը պարունակէր , ու Գալիլեան Հրէաստանէն կը զա-
 տէր (Յովհ . Գ . 4) :

Գ . ՀՐԷՍՍՅԱՆ որ գրեթէ Յուդայի հին թագաւորու-
 թեան ունեցած երկիրներէն կը բաղկանար :

Դ . ԲԵՐԻԱ կամ ՅԱՅՆԿԱՅՅ ՅՈՐԴԱՆԱՆՈՒ որ կը պա-
 րունակէր 1 . Արիլնիա ուր Լիւսանիա Չորրորդագոյն էր
 (Ղուկ . Գ . 1) , 2 . Յրաքսնիա , 3 . Իսուրիա՝ Յետուքն
 (Ա Մնաց . Ա . 31) , կամ՝ Աւրան (Եզեկ . ԽԷ . 16 . 18) ,
 4 . Գովզան (Յես . Ի . 8) , 5 . Բառան , պոինքն՝ հին Բա-
 ասնու մէկ մասը , 6 . Բուն Բերեա (Աւնոֆնի և Յարով-
 կոյ մէջտեղը) ուր Յովհաննէս գլխատուեցաւ , և 7 . Դե-
 կապոլիս (տասը քաղաքներ) (Մատթ . Գ . 25) :

Ե . Եգովմայեցւոց երկիրը զոր Հռոմայեցիք Պաղեստին-
 նաւ մաս ըրին , որ և կը պարունակէր Հրէաստանի վերջին
 հարաւային մասերն ու Արարից մէկ փոքր մասը :

Քրիստոսի ժամանակէն 37 տարի առաջ սկսելով մինչև
 Յէրոջը ծնած տարին՝ գրեթէ բոլոր աս երկիրներուն վրայ
 թագաւորեց Հրէութիւնն ընդունող Եգովմայեցի ընտանի-
 քէ մը Հերովդէս Մեծ : Ան ատեն աս երկիրներէն առնուած
 տարեկան եկամուտն էր իրք եօթը հարիւր տաղանդ կամ
 չորս միլիոն լիւրա : Հերովդէ մահուընէն ետքը՝ Հրէաստա-
 նի , Սամարիոյ և Եգովմի վրայ կը թագաւորէ որքին Ար-

քեղայս, որ 10 տարի թագաւորելէն ետքը կ'արքայորուի, և անոր տիրած երկիրները Հռոմայեցի Վուսակաւաց կը յանձնուին, որոնց մէկն էր Պիղատոս Պոնտացի (յԱ. Ց. 26—36) որ պաշտօնէն ի յնալով անձնապան եղաւ: Նոյն Հերովդի մեռնելէն ետքը,

Պալիւնա և բուն Բերէա արուեցան Հերովդէսի ուրիշ մէկ որդւոյն՝ Անթիպպաս Հերովդի, որ Յովհաննէս Մկրտաւիչ գիտաւել առաւ և ծաղրեց մեր Ցէրը՝ Պիղատոսէն անոր զրկուած ատենը: Անթիպպաս Հերովդէս արքայորուեցաւ յԱ. Ց. 40 Սպանիա, ուր վերջապէս մեռաւ արքայորի մէջ:

Տրաքոնիա և Իսուրիա արուեցան Հերովդի երրորդ որդւոյն, այն է Փիլիպպոս կոչուած Հերովդէսի (Ղաւկ. Գ. 1): Ասիկա շինեց Փիլիպպեայ կոչուած Վեոսրիան (Մատթ. ԺԶ. 13) և հոն մեռաւ յԱ. Ց. 34:

Ազրիպպաս Հերովդէս, Մեծին Հերովդի թուր, բոլոր երկրին վրայ թագաւորեց յԱ. Ց. 41—44. առ վերջին թաւականին (44) էր որ սպաննել առաւ Յակոբոս Առաքեալը, ինք ալ քիչ ատենէն մեռաւ Վեոսրիա: Ասոր որդին էր

Միւս Ազրիպպաս՝ Տրաքոնացաց Չորրորդապետը, որ Պալիւնայի ալ Չորրորդապետ եղաւ. Պոլոս Վեոսրիայ մէջ ասոր առջև փաստաբանեց (Գործ. ԻԵ. 13. ԻԶ): Եւ թուսաղեմի կործանմանէն ետքը՝ Հռոմ գնաց և հոն մեռաւ յԱ. Ց. 100: Ան Ազրիպպաս Հերովդէան ցեղին վերջինն էր Ազրիպպաս Հերովդէս մեռնելէն ետքը Հրէաստան նորին Հռոմայեցի կուսակալներու յանձնաւեցաւ որոնցմէ Գործոց Առաքելոց մէջ կը յիշուին Փելլոս և Փետոս:

Պաղեստին ապառաժուա և լեռնային է. մակերևոյթը, բարձրութեան և խորութեան կողմանէ, զարմանալի զանազանութիւն մը ունի: Լիբանանու ամենէն բարձր գագաթները Միջերկրական ծովէն 10 հազար ոտք կամ իբր 4600 կանգուն վեր են, ուր Յարդանան գետին յատակը՝ Տիբերիոյ լճին քով՝ նոյն Միջերկրականէն իբր 346 կանգուն ցած է: Իսկ Մեռեալ ծովուն քով առ ցածուա

Թիւնը 666 կանգունի կը հասնի , և Մեռեալ ծովուն ջուրին երեսը Միջերկրական ծովուն երեսէն 600 կանգուն վար է : Լեռները Յեզրայելսնի դաշտէն դէպ'ի հարաւ պակաս բարձրանալով , Երուսաղեմի քով Մեռեալ ծովուն մակերևութէն 1800 կանգուն բարձրութեան մը կը հասնին , այնպէս որ յիշեալ ծովուն մաս եղող Երիքով քաղաքը որ Երուսաղեմէն 20 մզոն միայն (7 օտմ) հեռու է անկէ (Երուսաղեմէն) , 1572 կանգուն ցած է : Յուդայի լեռնադղձը (Երուսաղեմի հարաւային գին)՝ լեռներուն բարձրութիւնն աւելի է : Ուստի և Գալիլեայէն Երուսաղեմ և Եգիպտոսէն Նիլոսոսն երթալուն՝ ելլել , Երուսաղեմէն Գալիլեա և Նիլոսոսն Եգիպտոս երթալուն ալ իջնել կըրուէր : (Ղուկ . Ժ . 30 . Յովհ . Է . 10 . Գործ . ԻԴ . 1 : Արսնք բազդաստէ՝ Եննգ . ԻՁ . 2 և ԻՁ . 3 համարներուն հետ)

Աս լեռներէն շատերն այրերով կամ անձաւներով լեցուն են : Անոնց կողերուն վրայ մեծամեծ արօտներ կան (Ամիգ . Ա . 2) . սմանց դազաթններուն վրայ գանաւած տափարակները ժամանակաւ ցորենի արտերով ժածկուած էին : Ապառաժից ճեղքուածներուն կամ ծերպերուն մէջ , և ուր որ հողը բաւական խորութիւն ունէր՝ ձիթենիներ , և թզենիներ կը բուսնէին , հովիտները արգասաւսը և բազմաբուրիւն էին . նոյն իսկ անապատները որ հերկելու անյարմար էին՝ կը նմանէին խոտուէտ և ծառազարդ ընդարձակ մարգագետիններու . վերջապէս՝ Պաղեստինու մէջ ամէն կիմոյի յառուկ բերքեր կրնան յաւաջ գալ : Լեռանց մի և նոյն շարքին վրայ շատ տեղ արեւագարձներուն թուղթու արմաւը , և բարեխառն գօտոյն կաղթին ու եղէինը միանգամայն կը բուսնին : Եթէ երկրին կիման բալբոմբին մեղմ , երկիրն ալ արեգգէմ ըլլար , ժողովուրդը գործունակայ ժրութիւն մը և այրտկան բնաւորութիւն պիտի չկրնար ունենալ . իսկ եթէ գետինը բալբոմբին ապառաժուտ և լեւնտա ըլլար , ժողովուրդը պիտի ստիպուէր իր պիտոյքը հողալու համար գրացի հեթանոս ազգաց հետ դաշնակցութիւն ընել : Բայց ձիթենի և ցորենը բուսցնազ :

լեռներ, Լիբանանու ձիւնապատ գագաթները և Յորդանանու խոր և ջերմ հովիտը, արածելու և մշակելու տեսողներ, առ ամէնը՝ մի և նոյն երկրին մէջ գտնուելով՝ համամատ էր Աստուծոյ ընտրեալ ազգին պիտոյիցը, և համաձայն Սուրբ Գրոց ոտ խօսքին. « Ազէկ երկիր մը, անանկ երկիր մը որ դաշտերէ և լեռներէ բզկազ գետերով, ազբիւրներով և խորունկ ջուրերով լեցուն է, և այլն՝ (ԲՕՐ. Ը. 7—9) :

Դաւթի ժամանակ առ երկրին բազմամարդութիւնը հաւանականաբար 4 կամ 5 միլիոն էր (Բ Թագ. ԻԴ. 9). կամ՝ իւրաքանչիւր քառակուսի մղոնի իբր 4 կամ 5 հարիւր մարդ կ'իյնար : Այսպիսի բազմամարդութիւն մը հիմա Եւրոպիոյ յամենէն մարդաշատ կողմերը միայն կը տեսնուի : Այժմու Ասորիք (Սիրիա) որ Դաւթի տերութեանը չափուն քառապատիկն է՝ հազիւ միլիոն ու կէս բնակիչ ունի, և այնչափ քիչ բազմութիւնը գծուարու կրնայ իւր ազրուտաբը հայթայթել, երկրին մեծ մասն ալ բուրովին անբեր է : Պաղեստինու հին արքայատէրութիւնը Սուրբ Գրոց մէջ Աստուծոյ մատնաւոր օրհնութեանը աբրուած է, ինչպէս որ անոր արդի անարքայատէրութիւնը նոյն Աստուծոյ « մեծ բարկութեանն ու սրամտութեանը (տես ՂԿ. ԻԶ. 3—5. ԲՕՐ. Ե. 12—14. ՊՍ. 8—15. ԻԸ. 1—12. և ասոնք բազդատէ ԲՕՐ. ԻԸ. 16—24, 38—42. ԻԹ. 23—25 ին հետ) և

Պաղեստինու մէջ ամառն 'ի բուն անձրև չի գար, ջուրեկուան տաքն ալ շատ սպասիկ է. բայց իրիկուաններն որ գիշերները զով է և առատ ջուր կ'իջնէ, այնպէս որ անպատասպար ճամբորդը խելում կ'ըլլայ, թէպէտ արևը ծագելուն պէս շուտով կը չորնայ (տես Բ Թագ. ՊԵ. 12. Սաղմ. ԸԼԴ. 3. Ով. Զ. 4. ՊԴ. 5) :

Ամառուան տառն ջուրը նաևազ ըլլալուն համար՝ ջրհորներ և աղբիւրներ շատ յարգի են : Զրհորներու պատճառաւ անգամ մը Արիմեիլացի և Իսահակայ մէջտեղ զէճ եղաւ՝ Մովսէս ալ Իսրայելացւոց չփրթած ջրհորներուն Աստուծոյ անսոց արուիլը յիշելով՝ Յերուջ մեծ մէկ շնորհքը կը հա-

մարի այն դեպքը (Բ Օր . 2 . 11) : Այն ջրհորներէն ու մանր շատ խորունկ էրին , այսինքն՝ իբր 160 սաք կամ 73 կանգուն խորութիւն ունէին և անձրևի ջրով միայն կը լեցուէին (Սաղմ . 2Գ . 6) : Անապատին մէջ ճանապարհորդութիւն ընողները կրեմն մինչև 8) մղան տեղ և կամ երէք կամ չորս օրուան ճամբայ առանց ջուր գտնելու երթալէն ետքը , եթէ ջրհորի մը պատահին , ան ալ անջուր կը գտնեն . ուտտի և սուտ վարդապետներուն Սուրբ Գրոց մէջ անջուր աղբիւրներու հետ բաղդատուելիւ շատ յարմար նմանութիւն է , ըստ սրում՝ ասոնք ալ ի դերև կը հանեն իրենց ունկնդիրներուն յոյսը (Բ Պետա . Բ . 17 , 18) : Նոյն անապատներուն մէջ բացակայ դաշտի մը ջրանման փայլուն երևոյթն ալ յուսահատութեան ազդու օրինակ է , քանզի սաստիկ ծարաւով պապակած ճամբորդը հեռուէն աւազը տեսնելով ջուր կը կարծէ , և փափաքելով դէպ հոն կը վազէ . բայց երբ անոր մօտենալով իր խորուած ըլլալը կը տեսնէ , անյոյս և լքեալ կը մնայ : Ուղտեր և ճամբորդներ այս կերպով շատ անգամ խորուած են , քանզի անոնց հեռուէն ջրոյ ծաւալ մը կարծածը՝ մտէն կը տեսնուի որ ուրիշ բան չէ բայց կիզիչ աւազ (Յոր . 2 . 18 . Երեմ . ԺԵ . 18) :

Պաղեստինու արևելքած հովը բոյսերուն շատ վնասակար է : Այս հովը ձմեռը չոր և ցուրտ է , ամառն ալ չոր և ցերձ , և տերևները շուտով կը դօսացնէ (Եսնդ . ԽԱ . 6 . Եղեկ . ԺԷ . 10 . ԺԹ . 12 . Ռժո . ԺԳ . 15) : Նոյն հովը մանաւանդ Խիջերկրական ծովուն վրայ նաւերու շատ վնաս հասայ (Սաղմ . ԽԸ . 7) . աս էր Եւրափիկոն կոչուած հովը որ Պոզոսի նաւին խորտակելուն պատճառ եղաւ (Գործ . ԻԷ . 14) : Աբեֆտան հովը կարճատև տարափնէր կը բերէ , երկարատև երաշափթենէ մը ետքն ալ սապտիկ անձրև (Գ Թագ . ԺԱ . 44 , 45 . Ղուկ . ԺԲ . 54) : Հիւսիսային հովը ցուրտ և չոր է (Առակ . ԻԵ . 23 . Յոր . ԼԷ . 9 , 22) : Հարաւային հովը ասեղանի է և մրրիկ կը բերէ (Ղուկ . ԺԲ . 55 . Ջաք . Թ . 14) : Երեմն ամբողջ կարաւաններ այս հովերուն յարուցած պաւազովը կը ծածկուին :

Երբ ասքին հետ Պլաստիար խորշակն ալ կը փանայ, ա- նտտեն հսիը մահարեք կը լլայ: Կը պատմուի թէ 1655 ին չորս հազար, 1688 ին ալ իրր քսան հազար հօգի այսպիսի խորշակէ մը հեղձամահ եղան (Եսայ. ՃԻ. 18. ԷԲ. 2. Գլ. ՃԳ. 3): Եւրբ Գրոց մէջ այն արագութիւնը որով Աստուած չարերն երբեմն իսկոյն կը ջնջի՝ առ միտիկներուն նմանցուած է (Առակ. Ա. 27. Ճ. 25):

Պաղեստինու մէջ ցորենն ընդհանրապէս աշնան կը ցանուի, գարնան ալ կը հնձուի, ուստի և աշնան անձրեռն տառիկն կամ սերմանելու անձրև է, գարնան անձրեռն ալ՝ անօդան (վերջին) կամ հնձոց անձրև (Յովիւ. Բ. 23), մի- կը ցանին կենդանութիւն կուտայ, միւրը հասկը կը լեցնէր Անձրեռներն ընդհանրապէս արևմտեան կողմէն կուգան (Ղուկ. ՃԲ. 54)՝ Միջերկրական ծովէն անցնելով: Հնձոց և տմառուան ատեն անձրևը Պաղեստինու մէջ անսովոր գեղք մըն է, ուստի և ժողովրդեան զարմանք և ահ կը պատճառեր, ինչպէս որ Ա թագ. ՃԲ. 17 նկարագրուած է:

Հետեւեալ պարբերութիւնները Պաղեստինու մէջ եղա- նակաց սրպիտութեանը, տարւոյն ալիւսը ամիսներուն մէջ բերքերուն յառաջ գալուն, և շրեից տարեկան ասներուն ժամանակներուն վրայ տեղեկութիւններ կը պարունակեն:

Սրբազան տարւոյն առաջին ամիսն Ապրիլ կամ 'նիսան' որ քաղաքական տարւոյն նայելով 7 երորդ է՝ 30 օր ունի և կը պատասխանէ մեր Մարտի վերջին և Ապրիլի առաջին մասերուն (Եւ. ՃԲ. 2. ՃԳ. 4. Նեեմ. Բ. 1. Եսթ. Գ. 7. տես և առ գիրքին 227 էջը): Առ ամսուն 14 ին կը պատահի Ջատիկը. 16 ին կը մասուցուին հնձոց երախայրիներուն սրաները (Ղևո. ԻԳ. 10, 11). 21 ին Ջատիկ և բաղարջակերաց վերջին օրն է: Առ ամսուն մէջ կը սկսի Աշունը. վերջին կուտած անձրեռները տեղաբով՝ ցորենը հնձուելու կը պատրաստեն (Բ Օր. ՃԱ. 14. Յովիւ. Բ. 23. Ջաք. Ճ. 1). օգը զով է անձրեռներուն պատճառաւ (Յովհ. ՃԸ. 18): Գարին կը հասնի Երեբով մտերը, ցորենն բառ մտին հասկ կապած է, թզենին կը ծաղկի, ձմեռնային թուղը գեռ քաղուած չէ (Մատթ.

ՈՒ. 19. Մարգ. ժԱ. 13) : Ասէ ետքը օտօթը կը սկսի ,
 և սաստիկ կ'ըլլայ մանաւանդ դաշտերու մէջ . դեաներն
 անձրևներէն կը յորդեն (Յես . Գ . 15 . Ա Մնայ . ժԲ .
 15 . Երեմ . ժԲ . 5) :

Երկրորդ սրբազան ամփոք Թիար կամ Ջիււ (Գ Թագ .
 2 . 1) որ քաղաքական տարւոյն 8 երրորդն է՝ 29 օր ունի
 և մեր Ապրիլի և Մայիսի մասերուն կը պատասխանէ : Աս
 ամսուն 14 ին է երկրորդ Զատիկը (Թու . Թ . 10 , 11)՝ ա-
 ուաջինը կատարելէ սրկիցէ պատճառաւ արգելուողներուն
 համար : Ա երջին անձրևները տակաւին կը յաճախեն . շատ
 անգամ անձրևներէն առաջ միրիկ կ'ելլէ (Գ Թագ . ժԶ .
 46 . Մատթ . Ը . 24) : Աս ամսուն մէջ գարին առհասա-
 բազ պատրաստ է (Հուլի . Ա . 22) որ ընդհանրապէս ցա-
 րենէն երկը շարաթ առաջ կը հասնի :

Երրորդ սրբազան ամփոք Յիվան (Եսթ . Ը . 9) որ ըստ
 քաղաքական տարւոյն 9 երրորդ է՝ ունի 30 օր , և կը պա-
 տասխանէ մեր Մայիսի և Յունիսի մասերուն : Աս ամսուն
 6 ին է Պենտեկոստէի կամ Եօթնեկաց անը . ցարենի (ԵԼ .
 ԼԳ . 22 . Ղևա . ԻԳ . 15—20) և երկրին սւրիշ բերքերուն
 (Բ Օր . ԻԶ . 2 . 10 .) երախտքիքը կը մտաուցուին : Աս
 ամսուն մէջ ամառը կը սկսի . սաստիկ երաշտ է : Ապրիլէն
 մինչև Սեպտեմբեր ոչ կ'անձրևէ ոչ ալ կ'որոտայ (Ա Թագ .
 ԺԲ . 17 . Առափ . ԻԶ . 1) : Առաւօտուն կանուխ ամեղ
 կ'ըլլայ , բայց շուտով կը փարտաթի (Ոգո . 2 . 4 . ժԳ . 3) :
 գիշերն առատ ցօղ կ'իջնէ (Յօր . ԻԹ . 19 . Սաղմ . ՃԼԳ .
 3) , բայց հիւսիսային և արևելեան հովերն երաշտութիւնը
 կ'ուելցնեն (Եմնդ . ԽԱ . 6 . Եղեկ . ժԷ . 10) : Ցարենը
 բլուրներու վրայ՝ Յունիսին , Խորածոր տեղեր՝ Մայիսի
 սկիզբը կը հասնի . խտար տեղ տեղ մէկ կանգուն բարձր
 կ'ըլլայ :

Չորրորդ սրբազան ամփոք Թամուզ որ քաղաքական տար-
 ւոյն 10 երրորդն է՝ 29 օր ունի և մեր Յունիսի և Յուլիսի
 մասերուն կը պատասխանէ : Աս ամսուն մէջ օտօթը կը
 ստատականայ . առաջին այգեկուլթը կ'ըլլայ (Ղևա . ԻԶ . 5) ,
 օրիզն (բրինձ) ու կանխահաս Թուզը կը հասնին :

Հինգերորդ սրբազան ամիսն Ադ (Եգր . Է . 9) որ քաղաքական տարւոյն 11 երորդն է՝ 30 օր ունի և կը պատասխանէ մեր Յուլիսի և Օգոստոսի մասերուն : Աս ամսուն մէջ սաստիկ տօթ երկիրը կը տուարէ . Լիբանան ձիւնէ գրեթէ բուրոզին ազատ է : Երուսաղէմի մէջ թուզը կը հասնի , Երիբովի մէջ ձիթապատուզը : Խաղոզը կը խայծի :

Վեցերորդ սրբազան ամիսն Իւուլ (Նէեմ . Զ . 15) որ 12/երորդ քաղաքական ամիսն է՝ 29 օր ունի և կը պատասխանէ մեր Օգոստոսի և Սեպտեմբերի մասերուն : Աս ամսուն մէջ տօթը գեռ սաստիկ է : Ընդհանուր այգեկութե

Եօթներորդ սրբազան ամիսը Թիշրի կամ Անթանի (Գթագ . Ը . 2) որ առաջինն է քաղաքական տարւոյն՝ 30 օր ունի և մեր Սեպտեմբերի և Հոկտեմբերի մասերուն կը պատասխանէ : Աս ամսուն 1 ին է փողերու տօնը (Ղևա . ԻԳ . 24 . Թու . ԻԹ . 1) , 10 ին՝ Քաւաթեան տօնը (Ղևա . ԻԳ . 27 , 28) , 15 ին՝ Յաղաւարահարաց տօնը (ԵԼ . ԻԳ . 16 . Ղևա . ԻԳ . 34 . 39) : Աս ամսուն մէջ կը սկսի սերմանելու եղանակը . ցորեկը տօթ է , գիշերը՝ սառնամանիք (Ծննդ . ԼԱ . 40) : Առաջին կամ կանուխ կուլտած անձրևները յաճախ տարափով կը սկսին . զարուցանի եւ զանակ է :

Ութերորդ սրբազան ամիսը Մարքեոսան կամ Բուլ (Գթագ . Զ . 38) որ քաղաքական տարւոյն նոյնլով 2 բորգ է՝ ունի 29 օր և կը պատասխանէ մեր Հոկտեմբերի և Նոյեմբերի մասերուն : Կանուխ անձրևներն երբեքն առ ամսուն կը սկսին : Յարենն ու գարին սերմանելու ժամանակ է : Ճշարազ :

Իններորդ սրբազան ամիսը Քաղզէ (Զար . Է . 1 . Նէեմ . Ա . 1) որ քաղաքական ամսոց 3 բորգն է՝ ունի 30 օր և մեր Նոյեմբերի և Դեկտեմբերի մասերուն կը պատասխանէ : Աս ամսուն 25 ին Նաւակատեաց տօն է (Յովհ . Զ . 22) : Չմուր կը սկսի , ծառերը տերևաթափ կ'ըլլան և ձիւնը լերանց վրայ կ'երևայ :

Տասներորդ սրբազան ամիսը Թէպեթ (Ետթ . Բ . 16) որ 4 բորգ քաղաքական ամիսն է՝ 29 օր ունի և կը պատաս-

խանէ մեր Դեկտեմբերի և Յունուարի մասերուն : Աս ամսուն մէջ լեբանց զլայ ցուրաբ սաստիկ է , կարկուտ և ձիւն կը տեղայ : Խոտն ու դալարիք անձրևներուն զլայ կը սկիսին նորէն կանաչնալ :

Մեատառներորդ որբազան ամիսը Սեբաթ (Ջաբ . Ա . 7) որ քաղաքական տարւոյն 5 երորդ ամիսն է՝ ունի 30 օր և կը պատասխանէ մեր Յունուարի և Փետրուարի մասերուն : Աս ամսուն մէջ եղանակը ձմեռնային է , ուտաի և 'ի սկզբբան օդը ցուրտ է : բայց տակաւ կը տաքնայ : Արմաիք գետ կը ցանուին , նշենին կը ծաղկի :

Երկուտասներորդ և վերջին որբազան ամիսն Ադար (Եզր . Զ . 15 . Եսթ . Գ . 13)՝ որ քաղաքական տարւոյն 6 երորդն է՝ 29 օր ունի և մեր Փետրուարի ու Մարտի մասերուն կը պատասխանէ : Աս ամսուն ին է Փուրիմի ասունը (Եսթ . Թ . 20—28) : Օդին մէջ յաճախ որոտմունք և կարկուտ :

Հրէից 12 ամիսներուն անուններն ասունք են , բայց որպէս զի աս ամիսներն ամէն տարի տարւոյն մի և նոյն եղանակին մէջ պատահէին , հարկ եղած էր գրեթէ ամէն երեք տարին անգամ մը նաճանջ ամիս մը աւելցնել : Աս նաճանջ կամ աւելի ամիսը կը կոչուէր Աբադար կամ Երկբորդ Ադար : Եղանակաց նկատմամբ մինչև հիմա յիշուած տեղեկութիւնները Սուբբ Գրոց շատ խօսքերը կը լուսուորեն : Ջոր օրինակ՝ տեղեկանալով թէ Իսրայելացւոց Յորդանանէն անցնելն առաջին ամսուն 10 երորդ օրը պատահեցաւ (Յեռ . Գ . 19) , այսինքն՝ այնպիսի ժամանակ մը որ գետը ձմեռուտան անձրևներէն յորդած էր (Յեռ . Գ . 15) , յայտնի կը տեսնենք այն դեպքին մէջ գործուած հրաշքին մեծութիւնը որով ջուրերը բաժնուեցան , և ժողովուրդը կարող եղաւ գետին միւս եղերքն անցնիլ ընդ ջրամբ :

Եզեկիայի ժամանակը՝ Ջաափի տանին ժողովրդեան ցուցուցած եռանդեան սաստիկութիւնն աւելի յայտնի կ'ըլլայ , եթէ խորհելու ըլլանք սա պարագան որ այն տանն հնձոց ժամանակ էր , բայց և այնպէս ժողովուրդը ո-

բոլորը « ուրիշ եթէր որ ալ աօն պահէլ » (Բ Մնաց . 1 . 23) :

Հրեայք սովոր էին Ձապկէն առաջ Երուսաղէմի մօտ ձմեռնային անձրևներէ ապականուած շիրիմները ձեփել կամ բռնել , որպէս զի աօնին համար պատրաստութիւն ըլլար : Կ'երևի թէ նոյն ժամանակը և նոյն պարագայէն առիթ առնելով մեր Յէրը Փարիսեցիները ձեփած գերեզմաններու նմանցուց (Մատթ . 19 . 27 . 29) :

Յէրը Ձապկական դառին մասուցուած օրը խաչուեցաւ , և յարութիւն առաւ այն օրը որ հնձոց որաներուն երախայրիները կը մտասցցանէին . ուստի թերևս առ պատճառաւ կոչուած է « Ննջեցեղոց առաջին պատուը » (Ա Կորնթ . ԺԵ . 20) : Երկրին երախայրիներուն տաճարը նըււրուած օրը որ Պենտեկոստէ էր՝ Սուրբ Հոգին իջաւ Առաքելոց վրայ , և նոյն օրը « Երկինքին աակը եղած բոլոր ազգերէն » երեք հազար հոգի Եկեղեցւոյն յարեցան (Գործ . Բ . 5 . 41) :

Երուսաղէմ Իսրայելացւոց երկրին գլխաւոր քաղաքն էր . ստիկա Արբահամաւ առանը Սաղէմ կ'անուանուէր (Ծննդ . Ժ7 . 18) , իսկ Իսրայելացւոց նոյն երկիրը գրաւած ժամանակը կը կոչուէր Յերուս (Յես . ԺԵ . 8) , բնակիչներն ալ Յերուսացիք կը կոչուէին (Յես . ԺԵ . 63) : Թեքևս առ երկու , Սաղէմ և Յերուս , անուաններէն շինուեցաւ Յերուսաղէմ անունը , և յետոյ փոխուելով եղաւ Երուսաղէմ որ Երբայեցերէն խաղազութեան ստացուած կամ հիմն կը նշանակէ : Քաղքին մեկ մասը՝ Բենիամինի , միւս մասն ալ Յուդայի կը վերաբերէր (անս Յես . ԺԵ . 63 . ԺԸ . 28) : Ամբողջ քաղաքը քառաբլուր բարձր ժայռի մը վրայ շինուած է , և հիւսիսային կողմէն զատ միւս երեք կողմերը սեղ (ցից) զառ 'ի վեր , և վարէն երեք կողմանէ խորածորովմը պատած է . ձորին անդիի գին ալ զարձեակը բարձր լեռներ կան (Սաղմ . ՃԻԵ . 2) , այնպէս որ ճամբորդ մը մինչև որ ազէկ մը չմտենայ , չի կրնար քաղաքը տեսնել : Շրջակայ անգերը զատ քարուտ , և բոլորովին չոր ու անբեր են :

Երուսաղեմի ընդարձակութիւնը միշտ մի և նոյն եղած չէ : Ամենէն մեծ ընդարձակութիւնը՝ վերջին անգամ Յիսուսի ձեռքով կործանած ժամանակն էր : Երուսաղեմ կը պարունակէր անտեսնելի Սիոն, Ակրա, Մորիա՝ և Պեղեթա կոչուած բլուրները կամ լեռնակները, ուստի և պարսպին բոլոր շրջապատն էր գրեթէ չորս ու կէս մղոն : Սիոն լեռը քաղքին հարաւային կողմն էր . անոր մօտ հիւսիսային դին էր Ակրա : Սիոն Ակրայէն աւելի բարձր էր, ուստի և Երուսաղեմին աս կողմը կը կոչուէր Աւերին քաղաք, Ակրայի վրայ շինուած մասն ալ՝ սաորին քաղաք . սաորնք բարձր պարսպով մը զատուած էին : Աւերին քաղաքը Գալիթ շինեց, ինք ալ այն մասին մէջ Սիոն լեռան վերայ կը բնակէր : Մորիա՝ լեռն Ակրայի արեւելեան կողմը կ'իյնայ : Յաճարը հոս շինուած էր, և հոն երթալու ճամբան դիւրացնելու համար՝ Մորիահի և Ակրայի մէջտեղի ձորը գրեթէ լեցուեցաւ : Դարձեալ նոյն Մորիահ լեռը ուր հիմա Էօմերի մզկիթը շինուած է՝ կամրջով և հողաբլուով մը հաղորդակցութեան մէջ էր նաև Սիոնի հետ : Քաղքին հիւսիսային կողմն էր Պեղեթա լեռը զոր Ագրիպպա քաղքին մէջ առաւ :

Առաջին Յաճարը Սողոմոնի ձեռքով շինուելով իբր 34 տարի փառաւոր և պայծառ թնաց . յետոյ Եգիպտոսի Սիսակ Թագաւորը գալով կողոպտեց զայն . այնուհետև ալ քանի մը անգամ այլևայլ թշնամիներու ձեռքով աւարի առնուելով՝ ի վերջոյ Բաբելացոց Նաբուգոդոնոսոր Թագաւորին ատենը (588 Ն. Ք. զ. Քր.) հրոյ ճորակ եղաւ (Դժագ. Ի. 8, 9. Բ Մնաց. ԼԶ. 17—21) :

Երկրորդ Յաճարը Ջորաբարելի ձեռամբ շինուեցաւ՝ առջինէն շատ նուազ փառք (Անդ. Բ. 3) . յետոյ Ասորոց Թագաւորներուն (Աղեքսանդրի յաջորդներուն) ժամանակն Անտիոքոս Եգիպտոս (168 Ն. Ք. զ. Քր.) ողջակէզի սեղանին վրայ Արամազդայ պատկերը կանգնելով պղծեց Յաճարը, որ երեք տարի այնպէս մնալէն ետքը Յուդայի Մակաբէի ձեռքով մաքրուեցաւ և նորոգուեցաւ (165 Ն. Ք. զ. Քր.) :

Քրիստոսի ծննդեանն տասնևվեց տարի առաջ Մեծն Հերովդէս առ Յաճարը նորոգելու սկսաւ . ինն ու կէս տարուան մէջ ողն գործին 18 հազար բանուոր գործածեց , և առաջին Յաճարին շքեղութեանն ու պայծառութեանը հաւատարեցնելու համար բնաւ ծախուց չինայեց : Հերովդէ մահուանն ետքը Հրեայք յառաջ տարին շէնքը զարդարել և ընդարձակել , այնպէս որ երբ Յէրն մեր քարոզել սկսաւ , Յաճարին այս նորոգութիւնը դեռ լմնցած չէր , թէպէտ Հերովդէ խնամովը շինութեան նիւթերուն հաւաքուելէն և գործի սկսուելէն մինչև այն ատենը 46 տարի անցած էր (Յովհ . Բ . 20) : Իբր 40 տարի ետքը երբ Յիտոս Երուսաղէմ պիտի առնէր , ուզեց Յաճարն անվնաս պահել . բայց անոր ջանքերն 'ի դերև ելան և Յաճարը հրոյ ճարակ եղաւ , ըստ Յովսեպոսի՝ ճիշտ նոյն ամսուան միւսնոյն օրը՝ յորում առաջին Յաճարն այրած էր Նարուզոդոնոսորի ձեռօք , այսինքն՝ Ապ (Յուլիս) ամսոյն 10 ին : Այս երկրորդ Յաճարին մէջ հաւանականաբար չկար՝ ոչ տապանակ , ոչ քարեղէն տախտակներ , ոչ նուիրական հուր երկնալոյց , որոնց ամէնը կար առաջին Յաճարին ատենը . բայց և այնպէս երկրորդ Յաճարն անկէ աւելի փառաւոր եղաւ բոլոր ազգաց Յանկալոյն հոն գալովն ու վարդապետելովը (Անգ . Բ . 7—9) :

Այս Յաճարին բոլոր շէնքը կարծր և ուղիտակ քարերէ էր , բոլորաիքն ալ քաշուած էր շատ բարձր պատ մը , որուն « Գեղեցիկ » կոչուած արևելեան դուռնէն ներս մտնողը՝ նախ կը տեսնէր դուռնի , այսինքն՝ Հեթանոսաց կոչուած գաւիթը որ շուրջ կը պատէր բոլոր Յաճարը , և որուն իւրաքանչիւր կողմը իբր 200 կանգուն երկայնութիւն ունէր : Յիշեալ գաւթին մէջն էր վաճառանոցը ուր զոհի համար ամէն պէտք եղած բան , զորօրինակ՝ աղ , խունկ և անասուն , կը ծախուէր . հոս կը նստէին նաև լամայափոխները , հոս կամ թերևս բոլորաիքի տեսեակներէն մէկուն մէջ էր նաև դանձատունը : Աս գաւթէն ներս և անկէ քանի մը ոտք բարձր ուրիշ գաւիթ մը կար որ Առնոյց գաւիթ կը կոչուէր , և միջնորմով մը առջինէն բաժնուած

էր. առ միջնորմին կամ անջրպետին վրայ խորագիրներ կը գգուշացնէին Հեթանոսները և անմաքուր անձինք՝ իմացնելով անոնց որ, եթէ հոն մտնեն, պիտի պատժուին (Եփես. Բ. 13, 14) :

Ասկէ ալ տասնևհինգ ոտք բարձր ոսնդուղներով կը մտնուէր Ներսիս կամ Աբուս գաւիթը : Աս երկու (արանց և կանանց) գաւիթներուն մէջ, որոնց երկուքը միանգամայն Իւրայիւի գաւիթ ալ կը կոչուէին, կ'աղօթէր ժողովուրդը, մինչ քահանան Սրբարանին մէջ խնկարկուծիւն կ'ընէր (Ղուկ. Ա. 9, 10) : Այս քառակուսի գաւիթին չորս անկիւնը՝ բորոտներուն մաքրութեան և Նազովրացոց (ուխտաւորաց) գործածութեան համար սենեակներ կային :

Իսրայելի կոչուած գաւիթներէն աւելի ներս էր քահանայի գաւիթը, ուր միայն քահանայից մտնելու հրաման էր : Այս գաւթէն տասուերկու ոտք սանդղով մը կը մտնուէր բուն Յաճարը, ուր երթալու համար հարկ էր անցնիլ սրահէ մը որուն մէջ ջերմեռանդ երկրպագուաց տուած նուէրները կը պահուէին (Ղուկ. ԻԱ. 5) : Աս սրահին մէջն էին Սանհետրիմ կոչուած ժողովին համար յատկացեալ սենեակները, թէ և երբեքսի դուրսի գաւթին սենեակներուն մէջ ալ կ'ըլլար այն ժողովը :

Յիշեալ սրահէն կը մտնուէր բուն Յաճարը որուն մէջ էր Սրբարանն ու Սրբութիւն Սրբութեանցը, որոնք վարագուրով մը իրարմէ բաժնուած էին : Աս վարագուրը Տէրոջը խաչելութեան ատենը վերէն վար երկուքի ճեղքուեցաւ՝ ցունցնելու համար որ միմիայն միջնորդին Յիսուս Քրիստոսի ձեռքով Սուրբ տեղը մտնելու ճամբան յայտնուեցաւ, և տեղն ամենուն մատչելի եղաւ (Եբր. Ժ. 19—22) : Սրբութիւն Սրբութեանցը 20 կանգուն երկայնութիւն ունէր, նոյնչափ ալ լայնութիւն : Հոս տարին անգամ մը, այն է՝ քառութեան օրը, քահանայապետը միայն կրնար մտնել (Ղևտ. ԺԶ. 2. 15. 34. Եբր. Թ. 2—7) : Երուտագեմի կործանման ատենը Տիտոս հոս գտաւ ոսկիէ աշտանակը, առաջաւորութեան հացին սեղանը և նուիրական փողերը որոնք յորելեան տարին հռչակելու համար կը գործած-

ոււէին : Յիտասի կամարը որ Հռոմի մէջ դեռ կը կենայ՝ տակաւին, կը պահէ առ մնացորդներուն պատկերը : Այս կամարն Աստուածաշունչին ճշմարտութեան ապացոյցներէն մէկն է :

Տաճարին պարոպին հիւսիսային արեւմտեան անկիւնը կար ամուր բերդ մը Անդոնիա կոչուած, զոր Մեծն Հերովդէս շինեւ տուած էր . առիկա սանդղով կամ աստիճանաւոր ելքով մը Տաճարին գաւիթներուն հետ հաղորդութիւն ունէր, և Հռոմայեցի զօրաց զնդի մը պահպանութեանը յանձնուած էր : Առ բերդէն էր որ հազարապետն իր զինուորներովը փութաց դադրեցնել աղմուկը զոր Հրեայք՝ կարծելով թէ Պողոս Յոյն Տրոփիմոսը Տաճարը բերած էր, Առաքեալին դէմ՝ յարուցած էին : Այս բերդը Հռոմայեցի կուսակալներուն պալատն էր և հաւանականաբար հոս կը բնակէր Պիղատոս, երբ Կեսարիայէն Երուսաղէմ կու գար : Հոս կը տեսնուէին դատերը նոյն իսկ կուսակալին առջև (Յովհ. ժԼ. 28. 33. ժԹ. 9. Մատթ. ԻԷ. 27) : Պալատին առջևը Կապաթա կոչուած բարձր քարայտակ մը կար . սոսր վրայ շինուած էր ատեանը կամ դատաստանարանը : Հրէից դատերն առ տեղը կ'որոշուէին և կը զճուուէին, որպէս զի անոնք պալատը մտնելով չպզծուէին : Պիղատոս պալատին ներսն էր, երբ զՅիսուս առանձին կը քննէր, իսկ Հրեայք դուրսը քարայտակին վրայ կը սպասէին : Յետոյ Պիղատոս Յիսուսը դուրս հանելով՝ զանիկայ Հրէից առջևը քարայտակին վրայ դատելէն ետքը զինուորներուն մատնեց, որոնք նորէն Տէրը պալաաը տանելով՝ հոն ծաղրեցին (Մարկ. ժԵ. 16. 20) . և վերջապէս զանիկայ Արդարութեան դռնէն (Տաճարին արեւմտեան կողմէն) տարին Գողգոթա կոչուած տեղը որ քաղքէն դուրս էր, ուր և խաչուեցաւ :

Տաճարին հիւսիսային արեւելեան դին էր Ոչխարաց վաճառանոցը և անոր կից էր քեթհեզայ աւազանը : Վաճառանոցին մէջ կը ծախուէին Տաճարին պաշտամանը համար պէտք եղած ոչխարները, զորոնք քահանայից ներկայացնելէն առաջ՝ այն աւազանին մէջ հարկ էր լուանալ :

Երուսաղեմի արևելեան կողմը կ'իյնայ Ձիթենեաց լեռը՝ և սա երկուքին մէջտեղն է կեդրոն հեղեղատին ձորը։ 3000 տարիէ աւելի է որ այս ձորն իբր գերեզմանատեղի կը գործածուի։ Ասիկա Հին Գաակարանին մէջ Յովնափառու հովիտը կը կոչուի (Յովել Գ. 2)։

Նոյն քաղաքին հարաւային կողմը Հիննոնի ձորն էր (Գեհեն), ուր ժամանակաւ Հրեայք Մողոք կուռքը կը պաշտէին և իրենց տղաքն անոր կը զոհէին։ Բայց երբ Ովսիաթագաւորը զանոնք ճշմարիտ աստուածապաշտութեան դարձուց, այնուհետև այն ձորը քաղաքին ապականութիւնը և սպանուած յանցաւորաց մարմինները նետելու պիղծ աղբանոց մը եղաւ (Գ. Թագ. ԻԳ. 10. Յ Մնաց. ԻԸ. 3)։ Այն պիղծ նիւթերը սպառելու համար հոն շարունակ կրակ կը վառէր, վասնորոյ նոյն տեղն իբր հանդերձեալ պատժոց օրինակ համարուեցաւ (Մատթ. Ե. 22)։ Ձորին հարաւային կողմի զառիվայրին վրայ էր բրուտին արտը որ յետոյ այն պարագաներուն նկատմամբ որոնց պատճառաւ ծակու առնուեցաւ՝ Ակեղղամա, այսինքն՝ Ագարակ արեան կոչուեցաւ։

Ըստ Յովսէպոսի Երուսաղեմի կործանման ատենը միլիոնէ մը աւելի Հրեայ կորուսեցաւ, 97 հազար հոգի ալ գերի տարուեցաւ։ Անկէ գրեթէ վաթսուէն տարի ետքը այն Հրեաներն որ սկսած էին նորէն հոն ժողվուել՝ վերստին պքսորուեցան, և մահուան պատժոյ սպառնալեօք արգելուեցաւ անոնց նորէն հոն դառնալ։ Ցաճարին տեղն ալ իբրև արտ հերկուեցաւ։ Բայց քանի մը հարիւր տարի ետքը քաղաքը վերստին շինուեցաւ։ Պարոնիկները յԱ. Ց. 614 Երուսաղէմ աւարի առին, և ան ատեն 90 հազար Քրիստոնեայ սպանուեցաւ։ Նոյն քաղաքը 637 ին Սարակինսաց ձեռքն անցաւ, և, 'ի բաց առեալ Խաչակրաց ժամանակը որ է 1099—1187, անոնց իշխանութեանը ներքև մընաց մինչև 1517, այսինքն՝ մինչև Ցաճկաց կամ Օսմանեանց գալ և տիրելը։ Երուսաղէմ տակաւին 20,000 ի չափ բնակիչ ունեցող քաղաք է։

Տիտոսի Երուսաղէմ կործանելէն ետքը Հրեաներէն շա-

տերը փոխադրուեցան Գալիլիոյ ծովուն եզերքը Տիրերիա, որ երկար ատեն անոնց գրականութեանն ու կրօնական պաշտաման գլխաւոր նիստն եղաւ :

Երուսաղէմի հարաւային կողմը, և անկէ իբր քսան մղոն հեռու էր Քերրոն քաղաքը որ աշխարհիս ամենէն հին քաղաքներէն մէկն է : Հոս բնակեցան Աբրահամ, Իսահակ և Յակոբ, և հոս թաղուեցան՝ իրենք և իրենց կանայքը : Լրտեսներուն Աւետեաց երկիրը զրկուած ատենը՝ աս քաղաքին մէջ ենակայ որդիքը կը բնակէին : Յետու այս քաղաքը կործանեց, և տեղը տրուեցաւ Քաղերայ, բայց շինուելէն ետքը Ղևտացոց քաղաքներուն մէկն եղաւ : Դաւիթ այս քաղաքին մէջ Իսրայելի վրայ թագաւոր օծուեցաւ . Աբիսողոմ իր հօրը դէմ ապստամբած ատենը հոս գումարեց իր զօրքը, Դաւիթ ալ Յերուսթէն սպանողներն աս քաղաքին աւազաններէն մէկուն վրայ կախեց . աս աւազաններէն ոմանք դեռ կան (Թու. ժԳ. 23. Յես. ժ. 36—38. ժԴ. 13. ԻԱ. 13. Բ Թագ. Բ. 3. 4. 11. ժԵ. 7. 12. Գ. 12) : Քերրոն հիմա իբր 6 հազար Աբաբացի բնակիչ ունի, և հռչակաւոր մզկիթ մը որ Մահմետականաց ուխտատեղի է . ասոնք կը կարծեն թէ Մաքսիմիլիանի պլոն ու Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ գերեզմաններն աս մզկիթին տակն են :

Երուսաղէմի արևելեան դին կ'իյնայ Երիքով քաղաքն՝ իբր 20 մղոն հեռաւորութեամբ . ճամբան միշտ ամայի և վտանգաւոր է, այնպէս որ Հերոնիմոսի ժամանակն Արիւնստ ճամբայ կը կոչուէր : Երբ Իսրայելացիք այս քաղաքին մօտ հասան, մանանան դադրեցաւ, և ժողովուրդը սկսաւ Քանանու երկրին պողէն ուտել : Յետուայ ատենն այս քաղաքը հրաշքով կործանեցաւ, և անէծք դրուեցաւ զայն շինել յանգսնողին վրայ : Այս անէծքը 520 տարի ետքը կատարուեցաւ Յիէլի վրայ : Երիքով Եղիսէի ատենը Մարգարէից դպրոց եղած էր (Յես. Զ. 26. Գ Թագ. ժԶ. 34. Գ Թագ. Բ. 4, 5) : Հերովդէտ Մեծ հոս մեռաւ :

Երիքովի ու Յորգանանու մէջտեղն է Գաղգաղա կոչուած քաղաքն ուր Իսրայելացիք կանգնեցին տասուերկու

քար՝ որոնք Յորդանանու մէջէն առին, երբ Յեսուայ ժամանակ յիշեալ գեաին մէջէն յամաբաւ կ'անցնէին: Սամուէլ դատաստան ընելու համար ամէն տարի Գաղգաղա կ'երթար, Սաւուղ ալ հոն թագաւոր եղաւ: Այս քաղաքն ուր 'ի սկզբան մարգարէներու դպրոց մը կար՝ Աքազու ժամանակ կուսապաշտութեան կեդրոն, և մարգարէից զըւելի և գարշելի եղաւ: Այսպէս կուսապաշտութեամբ ապականեցաւ այնպիսի քաղաք մը՝ ուր Իսրայելի որդիքն Աստուծոյ հետ իրենց ուխտը նորոգած և իրենց զօրքով շատ անգամ Աստուծոյ զոհ մատուցանելու ելած էին (Յես. Գ. 19, 20. Ա. Թագ. Է. 16. Ժ. 8—13. ԺԱ. 15. Ովո. Թ. 15):

Երկրովէն 45 մղոն կամ 15 ժամ հեռու դէպ արևմտեան հիւսիս, գրեթէ նոյնչափ ալ Երուսաղեմէն հեռու դէպ 'ի հիւսիս էր Սամարիա քաղաքը, զոր Իսրայելի թագաւորն Ամրի քրիստոսէ իբր 926 տարի առաջ շինելով՝ իրեն արքայանիստ քաղաք ըրաւ: Սամարիա աւազանաձև հովտի մը մէջ բարձր բլրոյ մը վրայ շինուած ըլլալով՝ շատ ամուր քաղաք էր, բայց Սաղմանասար Ասորեստանեայց թագաւորն երեքամեայ պաշարումէ մը ետքը զայն առաւ (Գ. Թագ. ԺԸ. 9, 10): Այնուհետև շատ քիչ յիշատակութիւն եղած է Սամարիոյ վրայ մինչև Մեծին Աղեքսանդրի ժամանակը: Աղեքսանդր այս քաղաքն առնելով անոր բնակիչներուն մեծ մասը սպաննեց, մնացածները բնակեցուց Սիւքեմ, որ Սամարիայէն 2 ժամու չափ հեռու շատ հին քաղաք էր: Հերովդէս Մեծ Սամարիա նորէն շինելով կոչեց Սեբաստիա (Աւգոստոս), և այս անուամբ կը կոչուի տակաւին նոյն քաղաքը:

Միջերկրական ծովուն եզերքը, Երուսաղեմէն իբր 55 մղոն դէպ 'ի հիւսիս էր Վեսարիա քաղաքը որ այնպէս յաճախ յիշուած է Գործոց Առաքելոց մէջ (Գործ. Բ. 40. Թ. 30. Ժ. 1. 24. ԺԱ. 11. ԺԲ. 19. ԺԸ. 22. ԻԱ. 8. ԻԳ. 23. 33. ԻԵ. 1. 4. 6. 13): Հերովդէս Մեծ շինեց աս քաղաքն ալ, որ երկայն ատեն Հրէաստան եկող Հռոմայեցի կուսակալաց նիստն եղաւ: Հիմա աս

քաղաքը բոլորովին աւերակ է, և բաց 'ի թափառական
Արաբացիներէ ուրիշ բնակիչ չունի :

Իբր 150 մղոն կամ 50 ժամ հեռու է Երուսաղէմէն դէպ
'ի հիւսիս հին Դամասկոս քաղաքը, որ Միջերկրական
ծովէն իբր 50 մղոն հեռու գեղեցիկ գաշտագետնի մը վրայ
չինուած է՝ Լիբանանու ստորտան, արևելեան դին : Դաշ-
տագետինը որ Պարասա և Աւաճ, կամ ըստ Սուրբ Գրոց՝
Աբանա և Փարփար գետերէն կ'ոռոգուի՝ դրախտաւէտ և
պրակաշատ, արգասաւորութեան և գեղեցկութեան մասին
ալ սքանչելի է : Դամասկոս միշտ հարուստ և վաճառա-
շահ եղած է : Գլխաւոր փողոցներուն մէկը որ վաճառանո-
ցի փողոց կը կոչուի՝ տակաւին շիտակ կ'անցնի քաղքին
մէջէն, և հաւանականաբար այն փողոցն է որ Պողոսի ժա-
մանակը կը կոչուէր « Ուղիղ » (Գործ . Թ . 11) :

Դարձեալ անկէ դէպ 'ի հիւսիս կար ուրիշ հին քաղաք
մը, Եմաթ՝ Որոնդէս գետին քով, և Ասորոց երկրին
մէջ նոյնպէս Եմաթ կոչուած տէրութեան մը մայրաքա-
ղաքն էր : Աս տէրութեան երկիրն Որոնդէսի անձուկ հով-
տին մէջն էր, որուն մնւտքը կամ բերանը որ Սուրբ Գրոց
մէջ « Եմաթի մնւտք » կը կոչուի՝ Աւետեաց երկրին վեր-
ջին հիւսիսային սահմանն էր (Յես . ԺԴ . 5, ԴԹագ . Ը .
65 . Եզեկ . ԽԷ . 17) :

Աշխարհագրական տեղեկութիւնը շատ անգամ Աստ-
ուածաշունչին հակասական երևցած խօսքերը կը միաբանէ .
շատ խօսքերու ալ ուղիղ կամ բուն իմաստը և վայելչու-
թիւնը կը յայտնէ : Ջոր օրինակ՝ Ասիա բառը նոր Կոս-
կարանին մէջ կը նշանակէ երբեմն ընդհանուր Ասիոյ այն
մասը որ հիմա Փոքր Ասիա կամ Անադոլիա կը կոչուի :
Երբեմն ալ նոյն Փոքուն Ասիոյ մէկ դոյզն մասը, որուն
մայրաքաղաքն էր Եփեսոս, ուստի երբ Առաքեալն « Ասի-
այի մէջ », այսինքն՝ փոքուն Ասիոյ յիշեալ մասին մէջ
Աստուծոյ խօսքը խօսելէն արգելուեցաւ, իբէն օրինաւոր
համարեցաւ Բիւթանիա երթալ, որ նոյնպէս Փոքր Ասիոյ
մէջ, և անոր մէկ գաւառն էր (Գործ . Թ . 9 . ԺՁ . 6 . Ա
կորնթ . ԺՁ . 19 . Յայտ . Ա . 4) :

Գործոց Ա. գլխոյն 12 համարէն այնպէս կը հասկնուի որ Յէրը 2իթենեաց լեռնէն երկինք համբարձաւ. ուր ըստ Ղուկասու (Գլ. ԻԴ. 50) Քրիստոս իր աշակերտները Քեթանիա հանեց ու անկէ երկինք ելաւ: Բայց այս ներկուքին մէջ ամենևին հակասութիւն չկայ, քանզի Քեթանիա գեղը 2իթենեաց լեռան արևելեան կողմն է՝ նոյն լեռան գագաթին մօտ, ուստի և համբարձման տեղը կըրնար 2իթենեաց լեռան վրայ և միանգամայն Քեթանիոյ մօտ ըլլալ:

Քրիստոսի ատենը Հրեայք իրենցմէ զատ ուրիշ բոլոր քաղաքակիրթ ազգաց յոյն անունը կու տային (Գործ. ԺԹ. 10. Ի. 21. Հռոմ. Ա. 16. Բ. 9, 10. Ժ. 12), ինչպէս որ Յոյնք ալ իրենցմէ ուրիշ ազգերը բարբարոս կ'անուանէին. վասնորոյ Մատթէոս Աւետարանչին Քանուայի անուանած կ'իկնը՝ Մարկոսէն Յոյն և Փիւնիկ Ասորի կը կոչուի (Մատթ. ԺԵ. 22. Մարկ. Է. 26): Մարկոս « Ասորի » բառն հաւանականաբար դիտմամբ աւելցուցած է, որպէս զի Հռոմայեցի ընթերցողք, որոնց համար յիշեալ որբազան մատենագիրը յատկապէս իր Աւետարանը կը գրէր, Փիւնիկեցի բառը տեսնելով կ'իկնը կարբեդոնացի չկարծէին, քանզի Հռոմայեցւոց մէջ կարբեդոն՝ « քաղաք Պունիկեցւոց », կարբեդոնացիք ալ « Պունիկեցի » կը կոչուէին:

Դարձեալ Քրիստոսի ատենն այն Հրեաները որ ըստ մեծի մասին Հրէաստանէն դուրս տեղեր կը բնակէին ու Հելլենական լեզուաւ և կերպերով կը վարուէին՝ կը կոչուէին « Հելլենացեալ » (Գործ. Զ. 1. Թ. 29):

Եսայի (Գլ. ԻԸ. 1) Սամարիոյ համար ըսած է. « Այ՛յ Եփրեմի գինովներուն հպարտութեան պսակին՝ որուն փառաց զարդը թառամեալ ծաղիկ մըն է, որ գինիով թըմբածներուն պարարտ հովիտին գլուխը կը կենայ »: Եսայեայ աս խօսքը կ'ականարկէ ուրախութեան և հանդիսի օրեր ծաղկով պսակուելու հին սովորութիւնը: Բայց հաւանական է նաև թէ Մարգարէն Եփրեմի մայրաքաղաքին (« Հպարտութեան պսակին ») Սամարիոյ գրեցը նայելով

այսպէս կը խօսի, քանզի արդարև Սամարիա բոլորակ բլրոյ մը գագաթը (« պարարտ հովտի գլուխը ») շինուած էր, և թերևս աս պատճառաւ Մարգարէն յիշեալ քաղաքը գինովի մը գլուխը բոլորող ծաղկեայ պտակին նմանցնել յարմար տեսաւ :

Նշանակէս Եդովմի գլխաւոր քաղաքը Պետրա՝ իբրև վէմին խոռոչներուն մէջ բնակող ու բարձր բնակարան ու նեցող նկարագրուած է (Աբդ . 3) . և ասիկա արդարև շատ յարմար կու գայ այն նշանաւոր քաղաքին գրիցը՝ որուն աւերակները գտնուեցան ներկայ դարուս մէջ :

Յովհաննու Գ . դիտոյն 4 համարին մէջ քրիստոսի համար ըսուած է թէ « Պետք եղաւ որ Սամարիայի մէջէն անցնի » : Ոմանք « Պետք եղաւ » խօսքն այնպէս հասկցան որպէս թէ քրիստոս աստուածային նպատակի մը հասնելու համար այնպէս ընել հարկ տեսաւ . բայց այն խօսքը լոկ տեղական հարկ մը կը ըցուցնէ . քանզի Սամարիա Հրէաստանի ու Գալիլիոյ մէջտեղն էր, ուստի և ուղիղ ճամբ բով Գալիլեայէն Երուսաղէմ՝ երթալու համար Սամարիոյ երկրէն անցնիլ հարկ էր :

Սուրբ Գրոց մէջ շատ անգամ « Ծով » բառը մեծ գետ կը նշանակէ : Այսպէս Նեղոս գետը Նաւումայ Գ . դիտոյն 8 համարին մէջ ծով կոչուած է . և այսպէս ըլլալն անկէ յայտնի է, որ Մարգարէին նկարագիրը Եգիպտոսի հին մայրաքաղաքին Նով—Ամմոնի կամ Թերէի վրայ է, որ Նեղոս գետին եզերքն էր, Միջերկրական ծովէն ալ 300 մղոն հեռու : Նեղոս տակաւին նոյն անուամբ կը կոչուի, այսօրնքն՝ « Էլ պահր » որ Արաբերէն ծով ըսել է : Նշն ծով բառիւ յիշուած է նաև Եփրատ գետ Երեմիայի մարգարէութեան մէջ (Երեմ . ԾԱ . 36) :

Սուրբ Գրոց մատենագիրները Վրդի կոչած են նաև այնպիսի երկիրներ որոնք, ճշգիւ խօսելով . կղզի չեն . թերևս սա պատճառաւ որ Հրէաստանէն կամ Պաղեստինէն այն երկիրները երթալու համար՝ ծովէ անցնիլ հարկ էր : Տես Ծննդ . Ժ . 5 . Սաղմ . ՀԲ . 10 , և այլուր :

ԳԼ . ԺԷ

Նոր Արարանին Տիջ Լինէն Բերած
Վկայութիւնները :

Նոր Կտակարանին Հինէն բերած վկայութիւնները շատ օգտակար են , քանզի Հին և Նոր Կտակարաններուն բուն և սեպհական վարդապետութեանց միևնոյն ըլլալը լուսաւոր կերպով կը ցուցնեն : Դարձեալ Սուրբ Գրոց պատմութիւններն , այլաբանութիւններն ու կանխատեսութիւնները մեկնելու և անոնցմէ այլևայլ կրօնական ճշմարտութիւններ և կարևոր խրատներ հետեցնելու գործնական օրինակներ կ'ընծայեն , որոնք մեծ արժէք ունին , ըստ որում առ օրինակները տուող Հեղինակները ներշնչեալ անձինք են :

Նոր Կտակարանին Հինէն բերած վկայութիւնները շատ են , բայց բոլորը երկու կարգ կրնան բաժնուիլ . Կոչումներ , այսինքն՝ բառ առ բառ բերուած վկայութիւններ , և՛ Ակնարկութիւններ , այսինքն՝ ըստ իմաստին միայն յառաջ բերուած վկայութիւններ : Առջիններն 263 են . վերջիններուն թիւը 376 ի կը հասնի , ուստի վկայութեանց թիւն է ընդ ամէնը 639 : Ասոնցմէ ունի

Մատթ .	37	43	Կողոս .	—	2
Մարկ .	17	10	Բ թեո .	—	2
Ղուկ .	19	31	Ա Յիմ .	1	4
Յովհ .	15	19	Բ Յիմ .	1	1
Գործ .	31	21	Եբր .	33	44
Հռոմ .	52	15	Յակ .	5	10
Ա Կոր .	18	17	Ա Պետ .	10	9
Բ Կոր .	9	6	Բ Պետ .	1	9
Գաղա .	9	5	Ա Յովհ .	—	4
Եփես .	4	3	Յուդայի	—	4
Փիլիպ .	—	2	Յայտ .	1	115

Ասոնց մէջ Հնգամատենէն եղած Կոչումներն 90 ի կը հասնին, Ակնարկութիւններն 100 է աւելի են. Սաղմոսներէն եղած Կոչումները 71 են, Ակնարկութիւններն՝ 30. Եսայիէն Կոչումներ՝ 56, Ակնարկութիւններ՝ 48:

Առաքելոց ժամանակը Եօթանասնից Թարգմանութիւնը Եբրայական բնագրէն աւելի գործածական էր, ուստի և Նոր Կտակարանին մէջ Հինէն եղած վկայութիւններն ընդհանրապէս յիշեալ Թարգմանութեան համեմատ են. երբեմն միայն Եբրայականին համեմատ և Եօթանասնից օրինակէն տարբեր. աւելի յաճախ՝ թէ՛ Եբրայականին և թէ՛ Եօթանասնից ընդհանուր միտքը կ'ընծայեցնեն:

Գրարձեալ Նոր Կտակարանին հեղինակներն իրենց բերած վկայութիւններուն մէջ Հին Կտակարանին խօսքերը երբեմն բառ առ բառ կու տան, երբեմն ալ նոյն խօսքերը կ'ընդլայնեն կամ կը համառօտեն, սակայն անոնց բուն իմաստը երբէք չեն այլայլեր:

Այլերևի թէ Նոր Կտակարանին հեղինակները Հինէն վկայութիւններն առած են սա սկզբունքով. Ուր որ Եօթանասնից Թարգմանութիւնը Եբրայական բնագրին միտքը քաւական ճիշդ կու տայ՝ Ներշնչեալ Հեղինակները նոյն Թարգմանութիւնը կը գործածեն, ապա թէ ոչ՝ սւղղակի Եբրայական բնագրէն կը Թարգմանեն: Ձոր օրինակ. Մատթէոս Եօթանասնից Թարգմանութիւնը յաճախ կը գործածէ, բայց ուր որ բերած վկայութիւնը Մեհոյիին կը վերաբերի՝ աւելի կ'ընտրէ Եբրայական բնագրը որուն ճշդիւ կը հետևի: Բայց Պօղոս Եբրայեցւոց Թուղթին մէջ գրեթէ միշտ, և ընդհանրապէս բառ առ բառ, Եօթանասնից Թարգմանութեանէն վկայութիւն կը բերէ:

Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած վկայութեանց անկէ՝ տարբեր ըլլալուն պատճառն ընդհանրապէս սա է, որ վկայութիւնները բերող Ներշնչեալ Հեղինակներն ոչ այնչափ բաւերուն որչափ իմաստին կարեւորութիւն կու տային. բայց և այնպէս կան վկայութիւններ՝ որոնց տարբերութիւնը գիտմամբ կամ յատուկ նպատակով է: Ձոր օրինակ, երբեմն վկայութիւնը բերող հեղինակը, քերտ-

կանական օրինաց հետևելու համար, բերած վկայութեանը մէջ բառերուն թիւը, դէմքը, ժամանակը, և այլն, փոխած է իր խօսքին պահանջմանը համեմատ, այսինքն՝ եզակին յոքնակի կամ յոքնակին եզակի ըրած է, ներգործականը՝ կրաւորական, կամ կրաւորականը՝ ներգործական. և ուրիշ ասոնց նման փոփոխութիւններ: Բաղդատէ Ղուկ. Գ. 12. Բ Օր. Զ. 16 ին հետ. նոյնպէս Ղուկ. Ը. 10. Եսայ. Զ. 9 ին հետ. դարձեալ Յովհ. ԺԲ. 36 և Սաղմ. 1Դ. 20. ԵԼ. ԺԲ. 46 ին հետ):

Դարձեալ նոյն հեղինակները, երբ Հին Վտակարանէն վկայութիւն մը իբր իրենց մէկ փաստաբանութեանն ապացոյց բերել ուզելով՝ կը տեսնեն որ վկայութեան մէջ մասնաւոր գաղափար մը ընդհանուր նշանակութիւն ստանցող բառով մը բացատրուած է, և իրենք կ'ուզեն այն մասնաւոր գաղափարը ճշգիւ յայտնել, Հին Վտակարանին գործածած ընդհանուր բառին տեղ՝ մասնաւոր գաղափարն յայտնող բառը կը գնեն, և ասով Հին Վտակարանին անորոշութիւնը ճշգրտած և՛ որոշած կ'ըլլան: Այսպէս Պողոս Երբայեցեաց թղթոյն մէջ (ԳԼ. Ե, 10) Սաղմոսին (ԳԼ. ԺԺ. 4) խօսքին *Կահուայ* բառը, որ ընդհանուր բառ մըն է և քահանայ ու քահանայապետ միանգամայն կը նշանակէ, իւր առաջիկայ նիւթոյն նայելով՝ «քահանայապետ» կը թարգմանէ: Նոյնպէս նոյն թուղթին մէջ (ԳԼ. Ա. 6) Սաղմոսին (ԳԼ. ԴԷ. 7) Աստուծոյ բառը, որ ըստ Եբրայեցեաց բուն Աստուծոյ, չառտուածոց, հրեշտակաց և որ և իցէ բարձր իշխանութեան տէր անձի մը կը տրուէր, իւր առաջիկայ խնդրոյն նայելով՝ «հրեշտակ» կը թարգմանէ, և բերուած վկայութեան Երբայեցեցէն բնագրին բուն միտքն ալ ան է: Դարձեալ նոյն Առաքեալը (Ա Վորնթ. Գ. 20) Սաղմոսէն (ԳԼ. ԴԴ. 11) վկայութիւն բերելով՝ բնագրին մէջ, իմաստուն, այսինքն՝ բանաւոր, խոհուն, նշանակութեամբ ընդհանուր մտօք գործածուած «Մարդ» բառին տեղ՝ յատուկ «Իմաստուն» բառը կը գործածէ:

Դարձեալ երբեմն կանխատարութեան մը մէջէն մաս մը

զանց առնուած է՝ հեղինակին առաջիկայ խնդրոյն նկատմամբ կարեւորութիւն մը չունենալուն համար, և կամ վասն զի, եթէ այն մասը մէջ բերուէր, հաւանականաբար մէջ բերել հարկ պիտի ըլլար ուրիշ խնդիր մ'ալ, զոր քննութեան առնելը՝ վկայութիւնը բերող հեղինակին նպատակէն դուրս էր : Զոր օրինակ . Մատթէոս (ԳԼ. ԻԱ. 5) Զաքարիայի (ԳԼ. Թ. 9) մէկ խօսքը վկայութիւն բերելով՝ « Փրկիչ » բառը զանց ըրած է, քանզի Մեսիային Փրկիչ ըլլալն այն դէպքին յատուկ վերաբերութիւն չունէր : Նոյնպէս Պօղոս (Եբր. Ժ. 16) Երեմիայէն (ԳԼ. ԼԱ. 33 և 34) վկայութիւն բերելով՝ պարբերութիւն մը զանց կ'ընէ, որ անատեն դեռ չկատարուած խոստում մը կը պարունակէր :

Ապա քանի որ ընդհանուր սկզբունքն աս է որ Ներշնչեալ Հեղինակները Հին Կտակարանին իմաստը մանաւանդ քան թէ բառերը պահելու փոյթ ունէին, պէտք չէ առաւարանօք հետեցունել թէ բառական տարբերութիւնները սխալմունք կամ առանց դիտաւորութեան եղած են, նա մանաւանդ գիտնալու է թէ բառական տարբերութիւնները շատ անգամ օգտակար խրատներ թելադրելու կը ծառայեն :

Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած վկայութեանց մէկ գլխաւոր օգուտը սա է՝ որ անոնցմով կը տեսնուի թէ երկու Կտակարաններուն սկզբունքը կամ վարդապետութիւնները միեւնոյն են : Այսպէս Նոր Կտակարանին մէջ բերուած վկայութիւններէն կը սորվինք որ Հրէական, ինչպէս նաև Քրիստոնէական Եկեղեցին կը հաւատար թէ հօգւոյն կեանքը հաւատքով է և փրկութիւնը Քրիստոսի ձեռօք, և թէ մարդիկ սուրբ ըլլալու պարտական են :

Հաւատքով և Քրիստոսի ձեռօք փրկուելու վարդապետութիւնը Հին Կտակարանէն բերուած վկայութիւններով ցուցուած է Հռոմ. Ա. 17. Դ. 6—13. Գաղ. Գ. 6—9. Ա Պետր. Բ. 6, 7. Յովհ. Բ. 56 : Նոյնպէս ցուցուած է Եբր. Գ. 7—13 թէ մարդիկ անհաւատութեան համար կը զստապարտուին : Նմանապէս Հռոմ. Ժ. 11—13 և ԺԱ.

5 ցուցուած է Հին Կտակարանէն թէ շնորհքին խոստումն ու Աստուծոյ ընտրութիւնն այնչափ ընդարձակ են որչափ է մարդոց անկումը : Ուրիշ տեղեր ալ , ինչպէս՝ Բ Կորնթ . 2 . 16, 17 . Մատթ ԻԲ . 37—39 . ԻԳ . 23 . Ա Պետր . Ա . 16 , Հին Կտակարանէն ցուցուած է թէ մարդիկ սուրբ ըլլալու պարտական են , և թէ բուն սրբութիւնը սիրոյ վրայ կը կայանայ : Քրիստոս ալ իւր աստուածային օրինակաւն ու վարդապետութեամբը մեզ առ այն կը յորդորէ : Շնորհքն ալ , Յակոբոսի բերած վկայութիւններուն նայելով (Յակ . Գ . 6) , խոնարհներուն կը տրուի : մանաւանդ անոնց որ զայն լաւագոյն կերպով կը գործածեն : Վերջապէս Եփես . 2 . 1—3 , և Ա Պետր . Գ . 10 , 11 , ըսուած է թէ ժամանակաւոր օրհնութիւններ յաստիս , Աւետարանին տնտեսութեանը ներքև անգամ , մեր առ Աստուած հնազանդութեանը հետ կապուած են :

Հին Կտակարանին մէջ Աստուծոյ վրայ ըսուած խօսքերը՝ Նորոյն մէջ իբր Մեսիայի Աստուածութեանը և Հոգւոյն Սրբոյ ներգործութեանը վերաբերեալ վկայութիւններ կը յիշուին : Զոր օրինակ , Գայթակզութեան քարը որուն համար Եսայեայ մէջ (ԳԼ . Ը . 13, 14) ըսուած է թէ նոյն ինքն Եհովան է , և որուն վրայ Խորայէլ ինկաւ՝ Նոր Կտակարանին Հեղինակներէն Քրիստոսի վրայ առնուած է (Հռոմ . Թ . 32, 33 . Ա Կորնթ . Ա . 23) : Նմանապէս Եսայեայ ԽԵ . 18—25 յառաջ բերուած Խօսողը որուն ամէն ծունկ պիտի կրկնուի , և զոր Պօղոս (Հռոմ . ԺԳ . 10 . 11) Քրիստոսի կը վերաբերէ ցուցնելու համար թէ ամէն բան Քրիստոսի պիտի հնազանդի՝ յիշեալ Մարգարէէն Եհովա կոչուած է : Դարձեալ , նոյն Եսայեայ 2 . 1—10 նկարագրուած տեսլեան մէջ , Մարգարէին հետ Խօսողին ձայնը՝ « Տէրօջը ձայնը » կոչուած է , և Յովհաննէս (ԳԼ . ԺԲ . 41) նոյն տեսիլքը Քրիստոսի փառաց տեսուածութիւնը կը համարի . Պօղոս ալ (Գործ . ԻԸ . 25) նոյն Խօսողին համար կ'ըսէ թէ Հոգին Սուրբ էր : Եբրայեցւոց թղթոյն մէջ (ԳԼ . Ա . 6 . 8 . 10) Առաքեալը Քրիստոսի կը վերաբերէ Սաղմոսաց հեռեկեալ համարները . ՂԷ . 7 ,

ԽԵ . 6 , 7 . ՃԲ . 25—27 , որոնց մէջ յիշուած Անձը նկարագրուած է իբրև աշխարհի իշխան և անփոփոխ արարիչ :

Թէ հոգւոյ անմահութեան , յարութեան և հանդերձեալ դատաստանին վարդապետութիւններն ալ հին , այսինքն՝ Հրէական Եկեղեցւոյն յայտնուած էին՝ կը ցուցուի Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած վկայութիւններով , զոր օրինակ՝ Մատթ . ԻԲ . 32 . Եբբ . ՃԱ . 5 . 13 , 14 . և Յուգ . 14 , 15 և ուրիշ տեղեր ուր Տէրոջը մեծ օրը յիշուած է , ինչպէս՝ Ա Թես . Ե . 2 . Յայտ . Զ . 17 : Տես և Յովելայ Բ . 31 և Մաղաքիայի Դ . 5 . բաղդատէ նաև Պան . ՃԲ . 2 . և Ովս . ՃԳ . 14 :

Պէտք է գիտնալ սակայն որ Նոր Կտակարանին մէջ բերուած վկայութիւնները հատակոտորներ միայն ըլլալով՝ երկու Կտակարանաց սկզբանցն ու վարդապետութեանցը միեւնոյն ըլլալն այնպէս լիովին չեն ցուցուներ՝ որչափ է : « Հրէից բովանդակ կրօնական գրութիւնը » , կ'ըսէ անուանի հեղինակ մը , « բառին ճիշդ նշանակութեամբն՝ ամբողջ մարգարէութիւն մըն է . Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած վկայութիւններն՝ անոր ոգւոյն նշանակ միայն են » :

Քիչ մը առաջ ըսինք թէ Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած վկայութիւնները՝ Սուրբ Գիրք մեկնելու , և անկէ կրօնական ճշմարտութիւններ ու բարոյական խրատներ հետեցնելու գործնական օրինակներ կ'ընծայեն : Ղուկասու ԻԴ . 27 կը պատմուի թէ Տէրն մեր իր յարութենէն ետքը՝ Էմմաուս գացող երկու աշակերտաց մօտեցաւ ճամբուն վրայ , և « Սկսելով Մովսէսէն և բոլոր մարգարէներէն՝ կը մեկնէր անոնց ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ գրուած էր » : Ասիկա կը ցուցնէ թէ Հին Կտակարանին մէջ Քրիստոսի անձին և վարուցը վերաբերեալ շատ վկայութիւններ կան : Չենք գիտեր թէ Քրիստոս յիշեալ առթին մէջ Սուրբ Գրոց ս'ը մասերը մեկնեց . բայց ուրիշ անգամներ՝ թէ՛ իր աշակերտացը հետ ըրած շատ խօսքերուն և թէ՛ Հրէից ուղղած պատասխաններուն մէջ իր կենացը և վարդապետութիւններուն նկատմամբ Հին Կտա-

կարանէն այլեայլ մասեր վկայութիւն բերելով և մեկնելով՝ անոնց կատարուած ըլլալն իմացուց : (Յես՝ Մատթ . Ը . 17 . ՃԲ . 17—21 . ՃԳ . 35 . ԻԱ . 4 , 5 . ԻԷ . 35 . Յովհ . ՃԲ . 38—41 . ՃԵ . 25 . ՃԷ . 12 . ՃԹ . 24) :

Յիշեալ վկայութեանց յառաջ բերուիլն , ու մերթ քրիստոսի և մերթ ներշնչեալ Առաքելոց կողմէն անոնց տրուած մեկնութիւնները բաւական են մեղի ոչ միայն՝ այն խօսքերն հասկնալու , հապա նաև Սուրբ Գրաց ուրիշ խօսքերն ալ մեկնելու համար մեզի կանոններ շինելու . նոյնպէս Նոր Կտակարանին հեղինակներուն իրենց քարոզած վարդապետութիւններն ապացուցանելու և սորվեցուցած պատուէքները հաստատելու նպատակաւ Հին Կտակարանէն վկայութիւն բերելու մէջ հետեւած կերպը՝ մեզի կը սորվեցնէ թէ նոյն բաներն ընելու համար ի՛նչ ընթացք բռնելու ենք : Ձօր օրինակ , Տէրն մեր Աստուծոյ սեպհական անուանն իշխաններու տրուելէն կը հետեցնէ թէ ևս առաւել Որդին կրնայ կոչուիլ նոյն տիտղոսով (Յովհ . Ճ . 34—39) : Եսայեայ սա խօսքէն ալ թէ՛ « Դաւիթիին մնայուն ողորմութիւնները ձեզի պիտի տամ » (Ես . ԵԵ . 3) , այսինքն՝ Դաւթի սերունդին յաւիտեան անոր արքային վրայ նշուտելու նկատմամբ եղած խոստումէն , նոյն Առաքեալը կը հետեցնէ թէ ուրեմն քրիստոս՝ որուն աս պատգամը կը վերաբերի , մեռելներէն յարութիւն առած է (Գործ . ՃԳ . 34) :

Նոյի և Ղովտայ ժամանակներուն անհաւատութենէն և անոր հետեանքներէն՝ սրեւիցէ ժամանակ անհաւատութեան մէջ շարունակ ապրողներուն համար խրատներ հանուած են Ղուկ . ՃԷ . 26—29 , Մատթ . ԻԳ . 37 : Պօղոս Առաքեալ Հին Կտակարանէն վկայութիւններ և օրինակներ բերելով կը ցուցնէ թէ Աւետարանը քարոզողներն Աւետարանէն ապրելու են (Ա Վորնթ . Թ . 9—14 . Ա Յիմ՝ Ե . 18) :

Չի կրնար ըսուիլ թէ աս վկայութեանց մէջ յիշուած անձինք նախատիպ օրինակներ են անոնց՝ որոնց յիշեալ վկայութիւնները վերաբերուած են . ևս աւելի անտեղի է կարծել թէ աս վերջինները վկայութեանց նկարագրած բուն անձինքն են . վկայութիւնը մէջ կը բերուի իբր

սկզբունքի մը օրինակ, օրպէս զի սկզբունքն օրինակով աւելի յայտնի իմացուի: Ձոր օրինակ՝ Հառմայեցւոց Թըզ-Թոյն մէջ (Գլ. Թ) Պօղոս Առաքեալ անոնց դէմ որ Աստուծոյ առաջուց ընտրելը կամ նախասահմանելը չէին ընդուներ՝ ուղելով ցուցնել Թէ ամէն ատեն, նաև Հին Տնտեսութեան ներքև, ընտրութիւն եղած է, և բոս շնորհաց կամ ձրի ընտրութիւն, հեռեալ օրինակը մէջ կը բերէ յիշեցնելով Թէ, Արրահամա ոչ եթէ բոլոր սերունդն ընտրուեցաւ, այլ միայն Սառայէն եղած զաւակը որ էր Իսահակ. Իսահակայ ալ ոչ Թէ բոլոր սերունդը, այլ միայն Յակոբայ զաւակը, և Թէ՛ տղաքը գեռ չծնած և բարի կամ չար չգործած եղաւ աս ընտրութիւնը:

Ուստի Հին Կտակարանէն վկայութիւն բերելու մէջ Նոր Կտակարանին ներշնչեալ Հեղինակաց բռնած ընթացքէն մեր հանելու կանոնը սա է. Թէ՛ վարդապետութիւն մը ապացուցանելու և Թէ՛ բարոյական պարտաւորութիւն մը սորվեցնելու նպատակաւ Հին և Նոր Կտակարաններէն վկայութիւն բերելու ատեն, զգուշութեամբ նայելու ենք որ մեր յառաջ բերած վկայութիւնը մեր ապացուցանելու վարդապետութիւնը և սորվեցնելու պատուէրը կամ անոր սկզբունքն իրօք պարունակէ: Շատ անգամ մարդիկ Սուրբ Գիրքէն իբր վկայութիւն այնպիսի խօսքեր կը բերեն որ առաջիկայ խնդրոյն ամենևին վերաբերութիւն չունին: Ինչպէս Սաղմոսին սա « Տէրը անոր (արդարին) բոլոր սուկորները կը պահէ. անոնցմէ մէկը չկտորուի » (Սաղմ. ԼԳ. 20) խօսքը՝ ոմանք իբրև ապացոյց յառաջ կը բերեն ցուցնելու համար Թէ մեռած Սուրբերուն ոսկերացը կամ նշխարներուն պէտք է յարգութիւն մատուցանել, և կը պնդեն Թէ, եթէ Աստուած արգարոց ոսկրներուն այնչափ խնամք կը տանի, որչափ ևս առաւել մեզի կը վայլէ որ զանոնք մեծարենք: Ասիկա Սուրբ Գրոց խօսքը մոլար և անտեղի կերպով գործածել է. քանզի եթէ յիշեալ Սաղմոսին ամբողջ իմաստը քննելու ըլլանք, կը տեսնենք որ վկայութեան միտքն այն չէ Թէ Աստուած արդարներուն ոսկրներն անոնց մեռնելէն

ետքը կը խնամէ կամ կը պատուէ . այլ թէ կը խնամէ իր ծառաներն անոնց կենդանութեան ատենը, որպէս զի անփնաս և երջանիկ ըլլան : Յովհաննէս Աւետարանիչ Նոյն վկայութիւնը Գրիգորոսի վերաբերելով , կ'ըսէ թէ անոր խաչելութեան ատենը կատարուեցաւ , ըստ որում անոր բարձերը չխորտակուեցան (Յովհ . ձԹ . 36) . բայց Գրիգորոսի ոսկրներուն խորտակուելէ ազատ պահուելուն նկատմամբ յիշեալ վկայութիւնը մէջ 'կը բերուի' ցուցնելու համար որ անիկա Մեսիա էր , և Ատուած անոր մասնաւոր խնամք ունէր , ոչ թէ վասն զի անոր ոսկրներն իրրև արդարոյ ոսկրներ սուրբ և պաշտելի էին :

Երբ Սատանան Տէրը փորձելով կը ջանար համոզել որ ինք զինք տաճարին աշտարակէն վար նետէ , զտահացնելով անիկա Սուրբ Գրոց սա խօսքովը թէ « իր հրեշտակներուն պիտի ապսպրէ քեզի համար . ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ , որ չըլլայ թէ օտքդ քարի զարնես » (Մատթ . Գ . 6) , բերած վկայութիւնն անյարմար էր , քանզի ան խօսքին միտքն այն չէ թէ Ատուած իր ծառաներն անփնաս կը պահէ , եթէ անոնք իրենց սուրբները քարի կը զարնեն , երբ այսպէս ընելու պատուէր կամ հարկ չկայ . այլ թէ՛ Ատուած զանոնք վտանգէ կը պահէ թէ իր ընդհանուր և թէ իր յատուկ խնամքովը երբ անոնք սովորական կամ արտաքոյ կարգի պարտաւորութիւն մը կատարելու կոչուած են : Ուստի և Տէրը գիւրի սխալ վկայութիւնը հերքեց՝ անոր խաբէական թելադրութիւնը յայտնող ուրիշ յարմար վկայութիւն մը բերելով չին զտակարանէն թէ՛ գրուած է որ " Գու Տէր Ատուածդ չփորձես " (Մատթ . Գ . 7) : Ասով ըսել ուղեց թէ Գու առաջարկութիւնդ չեմ կրնար կատարել քանի որ այնպէս ընելու հարկ մը չկայ . և եթէ ընեմ , ոչ թէ օգտակար արդիւնք մը պիտի յառաջ գայ , այլ ես փորձած պիտի ըլլամ զԱտուած , ուստի և չեմ կրնար ակնկալել թէ զիս վտանգէ պիտի պահէ :

Սրբազան մատենագիրը Սուրբ Գիրքը քննելու և ամէն վարդապետութիւն անոզ փորձելու և ապացուցանելու

Նկատմամբ մեր պարտաւորութիւնը բանիւ և օրինակաւ մեզի սորվեցուցած ատեն՝ կը խրատեն նաև զմեզ որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը ծեքելու կամ ծռելու վրասանգէն զգուշանանք :

Պետրոս Առաքեալ (Բ Պետր . Գ . 16) կարգ մը « տգէտ և անհաստատ յմարդոց համար կ'ըսէ թէ՛ » Պօղոս առաքելոյն « դժուարիմաց խօսքերը ծուռ կողմը կը դարձնեն , ինտոր սւրիշ գիրքերն ալ՝ իրենց անձին կորստեանը համար » :

Բայց աս ըսելով Առաքելոյն նպատակը վհատեցնել չէ մարդիկ որ Սուրբ Գրոց դժուարին մասերն անգամ քննելու չձեռնարկեն . անոր միտքն է իմացնել միայն որ մենք Սուրբ Գիրքն ուսանելու մէջ մեծ ջանք և զգուշութիւն ընելու ենք . ուստի և կ'ըսէ . « Ուրեմն դուք սիրելիներ՝ առաջուց գիտնալով զգոյշ եղիք , որ չըլլայ թէ անօրէն ներուն խաբէութենէն բռնուած՝ ձեր հաստատութենէն իյնաք . հապա աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը » (Բ Պետր . Գ . 17, 18) : Անոնք որ Սուրբ Գրոց, խօսքերն իրարու հետ բաղդատելով՝ անիկա զգուշութեամբ և ջանիւ կը սորվին , և միանգամայն խոնարհութեամբ կ'աղօթեն որ իրենց կարդացածը շիտակ հասկնալու համար Սուրբ Հոգին իրենց առաջնորդէ՝ անտարակոյս կարող պիտի ըլլան ճշմարտութիւնը ճանչնալ , և Սուրբ Գրոց սորվեցուցած վարդապետութիւններն ու պարտաւորութիւններն անկէ հետեցնել : Սուրբ Գիրքն աս կերպով կարդացողը թող չվախնայ թէ , անուսումն ըլլալուն համար , կրնայ անոր խօսքերը սխալ հասկնալ , կամ զանոնք դարձնել 'ի կորուստ իւր . այլ ամէն խօսքին բուն իմաստը գիտնալու համար իր ձեռքը գտնուած ամէն միջոց գործածելէն ետքը , եթէ ինք զինք « Իմաստութենէ պակասած » կը տեսնէ , « թող խնդրէ Աստուծմէ՛ որ ամենուն առատապէս կու տայ՝ ու շնախատեր » , և պէտք եղած իմաստութիւնն անոր պիտի տրուի :

ՅԱՆԿ ԿՒՒԹՈՅ

ԱԼՄՈՒԿ . 255 : Ախորժակ . 255 : Ակառ . 270 : Ակն , այլարանական առումը . 197 : Ակն վանի . 269 : Աղ . 267 : Աղանեղյ աղբ . 255 : Աղեղ , այլարանական առումը . 197 : Ամբթովս . 270 : Ամիս , Հրեից մէջ . 227 , 284 : Ամհարերէն լեզուն . 9 : Ամուրութիւն Եկեղեցականաց . 239 :

Այլարանութեանց հարկաւորութիւնն ու օգտակարութիւնը . 130 , 131 . — որպիսութիւնը . 132—134 . — այլևայլ ձեւերը . 135—137 : Այցելութեան երթալ , Հրեից և ուրիշհին ազգաց մէջ . 233 : Անագ . 272 : Անանուխ . 255 : Անգամանգ . 270 : Անգրանիկ , այլարանական առումը . 197 :

Անկանոն գիրքերէն ոմանք օգտակար են , բայց աստուածաշունչ չեն , 118 , 119 : Անկանոն գրոց համար Յրիտանգեան ժողովին վճիռը . 122 : Անկանոն գրոց նկատմամբ քրիստոնեայ հարց և թարգմանչաց վկայութիւնը . 119—122 : Աս վկայութեան արժէքը . 125 : Անկանոն գրոց ժնար վարդապետութիւնները . 124 : Անկանոն գրոց ցանկը՝ Հին Կտակարանին . 117 : Անկանոն գրոց ցանկը՝ Նոր Կտակարանին . 126 :

Անտառ , այլարանական առումը . 197 . Աշխարհագրական տեղեկութիւնը շառանգամ Սուրբ Գրոց հակառական երևցած խօսքերը կը միարանէ . 296—298 : Աշտանակ , այլարանական առումը . 197 : Աչք , այլարանական առումը . 197 : Ապաշխարանքի վարդապետութեան հնարուած ժամանակը . 239 : Ապառատ . 269 : Առակ . 136 : Առասպել . 136 : Առաքելոց թուղթերուն ժամանակագրութիւնը . 240 : Առեղծօւած . 136 : Առիւծ . 253 : Առիւծ , այլարանական առումը . 198 :

Ասորերէն , արգի լեզուն . 9 : Ասորերէն , հին լեզուն . 7 : Արաբերէն լեզուն . 9 : Արամերէն լեզուն . 7 : Արեւծութիւն , այլարանական առումը . 197 : Արծաթ . 272 : Արծաթին հին տառնն օւնեցած արժէքը . 225 : Արծիւ .

250 : Արմաւենի . 253 , 254 , 255 : Արջ , այլաբանական առումը . 198 : Արջնդեղ . 256 :

ԲԱՐԵԼՈՒՆ , այլաբանական առումը . 198 : Բազուկ , այլաբանական առումը . 198 : Բալասան . 257 : Բակլայ . 256 : Բանալի , այլաբանական առումը . 198 : Բառերուն Սուրբ Գրոց մէջ այլաբանական նշանակութեամբ առնուելուն սկզբունքը . 196 : Բեշիդոյ , Սուրբ Գրոց ասորերէն թարգմանութիւնը . 14 : Բեղհեղդա աւազանը . 292 : Բերէա . 279 : Բեւեկնի . 256 : Բիւրեղ . 270 : Բնական պատմութեան Սուրբ Գիրք հասկնալու և մեկնելու համար կարևորութիւնը . 250 : Բնակարաններ , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 212 : Բորակ . 268 : Բուստ . 269 :

ԳԱԶԱՆՆԵՐ , այլաբանական առումը . 198 : Գալիլեա . 279 : Գաղգաղա . 294 : Գաւաթ , այլաբանական առումը . 199 : Գեհէն . 293 : Գերեզմաններ , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 234 : Գիհի . 256 : Գինձ . 256 : Գիշերուան պահերը , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 228—230 : Գիրք , այլաբանական առումը . 199 : Գոյափոխութեան վարդապետութիւնը . 239 : Գոյն , այլաբանական առումը . 199 : Գոճազմ . 270 : Գորտ , այլաբանական առումը . 200 : ԴԱՄԱՍԿՈՍ . 296 : Դդմենի . 256 : Դրամներ , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 223 :

ԵՐԱՅԵՑԵՐԷՆ լեզուն . 4 , 5 : Եգիպտոս , այլաբանական առումը . 200 : Եդամայեցւոց երկիրը . 279 : Եզ . 251 : Եկամնա թագաւորաց , Հրէից մէջ . 221 , 222 : Եկեղեցականաց ամուրութիւնը . 239 : Եղեւին . 254 , 256 : Եղեգ . 257 : Եղնգնաբար . 270 : Եղջիւր , բոյս . 257 : Եղջիւր , այլաբանական առումը . 200 : Ենովմի ձորը . 293 : Եպիկուրեան փիլիսոփայից վարդապետութիւնը . 211 : Երէքով . 294 : Երկաթ . 272 : Երկինք , այլաբանական առումը . 200 : Երկիր . 268 : Երկիր , այլաբանական առումը . 200 :

Երուսաղէմի ընկերները . 293 . — կործանումը Տիտոսի ձեռքով . 293 . — կործանման վրայ մարգարէութիւններ : 184 . 236 : Երուսաղէմի նկարագիրը . 288 , 289 : Երուսաղէմի շրջականները . 293 : Երուսաղէմի Յաճարին նկարագիւ-

բը . 289—291 : Եօթանասնից Թարգմանութիւնը Սուրբ Գրոց . 12, 13 . 305 : Եօթանասնից Թարգմանութեանն ու Եբրայական բնագրին մէջ ժամանակագրութեան տարբերութիւնը . 245—247 :

ԶՄՈՒՌՍ . 257 : Զմուտել մեռեալները , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 234 : Զմրուխտ . 271 : Զոպա . 258 :

ԷՇ . 251 : Իշուս և եզին հերկելու գործածուիլը Հրէից մէջ . 252 :

ԹԱԳԱՒՈՐԱՅ Եկամուտը , Հրէից մէջ . 221 , 222 : Թալմուտներն և անոնց առած տեղեկութիւնները . 208—210 : Թաղում , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 234 : Թարկումները . 8 . Թզենի . 258 : Թթենի . 258 : Թունաւոր խոտ . 259 :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ Թուականներ . 241 : Ժամանակագրութիւն Սուրբ Գրոց . 240 : Ժամանակաբաժինք Սուրբ Գրոց պատմութեան . 242 , 243 :

ԻՆՁ , այլաբանական առումը . 198 : Իջևաններ , Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 233 :

ԼԱՏԻՆՆԵՐԷՆ Թարգմանութիւն Սուրբ Գրոց . 16 . 239 : Լատիներէն լեզուին գործածութիւնը եկեղեցական պաշտամանց համար . 239 : Լեռ , այլաբանական առումը . 200 : Լէիաթան , այլաբանական առումը . 198 :

ԽԱՂՈՂ , այլաբանական առումը . 200 : Խիժաքեր փայտ . 259 : Խնձոր . 259 : (Ականջալուր) խոտածանութեան հնարուած ժամանակը . 239 : Խորհրդաւոր նշան . 137 : (Եօթն) Խորհրդոց վարդապետութեան հնարուած ժամանակը . 239 : Խունկ . 258 : Խունկ , այլաբանական առումը . 200 : Խունկեղէգն . 259 : Խոտոր . 259 :

ԾԱՂԻԿ . 259 : Ծարոյր . 272 : Ծծումը . 268 : Ծծումը , այլաբանական առումը . 201 :

ԿԱՂԱՄԱՍ . 260 : Կազնի . 260 : Կապար . 273 : Կառք , այլաբանական առումը . 201 : Կասիա . 260 : Կարասիք , Հրէից մէջ . 215 : Կարկեսան . 271 : Կաւ . 268 : Կեոարիա , Պաղեստինու մէջ . 295 : Կերակուր , Հրէից մէջ . 219 : Կինամոն . 260 : Կիր . 269 : Կնիւն . 260 : Կնիք և կնքել ,

Հրէից և ուրիշ հին ազգաց մէջ . 231 : Կնոստիկեան փիլի-
սոփայից վարդապետութիւնը . 211 : Կշիւ , Հրէից մէջ .
224 : Կշիւ , այլաբանական առումը . 201 : Կոյս , այլաբա-
նական առումը . 201 : Կորեակ . 261 : Կռապաշտութիւն ,
Աթենացոց . 237 :

Կտակարան բառին այլևայլ առումները . 1 , 2 : Կրակ ,
այլաբանական առումը . 201 : Կրօնական գառազրոց նպա-
տակն ի՞նչ է . 116 , 117 : Կրօնքն ի՞նչ կը նշանակէ . 111 :

ՀԱԳՈՒՍՑ , Հրէից մէջ . 216—218 : Հալւե . 261 : Հա-
զորդեւ ժողովուրդը մէկ տեսակաւ . 239 : Համեմունք .
258 : Հանդերձ , այլաբանական առումը . 201 : Հանելուկ .
136 : Հանքային նիւթեր և Հողեր . 267—269 :

Հարկ , Հրէից մէջ . 223 :

Հացկերոյթ , Հրէից մէջ . 220 :

Հաւատոյ վերաբերութիւն կամ հաւատոյ կանոն ի՞նչ
է . 167 : Հիթանոս ազգաց կրօնական գաղափարները .
210—212 : Հեղինակութիւն աստուածային Սուրբ Գրոց .
51—83 : Հերոզոէս և անոր սերունդը . 146 . 279 , 280 :

Հին և Նոր Կտակարանաց այլևայլ բաժանումները . 2 ,
3 : Հին և Նոր Կտակարանաց վարդապետութիւններուն
փութիւնը . 106—108 . 306 , 307 : Հին Կտակարանին
աստուածային հեղինակութեան փաստերը . 56 : — աստ-
ուածային ներշնչութեան փաստերը . 86—88 : Հին Կա-
կարանին գիրքերուն պահպանութիւնը և հաւաքումը .
11 , 12 : Հին Կտակարանին լեզուները . 4—9 : Հին Կա-
կարանին մտքաբեւութիւնները . 56—66 : Հին Կտակարա-
նին փաւերականութիւնը կամ հաւատարմութեան արժա-
նի բլլալն ու ասոր փաստերը . 47—51 : Հինա . 261 : Հին-
նոնի ձորը . 293 . տես վրիպակներուն մէջ : Հող .
268 : Հով , այլաբանական առումը . 201 : Հովուութիւն ,
Եգիպտացոց մէջ . 235 : Հունձք , այլաբանական առում-
ը . 201 :

Հրէաստան . 279 : Հրէից գրաւները . 223 : Հրէից և ուրիշ
հին ազգաց այլևայլ սովորութիւնները . 231—234 : Հրէից
և ուրիշ հին ազգաց բնակարանները , ասւներն ու կարու-

«Իրը» . 212—216 : Հրէից և ուրիշ հին ազգաց հազուադէպ .
 216—218 : Հրէից կերակուրը . 219 . — կշիռները . 224 .
 — հացկերպութի վերաբերեալ սովորութիւնները . 220, 221 .
 — մազն ու մերուքը . 218 : Հրէից մէջ գիշերուան պահե-
 րը . 228—230 : Հրէից մէջ երկայնութեան չափերը . 226 :
 Հրէից մէջ Թագաւորաց եկամուտը . 221, 222 : Հրէից
 մէջ հաստատուն մարմնաց չափերը . 226—227 : Հրէից
 մէջ հարկ և մաքս . 222, 223 : Հրէից մէջ հեղուկներու
 չափերը . 226 : Հրէից մէջ սարի, ամիս, օր և հաշուելու
 կերպը . 227, 228 : Հրէից նահանջ ամիսը . 287 : Հրէից
 պատմութեան ժամանակարաժիւններն և անոնց տեսողու-
 թիւնը . 242—250 .

Զեմեթ, այլաբանական առումը . 202 : Զի, այլաբանա-
 կան առումը . 198 : Զիթենեաց լեռը . 293 : Զիթենի .
 261 : Զիւթ . 268 : Զուկ, այլաբանական առումը . 202 :

ՃԱԿՑԻ վրայ անուն կամ նշան, այլաբանական առումով .
 202 : Զրագ, այլաբանական առումը . 197 :

ՄԱԶ, Հրէից մէջ . 218 : Մայր, այլաբանական առում-
 ով . 202 : Մայր փայտ . 262 : Մանանայ, այլաբանական
 առումը . 202 : Մանանեի . 262 : Մանրագոր . 262 : Մա-
 րախ, այլաբանական առումը . 198 :

Մարգարէութեանց այլաբանութիւնները . 186—189 . — բա-
 րոյական դասը . 205—207 : Մարգարէութեանց կրկին ի-
 մասս ունենալը . 191 : Մարգարէութեանց մէջ յիշուած
 ժամանակները . 203—205 : Մարգարէութեանց յատկու-
 թիւնները . 181—191 : Մարգարէութիւններ Երուսաղեմի
 վրայ . 184 . 236 : Մարգարէութիւնները մեկնելու կանոն-
 ներ . 191—197 :

Մարմարին . 269 : Մաքս, Հրէից մէջ . 222, 223 :
 Մեկնութեան կանոններ Աւուրբ Գրաց համար . 139—169 :
 Մեղուներ, այլաբանական առումը . 202 : Մեղքին հետե-
 ւանքը . 241 : Մեռելներ զմուտել Հրէից և ուրիշ հին ազգաց
 մէջ . 234 : Մեծայիտ ակնկալութիւնը հին ազգաց մէջ .
 236 : Մեծագիւղ . 272, 273 : Մալաթի . 262 : Մալու .
 262 : Մրահնի . 262 : Մորուք, Հրէից մէջ . 218 :

ՅԱՅՆԿՈՅՑ Յորդանանու . 279 : (Աստուածային) Յայտնութեան դարագլուխները կամ տնտեսութիւնները : 103, 104 : (Աստուածային) Յայտնութիւնը Հին ատենն ի՞նչպէս անգիր կ'աւանդուէր . 240 : Յասպիտ . 271 : Յուսարէն լեզուն . 10 :

ՆԱՐԴՈՍ . 263 : Նաւթ . 269 : Ներշնչութիւն . Սուրբ Գրոց . 84—88 : Ներողութեան հնարուիլը Պապերէն . 239 : Նինուէի արձանագիրները . 8 : Ննջեցելոց համար աղօթք ընելու սովորութեան հնարուած ժամանակը . 239 : Նշենի . 263 : Նոճի . 259 :

Նոր Կտակարանին աստուածային հեղինակութեան փաստերը . 56 : Նոր Կտակարանին աստուածային ներշնչութեան փաստերը . 84—86 : Նոր Կտակարանին գիրքերուն ի սկզբանէ ծանօթ ըլլալը . 13, 14 : Նոր Կտակարանին լեզուն . 9, 10 . 47 : Նոր Կտակարանին ձեռագրաց տարբեր ընթերցուածներուն օրինակները . 33—36 : Նոր Կտակարանին մէջ չինէն բերուած վկայութիւնները . 299 : Նոր Կտակարանին վաւերականութիւնը և սոր փաստերը . 37—47 : Նոր Կտակարանին տնտեսութիւնը Հնոյն լուսնէ . 108, 109 : Նռնենի . 263 :

ՇԱԲԱԹ օրուան ճամբան . 226 : Շափիւզա . 271 : Շիշ . 270 : Շուն , պլարանական առումը . 199 : Շուշան . 263 :

ՈՂՁՈՅՆ տալու սովորութիւն , Հրէից մէջ . 233 : Ոչխար . 252 : Ոչխարաց վաճառանոցը , Երուսաղէմի մէջ . 292 : Ոգնիաղ . 264 : Ոսկեպղինձ . 273 : Ոսկեքար . 271 : Ոսկի . 273 : Ոսկեղն հին ատենն ունեցած արժէքը . 225 : Ռոպ . 264 : Որթ . 264 : Որթ , պլարանական առումը . 202 : Որոմ . 264 : Ուուի . 264 : Ուտել , պլարանական առումը . 203 :

ՉԱՄԱՆ . 265 : Չափ , Հրէից մէջ . 226, 227 : Չափել , պլարանական առումը . 203 :

ՊԱՂՆՍՍԻՆ և անոր արուած անունները . 276 .-բազմամարդութիւնը . 282 .-լեռներն ու հովիտները . 281, 282 .-կլիման . 282—284 : Պաղեստինու մէջ տարւոյն եղանակները , ամիսները , իւրաքանչիւր ամսոյ մէջ յառաջ եկած

բերքերն ու տարեկան աօները . 281—287 : Պաղեստինու տարածութիւնն ու բաժանումները . 277, 278 :

Պապերուն ներողութիւն տալու իշխանութիւնը . 239.— գլխաւորութեան խնդիրը . 239 : Պատմութեանց կարևորութիւնը Սուրբ Գիրք մեկնելու համար . 234—250 : Պատմութիւն , Հրէից . 242—250 : Պատուական քարեր . 270 : Պիղատոսի պալատը . 292 : Պղինձ . 273 : Պղինձ , այլաբանական առումը . 203 : Պոպի , այլաբանական առումը . 203 : Պրաս . 265 : Պրտու . 260 :

ՍԱՄԱՐԻԱ . 279, 295 : Սատիփ փայտ . 265 : Սարգիոն . 271 : Սգոյ նշաններ , Հրէից մէջ . 233, 234 : Սեմական լեզուներ . 4 : Սիկզ Սրբարանին . 225 : ($\frac{1}{2}$) Սիկզ իբր օրէնքէն պահանջուած հարկ . 223 : Սօխ . 265 : Սոհար . 207 :

Սուրբ Գիրքը բնական իրողութեանց վրայ հասարակ լեզուով կը խօսի . 96 : Սուրբ Գիրքը գիտնական ձև չունի կամ գիտնական դրութիւն մը չէ . 109, 110 : Սուրբ Գիրքը կարգալու պարտաւորութեան նկատմամբ Հարց Քրօթիքը . 238 : Սուրբ Գիրքը կրօնական Յշմարտութեանց յայանութիւնն է . 90 : Սուրբ Գիրքը հասկնալու և մեկնելու օգնող արտաքին աղբիւրներ . 207 :

Սուրբ Գիրքը հասկնալու և մեկնելու կ'օգնեն՝

Արտաքին պատմութիւնը . 234 :

Բնական պատմութիւնը . 250 :

Եկեղեցական պատմութիւնը . 238 :

Ժամանակագրութիւնը . 240 :

Հերետիկոսութեանց պատմութիւնը . 238, 239 :

Սուրբ Գիրք մեկնելու

Առաջին ընդհանուր կանոն . 139—148 :

Երկրորդ կանոն . 148—152 :

Երրորդ կանոն . 152—156 :

Չորրորդ կանոն . 157—160 :

Հինգերորդ կանոն . 161 :

Սուրբ Գիրքը փրացեալ խնդիրներ կամ բարոյական գիտութեանց մեծամեծ սկզբունքներն ի՞նչպէս կը սորվե-

ցընէ . 97, 98 : Սուրբ Գրքքն ի՞նչ կարգով սորվելու է . 102 : Սուրբ Գրքքն ի՞նչ սգևով պէտք է սորվել . 137—139 : Սուրբ Գրոց պլարանական խօսքերը մեկնելու առաջին կանոնը . 170—172 .

Երկրորդ կանոնը . 174—176 :

Երրորդ կանոնը . 176—177 :

Սուրբ Գրոց պլարանութիւններն ու առակները մեկնելու կանոններն անոր ուրիշ մասերն ալ հասկնալու և մեկնելու կ'օգնեն . 177, 178 : Սուրբ Գրոց աշխարհագրութիւնը . 274—276 : Սուրբ Գրոց Ասորերէն թարգմանութիւնը . 14 : Սուրբ Գրոց աստուածային հեղինակութեան բարոյական փաստերը . 67—77 : Սուրբ Գրոց աստուածային հեղինակութեան հոգևոր փաստերը . 78—82 : Սուրբ Գրոց աստուածային հեղինակութեանը վրայ եղած ապացոյցնմբուն բովանդակութիւնը . 82, 83 : Սուրբ Գրոց աստուածային հեղինակութիւնը . 51 : Սուրբ Գրոց երրայական բնագրին և Եօթանամից թարգմանութեան մէջ ժամանակագրութեան տարբերութիւնները . 245—247 : Սուրբ Գրոց երրայական ոճերը . 140—145 : Սուրբ Գրոց երրայերէն գրով Սպաներէն թարգմանութեան ապագրութիւնը . 24 : Սուրբ Գրոց իմաստը սասուգելու հարցումներ . 169, Սուրբ Գրոց ի՞նչ տեսակ մեկնութիւնները մերժելի են . 172—174 : Սուրբ Գրոց Լատիներէն թարգմանութիւնը . 16 . 239 : Սուրբ Գրոց կանոնին կազմութիւնը . 15 : Սուրբ Գրոց հայերէն գրաբար և աշխարհաբար թարգմանութեանց ապագրութիւնները . 23 : Սուրբ Գրոց հայերէն հին թարգմանութիւնը . 17 : Սուրբ Գրոց հարազատութեան ապացոյցները . 25—32 : Նոյն ապացոյցներուն զօրութիւնը . 32 : Սուրբ Գրոց հին լեզուներու թարգմանութիւնը . 16, 17 : Սուրբ Գրոց ձեռագիրները . 17—21 : Սուրբ Գրոց ճիշտ բառերը ստուգելու ջանքեր . 17—21 : Սուրբ Գրոց մասերը . 1 : Սուրբ Գրոց մէջ բուսածները բնական իրողութեանց և արդի գիւտերուն հետ համաձայն են . 92—96 : Սուրբ Գրոց մէջ յատուկ անուանց գործածութեան կերպը . 145—148 : Սուրբ Գրոց փութեան գաղանիքը :

108 : Սուրբ Գրոց միութիւնը , այսինքն՝ թէ ըստը Աստուածաշունչը միևնոյն նպատակը , միևնոյն վարդապետութիւնն ունի . 105 , 106 : Սուրբ Գրոց յայտնած ճշմարտութիւնները պէտք է գործադրել . 92 : Սուրբ Գրոց յայտնութիւնն աստիճանաբար յառաջ կ'երթայ . 98-102 : Սուրբ Գրոց նոր թարգմանութիւններն և անոնց ապագորութիւնը . 23 : Սուրբ Գրոց պահպանութիւնն ու հաւաքումը . 11-13 : Սուրբ Գրոց Պուլղարերէն թարգմանութեան ապագորութիւնը . 24 : Սուրբ Գրոց սեպհական յատկութիւնները . 89-91 : Սուրբ Գրոց սիւալ մեկնութիւններուն օրինակներ . 179-181 : Սուրբ Գրոց ոորվեցնելու կերպին օգտակարութիւնը . 114-116 : Սուրբ Գրոց վրայ բան աւելցնելու չէ . 104 , 105 : Սուրբ Գրոց վրայ եզրակացութիւն մը . 88 , 89 : Սուրբ Գրոց Յաճկերէն թարգմանութեան ապագորութիւնները . 23 , 24 : Սուրբ Գրոց ապագորութիւնները . 22 : Սուրբ Գրոց Գիւրաբերէն թարգմանութեան ապագորութիւնը . 24 : Սայիկեան Փիլիսոփայից վարդապետութիւնը . 222 : Սօսի . 265 :

ՎԱՅՐԻ վարունգ . 265 : Վարունգ . 266 : Վաւերականութիւն Հին և Նոր Կտակարանոց . 37-52 : Վիշապ , այլաբանական առումը . 198 : Վկայութիւններ Նոր Կտակարանին մէջ Հինէն բերուած . 299 , 300 : Վուլկաթա . 6 , 239 :

ՏԱՐԻ , Հրէից մէջ . 227 , 228 : Տիւրերիա . 294 : Տիպ , այլաբանութեան մէկ տեսակը . 137 : Տօտախ . 266 : Տուներ , Հրէից մէջ . 212-216 : Տպագորութիւնը , Սուրբ Գրոց . 22-24 : Տպագիտն . 271 :


ՅՈՒԼ , այլաբանական առումը . 199 :

ՓԵԳԵՆԱՅ . 266 : Փոզ , այլաբանական առումը . 203 : Փուշ . 266 : Փսաուզ . 266 :

ՔԱՂԴԵԱՐԻՆ լեզուն . 7 : Քարեր . 269-270 : Քարեր , պատուական . 270-272 : Քաւարանի վարդապետութիւնը . 239 : Քերբոն . 294 : Քերովբէք . 203 : Քթան . 266 : Քնար , այլաբանական առումը . 203 : Քրիստոսոս . 271 : Քրիստոսի Աստուածութիւնը . 238 : Քրիստոսի հրաշքնե-

ըը. 53 : Քրիստոսի մարգարէութիւնները Երուսաղէմի վըայ . 184 . 237 : Քրքսւմ . 267 :

ՕՇԻՆԻՐ . 267 : Օր , Հրէեց յէջ . 227 , 228 .



ՎՐԻՊԱԿԲ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
30	35	Ա-	Աւստրիա ե
45	6	աւջի	երկրորդ
153	21	Երբ .	Երբ .
210	9 , 10	կարեսրութիւն	կարեսրութիւն
247	18	երրորդ	երրորդ
293	6	Հիննանի	Ենովմի (Նէեմ . 30)

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04147 3284

